ԱԶԴԱԳԻՐ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
Թողարկողի ֆիրմային անվանումը

բաց բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, 0014, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Պ., 24/1
Հեռ.՝ (+374 10) 410 410
Էլ.-փոստ՝ info@telecomarmenia.am
Կայք՝ www.telecomarmenia.am

«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 2
Հեռ.՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33
Էլ.-փոստ՝ info@ameriabank.am
Կայք՝ www.ameriabank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի տեսակը և դասը՝	«Ա» դասի հասարակ (սովորական) բաժնետոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	40,000,000 (քառասուն միլիոն) հատ
Արժեթղթերի տեղաբաշխման գինը՝	206 (երկու հարյուր վեց) ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր տեղաբաշխման ծավալը՝	8,240,000,000 (ութ միլիարդ երկու հարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 4

ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 5

1.1 Տեղեկատվություն թողարկողի վերաբերյալ 5
1.2 Թողարկողին և բաժնետոմսերին առնչվող ռիսկերը 11
1.3 Թողարկողի ֆինանսատնտեսական վիճակի միտումները 13
1.4 Թողարկողի աուդիտորը և խորհրդատուները 14
1.5 Կառավարման մարմնի անդամները և խոշոր բաժնետերերը 14
1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական տվյալները 15
1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը 15
1.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ 16

ՄԱՍ 2 ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 20

2.1 Ռիսկային գործոններ 20
2.2 Հիմնական տեղեկատվություն 24
2.3 Տեղեկատվություն արժեթղթերի վերաբերյալ 26
2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները 40
2.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 51
2.6 Վաճառող բաժնետերերը 52
2.7 Թողարկման եվ առաջարկի ծախսերը 52
2.8 Լրացուցիչ տեղեկատվություն 53
2.9 Սահմանափակումներ 53

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 56

3.1 Անկախ աուդիտորները 56
3.2 Ռիսկային գործոններ 56
3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին 74
3.4 Բիզնեսի նկարագիրը 91
3.5 Թողարկողի խմբի կառուցվածքը 135
3.6 Թողարկողի հիմնական միջոցները 137
3.7 Թողարկողի կապիտալ ռեսուրսները (պասիվները) 138
3.8 Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները 139
3.9 Արտոնագրերը և լիցենզիաները 139
3.10 Զարգացման վերջին միտումները 140
3.11 Թողարկողի կառավարման մարմինները և անդամները 141
3.12 Վարձատրությունները և պարգևավճարները 151
3.13 Կառավարման մարմինների գործունեությունը 152
3.14 Աշխատակիցները 154
3.15 Հսկող անձինք 155
3.16 Փոխկապակցված անձանց հետ գործարքները 155

3.17 Ֆինանսական վիճակ և արդյունք 158
3.18 Լրացուցիչ տեղեկատվություն 162
3.19 Էական պայմանագրեր 166
3.20 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը եվ երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 166
3.21 Այլ տեղեկատվություն 167
3.22 Մասնակցություն այլ անձնանց կապիտալում 168

ՄԱՍ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 169
4.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը 169
4.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը 171
4.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3: Սահմանումներ 173
4.4 ՀԱՎԵԼՎԱԾ 4: Ֆինանսական հաշվետվություններ 179

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Ալեքսանդր Եսայան (անուն, ազգանուն)	**Խորհրդի նախագահ** (պաշտոն)	(ստորագրություն)	05.05.2023 (ամսաթիվ)
Հայկ Եսայան (անուն, ազգանուն)	**Խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն** (պաշտոն)	(ստորագրություն)	05.05.2023 (ամսաթիվ)
Արամ Բարսեղյան (անուն, ազգանուն)	**Խորհրդի անդամ, փոխտնօրեն** (պաշտոն)	(ստորագրություն)	05.05.2023 (ամսաթիվ)
Ալբերտ Տոնեյան (անուն, ազգանուն)	**Խորհրդի անկախ անդամ** (պաշտոն)	(ստորագրություն)	05.05.2023 (ամսաթիվ)
Տաթևիկ Գևորգյան (անուն, ազգանուն)	**Գլխավոր հաշվապահ** (պաշտոն)	(ստորագրություն)	05.05.2023 (ամսաթիվ)
«Ամերիաբանկ» ՓԲԸ՝ ի դեմս Շուշանիկ Հովսեփյանի (անուն, ազգանուն)	**Տեղաբաշխող**	(ստորագրություն)	05.05.2023 (ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Հայկ Եսայան (անուն, ազգանուն)	**Գլխավոր տնօրեն** (պաշտոն)	(ստորագրություն)	05.05.2023 (ամսաթիվ)

Կ.Տ.

ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի (այսուհետ՝ «Ազդագիր») մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով www.telecomarmenia.am և www.ameriabank.am կայքերից:

1.1 Տեղեկատվություն թողարկողի վերաբերյալ

1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Լրիվ ֆիրմային անվանում	
Հայերեն՝	«Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերություն
Ռուսերեն՝	Открытое акционерное общество “Телеком Армения“
Անգլերեն՝	“Telecom Armenia” Open Joined Stock Company
Կրճատ ֆիրմային անվանում	
Հայերեն՝	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
Ռուսերեն՝	ОАО “Телеком Армения“
Անգլերեն՝	“Telecom Armenia” OJSC
Պետական գրանցման վայր՝	Հայաստան, ԵՐԵՎԱՆ, 0014, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Պ., 24/1
Պետական գրանցման համար՝	264.130.1310465
Գործունեության վայր՝	Հայաստանի Հանրապետություն
Կապի միջոցներ՝	Հեռ.՝ +374-10-410410 էլ. փոստ՝ info@telecomarmenia.am Կայք՝ www.telecomarmenia.am

Թողարկողին առնչվող հարցերի դեպքում դիմել «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն կամ Թողարկող կամ Տելեկոմ Արմենիա) Գանձապետական բաժնի մասնագետ Աիդա Օրդինյանին հետևյալ հեռախոսահամարով՝ +374-10-410410:

1.1.2 **Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը**

Թողարկողի պատմությունը և ռազմավարությունը մանրամասն ներկայացված են Ազդագրի 3.3.1 բաժնում:

Ընկերությունը ՀՀ-ում մատուցում է 2G (GSM), 3G (UMTS) և 4G (LTE) ստանդարտի շարժական կապի, ամրակցված հեռախոսակապի, թվային հեռուստատեսության IPTV և OTT ծառայություններ[1], ինչպես նաև ապահովում է ամրակցված ինտերնետ հասանելիություն FTTH, FTTB, VDSL և ADSL տեխնոլոգիաներով:

Ընկերությունը հիմնադրվել է 1995թ.-ին որպես «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ (այսուհետ՝ «ԱրմենՏել» ՓԲԸ կամ «ԱրմենՏել»), հանդիսանալով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) հեռահաղորդակցության համակարգի ժառանգորդ:

Ընկերությունը էլեկտրոնային հաղորդակցության մասին ՀՀ օրենքի համաձայն համարվում է պատմականորեն գերիշխող օպերատոր (կամ ծառայությունների մատուցման մեջ պատմականորեն գերիշխող):

1995թ.-ին Ընկերությունը ՀԾԿՀ կողմից ստացավ Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման թիվ 60 լիցենզիա (այուհետ՝ Թիվ 60 լիցենզիա):

1996թ.-ին Ընկերությունը առաջին անգամ ՀՀ-ում գործարկեց 2G երկրորդ սերնդի (GSM) բջջային ցանցը:

2007թ.-ից Ընկերությունը սկսեց մատուցել լայնաշերտ ինտերնետի ծառայություններ ADSL տեխնոլոգիայի հիման վրա:

2007թ.-ին Ընկերությունը ստացավ 3G երրորդ սերնդի (UMTS) բջջային ցանցի լիցենզիաները, որից հետո 2008թ.-ին առաջին անգամ ՀՀ-ում գործարկեց 3G ցանցը:

2008թ.-ին Ընկերությունը նախաձեռնեց նոր 3G բազային կայանների ինտենսիվ գործարկումը:

2012թ.-ին Ընկերությունը ամրակցված կապի շուկայում գործարկեց FTTB (Fiber to the Building - Օպտիկա մինչև Շինություն) լայնաշերտ ինտերնետի ծառայությունները:

2016թ.-ին Ընկերությունը գործարկեց 4G չորրորդ սերնդի (LTE) բջջային ցանցը:

2017թ.-ին Ընկերությունը վերանվանվեց «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի:

[1] Ցանցային օպերատորների ենթակառուցվածքների կամ համացանցի միջոցով տեսալսողական տեղեկատվության տարածման ծառայություններ

2018թ.-ին Ընկերությունը ամրակցված կապի շուկայում գործարկեց VDSL լայնաշերտ ինտերնետի և IPTV ծառայությունները:

2020թ.-ի հոկտեմբերին «Թիմ» ՍՊԸ-ն ձեռք բերեց Ընկերության 100% բաժնետոմսերը: Նույն տարվա նոյեմբերին Ընկերությունը վերանվանվեց «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի:

2021թ.-ից Ընկերությունը ամրակցված կապի շուկայում նախաձեռնել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) FTTH (Fiber to the Home - Օպտիկա մինչև բնակարան) ցանցի կառուցումը:

Նույն թվականից Ընկերությունը՝ DWDM օպտիկամանրաթելային ցանցի շնորհիվ տարածաշրջանային հեռահաղորդակցության օպերատորներին սկսել է մատուցել Ասիայից Եվրոպա տվյալների տարանցման ծառայություններ:

1.1.2.1 *Թողարկողի ռազմավարությունը*

Ընկերության առաքելությունն է մարդկանց շփումն ու աշխատանքը դարձնել ավելի հասանելի ու հարմար՝ ներդնելով նորագույն թվային տեխնոլոգիաները: Ռազմավարության հիմնական բաղադրիչները ներկայացված են ստորև կետերով.

- **ապահովել կոմունիկացիոն ցանցերի մշտական արդիականացումը.**
  Ընկերությունը շարունակաբար արդիականացնում է իր ամրակցված և շարժական ցանցերը հանրապետության ողջ տարածքով՝ ստեղծելով ցանցային, սերվերային և ծրագրային հզոր և ճկուն ենթակառուցվածք
  Հանդիսանալով ՀՀ ազգային հանրային հեռախոսային ցանցի (PSTN) ժառանգորդը, Ընկերությունը տիրապետում է ստորգետնյա խողովակների և վերգետնյա սյուների ցանցային ենթակառուցվածքին, ինչը հիմք է ապահովում գերարագ 25G-PON տեխնոլոգիայի հիման վրա FTTH ծառայության ներդրման համար:
  Ընկերությունը 2023թ.-ի ընթացքում կազմակերպված 700 Մhց և 1800 ՄՀց ռադիոհաճախականության հատվածների ձեռքբերման մրցույթների արդյունքում ձեռք բերեց համապատասխանաբար 40 և 10 ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություններ, որոնց շնորհիվ Ընկերությունն էլ ավելի կմեծացնի 4G ցանցի հասանելիությունը, ինչպես նաև շենք-շինություններում ցանցի ներթափանցումը, բացի այդ Ընկերությունը կներդնի 5G ցանց ՀՀ խոշորագույն երեք քաղաքներում:
- **ստեղծել ավելի ճկուն և բարձրակարգ միջազգային կապուղիների ենթակառուցվածք.**
  Տվյալների փոխանցման ծառայությունների նկատմամբ պահանջարկի գլոբալ աճին զուգահեռ էլ ավելի է ընդգծվում ՀՀ դերը որպես տարանցիկ շրջան Ասիայից Եվրոպա տվյալների փոխանցման համար: Ընկերությունն արդեն իսկ ունի գործող DWDM օպտիկամանրաթելային ցանց, որի միջոցով ապահովվում է կապը դեպի Վրաստան և

Եվրոպա: DWDM ցանցի արդիականացումներն էլ ավելի կբարձրացնեն տվյալների տարանցման թողունակությունը

- **ավելացնել բաժանորդային բազան և բարձրացնել սպասարկման որակը.** Ամրակացված և շարժական կապի ծառայությունների որակի և հասանելիության աճին զուգահեռ, Ընկերությունը նախատեսում է մեծացնել բաժանորդների քանակը նաև համակցված (կոնվերգենտ) փաթեթների/ծառայությունների գրավիչ առաջարկներով, որտեղ շարժական ծառայությունները կապակցված են ամրակցված լայնաշերտ ինտերնետի, IPTV թվային հեռուստատեսության և ամրակցված ձայնային ծառայություններին:
  Ընկերությունը կարևորում է հաճախորդների լավագույն փորձառությունը շփման բոլոր կետերում՝ որպես իր հաճախորդ վերաբերվելով նաև Team հավելվածների և ծառայությունների բոլոր օգտատերերին, որոնց քանակի ավելացումը նույնպես Ընկերության առաջիկա տարիների առաջնահերթություններից է:

- **ներդնել կառավարման միջազգային ստանդարտներ.**
  Ոլորտի լավագույն չափանիշների պահպանման, պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակի և շարունակական բարելավման նպատակով Ընկերությունը ներդնում է կառավարման միջազգային ստանդարտներ (ISO 9001:2015 որակի, ISO 27001 տեղեկատվական անվտանգության և ISO 14001 բնապահպանական կառավարման համակարգեր)՝ բավարարելով որակի, տեղեկատվական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության պահանջները:

1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալն Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ կազմել է 18,837,709 հազար ՀՀ դրամ, որը բաժանված է 188,377,090 հատ տեղաբաշխված «Բ» դասի սովորական անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով: Թողարկողի բաժնետիրական կառուցվածքը ներկայացված է սույն Ազդագրի 3.5.1 գլխում:

1.1.4 Թողարկողի բիզնեսի նկարագիրը

Թողարկողի բիզնես նկարագիրը մանրամասն ներկայացված է Ազդագրի 3.2 բաժնում:

Ընկերությունը գործունեություն է ծավալում ՀՀ հեռահաղորդակցության շուկայում՝ առաջարկելով ամրակցված և շարժական կապի ծառայություններ, ինչպես նաև թվային ծառայություններ: Ընկերությունը նաև իրականացնում է սարքավորումների վաճառք:

2022թ.-ի դրությամբ Ընկերության ընդհանուր հասույթը կազմել է 34.6 մլրդ ՀՀ դրամ, որից 47%-ը ձևավորվել է շարժական կապի ծառայությունների մատուցումից, 42%-ը՝ ամրակցված կապի ծառայությունների մատուցումից, 9%-ը՝ սարքավորումների վաճառքից, իսկ 2%-ը՝ այլ

աղբյուրներից: Ընկերության 2022թ.-ի ընդհանուր հասույթը նախորդ տարվա համեմատ աճել է 9%-ով:

1.1.4.1 *Շարժական կապի ծառայություններ*

Ընկերությունը շարժական կապի շուկայում մատուցում է ձայնային և ինտերնետային ծառայություններ: Շարժական կապի ծառայությունների հետ մեկտեղ Ընկերությունը բաժանորդներին մատուցում է թվային հեռուստատեսության ծառայություններ՝ բջջային հավելվածի միջոցով:

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության շարժական կապի ակտիվ բաժանորդային համարների (այսուհետ՝ բաժանորդներ) քանակը կազմել է 958,293, որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ աճել է 4.7%-ով:

Շարժական կապի շուկան բաղկացած է 3 օպերատորներից՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, «Յուքոմ» ՓԲԸ (այսուհետ՝ Յուքոմ) և «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ (այսուհետ՝ ՄՏՍ Հայաստան):

Շարժական կապի շուկայում Ընկերությունը բաժանորդների քանակով տարիներ շարունակ զբաղեցնում է կայուն երկրորդ հորիզոնականը՝ 25% մասնաբաժնով:

Ընկերությունը շարժական կապի շուկայում հիմնական գործունեությունից ձևավորված (առանց սարքավորումների վաճառքի) եկամտի մակարդակով զբաղեցնում է կայուն 2րդ տեղը՝ 19.8% մասնաբաժնով:

1.1.4.2 *Ամրակցված կապի ծառայություններ*

Ընկերությունը ամրակցված կապի շուկայում մատուցում է ձայնային և ինտերնետային ծառայություններ: Ամրակցված Ինտերնետ ծառայությունների հետ մեկտեղ Ընկերությունը բաժանորդներին մատուցում է թվային հեռուստատեսության ծառայություններ IPTV և OTT տեխնոլոգիաներով:

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ամրակցված կապի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի բաժանորդների (այսուհետ՝ ամրակցված կապի բաժանորդներ) քանակը կազմել է 326,907, որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ նվազել է 11%-ով՝ հիմնականում պայմանավորված ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի նվազմամբ:

Ամրակցված կապի շուկայի առաջատար 3 օպերատորներն են «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն, «Յուքոմ» ՓԲԸ-ն և «Ջիէնսի-Ալֆա» ՓԲԸ (այսուհետ՝ Ռոստելեկոմ): Ընկերությունը ամրակցված կապի շուկայում բաժանորդների քանակով համարվում է շուկայի առաջատար, որը հիմնականում պայմանավորված է ամրակցված հեռախոսակապի շուկայում Ընկերության պատամականորեն գերիշխող դիրքով:

Ամրակցված ինտերնետ կապի շուկայում Ընկերությունը բաժանորդների քանակով զբաղեցնում է 2-րդ տեղը՝ 33% մասնաբաժնով[2]:

2022թ.-ի դրությամբ Ընկերությունը ամրակցված կապի շուկայում հիմնական գործունեությունից ստացված եկամտի մակարդակով զբաղեցնում է 1-ին տեղը, 40% մասնաբաժնով[3]:

1.1.5 Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված է **Հավելված 2-ում**:

1.1.6 Թողարկողի խմբի կառուցվածքը

Ընկերությունը իր միակ բաժնետեր «Թիմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Հիմնական բաժնետեր), ինչպես նաև վերջինիս հսկողության տակ գտնվող «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի, «Թիմ Փեյ» ՓԲԸ-ի և «Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ի հետ միասին հանդիսանում են մեկ խմբի անդամ (այսուհետ՝ Խումբ): Խմբի իրական շահառուներն են Հայկ և Ալեքսանդր Եսայանները (այսուհետ՝ Իրական շահառուներ), որոնցից յուրաքանչյուրին պատկանում է Հիմնական բաժնետիրոջ բաժնետոմսերի 50%-ը:

Ստորև ներկայացված է Խմբի սխեմատիկ կառուցվածքը.



[2] Շուկայական մասնաբաժինը հաշվարկված է առաջատար 3 օպերատորների բաժանորդների գումարային քանակի հիման վրա:
[3] Շուկայական մասնաբաժինը հաշվարկված է առաջատար 3 օպերատորների եկամուտների գումարային քանակի հիման վրա:

1.1.7 **Ակտիվների որակը**

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը, կազմել է 70.4 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 46%:

1.2 Թողարկողին և բաժնետոմսերին առնչվող ռիսկերը

1.2.1 **Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը**

Թողարկողին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագիրը ներակայացված է Ազդագրի 3.2 մասում:

Մրցակցային ռիսկ: Թողարկողի գործունեության՝ հեռահաղորդակցության շուկայում առկա է մրցակցություն և ժամանակ առ ժամանակ հնարավոր է դրա սրացում, ինչը կարող է բացասաբար ազդեցություն Ընկերության գործառնական և/կամ ֆինանսական ցուցանիշների վրա:

Կապիտալ ծախսերի և շրջանառու կապիտալի հետ կապված ծախսեր: Ընկերության գործունեության ոլորտն իր տեսակով ծախսատար է, և իր մրցակցային դիրքը պահպանելու և/կամ առավել բարելավելու համար Ընկերությունը իրականացնում է մեծ ծավալի կապիտալ և շրջանառու կապիտալի ներդրումներ:

Տնտեսական, քաղաքական, և սոցիալական ռիսկեր: Ընկերության, ինչպես նաև մրցակիցների և առհասարակ ոլորտի հաջողությունը սերտորեն կապված է ՀՀ-ում ընդհանուր տնտեսական զարգացումների հետ: ՀՀ տնտեսական վիճակի վատթարացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ հաճախորդների վճարունակության և սպառման օրինաչափությունների վրա:

Արտարժութային ռիսկ: Ընկերության կապիտալ ներդրումների մեծ մասը, ինչպես նաև որոշակի տեսակի ծառայությունների (ռոումինգ, միջազգային զանգեր, միջազգային կապուղիներ և այլն) և մեծածախ ինտերնետի առուվաճառքն իրականացվում է արտարժույթով, ուստի Թողարկողի մոտ առկա է նաև արտարժութային ռիսկի գործոնը՝ կապված փոխարժեքի հնարավոր տատանումների հետ:

Պահանջարկի նվազման ռիսկ: ՀՀ-ում հեռահաղորդակցության ծառայությունների նկատմամբ պահանջարկը էական ազդեցություն ունի Թողարկողի և մրցակիցների գործունեության վրա:

Հաճախորդների արտահոսքի ռիսկ: Շարժական և ամրակցված կապի ոլորտներին հատուկ է բաժանորդների արտահոսքը, որը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է մրցակցության բարձր մակարդակով:

Դատական գործընթացներ: Ընկերությունը ներգրավված է մի քանի դատական վարույթներում (ներկայացված է Ազդագրի 3.17.3 կետով), և վերջիններիս մասով Ընկերության համար անբարենպաստ դատական ակտերի կայացումը և ուժի մեջ մտնելը

կարող են էական բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական ցուցանիշների և գործունեության վրա:

1.2.2 Բաժնետոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագիրը ներակայացված է Ազդագրի 2.1 մասում:

Տոկոսադրույքի ռիսկ: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի Բաժնետոմսերից ակնկալվող եկամտաբերության ցուցանիշի վերանայման:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Բաժնետոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակամիջոցում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Բաժնետոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, պարտավորությունների կատարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Ցուցակման հետ կապված ռիսկեր: Թողարկողը Բաժնետոմսերը ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու նպատակով դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա): Բաժնետոմսերի՝ առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ, որից հետո Ընկերությունը ետ կգնի տեղաբաշխված բաժնետոմսերը:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը երկրորդային շուկայում Բաժնետոմսերի իրացվելիությունն ապահովելու համար ներգրավելու է շուկա ստեղծող(ներ): Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ Բաժնետոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել Բաժնետոմսերը երկրորդային շուկայում իրենց համար տնտեսապես շահավետ գնով և ծավալով:

Բաժնետերերին տրվող ձայնի իրավունքների դասային տարբերություն: Ազդագրի ներքո առաջարկվող «Ա» դասի բաժնետոմսերի սեփականատերերն ունեն ավելի քիչ ձայնի իրավունք, քան «Բ» դասի բաժնետոմսերի սեփականատերերը: Բաժնետոմսերի առաջարկից հետո Ընկերության «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատեր «Թիմ» ՓԲԸ-ն կպահպանի հիմնական բաժնեմասը և կշարունակի էական ազդեցություն ունենալ Ընկերության վրա:

Բաժնետոմսերից բխող իրավունքների իրացում: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Բաժնետոմսերից բխող իրավունքները հնարավոր կլինի իրացնել միայն Թողարկողի

կանոնադրական կապիտալի փոփոխությունն արտացոլող կանոնադրությունը իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից գրանցելուց հետո:

Շահութաբաժնի վճարման սահմանափակումներ: Ընկերության կողմից շահութաբաժինների վճարումը կախված կլինի մի շարք գործոններից,ինչպիսիք են օրինակ զուտ (նաև կուտակված) շահույթի մակարդակը, եկամուտների և շահութաբերության մակարդակը, պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը, գործող օրենքներով և վարկային պայմանագրերով շահութաբաժինների վճարման վերաբերյալ կիրառելի սահմանափակումները և այլ գործոններ: Եթե ապագայում շահութաբաժիններ չվճարվեն, ապա Բաժնետոմսերի գնով պայմանավորված կապիտալի հավելաճը (եթե այդպիսին լինի) ներդրողների շահույթի միակ աղբյուրը կհանդիսանա:

1.3 Թողարկողի ֆինանսատնտեսական վիճակի միտումները

2023թ.-ի առաջին եռամսյակի վերջի դրությամբ Ընկերության շարժական կապի բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 951,967, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ աճել է 3.9%-ով, իսկ 2022թ.-ի տարվերջի ցուցանիշի նկատմամբ նվազել է 0.7%-ով:

2023թ.-ի առաջին եռամսյակի վերջի դրությամբ Ընկերության ամրակցված կապի բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 320,223, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ նվազել է 11%-ով, որը պայմանավորված է ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի նվազմամբ (շուրջ 13%-ով): Հարկ է նշել, որ 2023թ.-ի առաջին եռամսյակի վերջի դրությամբ FTTH բաժանորդների քանակը կազմել է 8,653 բաժանորդ, որը 2022թ.-ի տարվերջի ցուցանիշի նկատմամբ աճել է 29%-ով:

Թողարկողը նախատեսում է ընդլայնել շարժական լայնաշերտ (LTE) ինտերնետի ծածկույթը, ինչպես նաև ՀՀ-ում ներդնել 5G ցանց, որոնց համար 2023թ.ի մարտ ամսին ստացել է 700 ՄՀց ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն: Թողարկողը նաև գտնվում է գերարագ օպտիկամանրաթելային ցանցի ընդլայման ակտիվ փուլում, որի համար հավելյալ լիցենզիաներ/թույլտվություններ անհրաժեշտ չեն:

Թողարկողի տնօրենների խորհրդի գնահատմամբ նշված զարգացման ուղղությունները հավելյալ աճ կհաղորդեն Ընկերության գործունեությանը և դրական ազդեցություն կունենան վերջինիս ֆինանսական ցուցանիշների վրա:

Իր բնականոն գործունեության նպատակով Ընկերությունը ստացել է հետևյալ հիմնական լիցենզիաները/թույլտվությունները.

Թույլատվություն/Լիցենզիա		Համար	Ում կողմից	Տրված է	Գործում է մինչև
Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանց շահագործելու իրավունքը և պարտականությունը		Թիվ 60	ՀԿԾՀ	01.03.1995 (փոփոխվել է 2007թ.-ին)	03.03.2028
Ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա		ԿՀ N 311	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով,	29.04.2021	29.04.2031
Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)		ՔՊԼ 10711	ՀՀ Քաղաքաշինության կոմիտե	09.02.2007 (փոփոխվելլ է 2020թ.-ին)	Անժամկետ
Քաղաքաշինական փաստաթղթերի ինժիներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա		ՔՊԼ 17071	ՀՀ Քաղաքաշինության կոմիտե	12.04.2019 (փոփոխվել է 2020թ.-ին)	Անժամկետ
Ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություններ					
700 ՄՀց տիրույթ	713-723 ՄՀց 768-778 ՄՀց	1327	ՀԾԿՀ	10.03.2023	14.03.2033
	723-733 ՄՀց 778-788 ՄՀց	1328	ՀԾԿՀ	22.03.2023	24.03.2033
900 ՄՀց տիրույթ	890-902.5 ՄՀց 935-947.5 ՄՀց	0855	ՀԾԿՀ	27.10.2010	03.03.2028
1800 ՄՀց տիրույթ	1735 – 1760 ՄՀց 1830 - 1855 ՄՀց	0124	ՀԾԿՀ	20.04.2007	03.03.2028
		0931	ՀԾԿՀ	27.04.2011	03.03.2028
		1277	ՀԾԿՀ	23.04.2019	25.04.2029
		1281	ՀԾԿՀ	19.06.2019	20.06.2029
	1780-1785 ՄՀց 1875-1880 ՄՀց	1333	ՀԾԿՀ	12.04.2023	14.04.2033
2100 ՄՀց տիրույթ	1965-1980 ՄՀց 2155-2170 ՄՀց	0177	ՀԾԿՀ	01.10.2007 16.03.2016	03.03.2028

1.4 Թողարկողի աուդիտորը և խորհրդատուները

Թողարկողի 2020-2022թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ն՝ www.pwc.com/am:

1.5 Կառավարման մարմնի անդամները և խոշոր բաժնետերերը

Թողարկողի կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ Ընդհանուր Ժողով), Խորհուրդը և գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը:

Թողարկողի միակ բաժնետերն է հանդիսանում «Թիմ» ՓԲԸ-ն:

Թողարկողի Խորհուրդը կազմված է 5 անդամներից.

Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը ոլորտում
Ալեքսանդր Եսայան	Խորհրդի նախագահ	16 տարի
Հայկ Եսայան	Խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն	23 տարի
Արամ Բարսեղյան	Խորհրդի անդամ, փոխտնօրեն	13 տարի

Ալբերտ Տոնեյան	Խորհրդի անկախ անդամ	27 տարի
Արտավազդ Մինասյան	Խորհրդի անկախ անդամ	13 տարի

Թողարկողի գործադիր մարմնի կառուցվածքը՝

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Հայկ Եսայան	Գլխավոր տնօրեն	23 տարի

Թողարկողի աշխատակիցների ընդհանուր թիվն 31.12.2022թ.-ին կազմել է 1,911, իսկ 31.12.2021թ.-ին՝ 1,899:

1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական տվյալները

Տեղաբաշխվող բաժնետոմսերը նոր թողարկված «Ա» դասի հասարակ բաժնետոմսեր են (այսուհետ՝ Բաժնետոմս կամ Բաժնետոմսեր), բաժանելի չեն և փոխարկելի չեն:

Ազդագրի ներքո նախատեսվում է տեղաբաշխել 40,000,000 (քառասուն) միլիոն հատ Բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

Միավոր բաժնետոմսի առաջարկի գինը սահմանվում է 206 (երկու հարյուր վեց) ՀՀ դրամ:

Բաժնետոմսերի առաջարկի ընդհանուր ծավալը կազմում է 8,240,000,000 (ութ միլիարդ երկու հարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ:

Բաժնետոմսերի տեղաբաշխումից ներգրավված միջոցները Թողարկողը նախատեսում է օգտագործել Ընկերության ռազմավարությունից բխող ներդրումների իրականացման նպատակով: Միջոցների օգտագործման ուղղությունները ներկայացված են Ազդագրի Ներդրումային ռազմավարություն բաժնում:

Բաժնետոմսերի տեղաբաշխման սկսելու օր է համարվում ԿԲ կողմից Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրվա ժամը 09:00-ն: Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտելու օր է համարվում 2023թ.-ի հոկտեմբերի 31-ի օրվա ավարտը:

Տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Թողարկողի իրավասու մարմնի որոշմամբ:

1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Բաժնետոմսերը կտեղաբաշխվեն Բորսայից դուրս, ուղղակի վաճառքի միջոցով:

Բաժնետոմսերը ձեռք բերելու համար ներդրողները պետք է սահմանված կարգով լրացնեն և պատշաճ կերպով Տեղաբաշխողին ներկայացնեն Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն Բաժնետոմսերի թողարկման պայմաններն ընդունելու

իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր: Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Տեղաբաշխողին առաքումից հետո Բաժնետոմսերի ձեռքբերման համար համապատասխան դրամական միջոցները ներդրողների կողմից պետք է մուտքագրվեն թողարկման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված 1570043105289700 հաշվեհամարին (այսուհետ՝ Հատուկ հաշվեհամար)՝ մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ավարտը:

Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Հայտ-հանձնարարականները բավարարվում կամ մերժվում են այն ներկայացնելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում: Ներդրողը բավարարման կամ մերժման մասին տեղեկանում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/ները: Բացառություն է կազմում միայն Բանկի MyInvest հարթակի միջոցով տրամադրված էլեկտրոնային հայտերի դեպքը, երբ հայտերի բավարարման մասին տեղեկացումը տրամադրվում է Բանկի համակարգում գրանցված ներդրողի էլեկտրոնային հասցեին:

Բաժնետոմսերի ձեռքբերման օր է համարվում հայտ-հանձնարարականի բավարարման օրը:

Բաժնետոմսերը տեղաբաշխելուց հետո Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսա տեղաբաշխված Բաժնետոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու նպատակով:

Առաջարկի ամբողջական նկարագիրը ներկայացված է Ազդագրի 2.4 բաժնում:

1.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ

1.8.1 Ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2022թ. (Աուդիտ անցած)	2021թ. (Աուդիտ անցած)	2020թ. (Աուդիտ անցած)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	34,576,678	31,710,514	29,541,097
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(22,630,336)	(21,587,131)	(17,191,394)
Համախառն շահույթ (վնաս)	**11,946,343**	**10,123,383**	**12,349,703**
Իրացման ծախսեր	(3,287,590)	(3,059,925)	(3,293,747)
Վարչական ծախսեր	(4,232,133)	(3,486,129)	(6,035,970)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	**4,426,619**	**3,577,329**	**3,019,986**
Գործառնական այլ եկամուտներ	7,430,362	1,656,575	1,339,946
Սոցիալական հատկացումներ	(88,136)	(32,600)	(149,983)
-Գործառնական այլ ծախսեր	(1,133,909)	(417,575)	(859,323)

Գործառնական շահույթ (վնաս)	**10,634,936**	**4,783,729**	**3,350,626**
Ֆինանսական ծախսեր/եկամուտ	**315,896**	**303,332**	**(344,210)**
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	(460,410)	(625,059)	493,149
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	**10,490,422**	**4,462,002**	**3,499,565**
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)			
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	**10,490,422**	**4,462,002**	**3,499,565**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(1,813,122)	(993,105)	(1,209,746)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	**8,677,300**	**3,468,897**	**2,289,819**

1.8.2 Ամփոփ հաշվապահական հաշվեկշիռ

հազ. Դրամ

Ցուցանիշի անվանումը	2022թ. (Աուդիտ անցած)	2021թ. (Աուդիտ անցած)	2020թ. (Աուդիտ անցած)
Հիմնական միջոցներ	17,290,135	14,679,757	15,997,584
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	4,288,605	3,463,948	2,210,404
Ներդրումային գույք	5,927,067	-	-
Ոչ նյութական ակտիվներ	4,285,275	3,918,357	3,995,028
Կանխավճարներ ԱՕԻ պայմանագրերի գծով	211,590	303,932	-
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	1,196,571	1,304,285	1,508,569
Վարձակալված ակտիվների օգտագործման իրավունք	3,507,709	3,471,418	4,357,890
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	17,249,248	10,955,362	6,224,629
Հետաձգված հարկային ակտիվներ	2,700,097	4,249,652	4,736,632
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	3,035,653	1,040,487	342,456
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**59,691,950**	**43,387,198**	**39,373,192**
Պաշարներ	608,905	431,493	223,831
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8,203,651	5,710,491	3,477,754
Ժամկետային ավանդ	823,885	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	615,800	1,467,060	215,526
Այլ ընթացիկ ակտիվներ	384,909	402,931	1,052,792
Վաճառքի համար պահվող ակտիվներ	60,070	-	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**10,697,220**	**8,011,975**	**4,969,903**
Ընդամենը ակտիվներ	**70,389,170**	**51,399,173**	**44,343,095**
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	18,837,709	18,837,709	18,837,709
Կուտակված շահույթ	9,672,304	2,195,699	512,847
Պահուստային կապիտալ	2,825,656	2,825,656	2,825,656
Ընդամենը սեփական կապիտալ	**31,335,669**	**23,859,064**	**22,176,212**
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	17,465,550	8,036,392	3,506,770
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	4,600,304	4,569,456	7,389,358
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**22,065,854**	**12,605,848**	**10,896,128**
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	868,767	628,504	1,451,203
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	8,523,257	6,779,993	6,309,042
Ստացված ընթացիկ կանխավճարներ	4,673,871	2,857,931	671,894
Այլ կրեդիտորական պարտքեր	981,842	697,133	859,677
Այլ ընթացիկ պարտավորություններ	1,939,910	3,970,700	1,978,939
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**16,987,647**	**14,934,261**	**11,270,755**
Ընդամենը պարտավորություններ	**39,053,501**	**27,540,109**	**22,166,883**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**70,389,170**	**51,399,173**	**44,343,095**

1.8.3 **Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ տվյալներ**

հազ.դրամ

Ցուցանիշի անվանումը	2022թ. (Աուդիտ անցած)	2021թ. (Աուդիտ անցած)	2020թ. (Աուդիտ անցած)
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	1,467,060	215,526	3,567,276
Գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	8,181,569	9,852,035	6,156,404
Ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	-19,232,678	-11,890,933	14,493,882
Ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր	10,350,791	3,300,431	-24,053,243
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	-150,942	-9,999	51,207
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	615,800	1,467,060	215,526

1.8.4 **Ամփոփ ֆինանսական գործակիցներ**

Ցուցանիշի անվանումը	2022թ.	2021թ.	2020թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	46	18	12
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	31.4%	15.1%	6.9%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	14.2%	7.2%	4.5%
Զուտ շահույթի մարժա (NPM)	25.1%	10.9%	7.8%
Կապիտալի համարժեքության գործակից	0.45	0.46	0.50
Ֆինանսական կախվածության գործակից	1.25	1.15	1.00
Բացարձակ իրացվելիության գործակից	0.04	0.10	0.02
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.52	0.48	0.33
Ընդհանուր իրացվելիության գործակից	0.63	0.54	0.44
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	6.4	9.3	11.4
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	57.1	39.3	32.0
Պաշարների շրջանառելիության գործակից	43.5	65.9	41.4
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	8.4	5.5	8.8
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	3.0	3.3	3.2
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	123.4	110.7	114.7

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 3-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՄԱՍ 2 ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 Ռիսկային գործոններ

Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ, ուստի դրանք ձեռք բերելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված ռիսկերը: Ստորև ներկայացված է բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերի ոչ ամբողջական ցանկը:

2.1.1 Տոկոսադրույքի ռիսկ

Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի Բաժնետոմսերից ակնկալվող եկամտաբերության ցուցանիշի վերանայման: Ներդրողները կարող են վնասներ կրել շուկայական տոկոսադրույքների մակարդակի բարձրացման պատճառով, քանի որ շուկայական տոկոսադրույքների աճն այլ հավասար պայմաններում կարող է բերել Բաժնետոմսերի շուկայական գնի անկման:

2.1.2 Շուկայական ռիսկ

Երկրորդային շուկայում Բաժնետոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակամիջոցում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են տատանվել և ժամանակի ընթացքում կարող են իջնել կամ բարձրանալ:

2.1.3 Վարկային/դեֆոլտի ռիսկ

Ներդրողները Բաժնետոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, պարտավորությունների կատարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

2.1.4 Հետգնման ռիսկ

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Ազդագրով ներկայացված Բաժնետոմսերի հետգնման դեպքերում իրենց մոտ առաջանում է վերաներդրման ռիսկ, երբ ներդրողը չի կարող համարժեք սպասելի եկամտաբերությամբ ներդրում կատարել ներդրումային գործիքների բացակայությամբ պայմանավորված:

2.1.5 **Ցուցակման հետ կապված ռիսկեր**

Թողարկողը Բաժնետոմսերը ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու նպատակով դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա): Բորսայում Բաժնետոմսերի առևտրի թույլատրումը ենթակա է որոշակի պահանջների, և Ընկերությունը մտադիր է տեղաբաշխման ավարտից հետո հնարավորինս շուտ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը և գործադրել բոլոր ջանքերը Բորսայում ցուցակումը և/կամ առևտրի թույլատրումը ապահովելու համար: Թողարկողի կողմից Բորսա ներկայացվելիք Բաժնետոմսերի ցուցակման և/կամ առևտրին թույլատրման հայտի բավարարումը Թողարկողը երաշխավորել չի կարող: Բաժնետոմսերի՝ առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ, որից հետո Ընկերությունը ետ կգնի տեղաբաշխված բաժնետոմսերը:

Հարկ է նշել, որ Ընկերությունը բաժնետոմսերը գնելու հարցում Վարկային պայմանագրով ունի սահմանափակումներ, ըստ որի առանց Վարկատուների գրավոր համաձայնության Ընկերությունը չի կարող գնել, մարել կամ ձեռք բերել իր բաժնետոմսերը:

2.1.6 **Ապացուցակման և/կամ հարթակի փոփոխության ռիսկ**

Հավանական է, որ Ազդագրով նախատեսված դեպքերում Բաժնետոմսերի ետ գնման արդյունքում Թողարկողի Բաժնետոմսերն այդ պահից ի վեր չբավարարեն Բորսայի ցուցակման և/կամ առևտրին թույլտվության պայմաններին և կասեցվեն, ապացուցակվեն և/կամ թույլտվությունը դադարեցվի Բորսայի կողմից, և/կամ Բաժնետոմսերը տեղափոխվեն Բորսայի այլ հարթակ, ինչի պարագայում Բաժնետոմսերը չեն ունենա երկրորդական շուկայում շրջանառելիության հնարավորություն (այսինքն ներդրողները չեն կարողանա Բաժնետոմսերը վաճառել երրորդ անձանց), և/կամ կսահամանափակվի Բաժնետոմսերով գործարքների ծավալը (շուկայի խորությունը), և/կամ Բաժնետոմսերից ստացվող եկամուտները ներդրողների համար կառաջացնեն հարկային պարտավորություններ:

2.1.7 **Իրացվելիության ռիսկ**

Թողարկողը երկրորդային շուկայում Բաժնետոմսերի իրացվելիությունն ապահովելու համար ներգրավելու է շուկա ստեղծող(ներ): Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ Բաժնետոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում, ելնելով տնտեսական միջավայրի հնարավոր բացասական փոփոխությունների և/կամ ֆինանսական շուկայի անբարենպաստ միտումներից և/կամ այլ հանգամանքներից, ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել Բաժնետոմսերը երկրորդային շուկայում իրենց համար տնտեսապես շահավետ գնով և ծավալով:

2.1.8 **Գնաճի կամ գնողունակության ռիսկ**

Ներդրողները Բաժնետոմսերից սպասվող եկամտաբերությունը գնահատելիս պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել սպասվող եկամտաբերությունից ավելի ցածր՝ պայմանավորված ՀՀ-ում առկա գնաճով:

2.1.9 **Բաժնետերերին տրվող ձայնի իրավունքների դասային տարբերություն**

Ազդագրի ներքո առաջարկվող «Ա» դասի բաժնետոմսերի սեփականատերերն ունեն ավելի քիչ ձայնի իրավունք, քան «Բ» դասի բաժնետոմսերի սեփականատերերը:

«Ա» դասի յուրաքանչյուր բաժնետոմս իր սեփականատիրոջը տրամադրում է 1 (մեկ) ձայնի իրավունք, իսկ «Բ» դասի յուրաքանչյուր բաժնետոմս՝ 10 (տասը) ձայնի իրավունք:

«Ա» դասի բաժնետոմսերի առաջարկից հետո Ընկերության «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատեր «Թիմ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Հիմնական բաժնետեր) կպահպանի հիմնական բաժնեմասը և կշարունակի էական ազդեցություն ունենալ Ընկերության վրա:

«Ա» դասի հասարակ բաժնետոմսերի ամբողջական ծավալի տեղաբաշխման դեպքում Հիմնական բաժնետերը դեռևս կշարունակի վերահսկել Ընկերության հասարակ բաժնետոմսերի 82.49%-ը: Հաշվի առնելով ձայների դասային տարբերությունը՝ Հիմնական բաժնետիրոջը բաժին կընկնի Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների 97.92%-ը:

Քանի որ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ (50% գումարած 1 (մեկ) ձայն), եթե ՀՀ օրենսդրությամբ ձայների այլ քանակ սահմանված չէ, ապա կարող ենք ասել, որ Հիմնական բաժնետերը փաստացի վերահսկում է ընդհանուր ժողովի որոշումների ընդունումը: Հիմնական բաժնետիրոջից են կախված այնպիսի որոշումների ընդունումը, ինչպիսիք են.

- կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը,
- վերակազմակերպումը և լուծարումը,
- տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը:

2.1.10 **Բաժնետոմսերից բխող իրավունքների իրացում**

Ներդրողի՝ ձեռքբերված Բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված այլ

պահառուի մոտ ներդրողի անունով այդ Բաժնետոմսի գրանցման պահից: Սակայն, ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Բաժնետոմսերից բխող իրավունքները հնարավոր կլինի իրացնել միայն տեղաբաշխման ավարտից և Թողարկողի ընդհանուր ժողովի կողմից տեղաբաշխման արդյունքներն ամփոփելուց և Թողարկողի կանոնադրական կապիտալի փոփոխությունն արտացոլող կանոնադրությունը իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից գրանցելուց հետո:

2.1.11 Շուկայի թերզարգացվածության հետ կապված ռիսկեր

ՀՀ-ում կորպորատիվ (ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված) բաժնետոմսերի հրապարակային առևտրային շուկան թերզարգացած է: Թեև Ընկերությունը Բաժնետոմսերի տեղաբաշխումից հետո ցուցակման և/կամ առևտրին թույլտվության համար դիմելու է Բորսա, չկա որևէ երաշխիք, որ երկրորդային շուկան կլինի ակտիվ:

Երկրորդային շուկայի թերզարգացվածությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ Բաժնետոմսերի իրացվելիության և գնի վրա:

2.1.12 Երկրորդային շուկայում գնի տատանում

Բաժնետոմսերի տեղաբաշխման/առաջարկի գինը չի կարող ցուցիչ լինել շուկայական գնի համար՝ Բորսայում շրջանառվելու ժամանակ: Բաժնետոմսերի շուկայական գինը ենթակա է տատանումների և կարող է լինել անկայուն:

Բաժնետոմսերի շուկայական գնի վրա կարող են ազդել Ընկերության գործառնական գործունեության հետ չկապված զարգացումները, ինչպիսիք են մրցակից ընկերությունների գործառնական արդյունքները, Ընկերության և Իրական շահառուների վերաբերյալ մամուլի հաղորդակցությունները կամ մրցակիցների ռազմավարական գործողությունները (ներառյալ վաճառքը, ձեռքբերումները և վերակազմավորումները), շուկայական պայմանների և կարգավորող դաշտի փոփոխությունները:

2.1.13 Բաժնետոմսերի վաճառքի գործարքներ

Բաժնետոմսերի շուկայական գնի վրա բացասաբար կարող են ազդել երկրորդային շուկայում Բաժնետոմսերի վաճառքի գործարքները, ինչպես նաև որոշ անձանց սահմանափակող ժամանակահատվածի (lock-up period) լրացումից հետո (ներկայացված է Ազդագրի 2.9 կետով) նմանատիպ գործարքների հնարավոր իրականացման վերաբերյալ ներդրողների սպասումները:

Ընկերության, Հիմնական բաժնետիրոջ, Իրական շահառուների կողմից Ընկերության բաժնային արժեթղթերով վաճառքի գործարքները սահմանափակող ժամկետի ավարտից հետո նմանատիպ գործարքների հնարավոր իրականացման վերաբերյալ ներդրողների

սպասումները կարող են բացասաբար ազդել Առաջարկվող բաժնետոմսերի շուկայական գնի վրա:

2.1.14 Բաժնետոմսերի լրացուցիչ թողարկումներ

Ընկերությունը ապագայում կարող է թողարկել և տեղաբաշխել լրացուցիչ բաժնետոմսեր (կամ վերջինիս փոխարկվող այլ արժեթղթեր)՝ կապված նոր միջոցների ներգրավման, աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերի և որևէ այլ նպատակով, ինչի արդյունքում Բաժնետոմսերի սեփականատերերի մասնակցության տեսակարար կշիռը, ինչպես նաև քվեարկող բաժնետոմսերի ձայների մասնաբաժինը կարող են նվազել: Այս ամենը կարող է բացասաբար ազդել Բաժնետոմսերի շուկայական գնի վրա:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Ընկերությունը որոշակիորեն սահմանափակված է բաժնային արժեթղթերի լրացուցիչ թողարկում/տեղաբաշխում անելու հարցում (տես Ազդագրի 2.9 բաժին): Ընկերության կողմից նմանատիպ գործարքների իրականացումը սահմանափակող ժամկետի ավարտից հետո նմանատիպ գործարքների հնարավոր իրականացման վերաբերյալ ներդրողների սպասումները կարող են բացասաբար ազդել Առաջարկվող բաժնետոմսերի շուկայական գնի վրա, ինչպես նաև խաթարել լրացուցիչ բաժնային արժեթղթերի վաճառքի միջոցով կապիտալ ներգրավելու կարողությունը:

2.1.15 Շահութաբաժնի վճարման սահմանափակումներ

Ընկերության կողմից շահութաբաժինների վճարումը կախված կլինի մի շարք գործոններից, ինչպիսիք են օրինակ զուտ (նաև կուտակված) շահույթի մակարդակը, եկամուտների և շահութաբերության մակարդակը, պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը, գործող օրենքներով և վարկային պայմանագրերով շահութաբաժինների վճարման վերաբերյալ կիրառելի սահմանափակումներըև այլ գործոններ, որոնք Ընկերության կառավարման մարմինները ժամանակ առ ժամանակ կարող են էական համարել: Արդյունքում, ապագայում շահութաբաժիններ վճարելու հնարավորությունները կարող են սահմանափակվել:

Եթե ապագայում շահութաբաժիններ չվճարվեն, ապա Բաժնետոմսերի գնով պայմանավորված կապիտալի հավելաճը (եթե այդպիսին լինի) ներդրողների շահույթի միակ աղբյուրը կհանդիսանա:

2.2 Հիմնական տեղեկատվություն

2.2.1 Շրջանառու միջոցների մասին հայտարարություն

Ընկերության շրջանառու կապիտալի (առանց ներխմբային գործարքների) գծով փոփոխություններից առաջացած դրամական միջոցների հոսքը ըստ տարիների ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ	2020	2021	2022
Փոփոխություններ շրջանառու կապիտալում, որից	**839,977**	**(1,007,156)**	**2,443,438**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (աճ)/նվազում	207,824	(1,567,876)	(507,903)
Պաշարների (աճ)/նվազում	383,477	(207,662)	(177,412)
Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում)	643,823	663,637	570,352
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում)	(522,509)	(162,544)	284,709
Ստացված կանխավճարների աճ/(նվազում)	(166,328)	40,782	2,279,536
Հարկերի գծով պարտավորությունների աճ/(նվազում)	219,846	75,703	(46,062)
Այլ ընթացիկ ակտիվների/պարտավորությունների աճ/(նվազում)	73,844	150,803	40,218

Ընկերության շրջանառու կապիտալի փոփոխության դինամիկան վերջին տարիներին տատանվող է եղել, ընդ որում 2021 թվականին արձանագրվել է նվազում, իսկ 2020թ. և 2022թ.-ին աճ: Ընկերության կարծիքով ընկերության շրջանառու միջոցները բավարար են ընկերության ներկա կարիքների համար:

2.2.2 Կապիտալիզացիա և պարտավորություններ

Ստորև կապիտալիզացիայի աղյուսակով ներկայացված է Ընկերության կապիտալիզացիան և պարտավորությունները 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

հազար ՀՀ դրամ	2022
Երկարաժամկետ պարտավորություններ, որոնք ենթադրում են տոկոսային ծախս, որից	**20,632,331**
Երաշխավորված, որից	-
բանկային վարկեր	-
վարձակալության գծով պարտավորություններ	-
Ապահովված, որից	**17,465,550**
բանկային վարկեր	17,465,550
վարձակալության գծով պարտավորություններ	-
Չերաշխավորված և չապահովված, որից	**3,166,781**
բանկային վարկեր	-
վարձակալության գծով պարտավորություններ	3,166,781
Կարճաժամկետ պարտավորությունները, որոնք ենթադրում են տոկոսային ծախս, որից	**1,935,934**
Երաշխավորված, որից	-
բանկային վարկեր	-
վարձակալության գծով պարտավորություններ	-
Ապահովված	**868,767**
բանկային վարկեր	*868,767*
վարձակալության գծով պարտավորություններ	-
Չերաշխավորված և չապահովված, որից	**1,067,167**
բանկային վարկեր	-
վարձակալության գծով պարտավորություններ	*1,067,167*
Սեփական կապիտալ, որից	**31,335,669**
Կանոնադրական կապիտալ	18,837,709

Կուտակված շահույթ	9,672,304
Այլ պահուստներ	2,825,656
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻԶԱՑԻԱ	**53,903,934**

2.2.3 Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Թողարկողն ակնկալում է Բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավել 8,240,000,000 ՀՀ դրամ՝ նախքան տեղաբաշխման գծով վճարներն ու ծախսերը հաշվի առնելը:

Ներգրավված միջոցները Թողարկողը նախատեսում է օգտագործել Ընկերության ռազմավարությունից բխող ներդրումների (տե՛ս Ազդագրի Ներդրումային ռազմավարություն բաժինը) իրականացման ուղղությամբ:

Թողարկողը հավաստիացնում է, որ Բաժնետոմսերի տեղաբաշխումից ներգրավված միջոցները որևէ կերպ չի օգտագործի կամ փոխառություն տրամադրի կամ այլ կերպ հասանելի դարձնի որևէ այլ անձի, որպեսզի (ա) ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսավորի որևէ անձի հետ ցանկացած գործունեություն կամ բիզնես, որը նման ֆինանսավորման պահին կհանդիսանա ԱՄՆ կառավարության, ՄԱԿ-ի, Եվրոպական Միության (կամ նրա անդամ պետություններից որևէ մեկի), Միացյալ Թագավորության, Շվեյցարիայի, Կանադայի, Ճապոնիայի կամ նշվածներից որևէ մեկի կառավարական հաստատությունների և գործակալությունների կողմից կիրառվող որևէ պատժամիջոցի կամ սահմանափակող միջոցների (այսուհետ՝ Պատժամիջոցներ) առարկա կամ թիրախ, (բ) ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆինանսավորի որևէ երկրում/տարածքում կամ երկիրը/տարածքը ներառող կամ երկրի/տարածքի կողմից ցանկացած գործունեություն կամ բիզնես, որը հանդիսանում է երկրի/տարածքի նկատմամբ կիրառվող Պատժամիջոցների առարկա կամ թիրախ, կամ (գ) որևէ այլ ձևով հանգեցնի որևէ անձի (ներառյալ Ազդագրի ներքո Բաժնետոմսերի տեղաբաշխմանը մասնակցող ցանկացած անձի, լինի դա Տեղաբաշխող, խորհրդատու, ներդրող կամ այլ անձ) կողմից Պատժամիջոցների խախտման:

2.3 Տեղեկատվություն արժեթղթերի վերաբերյալ

2.3.1 Արժեթղթերի տեսակը և դասը

Թողարկվող բաժնետոմսերը «Ա» դասի հասարակ բաժնետոմսեր են, բաժանելի չեն և փոխարկելի չեն: Թողարկվող բաժնետոմսերի տարբերակիչ ծածկագիրն (ISIN) է AMAMTLS11ER3:

2.3.2 **Երկիրը**

Բաժնետոմսերը թողարկվել են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի:

Ազդագրի պատրաստումը, այն ՀՀ ԿԲ-ին գրանցման ներկայացումը, Ազդագրի գրանցումը, բաժնետոմսերի հրապարակային առաջարկը, տեղաբաշխումը, տեղաբաշխման հետ կապված վճարահաշվարկային և պահառուական գործողությունները, Բորսայում ցուցակումը և/կամ առևտրին թույլատվությունը, բաժնետոմսերի հետագա շրջանառությունը և մինչև մարում բաժնետոմսերի շրջանառության հետ կապված բոլոր գործողությունները և իրավահարաբերությունները կարգավորվելու են համաձայն ՀՀ օրենսդրության: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում վերջիններս կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

2.3.3 **Արժեթղթերի ձևը**

Թողարկված բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ բաժնետոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը վարում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա, 5-րդ հարկ, հեռ.՝ (+374) 60 615555)՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Դեպոզիտարիա) համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

2.3.4 **Արժեթղթի անվանական արժեքը և քանակը**

Ազդագրի ներքո նախատեսվում է տեղաբաշխել 40,000,000 (քառասուն միլիոն) հատ Բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

2.3.5 **Թողարկման արժույթը**

Թողարկման արժույթը ՀՀ դրամն է:

2.3.6 **Արժեթղթերից բխող իրավունքները**

Ընկերության «Ա» և «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն ունեն միևնույն իրավունքները՝ բացառությամբ մեկ բաժնետոմսի գծով տրվող ձայնի իրավունքի:

«Ա» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատերն (ինչպես նաև «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատերը) իրավունք ունի.

1) իրացնել Ընկերության կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրության) սահմանված իրավունքները,

2) իր ցանկությամբ օտարել Բաժնետոմսերը Բորսայում (Բորսայում ցուցակված և/կամ առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքով արգելվում է կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված Բաժնատոմսեր,

3) օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Կանոնդարությամբ «Ա» դասի (ինչպես նաև «Բ» դասի) հասարակ բաժնետոմսերի սեփականատերն իրավունք ունի՝

1. մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը վերապահված բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով՝ իր լրիվ վճարված բաժնետոմսերին համամասնորեն,
2. մասնակցել Ընկերության կառավարմանը,
3. Կանոնադրությամբ և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին (այսուհետ սույն բաժնում՝ Օրենք) համապատասխան ստանալ շահութաբաժիններ,
4. Կանոնադրությամբ և Օրենքով սահմանված կարգով ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.
5. Կանոնադրությանն ու Օրենքին համապատասխան առաջարկություններ ներկայացնել բաժնետերերի ընդհանուր ժողովին,
6. բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
7. դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
8. Ընկերության լուծարման դեպքում Օրենքով սահմանված կարգով ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը,
9. Օրենքին համապատասխան Ընկերության շահույթի, պահուստային և/կամ այլ միջոցների հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ տվյալ պահին կանոնադրական կապիտալում իր մասնակցությանը համապատասխան քանակությամբ նոր բաժնետոմսեր,
10. օրենսդրությամբ սահմանված կարգով օտարել կամ այլ ձևով տնօրինել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը
11. օգտվել նոր բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրավունքից
12. ունենալ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

«Ա» դասի (ինչպես նաև «Բ» դասի) հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները, որոնց ցանկը սահմանում է Ընկերության խորհուրդը:

«Ա» դասի (ինչպես նաև «Բ» դասի) հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը կարող են չկատարել Կանոնադրությամբ սահմանված լրացուցիչ պարտականությունները, եթե վերջինս դեմ է քվեարկել կամ չի մասնակցել տվյալ հարցով քվեարկությանը:

Բաժնետերերը կարող են կրել ՀՀ օրենսդրությանը, Կանոնադրությանը ու այլ իրավական ակտերին չհակասող այլ պարտականություններ:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ և կանոնադրությամբ ձայների այլ քանակ սահմանված չէ:

2.3.6.1 *Շահութաբաժնի ստացման իրավունքները*

Յուրաքանչյուր հասարակ բաժնետոմս (անկախ դասից) իր սեփականատիրոջը իրավունք է տալիս իրեն պատկանող բաժնետոմսերի քանակին համամասնորեն ստանալ շահութաբաժին՝ Ընկերության գործունեությունից առաջացած (կուտակված) շահույթից: Բաժնետոմսերի դիմաց շահութաբաժնի վճարման հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ:

Ընկերությունը կարող է որոշում կայացնել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Ընկերությունը չի երաշխավորում հասարակ (սովորական) բաժնետոմսերով շահութաբաժնի վճարումը:

Տեղաբաշխված յուրաքանչյուր տեսակի (դասի) բաժնետոմսի համար Ընկերությունը հայտարարված շահութաբաժինները կարող է վճարել դրամով կամ այլ գույքով:

Ընկերության բաժնետերերին շահութաբաժինները դրամով վճարելու դեպքում վճարվում են անկանխիկ ձևով՝ գումարները նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Ըստ բաժնետոմսերի տարբեր տեսակների և դասերի՝ միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման մասին որոշումը, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ): Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի վճարման չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ Ընկերության Խորհրդի առաջարկությամբ:

Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող նվազ լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժիններից:

Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը

չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու մասին՝ ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ ձայների այլ քանակ սահմանված չէ:

Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն Ընկերությունն իրավունք չունի որոշում կայացնել շահութաբաժինների վճարման վերաբերյալ, եթե.

- լրիվ չի վճարվել Ընկերության Կանոնադրական կապիտալը,
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության վիճակը համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվճարունակության (սնանկության) հատկանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
- Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով,
- Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը ՀՀ օրենսդրության սահմանված կարգով:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի՝ շահութաբաժինների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված բաժնետերերի ժողովի կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից շահութաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը:

Հարկ է նաև նշել, որ Ընկերությունը շահութաբաժին վճարելու հարցում Վարկային պայմանագրով ունի սահմանափակումներ, ըստ որի առանց Վարկատուների գրավոր համաձայնության Թողարկողը չի կարող հայտարարել կամ վճարել շահութաբաժին:

Հարկ է նշել, որ Ընկերության տնօրենների խորհրդի որոշման համաձայն (արձանագրություն N2305175, 17.05.2023թ.) որոշում է կայացվել 2022թ.-ի արդյունքներով տարեկան շահութաբաժինների չափը հաստատելու և տարեկան շահութաբաժիններ վճարելու առաջարկով Ընկերության ընդհանուր ժողովին հանդես գալու վերաբերյալ: Խորհրդի որոշմամբ ժողովին առաջարկվել է.

- 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կուտակված շահույթից վճարել տարեկան շահութաբաժիններ «Բ» դասի սովորական (հասարակ) 100% բաժնետոմսերի սեփականատեր «ԹԻՄ» ՓԲԸ-ին՝ խորհրդի վերոնշյալ որոշումն ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ պայմանով, որ մինչև շահութաբաժինների փաստացի վճարումը՝ Վարկային պայմանագրին համապատասխան ստացված լինի Վարկատուների համաձայնությունը, և նպատակ ունենալով, որպեսզի խոհրդի վերոնշյալ որոշմանը համապատասխան ստացված շահութաբաժինները «ԹԻՄ» ՓԲԸ-ն ամբողջությամբ

ուղղի ստացված փոխառությունների (ներառյալ մայր գումարների և հաշվարկված տոկոսների) գծով Ընկերության հանդեպ ունեցած պարտավորությունների մարմանը,

- 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի կուտակված շահույթից տարեկան շահութաբաժինների ընդհանուր չափ հաստատել 6,000,000,000 (վեց միլիարդ) ՀՀ դրամ:

2023թ.-ի հունիս ամսին կայանալու է Ընկերության տարեկան ընդհանուր ժողովը, որի ընթացքում, բացի այլ հարցերից, քննարկվելու է տնօրենների խորհրդի վերոնշյալ առաջարկությունը: Թողարկողի կառավարման մարմինների գնահատմամբ վերոնշյալ առաջարկությունը հաստատվելու է ընդհանուր ժողովի կողմից:

2.3.6.2 *Ձայնի իրավունքները*

«Ա» դասի (ինչպես նաև «Բ» դասի) հասարակ բաժնետոմսերի սեփականատերն իրավունք ունի մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը վերապահված բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով:

Ազդագրի ներքո տեղաբաշխվող «Ա» դասի հասարակ մեկ բաժնետոմսով սեփականատիրոջը տրամադրվում է 1 (մեկ) ձայնի իրավունք:

Միևնույն ժամանակ Ընկերության «Բ» դասի հասարակ մեկ բաժնետոմսով սեփականատիրոջը տրամադրվում է 10 (տասը) ձայնի իրավունք: Ընկերության բոլոր «Բ» դասի հասարակ բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված են և պատկանում են «Թիմ» ՓԲԸ-ին:

Ազդագրով նախատեսված «Ա» դասի հասարակ բաժնետոմսերի ամբողջական ծավալի տեղաբաշխման դեպքում Ընկերության «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատիրոջը բաժին կընկնի Ընկերության թվով 228,377,090 հասարակ բաժնետոմսերի 82.49%-ը, իսկ «Ա» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատերերին՝ 17.51%-ը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով բաժնետոմսերի յուրաքանչյուր դասի գծով տրվող ձայների քանակը՝ Ազդագրով նախատեսված «Ա» դասի հասարակ բաժնետոմսերի ամբողջական ծավալի տեղաբաշխման դեպքում Ընկերության «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատիրոջը բաժին կընկնի Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների թվով 1,923,770,900 գումարային քանակի 97.92%-ը (ձայների թվով 1,883,770,900 գումարային քանակ), իսկ «Ա» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատերերին՝ 2.08%-ը (ձայների թվով 40,000,000 գումարային քանակ):

2.3.6.3 *Բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում նախապատվության իրավունքները*

«Թիմ» ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ (02.05.2023թ., արձանագրություն N 230502) «Բ» դասի բաժնետոմսերի 100% սեփականատեր «Թիմ» ՓԲԸ-ն

հրաժարվում է օգտվել «Ա» դասի բաժնետոմսերի ձեռք բերերման նախապատվության իրավունքից:

2.3.6.4 *Լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունքները*

Ընկերության լուծարման դեպքում պարտատերերի (բացի բաժնետերերի) հանդեպ պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը բաշխվում է բաժնետերերի միջև՝ հետևյալ հաջորդականությամբ՝

- առաջին հերթին կատարվում են վճարումներն այն բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածին համապատասխան.
- երկրորդ հերթին վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահութաբաժինները.
- երրորդ հերթին կատարվում են արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները.
- չորրորդ հերթին կատարվում է լուծարվող Ընկերության մնացած գույքի բաշխումը հասարակ (սովորական) (և՛ «Ա», և՛ «Բ» դասի) և բոլոր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի միջև:

Գույքի բաշխումը յուրաքանչյուր հերթով իրականացվում է նախորդող հերթի լրիվ բաշխումն ավարտելուց հետո:

2.3.6.5 *Հետգնման պահանջի իրավունքները*

2.3.6.5.1 Ընկերության բաժնետոմսերի հետգնումը բաժնետերերի պահանջով

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի համաձայն Թողարկողի Բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնումը, եթե՝

1. որոշում է ընդունվել Ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, և նշված բաժնետերերը քվեարկել են Ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ նշված խոշոր գործարք կնքելու դեմ, կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել.

2. կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով

սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

Ընկերության կողմից բաժնետոմսերի հետգնումը կատարվում է դրանց շուկայական արժեքով, որը որոշվում է առանց բաժնետոմսի գնահատման և հետգնման պահանջի իրավունք տվող Ընկերության գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

Ընկերությունը պարտավոր է տեղեկացնել բաժնետերերին՝ նրանց պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի և իրականացման կարգի մասին:

2.3.6.5.2 Ընկերության բաժնետոմսերի հետգնումը Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջով

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56.1-րդ հոդվածի համաձայն Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների առնվազն 95 տոկոսին ուղղակիորեն միանձնյա տիրապետող բաժնետիրոջ (այսուհետ սույն ենթաբաժնում՝ պահանջ ներկայացնող բաժնետեր) պահանջով (Ընկերության բաժնետոմսերի պարտադիր վաճառքի պահանջ) հրավիրվում է արտահերթ ժողով, որը որոշում է ընդունում Ընկերության մյուս բաժնետերերին պատկանող քվեարկող բաժնետոմսերը (բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքներին պատկանող բաժնետոմսերի) հետգնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու վերաբերյալ:

Պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերը տրամադրելու դիմաց առաջարկվող գինը չի կարող պակաս լինել անկախ գնահատողի կողմից սահմանված բաժնետոմսերի շուկայական արժեքից:

Բաժնետերերը, որոնց բաժնետոմսերի վերաբերյալ կայացվել է բաժնետոմսերը հետգնելու և պահանջ ներկայացնող բաժնետիրոջը տրամադրելու մասին որոշում, իրավունք ունեն ժողովի որոշումը կայացվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, դիմելու դատարան՝ վիճարկելով բաժնետոմսերի տրամադրման դիմաց առաջարկվող գինը:

2.3.6.5.3 Ընկերության բաժնետոմսերի հետգնումը Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջով

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56.2-րդ հոդվածի համաձայն Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների ոչ ավելի, քան 5 տոկոսին տիրապետող բաժնետիրոջ (այսուհետ սույն ենթաբաժնում՝ պահանջ ներկայացնող բաժնետեր) պահանջով (Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջ) հրավիրվում է արտահերթ ժողով, որը որոշում է ընդունում պահանջ ներկայացնող բաժնետիրոջ բաժնետոմսերը հետգնելու վերաբերյալ, եթե Ընկերությունում առկա է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների առնվազն 95 տոկոսին ուղղակիորեն միանձնյա տիրապետող բաժնետեր:

Պահանջ ներկայացնող բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերը հետգնելու համար առաջարկվող գինը չի կարող պակաս լինել անկախ գնահատողի կողմից սահմանված բաժնետոմսերի շուկայական արժեքից:

Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջն ստացած Ընկերությունն իրավունք ունի պահանջն ստանալուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, դիմելու դատարան՝ վիճարկելով բաժնետոմսերի հետգնման դիմաց առաջարկվող գինը, ընդ որում գնի վիճարկումը չի կասեցնում Ընկերության բաժնետոմսերի հետգնման գործընթացը:

Ընկերությունը պարտավոր է հետգնել պահանջ ներկայացնող բաժնետիրոջ բաժնետոմսերը Ընկերության բաժնետոմսերի պարտադիր գնման պահանջն ստանալուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Հետգնված բաժնետոմսերն ուղղվում են Ընկերության տնօրինությանը: Նշված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, և դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման Ընկերության քվեարկող բաժնետոմսերի և միաժամանակ դրանցով տրամադրվող ձայների առնվազն 95 տոկոսին ուղղակիորեն միանձնյա տիրապետող բաժնետիրոջը մեկ տարվա ընթացքում: Եթե վերջինս հրաժարվում է կամ սահմանված ժամկետում ձեռք չի բերում հետգնված բաժնետոմսերը, ապա Ընկերության ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել նշված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին:

2.3.6.5.4 Թողարկողի կողմից Բաժնետոմսերի ձեռքբերումը Թողարկողի, Հիմնական բաժնետիրոջ և Իրական շահառուների կողմից որոշակի գործողություններ իրականացնելու հետևանքով

Եթե Թողարկողի, Հիմնական բաժնետիրոջ և Իրական շահառուների կողմից չի ապահովվել Ազդագրի 2.9 կետով սահմանված որևէ պարտավորություն (այսուհետ՝ Պարտավորության չկատարում), ապա նման դեպք ի հայտ գալուց հետո 10 (տասը) օրվա ընթացքում Թողարկողը պարտավորվում է որոշում կայացնել Բաժնետոմսերի ձեռքբերման մասին՝ հաշվի առնելով Ազդագրի 2.3.6.5.4.2 կետում նախատեսված՝ ձեռքբերման ենթակա Բաժնետոմսերի առավելագույն քանակը:

Ընկերության կողմից Բաժնետոմսերի ձեռքբերումը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի համաձայն:

Ընկերությունը բաժնետոմսերը գնելու հարցում Վարկային պայմանագրով ունի սահմանափակումներ, ըստ որի առանց Վարկատուների գրավոր համաձայնության Ընկերությունը չի կարող գնել, մարել կամ ձեռք բերել իր բաժնետոմսերը:

2.3.6.5.4.1 Պարտավորության չկատարման մասին հայտարարությունը

Թողարկողը պարտավոր է

- Բաժնետոմսերի սեփականատերերին/անվանատերերին՝ սեփականատերերի ռեեստրում գրանցված կապի միջոցներով ծանուցել Պարտավորության չկատարման և Բաժնետոմսերը ձեռքբերելու իր որոշման մասին, ինչպես նաև

- հրապարակել Պարտավորության չկատարման և Բաժնետոմսերը ձեռքբերելու իր որոշման մասին հայտարարությունը www.azdarar.am և 1,000-ից ավել տպաքանակ ունեցող ՀԼՄ-ով:

Ծանուցմամբ և հայտարարությամբ Թողարկողը կներկայացնի Բաժնետոմսերի ձեռքբերման գինը, վճարման ժամկետները, բաժնետոմսերի վաճառքի հայտերի ձևը, դրանց ներկայացման կարգը, ժամկետները և այլ տեղեկատվություն:

2.3.6.5.4.2 Թողարկողի կողմից Բաժնետոմսերի ձեռքբերումը

Բաժնետոմսերի ձեռքբերման ժամկետը չի կարող ավարտվել ավելի ուշ, քան Բաժնետոմսերի ձեռքբերման մասին որոշում կայացնելու օրվան հաջորդող 90-րդ օրացուցային օրը:

Եթե բաժնետերերի հայտերով վաճառքի համար առաջարկվող Բաժնետոմսերի անվանական արժեքը գերազանցում է Ընկերության կանոնադրական կապիտալի 10 (տասը) տոկոսը, ապա Բաժնետոմսերը ձեռք են բերվում ներկայացված հայտերին համամասնորեն՝ կանոնադրական կապիտալի 10 (տասը) տոկոսի սահմաններում, իսկ այն Բաժնետոմսերը, որոնց անվանական արժեքը գերազանցում է Ընկերության կանոնադրական կապիտալի 10 (տասը) տոկոսը, Ընկերության կողմից ձեռքբերման ենթակա չեն:

Բաժնետոմսերի ձեռքբերման գինը որոշվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով:

2.3.6.6 ***Փոխարկման իրավունքները***

Ընկերության հասարակ բաժնետոմսերը (և՛ «Ա», և՛ «Բ» դասի) իրենց սեփականատերերին չեն տալիս փոխարկման իրավունք:

2.3.7 **Նոր թողարկման մասին տեղեկատվությունը**

Բաժնետոմսերի թողարկման վերաբերյալ որոշումն ընդունվել է Թողարկողի Տնօրենների Խորհրդի ժողովի որոշմամբ (Տնօրենների Խորհրդի նիստի արձանագրություն № 230426 առ 26.04.2023թ.), համաձայն որի տեղաբաշխվելու են թվով 40,000,000 (քառասուն միլիոն) հատ, 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով «Ա» դասի հասարակ բաժնետոմսեր՝ 206 (երկու հարյուր վեց) ՀՀ դրամ առաջարկի գնով:

2.3.8 **Շրջանառելիության սահմանափակումները**

Թողարկողի կանոնադրությամբ կամ Բաժնետոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ (այսուհետ՝ Թողարկողի որոշում) բաժնետոմսերի թողարկման/տեղաբաշխման, ինչպես նաև Բաժնետոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ սահմանափակումներ չեն սահմանվում, բացառությամբ տեղաբաշխման ընթացքում Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշվող Բաժնետոմսերի նվազագույն քանակի, ինչպես նաև մեկ ներդրողի կողմից ձեռքբերվող առավելագույն բաժնետոմսերի քանակի (տես Ազդագրի Նվազագույն և առավելագույն գումարները բաժինը):

Բաժնետոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակումներ չկան՝ բացառությամբ Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսա Բաժնետոմսերը առևտրին թույլատրելու համար, և համաձայն գործող օրենսդրության Բաժնետոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս շրջանառությունը կարող է իրականացվել միայն Բորսայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել Բաժնետոմսերը Բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ Օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Օրենքի (129-րդ հոդված) և ԿԲ Խորհրդի որոշման (03.12.2012թ.-ի թիվ 331-Ն) համաձայն չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կորպորատիվ արժեթղթեր. բացառություն են կազմում.

- մասնավոր գործարքները, որոնց կողմերը նախապես հայտնի են, դրանք են.
    - ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները. դրանք ՀՀ ԿԲ և ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
    - թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,
    - արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները,
- արժեթղթերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքները,
- շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերը:

Բաժնետոմսերի ցուցակումը և/կամ առևտրին թույլատվության ստացումը հնարավոր է իրականացնել միայն Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտից հետո, համաձայն Բորսայի կանոններով սահմանված ընթացակարգի և ժամկետներում:

Բաժնետոմսերով այլ քաղաքացիա-իրավական գործառնություններ իրականացնելու սահմանափակումներ մինչև Բորսայում ցուցակումը և/կամ առևտրին թույլատվությունը չկան, եթե այլ բան ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:

2.3.9 **Արժեթղթերի հանձնման պարտադիր առաջարկ անելու պարտավորության նկարագրությունը**

Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պարտավորությունը, ինչպես նաև նման պարտավորության բացակայության դեպքերը կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Գլուխ 15-ով:

Բորսայում Բաժնետոմսերի առևտրի թույլատրություն ստանալուց հետո յուրաքանչյուր անձ, որը մեկ կամ ավելի գործարքի հետևանքով դառնում է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր, պարտավոր է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Գլուխ 15-ի պահանջներին համապատասխան տվյալ դասի բոլոր արժեթղթերն իրեն հանձնելու առաջարկ անել:

Տվյալ անձը պարտավոր է արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագիրը ԿԲ ներկայացնել համապատասխան գործարքի կատարմանը հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, որի արդյունքում անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր:

Վերոնշյալ պահանջը կիրառվում է նաև այն դեպքում, երբ Թողարկողի դիմումի հիման վրա կարգավորվող շուկայի օպերատորը դադարեցնում է վերջինիս արժեթղթերի առևտուրը կարգավորվող շուկայում: Այդ դեպքը կարգավորվում է ԿԲ խորհրդի 19.01.2010թ.-ի թիվ 2-Ն որոշմամբ:

Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պարտավորությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ

- անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման արդյունքում,
- անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր՝ իր կողմից տվյալ դասի բոլոր արժեթղթերի համար արժեթղթերը հանձնելու ոչ պարտադիր առաջարկի արդյունքում,
- արժեթղթերը ձեռք են բերվել ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից տեղաբաշխման նպատակով,
- անձը տվյալ դասի արժեթղթերի 75 տոկոսը գերազանցող մասը դրանց ձեռքբերման օրվանից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, օտարում է այն անձին, որը Օրենքի 151-րդ հոդվածի համաձայն չի համարվում համատեղ գործելու համաձայնությամբ

հանդես եկող անձ և պայմանով, որ այդ ժամկետի ընթացքում Թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով չի գումարվում:

2.3.10 Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս չհիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի՝ հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում առաջացած հնարավոր ֆինանսական կորուստների նկատմամբ պատասխանատվությունից և պահանջներից:

Թողարկողի Բաժնետոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

2.3.10.1 *Բաժնետոմսերից ստացվող եկամտի շահութահարկով հարկման կարգը և նկարագիրը*

ՀՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՀՀ ԿԲ-ի: ՀՀ Հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Հարկային օրենսգիրք) ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն (այսուհետ՝ ռեզիդենտ կազմակերպություն) է համարվում այն կազմակերպությունը, որի գտնվելու վայրը ՀՀ-ն է:

Ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ստացված շահութաբաժինների գումարի չափով, հետևաբար ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից ստացվող շահութաբաժինները ենթակա չեն շահութահարկով հարկման:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկումը

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Համաձայն Հարկային օրենսգրքի՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներին են դասվում նաև ոչ ռեզիդենտի՝ ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից ստացված պասիվ եկամուտները: Ընդ որում, ոչ ռեզիդենտի ստացված պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝ շահութաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ և այլ պասիվ եկամուտներ:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: ՀՀ-ում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

- շահութաբաժինների մասով՝ 5 տոկոս.
- արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճի մասով՝ զրո տոկոս.

Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝ Բորսայում մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահութաբաժինների, ինչպես նաև նշյալ բաժնետոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:

2.3.10.2 *Բաժնետոմսերից ստացվող եկամտի եկամտային հարկով հարկման կարգը և նկարագիրը*

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում (հարկատու են) ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում, Հարկային օրենսգրքի համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից միչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես, համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, եթե ՀՀ-ում է գտնվում նրա տունը կամ այլ բնակարանը, ընտանիքը, մասնագիտական կամ այլ գործունեության հիմնական վայրը:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար շահութաբաժինների մսաով եկամտային հարկը հաշվարկվում է 5 տոկոս դրույքաչափով: Ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներ

վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է շահութաբաժնի յուրաքանչյուր վճարման դեպքում:

Ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից բաժնետոմսերի օտարումից, այլ արժեթղթերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտը ենթակա չէ հարկման:

Բորսայում մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահութաբաժինները ազատվում են եկամտային հարկից:

Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հարկում

Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և Հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Բաժնետոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ինչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (եկամտային հարկի գծով), ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (շահութահարկի գծով) համար հարկային գործակալ է հանդիսանում Թողարկողը:

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1 Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Բաժնետոմսերի տեղաբաշխման սկսելու օր է համարվում ԿԲ կողմից Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրվա ժամը 09:00-ն:

Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտելու օր է համարվում 2023թ.-ի հոկտեմբերի 31-ի օրվա ավարտը: Եթե Բաժնետոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է հանդիսանում այն օրը, երբ վաճառվել է վերջին Բաժնետոմսը:

Տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Թողարկողի իրավասու մարմնի որոշմամբ:

Բաժնետոմսերը կտեղաբաշխվեն Բորսայից դուրս, որի համար կգործեն առաջարկից օգտվելու հետևյալ պայմանները.

Բաժնետոմսերի ձեռքբերման համար ներդրողը վճարումը պետք է կատարի մինչև Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ավարտը:

Բաժնետոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված հատուկ այդ նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված բանկային հաշվեհամարին (այսուհետ՝ Հատուկ հաշվեհամար) դրամական միջոցների մուտքագրման պահից:

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտ-հանձնարարակաները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում Բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ Հատուկ հաշվեհամարի վրա մնալը մինչև Բաժնետոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց նկատմամբ տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով Բաժնետոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի Բաժնետոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

V = P x Q, որտեղ՝

- *V-ն բաժնետոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի բաժնետոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է,*
- *P-ն բաժնետոմսերի ձեռք բերման գինն է, որը ներկայացված է Ազդագրի 2.4.3.1 մասում,*
- *Q-ն բաժնետոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:*

2.4.1.1 ***Առաջարկի ընդհանուր ծավալը***

Ընկերության կողմից առաջարկվող բաժնետոմսերը ընդհանուր 40,000,000 հատ նոր թողարկված «Ա» դասի հասարակ բաժնետոմսեր են՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 4,000,000,000 ՀՀ դրամ:

Միավոր բաժնետոմսի առաջարկի գինը սահմանվում է 206 ՀՀ դրամ:

Բաժնետոմսերի առաջարկի ընդհանուր ծավալը հաշվարկվում է որպես առաջարկվող բաժնետոմսերի քանակի և միավոր բաժնետոմսի առաջարկի գնի արտադրյալ, որը կազմում է 8,240,000,000 ՀՀ դրամ:

2.4.1.2 ***Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը***

Բաժնետոմսերի տեղաբաշխման սկսելու օր է համարվում ԿԲ կողմից Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրվա ժամը 09:00-ն:

Բաժնետոմսերի տեղաբաշխման ավարտելու օր է համարվում 2023թ.-ի հոկտեմբերի 31-ի օրվա ավարտը: Եթե Բաժնետոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է հանդիսանում այն օրը, երբ վաճառվել է վերջին Բաժնետոմսը:

Տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Թողարկողի իրավասու մարմնի որոշմամբ:

Թողարկողի կողմից Բաժնետոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

2.4.1.3 ***Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը***

Բաժնետոմսերը կտեղաբաշխվեն Բորսայից դուրս, ուղղակի վաճառքի միջոցով:

Բաժնետոմսերը ձեռք բերելու համար ներդրողները պետք է կատարեն հետևյալ քայլերը.

Ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Տեղաբաշխողին ներկայացնեն Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, որով կհավաստեն Բաժնետոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Բաժնետոմսերի ձեռքբերման համար ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտ-հանձնարարականի վավերականությունն ապահովելու համար:

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները կհրապարակվեն Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքերում: Հայտ-հանձնարարականն առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- *Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվը*
- *Ներդրողի տվյալները.*
    - *ֆիզիկական անձանց (անհատ ձեռնկարկատերերի) դեպքում՝ անունը և ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, գրանցման վայրը, ռեզիդենտությունը*
    - *իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, գրանցման համարը, գտնվելու վայրը, ՀՎՀՀ-ն, ռեզիդենտությունը*
- *Ներդրողի բանկային վավերապայմանները*
    - *արժեթղթերի հաշվի համարը և արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը*

- *Ձեռքբերվող բաժնետոմսերի տվյալները*
    - *բաժնետոմսերի քանակը*
    - *վճարման ենթակա ընդհանուր գումարը*

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Տեղաբաշխողին առաքումից հետո Բաժնետոմսերի ձեռքբերման համար համապատասխան դրամական միջոցները ներդրողների կողմից պետք է մուտքագրվեն թողարկման նպատակով բացված Հատուկ հաշվեհամարին՝ մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականը կհամարվի վավեր պատշաճ առաքման և համապատասխան վճարի կատարման հիմքով (այսուհետ՝ Վավեր հայտ-հանձնարարական):

Սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր:

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ավարտից հետո, ինչպես նաև Բաժնետոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո Հատուկ հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարակները չեն կարող բավարարվել:

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով առաքված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Տեղաբաշխողի հետ ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով.

Օնլայն եղանակով՝ • *Բանկի MyAmeria հավելվածի MyInvest հարթակի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով* • *Բանկի ինտերնետ բանկինգ համակարգով ներկայացնելու դեպքում*
Առձեռն՝ *այցելելով Բանկի որևէ մասնաճյուղ[4] և հաճախորդի մենեջերների միջոցով լրացնելով համապատասխան հայտ-հանձնարարականը*
Էլեկտրոնային փոստ՝ *CapitalMarkets@ameriabank.am*
CBAnet հասցե՝ *CapitalMarkets Ameriabank/AMERIA/CBANet@CBANet*

Տեղաբաշխողը Վավեր հայտ-հանձնարարական ներկայացրած անձին նույնականացնելու նպատակով վերջինից կարող է պահանջել հավելյալ տեղեկատվություններ/փաստաթղթեր:

Վավեր հայտ-հանձնարարակները բավարարվում կամ մերժվում են այն ներկայացնելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Վավեր հայտ-հանձնարարակները կարող են մերժվել, եթե փոխանցված դրամական միջոցները չեն համապատասխանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտը կարգավորող միջազգային և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին,

[4] Մասնաճյուղերի գործառնական օրերը և ժամերը ներկայացված են հետևյալ հղմամբ՝ https://ameriabank.am/service-network:

Պատժամիջոցներով սահմանված նորմերին և/կամ Տեղաբաշխողի ներքին նորմատիվ ակտերին, ինչպես նաև Ազդագրով նշված դեպքերում:

Բաժնետոմսերի ձեռքբերման օր է համարվում հայտ-հանձնարարականի բավարարման օրը:

Բաժնետոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

2.4.1.4 ***Հետաձգում կամ չեղարկում***

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և ետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ ետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Սահմանված հետգնման պահանջը պետք է Տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Ետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան 5 աշխատանքային օրը՝ Ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Եթե առկա են ետ վերադարձման ենթակա դրամական միջոցներ, ապա դրանք վերադարձվում են Տեղաբաշխողի կողմից՝ հետաձգման կամ չեղյալ հայտարարման որոշումն ընդունելուց հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել Բաժնետոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ Օրենքի համաձայն, եթե

1) տեղաբաշխման ընթացքում խախտվել են Օրենքի և (կամ) հրապարակային առաջարկը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջները.
2) տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.
3) ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

Տեղաբաշխումը կասեցնելու որոշումը պետք է պարունակի հայտնաբերված խախտումները և բացթողումները վերացնելու հանձնարարական և դրա կատարման ժամկետները, որի կատարումից հետո Կենտրոնական բանկի թույլտվությամբ տեղաբաշխումը կարող է շարունակվել:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Տեղաբաշխողը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն

արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

Տեղաբաշխողը պարտավոր է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել առնվազն այն միջոցներով, որոնցով հրապարակվել է հրապարակային առաջարկի մասին հայտարարությունը:

2.4.1.5 *Բաժանորդագրության նվազեցման հնարավորությունը*

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցում չի նախատեսվում:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված՝ հնարավոր է Բաժնետոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի և/կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում:

Մասնակի բավարարման դեպք կարող է առաջանալ, երբ հայտ-հանձնարարականում նշված ձեռքբերվող Բաժնետոմսերի քանակը գերազանցում է հայտ-հանձնարարականը ներկայացնելու պահին առկա տեղաբաշխման ենթակա Բաժնետոմսերի մնացորդային քանակը:

Միաժամանակ ներկայացված հայտ-հանձնարարականների դեպքում, եթե հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող բաժնետոմսերի ընդհանուր քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա Բաժնետոմսերի մնացորդային քանակը, ապա տվյալ հայտ-հանձնարարականները բավարարվում են համամասնորեն՝ ըստ հայտ-հանձնարարականներում նշված ձեռքբերվող Բաժնետոմսերի ընդհանուր քանակում յուրաքանչյուր հայտ-հանձնարարականով նշված ձեռքբերվող Բաժնետոմսերի քանակի մասնաբաժնի:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա մասնակի բավարարումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Տեղաբաշխողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

2.4.1.6 *Նվազագույն և առավելագույն գումարները*

Ներդրողներն կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ, սակայն պետք է հաշվի առնեն, որ տեղաբաշխման ընթացքում կիրառվում են Բաժնետոմսերի ձեռքբերման քանակական հետևյալ սահմանափակումները.

- ոչ մի ներդրող չի կարող ձեռք բերել ավելի քան 11,418,000 հատ Բաժնետոմս,
- ձեռք բերվող Բաժնետոմսերի նվազագույն քանակը կազմում է 200 հատ:

Վերոնշյալ սահմանափակումների խախտումներով հայտ-հաձնարարականները ենթակա են մերժման Տեղաբաշխողի կողմից:

2.4.1.7 ***Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը***

Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում (մինչև բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ավարտը) համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքից, ներդրողները՝ Բաժնետոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Տեղաբաշխողի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և սահմանված ժամկետում համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

2.4.1.8 ***Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը***

Թողարկողի Բաժնետոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են Հատուկ հաշվեհամարին: Վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված համապատասխան բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Տեղաբաշխողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Տեղաբաշխողն իրավունք ունի Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձի կողմից Բաժնետոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի Բաժնետոմսեր ձեռք բերելու համար Հատուկ հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները չկրեդիտագրել Հատուկ հաշվեհամարին, չտալ համապատասխան հանձնարարական Դեպոզիտարիային Բաժնետոմսերի թողարկման հաշվից Բաժնետոմսերը ձեռք բերել ցանկացողի արժեթղթերի հաշվին փոխանցելու համար, եթե փոխանցված դրամական միջոցները չեն համապատասխանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտը կարգավորող միջազգային և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին, Պատժամիջոցներով սահմանված նորմերին և/կամ Տեղաբաշխողի ներքին նորմատիվ ակտերին: Նման իրավիճակում Տեղաբաշխողն իրավունք ունի մերժել հայտ-հանձնարարականը, իսկ փոխանցված դրամական միջոցները ետ փոխանցել, որի հետ կապված ֆինանսական ծախսերը կրում է Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձը: Տեղաբաշխողի կողմից բանկային փոխանցմամբ ստացված և չընդունված դրամական միջոցների ետփոխանցման/ետդարձման ծառայության սակագինը հրապարակված է Տեղաբաշխողի ինտերնետային կայքում: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ բացի Տեղաբաշխողի կողմից

գանձվող ծառայության վճարից, Հատուկ հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները Տեղաբաշխողի կողմից նույն վավերապայմաններով ետ փոխանցելու դեպքում հնարավոր են նաև ծառայության դիմաց գանձումներ միջնորդ բանկերի և շահառուի բանկի կողմից:

Ներդրողի՝ ձեռքբերված Բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված այլ պահառուի մոտ ներդրողի անունով այդ Բաժնետոմսի գրանցման պահից: Բաժնետոմսերից բխող իրավունքները ներդրողը կարող է իրացնել տեղաբաշխման ավարտից և Թողարկողի ընդհանուր ժողովի կողմից տեղաբաշխման արդյունքներն ամփոփելուց և լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման հետևանքով Թողարկողի կանոնադրական կապիտալի փոփոխությունն արտացոլող կանոնադրությունը համապատասխան պետական մարմնի կողմից գրանցելուց հետո:

Բաժնետոմսերը փոխանցվում են ներդրողի արժեթղթերի հաշվին համապատասխան հայտ-հանձնարարականի բավարարման օրը:

2.4.1.9 *Առաջարկի արդյունքների հրապարակումը*

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն տեղաբաշխման ավարտից 3 (երեք) աշխատանքային օր հետո Տեղաբաշխողի և/կամ Թողարկողի պաշտոնական կայքում:

2.4.1.10 *Նախապատվության իրավունքը*

Բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը Հատուկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող Բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

2.4.2 Տեղաբաշխման պլանը

2.4.2.1 *Ներդրողների խմբերը*

Առաջարկն արվում է ՀՀ-ում և ուղղված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց:

2.4.2.2 *Բաժանորդագրում խոշոր բաժնետերերի, կառավարման մարմնի անդամների կողմից*

Թողարկողը չունի տեղեկատվություն Հիմնական բաժնետիրոջ, Իրական շահառուների, կառավարման մարմնի անդամների կողմից Բաժնետոմսերի հնարավոր ձեռքբերման վերաբերյալ:

2.4.2.3 *Հայտերի բավարարման մասին տեղեկացումը*

Ներդրողները տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարակաների բավարարման մասին հայտի ներկայացման օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին է ներկայացրել Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/ները: Բացառություն է կազմում միայն Բանկի MyInvest հարթակի միջոցով տրամադրված էլեկտրոնային հայտերի դեպքը, երբ հայտերի բավարարման մասին տեղեկացումը տրամադրվում է Բանկի համակարգում գրանցված ներդրողի էլեկտրոնային հասցեին:

2.4.2.4 *Նպատակաուղղված բաժանորդագրում*

Մանր ներդրողների, ինստիտուցիոնալ ներդրողների կամ Թողարկողի աշխատակիցների համար առանձին տրանշ նախատեսված չէ:

2.4.2.5 *Հայտերի բավարարման և մերժման մեթոդների նկարագրությունը*

Վավեր հայտ-հանձնարարականները բավարարվում կամ մերժվում են դրանց ներկայացնելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում: Ներդրողը բավարարման կամ մերժման մասին տեղեկանում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/ները:

Վավեր հայտ-հանձնարարականների բավարարումն իրականացվելու է ըստ Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը Հատուկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Վավեր հայտ-հանձնարարականները կարող են մերժվել, եթե փոխանցված դրամական միջոցները չեն համապատասխանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտը կարգավորող միջազգային և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին, Պատժամիջոցներով սահմանված նորմերին և/կամ Տեղաբաշխողի ներքին նորմատիվ ակտերին, ինչպես նաև Ազդագրում նշված դեպքերում:

Վավեր հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման, ինչպես նաև մերժման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա մասնակի բավարարումից կամ մերժումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված

գումարը Տեղաբաշխողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

2.4.3 Առաջարկի գինը

2.4.3.1 *Արժեթղթերի գինը*

Միավոր Բաժնետոմսի առաջարկի գինը սահմանվում է 206 ՀՀ դրամ:

Բանկային փոխանցման միջոցով Բաժնետոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Տեղաբաշխման ժամանակ Բաժնետոմսերը ձեռքբերող անձանցից հավելյալ ծախսեր և հարկեր չեն գանձվելու: Եթե ներդրողը Բաժնետոմսերի ձեռքբերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա վճարման գործընթացի մանրամասները պետք է հստակեցնի իրեն սպասարկող բրոքերային ընկերության հետ:

2.4.3.2 *Գնի բացահայտում*

Թողարկողը Բաժնետոմսերի գինը որոշելու համար կողմնորոշվում է Ընկերության ապագա ազատ դրամական միջոցների (free cash flow to the firm) զեղչված մեծությամբ, ինչպես նաև համադրելի ցուցակված ընկերությունների բիզնեսի արժեքի (enterprise value) բազմարկիչներով:

2.4.4 Տեղաբաշխումը

2.4.4.1 *Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները*

Ազդագրի հրապարակման պահին երաշխավորված տեղաբաշխում իրականացնելու մասին պայմանագիր որևէ տեղաբաշխողի հետ կնքված չէ:

2.4.4.2 *Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները*

Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնելու կապակցությամբ Թողարկողը կնքել է «Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագիր «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2):

Համաձայն կնքված պայմանագրի՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն պարտավորվել է լավագույն ջանքերի գործադրմամբ (չերաշխավորված եղանակով) տեղաբաշխել Թողարկողի կողմից թողարկվող բաժնետոմսերը:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ

- չերաշխավորված տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման ավարտին Բաժնետոմսերի՝ հայտարարված տեղաբաշխման ծավալը կարող է ամբողջությամբ չտեղաբաշխվել, այսինքն կարող է տեղի ունենալ թերտեղաբաշխում,
- անկախ տեղաբաշխման ավարտին Բաժնետոմսերի փաստացի տեղաբաշխված ծավալից՝ տեղաբաշխումը համարվում է կայացած:

2.4.4.3 ***Տեղաբաշխման պայմանները***

Համաձայն «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ կնքած «Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի՝ Թողարկողը պարտավորվել է Տեղաբաշխողին վճարել ծառայության վճար, որը կազմված է երկու մասից՝

- Հիմնական վճար, որը կազմում է 25,600,000 (քսանհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ),
- Տեղաբաշխման վճար, որի չափը ենթակա կլինի որոշման տեղաբաշխման արդյունքների հիման վրա:

2.4.4.4 ***Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը***

Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

2.4.4.5 ***Վճարում ընդունող բանկերը և պահառուները***

Բաժնետոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում (ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2) բացված Հատուկ հաշվեհամարին: Եթե ներդրողը Բաժնետոմսերի ձեռքբերումն իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա վճարման գործընթացի մանրամասները պետք է հստակեցնի իրեն սպասարկող բրոքերային ընկերության հետ:

Թողարկողի Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրավար՝ վերջինիս համակարգում գործող որևէ Հաշվի օպերատորի միջնորդությամբ:

Բաժնետոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ բաժնետոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, 5-րդ հարկ (հեռ.՝ 060 615555):

Բաժնետոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատորը «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն է:

Մինչև Բաժնետոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ: Ընկերությունը կկրի «Ամերիաբանկ» ՓԲԸ Պահառուական ծառայությունների մատուցման սակագներով սահմանված արժեթղթերի (դեպո) հաշվի սպասարկման վճարի գծով 1 տարվա ծախսերը այն ֆիզիկական անձ հանդիսացող ներդրողների համար, որոնք Բաժնետոմսերը ձեռքբերելու նպատակով կբացեն արժեթղթերի հաշիվ «Ամերիաբանկ» ՓԲԸ արժեթղթերի պահառության ծառայությունների ներքո:

Տեղաբաշխողն իրավունք ունի Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձի կողմից Բաժնետոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի Բաժնետոմսեր ձեռք բերելու համար Հատուկ հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները չկրեդիտագրել Հատուկ հաշվեհամարին, չտալ համապատասխան հանձնարարական Դեպոզիտարիային Բաժնետոմսերի թողարկման հաշվից Բաժնետոմսերը ձեռք բերել ցանկացողի արժեթղթերի հաշվին փոխանցելու համար, եթե փոխանցված դրամական միջոցները չեն համապատասխանում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտը կարգավորող միջազգային և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին, Պատժամիջոցներով սահմանված նորմերին և/կամ Տեղաբաշխողի ներքին նորմատիվ ակտերին: Նման իրավիճակում Տեղաբաշխողն իրավունք ունի մերժել հայտ-հանձնարարականը, իսկ փոխանցված դրամական միջոցների ետ փոխանցել, որի հետ կապված ֆինանսական ծախսերը կրում է Բաժնետոմսեր ձեռք բերել ցանկացող անձը: Տեղաբաշխողի կողմից բանկային փոխանցմամբ ստացված և չընդունված դրամական միջոցների ետփոխանցման/ետդարձման ծառայության սակագինը հրապարակված է Տեղաբաշխողի ինտերնետային կայքում: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ բացի Տեղաբաշխողի կողմից գանձվող ծառայության վճարից, Հատուկ հաշվեհամարին փոխանցված դրամական միջոցները Տեղաբաշխողի կողմից նույն վավերապայմաններով ետ փոխանցելու դեպքում հնարավոր են նաև ծառայության դիմաց գանձումներ միջնորդ բանկերի և շահառուի բանկի կողմից:

2.5 Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

2.5.1 Առևտրին թույտվությունը

Սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և Բաժնետոմսերը տեղաբաշխելուց հետո Թողարկողը պարտադիր դիմելու է Բորսա տեղաբաշխված Բաժնետոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու համար: Ընդ որում Բաժնետոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու հայտը կարող է չբավարարվել Բորսայի կողմից:

Բաժնետոմսերի՝ առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Թողարկողի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 10

(տասը) աշխատանքային օրվա ընթացքում Թողարկողը ետ է գնելու բաժնետոմսերն իրենց առաջարկի գնով:

2.5.2 Շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ազդագրով գրանցվող Բաժնետոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի որևիցե շուկայում:

2.5.3 Շուկա ստեղծողները

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված բաժնետոմսերը Բորսայի կողմից ցուցակվելու և/կամ առևտրին թույլատրվելու դեպքում Թողարկողը նախատեսում է առնվազն մեկ մասնագիտացված անձի հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

2.5.4 Գնի կայունացումը

Գնի կայունացմանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:

2.6 Վաճառող բաժնետերերը

Ընկերության կողմից առաջարկվող «Ա» դասի բաժնետոմսերը նոր թողարկված բաժնետոմսեր են. առկա բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի վաճառք չի նախատեսվում:

2.7 Թողարկման եվ առաջարկի ծախսերը

Ընկերությունը Բաժնետոմսերի տեղաբաշխումից ակնկալում է ներգրավել 8,240,000,000 ՀՀ դրամ համախառն մեծության դրամական միջոցներ:

Տեղաբաշխման գծով վճարներն և ծախսերն բաղկացած են Տեղաբաշխողին՝ «Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրով սահմանված վճարներից (ներկայացված են Ազդագրի 2.4.4.3 բաժնում), ինչպես նաև շուկայավարման ծախսերից:

2.8 Լրացուցիչ տեղեկատվություն

2.8.1 Խորհրդատուներ

Սույն գլխի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից, բացի Տեղաբաշխողի կողմից մատուցվող տեղաբաշխման ծառայություններից:

2.8.2 Աուդիտորական եզրակացություն

Բացի Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից (2020-2022թթ. թվականների համար), որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Հավելված 4-ում:

2.9 Սահմանափակումներ

Թողարկողը, Հիմնական բաժնետերը և Իրական շահառուները Տեղաբաշխողի հետ կնքված «Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի համաձայն պարտավորվել են՝ Բաժնետոմսերի ցանկացած ծավալի տեղաբաշխման դեպքում զերծ մնալ որոշակի գործողություններ իրականացնելուց.

2.9.1 Թողարկողի սահմանափակումներ

Թողարկողը պարտավորվում է ապահովել՝

i. Բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսելու օրվան հաջորդող 18 ամիսների ընթացքում «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի հիման վրա արտաբորսայական օպցիոնների, և ցանկացած այլ ածանցյալ գործիքների և/կամ պայմանագրերի ստորագրման բացառում, որոնք կարող են հանգեցնել վերահսկողության փոփոխության (այսուհետ՝ Վերահսկողության փոփոխություն):

   a. Վերահսկողության փոփոխություն է համարվում, երբ Վերջնական իրական շահառուներից բացի այլ անձ՝ Թողարկողի կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցության ուժով, նրա հետ կնքված պայմանագրին համապատասխան, գործարար համբավով, հեղինակությամբ կամ այլ կերպ հնարավորություն է ունենում ուղղակիորեն կամ անուղղակիորեն Թողարկողի կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու, նրանց որոշումների

կայացման (կիրառման) վրա էապես ազդելու կամ Թողարկողի գործունեության ուղղությունները, ոլորտները կանխորոշելու,

ii. աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի ներդրումը ոչ շուտ, քան Բաժնետոմսերի ՀՀ կարգավորվող շուկայում ցուցակման և/կամ առևտրի թույլատրման օրվան հաջորդող տասներկուամսյա ժամկետի վերջին օրը,

iii. լրացուցիչ բաժնային արժեթղթերի թողարկումը և տեղաբաշխումը ոչ շուտ, քան Բաժնետոմսերի ՀՀ կարգավորվող շուկայում ցուցակման և/կամ առևտրի թույլատրման օրվան հաջորդող տասներկուամսյա ժամկետի վերջին օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ Տեղաբաշխողն ամփոփելով Բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները, գնահատելով Բաժնետոմսերի նկատմամբ պահանջարկը, գրավոր եղանակով նման թողարկման խորհուրդ է ներկայացնում Թողարկողին,

iv. Հիմնական բաժնետիրոջը և Իրական շահառուներին բնականոն գործունեությունից դուրս փոխառությունների տրամադրման բացառումը մինչև Բաժնետոմսերի ՀՀ կարգավորվող շուկայում ցուցակման և/կամ առևտրի թույլատրման օրվան հաջորդող քսանչորսամսյա ժամկետի վերջին օրը:

2.9.2 **Հիմնական բաժնետիրոջ սահմանափակումներ**

Հիմնական բաժնետերը պարտավորվում է ապահովել՝

i. **Lock-up պարտավորագրի պայմանները.** Բաժնետոմսերի ՀՀ կարգավորվող շուկայում ցուցակման և/կամ առևտրի թույլատրման օրվան հաջորդող 12 ամիսների ընթացքում Թողարկողի՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի որևէ կերպ ուղղակի կամ անուղղակի վաճառքի իրականացման բացառումը,

ii. Բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսելու օրվան հաջորդող 18 ամիսների ընթացքում «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի արտաբորսայական օպցիոնների և ցանկացած այլ ածանցյալ գործիքների և/կամ պայմանագրերի ստորագրման բացառում, որոնք կարող են հանգեցնել Վերահսկողության փոփոխության:

2.9.3 **Իրական շահառուների սահմանափակումներ**

Իրական շահառուները պարտավորվում են ապահովել՝

i. **Lock-up պարտավորագրի պայմանները.** Բաժնետոմսերի ՀՀ կարգավորվող շուկայում ցուցակման և/կամ առևտրի թույլատրման օրվան հաջորդող 12 ամիսների ընթացքում Իրական շահառուների՝ իրենց սեփականության իրավունքով պատկանող Հիմնական բաժնետիրոջ բաժնային արժեթղթերի որևէ կերպ ուղղակի կամ անուղղակի վաճառքի իրականացման բացառումը,

ii. Հիմնական բաժնետիրոջ վերահսկողության փոփոխության բացառումը ՀՀ կարգավորվող շուկայում ցուցակելու և/կամ առևտրի թույլատրելու օրվան հաջորդող 24 ամիսների ընթացքում,

iii. Բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսելու օրվան հաջորդող 18 ամիսների ընթացքում «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի, Հիմնական բաժնետիրոջ բաժնային արժեթղթերի արտաբորսայական օպցիոնների և ցանկացած այլ ածանցյալ գործիքների և/կամ պայմանագրերի ստորագրման բացառումը, որոնք կարող են հանգեցնել Վերահսկողության փոփոխության:

Թողարկողի, Հիմնական բաժնետիրոջ, Իրական շահառուների վերոնշյալ սահմանափակումները կիրառելի են՝

- քանի դեռ Ազդագրի ներքո տեղաբաշխված Բաժնետոմսերի սեփականատերերը չեն ծանուցվել Թողարկողի կողմից բացահայտվել վերոնշյալ սահմանափակումներով նախատեսված գործողությունների իրականացման մտադրության և/կամ փաստի վերաբերյալ Թողարկողի կողմից (համաձայն Ազդագրի 2.3.6.5.1.1 կետի), և

- քանի դեռ նման բացահայտման հետ միաժամանակ Թողարկողի կողմից չի կայացվել Բաժնետոմսերի ձեռքբերման մասին որոշում (համաձայն Ազդագրի 2.3.6.5.1.2 կետի), և

- քանի դեռ չի լրացել Բաժնետոմսերի ձեռքբերման ժամկետը:

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Անկախ աուդիտորները

Թողարկողի 2020-2022թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ն:

Հասցե՝ ՀՀ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ

հեռ.՝ + 374 (10) 51 21 51

ֆաքս՝ + 374 (10) 52 10 00

կայք՝ www.pwc.com/am

2022թ.-ի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն նույնպես իրականացվում է վերջինիս կողմից:

3.2 Ռիսկային գործոններ

Ցանկացած ներդրող մինչև Թողարկողի բաժնետոմսերում ներդրում անելը պետք է ամբողջությամբ ուսումնասիրի Թողարկողի գործունեությանը հատուկ ռիսկային գործոնները: Ստորև ներկայացված են այն ռիսկերը, որոնք Թողարկողը Ազդագրի ներկայացման պահի դրությամբ համարում է էական, սակայն կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Թողարկողին այս պահին հայտնի չեն կամ Թողարկողը դրանք համարում է ոչ էական. ստորև նկարագրված ռիսկային գործոնների ցանկը պետք է օգտագործվի միայն որպես ուղեցույց:

3.2.1 Մրցակցային ռիսկ

Թողարկողի գործունեության՝ հեռահաղորդակցության շուկայում առկա է մրցակցություն և ժամանակ առ ժամանակ հնարավոր է դրա սրացում, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործառնական և/կամ ֆինանսական ցուցանիշների վրա:

Վերջին տարիներին հեռահաղորդակցման ոլորտում աճել է պահանջարկը համակցված (կոնվերգենտ) փաթեթային առաջարկների նկատմամբ, որոնք ներառում են երկու կամ ավել ամրակցված և շարժական կապի ծառայություններ: Ընկերության ամրակցված և շարժական ենթակառուցվածքների համակցությունը համարվում է լավագույններից մեկը, ինչը թույլ է տալիս շուկայում ներկայացնել համակցված (կոնվերգենտ) փաթեթների գրավիչ առաջարկներ: Բացառված չէ, որ մրցակիցները ինչ-որ պահի նույնպես ձգտեն բարելավել իրենց համակցված (կոնվերգենտ) փաթեթների առաջարկները: Թողարկողի միակ մրցակիցը կոնվերգենտ ծառայությունների մատուցման շուկայում «Յուքոմ» ՓԲԸ-ն է:

Հեռահաղորդակցության շուկայի բոլոր խաղացողները, այդ թվում և Ընկերությունը, ստիպված են մրցակցել նաև ձայնային ծառայություններին այլընտրանք առաջարկող «Skype», «WhatsApp», «Viber», «Facebook Messenger» և այլ նմանատիպ OTT ծառայություններ առաջարկող ընկերությունների հետ, ինչպես նաև հեռուստատեսային և ժամանցային բովանդակություն ունեցող հարթակների հետ:

Վերոնշյալ մրցակցային ռիսկը նվազեցնելու նպատակով Ընկերությունը այժմ կառուցում է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) FTTH (Fiber to the Home - Օպտիկա մինչև բնակարան) օպտիկամանրաթելային ցանց:

Թողարկողի գործունեության վրա որոշակի բացասական ազդեցություն կարող են ունենալ մրցակիցների հետևյալ գործողությունները՝

- ցածր (դեմպինգային) գները որպես գնային պատերազմների (price wars) հետևանք,
- ցանցերի ավելի արագ ընդլայնումը մրցակիցների կողմից:

Ընկերության դիրքը շուկայում կախված է նաև Ընկերության կողմից իրականացվող մարքեթինգային նախաձեռնություններից, առաջարկվող փաթեթներից և ծառայություններից, նոր առաջարկներից և իրականացվող ռազմավարությունից: Ընկերությունն ունի հմուտ և փորձառու կոմերցիոն թիմ, որն, արագ արձագանքելով շուկայի և հաճախորդների նախասիրությունների ու վարքագծի փոփոխություններին, ապահովում է Ընկերության մրցակցային առավելությունը:

Արդյունավետ մրցակցելու կամ հաճախորդների նախասիրությունները արդյունավետ կերպով կանխագուշակելու կամ դրանց ժամանակին արձագանքելու ձախողումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա:

3.2.2 Տեխնոլոգիական զարգացումներ

Տեխնոլոգիական արագ զարգացումները կարող են նպաստել մրցակցության աճին, ինչպես նաև Ընկերության և առկա մրցակիցների տեխնոլոգիաների արդիականության հնարավոր կորստին:

Մրցունակ լինելու նպատակով Ընկերությանը կարող է անհրաժեշտ լինել ներդրումներ կատարել իր ենթակառուցվածքների արդիականացման կամ լիցենզիաների/թույլտվությունների ձեռք բերման և նոր տեխնոլոգիաների զարգացման և ներդրման համար: Այս ներդրումներն իրականացնելու ծախսը կարող է լինել էական, և չի բացառվում, որ ժամանակ պահանջվի շուկայում նոր տեխնոլոգիան դրամայնացնելու (monetizing) համար: Տվյալ ռիսկը առկա է շուկայի բոլոր խոշոր խաղացողների համար:

3.2.3 Կապիտալ ծախսերի և շրջանառու կապիտալի հետ կապված ծախսեր

Ընկերության գործունեության ոլորտն իր տեսակով ծախսատար է, և իր մրցակցային դիրքը պահպանելու և/կամ առավել բարելավելու համար Ընկերությունը իրականացնում է մեծ ծավալի կապիտալ և շրջանառու կապիտալի ներդրումներ: Մասնավորապես Ընկերության առկա ենթակառուցվածքների (օպտիկամանրաթելային և բջջային ցանցերի) ընդլայնումը և շահագործումը պահանջում են ծավալուն կապիտալ ներդրումներ:

Վերջին տարիներին Ընկերությունը զգալի ներդրումներ է կատարել հաճախորդների ներգրավման և պահպանման համար, ներառյալ՝ սարքավորումների ձեռքբերման և տեղադրման ծախսերը, նոր տեխնոլոգիաների (ինչպես օրինակ GPON-ի ներդրումը), ինչպես

նաև գոյություն ունեցող ցանցերի արդիականացումը (ինչպիսինն է օրինակ FTTB/FTTH ցանցի ներդրումը): Ընկերության կապիտալ ներդրումների հիմնական խոշոր ուղղություններն են՝

- Ընկերության ամրակցված օպտիկամանրաթելային ցանցի ընդլայնում,
- Ընկերության բջջային ցանցի ընդլայնում և զարգացում,
- Բաժանորդային սարքավորումների (CPE) և նոր հաճախորդների ձեռքբերման հետ կապված ծախսեր,
- հեռահաղորդակցության լիցենզիաների և թույլտվությունների հետ կապված վճարներ,
- հեռարձակման իրավունքների ձեռքբերում:

Ընկերությունն իր կապիտալ ծախսերը և շրջանառու կապիտալի կարիքը ֆինանսավորելու նպատակով, օգտագործում է գործառնական գործունեությունից առաջացած դրամական միջոցների, ֆինանսական պարտավորությունների և այլ ֆինանսական գործիքների համակցությունը:

Ընկերության իրացվելիության և կապիտալի պահանջները կարող են աճել, եթե ընդլայնվեն գործունեության ոլորտները և արագացվեն աճի տեմպերը:

Եթե որևէ պատճառով Ընկերությունը չկարողանա գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերի միջոցով ապահովել անհրաժեշտ ֆինանսավորում այս պահանջները բավարարելու համար, ներառյալ ցանցի և ծառայությունների առաջարկի ընդլայնումը, Ընկերությունը կարող է հարկադրված լինել սահմանափակել իր գործունեության ընդլայնման հետ կապված ծրագրերը, ինչը կարող է հանգեցնել Ընկերության գործունեության վրա էական բացասական ազդեցության՝ ապագա աճի կրճատման և մրցակցային դիրքի վատթարացման:

3.2.4 Տնտեսական, քաղաքական, և սոցիալական ռիսկեր

Ընկերության, ինչպես նաև մրցակիցների և առհասարակ ոլորտի հաջողությունը սերտորեն կապված է ՀՀ-ում ընդհանուր տնտեսական զարգացումների հետ: ՀՀ տնտեսական վիճակի վատթարացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ հաճախորդների վճարունակության և սպառման օրինաչափությունների վրա: Արդյունքում հնարավոր է, որ բաժանորդների մի մասը սահմանափակի Ընկերության որոշ ծառայությունների սպառումը, ինչի հետևանքով կարող է նվազել մեկ բաժանորդին ընկնող միջին հասույթի (ARPU) ներկա մակարդակը:

Գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի աճը, մասնավորապես, Հայաստանում աշխատավարձերի աճը կարող է հանգեցնել Ընկերության գործառնական ծախսերի աճի:

Ի լրումն, ՀՀ քաղաքական վիճակի հետ կապված որևէ անորոշություն կամ անկայունություն, ներառյալ քաղաքական ռեժիմի, իրավական և կարգավորող նորմերի կամ կառավարման օրինակարգերի փոփոխությունը, կարող է բացասական ազդեցություն ունենալ բիզնեսի և գործառնությունների վրա:

Տնտեսական և քաղաքական բացասական զարգացումները կարող են վտանգել Ընկերության կողմից սահմանված թիրախները և կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

3.2.5 **Անորոշության և անկայունության ռիսկեր**

Ընկերության վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ համաշխարհային տնտեսության մեջ տիրող շարունակական անորոշությունները, ինչպես նաև անկայուն կապիտալի շուկաները: Վերջինս կարող է բացասաբար ազդել Ընկերության վրա, քանի որ Ընկերության պարտքային միջոցների տոկոսադրույքը ունի լողացող կոմպոնենտ:

Մատչելի վարկային ռեսուրսների բացակայությունը կարող է նաև սահմանափակել Թողարկողի աճի հնարավորությունները:

Հարկ է նշել, որ Թողարկողը աշխարհաքաղաքական անկայունության պայմաններում մշտապես փնտրում է այլընտրանքային աճի ուղիներ և հնարավորություններ՝ դրանով մեղմացնելով վերոնշյալ հնարավոր բացասական ազդեցությունը:

3.2.6 **Արտարժութային ռիսկ**

Ընկերության կապիտալ ներդրումների մեծ մասը, ինչպես նաև որոշակի տեսակի ծառայությունների (ռոումինգ, միջազգային զանգեր, միջազգային կապուղիներ և այլն) և մեծածախ ինտերնետի առուվաճառքն իրականացվում է արտարժույթով, ուստի Թողարկողի մոտ առկա է նաև արտարժութային ռիսկի գործոնը՝ կապված փոխարժեքի հնարավոր տատանումների հետ:

Հարկ է նշել, Արժութային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական կտրվածքով:

2022թ.-ի դրությամբ Ընկերության կապիտալ ծախսերի 50%-ը իրականացվել է արտարժույթով, մեծամասամբ՝ ԱՄՆ դոլարով:

3.2.7 **Ցանցային ռիսկեր**

Ընկերության բջջային կապի ծառայությունների, ամրկացված ինտերնետի և հեռախոսակապի, ինչպես նաև հեռուստատեսության ծառայությունների մատուցումն իրականացվում է սեփական հաղորդման ցանցերի միջոցով: Բացի այդ, Ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգը ներառում է բազմաթիվ ներկապակցված համակարգեր, որոնք պարբերաբար թարմացվում, արդիականացվում, բարելավվում և ինտեգրվում են նոր համակարգերին:

Թողարկողի՝ ծառայություններ մատուցելու կարողությունը կախված է իր ցանցերի շարունակական և անխափան աշխատանքից, համակարգերի թարմացումներից: Չի կարելի բացառել վերջիններիս բնականոն աշխատանքի հնարավոր կարճաժամկետ խափանումները:

Աղետներից վերականգնման, անվտանգության և ծառայության շարունակականության պահպանման միջոցառումները, որոնք Թողարկողը ձեռնարկել է կամ կարող է ապագայում

ձեռնարկել, այդ թվում նաև ցանցի աշխատանքի մոնիտորինգը, կարող են ինչ-որ պահի անբավարար լինել կորուստները կանխելու համար:

Խափանումները կարող են բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի գործունեության վրա:

Ներկայում Թողարկողը ցանցային խափանումների կառավարումը և դրանց հնարավորինս բացառումը համարում է ամենօրյա իր գործառույթների առանցքային նպատակներից մեկը: Ցանցային անխափան աշխատանքն ապահովում են Ընկերության՝ տվյալ ոլորտի լավագույն մասնագետները:

Հարկ է նշել, որ Վարկային պայմանագրի համաձայն Թողարկողը ներգրավել է ՏՏ անվտանգությամբ զբաղվող ընկերություն, որն իրականացրել է կիբերանվտանգության գծով համապարփակ աուդիտ: Վերջինս իրականացվել է «ՍԻԳՆՈՒՄ» խորհրդատվական ընկերության կողմից, որը penetration testing-ի համար ներգրավել է մասնագետների:

Աուդիտի արդյունքում հայտնաբերված և որպես կրիտիկական, բարձր և միջին դասակարգված թերությունները/խոցելիությունները վերացվում են ըստ կազմված պլանի: Թերությունների/խոցելիությունների վերացումը ժամանակին չիրականացնելը, ինչպես նաև վերացման անհնարինությունը կարող են բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի գործունեության վրա:

Հարկ է նշել, որ Ընկերությունն Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ գտնվում է ISO 27001 Տեղեկատվական անվտանգության ստանդարտի սերտիֆիկացման փուլում:

3.2.8 Զարգացումից բխող ռիսկեր

Թողարկողը կարող է կարիք ունենալ շարունակաբար բարելավելու իր գործառնական և ֆինանսական համակարգերը և կառավարչական կարգավորումներն ու ընթացակարգերը՝ ծրագրվող աճին զուգահեռ: Թողարկողը նաև կարիք կունենա պահպանելու սերտ համակարգում իր լոգիստիկ, տեխնիկական, հաշվապահական, ֆինանսական, մարքեթինգի և վաճառքի բաժինների միջև:

Թողարկողի աճի կառավարումը, ի թիվս այլ գործոնների, հնարավոր է պահանջի՝

- առկա գործառնությունների հետ նոր գործիքակազմի ինտեգրելու ունակություն,
- ֆինանսական ու կառավարչական կարգավորումների և ՏՏ համակարգերի շարունակական զարգացում և վերջիններիս գործարկում նոր նախաձեռնություններում,
- նոր աշխատուժի ներգրավվում և վերապատրաստում,
- աճող մարքեթինգային գործունեությունը կառավարելու ունակություն,
- Թողարկողի գործունեության շուկաներում տեղի ունեցող փոփոխություններին (այդ թվում՝ օրենսդրական) հարմարվելու ունակություն,

- նոր կարգավորող մարմինների և վարչակարգերի հետ հաջողությամբ համագործակցելու ունակություն,
- աճող մրցակցությունն արդյունավետ կառավարելու և ծառայությունների նկատմամբ աճող պահանջարկը բավարարելու ունակություն:

Թողարկողի՝ շարունակական աճի և զարգացման համար անհրաժեշտ գործառնական և ֆինանսական ռեսուրսների համապատասխան ծավալ ապահովելու կամ այդ ռեսուրսներն արդյունավետ կերպով օգտագործելու մասով հնարավոր ձախողումները կամ թերացումները կարող են բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

3.2.9 **Անձնակազմի հետ կապված ռիսկեր**

Ընկերության արդյունավետ շարունակական աշխատանքը կախված է առանցքային ղեկավար անձնակազմի և աշխատակիցների փոխադարձ համագործակցությունից:

Բարձր որակավորում ունեցող ղեկավար անձնակազմի ներգրավման համար մրցակցությունը հեռահաղորդակցման ոլորտում բավականին մեծ է: Ընկերության ապագա գործառնական արդյունքները մեծապես կախված են առկա ղեկավար կազմի արհեստավարժությունից և Ընկերության՝ ղեկավար անձնակազմը բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրելու ունակությունից:

Թողարկողը մշտապես աշխատում է համակարգային մոտեցումների ներդրման ուղղությամբ, որպեսզի նվազեցվի Ընկերության գործունեության և հեռանկարային զարգացումների վրա անհատի դերը/ազդեցությունը և Թողարկողի ղեկավար անձնակազմի որևէ առանցքային անդամի աշխատանքային հարաբերությունների դադարեցումը էական ազդեցութուն չունենա Ընկերության անխափան գործունեության, գործառնական արդյունքների վրա:

Հարկ է նշել, որ Ընկերության ռազմավարության ուղղվածությունը կարող է ենթարկվել փոփոխությունների Ընկերության Տնօրենների Խորհրդի կազմի փոփոխության արդյունքում:

3.2.10 **Որակի ապահովման ռիսկ**

Եթե Ընկերությանը չհաջողվի պահպանել կամ բարելավել իր մատուցած ծառայությունների որակը, կարող է վատթարանալ նոր հաճախորդներ ներգրավելու և առկա հաճախորդներին պահպանելու ունակությունը:

Առկա հաճախորդներին պահպանելու և նոր հաճախորդներ ներգրավելու ունակությունը կախված է ծառայությունների մատուցման որակից և մասամբ ապրանքանիշի ճանաչելիությունից: Թողարկողը մատուցվող ծառայությունների որակի հետևողական բարելավումը համարում է իր ռազմավարական ուղղություններից մեկը:

Թողարկողի հեղինակությունը և ապրանքանիշը հիմնականում դրական ազդեցություն են թողնում նոր կամ առկա ծառայությունները նոր հաճախորդներին ներկայացնելու համար, սակայն պետք է նշել, որ հեղինակությանը պատճառված վնասը կարող է հանգեցնել գործունեության և ֆինանսական վիճակի բացասական ազդեցության:

3.2.11 **Պահանջարկի նվազման ռիսկ**

Հայաստանում հեռահաղորդակցության ծառայությունների նկատմամբ պահանջարկը էական ազդեցություն ունի Թողարկողի և մրցակիցների գործունեության վրա:

Եթե հեռահաղորդակցության ծառայությունների նկատմամբ պահանջարկն ընդհանուր առմամբ չաճի կամ խոչընդոտներ առաջանան նոր հաճախորդների գրավման համար, Ընկերության գործունեությունը, ֆինանսական ցուցանիշները կարող են ենթարկվել բացասական ազդեցության:

3.2.12 **Հեռարձակման իրավունքներ**

Բանակցությունները բովանդակության (content) և հեռուստաալիքների արտադրողների/իրավատերերի հետ կրում են շարունակական բնույթ: Ընկերությունը մշտապես ձգտում է բարելավել և ավելի որակյալ, բարձր վարկանիշ ունեցող հեռուստաալիքներ և բովանդակություն (content) տրամադրել իր հաճախորդներին: Հնարավոր են դեպքեր, երբ այս կամ այն հեռուստաալիքը, բովանդակության ստեղծողը դադարեցի իր գործունեությունը տվյալ տարածաշրջանում կամ ընդհանրապես: Կան դեպքեր երբ իրավատերը ավելի մեծ եկամուտ ստանալու ակնկալիքով, պայմանագրի ժամկետի ավարտից հետո, ցանկանում է զգալիորեն ավելացնել ծառայության գինը: Նման դեպքերում Ընկերությունը կամ գտնում է այլընտրանք տվյալ մատակարարին, կամ դադարեցնում է համագործակցությունը, կամ էլ ստիպված է լինում համաձայնել ավելի բարձր գնով ծառայություն ստանալուն (եթե տվյալ հեռուստաալիքը, բովանդակությունը ունի բարձր վարկանիշ): Նշված դեպքերում չի բացառվում, որ Թողարկողի մոտ տեղի ունենա գործառնական ծախսերի որոշակի աճ: Նման ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար Թողարկողը ձգտում է իր վերահեռարձակման պայմանագրերը կնքել երկարաժամկետ (3 տարի ժամկետով), սակայն լինում են նաև դեպքեր, երբ պայմանագրերը կնքվում են 1-2 տարի ժամկետով:

Ընկերության գործունեության հաջողությունը, ի թիվս այլ հանգամանքների, կախված է հաճախորդներին մատուցած հեռուստատեսային ծրագրերի որակից և բազմազանությունից: Հեռուստատեսային ծրագրերի որակի և բազմազանության ապահովման հարցում ամեն ինչ չէ, որ կախված է միայն Ընկերությունից. հնարավոր են դեպքեր, երբ, անկախ Ընկերության կամքից, տեղի է ունենում որակի անկում (օրինակ վատ եղանակային պայմանների ժամանակ հնարավոր են արբանյակից ազդանշանի ստացման կամ թուլացման խնդիրներ, կամ ծրագրային խնդիրներ/վթարներ հեռուստատեսային ծրագրերի մատակարարի մոտ): Հեռուստատեսային ծրագրերի և բովանդակային բազմազանության վրա կարող են ազդեցություն ունենալ տարատեսակ հանգամանքներ, օրինակ՝ բովանդակության (content) մատակարարի պայմանագրի լուծումը տվյալ հեռուստաալիքի հետ, ինչի հետևանքով օրինակ կարող է տուժել հեռուստաալիքի բազմազանությունը: Ընկերությունը բազմաթիվ տեխնիկական և բանակցային գործողություններ է իրականացնում իրեն և իր հաճախորդներին նմանատիպ խնդիրներից և ռիսկերից ապահովագրելու համար:

Հարկ է նշել, որ հեռուստաալիքների (տեսալսողական ծրագրերի) վերահաղորդումն իրականացվում է Ընկերության և «ԹԻՄ» ՓԲԸ կողմից: Տեսադարանի բովանդակությունն (համապատասխան պայմանագրերի կնքումը) առավելապես ապահովվում է «ԹԻՄ» ՓԲԸ-ի կողմից:

3.2.13 **Հաճախորդների արտահոսքի (churn) ռիսկ**

Շարժական և ամրակցված կապի ոլորտներին հատուկ է բաժանորդների արտահոսքը, որը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է մրցակցության բարձր մակարդակով: Չի կարելի բացառել արտահոսքի հնարավոր աճ ինչ-որ ժամանակահատվածում՝ պայմանավորված որոշակի գործոններով:

Ընկերության շարժական կապի ընդհանուր բաժանորդների արտահոսքի մակարդակը (churn rate) համապատասխանում է շուկայում գործող իր մրցակիցների ցուցանիշներին:

Հաճախորդների արտահոսքը կարող է աճել հետևյալ հանգամանքների արդյունքում.

- շուկայում մրցակիցների կողմից առաջարկվող որոշակի առավելություններով ծառայությունների առկայություն,
- Ընկերության ցանցերով ծառայությունների մատուցման հնարավոր խափանումներ,
- որոշակի ծառայությունների օգտագործումը դադարեցնելու մասին հաճախորդների որոշում՝ առանց դրանք փոխարինելու Ընկերության (կամ իր մրցակիցների) կողմից մատուցվող այլ համարժեք ծառայություններով:

Եթե Թողարկողը չկարողանա պահպանել հաճախորդների արտահոսքի ցածր ցուցանիշները և տեղի ունենա հաճախորդների արտահոսքի աճը, ապա դա կարող է կարող են հանգեցնել հասույթի և բաժանորդների քանակի անկմանը կամ բաժանորդներին պահպանելու աճող ծախսերին, ինչն էլ կարող է էական բացասական ազդեցություն ունենալ գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

3.2.14 **Ապահովագրական ռիսկեր**

Թողարկողի ներկա ապահովագրական ծածկույթը հիմնականում փակում է հավանական կորուստները, պարտավորությունները ու գործունեության հետ կապված վնասները:

Ընկերության դիտարկմամբ ապահովագրական քաղաքականությունը պատշաճ կերպով ապահովում է իր հիմնական հավանական կորուստների և պարտավորությունների ապահովագրությունը:

Ընկերությունն ունի հետևյալ ապահովագրական ծածկույթները.

- Գույքի և ամբողջ ակտիվների ապահովագրություն,
- Երրորդ անձի պարտավորության ապահովագրություն,
- Բիզնեսի անընդհատության ապահովագրություն,
- Բեռնափոխադրման և ներքին տեղափոխությունների ապահովագրություն

Ներկայում Ընկերության ակտիվների գերակշիռ մասը ապահովագրված է: Եթե նշանակալից դեպք պատահի Ընկերության ակտիվներին (ներառյալ ցանցերին), կարող են առաջանալ գույքի զգալի կորուստներ, ինչպես նաև տեղի ունենան ծառայությունների մատուցման զգալի խափանումներ, որոնց համար Ընկերությունը՝ համաձայն ապահովագրական պայմանագրերի

կստանա փոխհատուցում: Սակայն, հարկ է նշել, որ կախված գույքային վնասի մասշտաբներից Ընկերությունը կարող է ունենալ դժվարություններ վնասված գույքը ժամանակին վերականգնելու հարցում: Գույքային էական կորուստները ժամանակին չվերականգնելը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության, գործունեության, և ֆինանսական վիճակի վրա:

Հարկ է նշել, որ, համաձայն Վարկային պայմանագրի, եթե Ընկերությունը ակտիվների հետ կապված պատահարներից ստացված ապահովագրական հատուցումները չկարողանա օգտագործել այդ ակտիվների վերանորոգումը, վերականգնումը կամ փոխարինումը ֆինանսավորելու համար, ապա տվյալ դրամական միջոցները պետք է ուղղվեն Վարկային միջոցների մարմանը:

3.2.15 **Վճարային համակարգի ռիսկ**

Վճարումների (billing) և պարտավորությունների հսկողության որակյալ համակարգերը չափազանց կարևոր են եկամտի հոսքերն ավելացնելու, եկամուտների կորուստներից խուսափելու, ծախսերը և պարտքային հնարավոր խնդիրները վերահսկելու և իր հաճախորդներին պատշաճ և ժամանակին վճարային հաշիվներ ներկայացնելու Ընկերության կարողության համար:

Թողարկողի համակարգերին պատճառված որևէ վնաս կամ վճարումների (billing) և պարտավորությունների վերահսկման համակարգերի համար օգտագործվող սերվերների կամ պահեստային սերվերների աշխատանքի ձախողում կարող է ընդհատել Թողարկողի անխափան գործունեությունը և ունենալ բացասական ազդեցություն հեղինակության, գործունեության, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

Հարկ է նշել, որ Թողարկողի վճարային համակարգերում տվյալների փոխանցման մեջ գործում է TLS 1.2 (Transport Layer Security) անվտանգության պրոտոկոլը, ինչն ապահովում է վճարման տվյալների անվտանգությունը և բացառում տվյալների արտահոսքի հնարավորությունը:

3.2.16 **Մատակարարների ռիսկ**

Թողարկողի գործունեությունը կապված է երրորդ անձանց կողմից տրամադրվող սարքավորումների, ծրագրային ապահովման, ապրանքների և ծառայությունների մատուցման հետ: Թողարկողը հեռահաղորդակցության ոլորտում հանդիսանում է խոշոր, բարձր հեղինակություն վայելող հաճախորդ: Թողարկողն ունի երկար տարիների հաջողված բիզնես հարաբերություններ իր հիմնական գործընկներ մատակարարների հետ, ուստի, Ընկերության դիտարկմամբ, գործընկներ մատակարարների կողմից ապրանքների և ծառայությունների մատուցումը դադարեցնելու, ավելի բարձր գներ սահմանելու կամ գործող պայմանագրերը չերկարացնելու հավանականությունը շատ ցածր է:

Ընկերությունն ունի կայուն հարաբերություններ սարքավորումների, ծրագրային ապահովումների և ծառայությունների որոշակի մատակարարների հետ (Huawei, Nokia, Ericsson, Amdocs, Delta Solutions), ինչպես նաև գործընկերային հարաբերություններ է հաստատում նոր մատակարարների հետ:

Ընկերության դիտարկմամբ այս մատակարարները համարվում են իրենց ոլորտում առաջատարներ և վերջիններիս կողմից առաքման ժամկետները երկարաձգելու, անորակ սարքավորումներ առաքելու, գները բարձրացնելու մատակարարումը սահմանափակելու կամ դադարեցնելու ռիսկը շատ ցածր է:

Այնուամենայնիվ, Ընկերությունը ենթակա է մատակարարների հավանական ֆինանսական անկայունության ռիսկերի: Եթե մատակարարները դադարեցնեն որոշ ապրանքների մատակարարումը, չկարողանան տրամադրել Ընկերության հատուկ պահանջմունքները բավարարող սարքավորումներ կամ դադարեցնեն ծառայությունների մատուցումը Ընկերությանը՝ թե՛ լուծարվելու, թե՛ այլ պատճառներով, և եթե Ընկերությանը չհաջողվի ժամանակին համապատասխան փոխարինում գտնել, ապա դա կարող է բացասական ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության, հեռանկարների, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

3.2.17 **Լիցենզավորման և թույլտվությունների ռիսկ**

Թողարկողի գործունեությունը կախված է երրորդ անձանց կողմից տրամադրվող լիցենզիաներից և թույտվություններից: Առկա լիցենզիաները և թույլատվություններն ունեն գործողության ժամկետ, որոնք կարող են երկարաձգվել Թողարկողի հայտի հիման վրա: Այդ ուղղությամբ Ընկերությունը կնախաձեռնի բոլոր անհրաժեշտ քայլերը և գործընթացները թույլտվությունները և լիցենզիաները պահպանելու և երկարաձգելու համար:

Լիցենզիաներից և թույլտվություններից որոշների ձեռքբերումը բարդ և երկարատև գործընթաց է և կարող է Ընկերությանը ենթարկել համապատասխանության հետ կապված շարունակական պարտավորությունների: Բացի այդ, եթե Թողարկողը չկատարի կիրառելի օրենսդրության պահանջները կամ եթե չկատարի իր լիցենզիայի կամ թույլտվության պայմաններից որևէ մեկը, լիցենզիաները և գործունեության համար անհրաժեշտ այլ թույլտվությունները կարող են կասեցվել կամ դադարեցվել: Ընկերությունը շատ ցածր է գնահատում լիցենզիաների կամ այլ անհրաժեշտ պետական լիազորությունների կասեցման կամ դադարեցման հավանականությունը, սակայն տվյալ ռիսկի ի հայտ գալը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և գործառնական արդյունքների վրա:

Հարկ է նշել, որ պատմականորեն Ընկերության մոտ չի դիտարկվել անհրաժեշտ լիցենզիաների և/կամ թույլտվությունների կասեցման, դադարեցման կամ չերկարաձգման որևէ դեպք:

Թողարկողի ցանցերի տեղակայումը պահանջում է տարբեր հաստատումներ կամ թույլտվություններ տեղական կառավարական և/կամ կարգավորող մարմիններից, օրինակ՝ բջջային հեռահաղորդակցության ծառայությունների համար բազային կայանների տեղադրման համար: Այս հաստատումները և թույլտվությունները կարող են ներառել շինարարական և բնապահպանական թույլտվություններ, ալեհավաքների և կայմերի տեղակայման թույլտվություններ և տարբեր այլ նախագծման թույլտվություններ: Այս հաստատումների և թույլտվությունների ստացումը կարող է բարդ գործընթաց լինել և հաճախ իրենից ենթադրում է տարբեր ընթացակարգեր և պահանջներ տարբեր կարգավորող մարմինների կողմից, ինչը հաճախ հանգեցնում է երակարատև փաստաթղթավորման գործընթացների:

Ընկերությունը նախատեսում է ընդլայնել շարժական լայնաշերտ (LTE) ինտերնետի ծածկույթը, ինչպես նաև ՀՀ-ում ներդնել 5G ցանց, որոնց համար արդեն 2023թ.-ի մարտին ձեռք է բերել 700 ՄՀց տիրույթում ռադիոհաճախականության հատվածի օգտագործման թույլտվություն:Բացի այդ, 2023թ.-ի ապրիլին Ընկերությունը ձեռք է բերել 1800 ՄՀց տիրույթում լրացուցիչ ռադիոհաճախականության հատվածի օգտագործման թույլտվություն:

Հաշվի առնելով Ընկերության փորձառությունը՝ Թողարկողը լիցենզիա/թույլտվություն ստանալու, պահպանելու և երկարաձգելու հետ կապված ռիսկերի մակարդակը գնահատում է «ցածր»:

3.2.18 Ցանցային գործընկերների հետ կապված ռիսկեր

Շարժական և ֆիքսված կապի ծառայություններ մատուցելու Թողարկողի ունակությունը կախված է տեղական և միջազգային օպերատորների հետ ունեցած փոխկապակցման[5] պայմանագրերից: Մասնավորապես, ՀՀ որոշ տարածքներում/շրջաններում Ընկերությունը կախված է մրցակից օպերատորների բջջային և ֆիքսված ցանցերի և հարակից ենթակառուցվածքների հետ փոխկապակցումից:

ՀԾԿՀ-ն սահմանում է շարժական և ամրակցված ձայնային ծառայությունների փոխկապակցման դրույքաչափերը 2009թ.-ից: ՀԾԿՀ 2022թ.-ի դեկտեմբերի 28-ի N 574Ն որոշմամբ[6] հաստատված բանաձևի համաձայն 2023թ.-ի համար շարժական և ամրակցված ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարները սահմանվեցին համապատասխանաբար 2.79 և 0.28 ՀՀ դրամ 1 րոպեի դիմաց (առանց ավելացված արժեքի հարկի):

Նույն որոշմամբ ներկայացված բանաձևերի համաձայն՝ առաջիկա տարիների դրույքաչափերի առավելագույն մեծություններն այլ հավասար պայմաններում պետք է նվազեն: Հարկ է նշել, որ դրույքաչափերի վերջնական մեծությունները կախված են եվրո/ՀՀ դրամ փոխարժեքից:

Թեև Ընկերությունն ունի փոխկապակցման և այլ պայմանագրեր մրցակից օպերատորների հետ, Թողարկողը չունի վերջիններիս ցանցերի որակի և նրանց կողմից մատուցվող փոխկապակցման և այլ ծառայությունների վրա ուղղակի վերահսկողության հնարավորություն:

Եթե Ընկերությանը չհաջողվի պահպանել իր պայմանագրերը և առևտրային տեսանկյունից ընդունելի պայմանները, կամ եթե այլ ցանցերի և ծառայությունների հետ առաջանան փոխկապակցման խնդիրներ և ուշացումներ, ապա դրանք կարող են էական բացասական ազդեցություն թողնել Ընկերության գործունեության, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

Այնուամենայնիվ, Թողարկողը վերոնշյալ ռիսկերի մակարդակը գնահատում է «ցածր»:

---

[5] **Փոխկապակցում՝** միևնույն կամ տարբեր էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցողների կողմից օգտագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության երկու ցանցերի ֆիզիկական և տրամաբանական կապակցումը, որի արդյունքում մեկ ծառայություն մատուցողի օգտագործողները հնարավորություն են ունենում տեղեկատվություն փոխանակել միևնույն կամ մեկ այլ ծառայություն մատուցողի օգտագործողների հետ կամ էլ հասանելիություն ստանալ մեկ այլ ծառայություն մատուցողի ծառայություններին (**Աղբյուր՝** «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք)

[6] https://psrc.am/contents/document/11054

3.2.19 **Առողջության հետ կապված ռիսկեր**

2011թ.-ին, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը (ԱՀԿ), ԵՄ-ի Առողջության, Շրջակա միջավայրի և հնարավոր ռիսկերի գիտական կոմիտեն (SCHEER) և Ոչ իոնացնող ճառագայթային պաշտպանության միջազգային հանձնաժողովը (ICNIRP), ուսումնասիրելով կապի և հեռահաղորդակցման ոլորտում առկա էլեկտրամագնիսական ճառագայթման ազդեցության գիտական բոլոր հրապարակումները եզրակացրին, որ ճառագայթման ազդեցությունը չի պարունակում հանրային առողջապահական ռիսկեր, եթե գտնվում է ICNIRP սահմանված թույլատրելի նորմերից ցածր միջակայքում:

Այդուհանդերձ, հանրության որոշ շերտեր շարունակում են ունենալ մտահոգություններ և բացասական տրամադրվածություն կապված նոր սերնդի հաղորդակցության ցանցի, բազային կայանների ազդեցության, դրանց տեղադիրքի, գերարագ ինտերնետի և բջջային հեռախոսների կիրառման հետ կապված, ինչի հետագա տարածումը կարող է թեպետ ցածր, սակայն պոտենցիալ ռիսկ համարվել բիզնեսի և հետագա զարգացման համար՝ նոր տեխնոլոգիաների ներդրման տեսակետից:

ՄԱԿ-ի Միջազգային հեռահաղորդակցության միության (ITU-International Telecommunication Union) կողմից, որի անդամ է նաև Հայաստանի Հանրապետությունը, մշակվել է թիվ 72 հանձնարարականը, համաձայն որի որոշվում են մարդու առողջության վրա էլեկտրամագնիսական դաշտի հնարավոր ազդեցության չափման և գնահատման չափանիշները: Այդ հարցերի կարգավորման նպատակով ՀՀ Առողջապահության նախարարության կողմից 2006թ.-ի օգոստոսի 16-ին արձակվել է թիվ 933-Ն հրամանը, որով ղեկավարվում է նաև Ընկերությունը՝ ի լրումն Միջազգային ֆինանսական կորպորացիայի Կատարողական Ստանդարտների, և որը ենթադրում է էլեկտրամագնիսական ճառագայթման հետ կապված հանրային մտահոգությունների արձագանքման հասցեական և պարբերական աշխատանք հանրության լայն շերտերի հետ:

3.2.20 **Տվյալների արտահոսք**

Ընկերությունն իր գործունեության մեջ կուտակում, պահպանում և օգտագործում է տվյալներ, որոնք կարող են պաշտպանված լինել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքներով: Ընկերությունը տեխնիկական և կազմակերպչական միջոցներ է ձեռնարկում հաճախորդների տվյալները և այլ դասակարգված տեղեկատվությունը արտահոսքից և չարտոնագրված հասանելիությունից պաշտպանելու նպատակով՝ համաձայն գործող գաղտնիության պահանջների: Տեղեկատվության տեղափոխումը համակարգից համակարգ կատարվում է բացառապես գաղտնագրված տարբերակներով: Ընկերությունը ներդնում է Data Loss Prevention (DLP) համակարգ, որը ավելի կբարելավի արտահոսքի դեմ պաշտպանության մակարդակը:

Ընկերությունն աշխատում է երրորդ կողմի ծառայություններ մատուցողների հետ, ինչպիսիք են ծրագրային ապահովում իրականացնող որոշ ընկերություններ, որոնք կարող են լիովին չհամապատասխանել համապատասխան պայմանագրային պայմաններին և իրենց պարտադրվող տվյալների պաշտպանության բոլոր պարտավորություններին: Այդ իսկ պատճառով երկրորդ կողմին ծրագրային ապահովման սպասարկման նպատակով տրամադրվում է հասանելիություն միայն թեստային համակարգերին, որոնք չեն պարունակում

անձնական տվյալներ հանդիսացող տեղեկատվություն կամ պարունակվող տեղեկատվությունը ապաանձնավորված է:

Ընկերությունը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի հիման վրա մշակել է «Անձնական տվյալների մշակման ծանուցում/անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությունը»:

3.2.21 **Դատական գործընթացներ**

Ընկերությունը ներգրավված է մի քանի դատական վարույթներում (ներկայացված է Ազդագրի 3.17.3 կետով), և վերջիններիս մասով Ընկերության համար անբարենպաստ դատական ակտերի կայացումը և ուժի մեջ մտնելը կարող են էական բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական ցուցանիշների և գործունեության վրա:

Հարկ է նշել, որ կան դատական գործեր որտեղ որպես պատասխանող և/կամ երրորդ անձ հանդես են գալիս Ընկերության բաժնետեր «Թիմ» ՓԲԸ-ն և Ընկերության իրական շահառուները (գործերից մեկում Թողարկողը ներգրավված է որպես երրորդ անձ): Տվյալ գործերում որպես հայցվոր կողմ հանդես է գալիս «Յուքոմ» ՓԲԸ-ն, ով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան «Թիմ» ՓԲԸ կողմից «Վեոն Արմենիա» ՓԲ ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման 29.10.2020 թվականի գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին:

Ընկերությունը դատարանի կողմից «Յուքոմ» ՓԲԸ-ի վերոնշյալ պահանջի բավարարման հավանականությունը համարում է «խիստ ցածր»:

3.2.22 **Գործող օրենքների հետ անհամապատասխություն**

Գործող օրենքներին, կանոնակարգերին կամ պետական մարմինների որոշումներին անհամապատասխանությունը կամ Ընկերության գործունեության նկատմամբ պետական կարգավորումների ավելացումը կարող է հանգեցնել լրացուցիչ ծախսերի:

Թողարկողի գործունեությունը ենթակա է կարգավորման տարբեր պետական կառույցների կողմից՝ կապված (ա) տարատեսակ լիցենզիաների, թույլտվությունների ստացման ու երկարաձգման հետ, (բ) հեռահաղորդակցության, տեսալսողական, բնապահպանական, առողջապահական և այլ ոլորտների հետ, ինչպես նաև (գ) անվտանգության, աշխատանքի, շինարարության և քաղաքաշինության, անձնական տվյալների պաշտպանության և սպառողների պաշտպանության օրենքներին, կանոնակարգերին և չափորոշիչներին շարունակական համապատասխանության հետ: Ընկերությունը երբեմն կարող է չհամաձայնվել կարգավորող մարմինների կողմից իրավական դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ, և կարող է ժամանակ առ ժամանակ վիճարկել իր գործունեության ընթացքը կարգավորող որոշումները:

3.2.23 **Հարկային օրենսդրության փոփոխություններ**

Հարկային օրենսգրքի, հարկային մարմինների որոշումների կամ մեկնաբանությունների փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ Թողարկողի գործառնական արդյունքների և դրամական հոսքերի վրա:

3.2.24 **Տարածաշրջանի ռազմական կոնֆլիկտները**

Թողարկողի գործունեության տարածաշրջանում առկա և ապագա ռազմական հակամարտությունները կարող են ունենալ հետևանքներ, որոնք կազդեն Թողարկողի գործունեության վրա:

Մասնավորապես, ՀՀ և հարևան երկրների միջև հնարավոր ռազմական բախումները, պատերազմները կարող են բացասաբար ազդել ՀՀ տնտեսական ակտիվության և շուկայական կոնյուկտուրայի վրա:

3.2.25 **Զարգացող երկրներին վերաբերող ռիսկեր**

ՀՀ-ն հանդիսանում է զարգացող շուկա (emerging market), որում կարող են տեղի ունենալ կտրուկ կամ չնախատեսված տնտեսական կամ քաղաքական փոփոխություններ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

ՀՀ-ն վերջին տարիներին ենթարկվել է էական քաղաքական, տնտեսական և սոցիալական փոփոխությունների, որոնք իրենց ազդեցությունն են թողել տնտեսության վրա:

Երկրում քաղաքական կամ կառավարական անկայունությունը, ինչպես նաև բարեփոխումներին ուղղված քաղաքականությունների իրականացման տապալումը կարող են բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի, ինչպես նաև ՀՀ հետ կապված ներդրումային գործիքների արժեքի վրա, մասնավորապես՝ բաժնետոմսերի: Շուկաների ապագա տնտեսական ուղղվածությունը, մեծապես կախված է պետական մարմինների կողմից ձեռնարկած տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից, ինչպես նաև հարկային, իրավական և քաղաքական զարգացումներից:

3.2.26 **Երկրի վարկանիշի ռիսկ**

Միջազգային վարկանիշային գործակալության(ների) կողմից ՀՀ վարկանիշի իջեցումը կարող է բացասաբար ազդել Ընկերության գործունեության վրա, քանի որ կարող է սահմանափակել հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավումը, ինչպես նաև ազդել տոկոսադրույքների և վարկային միջոցների այլ առևտրային պայմանների վրա: Արդյունքում դա կարող է սահմանափակել Ընկերության՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման և/կամ պարտքային միջոցների վերաֆինանսավորման համար միջոցների ներգրավման հնարավորությունները:

3.2.27 **Դրամական միջոցների բավարար ծավալի ապահովում**

Ընկերության պարտքային միջոցները սպասարկելու, դրանք վերաֆինանսավորելու, ինչպես նաև շրջանառու միջոցները ֆինանսավորելու և ավելի երկարաժամկետ կտրվածքով կապիտալ ծախսեր կատարելու կարողությունը կախված է ապագա գործառնական արդյունքներից և բավարար դրամական միջոցներ գեներացնելու կարողությունից: Վերջիններս էլ կախված են Ընկերության բիզնես ռազմավարության հաջողությունից և տնտեսական, ֆինանսական, մրցակցային, շուկայական, օրենսդրական, կարգավորող և այլ գործոններից, որոնցից շատերը Ընկերության վերահսկողությունից դուրս են:

Ընկերության ղեկավարության դիտարկմամբ Ընկերությունը իր գործառնական գործունեության արդյունքում կստեղծի բավարար դրամական հոսքեր, կամ անհրաժեշտության դեպքում Ընկերությանն ապագայում հասանելի կլինեն պարտքային կամ բաժնային կապիտալի ֆինանսավորման աղբյուրներ: Գործառնություններից և այլ կապիտալ ռեսուրսներից Ընկերության ապագա դրամական հոսքերը ղեկավարության կողմից գնահատվում են բավարար պարտավորությունները մարելու կամ ավելի երկարաժամկետ հեռանկարում Ընկերության կապիտալ ծախսերը և իրացվելիության կարիքները ֆինանսավորելու համար, սակայն պետք է հաշվի առնել, որ դրամական հոսքերի բավարար չլինելու դեպքում Ընկերությունը կարող է ստիպված լինել՝

- չընդլայնել, հետաձգել որոշ գործունեության տեսակները կամ կապիտալ ծախսերը,
- վաճառել ակտիվները,
- ձեռք բերել լրացուցիչ պարտք կամ սեփական կապիտալ,
- վերակառուցել կամ վերաֆինանսավորել ամբողջ պարտքը կամ դրա մի մասը, կամ

հրաժարվել այլ բիզնես հնարավորություններից, ինչպիսիք են օրինակ այլ ընկերությունների ձեռքբերումները:

3.2.28 **Պարտքային բեռի ռիսկ**

Ընկերության գնահատմամբ վերջինիս պարտքային բեռը Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ կառավարելի մակարդակում է և ունի սահմանափակ բացասական հետևանքներ Թողարկողի համար:

Ընկերությունը 2022թ.-ի մայիսի 26-ին Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC-International Finance Corporation), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD-European Bank for Reconstruction and Development) և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Վարկատուներ) հետ կնքել է վարկային պայմանագիր (այսուհետ՝ Վարկային պայմանագիր), ըստ որի Ընկերությանը տրվել է 45 մլն ԱՄՆ դոլարի վարկային միջոցներ՝ 7 տարի մարման ժամկետով (այսուհետ՝ Վարկային միջոցներ):

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության Վարկային միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 18.3 մլրդ ՀՀ դրամ: Նույն թվականի դրությամբ Ընկերության ֆինանսական լծակի գործակիցը (Զուտ պարտք[7]/EBITDA[8]) կազմել է 1.37:

Հարկ է նշել, որ Վարկային պայմանագրով Խմբի բոլոր անդամները հանդիսանում են Ընկերությանը տրված վարկային միջոցների գծով երաշխավորներ:

3.2.29 **Վարկային պայմանագրի հետ կապված ռիսկեր**

Թողարկողը (ինչպես նաև Խմբի մյուս բոլոր կազմակերպությունները) Վարկային պայմանագրի շրջանակներում ունի որոշակի պարտավորություններ, ինչպիսիք են որոշ գործողություններ անելու (affirmative covenants) կամ որոշ գործողություններ անելուց զերծ մնալու (negative covenants), որոշ ֆինանսական ցուցանիշների նվազագույն և առավելագույն մակարդակ պահպանելու, վարկային միջոցները վաղաժամկետ մարելու (mandatory prepayment), ինչպես նաև հաշվետվողականության պարտավորությունները:

Ժամանակ առ ժամանակ Ընկերությունը (ինչպես նաև Խմբի մյուս բոլոր կազմակերպությունները) կարող է ստիպված լինել դիմել Վարկատուներին որոշ սահմանափակումների մասով ժամանակավոր շեղումներ թույլատրելու, համաձայնություն տալու կամ սահմանափակումը վերացնելու կամ փոփոխելու համար: Թողարկողը չի կարող հավաստիացնել, որ նման փոփոխությունները, թույլատվությունները կամ համաձայնությունները կտրամադրվեն Վարկատուների կողմից:

Եթե Թողարկողը (Խմբի կազմակերպություններից որևէ մեկը) ի վիճակի չլինի հետևել Վարկային պայմանագրի հարաբերությունների շրջանակներում առկա սահմանափակումներին և այլ պահանջներին, հնարավոր է որ այդ պայմանագրի պայմաններով տեղի ունենա պայմանագրային պարտավորության չկատարման դեպք (Event of Default) (այսուհետ՝ Դեֆոլտ): Դեֆոլտի դեպքում Վարկատուները կարող են պահանջել Վարկային միջոցների վաղաժամկետ մարում:

Հարկ է նշել, որ Վարկային պայմանագրով սահմանված են խաչաձեւ դեֆոլտի (cross-default) վերաբերյալ դրույթներ: Արդյունքում, Խմբի որևէ անդամի և/կամ Իրական շահառուների Դեֆոլտը կարող է առաջացնել շղթայական Դեֆոլտ՝ հանգեցնելով Վարկային միջոցների վաղաժամկետ մարման շղթայական պահանջի:

Եթե այս իրադարձություններից որևէ մեկը տեղի ունենա, Թողարկողը չի կարող վստահեցնել, որ Ընկերության ակտիվները և դրամական հոսքերը բավարար կլինեն ամբողջությամբ բավարարելու վաղաժամկետ մարման պահանջը:

Թողարկողը գնահատում է վերոնշյալ իրադարձությունների տեղի ունենալու ռիսկը «խիստ ցածր»:

---

[7] Զուտ պարտքի ցուցանիշը հաշվարկված է, որպես Ընկերության ընթացիկ և ոչ ընթացիկ բանկային վարկերի հանրագումարի և դրամական միջոցների և դրանց հանրագումարների տարբերություն

[8] Հաշվարկված է որպես տարվա գործառնական եկամտի և մաշվածության ու ամորտիզացիայի ծախսերի հանրագումար (գործառնական շահույթի հաշվարկում ներառված չէ Ներդրումային գույքի վերաչափումից եկամուտը):

3.2.29.1 *Սահմանափակումներ (կովենանտներ)*

Պայմանագրով սահմանված կովենանտները սահմանափակում են Խմբի անդամներին որոշակի հարցերում, որոնցից էականները ներկայացված են ստորև.

- առանց նախնական համաձայնեցման բաժնետերերին վճարել շահաբաժիններ կամ բաժնետոմսերի գծով կատարել այլ բաշխումներ, կամ գնել, մարել կամ այլ կերպ ձեռք բերել Խմբի անդամի որևէ բաժնետոմս կամ վերջիններիս վերաբերող օպցիոն,
- կրել կամ երաշխավորել լրացուցիչ պարտք,
- գրավադրել ակտիվներ,
- որևէ կողմի տրամադրել բացառիկություն վաճառքի կամ գնման գործարքների էական մասի համար,
- ձեռնարկել կամ թույլ տալ միաձուլում, լուծարում, բաժանում, միացում կամ վերակազմակերպում,
- իրականացնել կառավարման մարմինների և ղեկավար անձանց փոփոխություններ,
- փոփոխել կանոնադրությունը և կանոնադրական կապիտալը (բացառությամբ Ազդագրով նախատեսվող Բաժնետոմսերի թողարկմամբ պայմանավորված փոփոխությունների),
- իրականացնել այլ տեսակի գործունեություն,
- դադարեցնել, փոփոխել կամ տրամադրել որևէ հրաժարում Վարկային պայմանագրի և դրա հետ փոխկապակցված պայմանագրերի մասով,
- իրականացնել տնօրենների խորհրդի կազմում, գլխավոր տնօրենի և գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնում նշանակված անձանց փոփոխություն:

Նույն պայմանագրի շրջանակներում Խմբի անդամները նաև պարտավորվել են[9].

- պահպանել կորպորատիվ գոյությունը, համապատասխանությունը կանոնադրությանը, վարել բիզնեսը պատշաճ ջանասիրությամբ և արդյունավետությամբ,
- օգտագործել Վարկային միջոցները ըստ նշանակության, ինչպես նաև օրենքներին և կանոնակարգերին, ինչպես նաև պայմանագրով սահմանված բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխան,
- ապահովել պատշաճ հաշվապահական և կառավարչական համակարգեր,
- նշանակել և պահպանել միջազգայնորեն ճանաչված անկախ աուդիտորական ընկերության,
- ապահովել, որ Խմբի բիզնեսը բոլոր առումներով իրականացվի պայմանագրով սահմանված բնապահպանական և սոցիալական բոլոր պահանջներին համապատասխան, և իրականացնել բնապահպանական և սոցիալական հարցերի մեղմացման և բարելավման միջոցառումների պլանը,

[9]Ներկայացված են էական պարտավորվածությունները

- միասնաբար ապահովել զուտ պարտք/EBITDA[10] գործակցի և պարտքի սպասարկման գործակցի (Debt Service Coverage Ratio) ստորև ներկայացված սահմանային ցուցանիշներին համապատասխանությունը.
    - պարտքի սպասարկման գործակիցը (Debt Service Coverage Ratio) պետք է կազմի առնվազն 1.25:1՝ սկսած 2023թ. հունիսի 30-ին ավարտվող հաշվարկային ժամանակահատվածից[11],
    - զուտ պարտք/EBITDA հարաբերակցությունը հաշվարկային ժամանակահատվածում չի գերազանցում ստորև աղյուսակում նշված ցուցանիշները

Հաշվարկային ժամանակահատված, որն ավարտվում է	**զուտ պարտք/ EBITDA հարաբերակցություն**
2022թ. հունիսի 30-ին	3.0:1
2022թ. դեկտեմբերի 31-ին	3.0:1
2023թ. հունիսի 30-ին	2.5:1
2023թ. դեկտեմբերի 31-ին	2.5:1
2024թ. հունիսի 30-ին	2.0:1
2024թ. դեկտեմբերի 31-ին	2.0:1
2025թ. հունիսի 30-ին և հետագա եռամսյակային ամսաթվին, որը համընկնում է հունիսի 30-ի և դեկտեմբերի 31-ի հետ, և որը ավարտվում է 2027թ. դեկտեմբերի 31-ին	1.5:1
2028թ. հունիսի 30-ին և հետագա եռամսյական ամսաթվին, որը համընկնում է հունիսի 30-ի և դեկտեմբերի 31-ի հետ, և որը ավարտվում է 2029թ. դեկտեմբերի 31-ին	1.0.1

- Վարկային պայմանագրով սահմանված կիբերանվտանգության գծով գործողությունների ծրագրի համաձայն պաշտպանվել տվյալների կորստից և անվտանգության խախտումներից:

Ստորև ներկայացված Խմբի որևէ անդամի գծով խախտումները նույնպես կարող են հանգեցնել Ընկերության Դեֆոլտի[12].

[10] Վարկային պայմանագրով սահմանված զուտ պարտք և EBITDA ցուցանիշների հաշվարկները կարող են որոշակիորեն տարբերվել Ազդագրում ներկայացված ցուցանիշների հաշվարկներից:
[11] Հաշվարկային ժամանակահատվածը ցանկացած հաշվարկի դեպքում 4 (չորս) հաջորդական եռամսյակներից բաղկացած ժամանակահատվածն է, որն ավարտվում է եռամսյակային ամսաթվին: Եռամսյակային ամսաթվերն են մարտի 31-ը, հունիսի 30-ը, սեպտեմբերի 30-և և դեկտեմբերի 31-ը:
[12]Ներկայացված են էական խախտումները

- մայր գումարի և տոկոսագումարի չվճարումը,
- որևէ պետական մարմնի կողմից Խմբի անդամներին և Ընկերության Իրական շահառուներին պատկանող գույքի, ակտիվների, բաժնետիրական կապիտալի ազգայնացումը, բռնագրավումը կամ այլ կերպով սեփականազրկումը,
- Խմբի անդամների և Ընկերության Իրական շահառուների լուծարման, սնանկության կամավոր և ոչ կամավոր վարույթները (voluntary and involuntary proceedings),
- վերահսկողության փոփոխության տեղի ունենալը, ըստ որի «Թիմ» ՓԲԸ-ն դադարում է վերահսկողություն (բաժնետոմսերի 100% սեփականատեր) ունենալ Խմբի մյուս անդամների նկատմամբ,
- որևէ դեպքի ի հայտ գալը, որ կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Խմբի որևէ անդամի կամ Ընկերության իրական շահառուների գործունեության վրա:

3.2.29.2 *Պարտադիր վաղաժամկետ մարում (mandatory prepayment)*

Վարկային միջոցները ենթակա են պարտադիր վաղաժամկետ մարման, եթե տեղի է ունեցել **վերահսկողության փոփոխություն (change of control)**: Վերջինս կհամարվի տեղի ունեցած այն դեպքերում, երբ տեղի ունենա ստորև ներկայացված դեպքերից/իրավիճակներից որևէ մեկը.

- իրական շահառուներից յուրաքանչյուրը ցանկացած պատճառով դադարի համարվել «Թիմ» ՓԲԸ-ի բաժնետիրական կապիտալի առնվազն 50%-ի սեփականատեր,
- իրական շահառուներից բացի այլ անձի կարողությունը ընտրելու Խմբի անդամ կազմակերպությունների տնօրենների խորհրդի կամ կոլեգիալ գործադիր մարմնի անդամների մեծամասնությանը և/կամ նշանակելու միանձնյա գործադիր մարմնին,
- Ընկերության կամ «Թիմ» ՓԲԸ տնօրենների խորհրդի և/կամ կոլեգիալ գործադիր մարմնի անդամների մեծամասնության փոխարինումը,
- Ընկերության կամ «Թիմ» ՓԲԸ գծով վերահսկողության փոփոոխություն կամ նմանատիպ իրադարձություն այլ վարկային պայմանագրերի կամ արտոնյալ բաժնետոմսերին վերաբերող փաստաթղթերի հիման վրա:

3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին

3.3.1 Թողարկողի պատմությունը և զարգացումը

Ընկերությունը ՀՀ-ում մատուցում է 2G (GSM), 3G (UMTS) և 4G (LTE) ստանդարտի շարժական կապի, ամրակցված հեռախոսակապի, թվային հեռուստատեսության IPTV և OTT

ծառայություններ[13], ինչպես նաև ապահովում է ամրակցված ինտերնետ հասանելիություն FTTH, FTTB, VDSL և ADSL տեխնոլոգիաներով:

Ընկերությունը հիմնադրվել է 1995թ.ին որպես «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության հեռահաղորդակցության համակարգի ժառանգորդ:

Ընկերությունը էլեկտրոնային հաղորդակցության մասին ՀՀ օրենքի համաձայն համարվում է պատմականորեն գերիշխող օպերատոր (կամ ծառայությունների մատուցման մեջ պատմականորեն գերիշխող):

Ընկերությունը հիմանդրման օրվանից շահագործում է ՀՀ ազգային հանրային հեռախոսային ցանցը (PSTN)՝ մատուցելով ամրակցված ձայնային հեռախոսակապի և ինտերնետ ծառայություններ:

1995թ.-ին Ընկերությունը ՀԾԿՀ կողմից ստացավ Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման թիվ 60 լիցենզիա (այսուհետ՝ Թիվ 60 լիցենզիա):

1996թ.-ին Ընկերությունը առաջին անգամ ՀՀ-ում գործարկեց 2G երկրորդ սերնդի (GSM) բջջային ցանցը:

1998թ.-ին OTE (Hellenic Telecommunications) ընկերությունը ամերիկյան ընկերությունից ձեռք բերեց «ԱրմենՏել» ընկերության բաժնետոմսերը, որոնք 2006-2007թթ.-ին վաճառվեցին VimpelCom Ltd (ներկայում՝ VEON Ltd) ընկերությունների խմբին:

2007թ.-ից Ընկերությունը սկսեց մատուցել ամրակցված լայնաշերտ ինտերնետի ծառայություններ ADSL տեխնոլոգիայի հիման վրա:

2007թ.-ին երկարաձգվեց Թիվ 60 լիցենզիայի գործողությաբ ժամկետը: Լիցենզիան գործում է մինչև 2028թ.-ը մարտի 3-ը:

2007թ.-ին Ընկերությունը ստացավ 3G երրորդ սերնդի (UMTS) բջջային ցանցի համար ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունները, որից հետո 2008թ.-ին առաջին անգամ ՀՀ-ում գործարկեց 3G ցանցը:

2008թ.-ին Ընկերությունը նախաձեռնեց նոր 3G բազային կայանների ինտենսիվ գործարկումը: 2023թ.-ի փետրվարի դրությամբ Ընկերությունն ունի 939 բազային կայաններ (որից 883-ը՝ մակրոկայաններ)՝ ցանցի հասանելիությամբ ապահովելով բնակչության 99,1%-ին:

[13] Ցանցային օպերատորների ենթակառուցվածքների կամ համացանցի միջոցով տեսալսողական տեղեկատվության տարածման ծառայություններ

2012թ.-ին Ընկերությունը ամրակցված կապի շուկայում գործարկեց FTTB (Fiber to the Building - Օպտիկա մինչև Շինություն) ցանցի միջոցով լայնաշերտ ինտերնետի ծառայությունները:

2015թ.-ին Ընկերությունն առաջին անգամ շուկայում առաջարկեց մեկ վճարային հաշվով ամրակցված և շարժական կապի ծառայությունների համակցված (կոնվերգենտ) փաթեթ:

2016թ.-ին Ընկերությունը գործարկեց 4G չորրորդ սերնդի (LTE) բջջային ցանցը, որը ներկայումս հասանելի է բնակչության 74.06%-ին:

2016թ.-ին Ընկերությունը ՀՀ մարզային բնակավայրերի 99%-ում ապահովեց ամրակցված հեռախոսակապի և ինտերնետի անլար տեխնոլոգիայով (CDMA) հասանելիությունը:

2017թ.-ին Ընկերությունը վերանվանվեց «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի:

2018թ.-ին Ընկերությունը ամրակցված կապի շուկայում գործարկեց VDSL լայնաշերտ ինտերնետի և IPTV ծառայությունները:

2019թ.-ին Ընկերությունը առաջարկեց իր BeeTV հեռուստատեսային հավելվածը և ավելի ընդգրկուն ամրակցված և շարժական կապի համակցված (կոնվերգենտ) փաթեթներ:

2020թ.-ի հոկտեմբերին «Թիմ» ՍՊԸ-ն ձեռք բերեց Ընկերության 100% բաժնետոմսերը: Նույն տարվա նոյեմբերին Ընկերությունը վերանվանվեց «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի:

2021թ.-ից Ընկերությունը ամրակցված կապի շուկայում նախաձեռնել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) FTTH (Fiber to the Home - Օպտիկա մինչև բնակարան) ցանցի կառուցումը:

2021թ.-ին ապրիլին Ընկերությունը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից ստացավ ՀՀ տարածքում ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա, որը գործում է մինչև 2031թ.-ի ապրիլի 29-ը: Նույն տարվա դեկտեմբերին Ընկերությանը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից տրվեց թույլտվություն ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու համար, որը գործում է անժամկետ:

Նույն թվականից Ընկերությունը՝ DWDM օպտիկամանրաթելային ցանցի շնորհիվ տարածաշրջանային հեռահաղորդակցության օպերատորներին սկսել է մատուցել Ասիայից Եվրոպա տվյալների տարանցման ծառայություններ:

2008-2022թթ.-ի ընթացքում Ընկերությունը գործել է «Beeline» ապրանքանիշի ներքո:

2022-ի ապրիլին տեղի ունեցավ Ընկերության վերաբրենդավորումը Team Telecom Armenia ապրանքանիշի:

3.3.1.1 *Թողարկողի ռազմավարությունը*

Ընկերության առաքելությունն է մարդկանց շփումն ու աշխատանքը դարձնել ավելի հասանելի ու հարմար՝ ներդնելով նորագույն թվային տեխնոլոգիաները: Ռազմավարության հիմնական բաղադրիչները ներկայացված են ստորև կետերով.

- **ապահովել կոմունիկացիոն ցանցերի մշտական արդիականացումը՝**
  Ընկերությունը շարունակաբար արդիականացնում է իր ամրակցված և շարժական ցանցերը հանրապետության ողջ տարածքով՝ ստեղծելով ցանցային, սերվերային և ծրագրային հզոր և ճկուն ենթակառուցվածք, որը կապահովի այսօրվա և ապագայի ծառայությունների արագ ներդնումն ու որակյալ մատուցումը:

  Հանդիսանալով ՀՀ ազգային հանրային հեռախոսային ցանցի (PSTN) ժառանգորդ Ընկերությունը տիրապետում է ստորգետնյա խողովակների և վերգետնյա սյուների ցանցային ենթակառուցվածքին, ինչը հիմք է ապահովում գերարագ 25G-PON տեխնոլոգիայի հիման վրա FTTH ծառայության ներդրման համար: Արդյունքում Ընկերությունը զգալիորեն կբարելավի իր հաճախորդների փորձառությունը՝ միևնույն ժամանակ հիմք ստեղծելով արդիական լուծումներով նորարարական ծառայությունների գործարկման համար:
  2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 4G բջջային ցանցը ծածկում է ՀՀ տարածքի, բնակավայրերի և բնակչության համապատասխանաբար 15.35%-ը, 21.97%-ը և 74.06%-ը: 4G ծածկույթի ընդլայնման համար Ընկերությունը շարունակաբար արդիականացնում է ռադիոհասանելիության ցանցը (RAN – Radio Access Network) և կառուցում է նոր բազային կայաններ:
  Ընկերությունը 2023թ.-ի ընթացքում կազմակերպված 700 Մhg ռադիոհաճախականությունների հատվածների ձեռքբերման մրցույթների արդյունքում ձեռք բերեց ընդհանուր առմամբ 40 ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություններ, որոնց շնորհիվ Ընկերությունն էլ ավելի կմեծացնի 4G ցանցի հասանելիությունը, ինչպես նաև շենք-շինություններում ցանցի ներթափանցումը, բացի այդ Ընկերությունը կներդնի 5G ցանց ՀՀ խոշորագույն երեք քաղաքներում:

- **ստեղծել ավելի ճկուն և բարձրակարգ միջազգային կապուղիների ենթակառուցվածք.**

  Տվյալների փոխանցման ծառայությունների նկատմամբ պահանջարկի գլոբալ աճին զուգահեռ է՛լ ավելի է ընդգծվում ՀՀ դերը որպես տարանցիկ շրջան Ասիայից Եվրոպա տվյալների փոխանցման համար: Այդ ամենը լավ հնարավորություններ է ստեղծում Ընկերության համար տարածաշրջանային հեռահաղորդակցության օպերատորներին տվյալների տարանցման ծառայությունների մատուցման ոլորտում: Ընկերությունն արդեն իսկ ունի գործող DWDM օպտիկամանրաթելային ցանց, որի միջոցով ապահովվում է կապը դեպի Վրաստան և Եվրոպա: DWDM ցանցի

արդիականացումները էլ ավելի կբարձրացնեն տվյալների տարանցման թողունակությունը

- **ավելացնել բաժանորդային բազան և բարձրացնել սպասարկման որակը**
  Ամրակցված և շարժական կապի ծառայությունների որակի և հասանելիության աճին զուգահեռ Ընկերությունը նախատեսում է մեծացնել բաժանորդների քանակը նաև կոնվերգենտ փաթեթների/ծառայությունների գրավիչ առաջարկներով, որտեղ շարժական ծառայությունները կապակցված են ամրակցված լայնաշերտ ինտերնետի, IPTV թվային հեռուստատեսության և ամրակցված ձայնային ծառայություններին:
  Ընկերությունը կարևորում է հաճախորդների լավագույն փորձառությունը շփման բոլոր կետերում՝ որպես իր հաճախորդ վերաբերվելով նաև Team հավելվածների և ծառայությունների բոլոր օգտատերերին, որոնց քանակի ավելացումը նույնպես Ընկերության առաջիկա տարիների առաջնահերթություններից է:
  Հաճախորդների կյանքն առավել դյուրին և հարմարավետ դարձնելու նպատակով Ընկերությունը շարունակաբար ներդնում է ինքնասպասարկման նոր համակարգեր՝ միևնույն ժամանակ շարունակելով արագ և որակյալ սպասարկել իր հաճախորդներին:
  Ընկերությունը իրականացնում է հաճախորդների առաջխաղացման ինդեքսի Net Promoter Score (NPS) մշտադիտարկում՝ հաճախորդների գոհունակության բարձրացմանն ուղղված գործողությունների արդյունավետությունը գնահատելու նպատակով:
- **ներդնել կառավարման միջազգային ստանդարտներ**
  Ոլորտի լավագույն չափանիշների պահպանման, պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակի և շարունակական բարելավման նպատակով Ընկերությունը ներդնում է կառավարման միջազգային ստանդարտներ (ISO 9001:2015 որակի, ISO 27001 տեղեկատվական անվտանգության և ISO 14001 բնապահպանական կառավարման համակարգեր)՝ բավարարելով որակի, տեղեկատվական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության պահանջները: Վերջինիս ներդրմամբ ապահովվում է Ընկերության գործունեության ընթացքում անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման և օգտագործման արդյունավետությունը, անթափոն կամ սակավաթափոն պրակտիկաների և տեխնոլոգիաների ներդրումը, ինչն իր հերթին ապահովում է շրջակա միջավայրի պահպանություն, անվտանգ աշխատանքային միջավայր և բիզնեսի կայուն զարգացում:

3.3.2 Թողարկողի անվանումը և կազմակերպահիրավական ձևը

Թողարկողի անվանումն է՝

	Լրիվ ֆիրմային անվանումը	Կրճատ անվանումը
հայերեն՝	«Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերություն	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
ռուսերեն՝	Открытое акционерное общество “Телеком Армения“	ОАО “Телеком Армения“
անգլերեն՝	“Telecom Armenia” Open Joint Stock Company	“Telecom Armenia” OJSC

Գրանցված ապրանքանիշերն են.

	Ապրանքանիշը	Անվանումը	Գրանցման համարը	Գրանցման ամսաթիվը

1.	team TELECOM ARMENIA	Team Telecom Armenia[14]	**34149** **36250**	31.01.2022 12.12.2022
2.	BeeTel	BEETEL	**12565**	28.02.2008
3.	БиТел	БИТЕЛ	**12566**	28.02.2008
4.	ԲԻՏԵԼ	ԲԻՏԵԼ	**12567**	28.02.2008
5.	ArmNet	ARMNET	**12965**	23.06.2008
6.	Hi-Line	HI-LINE	**13180**	21.08.2008
7.	**Просто. Удобно. Для тебя!**	ПРОСТО. УДОБНО. ДЛЯ ТЕБЯ!	**21661**	10.07.2014
8.	**Easy. Convenient. For you!**	EASY. CONVENIENT. FOR YOU!	**21662**	10.07.2014
9.	Պարզ, հարմար, քեզ համար	ՊԱՐԶ, ՀԱՐՄԱՐ, ՔԵԶ ՀԱՄԱՐ	**26349**	30.08.2017
10.	**Просто. Удобно. Для семьи!**	ПРОСТО.УДОБНО.ДЛЯ СЕМЬИ!	**26348**	30.08.2017
11.	Պարզ, հարմար, ընտանիքի համար	ՊԱՐԶ, ՀԱՐՄԱՐ, ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ	**26349**	30.08.2017
12.	**Easy. Convenient. For family!**	EASY. CONVENIENT. FOR FAMILY!	**26350**	30.08.2017
13.	Combo Комбо Կոմբո	ԿՈՄԲՈ КОМБО COMBO	**28935**	29.05.2019
14.	Pro Special	PRO SPECIAL	**30860**	23.05.2020
15.	BeeMoney	BEEMONEY	**26336**	30.08.2017
16.		B	**26243**	10.08.2017
17.	BeeTV	BEETV	**26337**	30.08.2017
18.		Q	**26248**	10.08.2017

3.3.3 Թողարկողի պետական գրանցումը և գործունեության վայրը

Հիմնադրման երկիր՝	Հայաստանի Հանրապետությունը
Գտնվելու վայր՝	ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, 0014, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Պ., 24/1
Պետական գրանցման համար՝	264.130.1310465
Պետական գրանցման ամսաթիվ՝	11.04.2023թ.[15]

[14] Ապրանքանիշի իրավատեր է հանդիսանում «Թիմ» ՓԲԸ-ն: Թողարկողի կողմից ապրանքանիշը օգտագործվում է «Թիմ» ՓԲԸ հետ կնքած պայմանագրի հիման վրա:

[15] Նախքան որպես բաց բաժնետիրական ընկերություն վերակազմավորումը, Ընկերության պետական գրանցման ամսաթիվ էր համարվում 01.03.1995թ.-ը:

Գործունեության վայր՝	Հայաստանի Հանրապետություն
Կապի միջոցներ՝	Հեռ.՝ +374-10-410410 էլ. փոստ՝ info@telecomarmenia.am Կայք՝ www.telecomarmenia.am

Ընկերության պետական գրանցման վայրը և համարը, գրանցման ամսաթիվը և փաստացի գործունեություն ծավալելու վայրը, թողարկողի հիմնադրման երկիրը և այլ տվյալները հասանելի են ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստրի շտեմարանում՝ www.e-register.am:

3.3.4 Բիզնեսի զարգացումը

Թողարկողի բիզնեսի զարգացման մեջ տեղի ունեցած կարևոր իրադարձությունները ներկայացված են ստորև.

Շարժական կապի շուկա

Ընկերությունը ՀՀ-ում առաջինն է, ով գործարկել է 2G և 3G բջջային ցանցերը՝ համապատասխանաբար 1996 և 2008 թվականներին: Ընկերության 4G ցանցը գործարկվել է 2016թ.-ին:

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 2G, 3G և 4G բջջային ցանցերով ապահովված են ՀՀ բնակչության համապատասխանաբար 96.43, 99.10 և 74.06 տոկոսը:

2015թ.-ին Ընկերությունն առաջին անգամ շուկայում առաջարկեց շարժական և ամրակցված կապի ծառայությունների համակցված (կոնվերգենտ) փաթեթներ, որոնց համար վճարումն իրականացվում է մեկ հաշվով:

2019թ.-ին Ընկերությունը առաջարկեց իր BeeTV (այժմ՝ TeamTV) հեռուստատեսային հավելվածը և ավելի ընդգրկուն ամրակցված և շարժական կապի համակցված (կոնվերգենտ) փաթեթներ:

Ընկերությունը շարունակաբար իրականացնում է բջջային բազային կայանների արդիականացում, ինչպես նաև կառուցում է նոր կայաններ: 2023թ. փետրվարի դրությամբ Ընկերության ռադիոհասանելիության ցանցը (Radio access network - RAN) բաղկացած է 883 բազային կայաններից:

2023թ.-ի մարտին Ընկերությանը մրցութային հիմունքներով տրամադրվեց 700 ՄՀց, իսկ 2023-ի ապրիլին՝ 1800 ՄՀց տիրույթում ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություններ[16]: Ընկերությունը 700 ՄՀց տիրույթում ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության դիմաց պարտավորություն է ստանձնել ընդլայնել 4G ցանցի

[16] Ամբողջական ցանկը ներկայացված է ՀԾԿՀ 2023թ.-ի մարտի 10-ի թիվ 79Ա, մարտի 22-ի թիվ 88Ա և ՀԾԿՀ 2023թ.-ի ապրիլի 12-ի թիվ 117Ա որոշումներով՝ https://www.psrc.am

հասանելիությունը, ինչպես նաև 2 և 3 տարվա ընթացքում (համապատասխանաբար Երևան քաղաքում և Գյումրի/Վանաձոր քաղաքներում) ներդնել շարժական լայնաշերտ կապի 5-րդ սերնդի (5G) ցանց:

Ամրակցված կապի շուկա

2007թ.-ից Ընկերությունը ամրակցված կապի շուկայում սկսել է մատուցել լայնաշերտ ինտերնետի ծառայություններ ADSL տեխնոլոգիայի հիման վրա, իսկ 2012թ.-ին Ընկերությունը ամրակցված կապի շուկայում գործարկել է FTTB (Fiber to the Building - Օպտիկա մինչև Շինություն) ցանցով լայնաշերտ ինտերնետի ծառայությունները:

2015թ.-ին Ընկերությունն առաջին անգամ շուկայում առաջարկեց շարժական և ամրակցված կապի ծառայությունների համակցված (կոնվերգենտ) փաթեթներ, որոնց համար վճարումն իրականացվում է մեկ հաշվով:

2016թ.-ին Ընկերությունը ՀՀ մարզային բնակավայրերի 99%-ում ապահովեց ամրակցված հեռախոսակապի և ինտերնետի հասանելիությունը անլար CDMA տեխնոլոգիայով:

2018թ.-ին Ընկերությունը ամրակցված կապի շուկայում գործարկեց VDSL տեխնոլոգիայով լայնաշերտ ինտերնետի և IPTV ծառայությունները:

2021թ.-ից Ընկերությունը ամրակցված կապի շուկայում նախաձեռնել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբիթ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) FTTH (Fiber to the Home - Օպտիկա մինչև բնակարան) ցանցի կառուցումը: Առաջարկվող տեխնոլոգիան ապահովում է մինչև 1 Գբիթ/վրկ, իսկ օգտատերերի 25%-ին՝ մինչև 10 Գբիթ/վ սիմետրիկ արագությամբ տվյալների փոխանցման ծառայություններ մատուցելու հնարավորություն: FTTH ցանցը, եռաշերտ Wi-Fi բաժանորդային սարքերի (CPE - Customer Premise Equipment) և ժամանակակից IPTV ծառայության հետ համատեղ, շուկայում հանդիսանում է ազդեցիկ առաջարկ, որը զգալի բարելավում և ավելի գրավիչ է դարձնում Ընկերության առաջարկները:

2021թ.-ի ապրիլին Ընկերությունը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից ստացավ ՀՀ տարածքում ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա:

2021թ.-ից Ընկերությունը DWDM տրանսմիսիոն ցանցի շնորհիվ տարածաշրջանային հեռահաղորդակցության օպերատորներին սկսել է մատուցել Ասիայից Եվրոպա տվյալների IP տարանցման ծառայություններ:

3.3.5 **Ներդրումները**

2020թ.-ից սկսած Ընկերությունը ընդհանուր առմամբ իրականացրել է ավելի քան 23մլրդ ՀՀ դրամի ներդրումներ, որոնք ֆինանսավորվել են ինչպես Ընկերության գործառնական

գործունեությունից ստացված դրամական միջոցների, այնպես էլ փոխառու միջոցների հաշվին: Կատարված ներդրումներն ուղղվել են.

- **ամրակցված ցանցի արդիականացմանը և ընդլայնմանը (ավելի քան 8 մլրդ ՀՀ դրամ)**

  2021-2022թթ. ընթացքում կառուցվել են գերարագ ինտերնետ հասանելիության օպտիկամանրաթելային FTTH (Fiber-to-the-home) ցանցեր Երևան քաղաքի Դավթաշեն, Արաբկիր, Ավան վարչական շրջաններում, Ջերմուկ, Քաջարան, Հրազդան, Ալավերդի, Արմավիր, Մեծամոր, Կապան, Վարդենիս, Սիսիան քաղաքներում, Գնդեվազ գյուղում: Ներկայումս FTTH ցանցը հասանելի է նաև Իջևան և Նոր Հաճն քաղաքներում, Հաղարծին գյուղում, ինչպես նաև մասամբ մայրաքաղաքի Կենտրոն և Քանաքեռ - Զեյթուն վարչական շրջաններում: Ցանցի գերժամանակակից սերվերային և բաժանորդային սարքավորումների մատակարարն է ոլորտի առաջատարը հանդիսացող Նոկիա ընկերությունը:

  Ընկերությունը 2020 թվականին կառուցել է 379,405 իսկ 2021-ին՝ 530,862 մետր օպտիկամանրաթելային կապուղի: Ավելի ակտիվ շարունակելով նախագիծը՝ 2022թ-ի ընթացքում ընդհանուր առմամբ կառուցվել են ավելի քան 1.000.000 մետր օպտիկական կապուղի, 150.000 մետր մալուխատար, ավելի քան 100.000 տնտեսություն ստացել է հասանելություն նոր սերնդի գերարագ օպտիկամանրաթելային ցանցին:

  2021-2022թթ. ընթացքում 27 բջջային ցանցի բազային կայանների ռադիոռելեային կապուղիներ փոխարինվել են օպտիկական կապուղիներով, ինչի արդյունքում ավելացել է կայանների թողունակությունը և դրանց ծածկույթում բարելավվել է բջջային ինտերնետի որակը:

  2023թ.-ի ընթացքում այս ուղղությամբ պլանավորված ներդրումների ծավալը կազմում է 2.6 մլրդ ՀՀ դրամ:

- **բաժանորդային սարքավորումների ձեռքբերմանը (շուրջ 2մլրդ ՀՀ դրամ)**

  Ամրակցված և շարժական կապի ընդլայնմանը զուգահեռ Ընկերությունը իրականացնում է բաժանորդային սարքավորումների (CPE) ձեռքբերումներ:

  Կախված տվյալ տարածքում կապի ապահովման համար լուծվող խնդրի տեսակից և մատուցվող ծառայություններից, սարքավորումները լինում են տարբեր տեսակների:

  Հիմնականում տարանջատվում են երկու տեսակի բաժանորդային սարքավորումներ՝ նախատեսված բնակելի տնտեսությունների և փոքր-միջին բիզնեսի համար, որոնք ապահովում են միացումներ հիմնական երեք պասիվ տեխնոլոգիաներով՝ GPON/XGS-PON/25G-PON:

Ընկերությունում առկա բաժանորդային սարքավորումները WiFi 4/5/6 տեխնոլոգիայով աշխատող բնակարանային ուղղորդիչներ են, որոնք ապահովում են անլար գերարագ միացում ինտերնետ ցանցին և ձայնային ծառայությունների տրամադրում: Wi-Fi ցանցի ծածկույթի ընդլայնման համար բաժանորդներին տրամադրվող Wi-Fi extender սարքավորումը ապահովում է մի Wi-Fi սարքից մյուսին աննկատ անցում (mesh network), ինչը զգալի բարելավում է բաժանորդային փորձառությունը::

2023թ.-ի ընթացքում այս ուղղությամբ պլանավորված ներդրումների ծավալը կազմում է 578մլն ՀՀ դրամ:

- **տարանցիկ և ներհանրապետական հաղորդման ցանցի (transmission network) կառուցմանը (ավելի քան 2.6 մլրդ ՀՀ դրամ)**

2020թ.-ին Ընկերությունը մեկնարկեց հյուսիսից հարավ տարանցիկ տվյալների հաղորդման տրանսպորտային ցանցի կառուցումը՝ Նոկիա ընկերության արտադրության գերժամանակակից DWDM սարքավորումների կիրառմամբ: Ցանցի թողունակությունը ամեն տարի կրկնապատկվում է և 2022 թվականի նոյեմբերի դրությամբ հասել է 3,6 Տբիթ/վ-ի:

Ընկերությունը, հանդիսանալով ՀՀ միակ պղնձյա և օպտիկամանրաթելային մալուխների կիրառմամբ ֆիքսված ցանցի ծառայություններ մատուցողը՝ 2022թ.-ին ավարտեց հաղորդման առաջնային խտացման թվային համակարգերի արդիականացման և վերազինման նախագիծը, որի ընթացքում հանրապետության բոլոր Ավտոմատ հեռախոսային կայաններում (ԱՀԿ) փոխարինվեցին ավելի քան 160 հին խորհրդային արտադրության խտացման սարքավորումներ: Նշված ցանցի միջոցով որակյալ ձայնային և տվյալների հաղորդման ծառայություններ են մատուցվում հիմնականում ուժային կառույցներին և հատուկ կորպորատիվ բաժանորդների: Նախագծի արդյունքում, բացի ծառայությունների մատուցման որակի բարձրացումից, տեղի է ունեցել նաև հոսանքի ծախսի մոտ 40 անգամ տնտեսում և սարքավորումների զբաղեցրած տարածքի մոտ 100 անգամ կրճատում:

DWDM տրանսպորտային ցանցի շնորհիվ IP/MPLS ցանցի թողունակությունը ավելացել է 30 Գբիթ/վ-ով:

2023թ.-ի ընթացքում այս ուղղությամբ պլանավորված ներդրումների ծավալը կազմում է 818մլն ՀՀ դրամ:

- **շարժական ցանցի արդիականացմանը և ընդլայնմանը (ավելի քան 1.7 մլրդ ՀՀ դրամ)**

2020-2022թթ. ընթացքում Ընկերությունը 4G ծածկույթի ընդլայնման համար արդիականացրել է իր բջջային ռադիոհասանելիության ցանցը, թարմացրել բազային կայանները, ինչպես նաև կառուցել 30 նոր բջջային բազային կայաններ:

2023թ.-ի ընթացքում այս ուղղությամբ պլանավորված ներդրումների ծավալը կազմում է 2.7 մլրդ ՀՀ դրամ, որից 1.25 մլրդ ՀՀ դրամը՝ 700 ՄՀց և 1800 ՄՀց տիրույթներում ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվությունների համար:

Ընկերության ներդրումները կրելու են շարունակական բնույթ, քանի որ Ընկերությունը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների դիմաց պարտավորվել է ընդլայնել 4G ցանցի ծածկույթը՝ հաջորդիվ ներդնելով 5G ցանցը, ինչը ենթադրում է ներդրումների է՛լ ավելի մեծ ծավալ առաջիկա տարիներին:

- **SS տեխնոլոգիաների արդիականացմանը և զարգացմանը (ավելի քան 2.4 մլրդ ՀՀ դրամ)**

2020-2021 թթ. ընթացքում կատարվել է SS համակարգերի, օգտագործվող լիցենզիաների և սպասարկման պայմանագրերի մանրամասն վերանայում և գույքագրում, ինչի արդյունքում օպերացիոն ծախսերը կրճատվել են 70մլն ՀՀ դրամի չափով:

2021-2022 թթ. ընթացքում փոխարինվել կամ հզորացվել են հիմնական համակարգերի սերվերային սարքավորումները, թարմացվել են ծրագրային ապահովումները և օպերացիոն համակարգերը, ինչպես նաև հիմնական ծրագրերի և ծառայությունների անխափան աշխատանքի անընդհատությունը ապահովելու համար գործարկվել են սերվերների և համակարգերի պահուստային տարբերակները (redundancy):

- **IP մուլտիմեդիա համակարգի զարգացմանը (ավելի քան 600 մլն ՀՀ դրամ)**

Ընկերությունը բջջային ցանցի ընդլայնմանը զուգահեռ, 2021-2022թթ ներդրել է EXFO Nova Explorer տրաֆիկի վերլուծության համար նախատեսված պլատֆորմը՝ բաժանորդային բողոքների վերծանման, ցանցում առկա խնդիրների վերհանման, վերլուծության, վիզուալիզացման և լուծման համար:

2021թ-ից Huawei STP/MNP համակարգը փոխարինվել է teleSys USPS համակարգով՝, ինչպես նաև ներդրվել են նոր SS7 Firewall և DRA ֆունկցիոնալությունները: Ներկայումս համակարգը ինտեգրացման վերջին փուլում է:

Ծառայությունների անընդհատությունն ու հուսալիությունը բարձրացնելու նպատակով, իրականացվել են մատակարարների կողմից սպասարկման մեջ գտնվող ցանցային էլեմենտների ընթացիկ սպասարկման և ծրագրային թարմացման աշխատանքներ:

2023թ.-ի ընթացքում այս ուղղությամբ պլանավորված ներդրումների ծավալը կազմում է 762մլն ՀՀ դրամ:

- **IPTV & OTT հեռուստատեսային ծառայությունների զարգացմանը (ավելի քան 240 մլն ՀՀ դրամ)**

  2021-2022թթ.-ի ընթացքում հեռուստատեսային ծառայությունների որակի բարձրացման նպատակով ներդրվել է ATEME ֆրանսիական ընկերության կողմից մշակված նոր պլատֆորմը: Վերամշակվել է հեռուստատեսային պորտալի ծրագրային ապահովումը և դիզայնը: Շարունակաբար ավելացվում են նոր հեռուստատեսային ալիքներ: Համակարգի արտադրողականության և ծառայությունների որակի բարձրացման նպատակով համակարգում մշտապես ավելացվում են նոր սերվերային ռեսուրսներ:

  2023թ.-ի ընթացքում այս ուղղությամբ պլանավորված ներդրումների ծավալը կազմում է 105մլն ՀՀ դրամ:

  Այս ներդրումները շարունակական բնույթ են կրում, Ընկերությունը պլանավորում է դրանք ֆինանսավորել ինչպես սեփական միջոցների, այնպես էլ փոխառու և բաժնետիրական կապիտալի հաշվին:

- **Տվյալների կենտրոնների և տեխնիկական միջավայրի արդիականացմանը (ավելի քան 180 մլն ՀՀ դրամ)**

  2021-2022թթ.-ի ընթացքում Ազատության 24/1 հասցեում վերագործարկվել է նոր տվյալների կենտրոնը որը ծառայում է ինչպես կազմակերպության ներքին կարիքների, այնպես էլ collocation ծառայությունների մատուցման համար:

  FTTH ցանցի կառուցման նախագծի շրջանակներում, հանրապետության մարզերի 7 (Ալավերդի, Կապան, Սիսիան, Մեծամոր, Արմավիր, Վարդենիս, Հրազդան) և Երևանի 6 ԱՀԿ-ների առանձնացված տարածքներում տեղադրվել, մոնտաժվել և հանձնվել են շահագործման օպտիկական բաշխիչ պահարաններ և FTTH ցանցի սերվերային սարքավորումներ:

  Էներգաարդյունավետ լուծումների ներդրման նախագծի շրջանակներում, հանրապետության մարզերի 24 ԱՀԿ-ների տանիքներում տեղադրվել են արևային կայաններ, յուրաքանչյուրը՝ 30 ԿՎտ միջին հզորությամբ:

  Ընկերության բոլոր տվյալների կենտրոններում, ԱՀԿ-ներում, բջջային կայաններում, վաճառքի և սպասարկման գրասենյակներում, աշխատանքային տարածքներում վերանորոգվել են հովացման համակարգերը և տեղադրվել են նորերը:

  2023թ.-ի ընթացքում այս ուղղությամբ պլանավորված ներդրումների ծավալը կազմում է 396մլն ՀՀ դրամ:

- **IP/MPLS ցանցի արդիականացմանը (ավելի քան 144 մլն ՀՀ դրամ)**

2020-2022թ.-ի ընթացքում IP/MPLS ցանցի 15 հանգույցներում 100Մբիթ/վրկ թողունակությամբ սարքավորումները փոխարինվել են 1/10Գբիթ/վրկ թողունակությամբ սարքավորումներով:

35 բջջային կայաններում տեղադրվել են հոսանքի ուղղորդիչներ, ինչպես նաև ցանցի թողունակության մեծացման նպատակով տեղակայվել են նոր մոդուլներ: Ցանցի արդիականացման արդյունքում, բջջային հենացանցի միջոցով միացվել են մեծ քանակությամբ կորպորատիվ բաժանորդային ծառայություններ:

2023թ.-ի ընթացքում այս ուղղությամբ պլանավորված ներդրումների ծավալը կազմում է 140 մլն ՀՀ դրամ:

- **IP հիմնական և սահմանային ցանցի զարգացմանը(ավելի քան 90 մլն ՀՀ դրամ)**

2021-2022թթ-ի ընթացքում Ընկերությունը Երևանում գործարկել է նոր, գերհզոր սահմանային երթուղիչ (Juniper MX 2020), ինչպես նաև գործարկվել են հետևյալ ներկայության կետերը (PoP – Point of Presence) արտասահմանյան տվյալների կենտրոններում.

- ✓ Սոֆիա
- ✓ Ֆրանկֆուրտ
- ✓ Մոսկվա

Նույն ժամանակաշրջանում Ընկերության ցանցում գործարկվել են հետևյալ կապուղիները.

- ✓ Ֆրանկֆուրտ-Սոֆիա, թողունակությունը՝ 100 Գբիթ/վ
- ✓ Երևան-Սոֆիա, ընդհանուր թողունակությունը՝ 300 Գբիթ/վ

Արտասահմանյան ներկայության կետերում նոր տրաֆիկի փոխանակման կապուղիներով Ընկերությունը համակցվել է հետևյալ ցանցերի հետ՝

- ✓ DE-CIX Ֆրանկֆուրտ՝ 30 Գբիթ/վ թողունակությամբ
- ✓ DATA-IX Մոսկվա՝ 30 Գբիթ/վ թողունակությամբ
- ✓ MSK-IX Մոսկվա՝ 30 Գբիթ/վ թողունակությամբ
- ✓ PITER-IX Մոսկվա՝ 20 Գբիթ/վ թողունակությամբ
- ✓ BALKAN-IX Սոֆիա՝ 20 Գբիթ/վ թողունակությամբ
- ✓ BIX Սոֆիա՝ 20 Գբիթ/վ թողունակությամբ
- ✓ համակցում MICROSOFT ընկերության հետ 20 Գբիթ/վ թողունակությամբ
- ✓ համակցում GCORE ընկերության հետ 10 Գբիթ/վ թողունակությամբ

Ինչպես նաև ավելացվել են ստորև ընկերությունների տվյալների տրամադրման շտեմարանների թողունակությունները՝

- ✓ META (Facebook) ընկերության տվյալների տրամադրման շտեմարանների թողունակության ավելացում 400 Գբիթ/վ-ով
- ✓ GGC (Google) ընկերության տվյալների տրամադրման շտեմարանների թողունակության ավելացում 93 Գբիթ/վ-ով
- ✓ Cloudflare ընկերության տվյալների տրամադրման շտեմարանների թողունակության ավելացում 200 Գբիթ/վ-ով
- ✓ Netflix ընկերության տվյալների տրամադրման շտեմարանների թողունակության ավելացում 30 Գբիթ/վ-ով

2023թ.-ի ընթացքում այս ուղղությամբ պլանավորված ներդրումների ծավալը կազմում է 111մլն ՀՀ դրամ

- **Վարչական և ներդրումային գույքի զարգացմանը (ավելի քան 3.4մլրդ ՀՀ դրամ)**

2020-2022 թվականների ընթացքում իրականացվել են մի շարք կարևոր նախաձեռնություններ, որոնց թվում են ընկերության վերաբրենդավորման շրջանակներում սպասարկման սրահների, տեխնիկական շենքերի, գրասենյակային տարածքների նոր կոնցեպտով վերանորոգման և վերազինման աշխատանքները՝ դարձնելով աշխատավայրերը աշխատակիցների համար անվտանգ, առողջ ու հարմարավետ, ապահովելով հաճախորդների ավելի հաճելի ու բարձրորակ փորձառություն սպասարկման սրահներում:

Ընկերությունը նաև համալրել է իր ավտոպարկը: Նոր մեքենաների 70%-ը կազմել են անձայն շարժիչով ու զրոյական արտանետումներով էլեկտրոմոբիլները՝ նպաստելով շրջակա միջավայրի պահպանմանն ու ընկերության ընթացիկ ծախսերի կրճատմանը:

2023թ.-ի ընթացքում այս ուղղությամբ պլանավորված ներդրումների ծավալը կազմում է 1.4մլրդ ՀՀ դրամ:

3.3.5.1 *Ներդրումային ռազմավարություն*

Ընկերության ռազմավարության շրջանակներում (տե՛ս Ազդագրի 3.3.1.1 կետը) պլանավորվող ներդրումների պլանը միջնաժամկետ հեռանկարում ներկայացված է ստորև աղյուսակով.

հազար ՀՀ դրամ	2023	2024	2025
Ամրակցված ցանցի արդիականացում և ընդլայնում	2,626,031	1,539,096	1,672,323
Շարժական ցանցի արդիականացում և ընդլայնում	2,706,000	1,536,409	2,042,153
Բաժանորդային սարքավորումների ձեռքբերում և հավելվածներ	857,572	1,055,424	1,189,399
Տարանցիկ և ներհանրապետական հաղորդման ցանցի ընդլայնում	817,537	781,200	1,170,000
IP մուլտիմեդիայի զարգացում	762,133	603,400	646,500
Տվյալների կենտրոնների և տեխնիկական միջավայրի զարգացում	396,000	336,000	292,500
IP/MPLS ցանցի զարգացում	140,000	147,000	157,500
IP հիմնական և սահմանային ցանցի զարգացում	111,040	128,251	137,412

IPTV & OTT հեռուստատեսային ծառայությունների զարգացում	105,200	110,460	118,350
SS արդիականացում և զարգացում	1,604,810	845,051	905,411
Վարչական և ներդրումային գույքի զարգացում	1,375,905	37,800	72,000
Այլ	40,167	21,000	22,500
Ընդհանուր	**11,542,395**	**7,141,091**	**8,426,048**

Թողարկողը պլանավորում է ներդրումները իրականացնել ներկայացված աղյուսակում արտահայտված հոդվածների ու մեծությունների համապատասխան՝ չբացառելով, որ ապագայում կարող են լինել որոշակի շեղումներ: Ստորև ներկայացնում ենք ներդրումների նկարագիրը ըստ ուղղությունների.

- **ամրակցված ցանցի արդիականացում և ընդլայնում**
  Առաջիկա երեք տարիների ընթացքում նախատեսվում է ապահովել նորագույն FTTH տեխնոլոգիայի հասանելիությունը. ևս 200,000 տնտեսություններ ամբողջ Հայաստանի տարածքում կապահովվեն նորագույն FTTH ցանցի հասանելիությամբ: Իրականացվելու են աշխատանքներ ցանցի հիմնական կապուղիների ռեզերվացման ուղղությամբ, ինչի արդյունքում կբարձրանա կապուղիների հուսալիությունը: Բջջային ցանցի բազային կայանների ռադիոռելեային կապուղիները փոխարինվելու են օպտիկական կապուղիներով, ինչի արդյունքում կավելանա կայանների թողունակությունը և կբարձրանա բջջային ինտերնետի որակը:

- **շարժական ցանցի արդիականացում և ընդլայնում**
  Բջջային ցանցի ծածկույթի ընդլայնման, ինչպես նաև գործող ցանցի որակի բարելավման նպատակով, նոր տեղանքներում պլանավորված է կառուցել նոր բազային կայաններ: Նախատեսվում է ներդնել 4G (LTE) տեխնոլոգիան բոլոր այն բազային կայաններում, որտեղ այն բացակայում է:
  Պլանավորվում է ձեռք բերել նոր չափող սարքավորումներ և ծրագրային լուծումներ, որոնք հնարավորություն կտան իրականացնել ռադիո իրավիճակի չափումներ, հայտնաբերել խանգարումները, կատարել ձայնային և բջջային ինտերնետի ծառայությունների որակի ստուգումներ, որոնց արդյունքում ավելի արագ կհայտնաբերվեն առկա խնդիրները և դրանք կստանան համապատասխան լուծումներ:

- **բաժանորդային սարքավորումների ձեռքբերում և հավելվածներ**
  Ամրակցված և շարժական կապի ընդլայնմանը զուգահեռ Ընկերությունը իրականացնում է բաժանորդային սարքավորումների շարունակական ձեռքբերումներ:

- **Տարանցիկ և ներհանրապետական տրանսմիսիոն ցանցի ընդլայնում**
  Տրանսմիսիոն ցանցի հանգույցներում փոխարինվելու են հին սարքավորումները, ավելացվելու են նոր հանգույցներ: Արդյունքում կստեղծվեն տրաֆիկի երթուղավորման հավելյալ ուղղություններ, կբարձրանա առկա ծառայությունների հուսալիությունը, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի ավելացնել հանգույցների և կապուղիների թողունակությունը ՀՀ ամբողջ տարածքում՝ ցանցի նկատմամբ աճող պահանջարկը բավարարելու համար:

- **IP մուլտիմեդիա համակարգի զարգացում**

Իրականացվել է STP, MNP համակարգերի ծրագրային և ապարատային թարմացում, ներդրվել են SS7 FW, DRA և EXFO Astellia համակարգերը: Նախատեսվում է իրականացնել EPC պլատֆորմի փոխարինում նորով /անհրաժեշտ գումարը տեղաբաշխված է 3 տարիների մեջ/: Սա կմեծացնի ցանցի թողունակությունը, կբարձրացնի մատուցվող ծառայությունների որակն ու հուսալիությունը, հնարավորություն կտա բավարարել բջջային ինտերնետի տրաֆիկի նկատմամբ օրեցօր աճող պահանջարկը: Բյուջեն ներառում է նաև բոլոր համակարգերի անխափան աշխատանքների ապահովմանն ուղղված ընթացիկ վճարումները:

- **Վարչական և ներդրումային գույքի զարգացում**
  Ընկերության անշարժ գույքերի բարելավմանն ուղղված վերանորոգման աշխատանքների, ինժեներական համակարգերի վերազինման՝ մասնավորապես հակահրդեհային անվտանգության և օդափոխության համակարգերի ուղղությամբ ներդրումների իրականացում:
  Հաշվի առնելով ծախսերի օպտիմալացման տեսանկյունից նախկին տարիների դրական արդյունքները ՝ Ընկերությունը կշարունակի համալրել ավտոպարկը էլեկտրոմոբիլներով, ինչպես նաև կներդրվի բնապահպանական կառավարման համակարգը, ընկերությունը պլանավորում է ստանալ ISO 14001 ստանդարտին համապատասխանության հավաստագիր

- **SS արդիականացում և զարգացում**
  2023թ.-ից սկսվեց բիլինգային համակարգի արդիականացման նախագիծը: Նոր համակարգի կարևոր հնարավորություններից է համակցված (կոնվերգենտ) ծառայության ֆունկցիոնալությունը, որը ապահովում է մեկ հարթակում բազմաթիվ ծառայությունների օգտագործումը: Կոնվերգենտ ծառայությունը ընձեռում է հետևյալ հնարավորությունները.

  - թույլ է տալիս տարբեր ծառայությունների ինտեգրումը մեկ հարթակում, ինչը հեշտացնում է ծառայությունների օգտագործման համար պարտքերի հաշվարկը և բաժանորդների համար հաշիվների դուրս գրումը: Սա պարզեցնում է վճարումների հաշվարկը և հնարավորություն է տալիս բարձրացնել բաժանորդների սպասարկման որակը,
  - հնարավորություն է տալիս բաժանորդներին առաջարկել միասնական համակարգ, որտեղ բաժանորդները տեսնում են մեկ հաշիվ իրենց բոլոր ծառայությունների համար և մեկ կետից կառավարում են իրենց բոլոր ծառայությունները,
  - թույլ է տալիս կարճ ժամկետներում մշակել նոր ճկուն առաջարկներ, ինչպիսիք են օրինակ փաթեթային ծառայությունները,
  - ընդհանուր առմամբ, նոր բիլինգային համակարգում այդ ֆունկցիոնալությունը հնարավորություն է տալիս ավելի ճկուն ու հետաքրքիր ծառայություններ առաջարկել, պարզեցնել վճարումների կառավարումը և բաժանորդների սպասարկումը, նվազեցնել ծախսերը և ավելացնել եկամուտը:

  Նախագծի ավարտը նախատեսված է 2024 թ.-ին:

2023-2024թթ.-ի ընթացքում այս ուղղությամբ արված ներդրումների ծավալը կազմելու է ավելի քան 1.6 մլրդ ՀՀ դրամ:
Ընկերությունը նախատեսում է սերվերային ռեսուրսների տեղաբաշխման աշխարհագրության ընդլայնում դեպի ՀՀ մարզեր: Ծառայությունների որակի ապահովման նպատակով նախատեսվում է տեսականու և սարքավորումների թարմացում և ՀՀ մարզերում նոր սերվերային ռեսուրսների տեղակայում:

- **Տվյալների կենտրոնների և տեխնիկական միջավայրի զարգացում**
  Տվյալների կենտրոններում ավելացվելու են նոր սերվերային պահարաններ, արդիականացնելու և հզորացվելու է հոսանքի անխափան սնուցման համակարգը՝ նոր սերվերային ունակությունները սպասարկելու համար:
  Ավելացվելու և վերազինվելու են Ընկերությունում առկա հովացման համակարգերը: Վերակառուցվելու են էլեկտրասնուցման մուտքային ուղղությունները, դրանց հուսալիության բարձրացման նպատակով, արդիականացվելու է հակահրդեհային համակարգը:
  Մարզերի ԱՀԿ-ներում և բջջային բազային կայաններում փոխարինվելու են հին, սպառված մարտկոցները, վերազինվելու են հաստատուն լարման սնուցման համակարգերը: Փոխարինվելու են ռեզերվային հին գեներատորները:

- **IP/MPLS տրանսպորտային ցանցի զարգացում**
  Իրականացվելու է ցանցի շարունակական վերազինում, նոր, առավել մեծ թողունակությամբ սարքավորումներով և ծրագրային լուծումներով՝ նոր ծառայությունների պահանջների ապահովման նպատակով: Սա հնարավորություն կտա բաժանորդային բազայի աճմանը զուգընթաց ապահովել ծառայությունների բարձր որակը:

- **IP հիմնական և սահմանային ցանցի զարգացում**
  Նախատեսվում է Երևանում առկա հիմնական սահմանային երթուղիչի համար պահուստային երթուղիչի գործարկում, որը կբարձրացնի ծառայությունների հուսալիությունը: Պլանավորվում է նաև յուրաքանչյուր տարի շարունակաբար ավելացնել Ընկերության ներկայության կետերի (PoP) քանակը աշխարհի տարբեր հատվածներում, մասնավորապես՝ 2023 թվականին նախատեսվում է Ամստերդամ, Ֆրանկֆուրտ, Նյու Յորք և Լոս Անջելես քաղաքներում ունենալ նոր ներկայության կետեր, զուգահեռաբար ավելացնելով գործող կետերի թողունակությունը:
  Ընկերության ներքին ԻՏ ենթակառուցվածքների աշխատանքի անընդհատությունն ապահովելու ու դրանց անվտանգությունը բարձրացնելու նպատակով պլանավորվում է յուրաքանչյուր տարի ձեռք բերել նոր, ավելի արդիական սարքավորումներ և ծրագրային լուծումներ:

- **IPTV & OTT հեռուստատեսային ծառայությունների զարգացում**
  Նախատեսվում է հեռուստատեսային պլատֆորմի ընդլայնում՝ նոր և որակյալ ալիքների ավելացում, տեսադարանի ընդլայնում: Պլանավորվում է ծառայությունների մատուցման աշխարհագրության ընդլայնում երկրից դուրս, մշտապես ապահովելով մատուցվող ծառայությունների բարձր որակը:

Ընկերությունը պլանավորում է վերոնշյալ ներդրումները ֆինանսավորել ինչպես սեփական միջոցների, այնպես էլ փոխառու և բաժնետիրական (տեղաբաշխվող Բաժնետոմսերի) կապիտալի հաշվին:

3.4 Բիզնեսի նկարագիրը

3.4.1 Հիմնական գործունեությունը

Թողարկողը գործունեություն է ծավալում ՀՀ հեռահաղորդակցության շուկայի շարժական և ամրակցված կապի ոլորտներում՝ առաջարկելով ձայնային, ինտերնետային և հեռուստատեսության ծառայություններ, ինչպես նաև թվային ծառայություններ:

Ընկերությունն ՀՀ ողջ տարածքում ունի թվով 78 վաճառքի և սպասարկման կենտրոններ, որոնցից 28-ը՝ Երևան քաղաքում:

3.4.1.1 *Շարժական կապի ծառայություններ*

Ընկերությունը շարժական կապի շուկայում մատուցում է ձայնային և ինտերնետային ծառայություններ: Շարժական կապի ծառայությունների հետ մեկտեղ Ընկերությունը բաժանորդներին մատուցում է թվային հեռուստատեսության ծառայություններ՝ բջջային հավելվածի միջոցով:

Ցանցեր

Ընկերությունը շարժական կապի ծառայություններ սկսել է մատուցել 1996թ.-ից՝ առաջին անգամ ՀՀ-ում գործարկելով 2G բջջային ցանցը: 2008թ.-ին Ընկերությունը առաջին անգամ ՀՀ-ում գործարկեց 3G ցանցը: 2016թ.-ին Ընկերությունը գործարկեց 4G բջջային ցանցը: 4G+ տեխնոլոգիան Ընկերության կողմից գործարկվեց 2020թ.-ին:

Ընկերության շարժական կապի ծածկույթով ապահովվածությունը 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ըստ տեխնոլոգիաների, ներկայացված է ստորև աղյուսակով[17].

	2G (GSM)	3G (UMTS)	4G (LTE)
ՀՀ բնակչություն	96.43%	99.10%	74.06%
ՀՀ բնակավայրեր	90.30%	66.70%	21.97%
ՀՀ աշխարհագրական տարածք	51.95%	69.69%	15.35%

Ընկերության կողմից բջջային ցանցերի հասանելիությունը ապահովելու նպատակով օգտագործվող ռադիոհաճախականությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակով:

Ռադիոհաճախականության տիրույթ	Տեխնոլոգիա	Շերտ
700 ՄՀց	4G/5G	40 ՄՀց

[17] **Աղբյուր՝** Ընկերության գնահատական

900 ՄՀց	2G/3G	25 ՄՀց
2,100 ՄՀց	3G	30 ՄՀց
1,800 ՄՀց	4G	60 ՄՀց

Ընկերությունը յուրաքանչյուր 1 ՄՀց ռադիոհաճախականության շերտի օգտագործման համար տարեկան վճարում է 16.8մլն ՀՀ դրամ (ընդհանուր առմամբ՝ 2,604 մլն ՀՀ դրամ):

Ընկերության ռադիոհասանելիության ցանցը (Radio access network - RAN) 2023թ. փետրվարի դրությամբ բաղկացած է 883 բազային կայաններից, որոնցից 755-ը աշխատում են GSM և UMTS տեխնոլոգիաներով՝ միաժամանակ: Հարկ է նշել, որ Ընկերությունը գրեթե ավարտել է բազային կայանների թարմացման նախագիծը, որի արդյունքում 900 ՄՀց ռադիոհաճախականության շերտի մի մասը 2G GSM-ի փոխարեն կիրառվում է 3G UMTS տեխնոլոգիայի համար, ինչը ապահովում է ձայնային զանգերի ավելի բարձր որակ և մեծացնում 3G ցանցի ներշենքային թափանցելիության մակարդակը (inbuilding penetration):

Ինտերնետ (տվյալների փոխանցման) տրաֆիկի ավելի քան 2/3-ը սպասակրվում է 4G, մնացածը՝ 3G ցանցի միջոցով: Ընկերությունը իրականացնում է գոյություն ունեցող բազային կայանների շարունակական թարմացումներ, ինչպես նաև կառուցում նորերը: Արդյունքում թվով 573 կայաններ ապահովված են LTE տեխնոլոգիայով:

Ընկերության բջջային հիմնական ցանցի (core network) փաթեթային (PS - packet switched) և ձայնային (CS - circuit switched) սեգմենտները աշխարհագրորեն ռեզերվացված են (geo-redundancy) և տեղակայված երկու առանձնացված տվյալների կենտրոններում:

Ընկերության բջջային հեռահաղորդակցության ցանցը հիմնված է ոլորտի առաջատար արտադրողների կողմից մատակարարվող սարքավորումների և ծրագրային լուծումների վրա: Ընկերության ռադիոհասանելիության ցանցի բազային կայանների (2G/3G/4G ցանցի բոլոր բաղադրիչների) մատակարարն է հանդիսանում Huawei ընկերությունը: Բջջային հիմնական ցանցի (core network) էական բաղադրիչների մատակարարներն են Ericsson, ZTE և Nokia հեղինակավոր ընկերությունները: Ընկերությունը նաև բանակցում է տարբեր մատակարարների հետ PS ցանցի բաղադրիչների փոխարինման և սպասարկման շուրջ, ինչը պլանավորվում է իրականացնել սկսած 2023թ.-ի սեպտեմբերից:

Հարկ է նշել, որ 4G ծածկույթի ընդլայնման և, հատկապես, ներշենքային թափանցելիության մակարդակի բարձրացման նպատակով Ընկերությունը արդեն իսկ ձեռք է բերել ցածր ռադիոհաճախականության (700 ՄՀց) տիրույթում հաճախականային շերտերի օգտագործման թույլտվություն: Մրցույթների արդյունքներով ձեռք բերված թույլտվությունների դիմաց Ընկերությունը պարտավորվել է 2 տարվա ընթացքում մեծացնել լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթը, ինչպես նաև 2 և 3 տարվա ընթացքում (համապատասխանաբար Երևան քաղաքում և Գյումրի/Վանաձոր քաղաքներում) գործարկել շարժական լայնաշերտ կապի 5-րդ սերնդի (5G) ցանց:

Շարժական կապի ծառայությունների առաջարկներ[18]

Ընկերությունը շարժական կապի շուկայում անհատ բաժանորդներին առաջարկում է բջջային կապի կանխավճարային և հետվճարային «Be Free Unlimit», «Be Free» և «Սմարթ» սակագնային փաթեթներ, որոնք իրենց մեջ ներառում են բջջային ինտերնետի ծավալ, րոպեներ և SMS հաղորդագրություններ, ինչպես նաև հնարավորություն՝ օգտվելու տարբեր հավելվածներից առանց հավելյալ վճարի և բջջային ինտերնետի ծավալի սպառման: Մարզային բաժանորդներին հասանելի են հատուկ ներառումներով «Be Free մարզային» և «Սմարթ մարզային» կանխավճարային սակագնային փաթեթները:

Բիզնես բաժանորդներին Ընկերությունը առաջարկում է բջջային կապի կանխավճարային «Բիզնես», «Սմարթ», «Be Free», «Be Free Մարզային», ինչպես նաև հետվճարային «PRO», «Բիզնես», «Սմարթ», «Be Free» սակագնային փաթեթներ:

Փաթեթները ընձեռում են ձայնային (ներցանցային և դեպի այլ ցանցեր), շարժական ինտեներտի, SMS-ների ծառայություններից և տարբեր հավելվածներից առանց հավելյալ վճարի օգտվելու հնարավորություններ:

Անհատ և բիզնես բաժանորդներին շարժական կապի վերոնշյալ սակագնային փաթեթները հնարավորություն են տալիս նաև բջջային հավելվածի միջոցով անվճար օգտվել TeamTV բջջային հեռուստատեսությունից՝ առանց դրա համար օգտագործված ինտերնետի ծավալների հաշվառման: Հեռուստաալիքների (տեսալսողական ծրագրերի) վերահաղորդումն իրականացվում է Ընկերության և «ԹԻՄ» ՓԲԸ կողմից համատեղ: Տեսադարանի բովանդակությունն առավելապես ապահովվում է «ԹԻՄ» ՓԲԸ-ի կողմից:

Բիզնես բաժանորդներին առաջարկվող «Սմարթ Բիզնես» փաթեթը թույլ է տալիս կարգավորել փաթեթում առկա ծառայությունների քանակը/ծավալը ըստ բիզնեսի պահանջների: «Բիզնես 365» փաթեթները հնարավորություններ են տալիս կազմակերպություններին արդյունավետ կազմակերպել իրենց աշխատակիցների հեռավար աշխատանքը՝ ստանալով բոլոր անհրաժեշտ ծառայությունները մեկ փաթեթում՝ ամրակցված և շարժական ինտերնետ, բջջային կապ, Office 365 Business ծրագրային ապահովում:

Ընկերությունը շարժական կապի ծառայությունների շուկայում բիզնես բաժանորդներին առաջարկում է նաև M2M ծառայություններ:

Ընկերությունը անհատ և բիզնես բաժանորդներին առաջարկում է նաև կանխավճարային և հետվճարային գերարագ բջջային ինտերնետի փաթեթներ սմարթֆոնների, համակարգիչների, պլանշետների, WiFi/USB մոդեմների համար, ինչպես նաև ինտերնետ փաթեթներ ռոումինգում:

[18] Բջջային կապի, ինտերնետի փաթեթների մասին ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է Թողարկողի կայքում՝ www.telecomarmenia.am

Ընկերության բջջային կապի ծառայությունների սակագների վրա որևէ կարգավորումներ պետական կառույցների կողմից չեն կիրառվում, բացի Թիվ 60 լիցենզիայի պայմանների, ըստ որոնց, սակագները պետք է լինեն արդարացի և ողջամիտ, չպետք է լինեն հակամրցակցային:

Շարժական կապի բաժանորդներ

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության շարժական կապի բաժանորդների քանակը կազմել է 958,293 (շարժական կապի շուկայի 25%-ը), որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ աճել է 4.7%-ով: Ստորև աղյուսակով ներկայացված է շարժական կապի բաժանորդների քանակի դինամիկան ըստ տարիների[19].

	2019	2020	2021	2022
շարժական կապի բաժանորդներ, որից	**947,790**	**904,689**	**915,534**	**958,293**
մասնաբաժինը բնակչության թվաքանակից	*32%*	*31%*	*31%*	*32%*
կանխավճարային բաժանորդներ	828,946	784,133	777,573	787,261
հետվճարային բաժանորդներ	118,844	120,556	137,961	171,032

Ընկերության 4G ցանցի բաժանորդների քանակը ցուցաբերում է կայուն աճ, ավելի համեստ տեմպով աճ է ցուցաբերում 3G ցանցի բաժանորդների քանակը: 2G ցանցի բաժանորդների քանակը, պայմանավորված ժամանակակից տենդենցներով, գնալով նվազում է: Ստորև աղյուսակով ներկայացված է տարբեր տարիներին տարեվերջի դրությամբ Ընկերության շարժական կապի բաժանորդների քանակը ըստ տեխնոլոգիաների.

	2019	2020	2021	2022
2G և 3G ցանցի բաժանորդներ	732,691	668,439	579,806	616,203
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	77.3%	73.9%	63.5%	64.3%
4G ցանցի բաժանորդներ	215,099	236,250	334,430	342,090
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	22.7%	26.1%	36.5%	35.7%

Շարժական ինտերնետից (տվյալների հաղորդման ծառայություններից) օգտվող բաժանորդների քանակը վերջին տարիներին կայուն աճել է՝ հասնելով ընդհանուր բաժանորդների թվի 70.1%-ին: Ստորև աղյուսակով ներկայացված է շարժական ինտերնետի բաժանորդների քանակի դինամիկան ըստ տարիների[20].

	2019	2020	2021	2022
շարժական ինտերնետ բաժանորդներ, որից	**554,366**	**557,966**	**618,206**	**671,960**
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*58.5%*	*61.7%*	*67.6%*	*70.1%*
բացառությամբ հեռախոսասարքի միջոցով օգտվողների	54,435	55,531	59,284	79,314
հեռախոսասարքի միջոցով օգտվողների	499,931	502,435	558,922	592,646

Շարժական կապի տրաֆիկ

Շարժական կապի ելքային զանգերի և ինտերնետի (տվյալների փոխանակման) ընդհանուր տրաֆիկը ըստ տարիների, ներկայացված է ստորև աղյուսակով.

	2019	2020	2021	2022

[19] **Աղբյուր՝** Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (այսուհետ՝ ՀԾԿՀ)) ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ
[20] **Աղբյուր՝** *նույն տեղում*

ելքային զանգերի ընդհանուր տրաֆիկ, րոպե	**1,582,681,298**	**1,600,774,363**	**1,611,359,950**	**1,564,210,091**
տարեկան աճի տեմպ	*-1.9%*	*1.1%*	*0.7%*	*-2.9%*
ինտերնետի ընդհանուր տրաֆիկ, մեգաբայթ	**12,906,016**	**20,150,965**	**30,277,473**	**46,939,409**
տարեկան աճի տեմպ	*28%*	*56%*	*50%*	*55%*

Շարժական ինտերնետի (տվյալների փոխանակման) տրաֆիկը գրանցում է տարեկան կայուն աճ, ցուցանիշը կշարունակի աճել Ընկերության կողմից լայնաշերտ ինտերնետի ծածկույթի ընդլայնման հետ մեկտեղ, ինչպես նաև՝ պայմանավորված շուկայի ժամանակակից տենդենցներով:

3.4.1.2 *Ամրակցված կապի ծառայություններ*

Ընկերությունը ամրակցված կապի շուկայում մատուցում է ձայնային և ինտերնետային ծառայություններ: Ամրակցված Ինտերնետ ծառայությունների հետ մեկտեղ Ընկերությունը բաժանորդներին մատուցում է թվային հեռուստատեսության ծառայություններ IPTV և OTT տեխնոլոգիաներով[21]:

2015թ.-ին Ընկերությունն առաջին անգամ շուկայում առաջարկեց շարժական և ամրակցված կապի ծառայությունների համակցված (կոնվերգենտ) փաթեթներ, որոնց համար վճարումն իրականացվում էր մեկ հաշվով:

Ցանցեր

Ընկերությունը հիմնադրման օրվանից շահագործում է ՀՀ ազգային հանրային հեռախոսային ցանցը (PSTN), որի շնորհիվ Ընկերությունը 2007 թվականից սկսեց պղնձալարային ցանցով ապահովված xDSL տեխնոլոգիայի միջոցով ինտերնետ ծառայությունների մատուցումը, և գործունեության սկզբնական շրջանում դարձավ լայնաշերտ ինտերնետ շուկայի առաջատարը: Հետագայում, ADSL տեխնոլոգիային փոխարինելու եկան առավել բարձր ինտերնետի արագություն ապահովող օպտիկամանրաթելային ցանցերը, ինչի արդյունքում Ընկերության մասնաբաժինը շուկայում նվազեց:

2012թ.-ին Ընկերությունը ամրակցված կապի շուկայում գործարկեց FTTB (Fiber to the Building - Օպտիկա մինչև Շինություն) տեխնոլոգիայով լայնաշերտ ինտերնետի ծառայությունները: Ընկերությունը FTTB ցանցի միջոցով մատուցում է նաև OTT TV ծառայություն:

2018թ.-ին Ընկերությունը շուկայում առաջարկեց ամրակցված ինտերնետ ծառայություններ VDSL տեխնոլոգիայի հիման վրա: VDSL ցանցը կարող է ապահովել տվյալների փոխանցման մինչև 100Մբիթ/վայրկյան արագություն, ինչպես նաև IPTV տեխնոլոգիայով թվային հեռուստատեսության տրաֆիկի հոսք: VDSL ցանցը ներդնելիս Ընկերությունը կառուցեց օպտիկան մինչև համայնք (FTTC – Fiber to the Community) ցանց՝ որը մասամբ փոխարինեց պղնձի հասանելության ցանցը:

[21] Ցանցային օպերատորների ենթակառուցվածքների կամ համացանցի միջոցով տեսալսողական տեղեկատվության տարածման ծառայություններ

2021թ.-ից Ընկերությունը ամրակցված կապի շուկայում նախաձեռնել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբիթ/վրկ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) FTTH (Fiber to the Home - Օպտիկա մինչև բնակարան) ցանցի կառուցումը: Առաջարկվող տեխնոլոգիան բաժանորդներին ապահովում է մինչև 1 Գբիթ/վրկ ներբեռնման արագություն, օգտատերերի 25%-ին՝ 10 Գբիթ/վրկ սիմետրիկ արագությամբ տվյալների փոխանցման և ինտերնետի ծառայություններ առաջարկելու հնարավորություն:

Ընկերությունը, հանդիսանալով ՀՀ ազգային հանրային հեռախոսային ցանցի (PSTN) ժառանգորդ, տիրապետում է ստորգետնյա խողովակաշարերի և վերգետնյա հենասյուների ցանցային ենթակառուցվածքին, ինչը հիմք է ապահովում բարձր արագությամբ 25XGS-PON տեխնոլոգիայի հիման վրա FTTH ցանցի կառուցման համար: Ստորգետնյա խողովակաշարերի ենթակառուցվածքը բաղկացած է 2,722 կմ խողովակներից (1,982 կմ՝ Երևանում և 740 կմ՝ մարզերում) և 25,393 դիտահորերից (12,138 դիտահոր Երևանում և 13,255-ը՝ մարզերում): Ստորգետնյա խողովակների բացակայության տարածքներում, ցանցն ապահովվում է թվով 60,342 վերգետնյա հենասյուներով (11,386՝ Երևանում և 48,956՝ մարզերում): FTTH ցանցը բաժանորդային եռաշերտ Wi-Fi սարքերի (CPE - Customer Premise Equipment) և ժամանակակից IPTV ծառայության հետ համատեղ մրցակցային շուկայում հանդիսանում է ազդեցիկ առաջարկ:

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ամրակցված ցանցի հասանելիությունը ՀՀ բնակավայրերին, ըստ տեխնոլոգիաների, ներկայացված է ստորև աղյուսակով.

	FTTH	FTTB	VDSL/ADSL	PSTN
ք. Երևան	19.25%	31.32%	58.39%	99.14%
Արագածոտնի մարզ	-	-	21.53%	28.15%
Արարատի մարզ	-	-	18.49%	30.27%
Արմավիրի մարզ	14.17%	-	17.5%	38.29%
Գեղարքունիքի մարզ	8.61%	-	15.28%	32.29%
Լոռու մարզ	7.47%	-	43.54%	42.21%
Կոտայքի մարզ	18.02%	-	12.55%	22.67%
Շիրակի մարզ	-	5.38%	25.23%	64.26%
Սյունիքի մարզ	38.63%	-	38.24%	65.43%
Վայոց ձորի մարզ	12.91%	-	36.57%	50.78%
Տավուշի մարզ	2.08%	-	26.34%	34.63%

Ընկերությունն ունի 3,318 կմ ընդհանուր երկարությամբ հենքային (backbone fiber optic network), և 3,158 կմ գումարային երկարությամբ տեղային հասանելիության օպտիկամանրաթելային ցանց: Օպտիկամանրաթելային տրանսպորտային ցանցը կառուցված է Huawei և Nokia ընկերությունների DWDM սարքավորումների կիրառմամբ: Nokia ընկերության DWDM սարքավորումներով ցանցի կառուցումը մեկնարկել է 2020թ.-ին: Նոր DWDM ցանցը նպաստում է ամրակցված ինչպես նաև շարժական ցանցերում տվյալների փոխանակման ծավալի աճին: Ցանցի թողունակությունը ամեն տարի գրեթե կրկնապատկվում է և 2022 թվականի նոյեմբերի դրությամբ հասել է 3,6 Տբիթ/վ-ի (մեկնարկային թողունակությունը՝ 1 Տբիթ/վ):

Ստորև աղյուսակով ներկայացված է առաջնային օպտիկամանրաթելային ցանցի մասին տեղեկատվությունը.

	Երկարություն (կմ)
Ընդհանուր հենքային ցանց, որից	**3,318**
Հիմնական	2,550
Երևան քաղաքի	252
Վանաձոր քաղաքի	18
Գյումրի քաղաքի	19
Արմավիր քաղաքի	107
Գյուղերի	372
Ընդհանուր տեղային հասանելիության ցանց	**3,158**
Ընդհանուր առաջնային ցանց	**6,476**

DWDM ցանցը հնարավորություն է տալիս ապահովել Մերձավոր Արևելքի, Միջին Ասիայի երկրների կապը Վրաստանի տարածքով դեպի Եվրոպա: Ընկերության DWDM հենքային ցանցի և վրացական ցանցերի համակցության արդյունքում ստեղծված տվյալների փոխանցման երթուղին գրավիչ այլընտրանք է տարածաշրջանում առկա տվյալների փոխանցման այլ երթուղիներին: ՀՀ-ից Վրաստան, Սև ծով և ապա՝ Եվրոպա երթուղին ամենակարճերից մեկն է դեպի Եվրոպայի հիմնական տվյալների փոխանակման հանգույցները (Սոֆիա և Ֆրանկֆուրտ): Ընդամենը 2.5 տարում Ընկերությունը կարողացել է դառնալ տարածաշրջանի տարանցիկ կապուղիների շուկայի առանցքային և գլխավոր խաղացողներից մեկը (ավելի քան 3 Տբիթ/վ տարանցիկ կապուղիներ վաճառելով այլ երկրների գործընկերներին): Այս ցուցանիշով Ընկերությունը հանդիսանում է ՀՀ-ում միջազգային տարանցիկ կապուղիների խոշորագույն մատակարարը: Ագարակ քաղաքից (հայ-իրանական սահմանից) մինչև Սոֆիա տվյալների փոխանցման ժամանակը (latency time) կազմում է 32 միլիվայրկյան, իսկ մինչև Ֆրանկֆուրտ՝ 61 միլիվայրկյան: Հիմնական մրցակցող երթուղին թուրքականն է, որն օգտագործում է մայրցամաքային մալուխային ցանցը իրանաթուրքական սահմանից մինչև Եվրոպա: Թուրքական երթուղով տվյալների փոխանցման ժամանակը գրեթե հավասար է կովկասյանին, ինչով էլ պայմանավորված է շուկայի հիմնական մրցակցությունը:

Բացի Սև ծովով անցնող երթուղուց, Ընկերությունը նախատեսում է շուտով շահագործել այլընտրանքային ցամաքային կապուղի դեպի Եվրոպա՝ Վրաստան-Ռուսաստան-Եվրոպա երթուղով: Տվյալ կապուղու շահագործումն է՛լ ավելի կամրապնդի Ընկերության դիրքը որպես առանցքային մատակարար տարածաշրջանի տարանցիկ կապուղիների շուկայում և է՛լ ավելի գրավիչ կդարձնի Ընկերությանը որպես մատակարար՝ ծառայության մեծածախ գնորդների համար:

Ընկերությունը ներկայում Եվրոպայում տեղադրված սեփական սարքավորումներով ներկայություն ունի Ֆրանկֆուրտի, Սոֆիայի և Մոսկվայի, գլխավոր/խոշորագույն տվյալների կենտրոններում, ինչը նպաստում է արագ և որակյալ ծառայությունների տրամադրմանը: Գլխավոր/խոշորագույն տվյալների կենտրոններում ներկայության շնորհիվ Ընկերությունն ունի համակցումներ կարևորագույն փոխանակման ցանցերի (DEC-IX, DATA-IX, MSK-IX և այլն), ինչպես նաև տվյալների տրամադրման կարևորագույն շտեմարանների հետ (Facebook, Google,

Netflix, Cloudflare և այլն): Վերը նշվածը Ընկերությանը հնարավորություն է ընձեռնում մատուցելու ծառայությունների լայն տեսականի և Ընկերությանը դարձնում է առավել գրավիչ հաճախորդների/գործընկերների համար:

Համազգային IP/MPLS լայնածավալ ցանցը միացնում է գործող հեռախոսային ցանցի (PSTN) կենտրոնական կայանները (switch locations) և տվյալների կենտրոնները: IP/MPLS հենքային ցանցը հիմնված է Ericsson, Huawei և Cisco ընկերությունների սարքավորումների վրա: Ցանցը ծածկում է ամբողջ երկիրը՝ բոլոր տեղամասերը միացնելով օղակային տեղաբանությամբ (ring topology): Ընկերությունը նախատեսում է կապիտալ ներդրումների միջոցով բարձրացնել թողունակությունը՝ հյուսիսային տեղամասերում՝ 200 Գբիթ/վրկ (ներկայում՝ 100 Գբիթ/վրկ), իսկ հարավային տեղամասում՝ 40 Գբիթ/վրկ-ի (ներկայում՝ 10 Գբիթ/վրկ): Ընկերության IP/MPLS ցանցը նույնպես մասնակցում է միջազգային IP տարանցման ծառայությունների մատուցմանը[22]:

Ամրակցված կապի ծառայությունների առաջարկներ[23]

Ընկերությունը ամրակցված հեռահաղորդակցման ծառայությունների շուկայում անհատ բաժանորդներին առաջարկում է ինտերնետային, ձայնային, ինչպես նաև հեռուստատեսության ծառայություններ: Այս ծառայությունները հաճախորդներին առաջարկվում են «COSMO» և «COMBO» համակցված (կոնվերգենտ) շահավետ փաթեթների շրջանակներում, որոնք ներառում են նաև շարժական կապից օգտվելու հնարավորություն:

«COSMO»-ն հիմնված է օպտիկամանրաթելային հաջորդ սերնդի NGN (Next Generation Network) ցանցի վրա, որը կառուցվում է ամենանորարարական XGSPON տեխնոլոգիայով: Ցանցի արագությունը կազմում է 25 Գբիթ/վրկ, ի տարբերություն ՀՀ շուկայում առկա GPON ցանցերի (1 Գբիթ/վրկ): Ցանցի օպտիկամանրաթելային մասը կառուցված է առանձնացված կապուղիների տրամադրման սկզբունքով, այսինքն՝ ցանցի կառուցման տոպոլոգիան հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր բաժանորդի տվյալների կենտրոնից հասցնել առանձնացված մանրաթել՝ ծառայությունների առավելագույն որակի և արագության ապահովման համար: Փաթեթները հնարավորություն են տալիս ձեռք բերել 150Մբիթ/վրկ-ից մինչև 1 Գբիթ/վրկ արագությամբ ամրակցված ինտերնետային կապ և Wi-Fi ծածկույթի ընդլայնման համար նախատեսված մեկից երեք «Nokia Beacon 1.1» կամ «Nokia Beacon 2» սարքավորումներ, հեռուստատեսային ծառայություններ (TeamTV)՝ 150-190 ալիքների ներառմամբ, «Be Free» շարժական բջջային կապի փաթեթներ համապատասխան ներառումներով, ինչպես նաև մինչև 180 րոպե ամրակցված հեռախոսակապից օգտվելու հնարավորություն: Երևանում բնակվող բաժանորդների համար ծառայությունն առաջարկվում է չորս, իսկ մարզերում բնակվող բաժանորդների համար՝ երեք գնային տարբերակներով:

---

[22] ՀՀ տարածքում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման նպատակով «ԹԻՍԻՓԻ/ԱՅՓԻ» (TCP/IP) արձանագրությամբ տվյալների հոսքի տրամադրումը հատուցման դիմաց՝ ՀՀ տարածքի սահմանը հատող կապուղու կազմակերպման և արտասահմանյան «ԱՅՓԻ» հանգույցին այդ կապուղու միացման միջոցով: (**Աղբյուր՝** ՀԾԿՀ 2009թ.-ի հուլիսի 22-ի թիվ 391Ն որոշում, https://psrc.am/contents/document/2884)

[23] Բջջային կապի, ինտերնետի փաթեթների մասին ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է Թողարկողի կայքում՝ www.telecomarmenia.am

«COMBO»-ն իրենից ներկայացնում է ամրակցված, հեռուստատեսության և շարժական ծառայություններ համակցող (կոնվերգենտ) փաթեթներ, որոնք, կախված սակագնից, կարող են ներառել մինչև 100Մբիթ/վրկ թողունակությամբ ամրակցված ինտերնետ, TeamTV հեռուստատեսային ծառայություն (150 ալիք), ամրակցված հեռախոսակապի րոպեներ, շարժական հեռախոսակապի ծառայություններ (ինտերնետ, զանգեր) և այլն: «COMBO» փաթեթում առկա ամրակցված ինտերնետը մատուցվում է VDSL/FTTB տեխնոլոգիաներով:

Ընկերությունն անհատ բաժանորդներին մատուցում է ամրակցված հեռախոսակապի ծառայություն հինգ սակագնային պլաններով՝ «Նախընտրելի», «Բազային 1», «Բազային 2», «Այլընտրանքային 1» և «Այլընտրանքային 2», որոնք միմյանցից տարբերվում են ներառված անվճար րոպեների քանակով: Ամրակցված հեռախոսակապի բաժանորդներին մատուցվում են այնպիսի հավելյալ ծառայություններ, ինչպիսիք են՝ զանգի սպասումը, վերահասցեավորումը, եռակողմ կապի, չանհանգստացնելու, զանգող համարի ներկայացման, «Գեղեցիկ» համարների և «Online» ծառայությունները, կրճատ համարհավաքումը, ելքային զանգերի արգելափակումը և զարթուցիչը:

Ընկերությունը ամրակցված հեռահաղորդակցման ծառայությունների շուկայում բիզնես բաժանորդներին առաջարկում է ինտելեկտուալ կապի, կորպորատիվ ցանցերի, հոսթինգի, օպտիկամանրաթելային մալուխների միջոցով ինտերնետային և հեռուստատեսային, ինչպես նաև ամրակցված հեռախոսակապի ծառայություններ:

Ամրակցված ինտերնետային կապն առաջարկվում է չորս միացման տեխնոլոգիաներով՝ ADSL, VDSL, FTTB և FTTH: Առաջարկները ներկայացված են «Team Ինտերնետ»՝ 15-70 Մբիթ/վրկ, «NGN (Next Generation Network) Business»՝ 7-75 Մբիթ/վրկ և «Hi-Line»՝ մինչև 10 Մբիթ/վրկ արագությամբ սակագնային փաթեթներով:

Ամրակցված հեռախոսակապի ծառայությունները բաժանորդներին մատուցվում են երեք հիմնական սակագնային փաթեթներով՝ «Բիզնես Այլընտրանքային», «Այլընտրանքային» և «Բազային», յուրաքանչյուրը՝ երկուսից երեք գնային տարբերակով:

Ինտելեկտուալ կապի շրջանակներում Ընկերությունը մատուցում է Վիրտուալ ԱՀԿ-ների, E-1 այլընտրանքային կապուղու, քառանիշ համարների, 0-800 հատուկ համարի ծառայություններ:

Կորպորատիվ ցանցերի շրջանակում Ընկերությունն առաջարկում է կորպորատիվ ինտերնետի, կորպորատիվ VPN-ի, մալուխային ենթակառուցվածքների կառուցման, սերվերային ու ցանցային ենթակառուցվածքների տեղադրման, ինչպես նաև կորպորատիվ ցանցի ստեղծման ծառայություններ:

Ամրակցված հեռահաղորդակցման ծառայությունների շրջանակներում մատուցվում են նաև հենասյուների օգտագործման ծառայություններ:

Ընկերության ամրակցված կապի ծառայությունների սակագների վրա սահմանափակումներ չեն կիրառվում, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

- ամրակցված հեռախոսակապի կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխության համար Ընկերությունը պետք է դիմի և ստանա ՀԾԿՀ համաձայնությունը: Պետք է հաշվի առնել, որ վերոնշյալը վերաբերում է նաև ներփաթեթային ամրակցված հեռախոսակապի կարգավորվող ծառայությունների սակագներին,
- բիզնես հաճախորդներին ինտելեկտուալ կապի շրջանակներում տրամադրվող որոշ ծառայությունների (E-1 այլընտրանքային կապուղու և (E1, ISDN PRI) ծառայությունների) սակագներին:

Թիվ 60 լիցենզիայի համաձայն սահմանված սակագները պետք է լինեն արդարացի և ողջամիտ, չպետք է լինեն հակամրցակցային:

Ամրակցված կապի բաժանորդներ

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ամրակցված կապի բաժանորդների քանակը կազմել է 326,907, որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ նվազել է 11%-ով՝ հիմնականում պայմանավորված ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի նվազմամբ: Ստորև աղյուսակով ներկայացված է ամրակցված կապի բաժանորդների քանակի դինամիկան ըստ տարիների[24].

	2019	2020	2021	2022
ամրակցված կապի Բաժանորդներ, որից	**447,991**	**405,973**	**368,359**	**326,907**
ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդներ	337,790	300,163	268,844	234,000
մասնաբաժինը տնային տնտեսությունների[25] թվաքանակից	*41%*	*34%*	*30%*	*26%*
ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդներ	110,201	105,810	99,515	92,907
մասնաբաժինը տնային տնտեսությունների թվաքանակից	*13%*	*12%*	*11%*	*10%*

Ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի նվազումը հիմնականում պայմանավորված է բաժանորդների՝ ամրակցված կապից դեպի շարժական կապ միգրացիայով, ինչպես նաև OTT ձայնային պլատֆորմների ընդլայնվող հասանելիությամբ: Ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների 87%-ը բաժին է ընկնում անհատներին, իսկ մնացածը՝ Ընկերություններին և պետական կառույցներին:

Ընկերությունը գործունեության սկզբնական շրջանում պղնձալարային ցանցով ապահովված xDSL տեխնոլոգիայի միջոցով դարձավ լայնաշերտ ինտերնետ շուկայի առաջատարը: Հետագայում, ոլորտի զարգացման և օպտիկամանրաթելային ցանցի ընդլայնման հետ մեկտեղ Ընկերության ինտերնետ հասանելիությունից օգտվող բաժանորդների քանակը նվազեց քանի

[24] **Աղբյուր՝** ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ

[25] **Աղբյուր՝** ՀՀ վիճակագրական կոմիտե (այսուհետ՝ Արմստատ): Տնային տնտեսությունների քանակը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի վերջում ՀՀ մշտական բնակչության քանակի և տնային տնտեսության անդամների միջին թվաքանակի հարաբերություն: Տնային տնտեսության անդամների միջին թվաքանակի ցուցանիշը 2022թ.-ի համար ընդունվել է հավասար 2021թ.-ի ցուցանիշին:

որ բաժանորդների զգալի մասը օգտվում էր բարձր արագություն չապահովող հին xDSL տեխնոլոգիայով ինտերնետ ծառայություններից: Ընկերության կողմից ժամանակակից FTTH ցանցի կառուցումը նպաստեց ամրակցված ինտերնետ հասանելիությունից օգտվող բաժանորդների քանակի նվազման դանդաղեցմանը և նոր տեխնոլոգիաներով ինտերնետ հասանելիությունից օգտվող բաժանորդների քանակի աճին: Ընկերությունը արդեն 2023թ.-ից կանխատեսում է ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդների քանակային աճ՝ պայմանավորված շուկայում իր FTTH ցանցի ընդլայնմամբ և ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի աճով:

Ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդների 97%-ը բաժին է ընկնում անհատներին, մնացածը՝ Ընկերություններին և պետական կառույցներին:

Ստորև աղյուսակով ներկայացված է ամրակցված ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդների բացվածքը ըստ տեխնոլոգիաների[26].

	2019	2020	2021	2022
ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդներ, որից	**110,201**	**105,810**	**99,515**	**92,907**
ADSL տեխնոլոգիայով	83,856	71,065	53,056	39,184
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*76%*	*67%*	*53%*	*42%*
VDSL տեխնոլոգիայով	9,035	14,039	19,955	22,748
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*8%*	*13%*	*20%*	*24%*
FTTB տեխնոլոգիայով	14,711	19,326	24,353	23,767
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*13%*	*18%*	*24%*	*26%*
FTTH տեխնոլոգիայով	-	-	1,251	6,731
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	-	-	*1%*	*7%*
այլ տեխնոլոգիաներով	2,599	1.380	900	477
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	*2%*	*1%*	*1%*	*1%*

Դիտարկված պատմական ժամանակաշրջանում ամրակցված ինտերնետի բաժանորդների թվում ADSL տեխնոլոգիայով բաժանորդների քանակը նվազել է տարեկան 22% միջին տեմպով (CAGR): Նույն ժամանակաշրջանում VDSL և FTTB տեխնոլոգիայով ինտերնետի բաժանորդների քանակը աճել է համապատասխանաբար 36% և 17% տարեկան միջին տեմպով (CAGR):

ADSL տեխնոլոգիայով բաժանորդների մասնաբաժինը ամրակցված ինտերնետի բաժանորդների քանակում 2022թ.-ի ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 42%, որը 2021թ.-ի ցուցանիշից պակաս է 11 տոկոսային կետով: Փոխարենը աճում են VDSL, FTTB և FTTH տեխնոլոգիայով ինտերնետի բաժանորդների մասնաբաժինները:

Հարկ է նշել, որ ADSL և VDSL տեխնոլոգիայով ինտերնետ բաժանորդների ավելի քան 50%-ը բաժին է հասնում մարզային բաժանորդներին, մինչդեռ FTTB և FTTH տեխնոլոգիայով մարզային բաժանորդների մասնաբաժինը կազմում է համապատասխանաբար 2% և 44%:

[26] **Աղբյուր՝** Ընկերության տվյալներ

Ստորև ներկայացված են ամրակցված կապի համար հասանելի տների (Homes Passed)[27] քանակը ըստ ցանցի տեսակների (ժամանակաշրջանի վերջի դրությամբ). [28]

		2019	2020	2021	2022
Ամրակցված կապի Հասանելի տներ, որից					
POTS (պղնձալարային ցանց)	ք. Երևան	357,908	353,700	352,676	291,276
	մարզեր	312,578	298,462	275,550	221,402
	Ընդհանուր	**670,486**	**652,162**	**628,226**	**512,678**
ADSL (պղնձալարային ցանց)	ք. Երևան	115,936	93,792	93,792	93,792
	մարզեր	98,550	96,688	93,152	92,448
	Ընդհանուր	**214,486**	**190,480**	**186,944**	**186,240**
VDSL (FTTC)	ք. Երևան	26,988	76,480	77,760	77,760
	մարզեր	3,584	26,668	47,850	47,900
	Ընդհանուր	**30,572**	**103,148**	**125,610**	**125,660**
FTTB (Ethernet)	ք. Երևան	54,288	73,936	84,736	92,012
	մարզեր	3,648	3,648	3,648	3,892
	Ընդհանուր	**57,936**	**77,584**	**88,384**	**95,904**
FTTH (GPON)	ք. Երևան	-	-	21,637	60,413
	մարզեր	-	-	4,519	66,889
	Ընդհանուր	**-**	**-**	**26,156**	**127,302**

ADSL տեխնոլոգիայով ինտերնետի հասանելիությունը գնալով նոսրանում է, ինչը պայմանավորված է ցածր արագություն ապահովող, տեխնոլոգիապես հին պղնձալարային ցանցով: Դրան զուգահեռ զգալիորեն ընդլայնվել է Ընկերության VDSL, FTTB, FTTH տեխնոլոգիաներով օպտիկամանրաթելային ցանցերը: 2022թ.-ի դրությամբ FTTH ցանցը հասանելի է 127,302 բնակարանների/տնտեսությունների, որից ավելի քան 50%-ը՝ մարզերում:

Ընկերության ինտերնետ հասանելիության ցանցի ծածկույթն օրեցօր ընդլայնվում է, 2022թ.-ին ամրակցված ինտերնետի հասանելի տների քանակը 2021թ.-ի համեմատ աճել է 25%-ով: Իսկ 2022թ վերջի դրությամբ ընդհանուր Հասանելի տների մասնաբաժինը կազմել է 60%, ապահովելով տարեկան 12 տոկոսային կետով աճ.

		2019	2020	2021	2022
Ամրակցված ինտերնետի Հասանելի տներ	ք. Երևան	197,212	244,208	277,925	323,977
	մարզեր	105,782	127,004	149,169	211,129
	Ընդհանուր	**302,994**	**371,212**	**427,094**	**535,106**
ընդհանուր Հասանելի տների մասնաբաժինը տնային տնտեսությունների թվաքանակից		*37%*	*43%*	*48%*	*60%*

[27] Հասանելի տներ (Homes Passed) - այն տների (premises) պոտենցիալ քանակն է, որոնց Ընկերությունը սպասարկման տարածքում կարող է միացնել համապատասխան տեխնոլոգիայով (ADSL, VDSL, FTTB, FTTH) ցանցին:
[28] **Աղբյուր՝** Ընկերության տվյալներ

Ստորև աղյուսակով ներկայացնում ենք ամրակցված ինտերնետի ներթափանցելիության մակարդակը[29] (penetration rate) ըստ համապատասխան տեխնոլոգիայով հասանելի տների քանակի.

	2019	2020	2021	2022
ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդներ, որից				
ADSL տեխնոլոգիայով	39%	37%	28%	21%
VDSL տեխնոլոգիայով	30%	14%	16%	19%
FTTB տեխնոլոգիայով	25%	25%	28%	25%
FTTH տեխնոլոգիայով	-	-	5%	5%

Ընկերությունը նախատեսում է 2025թ.-ի դրությամբ FTTH տեխնոլոգիայով հասանելի տների քանակը հասցնել 320,000, իսկ ներթափանցելիության մակարդակը՝ 15%-ի:

Ընկերության հեռուստատեսության ծառայության բաժանորդների քանակը վերջին տարիներին գրանցել է զգալի աճ. դիտարկված պատմական ժամանակաշրջանում վերջինս աճել է տարեկան միջինում 59%-ով (CAGR): Ստորև աղյուսակով ներկայացված է հեռուստատեսության ծառայության բաժանորդների տարանջատումը ըստ ինտերնետ հասանելիության տեխնոլոգիաների.

	2019	2020	2021	2022
հեռուստատեսության ծառայության բաժանորդներ, որից	**6,741**	**14,341**	**21,228**	**27,297**
ADSL բաժանորդներ	2,379	2,579	2,478	2,211
մասնաբաժին	*35%*	*18%*	*12%*	*8%*
VDSL բաժանորդներ	2,227	5,467	9,375	10,312
մասնաբաժին	*33%*	*38%*	*44%*	*38%*
FTTB բաժանորդներ	2,135	6,295	8,518	10,307
մասնաբաժին	*32%*	*44%*	*40%*	*38%*
FTTH բաժանորդներ	-	-	857	4,467
մասնաբաժին	-	-	*4%*	*16%*

Հարկ է նշել, որ Ընկերությունը տնային հեռուստատեսության ծառայություններ մատուցում է միայն ամրակցված կապի փաթեթների (ինտերնետի, հեռախոսակապի ծառայությունների հետ մեկտեղ) կամ համակցված (ինտերնետի, հեռախոսակապի և շարժական կապի ծառայությունների հետ մեկտեղ) փաթեթների շրջանակներում:

Ստորև աղյուսակով ներկայացված է հեռուստատեսության ծառայության բաժանորդների մասնաբաժինը ըստ ինտերնետ հասանելիության տեխնոլոգիաների.

Գնալով ավելի շատ ինտերնետ հասանելիության բաժանորդներ են օգտվում տնային հեռուստատեսության ծառայություններից: 2022թ.-ին հեռուստատեսության ծառայության բաժանորդների քանակը գրանցել է 29% տարեկան աճ 2021թ.-ի համեմատ:

	2019	2020	2021	2022
հեռուստատեսության ծառայության բաժանորդներ, որից	**6%**	**14%**	**21%**	**29%**
ADSL բաժանորդներ	3%	4%	5%	6%
VDSL բաժանորդներ	25%	39%	47%	45%

[29] Հաշվարկված է որպես բաժանորդների քանակի և Հասանելի տների հարաբերակցություն:

FTTB բաժանորդներ	15%	33%	35%	43%
FTTH բաժանորդներ	-	-	69%	66%

Տոկոսային առումով ամենամեծ մասնաբաժինը պատկանում է FTTH ինտերնետ բաժանորդներին՝ 2022թ.-ին կազմելով վերջինիս 66%-ը: Ցուցանիշը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ FTTH գերարագ օպտիկամանրաթելային ցանցը թույլ է տալիս մատուցել ժամանակակից IPTV ծառայություններ:

3.4.1.3 *Թվային ծառայությունների մատուցում*

Ընկերությունը իր բաժանորդներին առաջարկում է մի շարք թվային ծառայություններ:

Ընկերությունը հնարավորություն է ընձեռում բաժանորդներին կոմունալ և այլ ծառայությունների դիմաց վճարումներ կատարել «Թիմ Փեյ» ՓԲԸ վճարահաշվարկային ընկերության գրասենյակներում, որոնք գործում են Ընկերության մասնաճյուղերում:

Շարժական կապի բաժանորդները շուտով հնարավորություն կունենան Team Energy հավելվածի միջոցով իրենց բջջային հեռախոսահամարի հաշվեկշռի հաշվին լիցքավորել էլեկտրական մեքենաները 30-ից ավել լիցքավորման կայաններում:

Ընկերության բաժանորդների համար գործում է նաև Team Բոնուս խրախուսական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս կատարված ծախսերի դիմաց կուտակել բոնուսային միավորներ և դրանք փոխանակել մի շարք ծառայություններով (բջջային ինտերնետի փաթեթներ, րոպեներ և հատուկ առաջարկներ գործընկերների հետ համագործակցելով):

3.4.2 **Ընկերության գործունեության վրա ազդող հիմնական գործոններ**

Ստորև բերված են այն հիմնական գործոնները, որոնք դիտարկվող ժամանակաշրջանների ընթացքում էապես ազդել են կամ ապագայում կարող են ազդել Ընկերության գործունեության, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

- **Տեխնիկական հնարավորությունները և սահմանափակումները**
  Ընկերության շարժական և ամրակցված կապի ծառայությունների հասանելիությունը ընդլայնելու, նոր հաճախորդներ ներգրավելու և առկա հաճախորդներին ավելի որակյալ ծառայություններ մատուցելու կարողությունը կախված է շարժական և ամրակցված կապի ցանցերի հնարավորություններից և սահմանափակումներից:
  2021թ.-ից սկսած Ընկերությունը մեծ թափով իրականացնում է 25G-PON տեխնոլոգիայով գերարագ ինտերնետ հասանելիության օպտիկամանրաթելային FTTH ցանցերի կառուցումը, որով բաժանորդներին տրվում է մինչև 1 Գբիթ/վ արագությամբ ամրակցված ինտերնետի հասանելիություն: Ընկերության գնահատմամբ ամրակցված ծառայությունների աճը պայմանավորված կլինի օպտիկամանրաթելային ցանցով ծածկված տարածքների աճող քանակով, օպտիկամանրաթելային ցանցերով դեռևս

չծածկված տարածքներում ցանցերի կառուցմամբ, խաչաձև վաճառքների շնորհիվ առկա բաժանորդների տեղափոխմամբ դեպի ավելի որակյալ ծառայություններ:
Ընկերությունը նաև իրականացնում է բջջային ցանցի բազային կայանների ռադիոռելեային կապուղիների փոխարինում օպտիկական կապուղիներով, ինչի արդյունքում ավելանում է կայանների թողունակությունը և բարելավվում է շարժական ինտերնետի որակը:
Ընկերությունը 2G, 3G, 4G բջջային ցանցերի համար ունի համապատասխան ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործման թույլտվություններ: Ընկերությունը 4G ցանցի համար ներկայում օգտվում է միայն 1,800 ՄՀց (ընդհանուր առմամբ 60 ՄՀց գոտի) ռադիոհաճախականության տիրույթից, որը սակայն բավարար չէ բարձր հաղորդականություն և ներշենքային թափանցելիություն ապահովելու համար: Վերջիններս ապահովելու համար Ընկերությանը արդեն իսկ ձեռք է բերել 700 ՄՀց ցածր ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն(ներ): 700 ՄՀց ռադիոհահաճախականությունների ձեռքբերման արդյունքում կմեծանա 4G ցանցի հասանելիությունը, ինչպես նաև շենք-շինություններում ցանցի ներթափանցումը, բացի այդ Ընկերությունը կներդնի 5G ցանց ՀՀ խոշորագույն երեք քաղաքներում:

- **Մրցակցություն**
  Ընկերության գործունեության շուկայում առկա է բարձր մրցակցություն և հնարավոր է դրա ժամանակ առ ժամանակ սրացում, ինչը կարող է ունենալ որոշակի ազդեցություն Ընկերության ցուցանիշների վրա: Ընկերության գնահատմամբ համակցված (կոնվերգենտ) փաթեթների առաջարկները և ընդլայնվող ամրակցված և շարժական կապի ցանցերը Ընկերությանը թույլ են տալիս շուկայում արդյունավետ մրցակցել այլ խաղացողների հետ: Այնուամենայնիվ, մրցակիցների կողմից դեմպինգային կամ գնային պատերազմներին (price wars) ուղղված առաջարկները կարող են հավելյալ ճնշում գործադրել Ընկերության գնային քաղաքականության վրա:
- **Արտահոսք (churn)**
  Արտահոսքի ծավալները կարող են պայմանավորված լինել շուկայում մրցակիցների կողմից առաջարկվող որոշակի առավելություններով ծառայությունների առկայությամբ, ինչպես նաև հաճախորդների որոշմամբ դադարեցնել կամ սահմանափակել որոշակի ծառայությունների օգտագործումը, առանց դրանք փոխարինելու Ընկերության կամ իր մրցակիցների կողմից մատուցվող այլ համարժեք ծառայություններով:
  Արտահոսքի հնարավոր աճը կարող է բացասաբար ազդել Ընկերության ցուցանիշների վրա:
  Ընկերության գնահատմամբ հետևյալ գործոնները օգնում են/կօգնեն նվազեցնել արտահոսքի մակարդակը.
    - Ընկերության բազմակի ծառայությունների, մասնավորաբար համակցված (կոնվերգենտ) փաթեթների տարածում, քանի որ այս փաթեթներին բաժանորդագրված հաճախորդների կողմից ծառայություններից հրաժարվելն առավել քիչ հավանական է: 2022թ.-ի դրությամբ Ընկերության մեկից ավել ծառայություններից օգտվող բաժանորդների մասնաբաժինը կազմել է 67% (2021թ.-ին՝ 64%),

- Ընկերության կողմից տեխնոլոգիապես արդիական ամրակցված ինտերնետի և դրանով կազմված համակցված (կոնվերգենտ) փաթեթների գնառաջարկները մրցակիցների հետ համեմատած առավել գրավիչ են:

- **Կապիտալ ծախսեր և մաշվածություն/ամորտիզացիա**

  Վերջին տարիներին Ընկերությունը իր առջև դրել է աճի հավակնոտ ծրագրեր, որոնք նաև ենթադրում են զգալի կապիտալ ծախսերի իրականացում: Ընկերության ներդրումային ծրագրերը հիմնականում ուղղված են եղել օպտիկամանրաթելային ցանցի կառուցմանը, արդիականացմանը և ընդլայնմանը, ինչպես նաև 3G և 4G ցանցերի ծածկույթի ընդլայնմանը: Ստորև ներկայացված է Ընկերության կապիտալ ծախսերի, մաշվածության ու ամորտիզացիայի գծով ծախսերի և EBITDA-ի համեմատականը.

հազար ՀՀ դրամ	2019	2020	2021	2022
Կապիտալ ծախսեր	7,599,729	5,264,563	6,788,991	10,225,279
Մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախս	7,331,748	8,179,417	7,197,721	7,091,573
EBITDA[30]	10,944,734	11,530,043	11,981,450	12,298,678

  Ընկերության 2022թ.-ի կապիտալ ծախսերը կազմել են ընդհանուր հասույթի և EBITDA-ի համապատասխանաբար 29.6 և 83 տոկոսը:

  Առաջիկա տարիներին Ընկերությունը պլանավորում է կապիտալ ծախսերը հիմնականում ուղղել

  - օպտիկամանրաթելային ցանցի հետագա ընդլայնմանը
  - 4G ծածկույթի հետագա ընդլայնմանը (ներառյալ հաղորդականության և ներշենքային թափանցելիության բարելավմանը)
  - 5G ցանցի ներդրմանը
  - բաժանորդային սարքավորումների (CPE) ձեռքբերմանը, ներառյալ որոշակի ցանցային սարքավորումներ, ինչպիսիք են GPON տերմինալները

  Վերոնշյալ կապիտալ ծախսերը առավելապես կֆինանսավորվեն Ընկերության սեփական միջոցների, ինչպես նաև Ազդագրի ներքո թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխումից ստացվող միջոցների հաշվին:

- **Հիմնական միջոցների վաճառք**

  Ընկերության կողմից ժամանակ առ ժամանակ վաճառվում են չօգտագործվող, տնտեսական օգուտ չապահովող հիմանական միջոցները, որով ապահովվում է Ընկերության կապիտալ ներդրումների համար լրացուցիչ դրամական միջոցների մուտքերը:

  2022թ.-ին Ընկերությունը հիմնական միջոցի վաճառքից ստացել է 1.9մլրդ ՀՀ դրամ ծավալի միջոցներ:

- **ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը**

  Ընկերության գործունեության, գործառնական և ֆինանսական ցուցանիշների վրա ազդեցություն ունեն նաև ընդհանուր ՀՀ տնտեսական ակտիվության մակարդակը,

[30] Հաշվարկված է որպես տարվա գործառնական շահույթ և մաշվածության ու ամորտիզացիայի ծախսերի հանրագումար (2022թ.-ի գործառնական եկամտի հաշվարկում ներառված չէ Ներդրումային գույքի վերաչափումից եկամուտը):

մակրոտնտեսական ցուցանիշները (ՀՆԱ աճի տեմպ, տնտեսական ակտիվության ցուցանիշ, գնաճ, գործազրկության մակարդակ և այլն) և պետական մարմինների կողմից վարվող ֆիսկալ (հարկաբյուջետային) և դրամավարկային քաղաքականությունները:

Ընկերության, ինչպես նաև շուկայի մյուս մասնակիցների, գործունեության վրա ՀՀ տնտեսական ակտիվության ազդեցության օրինակ կարող է հանդիսանալ ԿՈՎԻԴ-19 համաճարակով պայմանավորված ՀՀ տնտեսության իրավիճակի փոփոխությունը: ԿՈՎԻԴ-19 համաճարակով պայմանավորված տնտեսական անկման փուլում հեռահաղորդակցության շուկայի բաժանորդների բազան ընդհանուր առմամբ նվազեց, իսկ եկամուտները և շահութաբերությունը կրճատվեցին: Տնտեսության վերականգնմանը զուգահեռ սկսեցին աճել Ընկերության (ինչպես նաև շուկայի) բաժանորդների բազան, եկամուտները և շահութաբերությունը:

3.4.3 Հիմնական շուկաները

Ընկերությունը գործունեություն է ծավալում ՀՀ հեռահաղորդակցության շուկայում՝ առաջարկելով ամրակցված և շարժական կապի ծառայություններ: Ընկերությունը նաև իրականացնում է սարքավորումների[31] վաճառք, հանդիսանալով Samsung, Xiaomi, Nokia, Honor և այլ հանրահայտ ապրանքանիշների պաշտոնական գործընկերը Հայաստանում: Սկսած 2021թ-ից հաջողությամբ իրականացնում է նաև հեռուստացույցների վաճառք:

2022թ.-ի դրությամբ Ընկերության հասույթը կազմել է 34.6 մլրդ ՀՀ դրամ, որից 47%-ը ձևավորվել է շարժական կապի ծառայությունների մատուցումից, 42%-ը՝ ամրակցված կապի ծառայությունների մատուցումից, իսկ 9%-ը՝ սարքավորումների վաճառքից: Ընկերության 2022թ.-ի ընդհանուր հասույթը նախորդ տարվա համեմատ աճել է 9%-ով:

Ստորև աղյուսակով ներկայացված է Ընկերության հասույթի դինամիկան ըստ տարիների[32].

ՀՀ դրամ	2019	2020	2021	2022
Ընդհանուր հասույթ, որից	**34,792,686**	**29,541,097**	**31,710,514**	**34,576,678**
շարժական կապի ծառայությունների մատուցումից	17,784,828	14,811,487	15,526,846	16,112,680
մասնաբաժինը ընդհանուր հասույթում	*51%*	*50%*	*49%*	*47%*
ամրակցված կապի ծառայությունների մատուցումից	13,005,449	12,269,755	13,697,593	14,670,396
մասնաբաժինը ընդհանուր հասույթում	*37%*	*42%*	*43%*	*42%*
սարքավորումների վաճառքից	3,933,469	2,344,838	2,349,969	3,063,207
մասնաբաժինը ընդհանուր հասույթում	*11%*	*8%*	*7%*	*9%*
այլ	68,940	115,017	136,106	730,396
մասնաբաժինը ընդհանուր հասույթում	*0%*	*0%*	*0%*	*2%*

[31] Բջջային հեռախոսներ, աքսեսուարներ, պլանշետներ, Wi-Fi սարքեր, հեռակառավարման վահանակներ

[32] **Աղբյուր՝** Ընկերության 2019-2022թթ. աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ և 2022թ. կառավարչական հաշվետվություններ

3.4.3.1 *Շարժական կապի շուկա*

Շարժական կապի շուկան բաղկացած է 3 օպերատորներից՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, «Յուքոմ» ՓԲԸ և «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ:

Բոլոր 3 օպերատորները շարժական կապի ծառայությունները մատուցում են 2G (GSM), 3G (UMTS) և 4G (LTE) բջջային ցանցերի միջոցով: ՀՀ բնակչության 100%-ը բջջային հասանելիություն ունի բոլոր երեք ցանցերին[33]:

Համաձայն ՀԾԿՀ ՀՀ բնակավայրերում հանրային շարժական կապի ծածկույթի ապահովման աշխատանքների վերաբերյալ վերլուծական տեղեկանքի, 2023թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ 100% բնակավայրերն ապահովված են հանրային շարժական կապի 2G, 3G և 4G+/LTE Advanced) տեխնոլոգիաների ծածկույթներով:

Նույն աղբյուրի համաձայն 2023թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Թողարկողի 2G ցանցի հասանելիությամբ ապահովված են ՀՀ բնակավայրերի 90.5%-ը, Յուքոմի 2G ցանցի հասանելիությամբ՝ 84.8%-ը, ՄՏՍ Հայաստանի 2G ցանցի հասանելիությամբ՝ 100%-ը: Նույն ամսաթվի դրությամբ Թողարկողի 3G ցանցի հասանելիությամբ ապահովված են ՀՀ բնակավայրերի 66.6%-ը, Յուքոմի 3G ցանցի հասանելիությամբ՝ 90.8%-ը, ՄՏՍ Հայաստանի 3G ցանցի հասանելիությամբ՝ 98.9%-ը: Թողարկողի 4G ցանցի հասանելիությամբ ապահովված են ՀՀ բնակավայրերի 21.9%-ը, Յուքոմի 3G ցանցի հասանելիությամբ՝ 91.3%-ը, ՄՏՍ Հայաստանի 4G ցանցի հասանելիությամբ՝ 100%-ը:

Միևնույն ժամանակ, Ընկերության տվյալների համաձայն 2023թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Թողարկողի 4G ցանցով ապահովված է ՀՀ բնակչության 74.06%-ը:

Բոլոր երեք օպերատորների կողմից առաջարկվում է 4G+/LTE-A բջջային ցանց:

Բջջային ցանցի հասանելիությունը ապահովելու նպատակով օպերատորները օգտվում են 700ՄՀց, 800ՄՀց, 900ՄՀց, 1800ՄՀց, 2100ՄՀց, 2600ՄՀց և 3500Մhg ռադիոհաճախականություններից:

2022թ.-ի նոյեմբերի 16-ի թիվ 442-Ն որոշմամբ ՀԾԿՀ-ն սահմանեց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություններ տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման կանոնները: Մրցույթների արդյունքում Ընկերությունը ստացավ 700 ՄՀց (713-723 ՄՀց, 768-778 ՄՀց, 723-733 ՄՀց, 778-788 ՄՀց) և 1800 ՄՀց (1780-1785 ՄՀց, 1875-1880 ՄՀց) հաճախականության հատվածների օգտագործման թույլտվությունները, իսկ ՄՏՍ Հայաստանը՝ 800 ՄՀց (791-801 ՄՀց, 832-842 ՄՀց) հաճախականության հատվածների օգտագործման թույլտվություն:

Ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվությունների տրամադրմամբ ՀԾԿՀ-ն նախատեսել է ապահովել շարժական կապի լայնաշերտ ցանցերի հետագա զարգացումն ու նպաստել նոր սերնդի լայնաշերտ ցանցերի ներդրմանը, մասնավորապես, ապահովել ՀՀ խոշոր քաղաքներում շարժական լայնաշերտ կապի 5G տեխնոլոգիայի ցանցի՝ առավելապես «իրերի ինտերնետ»/IoT տեխնոլոգիայի ներդրումը,

[33] **Աղբյուր՝** Միջազգային հեռահաղորդակցության միություն (ITU – Interntational Telecommuncations Union)

բարելավել փակ (ներտնային) տարածքներում շարժական լայնաշերտ կապի ծածկույթի որակը (ներառյալ ներթափանցելիության և ազդանշանի մակարդակի մասով), զարգացնել առկա շարժական կապի ենթակառուցվածքները (օպիտկամանրաթելային կապուղիներով) և արդիականացնել անվտանգության համակարգերը, ինչպես նաև ՀՀ պաշտպանունակության ամրապնդման նպատակով սահմանամերձ բնակավայրերում զարգացնել օպտիկամանրաթելային կապի ենթակառուցվածքները:[34]

800ՄՀց ռադիոհաճախականության հատվածները կապահովեն LTE-A և LTE-A Pro ցանցերի զարգացումը, ինչն էլ կապահովի 4G տեխնոլոգիայից դեպի 5G տեխնոլոգիայի ցանցեր սահուն անցումը[35]: 700ՄՀց ռադիոհաճախականության հատվածները կապահովեն 5G ցանցի ներդրումը:

Ընկերությունները ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվության ստանալու արդյունքում պարտավորվում են[36].

- 713-723ՄՀց/768-778ՄՀց և 723-733ՄՀց/778-788ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների դեպքում թույլտվության ուժի մեջ մտնելու պահից, ի թիվս այլոց
    - երկու տարվա ընթացքում ապահովել ՀՀ միջպետական մայրուղիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակավայրերի առնվազն 80 տոկոսում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթ, ընդ որում, այն պետք է ներառի Սևան, Ծաղկաձոր, Ջերմուկ, Դիլիջան քաղաքների տարածքները, Երևան քաղաքը Դիլիջան, Ծաղկաձոր և Սևան քաղաքներին միացնող մայրուղիներն ամբողջությամբ, ինչպես նաև Երևան քաղաքը Ջերմուկ քաղաքին միացնող մայրուղու 95 տոկոսը
    - երկու տարվա ընթացքում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ տվյալ քաղաքների վարչական (կադաստրային) տարածքի առնվազն 90 տոկոսում ապահովել լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթ
    - երկու տարվա ընթացքում Երևան քաղաքում (ներառյալ՝ ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի N 1215-Լ որոշմամբ նախատեսված՝ «Ինժեներական քաղաքի» տարածքում) և երեք տարվա ընթացքում Գյումրի և Վանաձոր քաղաքներում ապահովել շարժական լայնաշերտ կապի 5-րդ սերնդի (5G) ցանցի ներդնում:
- 791-801ՄՀց/832-842ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների դեպքում թույլտվության ուժի մեջ մտնելու պահից, ի թիվս այլոց
    - երկու տարվա ընթացքում ապահովել ՀՀ միջպետական մայրուղիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակավայրերի առնվազն 80 տոկոսում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթ, ընդ որում, այն պետք է ներառի Սևան, Ծաղկաձոր, Ջերմուկ, Դիլիջան քաղաքների տարածքները, Երևան քաղաքը Դիլիջան, Ծաղկաձոր և Սևան քաղաքներին միացնող մայրուղիներն ամբողջությամբ, ինչպես նաև Երևան քաղաքը Ջերմուկ քաղաքին միացնող մայրուղու 95 տոկոսը,

[34] **Աղբյուր՝** ՀԾԿՀ 2023 թվականի գործունեության ծրագիր
[35] **Աղբյուր՝** ՀԾԿՀ 2021 թվականի գործունեության ծրագիր
[36] Ամբողջական ցանկը ներկայացված է ՀԾԿՀ 2022թ.-ի նոյեմբերի 16-ի թիվ 442-Ն որոշմամբ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=170714

- երկու տարվա ընթացքում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ տվյալ քաղաքների վարչական (կադաստրային) տարածքի առնվազն 90 տոկոսում ապահովել լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթ:

Բաժանորդներ

Պատմականորեն ՀՀ շարժական կապի շուկան ունեցել է աճի միտում. ընդհանուր Բաժանորդների քանակը 2022թ.-ի վերջին դրությամբ կազմել է 3,878,228, որը կազմում է ՀՀ բնակչության 131%-ը: Շարժական կապի շուկայի ընդհանուր Բաժանորդների քանակի պատմական շարժը ներկայացված է ստորև աղյուսակով[37].

	2016	2017	2018	2019	2020	2021	2022
շարժական կապի շուկայի Բաժանորդներ	**3,562,423**	**3,619,447**	**3,721,006**	**3,776,209**	**3,646,179**	**3,740,427**	**3,878,228**
մասնաբաժինը բնակչության թվաքանակից	*119%*	*121%*	*125%*	*127%*	*123%*	*126%*	*131%*

2020թ.-ի Բաժանորդների քանակի նվազումը պայմանավորված էր տնտեսության վրա ԿՈՎԻԴ-19 համաճարակի բացասական ազդեցությամբ:

Շարժական կապի շուկայի բաժանորդները մեծամասամբ կանխավճարային բաժանորդներ են (2022թ.-ի վերջի դրությամբ՝ ընդհանուր բաժանորդների 80%):

Շարժական կապի շուկան ընդհանուր առմամբ կարելի է բաժանել ձայնային և ինտերնետ ծառայությունների շուկաների:

Ձայնային ծառայությունների շուկան հագեցած է, դրանց աստիճանաբար փոխարինում են OTT տեխնոլոգիաները (WhatsApp, Viber, Skype և այլն), որոնց տարածումը գնալով աճում է՝ պայմանավորված շարժական ինտերնետի ընդլայնվող հասանելիությամբ:

Շարժական ինտերնետի շուկան պատմականորեն ցուցաբերել է աճի միտում. գնալով ավելի շատ շարժական կապի բաժանորդներ են օգտվում շարժական ինտերնետից: Շարժական ինտերնետից օգտվող (թե՛ հեռախոսասարքով և, թե՛ այլ սարքերով) բաժանորդների քանակը 2022թ.-ի վերջի դրությամբ կազմել է 3,111,877, որը կազմում է ՀՀ բնակչության 105%-ը, իսկ շարժական կապի շուկայի ընդհանուր բաժանորդների՝ 80%-ը:

Շարժական ինտերնետի շուկայի բաժանորդների քանակի պատմական շարժը ներկայացված է ստորև աղյուսակով[38].

	2016	207	2018	2019	2020	2021	2022
շարժական ինտերնետի շուկայի Բաժանորդներ	**2,116,242**	**2,346,050**	**2,594,020**	**2,766,005**	**2,740,170**	**2,921,668**	**3,111,877**
մասնաբաժինը բնակչության թվաքանակից	*71%*	*79%*	*87%*	*93%*	*93%*	*99%*	*105%*

[37] Հաշվարկված է որպես 3 օպերատորների կողմից ՀԾԿՀ ներկայացվող եռամսյակային հաշվետվություններում ներկայացված ակտիվ բաժանորդային համարների հանրագումար

[38] Հաշվարկված է որպես 3 օպերատորների կողմից ՀԾԿՀ ներկայացվող եռամսյակային հաշվետվություններում ներկայացված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների և տվյալների հաղորդման ծառայություններից օգտվող բաժանորդների հանգրագումար

մասնաբաժինը ընդհանուր շարժական կապի բաժանորդներից	*59%*	*65%*	*70%*	*73%*	*75%*	*78%*	*80%*

Շարժական ինտերնետի շուկայում լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների (բացառությամբ հեռախոսասարքերի միջոցով օգտվողների) քանակը վերջին տարիներին ցուցաբերում է նվազման միտում (2017թ.-ի նկատմամբ տարեկան նվազման տեմպը կազմել է 2%), փոխարենը աճում են հեռախոսասարքի միջոցով ինտերնետ հասանելիությունից օգտվող բաժանորդների քանակը (2017թ.-ի նկատմամբ տարեկան աճի տեմպը կազմել է 6.7%).

	2016	2017	2018	2019	2020	2021	2022
շարժական ինտերնետի շուկայի Բաժանորդներ, որից	**2,116,242**	**2,346,050**	**2,594,020**	**2,766,005**	**2,740,170**	**2,921,668**	**3,111,877**
բացառությամբ հեռախոսասարքի միջոցով օգտվողներ	255,986	272,476	267,484	266,074	262,409	253,689	245,413
հեռախոսասարքի միջոցով օգտվողներ	1,860,256	2,073,574	2,326,536	2,499,931	2,477,761	2,667,979	2,866,464

ՀԾԿՀ կողմից հրապարակված վիճակագրական ցուցանիշների համաձայն, 2022թ.-ի տարեվերջի դրությամբ հեռախոսասարքերով շարժական ինտերնետից օգտվող բաժանորդների 73.7%-ը օգտվում է 4G ցանցից, 25.7%-ը օգտվում է 3G ցանցից, իսկ 0.6%-ը՝ 2G ցանցից:

Ստորև աղյուսակով ներկայացված են շարժական ինտերնետի բաժանորդների բաշխվածությունը ըստ տեխնոլոգիաների (ցանցերի).[39]

	2016	207	2018	2019	2020	2021	2022
շարժական ինտերնետ հասանելիությամբ բաժանորդներ, որից							
2G հեռախոսասարքերով	23.7%	15.2%	12.0%	9.5%	7.0%	5.9%	0.5%
3G հեռախոսասարքերով[40]	-	-	-	-	-	-	23.6%
4G, 4G+ հեռախոսասարքերով	63.7%	72.7%	77.1%	80.1%	82.8%	84.7%	67.6%
USB մոդեմներով, երթուղիչ սարքերով և պլանշետներով	9.5%	9.0%	7.5%	6.2%	5.4%	4.1%	3.3%
M2M տեխնոլոգիայով	3.1%	3.2%	3.4%	4.2%	4.8%	5.2%	4.9%

Շարժական կապի շուկայի եկամուտներ[41]

Շարժական կապի շուկայի հիմնական գործունեությունից ստացված եկամուտը (հաշվարկած 3 օպերատորների համար) 2022թ.-ին կազմում է ընդհանուր 81.9 մլրդ ՀՀ դրամ, վերջինս դեռևս չի հասել 2019թ.-ի նախահամաճարակային ցուցանիշին (2020թ.-ին գրանցվել է ցուցանիշի 11% նվազում՝ հիմնականում պայմանավորված ԿՈՎԻԴ-19 համաճարակի տնտեսության վրա բացասական ազդեցությամբ): Շուկայի տվյալների հաղորդման ծառայություններից (ինտերնետ) ստացվող եկամուտը ընդհանուր շարժական կապի միակ բաղադրիչն է, որը չի

[39] **Աղբյուր՝** ՀԾԿՀ վիճակագրական ցուցանիշներ

[40] Մինչև 2021թ.-ը 3G հեռախոսասարքերով բաժանորդների քանակը տարանջատված չի եղել, այն ներկայացված է եղել 4G, 4G+ հեռախոսասարքերով բաժանորդների հետ միասին

[41] **Աղբյուր՝** ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունների «եկամուտներ շարժական կապից և հարակից գործունեությունից» հոդված (չներառելով «բաժանորդային սարքավորումների և աքսեսուարների վաճառքից եկամուտը»)

նվազել 2020թ.-ին: Վերջինիս մասնաբաժինը շարժական կապի ընդհանուր եկամտում գնալով ավելանում է, 2022թ-ին այն կազմել է 46%:

հազար << դրամ	2019	2020	2021	2022
եկամուտներ շարժական կապից և հարակից գործունեությունից, որից	**83,932,310**	**74,667,939**	**77,972,884**	**81,399,716**
ձայնային	26,850,577	24,537,121	23,509,616	23,595,846
մասնաբաժինը ընդհանուր եկամտում	*32%*	*33%*	*30%*	*29%*
տվյալների հաղորդում	32,591,998	33,023,814	35,692,412	37,785,027
մասնաբաժինը ընդհանուր եկամտում	*39%*	*44%*	*46%*	*46%*
փոխկապակցում	14,587,606	9,442,472	9,346,861	8,942,244
մասնաբաժինը ընդհանուր եկամտում	*17%*	*13%*	*12%*	*11%*
միջազգային ռոումինգ	3,897,304	1,729,281	2,342,180	2,945,032
մասնաբաժինը ընդհանուր եկամտում	*5%*	*2%*	*3%*	*4%*
այլ	6,004,825	5,935,251	7,081,815	8,131,567
մասնաբաժինը ընդհանուր եկամտում	*7%*	*8%*	*9%*	*10%*

Չնայած 2022թ.-ի շարժական ձայնային ծառայության եկամտի համեստ աճին, ընդհանուր առմամբ վերջինս ունի նվազման միտում՝ հիմնականում պայմանավորված ինտերնետի միջոցով ձայնի փոխանցման ծավալների աճով և ձայնային կապին փոխարինող OTT տեխնոլոգիաների (WhatsApp, Viber, Skype և այլն) շարունակական տարածմամբ:

Փոխկապակցումից եկամուտները ձևավորվում են ձայնային և SMS/MMS ծառայություններից: 2022թ.-ի դրությամբ վերջիններիս մասնաբաժինը փոխկապակցումից եկամտում կազմում է համապատասխանաբար 96% և 4%:

2022թ.-ի դրությամբ միջազգային ռոումինգից եկամուտների 58%-ը ձևավորվել է տեղական ցանցերի, իսկ 42%-ը՝ արտերկրի ցանցերի բաժանորդներին մատուցված ծառայություններից:

Շարժական կապի այլ եկամուտները հիմնականում ձևավորվում են կարճ և մուլտիմոդալ հաղորդագրություններից (SMS, MMS, CPA):

Տվյալների հաղորդման (ինտերնետ) եկամուտներում գնալով նվազում է լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) մատուցումից ստացվող եկամտի մասնաբաժինը.

հազար << դրամ	2019	2020	2021	2022
եկամուտներ տվյալների հաղորդման ծառայություններից եկամուտ, որից	32,591,998	33,023,814	35,692,412	37,785,027
լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) մասնաբաժին	19%	17%	13%	11%

Ընկերության շարժական կապի եկամուտներ

Ընկերության շարժական կապի ծառայություններից ստացվող եկամուտների վերջին տարիների աճը հիմնականում պայմանավորված է տվյալների փոխանակման (ինտերնետի) ծառայություններից ստացված եկամուտների աճով, վերջինիս մասնաբաժինը 2022թ.-ի շարժական կապի ընդհանուր եկամտում կազմում է 51%:

Ձայնային ծառայություններից ստացվող եկամուտներն, ինչպես և ամբողջ աշխարհում, ունեն նվազման միտում՝ հիմնականում պայմանավորված ինտերնետի միջոցով ձայնի փոխանցման ծավալների աճով և ձայնային կապին փոխարինող OTT տեխնոլոգիաների (WhatsApp, Viber, Skype և այլն) լայն տարածմամբ: Շարժական կապի եկամուտների դինամիկան ներկայացված է ստորև աղյուսակով[42].

հազար << դրամ	2019	2020	2021	2022
Շարժական կապի ծառայությունների մատուցումից հասույթ, որից	**17,784,828**	**14,811,487**	**15,526,846**	**16,112,680**
ձայնային	6,130,266	4,974,505	4,265,245	3,602,086
մասնաբաժինը շարժական կապի հասույթում	*34%*	*34%*	*27%*	*22%*
տվյալների փոխանակում	5,969,814	6,229,895	7,243,249	8,216,765
մասնաբաժինը շարժական կապի հասույթում	*34%*	*42%*	*47%*	*51%*
փոխկապակցում	3,287,469	2,103,498	2,181,017	2,170,079
մասնաբաժինը շարժական կապի հասույթում	*18%*	*14%*	*14%*	*14%*
ռոումինգ	1,051,789	313,416	799,185	1,049,122
մասնաբաժինը շարժական կապի հասույթում	*6%*	*2%*	*5%*	*7%*
այլ	1,345,490	1,190,173	1,038,150	1,074,628
մասնաբաժինը շարժական կապի հասույթում	*8%*	*8%*	*7%*	*7%*

2020թ.-ին շարժական կապի եկամտի (ինչպես նաև բաժանորդների քանակի) նվազումը հիմնականում պայմանավորված էր տնտեսության վրա ԿՈՎԻԴ-19 համաճարակի բացասական ազդեցությամբ:

2022թ.-ի շարժական կապի եկամուտը 2020թ.-ի նկատմամբ գրանցել է տարեկան 4.2% աճի տեմպ: Նույն ժամանակաշրջանում տվյալների փոխանակման (ինտերնետի) ծառայություններից ստացվող եկամուտը գրանցել է տարեկան 15% աճի տեմպ: Լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) մատուցումից ստացվող եկամտի մասնաբաժինը գնալով նվազել է՝ 2022թ.-ին կազմելով եկամտային խմբի 6%-ը.

հազար << դրամ	2019	2020	2021	2022
եկամուտներ տվյալների հաղորդման ծառայություններից, որից	**5,973,748**	**6,229,895**	**7,243,251**	**8,216,765**
լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների)	848,859	740,713	649,389	492,237
շարժական բջջային կապի ցանցով մատուցվող ծառայություններից (հեռախոսի միջոցով)	5,124,889	5,489,182	6,593,862	7,724,528

Ստորև աղյուսակով ներկայացված է շարժական կապի ծառայությունների վաճառքից մեկ ակտիվ բաժանորդին ընկնող միջին ամսական հասույթը (ARPU) ըստ տարիների.[43]

<< դրամ	2019 IV եռ.	2020 IV եռ.	2021 IV եռ.	2022 IV եռ.
շարժական կապի Բաժանորդներ, որից	**1,514**	**1,403**	**1,422**	**1,475**
կանխավճարային Բաժանորդներ	1,173	1,134	1,076	1,127

[42] **Աղբյուր՝** Ընկերության 2019-2022թթ. աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ և 2022թ. կառավարչական հաշվետվություններ
[43] **Աղբյուր՝** ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ

հետվճարային Բաժանորդներ	3,663	3,143	3,416	3,121
լայնաշերտ ինտերնետի Բաժանորդներ (բացառությամբ հեռախոսասարքերի միջոցով օգտվողների)	1,340	1,192	833	478

3.4.3.1.1 Ընկերության մրցակցային դիրքը շարժական կապի շուկայում

Ընկերությունը շարժական կապի շուկայում մրցակցում է ՄՏՍ Հայաստանի և Յուքոմի հետ՝ բաժանորդների քանակի և եկամտի մասնաբաժնով շուկայում զբաղեցնելով կայուն երկրորդ տեղը:

Ցանցեր

Ռադիոհաճախականությունների հատվածների բաշխվածությունը ըստ ցանցերի և օպերատորների ներկայացված է ստորև աղյուսակով.

Ռադիոհաճախականություն	Բջջային ցանց	Օգտագործվող ռադիոհաճախականության գոտիներ		
		Տելեկոմ Արմենիա	Յուքոմ	ՄՏՍ Հայաստան
700 ՄՀց	4G / 5G	2 x 20 ՄՀց	-	-
800 ՄՀց	4G	-	2 x 10 ՄՀց	2 x 20 ՄՀց
900 ՄՀց	2G / 3G	2 x 12.5 ՄՀց	2 x 10 ՄՀց	2 x 12.2 ՄՀց
1800 ՄՀց	4G	2 x 25 ՄՀց 2 x 5 ՄՀց	2 x 20 ՄՀց	2 x 25 ՄՀց
2100 ՄՀց	3G	2 x 15 ՄՀց	2 x 15 ՄՀց 5 ՄՀց /TDD/	2 x 15 ՄՀց
2600 ՄՀց	4G	-	170 ՄՀց	-
3500 ՄՀց	4G / 5G	-	Երևան 50 ՄՀց, ՀՀ մարզեր 50 ՄՀց, IEEE802.16 ստանդարտ	-
Ընդհանուր տեղաբաշխված գոտիներ		**155 ՄՀց**	**285 ՄՀց** */առանց 3500 ՄՀց տիրույթի/*	**144.4 ՄՀց**

Բոլոր երեք օպերատորները ապահովում են բնակչությանը 2G ցանցի հասանելիության միմյանց մոտ մակարդակներ: 2G ցանցի ապահովման համար բոլոր օպերատորները օգտվում են 900 ՄՀց ռադիոհաճախականության տիրույթից:

3G ցանցի համար բոլոր երեք օպերատորները օգտագործում են 2,100ՄՀց ռադիոհաճախականության տիրույթը, բացի այդ օպերատորները նաև օգտվում են 900ՄՀց ռադիոհաճախականության տիրույթից (բազային կայանների թարմացում GSM-ից UMTS տեխնոլոգիայի), ինչը տալիս է 3G ցանցի առավել լայն ծածկույթի և առավել բարձր մակարդակի ներշենքային թափանցելիության հնարավորություն: Ընկերության 3G ցանցի ծածկույթը, ի տարբերություն մրցակիցների, առավել կենտրոնացած է քաղաքային տարածքներում:

Մրցակիցների հետ համեմատած Ընկերության 4G ցանցի ծածկույթը ունի ցածր սփռվածություն: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ մրցակիցները 1,800ՄՀց հաճախականությունից բացի օգտվում են նաև 800 ՄՀց (ավելի լայն ծածկույթի և ներշենքային թափանցելիության ապահովման համար) և 2,600 ՄՀց (ավելի բարձր թողունակություն ապահովելու համար) հաճախականություններից: Բացի այդ Ընկերությունն

ունի առավել քիչ LTE լայնաշերտ ցանցի կայաններ: Ընկերությունը շարունակաբար իրականացնում է բազային կայանների թարմացումներ, ինչպես նաև կառուցում է նոր բազային կայաններ: Այս պահի դրությամբ LTE տեխնոլոգիայով ապահովված բազային կայանների թիվը կազմում է 573 (ընդհանուր բազային կայանների 65%):

Ընկերությունը ստացել է 703-733ՄՀց և 758-788ՄՀց, 791-801ՄՀց և 832-842ՄՀց, 1780-1785ՄՀց և 1875-1880ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություններ, որոնց շնորհիվ հնարավորություն կունենա զարգացնել 4G ցանցի ծածկույթը, և բարձրացնել ցանցի ներշենքային թափանցելիությունը:

Ընկերությունը 700ՄՀց տիրույթում հատվածների օգտագործման թույլտվության դիմաց պարտավորվում է 2 տարվա ընթացքում Երևան քաղաքում (ներառյալ՝ ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի N 1215-Լ որոշմամբ նախատեսված՝ «Ինժեներական քաղաքի» տարածքում) և 3 տարվա ընթացքում Գյումրի և Վանաձոր քաղաքներում ապահովել շարժական լայնաշերտ կապի 5-րդ սերնդի (5G) ցանցի ներդրում:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ համաձայն ՄՏՍ Հայաստանի հրապարակումների, 2023թ.-ի գարնանը վերջինս գործարկել է 5G ցանց Երևան քաղաքի փոքր կենտրոնում և Գյումրի քաղաքում: Ընկերությունն այս պահին մրցակցային առավելության ռիսկեր չի տեսնում, քանի որ Ընկերության գնահատմամբ գործարկված 5G ցանցն առայժմ չի ապահովում ավելի արագ տվյալների հաղորդում, քան 4G ցանցը՝ պայմանավորված 5G ցանցի՝ միևնույն 1800 ՄՀց հաճախականության տիրույթը 4G (LTE) տեխնոլոգիայի հետ համատեղ օգտագործման (spectrum sharing) սկզբունքով:

Բաժանորդներ[44]

Ստորև աղյուսակով ներկայացված են 2022թ.-ի դրությամբ օպերատորների շարժական կապի բաժանորդների քանակը և տարանջատումը ըստ կանխավճարային և հետվճարային բաժանորդագրությունների.

	Տելեկոմ Արմենիա	Յուքոմ[45]	ՄՏՍ Հայաստան
շարժական կապի ընդհանուր բաժանորդներ	**958,293**	**652,956**	**2,266,979**
կանխավճարային բաժանորդներ	787,261	339,464	1,973,316
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*82%*	*52%*	*87%*
հետվճարային բաժանորդներ	171,032	197,784	293,663
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*18%*	*30%*	*13%*

Շարժական կապի շուկայում Ընկերությունը բաժանորդների քանակով տարիներ շարունակ զբաղեցնում է կայուն երկրորդ հորիզոնականը՝ 25% մասնաբաժնով:

Ստորև աղյուսակով ներկայացված են 2022թ.-ի դրությամբ օպերատորների շարժական կապի բաժանորդների շուկայական մասնաբաժինները.

	Տելեկոմ Արմենիա	Յուքոմ	ՄՏՍ Հայաստան
շարժական կապի ընդհանուր բաժանորդներ	**25%**	**17%**	**58%**

[44] **Աղբյուր՝** ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ
[45] Յուքոմ ընկերության ընդհանուր բաժանորդներում ներառված են նաև լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդները

կախավճարային բաժանորդներ	25%	11%	64%
հետվճարային բաժանորդներ	26%	30%	44%

Ներկայացված մասնաբաժինները պատմականորեն (վերջին 4 տարիներին) պահպանվել են, բացառությամբ հետվճարային բաժանորդների շուկայի, որտեղ Ընկերության և Յուքոմի մասնաբաժինները աճել են, մինչդեռ ՄՏՍ Հայաստանինը՝ նվազել:

Շարժական ինտերնետի շուկայում Ընկերությունը բաժանորդների քանակով զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը: Ստորև աղյուսակով ներկայացված են շարժական ինտերնետ բաժանորդների քանակը ըստ տարիների և դրանց մասնաբաժինը շարժական կապի բաժանորդների քանակում ըստ օպերատորների.

		2019	2020	2021	2022
Տելեկոմ Արմենիա	ինտերնետ բաժանորդներ	554,366	557,966	618,206	671,960
	մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*58%*	*62%*	*68%*	*70%*
Յուքոմ	ինտերնետ բաժանորդներ	530,876	535,931	543,470	564,314
	մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*85%*	*90%*	*92%*	*86%*
ՄՏՍ Հայաստան	ինտերնետ բաժանորդներ	1,680,763	1,646,273	1,759,992	1,796,289
	մասնաբաժինը ընդհանուր բաժանրոդներում	*76%*	*77%*	*79%*	*79%*

Ընկերության ինտերնետ բաժանորդների քանակը վերջին տարիներին գրանցում է կայուն տարեկան աճ:

Ստորև ներկայացված են 2022թ.-ի տարեվերջի դրությամբ օպերատորների մասնաբաժինները ըստ շարժական ինտերնետի բաժանորդների քանակի.

	Տելեկոմ Արմենիա	Յուքոմ	ՄՏՍ Հայաստան
շարժական ինտերնետի ընդհանուր բաժանորդներ	**22%**	**19%**	**59%**
բացառությամբ հեռախոսասարքի միջոցով օգտվողներ	32%	47%	21%
հեռախոսասարքի միջոցով օգտվողներ	21%	16%	63%

Լայնաշերտ շարժական ինտերնետի շուկայում Ընկերությանմասնաբաժինը պատմականորեն (դիտարկված վերջին 3 տարիներին) աճել է՝ վերջին տարվա նկատմամբ աճելով 9 տոկոսային կետով:

Եկամուտներ[46]

Ընկերությունը շարժական կապի շուկայում հիմնական գործունեությունից ձևավորված (առանց սարքավորումների վաճառքի) եկամտի մակարդակով զբաղեցնում է կայուն 2րդ տեղը՝ 19.8% մասնաբաժնով: Ընկերության մասնաբաժինը շարժական կապի շուկայի եկամտում պատմականորեն (վերջին երեք տարում) պահպանվել է համադրելի մակարդակում:

Ստորև ներկայացված են 2022թ.-ի տարեվերջի դրությամբ օպերատորների մասնաբաժինները ըստ շարժական կապի եկամտի բաղադրիչների.

հազար ՀՀ դրամ	Տելեկոմ Արմենիա	Յուքոմ	ՄՏՍ Հայաստան

[46] **Աղբյուր՝** ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունների «եկամուտներ շարժական կապից և հարակից գործունեությունից» հոդված (չներառելով «բաժանորդային սարքավորումների և աքսեսուարների վաճառքից եկամուտը»)

եկամուտներ շարժական կապից և հարակից գործունեությունից, որից	**19.8%**	**18.6%**	**61.6%**
ձայնային	15%	34%	51%
տվյալների հաղորդում	22%	11%	68%
փոխկապակցում	24%	20%	56%
ռոումինգ	36%	26%	38%
այլ	13%	8%	78%

Ստորև աղյուսակով ներկայացված են օպերատորների շարժական կապի եկամուտների բաղադրիչների և դրանց շուկայական մասնաբաժինների պատմական միտումները.

հազար << դրամ		2019	2020	2021	2022
Տելեկոմ Արմենիա	ձայնային	6,077,053	4,924,717	4,242,339	3,582,236
	մասնաբաժինը	*23%*	*20%*	*18%*	*15%*
	տվյալների հաղորդում	5,973,748	6,229,895	7,243,251	8,216,765
	մասնաբաժինը	*18%*	*19%*	*20%*	*22%*
	ռոումինգ	1,051,788	313,416	799,187	1,048,452
	մասնաբաժինը	*27%*	*18%*	*34%*	*36%*
	փոխկապակցում	3,287,470	2,103,498	2,141,300	2,170,017
	մասնաբաժինը	*23%*	*22%*	*23%*	*24%*
	այլ	1,423,825	1,390,721	1,193,801	1,075,352
	մասնաբաժինը	*24%*	*23%*	*17%*	*13%*
	ընդհանուր	**17,813,884**	**14,962,247**	**15,619,878**	**16,092,822**
	մասնաբաժինը	*21%*	*20%*	*20%*	*20%*
Յուքոմ	ձայնային	6,348,574	6,344,106	6,619,015	7,955,414
	մասնաբաժինը	*24%*	*26%*	*28%*	*34%*
	տվյալների հաղորդում	5,753,927	5,165,249	4,566,468	4,008,720
	մասնաբաժինը	*18%*	*16%*	*13%*	*11%*
	ռոումինգ	778,441	329,823	587,694	764,790
	մասնաբաժինը	*20%*	*19%*	*25%*	*26%*
	փոխկապակցում	1,675,177	1,324,501	1,622,918	1,760,880
	մասնաբաժինը	*11%*	*14%*	*17%*	*20%*
	այլ	697,571	525,237	739,876	663,484
	մասնաբաժինը	*12%*	*9%*	*10%*	*8%*
	ընդհանուր	**15,253,690**	**13,688,916**	**14,135,971**	**15,153,288**
	մասնաբաժինը	*18%*	*18%*	*18%*	*19%*
ՄՏՍ Հայաստան	ձայնային	14,424,950	13,268,298	12,648,262	12,058,196
	մասնաբաժինը	*54%*	*54%*	*54%*	*51%*
	տվյալների հաղորդում	20,864,323	21,628,670	23,882,693	25,559,542
	մասնաբաժինը	*64%*	*65%*	*67%*	*68%*
	ռոումինգ	2,067,075	1,086,042	955,299	1,131,790
	մասնաբաժինը	*53%*	*63%*	*41%*	*38%*
	փոխկապակցում	9,624,959	6,014,473	5,582,643	5,011,347
	մասնաբաժինը	*66%*	*64%*	*60%*	*56%*
	այլ	3,883,429	4,019,293	5,148,138	6,392,731
	մասնաբաժինը	*65%*	*68%*	*73%*	*79%*
	ընդհանուր	**50,864,736**	**46,016,776**	**48,217,035**	**50,153,606**
	մասնաբաժինը	*61%*	*62%*	*62%*	*62%*

Ընկերության մասնաբաժինը շարժական կապի շուկայում տվյալների հաղորդման ծառայություններից (ինտերնետից) ստացվող եկամտում պատմականորեն (վերջին երեք տարում) ունեցել է շարունակական աճի միտում՝ 2021թ.-ի նկատմամբ աճելով 2 տոկոսային կետով:

Տվյալների հաղորդման ծառայություններից ստացվող եկամուտը իր հերթին բաժանվում է լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններից (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների) և շարժական բջջային կապի ցանցով մատուցվող ծառայություններից (հեռախոսի միջոցով) ստացվող եկամուտների: Ստորև ներկայացված են 2022թ.-ի տարեվերջի դրությամբ օպերատորների մասնաբաժինները ըստ տվյալների հաղորդման եկամտի բաղադրիչների.

հազար ՀՀ դրամ	Տելեկոմ Արմենիա	Յուքոմ	ՄՏՍ Հայաստան
եկամուտներ տվյալների հաղորդման ծառայություններից, որից	**22%**	**11%**	**68%**
լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտվողների)	12%	66%	22%
շարժական բջջային կապի ցանցով մատուցվող ծառայություններից (հեռախոսի միջոցով)	23%	4%	73%

Ստորև աղյուսակով ներկայացված է օպերատորների շարժական կապի ծառայությունների վաճառքից մեկ ակտիվ բաժանորդին ընկնող միջին ամսական հասույթի (ARPU) դինամիկան.

ՀՀ դրամ		2019 IV եռ.	2020 IV եռ.	2021 IV եռ.	2022 IV եռ.
կանխավճարային բաժանորդներ	Տելեկոմ Արմենիա	1,173	1,134	1,076	1,127
	Յուքոմ	990	1,053	1,165	1,391
	ՄՏՍ Հայաստան	1,321	1,369	1,380	1,413
հետվճարային բաժանորդներ	Տելեկոմ Արմենիա	3,663	3,143	3,416	3,121
	Յուքոմ	3,790	3,664	3,593	3,212
	ՄՏՍ Հայաստան	2,972	2,957	3,222	3,032
լայնաշերտ ինտերնետի Բաժանորդներ (բացառությամբ հեռախոսասարքերի միջոցով)	Տելեկոմ Արմենիա	1,340	1,192	833	478
	Յուքոմ	2,262	1,996	1,824	1,923
	ՄՏՍ Հայաստան	1,910	1,738	1,539	1,348

3.4.3.2 *Ամրակցված կապի շուկա*

Ամրակցված կապի շուկան ընդհանուր առմամբ կարելի է բաժանել ձայնային և ինտերնետ ծառայությունների շուկաների:

Համաձայն ՀԾԿՀ ՀՀ բնակավայրերում հանրային ամրակցված (ֆիքսված) կապի հասանելիության (ներթափանցելիության) ապահովման աշխատանքների վերաբերյալ վերլուծական տեղեկանքի 2023թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում գործում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի 204 լիցենզավորված օպերատոր, այդ թվում՝ ամրակցված (ֆիքսված) հեռախոսակապի ծառայություններ մատուցող 13 օպերատոր: 2022թ.-ի ընթացքում լիցենզավորված 23 օպերատորներից 15-ին տրամադրվել է ցանցի լիցենզիա՝ մարզային բնակավայրերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար:

Ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունները մատուցվում են պղնձալարային (xDSL), օպտիկամանրաթելային (FTTB/H, FTTx), լարային

Ethernet, 450 ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում աշխատող անլար ամրակցված[47] CDMA և այլ տեխնոլոգիաների հիման վրա:

Ամրակցված հեռախոսակապի անլար տեխնոլոգիաներով ծառայությունների հասանելիությամբ ապահովված է 996 (99.4%) բնակավայր (ՀՀ-ում առկա է 1001 բնակավայր): Նշված ցուցանիշն արձանագրվել է ՀԾԿՀ որոշումների համաձայն՝ ՀՀ մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսակապի արդիականացման՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի լիցենզիոն պարտավորությունների կատարման արդյունքում:

2023թ.-ի հունվարի 1-ի դրությամբ 233 (23.3%) բնակավայրում հասանելի են ամրակցված հեռախոսակապի լարային տեխնոլոգիաների ծառայությունները:

Ամրակցված հեռախոսակապի անլար և լարային տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունների հասանելության բաշխվածությունը ըստ օպերատորների հետևյալն է.

- լարային տեխնոլոգիա՝ 177 բնակավայրում՝ 1 օպերատոր, 8 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 48 բնակավայրում՝ 3 և ավել օպերատոր,
- անլար տեխնոլոգիա՝ 994 բնակավայրում՝ 1 օպերատոր («Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ):

Ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների անլար տեխնոլոգիաների հասանելիությամբ ապահովված են 996 (99.5%) բնակավայր և լարային տեխնոլոգիաների կիրառմամբ՝ 698 (69.7%) բնակավայր, որը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 11.1%-ով (70 բնակավայրով): Ընդ որում, 666 բնակավայրերում (66.5%) հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը, որը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 17.9%-ով (101 բնակավայրով):

Ամրակցված լայնաշերտ ինտերնետի անլար և լարային տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունների հասանելության բաշխվածխությունը ըստ օպերատորների հետևյալն է

- լարային տեխնոլոգիա՝ 252 բնակավայրում՝ 1 օպերատոր, 204 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 242 բնակավայրում՝ 3 և ավել օպերատոր (որը նախորդ տարվա համեմատ աճել է 32.2%-ով՝ 59 բնակավայրով),
- անլար տեխնոլոգիա՝ 424 բնակավայրում՝ 1 օպերատոր, 285 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 285 բնակավայրում՝ 3 և ավել օպերատոր:

Ամրակցված կապի շուկայի առաջատար 3 օպերատորներն են «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն, «Յուքոմ» ՓԲԸ-ն և «Ջիէնսի-Ալֆա» ՓԲԸ:

Բաժանորդներ

Ամրակցված ձայնային ծառայությունների շուկան անկման փուլում է, որը հիմնականում պայմանավորված է ամրակցված կապից դեպի շարժական կապ տրաֆիկի միգրացիայով, ինչպես նաև OTT ձայնային պլատֆորմների ընդլայնվող հասանելիությամբ: Ստորև

[47] 450ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում աշխատող անլար ամրակցված տեխնոլոգիան հնացած տեխնոլոգիա է, 2022թ.-ի դրությամբ վերջինիս բաժանորդների քանակը կազմել է 401 (աղբյուր՝ ՀԾԿՀ):

ներկայացված են ամրակցված հեռախոսակապի բաժանորդների քանակի դինամիկան ըստ տարիների[48].

	2016	207	2018	2019	2020	2021	2022
ամրակցված հեռախոսակապի բաժանորդներ, որից	**532,000**	**501,013**	**474,500**	**441,000**	**406,000**	**419,200**	**-**
մասնաբաժինը տնային տնտեսությունների թվաքանակից	*66%*	*60%*	*57%*	*54%*	*47%*	*47%*	*-*

2021թ.-ի դրությամբ ամրակցված հեռախոսակապի բաժանորդների 86%-ը կազմում են բնակարանային բաժանորդներ:

2022թ.-ի դրությամբ առաջատար 3 ընկերությունների ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 291,268, իսկ 2021թ.-ին՝ 344,827 (ընդհանուր ձայնային կապի բաժանորդների 82%):

Ամրակցված ինտերնետի շուկան ցուցաբերում է աճի միտում: 2022թ.-ի դրությամբ ամրակցված լայնաշերտ հասանելիությամբ բաժանորդների քանակը կազմել է 510,781, որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ աճել է 9.46%-ով: Ստորև աղյուսակով ներկայացված է ամրակցված լայնաշերտ հասանելիությամբ բաժանորդների դինամիկան ըստ տարիների.[49]

	2016	207	2018	2019	2020	2021	2022
ամրակցված լայնաշերտ հասանելիությամբ բաժանորդներ	**299,170**	**315,319**	**347,448**	**385,704**	**430,407**	**466,621**	**510,781**
մասնաբաժինը տնային տնտեսությունների թվաքանակից	*37%*	*38%*	*42%*	*47%*	*49%*	*52%*	*57%*

Ամրակցված լայնաշերտ հասանելիությամբ բաժանորդների կազմում գնալով նվազում է xDSL տեխնոլոգիայով միացված բաժանորդների քանակը, որը պայմանավորված է նոր տեխնոլոգիաներով (օպտիկամանրաթելային ցանցերով) ամրակցված ինտերնետի աճող հասանելիությամբ: 2022թ.-ի դրությամբ xDSL տեխնոլոգիայով միացված բաժանորդների քանակը 2021թ.-ի նկատմամբ նվազել է 17.22%-ով: Մինչդեռ օպտիկամանրաթելային ցանցով (FTTx) միացված բաժանորդների քանակը 2022թ.-ի դրությամբ կազմել է 401,292 բաժանորդ, որը 2021թ.-ի ցուցանիշի նկատմամբ աճել է 30%-ով:

Ստորև աղյուսակով ներկայացված է ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ շուկայի բաժանորդների բաշխվածությունը ըստ տեխնոլոգիաների.[50]

	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ բաժանորդներ, որից	**299,170**	**315,319**	**347,448**	**385,704**	**430,407**	**466,621**	**510,781**
xDSL տեխնոլոգիայով	133,364	117,968	104,693	92,897	85,107	74,818	61,932
մասնաբաժինը	*45%*	*37%*	*30%*	*24%*	*20%*	*16%*	*12%*
Օպտիկակմանրաթելային ցանցով (FTTx)	137,445	160,862	190,483	226,298	264,211	309,196	401,292
մասնաբաժինը	*46%*	*51%*	*55%*	*59%*	*61%*	*66%*	*79%*

[48] **Աղբյուր՝** Հայաստանի վիճակագրական տարեգիրք. Հիմնական հեռախոսային ապարատների քանակը, որոնք ելք ունեն ընդհանուր օգտագործման հեռախոսային ցանց
[49] **Աղբյուր՝** ՀԾԿՀ վիճակագրական ցուցանիշներ
[50] **Աղբյուր՝** *նույն տեղում*

Ethernet լարային ցանցով (ETTH), EuroDOCSIS	16,442	19,769	25,856	40,099	53,005	59,221	22,250
մասնաբաժինը	*5%*	*6%*	*7%*	*10%*	*12%*	*13%*	*4%*
Wi-MAX (IEEE 802.11) ամրակցված անլար ցանցով	11,644	13,386	23,018	23,928	26,672	22,598	24,900
մասնաբաժինը	*4%*	*4%*	*7%*	*6%*	*6%*	*5%*	*5%*
450 ՄՀց լայնաշերտ անլար ցանցով	-	3,204	3,346	2,459	1,389	765	401
մասնաբաժինը	*-*	*1%*	*1%*	*1%*	*0%*	*0%*	*0%*
Այլ	130	52	23	23	23	6	130
մասնաբաժինը	*0%*	*0%*	*0%*	*0%*	*0%*	*0%*	*0%*

Ստորև աղյուսակով ներկայացված են xDSL տեխնոլոգիայով և օպտիկամանրաթելային ցանցով (FTTx) բաժանորդների տարեկան հավելաճի տեմպերը.

	2016	2017	2018	2019	2020	2021	2022
xDSL տեխնոլոգիայով բաժանորդներ	133,364	117,968	104,693	92,897	85,107	74,818	61,932
տարեկան հավելաճի տեմպ		*-11.54%*	*-11.25%*	*-11.27%*	*-8.39%*	*-12.09%*	*-17.22%*
Օպիտակմանրաթելային ցանցով (FTTx) բաժանորդներ	137,445	160,862	190,483	226,298	264,211	309,196	401,292
տարեկան հավելաճի տեմպ		*17.04%*	*18.41%*	*18.80%*	*16.75%*	*17.03%*	*29.79%*

Առաջատար 3 ընկերությունների ինտերնետ ծառայություններից օգտվող բաժանորդների մասնաբաժինը ընդհանուր շուկայում նվազել է: 2022թ.-ի դրությամբ վերջիններիս ընդհանուր քանակը կազմել է 283,296 (ընդհանուր ամրակցված ինտերնետ բաժանորդների 55%), իսկ 2021թ.-ին՝ 272,787 (ընդհանուր ամրակցված ինտերնետ բաժանորդների 58%):

Ստորև աղյուսակով ներկայացված են 3 օպերատորների ձայնային և ինտերնետ ծառայություններից օգտվող ընդհանուր բաժանորդների մասնաբաժինները շուկայում և ՀՀ տնային տնտեսությունների քանակում.

	2019	2020	2021	2022
ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդներ	415,212	375,683	344,827	291,268
մասնաբաժինը ամրակցված ձայնային շուկայում	*94%*	*93%*	*82%*	*-*
մասնաբաժինը տնային տնտեսությունների թվաքանակից	*50%*	*43%*	*38%*	*32%*
ինտերնետ ծառայություններից օգտվող բաժանորդներ	59,149	57,791	59,462	42,628
մասնաբաժինը ամրակցված ինտերնետի շուկայում	*72%*	*64%*	*58%*	*55%*
մասնաբաժինը տնային տնտեսությունների թվաքանակից	*34%*	*31%*	*30%*	*32%*

Համաձայն Հայաստանի վիճակագրական տարեգրքի, մալուխային հեռուստատեսության բաժանորդների քանակը ցուցաբերում է կայուն աճ: Վերջինս 2020թ.-ի նկատմամբ աճել է 10%-ով:

	2016	207	2018	2019	2020	2021	2022
մալուխային հեռուստատեսության բաժանորդներ	**120,200**	**127,800**	**149,700**	**164,800**	**184,500**	**203,800**	**-**
մասնաբաժինը տնային տնտեսությունների թվաքանակից	*15%*	*15%*	*18%*	*20%*	*21%*	*23%*	*-*

Ամրակցված կապի շուկայի եկամուտներ[51]

Ամրակցված կապի շուկայի եկամուտը (հաշվարկած 3 օպերատորների համար) 2022թ.-ին կազմել է ընդհանուր 36.3 մլրդ ՀՀ դրամ՝ անցնելով 2019թ.-ի նախահամաճարակային ցուցանիշին (2020թ.-ին գրացնվել է ցուցանիշի 4% նվազում՝ հիմնականում պայմանավորված ԿՈՎԻԴ-19 համաճարակի տնտեսության վրա բացասական ազդեցությամբ): Ինտերնետ հասանելիության ծառայություններից ստացվող եկամտի մասնաբաժինը ամրակցված կապի ընդհանուր եկամտում գնալով ավելանում է, 2022թ-ին այն կազմել է 57%:

հազար ՀՀ դրամ	2019	2020	2021	2022
եկամուտներ ամրակցված կապի գործունեությունից, որից	**36,092,855**	**34,761,883**	**34,239,734**	**36,247,684**
ձայնային	6,468,282	5,650,151	5,009,696	4,444,061
մասնաբաժինը ընդհանուր եկամտում	*17.9%*	*16.3%*	*14.6%*	*12.3%*
ինտերնետ հասանելիության	18,890,795	18,664,192	19,221,508	20,654,022
մասնաբաժինը ընդհանուր եկամտում	*52.3%*	*53.7%*	*56.1%*	*57.0%*
այլ	281,020	231,498	213,145	172,239
մասնաբաժինը ընդհանուր եկամտում	*0.8%*	*0.7%*	*0.6%*	*0.5%*
փոխկապակցման և կապուղիների վարձակալության	10,452,758	10,216,042	9,795,385	10,977,362
մասնաբաժինը ընդհանուր եկամտում	*29.0%*	*29.4%*	*28.6%*	*30.3%*

Ձայնային ծառայության եկամուտները, հետևելով շուկայի միտումներին, նվազել են: Հարկ է նշել, որ ձայնային ծառայություններից եկամտի 88%-ը բաժին է ընկնում Ընկերությանը:

Ինտերնետ հասանելիության ծառայություններից ստացվող եկամուտը վերջին տարիներին ցուցաբերում է կայուն աճ՝ 2022թ.-ին աճելով 7%:

Ընկերության ամրակցված կապի եկամուտներ

Ընկերության ամրակցված կապի ծառայություններից ստացվող եկամուտները վերջին տարիներին գրանցել են աճ, որը հիմնականում պայմանավորված է տարանցիկ ծառայություններից ստացված եկամուտների աճով, վերջինիս մասնաբաժինը 2022թ.-ի արմակցված կապի ընդհանուր եկամտում կազմել է 31%՝ 2021թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ աճելով 11 տոկոսային կետով: Ամրակցված կապի ընդհանուր հասույթում ամենամեծ մասնաբաժինը հասնում է ինտերնետ ծառայություններին՝ շուրջ 34%:

Ձայնային ծառայություններից ստացվող եկամուտները շուկայում ունեն նվազման միտում՝ հիմնականում պայմանավորված տվյալների փոխանակման ծառայությունների (ինտերնետի) աճով, ամրակցված կապի ձայնային ծառայությունների միգրացիայով դեպի շարժական կապ և ձայնային կապին փոխարինող OTT տեխնոլոգիաների (WhatsApp, Viber, Skype և այլն) լայն տարածմամբ, ինչպես նաև շարժական ինտերնետ կապով ձայնային ծառայությունների

[51] **Աղբյուր՝** 3 օպերատորների կողմից ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունների «Գործառնական եկամուտներ» հոդված (չներառելով «բաժանորդային սարքավորումների և աքսեսուարների վաճառքից եկամուտը» և «այլ գործառնական եկամուտները»)

փոխարինմամբ: Ամրակցված կապի եկամուտների դինամիկան ներկայացված է ստորև աղյուսակով[52].

հազար << դրամ	2019	2020	2021	2022
Ամրակցված կապի ծառայությունների մատուցումից հասույթ, որից	**13,005,449**	**12,269,755**	**13,697,593**	**14,670,395**
ձայնային	5,939,252	5,155,973	4,535,851	3,973,924
մասնաբաժինը ամրակցված կապի եկամտում	*46%*	*42%*	*33%*	*27%*
ինտերնետ	4,910,311	4,828,506	4,862,717	4,915,014
մասնաբաժինը ամրակցված կապի եկամտում	*38%*	*39%*	*36%*	*34%*
տարանցիկ	929,144	985,260	2,732,522	4,479,964
մասնաբաժինը ամրակցված կապի եկամտում	*7%*	*8%*	*20%*	*31%*
փոխկապակցում	510,454	280,641	199,799	171,359
մասնաբաժինը ամրակցված կապի եկամտում	*4%*	*2%*	*1%*	*1%*
այլ	716,288	1,019,375	1,366,704	1,130,134
մասնաբաժինը ամրակցված կապի եկամտում	*6%*	*8%*	*10%*	*8%*

2022թ.-ի ամրակցված կապի եկամուտը 2020թ.-ի նկատմամբ գրանցել է տարեկան 9.3% աճի միջին տեմպ: Նույն ժամանակաշրջանում ինտերնետի ծառայություններից ստացվող եկամուտը գրանցել է տարեկան 0.9% աճի միջին տեմպ, իսկ տարանցիկ ծառայություններից հասույթը՝ 113.2% աճի տեմպ:

Տարանցիկ ծառայություններից հասույթի եռանիշ աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2021թ.-ից սկսած Ընկերությունը սկսեց մատուցել միջազգային IP տարանցման ծառայություններ: Միջազգային IP տարանցման ծառայություններից ստացված եկամուտի դինամիկան ներկայացված է ստորև.

հազար << դրամ	2019	2020	2021	2022
եկամուտներ տարանցիկ ծառայություններից, որից	**929,144**	**985,260**	**2,732,522**	**4,479,964**
միջազգային IP տարանցում	-	-	1,743,188	3,497,018
այլ	929,144	985,260	989,334	982,946

Ստորև ներկայացված է ինտերնետի ծառայություններից ստացվող եկամտի բացվածքը ըստ տեխնոլոգիաների.

հազար << դրամ	2019	2020[53]	2021	2022
եկամուտներ ինտերնետ ծառայություններից, որից	**4,910,311**	**4,828,506**	**4,862,717**	**4,915,014**
ADSL	4,047,260	3,733,943	2,809,393	2,113,049
մասնաբաժինը	*82%*	*77%*	*58%*	*43%*
VDSL	-	-	626,270	909,788
մասնաբաժինը	*0%*	*0%*	*13%*	*19%*
FTTB	633,716	862,260	1,127,084	1,239,037
մասնաբաժինը	*13%*	*18%*	*23%*	*25%*
FTTH	-	-	32,113	309,049
մասնաբաժինը	*0%*	*0%*	*1%*	*6%*
այլ	229,336	232,303	267,856	344,090
մասնաբաժինը	*5%*	*5%*	*6%*	*7%*

[52] **Աղբյուր՝** Ընկերության 2019-2022թթ. աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ և 2022թ. կառավարչական հաշվետվություններ

[53] Մինչև 2020թ.-ը ներառյալ VDSL-ի եկամուտները ներկայացված են ADSL-ի հետ միասին:

Ընկերության ADSL տեխնոլոգիայով ինտերնետ ծառայություններից եկամուտը ցուցաբերում է նվազման միտում, ինչը պայմանավորված է հնացած պղնձալարային ցանցով ինտերնետից դեպի օպտիկամանրաթելային ցանցով ինտերնետ ծառայությունների բաժանորդների միգրացիայով: Արդյունքում 2022թ.-ին ADSL տեխնոլոգիայով ինտերնետ ծառայություններից եկամուտը 2021թ.-ի նկատմամբ նվազել է 25%-ով:

Ընկերությունը 2021թ.-ից սկսել է մատուցել առավել բարձր արագություն ապահովող արդիական օպտիկամանրաթելային ցանցի վրա հիմնված (FTTH) ինտերնետ ծառայություններ: Ընկերությունը նպատակ ունի 2025թ.-ին FTTH տեխնոլոգիայով ինտերնետից ստացվող եկամտի մասնաբաժինը հասցնել 50%-ի:

Ստորև աղյուսակով ներկայացված է ամրակցված կապի ծառայությունների վաճառքից մեկ բաժանորդին ընկնող միջին ամսական հասույթը (ARPU) ըստ տարիների.[54]

<< դրամ	2019 IV եռ.	2020 IV եռ.	2021 IV եռ.	2022 IV եռ.
ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդներ	1,489	1,421	1,299	1,379
ինտերնետ ծառայություններից օգտվող բաժանորդներ	3,632	3,867	4,345	4,524

3.4.3.2.1 Ընկերության մրցակցային դիրքը ամրակցված կապի շուկայում

Ընկերության ամրակցված կապի շուկայի հիմնական մրցակիցներն են Յուքոմը և Ռոստելեկոմը:

Ցանցեր

Յուքոմը և Ռոստելեկոմը ամրակցված ինտերնետ շուկայում առաջարկում են օպտիկամանրաթելային ցանցի վրա հիմնված ամրակցված ինտերնետ: Ընկերությունը հիմանդրման օրվանից շահագործում է ՀՀ ազգային հանրային հեռախոսային ցանցը (PSTN), տիրապետում է ստորգետնյա խողովակաշարերի և վերգետնյա հենասյուների ենթակառուցվածքին: Վերջինս ստեղծում է լավ հնարավորություն Ընկերության համար ցանցերի կառուցման, զարգացման և սպասարկման համար:

Ընկերությունը 2008թ.-ին, շուկայում առաջարկելով ADSL պղնձալարային ցանցի հիման վրա գործող լայնաշերտ ինտերնետը, կարողացավ հաջողությամբ զարգացնել ամրակցված ինտերնետի բիզնեսը: 2009թ.-ին շուկայում առաջին անգամ Յուքոմը առաջարկեց FTTH (Fiber To The Home – Օպտիկա դեպի տուն) ինտերնետ ծառայություններ:

2012թ.-ին շուկայում Ընկերությունը առաջարկեց օպտիկամանրաթելային FTTB ցանցով (Fiber to the Building - Օպտիկա մինչև Շինություն) գործող լայնաշերտ ինտերնետի ծառայությունները: Նույն թվականին ամրակցված կապի շուկայում սկսեց ծառայություններ մատուցել Ռոստելեկոմը՝ առաջարկելով FTTH ինտերնետ ծառայություններ:

[54] **Աղբյուր՝** ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ

2018թ.-ին Թողարկողը շուկայում առաջարկեց ինտերնետ ծառայություններ VDSL օպտիկամանրաթելային ցանցի միջոցով:

2021թ.-ին Թողարկողը շուկայում առաջարկեց ինտերնետ ծառայություններ FTTH օպտիկամանրաթելային ցանցի միջոցով: Վերջինս հատկանշական է նրանով, որ Ընկերության FTTH ցանցը հիմնված է տարածաշրջանում եզակի՝ 25XGS-PON տեխնոլոգիայի վրա, որը ի տարբերություն ՀՀ շուկայում առկա GPON ցանցերի (1 Գբիթ/վրկ) ապահովում է 25 Գբիթ/վրկ արագություն:

Ընդհանուր առմամբ մրցակից օպերատորների օպտիկամանրաթելային ցանցերը (FTTB, FTTH) հասանելի են ավելի շատ բնակավայրերի/բնակչության[55], ինչը պայմանավորված է տվյալ տեխնոլոգիայով վերջիններիս կողմից շուկա ավելի վաղ մուտք գործելու հանգամանքով:

Բոլոր 3 օպերատորների ինտերնետ հասանելիությունն ապահովված է միջազգային կապուղիներով (Թողարկողը՝ դեպի Ռուսատան և Եվրոպա իրարից ֆիզիկապես և աշխարհագրորեն տարանջատված 2 կապուղիներով, Ռոստելեկոմը՝ դեպի Ռուսատան և Եվրոպա իրարից ֆիզիկապես և աշխարհագրորեն տարանջատված 3 կապուղիներով):

3 օպերատորները տիրապետում և շահագործում են սեփական օպտիկամանրաթելային ցանցերը, ինչն իրենց նաև թույլ է տալիս իրականացնել ինտերնետի մեծածախ վաճառք: Յուքոմ ընկերությունը 2011թ.-ին սկսեց տարանցիկ ինտերնետ մատակարարել Մերձավոր Արևելք: Թողարկողը տարանցիկ ինտերնետի ծառայություններ սկսեց մատուցել 2021թ.-ից:

Ամրակցված հեռախոսակապի շուկայում բոլոր երեք օպերատորները մատուցում են ծառայություններ VoIP[56] տեխնոլոգիայի հիման վրա: Թողարկողը ձայնային ծառայություններ մատուցում է նաև PSTN, ISDN և CDMA տեխնոլոգիաներով:

IPTV ծառայությունները մատուցվում են բոլոր 3 օպերատորների կողմից:

Բաժանորդներ[57]

Պատմականորեն ամրակցված կապի շուկայում բաժանորդների քանակով շուկայի առաջատար է համարվում Թողարկողը, որը հիմնականում պայմանավորված է ամրակցված հեռախոսակապի շուկայում Ընկերության պատամականորեն գերիշխող դիրքով:

Ստորև ներկայացված են 2022թ.-ի տարեվերջի դրությամբ օպերատորների ամրակցված կապի բաժանորդների քանակը.

	Տելեկոմ Արմենիա	Յուքոմ	Ռոստելեկոմ

[55] **Աղբյուր՝** օպերատորների պաշտոնական կայքեր
[56] Voice over Internet Protocol (VoIP), տեխնոլոգիա է, որը թույլ է տալիս ձայնային զանգեր կատարել՝ օգտագործելով լայնաշերտ ինտերնետ կապ՝ սովորական (կամ անալոգային) հեռախոսագծի փոխարեն:
[57] **Աղբյուր՝** 3 օպերատորների կողմից ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ

ամրակցված կապի ընդհանուր բաժանորդներ, որից	**326.907**	**130,327**	**66,161**
ձայնային ծառայություններից օգտվող	234,000	42,628	14,640
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*72%*	*33%*	*22%*
ինտերնետ ծառայություններից օգտվող	92,907	126,135	64,254
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	*28%*	*97%*	*97%*

Յուքոմի և Ռոստելեկոմի ամրակցված կապի բաժանորդներում գերակշիռ մասը (մոտ 97%-ը) բաժին է ընկնում ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդներին, իսկ Թողարկողի ամրակցված կապի բաժանորդներում գերակշիռ մասը բաժին է հասնում ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդներին:

Ստորև աղյուսակով ներկայացված է օպերատորների ամրակցված կապի բաժանորդների և վերջիններիս շուկայական մասնաբաժնի[58] դինամիկան ըստ տարիների.

		2019	2020	2021	2022
Տելեկոմ Արմենիա	ձայնային	337,790	300,163	268,844	234,000
	մասնաբաժինը	*81%*	*80%*	*78%*	*80%*
	ինտերնետ	110,201	105,810	99,515	92,907
	մասնաբաժինը	*40%*	*39%*	*36%*	*33%*
	ընդհանուր	**447,991**	**405,973**	**368,359**	**326,907**
	մասնաբաժինը	*71%*	*70%*	*67%*	*62%*
Յուքոմ	ձայնային	59,149	57,791	59,462	42,628
	մասնաբաժինը	*14%*	*15%*	*17%*	*15%*
	ինտերնետ	111,939	109,102	111,873	126,135
	մասնաբաժինը	*40%*	*40%*	*41%*	*45%*
	ընդհանուր	**122,143**	**117,465**	**118,625**	**130,327**
	մասնաբաժինը	*19%*	*20%*	*22%*	*24%*
Ռոստելեկոմ	ձայնային	18,273	17,729	16,521	14,640
	մասնաբաժինը	*4%*	*5%*	*5%*	*5%*
	ինտերնետ	55,211	58,493	61,399	64,254
	մասնաբաժինը	*20%*	*21%*	*23%*	*23%*
	ընդհանուր	**57,380**	**60,460**	**63,385**	**66,161**
	մասնաբաժինը	*9%*	*10%*	*12%*	*13%*

Ընկերությունն իր ձայնային բաժանորդների քանակով շուկայի առաջատարն է՝ 80% մասնաբաժնով: Ընկերության ներկայիս մասնաբաժինը շուկայում պատմականորեն (դիտարկված վերջին 4 տարիներին) հիմնականում պահպանվում է:

Ընկերությունն իր ինտերնետ բաժանորդների քանակով զբաղեցնում է 2-րդ տեղը՝ 33% մասնաբաժնով:

Բոլոր երեք օպերատորների ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակը նվազել է՝ ցուցաբերելով ձայնային շուկային համահունչ միտում:

[58] Շուկայական մասնաբաժինը հաշվարկված է 3 օպերատորների բաժանորդների գումարային քանակի հիման վրա

2022թ.-ին Ընկերության ինտերնետային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակը 2019թ.-ի համեմատ նվազել է տարեկան միջինում 10%-ով (CAGR)՝ պայմանավորված ավելի հին ADSL տեխնոլոգիայով ինտերնետ հասանելիությունից օգտվող բաժանորդների արտահոսքով:

Եկամուտներ[59]

2022թ.-ի դրությամբ Ընկերությունը ամրակցված կապի շուկայում եկամուտի մակարդակով զբաղեցնում է 1-ին տեղը 40% մասնաբաժնով: Դեռևս 2020թ.-ին շուկայի առաջատար էր համարվում Յուքոմը 45% մասնաբաժնով: [60]

Ստորև ներկայացված են 2022թ.-ի տարեվերջի դրությամբ օպերատորների մասնաբաժինները ըստ ամրակցված կապի եկամտի համապատասխան բաղադրիչների.

հազար ՀՀ դրամ	Տելեկոմ Արմենիա	Յուքոմ	Ռոստելեկոմ
եկամուտներ ամրակցված կապի գործունեությունից, որից	**40%**	**38%**	**21%**
ձայնային	88%	8%	4%
ինտերնետ	24%	52%	24%
ալ	38%	54%	8%
փոխկապակցում և կապուղիների վարձակալություն	53%	26%	22%

Ընկերությունը ձայնային ու փոխակապակցման և կապուղիների վարձակալության եկամտի բաղադրիչներով համարվում է շուկայի առաջատարը՝ համապատասխանաբար 88% և 53% մասնաբաժնով: Ինտերնետ ծառայության եկամտի բաղադրիչով շուկայի առաջատար է համարվում Յուքոմը՝ 52% մասնաբաժնով, մինչդեռ Թողարկողը և Ռոստելեկոմը կիսում են երկրորդ հորիզոնականը՝ 24% մասնաբաժիններով:

Օպերատորների ամրակցված ձայնային և ինտերնետային ծառայություններից եկամուտների շուկայական մասնաբաժինները պատմականորեն (դիտարկված 4 տարիներին) հիմնականում պահպանվում են, սակայն այլ է պատկերը փոխկապակցման և կապուղիների վարձակալությունից ստացված եկամուտների դեպքում, որտեղ Յուքոմը իր առաջատար դիրքերը զիջել է Թողարկողին, որը վերջինիս դեպքում պայմանավորված է այն հանգամանքով որ 2021թ.-ից Ընկերությունը սկսել է միջազգային օպերատորներին մատուցել IP տարանցման ծառայություններ: Ստորև աղյուսակով ներկայացված են օպերատորների ամրակցված կապի եկամուտների բաղադրիչների և դրանց շուկայական մասնաբաժինների պատմական միտումները.

հազար ՀՀ դրամ		2019	2020	2021	2022
Տելեկոմ Արմենիա	ձայնային	5,787,776	5,040,347	4,433,263	3,903,444
	մասնաբաժինը	*89%*	*89%*	*88%*	*88%*
	ինտերնետ	4,929,079	4,829,106	4,946,649	4,926,637
	մասնաբաժինը	*26%*	*26%*	*26%*	*24%*
	փոխկապակցում	2,136,500	2,283,739	4,253,404	5,767,470
	մասնաբաժինը	*20%*	*22%*	*43%*	*53%*

[59] **Աղբյուր՝** 3 օպերատորների կողմից ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունների «Գործառնական եկամուտներ» հոդված (չներառելով «բաժանորդային սարքավորումների և աքսեսուարների վաճառքից եկամուտը» և «այլ գործառնական եկամուտները»)

[60] Շուկայական մասնաբաժինը հաշվարկված է 3 օպերատորների եկամուտների գումարային քանակի հիման վրա

	ընդհանուր	**13,005,902**	**12,269,564**	**13,736,518**	**14,662,794**
	մասնաբաժինը	*36%*	*35%*	*40%*	*40%*
Յուքոմ	ձայնային	499,360	417,436	379,762	340,991
	մասնաբաժինը	*8%*	*7%*	*8%*	*8%*
	ինտերնետ	9,729,413	9,521,727	9,460,219	10,694,412
	մասնաբաժինը	*52%*	*51%*	*49%*	*52%*
	փոխկապակցում	6,408,028	5,720,498	3,092,257	2,820,589
	մասնաբաժինը	*61%*	*56%*	*32%*	*26%*
	ընդհանուր	**16,762,792**	**15,772,398**	**13,038,858**	**13,949,003**
	մասնաբաժինը	*46%*	*45%*	*38%*	*38%*
Ռոստելեկոմ	ձայնային	181,146	192,368	196,671	199,626
	մասնաբաժինը	*3%*	*3%*	*4%*	*4%*
	ինտերնետ	4,232,303	4,313,359	4,814,640	5,032,973
	մասնաբաժինը	*22%*	*23%*	*25%*	*24%*
	փոխկապակցում	1,908,230	2,211,805	2,449,724	2,389,303
	մասնաբաժինը	*18%*	*22%*	*25%*	*22%*
	ընդհանուր	**6,324,161**	**6,719,921**	**7,464,358**	**7,635,887**
	մասնաբաժինը	*18%*	*19%*	*22%*	*21%*

Ստորև աղյուսակով ներկայացված է օպերատորների ամրակցված կապի ծառայությունների վաճառքից մեկ ակտիվ բաժանորդին ընկնող միջին ամսական հասույթի (ARPU) դինամիկան.

<< դրամ		2019 IV եռ.	2020 IV եռ.	2021 IV եռ.	2022 IV եռ.
ձայնային ծառայություններ	Տելեկոմ Արմենիա	1,489	1,421	1,299	1,379
	Յուքոմ	693	571	493	620
	Ռոստելեկոմ	871	884	1,008	1,165
ինտերնետ ծառայություններ	Տելեկոմ Արմենիա	3,632	3,867	4,345	4,524
	Յուքոմ	7,496	7,136	7,020	7,654
	Ռոստելեկոմ	5,867	5,902	5,984	6,186

3.4.3.3 *Բացառիկ գործոններ*

Ընկերության գնահատմամբ հիմնական գործունեության կամ հիմնական շուկաների վրա բացառիկ գործոններ չեն ազդել:

3.4.3.4 *Ընկերության ուժեղ կողմերը*

Ընկերության հիմնական ուժեղ կողմերն են.

- **Ընկերությունը շարժական կապի շուկայում գնալով ամրապնդում է իր դիրքերը՝ ընդլայնելով լայնաշերտ ինտերնետի ծածկույթը և ցանցերի հասանելիությունը**
  Ընկերությունը վերջին տարիներին իրականացրել է ռադիոհասանելիության ցանցի բազային կայանների թարմացման (անցում UMTS և LTE տեխնոլոգիաների) ծրագրեր՝ զուգահեռ կառուցելով նաև նոր բազային կայաններ: Բացի այդ Ընկերությունը ստացել է նոր ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություններ, որոնց շնորհիվ Ընկերությունն էլ ավելի կընդլայնի լայնաշերտ ինտերնետի ծածկույթը և կապահովի առաջիկա տարիներին 5G ցանցի ներդրումը:
- **Ընկերությունը տիրապետում է ազգային հանրային էլեկտրոնային ցանցի ենթակառուցվածքին**

Ընկերությունը հանդիսանալով ՀՀ ազգային հանրային հեռախոսային ցանցի (PSTN) ժառանգորդ, տիրապետում է ստորգետնյա խողովակաշարերի և վերգետնյա հենասյուների ցանցային ենթակառուցվածքին, ինչը հիմք է ապահովում բարձր արագությամբ 25G-PON տեխնոլոգիայի հիման վրա FTTH ծառայության ներդրման համար: Ստորգետնյա խողովակների ենթակառուցվածքը բաղկացած է 2,722 կմ խողովակներից (1,982 կմ՝ Երևանում և 740 կմ՝ մարզերում) և 25,393 դիտահորերից (12,138 Երևանում և 13,255 մարզերում): Ստորգետնյա խողովակների բացակայության տարածքներում, ցանցն ապահովվում է թվով 60,342 վերգետնյա հենասյուներով (11,386՝ Երևանում և 48,956՝ մարզերում): Ընկերությունը արդեն իսկ ամրակացված օպտիկամանրաթելային ցանցի 25%-ը թարմացրել է NGN ցանցով, ինչի շնորհիվ բաժանորդներին առաջարկում է FTTH ծառայություններ ընդհուպ մինչև 1ԳԲ/վայրկյան ինտերնետի արագությամբ: 2022թ.-ի ընթացքում Ընկերությունը գերարագ FTTH ցանցով Հասանելի տների քանակը ավելացրել է ավելի քան 100,000-ով: Նույն ժամանակահատվածում Ընկերության FTTH բաժանորդների քանակը աճել է մոտ 5 անգամ՝ հասնելով 6,731-ի: Բացի այդ Ընկերության DWDM ցանցի թողունակության շարունակական աճը հնարավորություն է տալիս զարգացնել տվյալների փոխանցման բիզնեսը միջազգային գործընկերների հետ:

- **Ընկերությունը շուկայում հանդես է գալիս ամրակցված և շարժական կապի ծառայությունների համակցված (կոնվերգենտ) փաթեթների առաջարկով**
  Ընկերության տեխնիկական հնարավորությունները, ցանցերի ընդլայնվող ծածկույթը և կապի ծառայությունների բազմակի առաջարկները հնարավորություն են տալիս հաճախորդներին տրամադրել ծառայությունների լայն տեսականի մրցունակ գներով: Հաճախորդներին բազմակի ծառայություններ (ներառյալ համակցված փաթեթների միջոցով) առաջարկելը հանդիսանում է Ընկերության ռազմավարության կենտրոնական բաղադրիչներից մեկը: Այն թույլ է տալիս ներգրավել նոր հաճախորդներ, ինչպես նաև բարձրացնել հաճախորդների հավատարմությունը՝ բազմակի ծառայությունների ծախսարդյունավետ գներով:
- **Աճող ֆինանսական ցուցանիշներ**
  2020թ.-ին Ընկերության եկամուտները նվազեցին, ինչը հիմնականում պայմանավորված էր ՀՀ տնտեսության վրա ԿՈՎԻԴ-19 համաճարակի ազդեցությամբ: 2020թ.-ից հետո Ընկերության ֆինանսական ցուցանիշները սկսեցին վերականգնվել: Մասնավորապես, 2022թ.-ի Ընկերության ընդհանուր հասույթը 2020թ.-ի նկատմամբ աճել է միջինում տարեկան 5%-ով (CAGR): Նույն ժամանակահատվածում EBITDA-ի տարեկան միջին աճի տեմպը կազմել է 3%:
  Ընկերությունը 2022թ.-ին շարունակեց իր կապիտալ ծախսերի ծրագրերը, ինչի արդյունքում գրանցվեց դիտարկվող պատմական ժամանակաշրջանի ամենախոշոր կապիտալ ծախսերի ծավալը՝ ավելի քան 10 մլրդ ՀՀ դրամ, որը կազմում է տարվա ընդհանուր հասույթի 29.6%-ը: Ընկերության գնահատմամբ կապիտալ ծախսերի աճող ծավալները կապահովեն Ընկերության եկամուտների է՛լ ավելի բարձր աճի տեմպեր:
  Պատմականորեն Ընկերությունը պահպանել է ֆինանսական ծանրաբեռնվածության ընդունելի ցուցանիշներ.

հազար ՀՀ դրամ	2020	2021	2022
Ֆինանսական լծակի գործակից (Զուտ պարտք[61]/EBITDA[62])	0.41	0.60	1.37
Տոկոսավճարների ծածկման գործակից (EBITDA/ֆինանսական ծախսեր)	16.2	9.8	8.0

- **Ընկերությունը գործում է տեղական շուկայում, որտեղ բարձր տնտեսական աճի հետ մեկտեղ գրանցվում է նաև լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների քանակի զգալի աճ**

  ՀՀ տնտեսությունը վերջին տարում ցուցաբերել է բավականին բարձր տնտեսական ակտիվություն: ՀՀ ՀՆԱ-ի 2022թ.-ի իրական աճի տեմպը կազմել է 12.6%[63]: Նույն ժամանակաշրջանում ՀՀ կապի ծառայություններից հասույթը գրանցել է 7.8% իրական աճ[64]: 2022թ.-ի դրությամբ ՀՆԱ կառուցվածքում «Տեղեկատվության և կապ» տնտեսական գործունեության տեսակին բաժին է ընկնում 4.5%-ը, որը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ աճել է 0.83 տոկոսային կետով[65]:

  Հարկ է նշել, որ վերջին 5 տարիներին լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների (և՛ շարժական և՛ ամրակցված կապի) քանակը աճել է տարեկան միջինում 10% հավելաճի տեմպով (CAGR), իսկ միայն օպտիկամանրաթելային ցանցով (FTTx) ամրակցված ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների քանակը՝ 20.5% հավելաճի միջին տեմպով[66]:

- **Փորձառու կառավարչական թիմ և պատմականորեն ապացուցված գործառնական փորձառություն**

  Ընկերության կառավարման մարմինները բաղկացած են պյոֆեսիոնալներից, որոնք ունեն ավելի քան 10 տարվա ոլորտային փորձառություն:

  Հարկ է նշել, որ Հայկ և Ալեքսանդր Եսայանները հանդիսանում են այլ հեռահաղորդակցության ընկերության՝ «Յուքոմ» ՓԲԸ համահիմնադիրներ, նաև մինչև 2020թ.-ի ապրիլի 14-ը Հայկ Եսայանը հանդիսացել է «Յուքոմ» ՓԲԸ գլխավոր տնօրեն: Վերջիններիս կառավարման շրջանում «Յուքոմ» ՓԲԸ-ն գրավեց առաջատար դիրքեր ամրակցված և շարժական կապի շուկաներում. 2019թ.-ի դրությամբ «Յուքոմ» ՓԲԸ-ն բաժանորդների քանակով հանդիսանում էր ամրակցված ինտերնետ շուկայի առաջատարը, նույն թվականի դրությամբ «Յուքոմ» ՓԲԸ-ն բաժանորդների քանակով առաջատար էր նաև շարժական կապի լայնաշերտ ինտերնետ ծառայությունների (բացառությամբ հեռախոսասարքերի միջոցով օգտվողների) շուկայում:

  Ընկերության գնահատմամբ կառավարչական թիմի ոլորտի վերաբերյալ կոլեկտիվ գիտելիքները և առաջնորդական կարողությունները թույլ կտան շարունակել Ընկերության ռազմավարության հաջող իրականացումը:

[61] Զուտ պարտքի ցուցանիշը հաշվարկված է, որպես Ընկերության ընթացիկ և ոչ ընթացիկ բանկային վարկերի հանրագումարի և դրամական միջոցների և դրանց հանրագումարների տարբերություն

[62] Հաշվարկված է որպես տարվա գործառնական եկամտի և մաշվածության ու ամորտիզացիայի ծախսերի հանրագումար:

[63] **Աղբյուր՝** Արմստատ. www.armstat.am

[64] *նույն տեղում*

[65] **Աղբյուր՝** Արմստատ. www.armstat.am

[66] **Աղբյուր՝** ՀԾԿՀ վիճակագրական ցուցանիշեր

3.4.4 Ոլորտի կանոնակարգում և վերահսկողություն

Թողարկողի գործունեության ոլորտը և բնույթը, մասշտաբայնությունը, արտաքին/ներքին շահառուների քանակը, ինչպես նաև այլ նման գործոններ և հանգամանքներ պայմանավորում են Ընկերության գործունեությունը կանոնակարգող և վերահսկող բազմաշերտ ու բազմաբնույթ օրենսդրական կարգավորումները: Ազդագրի սույն մասում Թողարկողը ներկայացնում է ՈՉ ամբողջական ու ՈՉ սպառիչ նախաբան Ընկերության գործունեության ոլորտի կանոնակարգման ու վերահսկողության վերաբերյալ ընդհանրական պատկերացումների կազմման համար:

3.4.4.1 *Օրենսդրական կարգավորում*

Ընկերության՝ որպես էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցող սուբյեկտի ոլորտային գործունեությունը կարգավորող հիմնական օրենսդրական նորմատիվ ակտերն են (ցանկն ամբողջական չէ և ներկայացված է ընդհանրական պատկերացում կազմելու համար)՝

ՀՀ օրենքներ

- «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք
- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք
- «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենք
- «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք

ՀՀ կառավարության որոշումներ

- Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման կարգը հաստատելու մասին (2012թ. թիվ 1442-Ն որոշում)
- Ծառայության ժխտում/բաշխված ծառայությունների ժխտում (ԴՈՍ/ԴԴՈՍ (DOS/DDOS) հարձակումներից պաշտպանված ինտերնետ կապի ապահովման մասին (2016թ. թիվ №1069-Ն որոշում)
- ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը (2017թ. թիվ 346-Ն որոշում)
- Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին (2015թ. թիվ 596-Ն որոշում)

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներ

- Հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման թիվ 60 լիցենզին տրամադրելու մասին (2007թ. թիվ 341Ն որոշումը իր լրացումներով և փոփոխություններով)
- Հանրային էլեկտրոնային ցանցի լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2017թ. N155Ն որոշում)
- Ռադիոհաճախականությունների օգտագործման թույտվություններ տրամադրելու մասին որոշումներ.
  - Ռադիոռելեային կապի կայաններին վերաբերող՝
    - թիվ 330Ա (17.08.2007թ.)
    - թիվ 651Ա (14.12.2007թ.)
    - թիվ 69Ա (01.03.2023թ.)
  - Շարժական բջջային կապի բազային կայաններին վերաբերող՝
    - թիվ 187Ա (20.04.2007թ.)
    - թիվ 391Ա (01.10.2007թ.)
    - թիվ 563Ա (27.10.2010թ.)
    - թիվ 207Ա (27.04.2011թ.)
    - թիվ 79Ա (10.03.2023թ.)
    - թիվ 88Ա (22.04.2023թ.)
  - Անլար ամրակցված կապի ծառայություններին վերաբերող՝
    - թիվ 202Ա (15.09.2006թ.)

- Համարային ռեսուրսների օգտագործման թույլտվությունների տրամադրման մասին (2007թ. թիվ 683-ն որոշում)
- Համարի և կոդի զբաղեցման թույլտվության հատկացման ու օգտագործման կանոնները հաստատելու մասին (2014թ. թիվ 235Ն որոշում)
- Հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնները հաստատելու մասին (2011թ. թիվ 414ն որոշում)
- Կարճ կոդի տրամադրման կարգը հաստատելու մասին (2012թ. 210Ն որոշում)
- Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին (2022թ. թիվ 56Ն որոշում)
- Ցանցերի փոխկապակցման օրինակելի առաջարկը հաստատելու մասին (2007թ. թիվ 344Ն և 2010թ թիվ 26Ա որոշումներ)
- Ցանցերի փոխկապակցման վճարների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին (2022թ. թիվ 574Ն որոշում)
- Հանրային շարժական բջջային կապի միջազգային ռոումինգ ծառայությունների մատուցման կանոնները հաստատելու մասին (2008թ. թիվ 661Ն որոշում)
- Բջջային ցանցի Համարների տեղափոխելիության կանոնները հաստատելու մասին (2013թ.թիվ 251Ն որոշում իր փոփոխություններով)
- Կարգավորվող ծառայությունների սակագների սահմանման կարգը (2007թ. թիվ 529Ա որոշում)
- Կարգավորվող ծառայությունների ցանկը սահմանելու մասին (2008թ. թիվ 273Ա որոշում՝ փոփոխություններով)
- Կարգավորվող ծառայությունների սակագների հաստատման մասին (2007թ. թիվ 340Ն և 530Ն որոշումները իրենց լրացումներով և փոփոխություններով)

- Տարբեր սակագնային փաթեթներ սահմանելու մասին որոշումներ (2009թ.-172Ա, 2011թ.-483Ա, 2015թ.-159Ա, 2016թ.-47Ա, 2018թ.-274Ա, 2018թ.-374Ա, 2019թ.-430Ա)
- Շուկաների և ծառայությունների դասակարգման մասին (2013թ. թիվ 259Ն որոշում)
- Գերիշխող դիրք զբաղեցնելու մասին որոշումներ՝ ամրակցված կապի շուկայում (2008թ. 506Ն որոշում, 2019թ. 114Ա, 238Ա) և բջջային կապի շուկայում (ՏՄՊ -2011-386Ն)
- Վերծանումների տրամադրման կարգը (2017թ. թիվ 261Ն որոշում)
- Բջջային կապի կանխավճարային և հետվճարային հեռախոսաքարտերի տրամադրման պայմանագրերի արխիվների պահպանման ստանդարտներ սահմանելու մասին (2011թ. թիվ 285Ն որոշում իր լրացումներով)
- Բջջային և ամրակցված ցանցերի ծածկույթների մասին տեղեկատվության հրապարակում (2019թ. թիվ 1Ն որոշում)
- Ծառայության ժխտում/բաշխված ծառայությունների ժխտում (ԴՈՍ/ԴԴՈՍ (DOS/DDOS) հարձակումներից պաշտպանված ինտերնետ կապի ապահովման մասին (2017թ. թիվ 234Ն որոշում)
- Ընկերության գործունեության մասին Աուդիտի արդյունքները Հանձնաժողովին ներկայացնելու մասին (2007թ. թիվ 341Ն որոշում)
- Ամրակցված ցանցի ծառայությունների մատուցման կանոններ (2008թ. թիվ 272Ն որոշում)
- Բջջային ցանցի ծածկույթի չափորոշիչներ սահմանելու մասին (2022թ. թիվ 391Ն որոշում)
- Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման վերաբերյալ (2008թ. թիվ 471Ն)
- «Արմենտել» և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ների կողմից հաճախորդների սպասարկման գործառնական գրասենյակների ցանկը հաստատելու մասին (2007թ. թիվ 127Ն որոշում)
- Չարտոնված զանգերի կանխարգելման մասին (2021թ. թիվ 465Ն որոշում)
- Միջազգային զանգերի տերմինացիայի իրականացման կարգը (2009թ. թիվ 12Ն որոշում)
- Միջազգային կապուղիների և տվյալների հոսքերի աշխարհագրական երթուղիների համաձայնեցման կարգը հաստատելու մասին (2016թ. թիվ 122Ն որոշում)
- Այլ կարգավորվող անձանց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցերով ելքային ձայնային ծառայությունների մատուցման կարգը (2015թ 32Ն որոշում)
- Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պատշաճ ազդարարման և իրազեկման ապահովման մասին (2017թ. թիվ 578Ն որոշում)

ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որոշումներ

- Ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա տրամադրելու մասին (2021թ. 56Ա որոշում)
- Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն տալու մասին (2021թ. 203-Ա որոշում)

Ընկերության մրցակցային գործունեությունը կարգավորող հիմնական օրենսդրական նորմատիվ ակտերն են (ցանկն ամբողջական չէ և ներկայացված է ընդհանրական պատկերացում կազմելու համար)՝

- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք
- «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք
- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք

Ընկերության՝ որպես կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված արժեթղթերի թողարկող, գործունեությունը կարգավորող հիմնական օրենսդրական նորմատիվ ակտերն են (ցանկն ամբողջական չէ և ներկայացված է ընդհանրական պատկերացում կազմելու համար)՝

- «ՀՀ արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք
- Բորսայի կանոններ

3.4.4.2 *Գործունեության վերահսկողություն*

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն՝ նախարարության գործառույթներից են (ա) էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի զարգացման քաղաքականության մշակումը և իրականացումը, (բ) ՀՀ-ում համընդհանուր ծառայությունների մատուցման քաղաքականության նպատակների սահմանումը, (գ) ռադիոհաճախականությունների տիրույթի բաշխումը, (դ) արտակարգ իրավիճակ հայտարարվելու, ռազմական դրության կամ ազգային մեկ այլ արտակարգ իրավիճակի պարագայում էլեկտրոնային հաղորդակցության բոլոր ցանցերի կամ ծառայությունների կամ դրանցից ցանկացածի շահագործման և կառավարման համար պատասխանատվություն ստանձնումը, (ե) ՀՀ միջազգային համաձայնագրերով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության ոլորտին առնչվող հանձնառությունների իրականացումը, (զ) ՀՀ-ը Հեռահաղորդակցության միջազգային միության և հեռահաղորդակցության այլ միջազգային կազմակերպություններում ներկայացնելը, (է) խորհրդակցելով ՀԾԿՀ հետ՝ ստանդարտների (ներառյալ՝ ռադիոհաճախականությունների տարածումները և ցանցային համատեղելիությունը) մշակումը և այլն:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ)՝ հանձնաժողովը ինքնավար պետական մարմին է, որի նպատակն է ոլորտային ռազմավարական քաղաքականությանը համահունչ հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Հանձնաժողովը պարտավոր է (ա) դասակարգել ծառայությունները և ենթակառուցվածքները, բացառել էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման և ցանցի ոլորտում մրցակցության որևէ աղավաղումը, (բ) կարգավորել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը և ծառայությունները, (գ) հաստատել ՀՀ համարագրման պլանը և առանց խտրականության տրամադրել կարճ համարներ և կարճ կոդեր՝ անհատական կամ խմբաքանակով, (դ) մշակել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի փոխկապակցումը կարգավորող կանոնակարգեր, (ե) ուսումնասիրել և վերահսկողության ենթարկել կարգավորման ենթակա անձանց

գործունեությունը, (զ) հաստատել փոխկապակցման օրինակելի առաջարկները, (է) սահմանել համարների տեղափոխելիության ծառայության վերաբերյալ կանոնները և այլն:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ հանձնաժողովը անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը: Հանձնաժողովի լիազորությունների մեջ են մտնում (ա) ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորումը, (բ) հսկողություն է իրականացնում լիցենզիայում նշված պայմանների և օրենքի պահանջների կատարման նկատմամբ, (գ) տեսալսողական հաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների ընտրանքային դիտարկման միջոցով՝ դրանց օրենսդրության և լիցենզիայի պահանջներին համապատասխանության պարզումը, (դ) վերահսկում է տեսալսողական հաղորդումների տեխնիկական չափանիշների համապատասխանությունը Կառավարության որոշմամբ սահմանված ստանդարտներին և այլն:

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը՝ իր իրավասության շրջանակներում սեփական նախաձեռնությամբ կամ դիմումի հիմքով ուսումնասիրում է տնտեսավարող սուբյեկտների՝ այդ թվում հեռահաղորդակցության օպերատորների այն գործողությունները կամ վարքագիծը, որոնք կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել ազատ տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերին: Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործող անձանց նկատմամբ տնտեսական մրցակցության գործառույթները հանձնաժողովն իրականացնում է ՀԾԿՀ-ի հետ համագործակցության սկզբունքի հիման վրա:

3.5 Թողարկողի խմբի կառուցվածքը

3.5.1 Խմբի կառուցվածքը

Ընկերությունը իր միակ բաժնետեր «Թիմ» ՓԲԸ-ի, ինչպես նաև վերջինիս հսկողության տակ գտնվող «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի, «Թիմ Փեյ» ՓԲԸ-ի և «Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ի հետ միասին հանդիսանում են մեկ խմբի անդամ: Խմբի իրական շահառուներն են Հայկ և Ալեքսանդր Եսայանները, որոնցից յուրաքանչյուրին պատկանում է Հիմնական բաժնետիրոջ բաժնետոմսերի 50%-ը:

Ստորև ներկայացված է Խմբի սխեմատիկ կառուցվածքը..



3.5.1.1 *«Թիմ» ՓԲԸ*

«Թիմ» ՓԲ ընկերությունը գործունեություն է իրականացնում հեռահաղորդակցության ոլորտում հետևյալ լիցենզիաների հիման վրա.

1. **Հանրային էլեկտրական հաղորդակցության ցանցի օգտագործման և գործունեության լիցենզիա ԼԿ թիվ 1324 տրված ՀԾԿՀ կողմից**

   «Թիմ» ՓԲԸ-ն վերոնշյալ լիցենզիայի հիման վրագործունեություն է ծավալում միջազգային «ԱյՓի» տարանցման ծառայությունների շուկայում:

2. **Հեռուստատեսության ցանցի օպերատորի գործունեության լիցենզիա ԿՀ թիվ 281 տրված Հեռուստատեսության և Ռադիոյի հանձնաժողովի կողմից**

   Թողարկողը հեուստատեության ծառայությունների շրջանակներում հեռուստաալիքների (տեսալսողական ծրագրերի) վերահաղորդումն իրականացնում է «Թիմ» ՓԲԸ հետ միասին, իսկ տեսադարանի բովանդակությունն առավելապես ապահովվում է «ԹԻՄ» ՓԲԸ-ի կողմից:

3.5.1.2 *«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ*

«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ն ծրագրային ապահովման մշակման ընկերություն է, որը կենտրոնացած է էլեկտրոնային կառավարման (e-government) և ձեռնարկություններ համար լուծումների մշակման վրա, որոնք ուղղված են բիզնեսի արտադրողականության բարձրացմանը, գործընթացների ավտոմատացմանը՝ գործառնական ծախսերը նվազեցնելու և հաճախորդների փորձը բարելավելու նպատակով:

3.5.1.3 *«Թիմ Փեյ» ՓԲԸ*

Ընկերությունը 2021թ.-ի նոյեմբերի 23-ին ստացել է վճարահաշվարկային կազմակերպության թիվ 26 լիցենզիան: Ըստ որի իրականացնում է դրամական (փողային) փոխանցումներ, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ:

3.5.1.4 *«Թիմ Սիսթեմս» ՓԲԸ*

«Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ն զբաղվում է էլեկտրոնային և հեռահաղորդակցական սարքավորումների ու դրանց մասերի մեծածախ առևտրով:

3.6 Թողարկողի հիմնական միջոցները

3.6.1 Հիմնական միջոցները

Թողարկողի հիմնական միջոցների մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև աղյուսակով.

	Զուտ հաշվեկշռային արժեքը (հազար ՀՀ դրամ)
Շենքեր, հող և կառուցվածքներ	2,289,132
Փոխանցող հարմարանքներ	4,965,707
Սարքավորումներ	8,652,241
Տրանսպորտային միջոցներ	494,252
Հարմարանքներ և կցամասեր	885,812
Անավարտ շինարարություն	4,288,605
Ընդամենը	**21,578,740**

Ազդագրի ներկայացման օրվա դրությամբ ընկերության սեփականությանն են պատկանում 204 անշարժ գույք՝ Երևանում (54,957.19 քմ ընդհանուր մակերեսով) և մարզերում (104,043.4 քմ ընդհանուր մակերեսով): Ստորև ներկայացված են խոշորագույն 20 գույքերի հասցեները.

ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ազատության պողոտա 24/1
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Սուրբ Մ. Մաշտոցի փողոց, 4 շենք
ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Վ. Վանթյան փողոց 1
ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ե. Չարենցի փողոց, 76 շենք, 2 շինություն
ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ե. Չարենցի փողոց, 76 շենք, 1 շինություն
ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Օհանովի փող. 50/3
ՀՀ, ք. Երևա,ն Ավան, Աճառյան փողոց 20
ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Ֆրունզեի փողոց 20
ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն, Դավթաշեն 3-րդ թաղամաս, 25/1
ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Բաշինջաղյան փողոց 177, ԱՀԿ-34/35
ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գորկու փող. թիվ 65
ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Հ. Հովսեփյան փողոց 15, վարչական շենք
ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Նորքի 5-րդ փողոց 19
ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 18/1-2, վարչական շենք
ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ե. Չարենցի փողոց 76/11
ՀՀ, ք. Երևան, Նոր-Նորք, Ա. Միկոյան փող. 15/3
ՀՀ, ք. Երևան, Նոր-Նորք, Ս. Սաֆարյան փողոց 5
ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ե. Չարենցի փողոց 76/10

ՀՀ, Կոտայքի մարզ, Ջրվեժ գյուղ, Ջրվեժ 3-րդ դաշտի թիվ 1/6, Օրբիտա-2
ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Թբիլիսյան խճուղի 35

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության՝ 3,987,644 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները գրավադրված են Ընկերության վարկային պարտավորությունների դիմաց: Նույն ամսաթվի դրությամբ գրավադրված հիմնական միջոցների շուկայական արժեքը կազմել է 38.5 մլրդ ՀՀ դրամ: Գրավադրված հիմնական միջոցների տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

	Զուտ հաշվեկշռային արժեքը (հազար ՀՀ դրամ)
Շենքեր, հող և կառուցվածքներ	1,753,197
Փոխանցող հարմարանքներ	2,158,327
Ընդամենը	**3,987,644**

Ընկերությունը իր գործունեությունն իրականացնելու համար վարձակալում է տարբեր գրասենյակներ և տեխնիկական տարածքներ: 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վարձակալած գույքի (օգտագործման իրավունքի ձևով ակտիվների) հաշվեկշռային արժեքը կազմել է 3.5 մլրդ ՀՀ դրամ:

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վարձակալած գույքի վրա կատարված կապիտալ ծախսերի համախառն գումարը կազմել է շուրջ 1.2մլրդ ՀՀ դրամ:

Թողարկողը գործում է հեռահաղորդակցության ոլորտում, որը պահանջում է էական ծավալի շարունակական կապիտալ ներդրումներ՝ ծառայությունների որակը պահպանելու, նոր տեխնոլոգիաներ ներդնելու և կիրառելու, ինչպես նաև ծառայությունների առաջարկը ընդլայնելու համար: Ընկերությունը նախատեսում է ֆինանսավորել հիմնական միջոցների ձեռքբերումն ինչպես սեփական միջոցներով, այնպես էլ փոխառու միջոցներով: Ազդագրի ներքո տեղաբաշխվող բաժնետոմսերից ստացվող միջոցները նույնպես ուղղվելու են հիմնական միջոցների ձեռքբերմանը:

Թողարկողի կարծիքով Ընկերության հիմնական միջոցների վիճակի գնահատականը բավարար է ընթացիկ գործունեության անխափան իրականացման համար:

3.7 Թողարկողի կապիտալ ռեսուրսները (պասիվները)

3.7.1 Սեփական կապիտալ և պարտավորություններ

Ընկերության սեփական կապիտալը 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 31.3 մլրդ ՀՀ դրամ, իսկ ընդհանուր պարտավորությունները՝ 39մլրդ ՀՀ դրամ:

Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է Ընկերության կողմից 2022թ.-ին պարտքային միջոցների ներգրավմամբ: 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային միջոցների ծավալը (հաշվարկված որպես բանկային վարկերի հաշվեկշռային արժեքների հանրագումար) կազմել է ընդհանուր պարտավորությունների 47%-ը: Նույն ամսաթվի դրությամբ պարտքային միջոցների և սեփական կապիտալի հարաբերակցությունը (Debt-to-Equity) կազմել է 0.59:

Սեփական կապիտալի և պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է Ընկերության ֆինանսական հաշվետվություններով (տես Հավելված 4):

3.7.2 Դրամական հոսքեր

Պատմականորեն Ընկերության դրամական միջոցների առաջացման հիմական աղբյուր են հանդիսացել հաճախորդներից ստացված վճարումները: 2022թ.-ի ընթացքում վերջինիս մեծությունը կազմել է 34.3 մլրդ ՀՀ դրամ, որը 2021թ.-ի նկատմամբ աճել է 7%-ով:

Ընկերության դրամական հոսքերը նաև գոյանում են ստացված վարկերից և հիմնական միջոցների վաճառքից, 2022թ.-ի ընթացքում վերջիններիս մեծությունները կազմել են համապատասխանաբար 20.5 և 1.9 մլրդ ՀՀ դրամ:

Դրամական հոսքերի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ընկերության ֆինանսական հաշվետվություններով (տես Հավելված 4):

3.7.3 Փոխառության ներգրավման պահանջ

Ընկերությունը չի պլանավորում ներգրավել հավելյալ փոխառություն:

3.7.4 Օգտագործման սահմանափակումներ

Ընկերությունը չունի կապիտալ ռեսուրսների օգտագործման այնպիսի սահմանափակումներ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի էապես ազդել վերջինիս գործունեության վրա:

3.8 Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար Թողարկողի կողմից հետազոտական և զարգացման աշխատանքներին ուղղված քաղաքականություն առկա չէ:

3.9 Արտոնագրերը և լիցենզիաները

Իր բնականոն գործունեության նպատակով Ընկերությունը ստացել է հետևյալ հիմնական լիցենզիաները/թույլտվությունները.

Թույլատվություն/Լիցենզիա	Համար	Ում կողմից	Տրված է	Գործում է մինչև
Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանց շահագործելու իրավունքը և պարտականությունը	Թիվ 60	ՀԿԾՀ	01.03.1995 (փոփոխվել է 2007թ.-ին)	03.03.2028
Ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա	ԿՀ N 311	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով,	29.04.2021	29.04.2031

Թույլատվություն/Լիցենզիա		Համար	Ում կողմից	Տրված է	Գործում է մինչև
Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)		ՔՊԼ 10711	ՀՀ Քաղաքաշինության կոմիտե	09.02.2007 (փոփոխվել է 2020թ.-ին)	Անժամկետ
Քաղաքաշինական փաստաթղթերի ինժիներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա		ՔՊԼ 17071	ՀՀ Քաղաքաշինության կոմիտե	12.04.2019 (փոփոխվել է 2020թ.-ին)	Անժամկետ
Ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություններ					
700 ՄՀց տիրույթ	713-723 ՄՀց 768-778 ՄՀց	1327	ՀԾԿՀ	10.03.2023	14.03.2033
	723-733 ՄՀց 778-788 ՄՀց	1328	ՀԾԿՀ	22.03.2023	24.03.2033
900 ՄՀց տիրույթ	890-902.5 ՄՀց 935-947.5 ՄՀց	0855	ՀԾԿՀ	27.10.2010	03.03.2028
1800 ՄՀց տիրույթ	1735 – 1760 ՄՀց 1830 - 1855 ՄՀց	0124	ՀԾԿՀ	20.04.2007	03.03.2028
		0931	ՀԾԿՀ	27.04.2011	03.03.2028
		1277	ՀԾԿՀ	23.04.2019	25.04.2029
		1281	ՀԾԿՀ	19.06.2019	20.06.2029
	1780-1785 ՄՀց 1875-1880 ՄՀց	1333	ՀԾԿՀ	12.04.2023	14.04.2033
2100 ՄՀց տիրույթ	1965-1980 ՄՀց 2155-2170 ՄՀց	0177	ՀԾԿՀ	01.10.2007 16.03.2016	03.03.2028

3.10 Զարգացման վերջին միտումները

Շարժական կապի ծառայություններ[67]

2023թ.-ի առաջին եռամսյակի դրությամբ Ընկերության շարժական կապից եկամուտները (բացառությամբ բաժանորդային սարքավորումների և աքսեսուարների վաճառքից ստացվող եկամուտների) կազմել է 4.6 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 8.3%-ով: Նույն ժամանակահատվածի հետ համեմատած Ընկերության տվյալների հաղորդման ծառայություններից ստացվող եկամուտը գրացնել է 17.4% աճ:

2023թ.-ի առաջին եռամսյակի վերջի դրությամբ Ընկերության շարժական կապի բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 951,967, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ աճել է 3.9%-ով, իսկ 2022թ.-ի տարվերջի ցուցանիշի նկատմամբ նվազել է 0.7%-ով (պայմանավորված առաջին եռամսյակում նվազման պատմական միտումով):

Ամրակցված կապի ծառայություններ[68]

2023թ.-ի առաջին եռամսյակի դրությամբ Ընկերության ամրակցված կապից եկամուտները (բացառությամբ բաժանորդային սարքավորումների և աքսեսուարների վաճառքից ստացվող

[67] **Աղբյուր՝** ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ
[68] **Աղբյուր՝** ՀԾԿՀ ներկայացվող տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ

եկամուտների) կազմել է 3.3 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 9%-ով: Նույն ժամանակահատվածի հետ համեմատած Ընկերության ինտերնետ ծառայություններից ստացվող եկամուտը գրացնել է 7% աճ:

2023թ.-ի առաջին եռամսյակի վերջի դրությամբ Ընկերության ամրակցված կապի բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 320,223, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ նվազել է 11%-ով, որը պայմանավորված է ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի նվազմամբ (շուրջ 13%-ով):

Հարկ է նշել, որ 2023թ.-ի առաջին եռամսյակի վերջի դրությամբ FTTH բաժանորդերի քանակը կազմել է 8,653 բաժանորդ, որը 2022թ.-ի տարվերջի ցուցանիշի նկատմամբ աճել է 29%-ով:

3.11 Թողարկողի կառավարման մարմինները և անդամները

3.11.1 Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը

Թողարկողի կառավարման մարմիններն են՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Խորհուրդը և Գլխավոր տնօրենը:

Թողարկողի կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է (այսուհետ՝ նաև Ընդհանուր Ժողով): Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով ֆինանսական տարվա ավարտից հետո՝ փետրվար ամսից մինչև հունիսի 30-ն ընկած ժամկետում:

Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով և Ընկերության կանոնադրությամբ վերապահված են Ընդհանուր ժողովի և Ընկերության գործադիր մարմնի իրավասությանը:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը: Ընկերության Գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ Ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի: Խորհրդի կողմից Ընկերության Գլխավոր տնօրենին նշանակելուց հետո, Ընկերությունը նրա հետ կնքում է պայմանագիր, որը Ընկերության անունից ստորագրում է խորհրդի նախագահը կամ նրա պարտականությունները կատարող խորհրդի այլ անդամը:

3.11.1 Կառավարման մարմինների իրավասությունները

3.11.1.1 *Ընդհանուր ժողով*

Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը
2. Ընկերության վերակազմակերպումը
3. Ընկերության լուծարումը
4. Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը
5. Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում: Նշված հարցերը կարող են քննարկվել նաև Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովներում, եթե վերջինս որոշում է կայացրել Ընկերության տնօրենների խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին
6. Ընկերության տնօրենների խորհրդի անդամի և նախագահի աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը
7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի, ինչպես նաև Ընկերության տնօրենների խորհրդի նիստերի վարման (գումարման, անցկացման) կարգը սահմանող ներքին փաստաթղթերի հաստատումը
8. հայտարարված բաժնետոմսերի քանակի, անվանական արժեքի, դասի(տեսակի) և այդ բաժնետոմսերով տրամադրվող իրավունքների սահմանումը
9. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը
10. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի՝ Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը

11. բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) և բաժանում
12. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովներում՝ Ընկերության խորհրդի ներկայացմամբ: Ընկերության ստորաբաժանումների, դուստր և կախյալ ընկերությունների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը կարող է քննարկվել նաև բաժնետերերի արտահերթ ժողովներում
13. խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում
14. շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում
15. առևտրային կազմակերպությունների այլ միությունների, դուստր և կախյալ ընկերությունների հիմնադրումը և մասնակցությունը
16. կանոնադրությամբ և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

3.11.1.2 *Տնօրենների Խորհուրդ*

Խորհրդի իրավասություններն են.

1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Ընկերության ռազմավարության, հեռանկարային ծրագրերի, միջանկյալ և երկարաժամկետ բիզնես ծրագրերի, տարեկան բիզնես ծրագրի հաստատումը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև Ընկերության տարեկան բյուջեի հաստատումը
2. Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, եթե դա պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տարածքում Ընկերության գտնվելու վայրի փոփոխությամբ կամ Ընկերության հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի վերաբերյալ դրույթներ սահմանելով
3. Ընկերության գործադիր մարմնի գործունեության վերահսկողությունը, գնահատումը (ներառյալ՝ խրախուսման և պատասխանատվության միջոցների կիրառումը), այդ թվում Խորհրդի որոշումների իրականացման կատարողականի խախտման դեպքերում իրականացվող միջոցառումների սահմանումը
4. բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի
5. բաժնետերերի ընդհանուր ժողովների օրակարգի հաստատումը

6. բաժնետերերի ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու, ինչպես նաև այն բոլոր հարցերի լուծումը, որոնք կապված են բաժնետերերի ընդհանուր ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են տնօրենների խորհրդի իրավասությանը՝ Օրենքին համապատասխան
7. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 14-րդ, 18-20-րդ, 22-րդ և 23-րդ կետերով նախատեսված հարցերի ներկայացումը բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը և լուծմանը
8. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը
9. պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը
10. գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով
11. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և արժեթղթերի ձեռք բերումը և հետգնումը
12. Այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ
13. Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը (գլխավոր տնօրեն, վարչություն) և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը
14. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը
15. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը
16. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը
17. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը
18. Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (բացառությամբ խորհրդի նախագահի և անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը
19. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը և դրանց ներկայացումը բաժնետերերի ընդհանուր ժողովին
20. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը
21. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը (բացառությամբ այն փաստաթղթերի, որոնց հաստատումը սույն կանոնադրությամբ վերապահված է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը)
22. Ընկերության քաղաքականությունների հաստատումը (ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և շահութաբաժինների քաղաքականությունը)
23. Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը
24. Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում

25. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով
26. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի IX գլխով նախատեսված շահագրգռվածությամբ գործարքների կնքումը
27. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը
28. Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի (բյուջեի) և դրա կատարողականի հաստատումը, ինչպես նաև վերանայված (ճշգրտված) բյուջեի հաստատումը
29. Ընկերության հաստիքացուցակի հաստատումը՝ Ընկերության գործադիր մարմնի ներկայացմամբ
30. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ և /կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված Ընկերության տնօրենների խորհրդի կանոնակարգով իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

3.11.1.3 *Գործադիր մարմնի ղեկավար – գլխավոր տնօրեն*

Ընկերության Գործադիր մարմնի ղեկավար գլխավոր տնօրենը.

1. կազմակերպում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը
2. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից
3. ներկայացնում է Ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում
4. գործում է առանց լիազորագրի
5. տալիս է լիազորագրեր: ՀՀ դատարաններում և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, ՀՀ այլ պետական մարմիններում բոլոր դատական գործերի առնչությամբ Ընկերության շահերը ներկայացնելու և Ընկերության անունից հանդես գալու, ինչպես նաև վերոնշյալի համար անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու հետ կապված լիազորագրեր տրամադրելու իրավասություն ունեն նաև Ընկերության իրավաբանական տնօրենը և/կամ հաճախորդների սպասարկման բաժնի տնօրենը
6. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային
7. աշխատակիցների նկատմամբ իրականացնում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված գործատուի իրավունքներն ու պարտականությունները
8. Բանկերում, այլ վարկային կազմակերպություններում (ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակից կազմակերպություններում) Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ է բացում
9. Ընկերության տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը
10. արձակում է հրամաններ, հաստատում է Ընկերության ներքին ակտերը՝ բացառությամբ Տնօրենների խորհրդի և բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ներքին փաստաթղթերի, տալիս է Ընկերության բոլոր աշխատակիցների կողմից կատարման համար պարտադիր ցուցումներ

11. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին
12. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ
13. իրականացնում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

3.11.2 Կառավարման մարմինների անդամների տվյալները

Թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

3.11.2.1 *Թողարկողի բաժնետերեր*

Անունը, ազգանունը / Կազմակերպության անվանումը	Բնակության վայրը/Գրանցման հասցեն	Զբաղեցրած պաշտոնը	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը
«Թիմ» ՓԲԸ	ՀՀ	Ընկերության բաժնետեր, քվեարկելու իրավունքով մասնակցում է Ընդհանուր ժողովին	«Թիմ Սիսթեմս» ՓԲԸ, 100% բաժնետեր «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ, 100% բաժնետեր «Թիմ Փեյ» ՓԲԸ, 100% բաժնետեր

3.11.2.2 *Թողարկողի խորհրդի անդամները*

Անունը, ազգանունը / Կազմակերպության անվանումը	Բնակության վայրը	Զբաղեցրած պաշտոնը	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը
Ալեքսանդր Եսայան	ՀՀ	Խորհրդի նախագահ	«ԹԻՄ» ՓԲԸ 50% բաժնետեր, «Թիմ հոլդինգ» ՓԲԸ 50% բաժնետեր, «Մանդալ Էյ Այ» ՍՊԸ, գործադիր տնօրեն, «Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային ընկերակցություն» (WITSA), տնօրենների խորհրդի անդամ, «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն», նախագահ «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան», հոգաբարձուների խորհրդի անդամ, «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ», հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահ

Հայկ Եսայան	ՀՀ	Խորհրդի անդամ, Գործադիր տնօրեն	«ԹԻՄ» ՓԲԸ 50% բաժնետեր, գլխավոր տնօրեն, «Թիմ հոլդինգ» ՓԲԸ 50% բաժնետեր, գլխավոր տնօրեն, «Թիմ Փեյ» ՓԲԸ Տնօրենների խորհրդի անդամ (Նախագահ), «Կողբ» հիմնադրամ, հոգաբարձուների խորհրդի անդամ
Արամ Բարսեղյան	ՀՀ	Խորհրդի անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ	«Թիմ Փեյ» ՓԲԸ խորհրդի անդամ, «Բագետ ընդ Դելիսես» ՍՊԸ համասեփականատեր
Ալբերտ Տոնեյան	ՀՀ	Խորհրդի անկախ անդամ	«Վեբ» ՍՊԸ, հիմնադիր և տնօրեն, «Լիր» ՍՊԸ, համասեփականատեր և տնօրեն, «Երևանի պետական համալսարան» գիտական, դոցենտ, «Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» համակարգչային կենտրոն, տնօրեն, «Ինտերնետ հասարակություն» ՀԿ խորհրդի անդամ և փոխնախագահ, «ՀՀ ինտերնետ կառավարման համաժողովի» անդամ, «Արմիքս» հիմնադրամ, նախագահ
Արտավազդ Մինասյան	ՀՀ	Խորհրդի անկախ անդամ	«Քրիսփ Թեքնոլոջիս» ՍՊԸ (“Krisp Technologies” LLC), համահիմնադիր և տնօրինության նախագահ «ԹենՎեբ» ՍՊԸ, համահիմնադիր և տնօրինության նախագահ «ԲիգՍթորի ՎիՍԻ», համահիմնադիր և հիմնական մասնակից (general partner)

Հայկ Եսայանը և Ալեքսանդր Եսայանը հանդիսանում են եղբայրներ:

3.11.2.3 *Կառավարման մարմնի յուրաքանչյուր անդամի մասին*

Անունը, ազգանունը / Կազմակերպության անվանումը	Զբաղեցրած պաշտոնը Ընկերությունում	Մասնագիտությունը (որակավորումը)	Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ

Ալեքսանդր Եսայան	Խորհրդի նախագահ	ՄՖԲ ֆինանսական ակադեմիա, «Ֆինանսներ և վարկեր», Տնտեսագետի որակավորում	• «Մանդալ Էյ Այ» ՍՊԸ, գործադիր տնօրեն, 2018թ.-ից • «Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային ընկերակցություն» (WITSA), տնօրենների խորհրդի անդամ, 2018թ.-ից • «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» նախագահ, 2015թ.-ից • «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան», հոգաբարձուների խորհրդի անդամ, 2020թ.-ից • «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ», հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահ, 2022թ.-ից
Հայկ Եսայան	Խորհրդի անդամ, Գործադիր տնօրեն	ՀՊՃՀ «Հաշվողական մեքենաներ, համալիրներ և ցանցեր», Ճարտարագիտության բակալավրի աստիճան ՀՊՃՀ «Ինֆորմատիկա և կոմպյուտերային համակարգեր», մագիստրոսի Աստիճան ՄՖԲ ֆինանսական ակադեմիա, «Ֆինանսներ և վարկեր», Տնտեսագետի որակավորում	• «ԹԻՄ» ՓԲԸ, գլխավոր տնօրեն, 2020թ.-ից • «Թիմ հոլդինգ» ՓԲԸ, գլխավոր տնօրեն, 2021թ.-ից • «Թիմ Փեյ» ՓԲԸ, տնօրենների խորհրդի նախագահ, 2021թ.-ից • «Կողբ» հիմնադրամում հոգաբարձուների խորհրդի անդամ, 2013թ.-ից • «Յուքոմ» ՍՊԸ խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն, 2007 – 2020թթ.
Արամ Բարսեղյան	Խորհրդի անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ	ԵՊՀ «Արևելագիտության ֆակուլտետ», Արաբագետի որակավորում, Մագիստրոսի աստիճան	• «Թիմ Փեյ» ՓԲԸ, խորհրդի անդամ, 2020թ.-ից • «Յուքոմ» ՍՊԸ, կոմերցիոն տնօրեն, 2011 – 2020թթ.
Ալբերտ Տոնեյան	Խորհրդի անկախ անդամ	ԵՊՀ «Ֆիզիկայի ֆակուլտետ» բակալավրի աստիճան Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարան «Ֆիզիկայի ֆակուլտետ» Գիտական աստիճան	• «Վեբ» ՍՊԸ, տնօրեն, 1996թ.-ից • «Լիր» ՍՊԸ, տնօրեն, 2018թ.-ից • «Ինտերնետ հասարակություն» ՀԿ խորհրդի անդամ և փոխնախագահ, 1995թ.-ից • «ՀՀ ինտերնետ կառավարման համաժողովի» անդամ, 1995թ.-ից • «Արմիքս» հիմնադրամ, նախագահ, 2010թ.-ից
Արտավազդ Մինասյան	Խորհրդի անկախ անդամ	ԵՊՀ «Ֆիզիկայի ֆակուլտետ» բակալավրի աստիճան ԵՊՀ	• «Քրիսփ Թեքնոլոջիս» ՍՊԸ (“Krisp Technologies” LLC), տնօրինության նախագահ, 2017թ.-ից

		«Ֆիզիկայի ֆակուլտետ» մագիստրոսի աստիճան ՀԱՀ «Գործարար վարչարարության» մագիստրոսի կոչում ԵՊՀ «Մաթեմատիկայի ֆակուլտետ» Գիտական աստիճան	• «ԹենՎեբ» ՍՊԸ, տնօրինության նախագահ, 2017թ.-ից • «ԲիգՍթորի ՎիՍԻ», հիմնական մասնակից (general partner), 2021թ.-ից

Հայկ Եսայանը և Ալեքսանդր Եսայանը հանդիսանում են «Յուքում» ՓԲԸ համապատասխանաբար 2.970212% և 2.970212% բաժնետերեր: 2020թ.-ի «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ և «Թիմ» ՍՊԸ ընկերությունների համակենտրոնացումը պայմանով թույլատրելու մասին» Թիվ 282-Ա որոշմամբ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Մրցակցության հանձնաժողով) թույլատրել էր «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ և «ԹԻՄ» ՍՊԸ (այժմ՝ «Թիմ» ՓԲԸ) ընկերությունների համակենտրոնացումը «ԹԻՄ» ՍՊԸ կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ 100 տոկոս փայաբաժնի ձեռքբերման միջոցով՝ հետևյալ պայմաններով[69].

1. ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը պարտավոր են համակենտրոնացումը գործողության մեջ դնելուց հետո ձեռնպահ մնալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի «ա»[70], «բ»[71], «զ»[72], «է»[73], «ը»[74] կետերով և «Յուքում» ՓԲԸ կանոնադրության 15.6-րդ[75] կետով նախատեսված իրավունքների իրականացումից

2. ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը պարտավոր են համակենտրոնացումը գործողության մեջ դնելուց հետո ձեռնպահ մնալ «Յուքում» ՓԲԸ գործունեության վերաբերյալ օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկությունները պահանջելուց և ստանալուց:

Ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը 2020թ.-ի հուլիսի 28-ին «Յուքում» ՓԲԸ-ին և «Յուքում» ՓԲԸ-ի մնացած բաժնետերերին ներկայացրել են բաժնետիրական համաձայնագիր կնքելու մասին օֆերտա, ըստ որի սահմանվել են վերոնշյալ երկու կետերում նշված իրավունքների և գործողությունների իրականացումից Հայկ Հովիկի

[69] Մրցակցության հանձնաժողովի 2020թ.-ի Թիվ 282-Ա որոշումը ամբողջությամբ ներկայացված է հետևյալ հղմամբ https://ef.competition.am/api/decision/B4226726-646F-4979-9C69-99071443A972/download

[70] ա) մասնակցելու ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, բացառությամբ սույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

[71] բ) մասնակցել Ընկերության կառավարմանը.

[72] զ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

[73] է) հանդես գալ առաջարկություններով ժողովներում.

[74] ը) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

[75] 15.6 Ընկերության բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են) հանդիսանում, իրավունք ունի (ունեն) առաջարկել խորհրդի անդամության ոչ ավել քան 2 թեկնածու

Եսայանի և Ալեքսանդր Հովիկի Եսայանի ձեռնպահ մնալու պարտավորությունները, որը Ազդագրի գրանցման ներկայացնելու դրությամբ «Յուքոմ» ՓԲԸ մնացած բաժնետերերի կողմից չի ընդունվել:

Չնայած դրան, Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը, լինելով «Յուքոմ» ՓԲԸ համապատասխանաբար 2.970212% և 2.970212% բաժնետերեր, չեն մասնակցում «Յուքոմ» ՓԲԸ ժողովին, ընկերության կառավարմանը, իրենց իրավունքները ժողովում ներկայացնելու համար չեն լիազորում երրորդ անձի, հանդես չեն գալիս առաջարկություններով ժողովներում և չեն քվեարկում ժողովներում, ինչպես նաև չեն առաջարկում ընկերության խորհրդի անդամության թեկնածու(ներ):

3.11.3 **Շահերի բախում**

Թողարկողը իր ներքին նորմատիվային փաստաթղթերով փորձում է նվազագույնի հասցնել շահերի բախման հնարավոր և/կամ հավանական ռիսկը: Այդ նպատակով Ընկերությունում մշակվել և ներդրվել են «Փոխկապակցված անձանց հետ գործարքների քաղաքականությունը», «Շահերի բախման քաղաքականությունը», «Կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարի քաղաքականությունը» և «Վարվելակերպի կանոնակարգը»:

Թողարկողի և Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց, ինչպես նաև իրական շահառուների միջև շահերի բախում Թողարկողի կարծիքով առկա չէ, այնուամենայնիվ Թողարկողը ներկայացնում է նաև հետևյալ լրացուցիչ մեկնաբանությունները, որպես Թողարկողի գնահատական:

3.11.3.1 ***Թողարկող և Իրական շահառուներ հարաբերություններում***

2020թ.-ի ընթացքում Թողարկողի բաժնետերերի փոփոխությամբ և նոր կառավարման մարմինների անդամների նշանակմամբ տեղի ունեցավ բաժնետիրական և կառավարչական շահերի (agency problem) համահարթեցում:

3.11.3.2 ***Թողարկող և Խմբի անդամ ընկերություններ հարաբերություններում***

Թողարկողը իր հետ փոխկապակցված ընկերությունների հետ («Թիմ» ՓԲԸ, «Թիմ Սիսթեմս» ՓԲԸ, «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ, «Թիմ Փեյ» ՓԲԸ) հանդիսանում է մեկ Խմբի անդամ: Թողարկողի կարծիքով իր սովորական գործունեության ընթացքում Խմբի անդամ ընկերությունների հետ ֆինանսատնտեսական հարաբերություններում շահերի բախում առկա չէ:

3.11.3.3 ***Թողարկող և Տեղաբաշխող հարաբերություններում***

Տեղաբաշխողը և առաջնային հանրային տեղաբաշխմանը մասնակցող տարբեր մասնագիտացված ֆինանսական կազմակերպություններ ժամանակ առ ժամանակ

նախկինում մատուցել են և կարող են ապագայում մատուցել տարբեր առևտրային բանկային, ներդրումային բանկային, խորհրդատվական, միջնորդական և այլ ֆինանսաբանկային, ներդրումային, օրենքով չարգելված այլ ծառայություններ Թողարկողին, որոնց համար նրանք ստացել են կամ ապագայում կարող են ստանալ ծառայության վճարներ, պարգևավճարներ, փոխհատուցումներ կամ այլ վճարներ:

Տեղաբաշխողը և առաջնային հանրային տեղաբաշխմանը մասնակցող տարբեր մասնագիտացված ֆինանսական կազմակերպությունները ֆինանսական հաստատություններ են, որոնք զբաղվում են տարբեր գործունեությամբ, ներառյալ սակայն չսահմանափակված արժեթղթերի առևտուր, առևտրային և ներդրումային բանկային ծառայությունների մատուցում, ֆինանսական խորհրդատվություն, ներդրումներ կառավարում, հիմնական ներդրումներ, հեջավորում, ֆինանսավորում և բրոքերային գործունեություն:

Սովորական գործունեության ընթացքում Տեղաբաշխողը, ինչպես նաև Բաժնետոմսերի առաջնային հանրային տեղաբաշխմանը մասնակցող տարբեր մասնագիտացված ֆինանսական կազմակերպություններ կարող են ունենալ ներդրումային, վարկային, խորհրդատվական կամ այլ ֆինանսատնտեսական պայմանագրային և/կամ գործառնական հարաբերություններ Թողարկողի և/կամ Թողարկողի հետ փոխկապակցված անձանց հետ:

3.11.4 Պայմանավորվածություն շահառուների հետ

Չկա որևէ պայմանավորվածություն խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ, համաձայն որի որևէ անձ ընտրվել կամ նշանակվել է թողարկողի կառավարման մարմնի անդամ:

3.12 Վարձատրությունները և պարգևավճարները

3.12.1 Յուրաքանչյուր անդամի վարձատրությունը

Անունը, ազգանունը	Զբաղեցրած պաշտոնը	2022թ. ընթացքում կառավարման մարմինների յուրաքանչյուր անդամի կողմից թողարկողից և նրա դուստր ընկերություններից որպես վարձատրություն և պարգևավճար ստացված գումարները՝ ներառյալ նրանց օգտին կատարված ցանկացած ձևով փոխհատուցումները (կուտակային կենսաթոշակային հատկացումները, ապահովագրական վճարները, բաժնետոմսերի ձեռքբերման օպցիոնները և այլն)
Ալեքսանդր Եսայան	Խորհրդի նախագահ	36,000,000 ՀՀ դրամ
Հայկ Եսայան	Խորհրդի անդամ, Գործադիր տնօրեն	190,606,688 ՀՀ դրամ

Արամ Բարսեղյան	Խորհրդի անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ	71,164,825 ՀՀ դրամ

Ալբերտ Տոնեյանը նշանակվել է Ընկերության խորհրդի անկախ անդամի պաշտոնում 2023թ.-ի ապրիլ ամսին, իսկ Արտավազդ Մինասյանը նշանակվել է Ընկերության խորհրդի անկախ անդամի պաշտոնում 2023թ.-ի մայիս ամսին:

3.13 Կառավարման մարմինների գործունեությունը

3.13.1 Պաշտոնավարման ժամանակաշրջանը

Անունը, Ազգանունը	Պաշտոն	Պաշտոնավարման սկիզբ
Ալեքսանդր Եսայան	Խորհրդի նախագահ	2020թ.
Հայկ Եսայան	Խորհրդի անդամ, Գլխավոր տնօրեն	2020թ.
Արամ Բարսեղյան	Խորհրդի անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ	2020թ.
Ալբերտ Տոնեյան	Խորհրդի անկախ անդամ	2023թ.
Արտավազդ Մինասյան	Խորհրդի անկախ անդամ	2023թ.[76]

Ընկերության կառավարման մարմնի վերոնշյալ անդամները չունեն սահմանված պաշտոնավարման ժանկետներ:

3.13.2 Պայմանագրեր թողարկողի ընկերությունների հետ

Գլխավոր տնօրենի և Թողարկողի միջև կնքված աշխատանքային պայմանագրում նախատեսված է փոխհատուցում, եթե գործատուն Գլխավոր տնօրենին աշխատանքային պայմանագրի լուծման ամսաթվից 180 օր առաջ չի ծանուցում պայմանագրի լուծման մասին:

3.13.3 Թողարկողի աուդիտի կոմիտեն

Թողարկողի Խորհրդին կից Աուդիտի կոմիտեն բաղկացած է երկու անդամներից.

Անունը, Ազգանունը	Պաշտոն
Ալեքսանդր Եսայան	Խորհրդի նախագահ
Ալբերտ Տոնեյան	Խորհրդի անկախ անդամ

[76] Արտավազդ Մինասյանը Խորհրդի անկախ անդամ է ընտրվել 2023թ.-ի մայիսի 18-ի Ընկերության Ժողովի թիվ 230528 որոշման համաձայն

Ալբերտ Տոնեյանը հանդիսանում է Աուդիտի կոմիտեի նախագահ:

Կոմիտեի իրավասությունները և պարտականությունները ներկայացված են ստորև.

ա) իրականացնում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկում (ստուգում).

բ) իրականացնում է Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծություն և դրանց հաստատման վերաբերյալ խորհրդին առաջարկություններ է ներկայացնում.

գ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգում.

դ) Խորհրդին առաջարկություններ է ներկայացնում Ընկերության արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ.

ե) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկում ու վերլուծություն.

զ) տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտորի հետ.

է) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծություն և համապատասխան տեղեկատվություն է տրամադրում Խորհրդին.

ը) հետևում է Ընկերության արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացմանը.

թ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակում և հետևում է դրանց ներդրմանը:

3.13.4 **Կորպորատիվ կառավարման սկզբունքները**

Թողարկողը՝ հանդիսանալով բաժնետիրական ընկերություն (Բորսայում Բաժնետոմսերի ցուցակման դեպքում նաև՝ հաշվետու թողարկող), իր գործունեության ընթացքում առաջնորդվում է բաժնետիրական ընկերությունների և հաշվետու թողարկողների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կորպորատիվ կառավարման պահանջներով:

Մինչ Թողարկողի մոտ ՀՀ բաժնետեր դառնալը ՀՀ կառավարության 30.12.2010 թվականի N 1769-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի լրացուցիչ ցուցումների կիրառման օրակարգային անհրաժեշտություն Թողարկողի մոտ չի առաջացել: Սակայն հաշվի առնելով, որ որոշման 2-րդ կետով ցուցվում է ՀՀ պետական կառավարման

մարմինների ղեկավարներին՝ պետական գնումների գործընթացի, պետություն-մասնավոր հատված գործընկերության, պետական աջակցության, հարկային կամ մաքսային արտոնությունների տրամադրման ժամանակ ղեկավարվել ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջները կատարող ընկերություններին նախապատվություն տալու սկզբունքով, Ընկերությունը նախատեսում է ապագայում իրականացնել ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի լրացուցիչ ուսումնասիրություն և դրանում պարունակվող ցուցումների կիրառելիության հնարավորության վերլուծություն:

3.14 Աշխատակիցները

3.14.1 Աշխատակիցների թվաքանակը

Ստորև ներկայացված են տարեվերջի դրությամբ Թողարկողի աշխատակիցների թվաքանակը.

	2020	2021	2022
Աշխատակցիների ընդհանուր թվաքանակ, որից	**2,158**	**1,899**	**1,911**
Երևան քաղաքում	1,452	1,309	1,302
մարզերում	706	590	609

3.14.2 Արժեթղթերի մասին տեղեկատվություն

Թողարկողի կառավարման մարմնի ոչ մի անդամ չունի Ընկերության բաժնային արժեթղթեր և դրանց նկատմամբ օպցիոններ:

Պետք է նշել, որ Հայկ և Ալեքսանդր Եսայանները հանդիսանում են Թողարկողի իրական շահառուներ:

3.14.3 Գործող ծրագրեր

Ազդագիրը գրանցման ներկայացնելու դրությամբ Ընկերությունը չունի աշխատակիցների բաժնետիրացման ծրագիր:

Բացի այդ Թողարկողը պարտավորվում է չներդնել աշխատակիցների բաժնետիրացման ծրագիր Բաժնետոմսերի՝ Բորսայում ցուցակման և/կամ առևտրին թույլատրման օրվան հաջորդող 12 ամսվա ընթացքում:

3.15 Հսկող անձինք

3.15.1 Խոշոր բաժնետերերի տվյալները

«Թիմ» ՓԲԸ-ն Ընկերության միակ բաժնետերն է, իսկ Հայկ և Ալեքսանդր Եսայանները հանդիսանալով «Թիմ» ՓԲԸ-ի 100% բաժնետերեր (յուրաքանչյուրը՝ 50-ական տոկոս)՝ համարվում են Թողարկողի իրական շահառուներ:

Հայկ և Ալեքսանդր Եսայանները որպես «Թիմ» ՓԲԸ բաժնետեր ունեն ձայնի միևնույն իրավունքները:

3.15.2 Հսկողության տակ գտնվելու մասին տեղեկատվություն

Ընկերությունը վարկային պայմանագրերի շրջանակներում վարկատու ֆինանսական կառույցների և մասնագիտացված առևտրային միջնորդ կազմակերպությունների հանդեպ ստանձնել է որոշակի պարտավորություններ, ինչպիսիք են տեղյակ պահել կամ ստանալ նրանց հավանությունը հետագայում նոր վարկային պարտավորություններ ներգրավելու կամ որոշակի գործողություններ անելու և/կամ որոշակի գործողությունների անելուց զերծ մնալու համար, նման պայմանագրերի շրջանակներում Թողարկողը կարող է ունենալ որոշումների կայացման սահմանափակումներ, հետևաբար այդ տեսանկյունից հետևյալ անձիք ԿԱՐՈՂ են համարվել վերապահումով հսկող անձ՝

1. **Միջազգային ֆինանսական կորպորացիա (IFC-Internation Finance Corporation), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD-European Bank for Reconstruction and Development), Ամերիաբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Վարկատուներ):**

Ընկեության նկատմամբ վարկային պայմանագրի շրջանակներում կիրառվող սահմանափակումները (կովենանտները) ներկայացված են Ազդագրի 3.2.29.1 կետով:

3.16 Փոխկապակցված անձանց հետ գործարքները

3.16.1 Պատմական գործարքներ փոխկապակցված անձանց հետ

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսատնտեսական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Անմիջական մայր ընկերություն	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ
Ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 7.5-10.3%)	11,635,786	-
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 0%)	5,425,111	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	2,166,338	
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	529,637	370,646
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	1,604,777	123,699
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	-	30,847
Պարտավորություններ		
Ստացված կանխավճարներ	-	109,259
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	154,739

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Անմիջական մայր ընկերություն	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ
Ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 7.5-8%)	6,134,512	-
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 0%)	4,820,849	-
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	976,804	4,749
Պարտավորություններ		
Տրամադրված երաշխիքներ	1,907,669	-
Ստացված կանխավճարներ	-	1,844,005
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	80	218,854

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար փոխկապակցված կողմերի հետ գործարքներից եկամուտները և ծախսերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Անմիջական մայր ընկերություն	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ
Ծախսեր		
Ծառայությունների ձեռքբերում	496,149	37,647
Կառավարման ծառայություններ	435,000	-
Եկամուտներ		
Ծառայությունների տրամադրում	1,963,130	10,893
Ակտիվների վաճառք	9,025	904,491
Տոկոսային եկամուտ	1,261,196	-
Այլ գործարքներ		
Տրված փոխառություններ	10,357,819	-

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա փոխկապակցված կողմերի հետ գործարքներից եկամուտները և ծախսերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Անմիջական մայր ընկերություն	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ
Ծախսեր		
Ծառայությունների ձեռքբերում	261,784	25,120
Կառավարչական վճարներ	256,667	-
Եկամուտներ		
Ծառայությունների տրամադրում	4,234	7,142
Տոկոսային եկամուտ	744,769	-
Այլ գործարքներ		
Տրամադրված փոխառություններ՝ դրամական	7,537,928	-

Ղեկավար անձնակազմի հատուցում. Ղեկավար անձնակազմ են համարվում գլխավոր տնօրենը, գլխավոր տնօրենի տեղակալը, ֆինանսական տնօրենը, գործառնությունների տնօրենը, տեխնիկական տնօրենը, կոմերցիոն տնօրենը և Խորհրդի անդամը:

Ղեկավար անձնակազմին հատուցումը ներկայացված է ստորև.

	2022թ.		2021թ.	
Հազ. ՀՀ դրամ	Ծախս	Հաշվեգրված զուտ պարտավորություն	Ծախս	Հաշվեգրված զուտ պարտավորություն
Կարճաժամկետ հատուցումներ.				
- Աշխատավարձ	491,092	57,459	499,088	52,422
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	27,891	-	20,648	-
Ընդամենը	**518,982**	**57,459**	**519,736**	**52,422**

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները Ընկերությունն իրականացրել է «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքով:

3.16.2 Չմարված փոխառություններ և(կամ) երաշխիքներ

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից անմիջական մայր ընկերությանը՝ «Թիմ» ՓԲԸ-ին տրամադրված փոխառությունների համախառն ծավալը կազմել է 21,200,570 հազ. ՀՀ դրամ, որից 20,453,563 հազ. ՀՀ դրամը՝ ԱՄՆ դոլարով:

Փոխառությունները տրամադրվել են 2020թ.-ի նոյեմբերի 12-ից մինչև 2022թ.-ի հունիսի 14-ը ընկած ժամանակահատվածում մի քանի փոխառությունների պայմանագրերի ներքո, որոնց մարման ժամկետները տարբեր են՝ 2026թ.-ի մարտից մինչև 2029թ. դեկտեմբեր: Փոխառությունները տրամադրվել են «Թիմ» ՓԲԸ-ին, որպեսզի վերջինս սպասարկի և մարի Ընկերության ձեռքբերման համար ստացված վարկային միջոցները:

3.17 Ֆինանսական վիճակ և արդյունք

3.17.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Ընկերության 2020-2022թթ. աուդիտորական եզրակացությամբ ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հավելված 4-ում:

3.17.2 Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2022թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո մինչև ազդագրի գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

3.17.3 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթներ

Թողարկողը՝ որպես պատասխանող, ներգրավված է մի շարք դատական գործերում, որոնց մի մասը կարող է Թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունենալ:

Թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական գործերը ներկայացված են ստորև.

1. 2018թ.-ի հունիսին «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ նախկին աշխատակից Մերուժան Միքայելյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Ընկերության՝ Ընկերության Խորհրդի որոշումն անվավեր ճանաչելու, աշխատավարձը բռնագանձելու, հայցվորին իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը համապատասխան աշխատանքով ապահովելուն պարտավորեցնելու պահանջներով:

   Դատական գործի քննության (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում, ՀՀ վճռաբեկ դատարանում) արդյունքում կայացված և օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով (ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/12355/02/18 քաղաքացիական գործով 06.07.2022թ. որոշմամբ) որոշվել է.

   - Մերուժան Վարազդատի Միքաելյանի հայցն ընդդեմ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի բավարարել մասնակի՝ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ից հօգուտ Մերուժան Վարազդատի Միքաելյանի բռնագանձել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, սկսած 09.05.2018թ. մինչև սույն դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում միջին աշխատավարձի կրկնապատիկի չափով: Դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից 07.03.2018թ. թիվ 6537/2 աշխատանքային պայմանագիրը համարել լուծված:

   - Մերուժան Վարազդատի Միքաելյանի հայցը՝ մնացած մասով մերժել:

Ընկերության կողմից վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է շուրջ 384,468,036 ՀՀ դրամ:

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա Ընկերությունը 28.04.2023թ. դրությամբ ամբողջությամբ կատարել է դրանով սահմանված պարտավորությունը:

2. 2022թ.-ի ապրիլին «Խասուրո Գրուպ» ՓԲԸ սնանկության գործով կառավարիչ՝ Արմինե Ալեքսանի Մովսիսյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Ընկերության1,170,000,000 ՀՀ դրամ բաց թողնված օգուտի տեսքով պատճառված վնասի հատուցման պահանջով: Նշված գումարի չափով վնասն, ըստ հայցվորի, գոյացել է Ընկերության կողմից «Խասուրո Գրուպ» ՓԲԸ-ի թվով մեկ և Արթուր Խաչատրյանի օգտագործմանը հանձնված թվով 4 ֆիքսված կապի հեռախոսահամարները Ընկերության կողմից ենթադրաբար ապօրինի անվանափոխելը, ինչի պատճառով «Խասուրո Գրուպ» ՓԲԸ 2016-2021թթ. ընթացքում չի կարողացել տնտեսական գործունեություն իրականացնել (ուղևորափոխադրման տաքսի ծառայություններ մատուցել)՝ կրելով 1,170,000,000 ՀՀ դրամի չափով վնաս: Նշված դատական գործը գտնվում է քննության փուլում: Ընկերության գնահատմամբ դատական գործն հօգուտ հայցվորի վճռվելու հավանականությունը ցածր է:

Ստորև ներկայացված են Թողարկող մասնակցությամբ ընթացիկ դատական գործերի ցանկը.

№	Գործի համար	Գործի բնույթը	Ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ Ընկերության գնահատական
1	ԿԴ/0082/02/09	Քաղաքացիական վեճ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն չի կարող ունենալ
2	ԵԱՔԴ/0637/02/13	Քաղաքացիական վեճ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն չի կարող ունենալ
3	ԵԴ/10768/02/19	Գումարի բռնագանձման պահանջ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն չի կարող ունենալ
4	ԵԴ/9630/02/20	Գումարի բռնագանձման պահանջ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն չի կարող ունենալ
5	ԵԴ/10617/02/20	Աշխատանքային վեճ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն չի կարող ունենալ
6	ԵԴ/54363/02/21	Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, գումարի բռնագանձման և տեղադրված սարքավորման ապամոնտաժման պահանջ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն չի կարող ունենալ
7	ՎԴ/8237/05/21	Որոշումը անվավեր ճանաչելու պահանջ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն չի կարող ունենալ
8	ԵԴ/17676/02/22	Պատճառված վնասի հատուցման պահանջ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն կարող է ունենալ
9	ԵԴ/23062/02/22	Վճարված գումարը վերադանձնելու պահանջ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն չի կարող ունենալ
10	ՎԴ/0750/05/22	Որոշումն անվավեր ճանաչելու պահանջ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն չի կարող ունենալ
11	ԼԴ1/0001/02/23	Գույքն արգելանքից հանելու պահանջ	Թողարկողի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա էական բացասական ազդեցություն չի կարող ունենալ

Հարկ է նշել, որ Ընկերության մայր կազմակերպությունը՝ «Թիմ» ՓԲԸ-ն «Յուքոմ» ՓԲԸ կողմից հարուցված թիվ ԵԴ/20890/02/20 քաղաքացիական գործով ներգրավված է որպես պատասխանող կողմ: Ընկերության իրական շահառուներ Հայկ և Ալեքսանդր Եսայանները ևս ներգրավված են նույն դատական գործում որպես երրորդ անձիք:

2020թ.-ի հուլիսին «Յուքոմ» ՓԲ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Թիմ» ՓԲԸ-ի, երրորդ անձիք՝ «Վեոն Ամստերդամ Բ.Վ. մասնավոր» ՍՊ ընկերության, «Վիմպել Քոմունիքեյշն» ԲԲ ընկերության, Հայկ Եսայանի, Ալեքսանդր Եսայանի՝ «Թիմ» ՓԲԸ կողմից «Վեոն Արմենիա» ՓԲԸ բաժնետոմսերի ձեռքբերման բանակցային գործընթացում «Յուքոմ» ՓԲ ընկերությանը պատկանող չբացահայտված տեղեկատվության առկա պայմաններում օգտագործումը և «Թիմ» ՓԲԸ հիմնադիրների կողմից «Յուքոմ» ՓԲ ընկերության հանդեպ ունեցած ֆիդուցիար պարտավորությունների խախտումն անբարեխիղճ մրցակցություն հանդիսանալու, «Թիմ» ՓԲԸ կողմից «Վեոն Արմենիա» ՓԲ ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման 29.10.2020 թվականի գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին:

Նշված քաղաքացիական գործի վարույթը կասեցված է մինչև թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով վերջնական դատական ակտ կայացնելը: Վերջինս թիվ ՎԴ/6727/05/20 դատական գործի հետ քննվում են դռնփակ դատական նիստերում, և տեղեկատվության տրամադրումը սահմանափակված է օրենքով (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված):

Հայցվորը վերաքննիչ բողոք է ներկայացրել դատարանի՝ քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման դեմ, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.03.2023թ. որոշմամբ մերժվել է, իսկ դատարանի՝ քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը թողնվել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:

ՎԴ/0693/05/21 և ՎԴ/6727/05/20 դատական գործերում որպես հայցվոր հանդես է գալիս «Յուքոմ» ՓԲԸ-ն, իսկ որպես պատասխանող ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովը: «Թիմ» ՓԲԸ-ն, Հայկ և Ալեքսանդր Եսայանները թիվ ՎԴ/0693/05/21 գործում ներգրավված են որպես երրորդ անձ, իսկ թիվ ՎԴ/6727/05/20 գործում որպես երրորդ անձ ներգրավված են «Թիմ» ՓԲԸ-ն և Թողարկողը:

Ընկերությունը դատարանի կողմից թիվ ԵԴ/20890/02/20 քաղաքացիական գործով «Յուքոմ» ՓԲԸ-ի պահանջների բավարարման հավանականությունը համարում է «խիստ ցածր», սակայն պետք է հաշվի առնել, որ պահանջի բավարարումը կարող է հանգեցնել էական բացասական ազդեցության Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հաշվի առնելով օրենքով ՀՀ վարչական դատարանում քննվող ՎԴ/0693/05/21 և ՎԴ/6727/05/20 գործերով տեղեկատվության տրամադրման օրենսդրական սահմանափակումները, միևնույն ժամանակ նկատի ունենալով, որ երկու գործերով ՀՀ վարչական դատարանի կողմից արդեն իսկ կայացվել են եզրափակիչ դատական ակտեր՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումներին համապատասխան հրապարակման ենթակա են բացառապես դատական ակտերի (վճիռների) եզրափակիչ մասերը:

Այսպես, թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից 11.05.2023թ.-ին կայացված վճռի համաձայն՝ «Յուքոմ» ՓԲԸ հայցը բավարարվել է: ՀՀ

մրցակցության պաշտպանության հանձնաժողովին պարտավորեցվել է «Թիմ» ՓԲԸ, Հայկ Եսայանի և Ալեքսանդր Եսայանի կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղված գործողությունները որակել որպես չբացահայտված տեղեկատվության օգտագործմամբ և ֆիդուցիար պարտավորությունների խախտման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն՝ անվավեր ճանաչելով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 23.12.2020թ. թիվ 393-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի վճիռն օրինական ուժ չի ստացել, ենթակա է բողոքարկման ՀՀ վերաքննիչ վարչական դատարան մինչև 12.06.2023թ. ներառյալ: Նշված ժամկետում գործով երրորդ անձինք ներկայացնելու են վերաքննիչ բողոք:

Ընկերությունը բավարար հիմքեր է տեսնում բողոքարկման արդյունքում ՀՀ վարչական դատարանի վճռի բեկանման համար և հետևաբար գտնում, որ վերջնարդյունքում «Յուքոմ» ՓԲԸ-ի վերոնշյալ պահանջի բավարարման հավանականությունը «ցածր» է: Միևնույն ժամանակ անգամ եթե «Յուքոմ» ՓԲԸ պահանջի բավարարման վերաբերյալ դատական ակտն օրինական ուժ ստանա, դա կարող է հանգեցնել գործով երրորդ անձանց համար տուգանքի տեսքով պատասխանատվության սահմանման, ինչը նախատեսված է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

Թիվ ՎԴ/6727/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից 11.11.2022թ.-ին կայացված վճռի համաձայն՝ «Յուքոմ» ՓԲԸ հայցն ընդդեմ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, երրորդ անձինք «Թիմ» ՓԲԸ, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 09.07.2020թ. թիվ 282-Ա (*«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲ և «ԹԻՄ» ՍՊ ընկերությունների համակենտրոնացումը պայմանով թույլատրելու մասին*) որոշումը վերացնելու պահանջի մասին, մերժվել է:

ՀՀ վարչական դատարանի վճիռը «Յուքոմ» ՓԲԸ կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան: Վերաքննիչ բողոքը գտնվում է քննության փուլում:

Թողարկողը գտնում է, որ ՀՀ վարչական դատարանի վճիռը հիմնավորված և պատճառաբանված է, իսկ «Յուքոմ» ՓԲԸ վերաքննիչ բողոքի բավարարման հավանականությունը համարում է «խիստ ցածր»:

Ընկերությանը, վերջինիս բաժնետիրոջն առնչվող դատական գործընթացները ներկայացված են նաև Դատական տեղեկատվական համակարգում հետևյալ հղմամբ՝ http://www.datalex.am:

3.17.4 **Հարկային արտոնությունները**

Թողարկողը հարկային արտոնություններից չի օգտվում:

3.18 Լրացուցիչ տեղեկատվություն

3.18.1 Կանոնադրական կապիտալը

3.18.1.1 *Կանոնադրական կապիտալի մեծությունը*

Ընկերության կանոնադրական կապիտալն Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ կազմել է 18,837,709,000 (տասնութ միլիարդ ութ հարյուր երեսունյոթ միլիոն յոթ հարյուր ինը հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 188,377,090 (հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր յոթանասունյոթ հազար իննսուն) հատ «Բ» դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

3.18.1.2 *Հայտարարված բաժնետոմսերի քանակը*

Ընկերությունն ունի 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) հատ «Ա» դասի հասարակ (սովորական) հայտարարված բաժնետոմս: Հայտարարված մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 100 (հարյուր) ՀՀ դրամ է:

Սույն Ազդագրի ներքո Ընկերությունը նախատեսում է թողարկել և տեղաբաշխել 40,000,000 (քառասուն միլիոն) հատ «Ա» դասի հասարակ (սովորական) հայտարարված բաժնետոմս:

3.18.1.3 *Թողարկված բաժնետոմսերի քանակը*

Ընկերության կողմից 188,377,090 (հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր յոթանասունյոթ հազար իննսուն) հատ «Բ» դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերը լրիվ վճարված են:

Ընկերությունը չունի թողարկված, բայց չվճարված կամ ոչ լրիվ վճարված բաժնետոմսեր:

3.18.1.4 *Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը*

Ընկերության մեկ բաժնետոմսի (և՛ «Ա», և՛ «Բ» դասի) անվանական արժեքը կազմում է 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ:

3.18.1.5 *Թողարկողին պատկանող բաժնետոմսերի քանակը*

Թողարկողը չունի իրեն պատկանող «Ա» և/կամ «Բ» դասի բաժնետոմսեր:

3.18.2 **Կանոնադրությունը**

3.18.2.1 ***Թողարկողի նպատակը***

Ընկերության հիմնական նպատակը տնտեսական գործունեություն իրականացնելու միջոցով շահույթ ստանալն է: Ընկերության գործունեության հիմնական տեսակը հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումն է:

Ընկերության գործունեության ոլորտի ու նպատակների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է կանոնադրության համապատասխան գլխով:

3.18.2.2 ***Կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականությունները***

Թողարկողի կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են կանոնադրության 10-17 գլուխներով, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի X-XI գլուխներով:

Թողարկողի կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականությունները համառոտ ներկայացված են Ազդագրի Թողարկողի կառավարման մարմինները և անդամները բաժնում:

3.18.2.3 ***Սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները***

Ընկերության «Ա» և «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն ունեն միևնույն իրավունքները՝ բացառությամբ մեկ բաժնետոմսի գծով տրվող ձայնի իրավունքի:

«Ա» և «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքներն ներկայացված են Ազդագրի 2.3.6 մասում:

Հարկ է նշել, որ «Ա» դասի հասարակ բաժնետոմսերի հետ կապված սահմանափակումներ չկան, իսկ «Բ» դասի հասարակ բաժնետոմսերը գրավադրված են Վարկային պայմանագրով:

3.18.2.4 ***Բաժնետերերի իրավունքների փոփոխություններ***

Թողարկողի բաժնետերերի իրավունքներում փոփոխություններ կարող են իրականացվել հետևյալ դեպքերում.

1. համապատասխան օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում կատարվել են փոփոխություններ, կամ
2. կանոնադրության մեջ կատարվել են լրացումներ կամ փոփոխություններ, կամ կանոնադրությունը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Հարկ է նշել, որ Ընկերության հասարակ բաժնետոմսերի (և՛ «Ա», և՛ «Բ» դասի) սեփականատերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել բաժնետոմսերի հետգնման

գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնումը, եթե վերոնշյալ 2-րդ դեպքով իրենց իրավունքները սահմանափակվել են և նրանք այդ դեպքի մասով դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել (տես Ազդագրի 2.3.6.5 բաժին):

3.18.2.5 *Հերթական և արտահերթ բաժնետերերի ժողովների հրավիրման և մասնակցության կարգը*

Ընկերության կանոնադրության համաձայն.

Ընկերությունը յուրաքանչյուր տարի գումարում է բաժնետերերի մեկ ընդհանուր տարեկան ժողով: Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է Ընկերության համապատասխան ֆինանսական տարվա ավարտից հետո 6 (վեց) ամսվա ընթացքում: Ընկերության տարեկան ժողովների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է 18 (տասնութ) ամսից ավել լինի:

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներից բացի Ընկերության մյուս բոլոր ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները կարող են գումարվել ցանկացած ժամանակ կանոնադրությամբ նախատեսված կարգով: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Տարեկան և արտահերթ ժողովները գումարվում են Ընկերության Խորհրդի կողմից, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

Ընկերությունը պարտավոր է իր բաժնետերերին տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին կանոնադրությամբ և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 21 (քսանմեկ) օր առաջ:

Ժողովի գումարման մասին ծանուցումը կարող է կատարվել բաժնետերերի կողմից Ընկերությանը տրամադրած էլեկտրոնային փոստի միջոցով:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության գործադիր մարմնի գտնվելու վայրում: Ընկերության Խորհրդի որոշմամբ կարող է ընտրվել ժողովի գումարման այլ վայր:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել.

1. ժողով գումարելով՝ բաժնետերերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների ֆիզիկական ներկայությամբ կամ հեռախոսային կոնֆերանսի կամ կապի այլ միջոցներով,

2. առանց ժողով գումարելու՝ հեռակա քվեարկության (հարցման) միջոցով քվեարկությամբ, որը կատարվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին

համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Քվեաթերթիկներն ուղարկվում են բաժնետերերին պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով կամ հանձնվում են անձամբ, եթե Ընկերության խորհրդի որոշմամբ դրանք ուղարկելու այլ եղանակ չի սահմանվում: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ, բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ առաքվում են ՀՀ օրեսդրությամբ նախատեսված նյութերը և տեղեկությունները:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին ներկայացվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, կանոնադրությամբ և Ընկերության խորհդրի որոշմամբ սահմանված տեղեկությունները (նյութերը):

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև այլ տեղեկությունների (նյութերի) ներկայացման ձևը կարող է սահմանվել ժողովի գումարման մասին Ընկերության խորհրդի որոշմամբ:

Ընկերության բաժնետերերն Ընկերության ընդհանուր ժողովում մասնակցելու իրենց իրավունքը կարող են իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցել միայն օրենքով սահմանված կարգով տրված լիազորագրի առկայության դեպքում:

3.18.2.6 *Թողարկողի մոտ մասնակցություն ձեռք բերելու մասին տեղեկատվության բացահայտում*

Թողարկողի մոտ մասնակցություն ձեռք բերելու մասին տեղեկատվության բացահայտումը կանոնակարգվում է հետևյալ օրենքներով և կանոնակարգերով.

- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 16-րդ գլուխ և 169-րդ հոդված,
- «Հաշվետու թողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման, ավելացման և նվազման վերաբերյալ տեղեկացման եվ բացահայտման կարգը» Կանոնակարգ 4/15,
- «Հաշվետու թողարկողի ղեկավարի, նրա և թողարկողի հետ փոխկապակցված անձանց կողմից իրենց հաշվին՝ թողարկողի բաժնետոմսերով, ածանցյալ գործիքներով կամ այդպիսի ածանցյալների հետ կապված այլ արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ կենտրոնական բանկին ներկայացվող հաշվետվություններում ներառվող

տեղեկությունների կազմը, հաշվետվությունների ձեվը եվ ներկայացման կարգը» Կանոնակարգ 4/16,

- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 16-րդ գլուխներ,
- «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված:

3.19 Էական պայմանագրեր

Վերջին 2 տարվա ընթացքում թողարկողի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրերի էական պայմանները ներկայացված է ստորև.

Պայմանագիր	Կողմ	Պայմանագրի բնույթ և էական պայմաններ (դրամային ծավալ, ժամկետ, վճարման պայմաններ և այլն)
Փոխառության պայմանագիր առ 14/06/2022թ.	«Թիմ» ՓԲԸ-ն՝ որպես փոխառու	Պայմանագրի գին՝ 22,217,289 ԱՄՆ և 100.000.000ՀՀ դրամ Մայր գումարի մարումներ՝ 2026-2029թթ.-ին 3 հավասարաչափ մարման գումարով
Վարկային պայմանագիր առ 26/05/2022թ.	Վարկատուներ՝ IFC, EBRD և Ամերիաբանկ	Պայմանագրի գին՝ 45,000,000 մլն ԱՄՆ դոլար Մայր գումարի մարումներ՝ 2024-2029թթ.-ին

Հարկ է նշել, որ բացառությամբ վերոնշյալ փոխառության պայմանագրի Ընկերությունը մի քանի գործող փոխառության պայմանագրերով «Թիմ» ՓԲԸ-ին է 2021թ.-ին տրամադրել ընդհանուր առմամբ 9,647,950 ԱՄՆ դոլար և 352,000,000 ՀՀ դրամ պայմանագրային գնով փոխառություններ, որոնց մարման ժամկետները տարբեր են՝ 2026թ.-ի մարտից մինչև 2029թ.-ի դեկտեմբեր:

Փոխառությունները տրամադրվել են «Թիմ» ՓԲԸ-ին, որպեսզի վերջինս սպասարկի և մարի Ընկերության ձեռքբերման համար ստացված վարկային միջոցները:

3.20 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը եվ երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված ֆինանսական հաշվետվություններից, Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք:

Ազդագրում ներկայացված մի շարք տեղեկատվությունների համար աղբյուր են հանդիսացել ՀԾԿՀ-ի, Արմստատի, մրցակից օպերատորների, ITU-ի և այլ երրորդ անձանց կողմից արված հրապարակումները (Ազդագրի համապատասխան տեղերում նշված է տեղեկատվության համապատասխան աղբյուրը):

Թողարկողը հավաստիացնում է, որ Ազդագրով՝ երրորդ անձանց կողմից արված հրապարակումների հիման վրա տեղ գտած տեղեկատվությունը ճշգրտորեն է վերարտադրվել Ազդագրում և բաց չի թողնվել որևէ փաստ, որը կարող էր խեղաթյուրել այդ հրապարակումների/տեղեկատվության իմաստը: Ազդագրի համապատասխան մասերում նշված է տեղեկատվության համապատասխան աղբյուրը:

3.21 Այլ տեղեկատվություն

Թողարկողի կանոնադրությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Թողարկողի պաշտոնական կայքում՝ www.telecomarmenia.am հասցեով:

Ազդագիրը կարող է ներառել որոշակի ֆինանսական ցուցանիշներ կամ ֆինանսական գործակիցների հաշվարկներ, որոնք չեն հանդիսանում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) կողմից սահմանված ցուցանիշներ («Ոչ ՖՀՄՍ ցուցանիշներ»): Այդ ցուցանիշները ներառում են EBITDA, EBITDA մարժա (հաշվարկվում է EBITDA-ն բաժանելով համախառն եկամտի վրա), Փոխառու միջոցներ, Զուտ պարտք և Զուտ պարտք/EBITDA հարաբերակցության, որոնք օգտագործվել են Թողարկողի ղեկավարության կողմից՝ գնահատելու Թողարկողի ֆինանսական արդյունքները:

Ընդ որում, այդ ցուցանիշները պետք է ընդունվեն որպես հավելյալ, լրացուցիչ և չպետք է օգտագործվեն որպես փոխարինող կամ այլընտրանք ՖՀՄՍ-ի հիման վրա պատրաստված պատմական ֆինանսական հաշվետվությունների: Ոչ ՖՀՄՍ-ի հիման վրա ներկայացված ցուցանիշներն աուդիտի ենթարկված չեն:

Թողարկողը օգտագործում է ՖՀՄՍ-ի վրա չհիմնված ցուցանիշները, քանի որ դրանք հաճախ օգտագործվում են ներդրողների և վերլուծաբանների կողմից՝ գնահատելու Թողարկողի գործունեությունը: Սակայն դրանք ֆինանսական կատարողականը չափող ՖՀՄՍ-ի վրա հիմնված ցուցանիշներ չեն: Հետևաբար, դրանք չպետք է համարվեն ՖՀՄՍ-ի հիման վրա հաշվարկված շահույթի, գործառնական շահույթի, դրամական միջոցների հոսքեր, գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի նկարագրող ցուցանիշներին փոխարինող ցուցանիշներ:

Նաև հարկ է նշել, Ազդագրում ներկայացված մյուս բոլոր ցուցանիշները և գործակիցները չեն հաստատվել ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտն իրականացրած ընկերության կողմից՝ բացառությամբ այն ցուցանիշների, որոնց համար կա համապատասխան նշում:

3.22 Մասնակցություն այլ անձանց կապիտալում

Թողարկողը չունի մասնակցություն այլ անձանց կապիտալում:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

ՄԱՍ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

4.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն

Ակտիվների շահութաբերություն (ROA) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ

Կապիտալի համարժեքության գործակից = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ

Ֆինանսական կախվածության գործակից = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ

Բացարձակ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընթացիկ իրացվելիության գործակից = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ

Ընդհանուր իրացվելիության գործակից = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ

Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը

Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)

Պաշարների շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը

Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)

Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը

Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը):

4.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2: Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

4.2.1 Կազմակերպչական կառուցվածքը


ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Տնօրենների խորհուրդ
Ներքին աուդիտ
Գլխավոր տնօրեն
Գլխավոր տնօրենի տեղակալ
Կոմերցիոն տնօրինություն
Տեխնիկական տնօրինություն
Գաճախորդների սպասարկման տնօրինություն
Ֆինանսական տնօրինություն
ՏՏԿ և կազմակերպության զարգացման տնօրինություն
Իրավաբանական տնօրինություն
Գործառնական տնօրինություն
Ռազմավարական զարգացման տնօրինություն
Մարդկային ռեսուրսների և կորպորատիվ զարգացման վարչություն
SS վարչություն
Միջազգայնացման հանձարիտության և մեծածավալ վաճառքների վարչություն
Որակի վերահսկման վարչություն
Կոմերցիայի և ոլորտների կառավարման բաժին
Գլխավոր տնօրենի գրասենյակ
Կիբերանվտանգության բաժին
Գործառնական վարչություն
Մարկետինգ և բիզնես զարգացում բաժին
Գնումների և մատակարարման բաժին
Ֆինանսական վարչություն
Հաշվապահական հաշվառման բաժին
Ֆինանսական գործունեության հաշվետվությունների և վերլուծությունների բաժին
Ֆինանսական հաշվետվությունների բաժին
Ֆինանսական հաշվեկշիռների բաժին
Գանձապետական
Ֆինանսական գործունեության հաշվառման բաժին
Գանձապետարան
Գանձապետարանի հիմնական գործունեության բաժին
Գանձապետարանի տարադրամային գործունեության բաժին
Գանձապետարանի գանձարանային գործունեության բաժին
Գանձապետարանի ներդրումային գործունեության բաժին
Գանձապետարանի ռիսկերի գնահատման բաժին
Գանձապետարանի տեղեկատվության կառավարման բաժին
Գանձապետարանի գանձարանային գործունեության ստուգման բաժին
Գանձապետարանի գանձարանային գործունեության հաշվետվությունների բաժին
Գանձապետարանի գանձարանային գործունեության հաշվառման բաժին
Գանձապետարանի գանձարանային գործունեության վերլուծության բաժին
Գանձապետարանի գանձարանային գործունեության հաշվեկշիռների բաժին
Գանձապետարանի գանձարանային գործունեության գանձապետական գործունեության բաժին
Գանձապետարանի գանձարանային գործունեության գանձապետարանի գանձարանային

4.2.2 Տեխնիկական տնօրինության կառուցվածքը

Հավելված 1
«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ տնօրենների խորհրդի
__.__.202_ թ.-ի նիստի արձանագրության



4.3 ՀԱՎԵԼՎԱԾ 3: Սահմանումներ

2G	Երկրորդ սերնդի բջջային հեռահաղորդակցության ցանցերի առևտրային մեկնարկը տրվել է GSM ստանդարտների հիման վրա 1991թ.-ին Ֆինլանդիայում: 2G ցանցի հիմնական առավելություններն էին զանգերի թվային կոդավորումը և տվյալների փոխանակումը SMS-ի միջոցով:
3G	Երրորդ սերնդի շարժական հեռահաղորդակցության ստանդարտը հնարավորություն էր տալիս միաժամանակ տեղափոխել և՛ ձայնային՝ ինչպիսիք հեռախոսային զանգերը, և՛ ոչ ձայնային տվյալներ ինչպիսիք՝ տեղեկության ներբեռնում, էլեկտրոնային նամակների փոխանակում և տեսազանգեր:
4G	Չորրորդ սերնդի շարժական կապի տեխնոլոգիական ստանդարտը տալիս է շարժական գերլայնաշերտ ինտերնետ հասանելություն, օրինակ՝ անլար USB մոդեմների միջոցով նոթբուքերի, սմարթֆոնների, և այլ շարժական սարքերի համար: 4G+/LTE-A (Advanced) դա չորրորդ սերնդի բջջային կապի նորագույն տարբերակն է: Հին ստանդարտներից տարբերվում է կապի ավելի բարձր արագությամբ, տվյալների փոխանցման էլ ավելի արդյունավետ ալգորիթմերով: 4G+/LTE-A-ն հնարավորություն է տալիս օգտվել մինչև 170 Մբիթ/վրկ արագությամբ բջջային ինտերնետից:
5G	Լայնաշերտ բջջային ցանցերի հինգերորդ սերնդի տեխնոլոգիական ստանդարտ, որը նախորդ ցանցերի համեմատ ապահովում է ավելի բարձր վերբեռնման և ներբեռնման արագություն, և բարելավված թողունակություն:
DSL (Digital Subscriber Lines)	Թվային բաժանորդային գիծ: Տեխնոլոգիա, որը հնարավորություն է տալիս տվյալներ տեղափոխել կենտրոնական գրասենյակի և հաճախորդի տարածքների միջև: DSL տեխնոլոգիան առավել հաճախ օգտագործվում է լայնաշերտ ինտերնետի ծառայությունների մատուցման համար այն արագություններով, որոնք զգալիորեն ավելի արագ են, քան dial-up ինտերնետ հասանելիությունը: DSL-ը (կամ երբեմն «xDSL») սովորաբար օգտագործվում է որպես ընդհանուր տերմին տեխնոլոգիայի մի քանի տարբերակների համար, որոնք առաջարկում են տարբեր բնութագրեր, բայց հիմնված են նույն սկզբունքների վրա:

ADSL (Asymmetric Digital Subscriber Line)	Թվային բաժանորդային գծի (DSL) տվյալների հաղորդման տեխնոլոգիական տեսակ է, որը պղնձե հեռախոսային լարերի միջոցով թույլ է տալիս տվյալների ավելի արագ փոխանցում քան ավանդական ձայնային շերտավորմամբ մոդեմը: Սա հնարավոր է դառնում օգտագործելով այնպիսի հաճախականություններ որոնք ձայնային հեռախոսազանգի դեպքում առկա չեն: Բաժանարարը՝ DSL զտիչը, թույլ է տալիս հեռախոսային կապուղին միաժամանակ օգտագործել թե՛ ADSL ծառայության և թե՛ ձայնային զանգի համար:
ARPU (Average Revenue per Unit)	Մեկ բաժանորդի հաշվով միջին եկամուտ. չափում է յուրաքանչյուր հաճախորդից միջինում ստացված եկամուտը:
Լայնաշերտ (Broadband)	Հիմնական տերմինն է որով նկարագրվում են լայն թողունակության սարքավորումները և համակարգերը որոնք կարող են մշակել և անցկացնել էլեկտրամագնիսական հաճախականության խոշոր շերտերի ազդանշանները:
CAGR (Compound annual growth rate)	Տարեկան (միջին) հավելաճի տեմպ. չափում է ներդրումների կամ ֆինանսական ցուցանիշների տարեկան աճի տեմպը սահմանված ժամանակահատվածում, որը մեկ տարուց ավելի է:
Հիմնական ցանց (core network)	Շարժական կապի հիմնական ցանցը (core network), որը ներառում է ձայնային երթուղավորման (CS - circuit switched) և փաթեթային երթուղավորման (PS - packet switched) տիրույթները: CS տիրույթը վերաբերում է ձայնային ծառայություններին, իսկ PS տիրույթը տրամադրում է տվյալների փոխանակման (ինտերնետ հասանելիության) ծառայություններ: 4G և 5G ցանցերի ճարտարապետությունն ամբողջությամբ կառուցված է PS տիրույթի վրա և, ի տարբերություն 2G/3G ցանցերի, չունի CS տիրույթ:
CPE (Customer premises equipment)	Բաժանորդային սարքավորումներ. այն բոլոր վերջնական կամ փոխկապակցված սարքավորումներն են որոնք գտնվում են բաժանորդի տարածքում և միացված են մատակարարի հաղորդակցության ուղիներին: Բաժանորդային սարքավորումները ներառում են մալուխային մոդեմներ, ամրակցված հեռախոսային տերմինալները, սմարթքարտեր, WiFi-ները և շարժական սարքերը:

DWDM (Dense Wavelength Division Multiplexing)	Օպտիկական իրացման տեխնոլոգիա է, որն օգտագործվում է գոյություն ունեցող հիմնական օպտիկամանրաթելային ցանցի թողունակությունը մեծացնելու համար՝ օպտիկական մանրաթելի միջոցով տարբեր աղբյուրներից ստացված տվյալները հաղորդելով, յուրաքանչյուրի համար օգտագործելով լուսային ալիքի որոշակի սպեկտր:
Օպտիկամանրաթելային մալուխ (Fiber optic)	Մալուխ, որն օգտագործում է օպտիկական ապակե մանրաթելեր՝ կապի նվազագույն կորստով կամ աղավաղմամբ երկար հեռավորությունների վրա տվյալները փոխանցելու համար: Օպտիկամանրաթելային մալուխը ունի լայնաշերտ հաճախականության բնութագրեր և ի վիճակի է կառավարել շատ բարձր հզորությամբ և արագությամբ փոխանցումներ: Այն իներտ է էլեկտրական միջամտությունից և շրջակա միջավայրի գործոնների նկատմամբ, որոնք, օրինակ, ազդում են պղնձե լարերի վրա:
FTTx (Fiber to the x)	Օպտիկամանրաթել մինչև X կետ. Լայնաշերտ տվյալների փոխանցման ցանցեր որոնք դասակարգվում են՝ հիմնվելով այն բանի վրա, թե որտեղ է ավարտվում օպտիկամանրաթելայինը և սկսվում մետաղական մալուխը:
FTTB (Fiber to the Building)	Օպտիկամանրաթել մինչև շենք. Լայնաշերտ տվյալների փոխանցման ցանց, որի օպտիկամանրաթելային հատվածը ձգվում է ծառայություններ մատուցողի տվյալների կենտրոնից մինչև բաժանորդի շենք:
FTTH (Fiber to the Home)	Օպտիկամանրաթել մինչև տուն. Տվյալների փոխանցման ցանց, որի օպտիկամանրաթելային հատվածը ձգվում է ծառայություն մատուցողի տվյալների կենտրոնից մինչև բաժանորդի տուն/բնակարան:
FTTC (Fiber to the Community)	Օպտիկամանրաթել մինչև համայնք: Լայնաշերտ տվյալների փոխանցման ցանց, որի օպտիկամանրաթելային հատվածը ձգվում է ծառայություններ մատուցողի տվյալների կենտրոնից մինչև շենքերի խումբ, որտեղից թվային տվյալների հոսքը ակտիվ սարքավորման միջոցով փոխանցվում է բաժանորդներին VDSL ցանցի միջոցով:
Գբիթ/վրկ	Գիգաբիթ վայրկյանում. 1 Գբիթ/վրկ = 1 հազար Մեգաբիթ վայրկյանում (Մգբիթ/վրկ): Սա հեռահաղորդակցական միջավայրում թողունակության (միավոր ժամանակի ընթացքում փոխանցված տեղեկատվության ընդհանուր ծավալի) չափման միավոր է:

G-PON կամ GPON (Gigabit-capable passive optical network)	Պասիվ օպտիկական ցանցի, կամ այլ կերպ ասած՝ PON-ի (Passive Optical Network) շահագործումը նախատեսված է մեկ օպտիկական մանրաթելի միջոցով միևնույն տարածքում գտնվող բազմաթիվ բաժանորդների ծառայություն մատուցելու համար՝ մանրաթելի մեջ լույսային ալիքի ընդունող-հաղորդման հաճախականությունների մուլտիպլեքսավորման միջոցով: PON տեխնոլոգիյի բարելավման արդյունքում մշակվեց Ethernet PON ստանդարտը՝ գերարագ տեղեկատվության փոխանցում ապահովելու համար, շուտով ստեղծվեց նրա արդիականացված Gigabit EPON տարբերակը, հակիրճ՝ «GPON», որն այժմ զիջում է միայն գիգաբայթ պասիվ օպտիկական ստանդարտի համակարգերին: 25G-PON-ը կամ 25GPON-ը պասիվ օպտիկական ցանցի օգտագործմամբ լայնաշերտ տվյալների փոխանցման տեխնոլոգիա է, որի դեպքում ակտիվ սարքավորման յուրաքանչյուր պորտի արագությունը 25 Գբիթ/վրկ է: XGSPON կամ XGS-PON-ը 10 Գբիթ/վրկ սիմետրիկ թողունակությամբ տվյալների փոխանցման ստանդարտ է՝ պասիվ օպտիկական ցանցի կիրառմամբ:
GSM (Global system of mobile communication)	Բջջային կապի գլոբալ համակարգ. Թվային բջջային հեռահաղորդակցության լայնորեն ընդունված տեխնիկական ստանդարտ:
IP/MPLS (Internet Protocol/Multi-Protocal Label Switching)	Ինտերնետային պրոտոկոլի/Բազմակի-պրոտոկոլի Պիտակների Փոխարկում: Հեռահաղորդակցության ցանցերում մի հանգույցից մյուսը տվյալների երթուղավորման տեխնիկա է՝ հիմնված ոչ թե ցանցի հասցեների, այլ պիտակների վրա: Ցանցի հասցեները նույնացնում են վերջնակետերը, մինչդեռ պիտակները նույնացնում են վերջնական կետերի միջև հաստատված ուղիները: MPLS-ը կարող է ընդգրկել տարբեր ցանցային արձանագրությունների փաթեթներ, այստեղից էլ եկել է անվանման մուլտիպրոտոկոլ բաղադրիչը: MPLS-ն օգտագործվում է հասանելության մի շարք տեխնոլոգիաների հետ, ներառյալ T1/E1, ATM, Frame Relay և DSL:
Փոխկապակցում (Interconnection)	Միևնույն կամ տարբեր հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից օգտագործվող հանրային հեռահաղորդակցության երկու ցանցերի ֆիզիկական և տրամաբանական կապակցումը, որի արդյունքում մեկ ծառայություն մատուցողի օգտագործողները ունեն հնարավորություն

	կատարել տեղեկատվության փոխանակում միևնույն կամ մեկ այլ ծառայություն մատուցողի օգտագործողների հետ
IP (Internet Protocol)	Ինտերնետային արձանագրություն կամ կանոնների համախումբ, նախատեսված տվյալների փաթեթների երթուղման և հասցեավորման համար, դրանց համացանցով տեղափոխման ու ճշգրիտ հասցեատիրոջը հասցելու նպատակով:
IPTV	Ինտերնետ արձանագրության հեռուստատեսություն. Համակարգ, որտեղ թվային հեռուստատեսության ծառայությունը մատուցվում է ինտերնետի արձանագրության (IP) ցանցային ենթակառուցվածքի միջոցով, որը կարող է ներառել հասանելիություն լայնաշերտ կապով:
LTE (Long-Term Evolution)	Շուկայում ներկայացվում է որպես 4G LTE, որը գերարագ տվյալների փոխանցման համար անլար հաղորդակցության ստանդարտ է:
ՄԲիթ/վրկ	Մեգաբիթ վայրկյանում. տվյալների փոխանցման արագության չափման միավոր:
ՄՀց	Մեգահերց. փոփոխական հոսանքի (AC) կամ էլեկտրամագնիսական (EM) ալիքի հաճախականության միավոր է, որը հավասար է մեկ միլիոն հերցին (1,000,000 Հց):
NGN (New Generation Network)	Ապագա սերնդի ցանց. Բարձրարագ տվյալների փոխանցման ցանցի կոնցեպտ, որի դեպքում բոլոր ծառայությունները (բարձրարագ ինտերնետ, IP հեռուստատեսություն, ձայնային ծառայություններ) բաժանորդին են հասցվում ինտերնետ պրոտոկոլի փաթեթների միջոցով:
OTT (Over-the-top)	Over-the-Top ծառայություն է (այս դեպքում՝ հեռուստատեսային կամ վիդեոբովանդակային) որը մատուցվում է ինտերնետի միջոցով:
SMS (Short Message Service)	Կարճ հաղորդագրությունների ծառայություն, որով հնարավորություն է ընձեռնվում փոխանակվել տեղեկատվությամբ կարճ հաղորդագրությունների միջոցով:
MMS (Multimedia Messaging Service)	Մուլտիմեդիա հաղորդագրությունների ծառայություն. գրաֆիկա, վիդեո կամ ձայնային ֆայլեր և կարճ տեքստային հաղորդագրություններ անլար ցանցերի, մասնավորապես բջջային հեռախոսների միջոցով փոխանցելու մեթոդ:

UMTS (Universal Mobile Telecommunications Service)	UMTS-ը շարժական հեռահաղորդակցության երրորդ սերնդի համակարգ է: Այն օգտագործում է լայնաշերտ կոդի բաժանման բազմակի մուտքի (W-CDMA) ռադիո հասանելիության տեխնոլոգիա՝ բջջային ցանցի օպերատորներին ավելի մեծ սպեկտրային արդյունավետություն և թողունակություն ապահովելու նպատակով:
VDSL (Very high-speed digital subscriber line)	Շատ բարձր արագությամբ թվային բաժանորդային գիծ. թվային բաժանորդային գծի (DSL) տեխնոլոգիա է, որն ապահովում է տվյալների փոխանցում ավելի արագ, քան ADSL-ը: VDSL-ն ի վիճակի է աջակցել այնպիսի ծրագրերի, ինչպիսիք են բարձրորակ հեռուստատեսությունը, ինչպես նաև հեռախոսային ծառայությունները (ձայնը IP-ի միջոցով) և ընդհանուր ինտերնետ հասանելիությունը մեկ հեռախոսային կապուղու միջոցով:
VoIP (Voice over Internet Protocol)	Ձայն ինտերնետ արձանագրության միջոցով. տեխնոլոգիա է, որը թույլ է տալիս ձայնային զանգեր կատարել՝ օգտագործելով լայնաշերտ ինտերնետ կապ՝ սովորական (կամ անալոգային) հեռախոսագծի փոխարեն:
RAN (Radio Access Network)	Ռադիոհասանելիության ցանցը (RAN) անլար հեռահաղորդակցության համակարգի բաղադրիչ է, որը ռադիոկապի միջոցով կապ է ապահովում բազային կայանների և բաժանորդային սարքավորումների միջև:
POTS (Plain Old Telephone Service)	Ավանդական հեռախոսային ծառայություն, որը ձայնի փոխանցման համար օգտագործում է պղնձալարային ցանց:
PSTN (Public Switched Telephone Network)	Հանրային հեռախոսային ցանց. ավանդական միացումով միացված հեռախոսային ցանց:

4.4 ՀԱՎԵԼՎԱԾ 4: Ֆինանսական հաշվետվություններ

«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2022թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի գործունեությունը 5
2 Ընկերության գործառնական միջավայրը 5
3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ 6
4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ 20
5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին 22
6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ 24
7 Հիմնական միջոցներ 26
8 Ներդրումային գույք 27
9 Ոչ նյութական ակտիվներ և ԱՕԻ 28
10 Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր 29
11 Տրամադրված փոխառություններ 29
12 Պաշարներ 31
13 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և այլ ոչ ընթացիկ ակտիվներ 31
14 Ժամկետային ավանդ 33
15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 34
16 Կանոնադրական կապիտալ 34
17 Բանկային վարկեր 35
18 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ 36
19 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն 37
20 Ակտիվների ապագործարկման պահուստ 38
21 Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ 38
22 Պարտավորությունների և վճարների պահուստ 39
23 Հասույթ 39
24 Վաճառքի ինքնարժեք 40
25 Այլ գործառնական եկամուտ 40
26 Ընդհանուր և վարչական ծախսեր 41
27 Իրացման ծախսեր 41
28 Այլ գործառնական ծախսեր 41
29 Ֆինանսական եկամուտ/ծախսեր 42
30 Շահութահարկ 43
31 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ 45
32 Պայմանական դեպքեր և պարտավորություններ 45
33 Ֆինանսական երաշխիքներ 46
34 Ֆինանսական ռիսկերի կառավարում 46
35 Կապիտալի կառավարում 52
36 Իրական արժեքի բացահայտումներ 53
37 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների 55
38 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ 55
39 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր 57

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ Տնօրենների Խորհրդին և Բաժնետիրոջը

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ ֆինանսական վիճակն 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Ընկերության նույն ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2022թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիրք») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ Վարքագրքին համապատասխան:

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Մինչև այս աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված մյուս տեղեկատվությունը ներառում է նախնական հրապարակային առաջարկի (IPO) ազդագիրը, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր աուդիտորի հաշվետվությունը:

Մեր կարծիքը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ չի ներառում այլ տեղեկատվությունը և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք արտահայտում հավաստիացման արդյունքում կատարվող որևէ տեսակի եզրահանգում:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի կապակցությամբ, մեր պատասխանատվությունն է՝ ընթերցել վերը նշված այլ տեղեկատվությունը, և այդ ընթացքում դիտարկել, թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է էական անհամապատասխանություն, կամ այլ առումներով կարող է էականորեն խեղաթյուրված լինել [համախմբված/ առանձին] ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տեղեկությունների համեմատ:

Եթե սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից առաջ մեր կողմից ձեռք բերված այլ տեղեկատվության գծով մեր կատարած աշխատանքի արդյունքում մենք եզրահանգում ենք, որ նշված այլ տեղեկատվության մեջ առկա է էական խեղաթյուրում, մենք պարտավոր ենք հաղորդել այդ փաստի մասին: Այս առնչությամբ մենք չենք տիրապետում հաղորդման ենթակա որևէ փաստի:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Նինո Կադագիշվիլի
Տնօրեն

PricewaterhouseCoopers Armenia LLC

16 մայիսի 2023թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ. (վերաներկայացված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	21,578,740	18,143,705
Ներդրումային գույք	8	5,927,067	-
Ոչ նյութական ակտիվներ	9	4,285,274	3,918,357
Կանխավճարներ ԱՕԻ պայմանագրերի գծով	9	211,591	303,932
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	10	1,196,571	1,304,285
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	18	3,507,709	3,471,418
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	7	986,708	944,774
Տրամադրված վարկեր	11	17,249,248	10,955,362
Հետաձգված հարկային ակտիվներ	30	2,700,097	4,249,652
Հետաձգված ծախսեր		30,166	31,135
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	13	2,018,779	64,578
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**59,691,950**	**43,387,198**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	12	608,905	431,493
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	8,203,651	5,710,491
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճարներ	30	269,728	248,075
Այլ հարկային ակտիվներ		69,573	62,900
Հետաձգված ծախսեր		45,608	91,956
Ժամկետային ավանդ	14	823,885	- -
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	615,800	1,467,060
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		60,070	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**10,697,220**	**8,011,975**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**70,389,170**	**51,399,173**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	16	18,837,709	18,837,709
Չբաշխված շահույթ		9,672,304	2,195,699
Պահուստային կապիտալ		2,825,656	2,825,656
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**31,335,669**	**23,859,064**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Բանկային վարկեր	17	17,465,550	8,036,392
Վարձակալության գծով պարտավորություններ	18	3,166,781	3,100,899
Ակտիվների ապագործարկման գծով պահուստ	20	1,405,246	1,436,526
Հետաձգված եկամուտ		28,277	32,031
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**22,065,854**	**12,605,848**
Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային վարկեր	17	868,767	628,504
Վարձակալության գծով պարտավորություններ	18	1,067,167	1,373,865
Տրամադրված ֆինանսական երաշխիքներ	33	-	1,907,669
Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր	21	8,523,257	6,779,993
Պահուստներ պարտավորությունների և վճարների գծով	22	413,508	187,197
Հետաձգված եկամուտ		30,038	33,383
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր		981,842	697,133
Ստացված կանխավճարներ	21	4,673,871	2,857,931
Այլ հարկային պարտավորություններ		429,197	468,586
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**16,987,647**	**14,934,261**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**39,053,501**	**27,540,109**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**70,389,170**	**51,399,173**

Հաստատվել և ստորագրվել է 2023թ. մայիսի 16-ին:

Հայկ Եսայան	Կարեն Մնացականյան	Տաթևիկ Գևորգյան
Գլխավոր տնօրեն	Ֆինանսական տնօրեն	Գլխավոր հաշվապահ

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «TELECOM ARMENIA» 02500052

5-57 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Հազ. ՀՀ դրամ	**Ծնթգ.**	**2022թ.**	**2021թ.**
Շարժական կապի ծառայությունների մատուցումից հասույթ	23	16,112,680	15,526,846
Ֆիքսված կապի ծառայությունների մատուցումից հասույթ	23	14,670,395	13,697,593
Սարքավորումների իրացումից հասույթ	23	3,063,207	2,349,969
Այլ հասույթ	23	730,396	136,106
Ընդամենը հասույթ		**34,576,678**	**31,710,514**
Ծառայությունների ինքնարժեք	24	(19,722,491)	(19,340,835)
Իրացված սարքավորումների ինքնարժեք	24	(2,907,845)	(2,246,296)
Ընդամենը վաճառքի ինքնարժեք		**(22,630,336)**	**(21,587,131)**
Համախառն շահույթ		**11,946,342**	**10,123,383**
Ներդրումային գույքի իրական արժեքի ճշգրտումից զուտ օգուտ	8	5,427,831	-
Այլ գործառնական եկամուտ	25	2,002,531	1,656,575
Ընդհանուր և վարչական ծախսեր	26	(4,232,133)	(3,486,129)
Իրացման ծախսեր	27	(3,287,590)	(3,059,925)
Այլ գործառնական ծախսեր	28	(1,099,780)	(505,939)
Ֆինանսական ակտիվների զուտ արժեզրկման (հակադարձում)/կորուստ		(122,265)	55,764
Գործառնական շահույթ		**10,634,936**	**4,783,729**
Ֆինանսական եկամուտ	29	1,855,985	1,524,306
Ֆինանսական ծախսեր	29	(1,540,089)	(1,220,974)
Փոխարժեքային տարբերություններից զուտ վնաս՝ հանած օգուտ		(460,410)	(625,059)
Շահույթ մինչև հարկումը		**10,490,422**	**4,462,002**
Շահութահարկի գծով ծախս	30	(1,813,122)	(993,105)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ		**8,677,300**	**3,468,897**
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		**8,677,300**	**3,468,897**
Մեկ բաժնետոմսի գծով բազային և նոսրացված հասույթ (ՀՀ դրամ՝ մեկ բաժնետոմսի դիմաց)	31	**46.06**	**18.41**

Հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	Կանոնա-դրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Այլ պահուստներ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.		**18,837,709**	**512,847**	**2,825,656**	**22,176,212**
2021թ. շահույթ		-	3,468,897	-	3,468,897
Ընդամենը 2021թ. համապարփակ ֆինանսական արդյունք		**-**	**3,468,897**	**-**	**3,468,897**
2021թ. ընթացքում մայր ընկերությանը տրված փոխառությունների իրական արժեքով ճանաչման ազդեցությունը	11	-	(2,292,170)	-	(2,292,170)
Սեփական կապիտալում արտացոլված գործարքների գծով հետաձգված հարկի ազդեցությունը	30	-	506,125	-	506,125
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.		**18,837,709**	**2,195,699**	**2,825,656**	**23,859,064**
2022թ. շահույթ		-	8,677,300	-	8,677,300
Ընդամենը 2022թ. համապարփակ ֆինանսական արդյունք		**-**	**8,677,300**	**-**	**8,677,300**
2022թ. ընթացքում մայր ընկերության դեբիտորական պարտքի՝ իրական արժեքով ճանաչման ազդեցությունը	13	**-**	(889,764)	-	(889,764)
2022թ. ընթացքում մայր ընկերությանը տրված փոխառությունների իրական արժեքով ճանաչման ազդեցությունը	11	-	(2,121,269)	-	(2,121,269)
Ֆինանսական երաշխիքի ապաճանաչում	33		1,546,770	-	1,546,770
Սեփական կապիտալում արտացոլված գործարքների գծով հետաձգված հարկի ազդեցությունը	30	-	263,567	-	263,567
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.		**18,837,709**	**9,672,304**	**2,825,656**	**31,335,669**

Հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	2022թ.	2021թ. (վերաներկայացված)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված վճարումներ		34,286,800	31,991,573
Ստացված տոկոսներ		44,125	4,393
Վճարված տոկոսներ		(1,472,218)	(403,756)
Դրամական միջոցներ վարձակալությունից		896,726	-
Դրամական միջոցներ այլ գործառնական գործունեությունից		940,651	2,112,781
Ծառայությունների մատուցման գծով վճարումներ		(10,831,434)	(8,077,090)
Վճարումներ աշխատակիցներին		(7,405,889)	(7,324,398)
Վճարված շահութահարկ		(21,653)	-
Վճարումներ բյուջե, բացի շահութահարկը		(4,501,253)	(3,704,099)
Պաշարների մատակարարներին վճարումներ		(3,694,049)	(4,306,355)
Գործուղումների համար կատարվող վճարներ		(52,447)	(49,259)
Այլ գործունեության գծով (վճարված)ստացված դրամական միջոցներ		(7,790)	1,441
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ		**8,181,569**	**9,852,035**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(10,225,279)	(6,788,991)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		1,874,723	1,957,683
Տրամադրված փոխառությունների դիմաց մարումներ	11	297,697	478,303
Մայր ընկերությանը տրված փոխառություններ	11	(10,357,819)	(7,537,928)
Բանկային ավանդների ներդրում		(822,000)	-
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(19,232,678)**	**(11,890,933)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Ստացված վարկեր	19	20,524,762	7,058,409
Վարկերի մարում	19	(8,786,288)	(2,876,674)
Վարձակալության մայր գումարի մարումներ		(1,387,683)	(881,304)
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		**10,350,791**	**3,300,431**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(150,942)	(9,999)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ փոփոխություն		**(851,260)**	**1,251,534**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**15**	**1,467,060**	**215,526**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**15**	**615,800**	**1,467,060**

5-57 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1 «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի գործունեությունը

«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Ընկերությունը ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Այն հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ բաժնետոմսերով սահմանափակված պատասխանատվությամբ, և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ընկերությունն ի սկզբանե հիմնադրվել է 1995թ.-ին որպես «ԱրմենՏել» պետական խոշոր բաժնեմասնակցությամբ ձեռնարկություն՝ կառավարության որոշմամբ լիազորվելով հանդես գալու որպես Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության ինտեգրված ծառայությունների առաջին և միակ մատակարարը: 2006թ.-ին «ԱրմենՏել»-ը դարձել է հեռահաղորդակցության միջազգային ընկերության՝ «VEON» ՍՊԸ-ի (նախկին «Վիմպելկոմ» ՍՊԸ-ի, որը 2017թ.-ին վերաբրենդավորվել է որպես «ՎԵՈՆ») դուստր ձեռնարկություն՝ հրաժարվելով ծառայությունների մատուցման օրենքով սահմանված մենաշնորհային իրավունքներից, և մինչև 2008թ. լիովին ինտեգրվել է «Բիլայն» ապրանքանիշին՝ գործունեությունը շարունակելով «Բիլայն Արմենիա» անվանման ներքո: 2020թ. «ՎԵՈՆ»-ը օտարել է «Բիլայն»-ի ամբողջ մասնաբաժինը՝ վաճառելով այն «ԹԻՄ» ՍՊԸ-ին: 2020թ. հոկտեմբերի 28-ին Ընկերության 100% բաժնետոմսերը վաճառվել են «ԹԻՄ» ՍՊԸ-ին, որը Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերություն է: 2020թ. նոյեմբերի 16-ին «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն վերանվանվել է «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի: 2021թ. դեկտեմբերի 30-ին «ԹԻՄ» ՍՊԸ-ն վերակազմակերպվել է «ԹԻՄ» ՓԲԸ-ի:

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունն էր «ԹԻՄ» ՓԲԸ-ն, և Ընկերության վերջնական վերահսկողությունն իրականացնում էին Հայկ և Ալեքսանդր Եսայան եղբայրները:

Հիմնական գործունեությունը. Ընկերության հիմնական գործունեությունը բջջային և ֆիքսված հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումն է և սարքավորումների վաճառքը հաճախորդներին: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը մատուցում էր հեռահաղորդակցման ծառայություններ «Beeline» ապրանքանիշով: Ընկերությունը պաշտոնապես վերջնականացրել է իր վերաբրենդավորման գործընթացը 2022թ. մայիսին՝ «Բիլայն» ապրանքանիշը փոխարինելով «Թիմ» ապրանքանիշով:

Համաձայն կանոնադրության՝ Ընկերության կառավարումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի, տնօրենների խորհրդի և Ընկերության գործադիր մարմնի միանձնյա ղեկավարի՝ գործադիր տնօրենի կողմից:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0014, ք. Երևան, Ազատության պ. 24/1: Ընկերության հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2 Ընկերության գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ունենալ տարաբնույթ մեկնաբանումներ, տես՝ Ծանոթագրություն 32: Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, և Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն դրամական միջոցների հոսքերը: Հետևաբար, գործարար շրջանառության անկումը, արժեթղթերի շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ ոլորտների վրա:

COVID-19. 2020թ. մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի բռնկումը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցության զսպմանն ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինները, ինքնամեկուսացումը, գործարար գործունեության սահմանափակումները, ընդհուպ ձեռնարկությունների փակումը: Վերոնշյալ միջոցներից մի քանիսը հետագայում մեղմացվել են, սակայն 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ռիսկը դեռևս առկա է եղել:

2 Ընկերության գործարար միջավայրը (շարունակություն)

2022թ. Հայաստանի տնտեսությունը դրսևորել է դրական դինամիկա. Նման դինամիկայի համար նաև նպաստավոր են եղել համաշխարհային տնտեսության վերականգնումը և համաշխարհային ապրանքային շուկաներում գների բարձրացումը: Այդուհանդերձ, Հայաստանում և գլոբալ որոշ շուկաներում գների բարձրացումը նաև նպաստում են Հայաստանում գնաճին:

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկած միջոցառումները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև.

Ընդհանուր առմամբ, ակնկալվում է, որ պատերազմը համատարած ազդեցություն կունենա համաշխարհային տնտեսության վրա, օրինակ՝ ապրանքների գների աճի, նավթի/գազի/ածխի հնարավոր պակասի, բիզնեսի խափանումների և այլ միջոցներով: Պատերազմի սկզբում Ընկերությունն իր բաղադրիչների, ներառյալ ցանցային սարքավորումների և արբանյակային կապի և ծառայությունների առումով օգտվում էր հակամարտությունում ներգրավված երկրներից: Մատակարարման շղթաները խաթարվել են, և Ընկերությունը հանդիպել է գործառնական մարտահրավերների հատկապես շարժական սարքավորումների ոլորտում: 2022թ. կեսերին Ընկերությունը բանակցել է այլընտրանքային լոգիստիկ լուծումների վերաբերյալ: Ռոումինգի տեսանկյունից պատերազմը էական ազդեցություն չի ունեցել Հայաստանի հեռահաղորդակցության մատակարարների և Ռուսաստանում, Ուկրաինայում կամ այլ երկրներում նրանց գործընկերների միջև կնքված համաձայնագրերի և գործընկերության վրա: Հեռահաղորդակցության ոլորտը հիմնված է ներդրումների և զարգացման համար կայուն և բարենպաստ բիզնես միջավայրի վրա: Եթե պատերազմը առաջացնի տարածաշրջանային անկայունություն, այն կարող է սահմանափակել օտարերկրյա ներդրումները և դանդաղեցնել ենթակառուցվածքների ընդլայնման, տեխնոլոգիական վերազինման և Հայաստանում նոր ծառայությունների ներդրման առաջընթացը:

Ներկայիս տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ընթացիկ ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքից:

Ակնկալվող պարտքային կորուստներ. Ընկերության վարկերի, դեբիտորական պարտքերի և համանման ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների չափման համար Ընկերությունն օգտագործում է հիմնավորելի կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներ: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում է անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսումներից: Ծանոթագրություն 34-ը տրամադրում է առավել մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է Ընկերությունը ներառել կանխատեսումային տեղեկատվությունը իր ԱՊԿ մոդելներում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ

Պատրաստման հիմունքները. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան՝ սկզբնական արժեքի հիմունքով՝ փոփոխված ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման իրական արժեքի հիմունքով, և ներդրումային գույքի իրական արժեքով վերագնահատման՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների հիմունքով: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այդ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են այն բոլոր ժամանակաշրջանների համար, որոնք ներկայացված են հաշվետվություններում, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պահանջում է որոշակի կարևոր հաշվապահական գնահատումների օգտագործում: Այն նաև պահանջում է ղեկավարությունից դատողության գործադրում՝ Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Դատողությունների կամ ավելի բարձր աստիճանի բարդության ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրությունները և գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Համեմատական տեղեկատվության վերաներկայացում

Մայր ընկերությանը տրված փոխառությունների գծով օգտագործված դրամական միջոցների վերաներկայացում՝ ֆինանսավորման գործունեության փոխարեն որպես ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցներ՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում. 2021թ. Ընկերությունը մայր ընկերությանը տրված փոխառությունների գծով դրամական միջոցներով կատարված գործարքները ներկայացրել է դրամական միջոցների հոսքերի հաշվետվության ֆինանսավորման գործունեության բաժնում: Ընկերության ղեկավարությունը վերլուծել է այս գործարքների բնույթը և որոշել է, որ դրամական միջոցների հոսքերի ներկայացումը դրամական միջոցների հոսքերի հաշվետվության ներդրումային գործունեության շրջանակներում առավել պատշաճ է արտացոլում դրանց էությունը:

Արդյունքում մայր ընկերությանը որպես փոխառություն հատկացված դրամական միջոցները փոխադրվել են ներդրումային գործունեության բաժին՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

Հազ. ՀՀ դրամ	**2021թ. Սկզբնապես ներկայացված**	**Վերաներկա-յացման արդյունք**	**2021թ. Վերաներկա-յացված**
Ներդրումային գործունեություն			
Մայր ընկերությանը տրված փոխառություններ	-	(7,537,928)	(7,537,928)
Ֆինանսական գործունեություն			
Մայր ընկերությանը տրված փոխառություններ	(7,537,928)	7,537,928	-

Ֆինանսական երաշխիքների գծով պարտավորությունների դասակարգման փոփոխություն. 2021թ. Ընկերությունը ներկայացրել է ֆինանսական երաշխիքները՝ ընթացիկ և ոչ ընթացիկ տարանջատմամբ: Ընկերության ղեկավարությունը ավելի ճշգրիտ է վերլուծել այդ ֆինանսական երաշխիքների բնույթը և բացահայտվել է, որ մայր կազմակերպության վճարումների չկատարման դեպքում երաշխավորված վարկերը պետք է մարվեն ցպահանջ և, հետևաբար, դրանք պետք է ներկայացվեն որպես ընթացիկ պարտավորություններ:

Արդյունքում, ֆինանսական երաշխիքների ոչ ընթացիկ մասը փոխանցվել է ընթացիկ պարտավորությունների բաժին՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2021թ. (Սկզբնապես ներկայացված)**	**Վերաներկա-յացման արդյունք**	**31 դեկտեմբերի 2021թ. (Վերաներկա-յացված)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Տրված ֆինանսական երաշխիքներ	1,517,155	(1,517,155)	-
Ընթացիկ պարտավորություններ			
Տրված ֆինանսական երաշխիքներ	390,514	1,517,155	1,907,669

Անընդհատության հիմունք. Ղեկավարության կողմից սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով: Այս դատողությունը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական դիրքը, ընթացիկ մտադրությունները, գործառնությունների շահութաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը: Ընկերության ընթացիկ պարտավորությունները գերազանցում են ընթացիկ ակտիվները 6,290,427 հազ. ՀՀ դրամի չափով՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,922,286 հազ. ՀՀ դրամի չափով): Առաջիկա 12 ամիսների դրամական միջոցների հոսքերի կանխատեսումը ցույց է տալիս, որ Ընկերությունը կկարողանա կատարել իր վճարման պարտավորությունները՝ նախատեսված մարման ժամկետներում և ակնկալվում է, որ զուտ գործառնական դրամական միջոցների հոսքերը բավարար կլինեն կարճաժամկետ իրացվելիության կարիքները բավարարելու համար: Ընկերությունը կանոնավոր բանակցություններ է վարում մատակարարների հետ՝ վճարման ավելի բարենպաստ պայմաններ ստանալու նպատակով:

Այս հանգամանքները, այլ գործոնների հետ միասին, ղեկավարությանը հնարավորություն են տալիս հաստատել, որ Ընկերությունը կշարունակի գործել անընդհատության հիմունքով առնվազն հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում և կատարել իր ֆինանսական պարտավորությունները:

Արտարժույթի փոխարկում. Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և Ընկերության հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ-ի՝ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով Ընկերության ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից եկամուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Գործառնական գործունեության արտարժութային ազդեցությունները առանձնացվում և ներկայացվում են Այլ գործառնական եկամուտներ և Այլ գործառնական ծախսեր (Ծանոթագրություններ 25, 28), փոխառությունների վրա արտարժութային ազդեցությունները ուղղակիորեն ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափված ոչ դրամական հոդվածները փոխարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ հաստատված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափվող ոչ դրամական հոդվածների վրա արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը գրանցվում է որպես իրական արժեքի շահույթի կամ վնասի մաս: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 393.57 ՀՀ դրամ, 1 Եվրո = 420.06 ՀՀ դրամ, 1 ՌԴ ռուբլի = 5.59 ՀՀ դրամ (2021թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 480.14 ՀՀ դրամ, 1 Եվրո = 542.61 ՀՀ դրամ, 1 ՌԴ ռուբլի = 6.42 ՀՀ դրամ):

Հիմնական միջոցներ. Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման պահուստը, եթե վերջինս պահանջվում է: Հիմնական միջոցները ներառում են հետագայում որպես հիմնական միջոց օգտագործման նպատակով կառուցվող ակտիվները:

Հետագա ծախսերը համապատասխանաբար ընդգրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ ճանաչվում են որպես առանձին ակտիվ, միայն այն ժամանակ, երբ հավանական է, որ հիմնական միջոցների համապատասխան միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն և վերջինիս արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում:

Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը:

Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում այլ գործառնական եկամուտների կամ ծախսերի հոդվածում:

Մաշվածություն. Հողի և անավարտ շինարարության համար մաշվածություն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Շենքեր	20
Փոխանցող հարմարանքներ	20
Սարքավորումներ	6-10
Ավտոմեքենաներ և տրանսպորտային միջոցներ	5
Հարմարանքներ և կցամասեր	10
Այլ	6-10

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը Ընկերությունը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ներդրումային գույք. Ներդրումային գույքը պահվում է Ընկերության կողմից՝ վարձակալությունից եկամուտ ստանալու կամ կապիտալի աճի համար, կամ երկուսը միասին, և որը զբաղեցված չէ Ընկերության կողմից: Ներդրումային գույքը ներառում է կառուցվող ակտիվներ՝ նախատեսված ապագայում որպես ներդրումային գույք օգտագործելու համար:

Ներդրումային գույքը սկզբնապես ճանաչվում է ինքնարժեքով, ներառյալ գործառնական ծախսումները, և հետագայում վերաչափվում է իրական արժեքով՝ շուկայական պայմանները հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտացոլելու համար: Ներդրումային գույքի իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվի վաճառքից բնականոն գործարքի արդյունքում՝ առանց գործարքի ծախսումների նվազեցման: Իրական արժեքի լավագույն վկայությունն է հանդիսանում համանման վայրում և վիճակում գտնվող նմանատիպ գույքի ակտիվ շուկայում գործող գները:

Ակտիվ շուկայում գործող գների բացակայության դեպքում Ընկերությունը դիտարկում է տեղեկատվությունը տարբեր աղբյուրներից, այդ թվում՝

ա) ակտիվ շուկայում գործող գները տարբեր բնույթի, վիճակի կամ տեղակայման վայրում գտնվող գույքի համար՝ ճշգրտված, այդ տարբերությունները արտացոլելու նպատակով,

բ) ոչ ակտիվ շուկաներում նմանատիպ գույքի վերջին գները՝ ճշգրտված, այդ գներով գործարքների օրվանից ի վեր տնտեսական պայմանների ցանկացած փոփոխություն արտացոլելու նպատակով, և

գ) զեղչված դրամական հոսքերի կանխատեսումները՝ ապագա դրամական հոսքերի հուսալի գնահատումների հիման վրա, գործող վարձակալության և այլ պայմանագրերի պայմաններով և (հնարավորության դեպքում) արտաքին ապացույցներով հիմնավորմամբ, ինչպիսիք են նույն վայրում և վիճակում գտնվող նմանատիպ գույքի գծով գործող շուկայական վարձակալության վճարները, և կիրառելով դրամական միջոցների հոսքերի քանակի և ժամկետների անորոշության շուկայական ընթացիկ գնահատումները արտացոլող զեղչման գործակիցներ:

Ընկերության ներդրումային գույքի շուկայական արժեքը որոշվում է անկախ գնահատողների հաշվետվությունների հիման վրա, ովքեր ունեն ճանաչված և համապատասխան մասնագիտական որակավորում և համանման տեղակայման վայրում գտնվող և նույն դասի գույքի գնահատման արդիական փորձ:

Ներդրումային գույքը, որը կառուցապատվում կամ վերակառուցվում է որպես ներդրումային գույք օգտագործելու համար, նույնպես չափվում է իրական արժեքով:

Վարձակալությունից ստացված եկամուտը գրանցվում է տարվա շահույթում կամ վնասում՝ հասույթի կազմում: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները գրանցվում են տարվա շահույթում կամ վնասում և ներկայացվում առանձին:

Եթե ներդրումային գույքը դառնում է սեփականատիրոջ կողմից զբաղեցված, այն վերադասակարգվում է որպես հիմնական միջոց, և վերադասակարգման ամսաթվի դրությամբ դրա հաշվեկշռային արժեքը հավասարվում է հաշվապահական հաշվառման նպատակներով հաշվառված արժեքին: Եթե սեփականատիրոջ կողմից զբաղեցրած գույքի միավորը դառնում է ներդրումային գույք՝ պայմանավորված օգտագործման փոփոխությամբ, ապա փոխանցման ամսաթվի դրությամբ այս հոդվածի հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի միջև առաջացող ցանկացած տարբերություն դիտարկվում է նույն կերպ, ինչպես հիմնական միջոցների վերագնահատման դեպքում: Արդյունքում առաջացած՝ գույքի հաշվեկշռային արժեքի ցանկացած աճ ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում այնքանով, որքանով այն հակադարձում է նախկին արժեզրկումից կորուստը, իսկ մնացած աճը ուղղակիորեն հաշվառվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Գույքի հաշվեկշռային արժեքի արդյունքում առաջացած ցանկացած նվազում ի սկզբանե հաշվանցվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված վերագնահատման ցանկացած հավելաճի դիմաց, իսկ մնացած նվազումը ներառվում է տարվա շահույթում կամ վնասում՝ որպես արժեզրկում:

Հետագա ծախսումները կապիտալացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքով միայն այն դեպքում, երբ հավանական է, որ ծախսերի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Բոլոր այլ վերանորոգման և պահպանման ծախսերը ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում:

Ոչ նյութական ակտիվներ. Ընկերության ոչ նյութական ակտիվները ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետ և հիմնականում ներառում են կապիտալացված համակարգչային ծրագրային ապահովումը և լիցենզիաները:

Ձեռք բերված համակարգչային ծրագրային լիցենզիաները կապիտալացվում են դրանց ձեռք բերման և օգտագործման համար կատարված ծախսերի հիման վրա:

Ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդի կիրառմամբ՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Համակարգչային ծրագրեր	9.5
Լիցենզիաներ	Թույլտվության գործողության ժամկետը, բայց ոչ ավել, քան 10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	9.5

Արժեզրկվելիս, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հետևյալ արժեքներից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

Կանխավճարներ՝ անվերապահ օգտագործման իրավունքի («IRU») պայմանագրերի ներքո: IRU պայմանագրերի ներքո Ընկերության կանխավճարներն իրենցից ներկայացնում են կանխավճարներ՝ մալուխի որոշակի հաղորդման հզորության պայմանագրերով: Ընկերության մասնաբաժինը չի ներկայացնում ցանցի ողջ հզորությունը կամ որևէ բաղադրիչ մաս: Ընկերությունը իրավունք չի ստանում օգտագործելու բացահայտված ցանցային ակտիվները, այլ իրավունք ունի օգտագործել ծրագրված հզորության որոշակի մասնաբաժին: Պայմանագրերը կնքված են 3 և 15 տարով:

Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր. Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր են համարվում վարձակալված ակտիվների բարելավման համար կատարված կապիտալ ծախսերը: Դրանց մաշվածությունը հաշվարկվում է հետևյալ մեծություններից նվազագույնով՝ օգտակար ծառայության ժամկետ կամ վարձակալության ժամկետ:

Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում. Մաշվածության և ամորտիզացիայի ենթակա ակտիվները դիտարկվում են արժեզրկման հայտանիշների առկայության տեսանկյունից, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ հաշվեկշռային արժեքը չի կարող փոխհատուցվել: Արժեզրկումը գնահատելու նպատակով ակտիվները խմբավորվում են հիմնականում անկախ դրամական միջոցների մուտքեր ապահովող ամենափոքր խմբերի մակարդակում (դրամաստեղծ միավորներ): Ընկերությունը դիտարկում է ամբողջ կազմակերպությունը որպես մեկ դրամաստեղծ միավոր: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն չափով, ըստ որի ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Ընկերությունը, իրական արժեքը որոշելիս, օգտագործում է զեղչված դրամական միջոցների հոսքերի մոդելը՝ օգտագործելով ղեկավարության կողմից պատրաստված բիզնես ծրագրերով կանխատեսվող դրամական միջոցների հոսքերը: Էական դատողությունները, որոնք օգտագործվում են ակտիվների փոխհատուցվող արժեքը որոշելիս, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

Ֆինանսական գործիքներ. հիմնական չափման մոտեցումները: Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենաարժանահավատ վկայություն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և Ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Նշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առքուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ: Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի, հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող գներով (չճշգրտվող), (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարները և կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատոմսերի հավելավճարները և զեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

Ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք): Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային կորուստները) զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն պարգևավճարի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփրեդը: Այդպիսի պարգևավճարները կամ զեղչերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում: Գնված կամ սկզբնավորված վարկային տեսանկյունից արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ ակտիվների համար արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է՝ հաշվի առնելով պարտքային ռիսկը, այսինքն. հաշվարկվում է սկզբնական ճանաչման ժամանակ ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա, և ոչ թե պայմանագրային դրամական հոսքերի հիման վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Բոլոր մյուս ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները: Սկզբնական ճանաչումից հետո ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների գծով ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստ անմիջապես հանգեցնելով հաշվապահական վնասի:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. չափման կատեգորիաները. Ֆինանսական ակտիվները դասակարգելիս Ընկերությունը կիրառում է չափման հետևյալ կատեգորիաները՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը կախված է (i) ակտիվների համապատասխան պորտֆելի կառավարման համար նախատեսված ընկերության բիզնես մոդելից և (ii) ակտիվի դրամական հոսքերի բնութագրից:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. բիզնես մոդել: Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով Ընկերությունը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք Ընկերության նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բիզնես մոդելը որոշվում է ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով), հիմնվելով այն գործողությունների բոլոր պատշաճ ապացույցների վրա, որոնք Ընկերությունը մտադիր է իրականացնել գնահատման ամսաթվի դրությամբ առկա պորտֆելի համար սահմանված նպատակին հասնելու համար:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. դրամական միջոցների հոսքերի բնութագրերը. Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ: Պարունակվող ածանցյալ գործիքներով ֆինանսական ակտիվները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ որոշելու, թե արդյոք նրանց դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումների հատկանիշներին: Նման գնահատումն իրականացնելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝ տոկոսները ներառում են միայն պարտքային ռիսկը, փողի ժամանակային արժեքը, այլ բազային պարտքային ռիսկերը և շահույթի մարժան:

Այն դեպքերում, երբ պայմանագրային պայմաններն առաջացնում են ռիսկի ենթարկվածություն կամ անկայունություն, որն անհամատեղելի է վարկավորման բազային մեխանիզմի հետ, ֆինանսական ակտիվը դասակարգվում և չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում. Ֆինանսական գործիքները վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ ընդհանուր առմամբ փոփոխվում է պորտֆելը կառավարող բիզնես մոդելը: Վերադասակարգումը կիրառվում է առաջընթաց կերպով՝ առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբից՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո: Ընկերությունը ընթացիկ կամ համեմատական ժամանակահատվածում չի փոխել իր բիզնես մոդելը և վերադասակարգում չի կիրառել:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ. Ընկերությունը կանխատեսումային հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների, ինչպես նաև ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով հնարավոր ակնկալվող պարտքային կորուստները: Ընկերությունը գնահատում է ֆինանսական գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչում է կորստի պահուստը հաշվետու յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը արտացոլում է.
i) անաչառ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով. (ii) փողի ժամանակային արժեքը, և (iii) տեղի ունեցած իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման:

Առևտրային դեբիտորական պարտքերը, տրամադրված վարկերը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված ակնկալվող պարտքային կորուստի պահուստի չափով: Ֆինանսական երաշխիքների համար ակնկալվող պարտքային կորուստի համար առանձին պահուստը ճանաչվում է որպես պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ընկերությունը կիրառում է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի չափման պարզեցված մոտեցում (պահուստների մատրիցա) իր առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար, որոնք ներառում են չմարված դեբիտորական պարտքերը: Պահուստների ժամկետայնությունը հիմնված է պարտքային կորուստների պատմական փորձի վրա՝ առևտրային դեբիտորական պարտքերի ամբողջական ժամկետի ընթացքում և ճշգրտվում է ըստ կանխատեսումների գնահատման: Կանխատեսումների գնահատումը ներառում է մակրոտնտեսական գործոններ, ինչպիսիք են ՀՆԱ-ն և գործազրկության մակարդակը ՀՀ-ում: Ընկերությունը դեֆոլտի մակարդակի գծով չի կիրառում կանխատեսումների գնահատման ճշգրտումներ, եթե պարտքային կորուստների գծով մակրոտնտեսական գործոնների և Ընկերության պատմական փորձի միջև չկա հարաբերակցություն: Պահուստների ժամկետայնությունը վերանայվում է եռամսյակային հիմունքով:

Մնացած ֆինանսական ակտիվների համար Ընկերությունը կիրառում է պարտքային ռիսկերի էական փոփոխման գնահատման մոդելը: Արժեզրկման կորուստները ներկայացվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ արդյունքի մասին հաշվետվությունում՝ «Այլ գործառնական ծախսեր» տողում:

Դեբիտորական պարտքերի նկատմամբ հաշվեգրված տույժերը, տուգանքները և տոկոսները ներառվում են արժեզրկման պահուստի կազմի մեջ: Պահուստային մատրիցայի համար ԱՊԿ-ի դրույքաչափերը վերանայվում են եռամսյակային հիմունքով՝ դեբիտորական պարտքերի հավաքագրելիության և կանխատեսումային տեղեկատվության հիման վրա:

Եթե ամորտիզացված արժեքով պահվող արժեզրկված ֆինանսական ակտիվի պայմանները վերանայվում են բանակցությունների արդյունքում կամ մեկ այլ ձևով վերափոխվում են կողմի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով մինչև պայմանների վերափոխումը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը: Վերաձևակերպվող ակտիվը ապաճանաչվում է և նոր ակտիվը ճանաչվում է իր իրական արժեքով, միայն այն դեպքում, եթե ակտիվի ռիսկերը և հատույցները էականորեն փոխվել են: Սա սովորաբար հաստատվում է սկզբնական դրամական միջոցների հոսքերի և նոր ակնկալվող դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքների միջև էական տարբերության առկայությամբ:

Եթե հաջորդող ժամանակաշրջանում արժեզրկումից կորստի գումարը նվազում է և այդ նվազումը կարելի է անկողմնակալ կերպով կապել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա անցյալում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է՝ ճշգրտելով պահուստային հաշիվը տարվա շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում. Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Ընկերությունը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Վերականգնման հիմնավորված ակնկալիքների բացակայության հիմնական հայտանիշ է հանդիսանում վերջնաժամկետի լրանալը: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Ընկերությունը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում. Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Ֆինանսական պարտավորությունների չափման կատեգորիաները. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ ֆինանսական երաշխիքի պայմանագրերի:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Ֆինանսական գործիքների հաշվանցում. Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտադրություն կա՛մ մարելու զուտ արժեքը, կա՛մ էլ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Դիտարկվող հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

Ժամկետային ավանդներ. Ժամկետային ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ. Ընկերությունը վարձակալում է տարբեր գրասենյակային տարածքներ, հող և շենքեր, որոնք օգտագործվում են հեռահաղորդակցության սարքավորումների տեղակայման համար: Պայմանագրերում կարող են ներառվել և՛ բաղկացուցիչներ, որոնք հանդիսանում են վարձակալության պայմանագրեր, և՛ բաղադրիչներ, որոնք վարձակալության պայմանագրեր չեն հանդիսանում: Ընկերությունը պայմանագրային հատուցումը բաշխում է վարձակալության բաղադրիչների և այն բաղադրիչների միջև, որոնք վարձակալություն չեն հանդիսանում՝ հիմք ընդունելով այդ բաղադրիչների առանձնացված գործարքի հարաբերական գինը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը,
- վարձակալության վճարումները, որոնք կատարվել են վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ մինչ այդ ամսաթիվը, հանած ստացված վարձակալության խրախուսումները,
- ցանկացած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալության պայմանագրով ակտիվի նախատեսված վիճակը վերականգնելու համար պահանջվող ծախսումները:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որպես կանոն, ամորտիզացվում են գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի կամ վարձակալության ժամկետի ընթացքում՝ կախված նրանից, թե որն ավելի շուտ կավարտվի: Եթե Ընկերությունը գնման օպցիոնն իրագործելու բավարար չափով վստահություն ունի, այն օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ամորտիզացնում է հիմնական ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ընկերությունն օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիան հաշվարկում է գծային մեթոդով դրանց գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, մասնավորապես.

Օգտագործման իրավունքի տեսակ	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Հող	8
Շենքեր, գրասենյակներ և խանութներ	3-8

Վարձակալության գծով պարտավորություններ. Վարձակալության պայմանագրերից բխող պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով: Վարձակալության գծով պարտավորությունները ներառում են հետևյալ վարձակալության վճարների զուտ ներկա արժեքը.

- հաստատուն վճարներ (ներառյալ, ըստ էության, հաստատուն վճարումները) հանած ստացման ենթակա վարձակալության խրախուսումները,
- վարձակալության փոփոխուն վճարները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքաչափից և սկզբնապես չափվում են օգտագործելով մեկնարկի ամսաթվի դրությամբ գործող ինդեքսը կամ դրույքաչափը,
- վարձակալության պայմանագրերը դադարեցնելու համար տուգանքների վճարները, եթե վարձակալության ժամկետը արտացոլում է Ընկերության կողմից այդ օպցիոնի իրագործումը:

Վարձակալության երկարաձգման և դադարեցման օպցիոնները նախատեսված են Ընկերության մի շարք պայմանագրերում: Այս պայմաններն օգտագործվում են Ընկերության գործունեության մեջ օգտագործվող ակտիվները կառավարելիս առավելագույն գործառնական ճկունություն ապահովելու համար: Պարտավորության գնահատումը ներառում է նաև վարձակալության վճարներ, որոնք կկատարվեն որպես երկարաձգման օպցիոնների իրագործման մաս, եթե բավարար վստահություն կա, որ վարձակալությունը կերկարաձգվի:

Վարձակալության վճարները զեղչվում են՝ օգտագործելով վարձակալության պայմանագրով ենթադրվող տոկոսադրույքը: Եթե այս դրույքաչափը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, ինչը, որպես կանոն, տեղի է ունենում Ընկերության մոտ առկա վարձակալության պայմանագրերի դեպքում, ապա Ընկերությունն օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, որը այն դրույքաչափն է, որով Ընկերությունը կարող էր համանման ժամանակահատվածում և համանման ապահովությամբ ներգրավել փոխառու միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեին համանման տնտեսական պայմաններում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի արժեքին համարժեք ակտիվ ձեռք բերելու համար:

Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը որոշելու համար Ընկերությունը.

- հնարավորության դեպքում, որպես նախնական տեղեկատվություն օգտագործում է վերջերս երրորդ անձի կողմից ստացված ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը և ճշգրտում է այն, հաշվի առնելով ֆինանսավորումը ստանալու պահից հետո տեղի ունեցած ֆինանսավորման պայմանների փոփոխությունները,
- օգտագործում է ձևավորման այնպիսի մոտեցում, որի դեպքում հաշվարկը սկսվում է առանց ռիսկի տոկոսադրույքից, որը ճշգրտվում է պարտքային ռիսկի չափով, և
- կատարում է ճշգրտումներ հաշվի առնելով վարձակալության պայմանագրի առանձնահատկությունները, օրինակ, վարձակալության ժամկետը, երկիրը, արժույթը և ապահովությունը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Վարձակալության վճարները բաժանվում են պարտավորությունների հիմնական գումարի և ֆինանսական ծախսերի: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում վարձակալության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի վրա հաստատուն պարբերական տոկոսադրույքն ապահովելու համար:

Շահութահարկ. Շահութահարկը ներկայացվում է ֆինանսական հաշվետվություններում համաձայն օրենսդրության, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ հարկային մարմիններից փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Շահութահարկից տարբերվող այլ հարկերը, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս: Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույքները, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:
Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցել ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց և, երբ հետաձգված շահութահարկի ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող անձից կամ տարբեր հարկատուներից, որտեղ կա մնացորդները զուտ հիմունքով կարգավորելու մտադրություն:

Անորոշ հարկային դիրքեր. Ընկերության անորոշ հարկային դիրքերը գնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Շահութահարկի գծով պարտավորությունները հաշվի են առնվում այն դեպքում, երբ ղեկավարությունը գտնում է, որ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման հավանականությունը ավելի մեծ է, քան դրանց բացակայությունը, եթե Ընկերության հարկային գործունեությունը վիճարկվի հարկային մարմինների կողմից: Գնահատումը հիմնված է այն հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունների վրա, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նմանատիպ հարցերի շուրջ ցանկացած հայտնի դատական կամ այլ որոշումների վրա: Տուգանքների, տոկոսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են ղեկավարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը:

Շահութահարկի անորոշության գծով ճշգրտումները՝ բացառությամբ տույժերի և տուգանքների, արտացոլվում են շահութահարկի գծով ծախսերում: Շահութահարկի անորոշության գծով ճշգրտումները՝ կապված տույժերի և տուգանքների հետ, արտացոլվում են համապատասխանաբար ֆինանսական ծախսերի և այլ զուտ շահույթների/(վնասների) կազմում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ավելացված արժեքի հարկ. Վաճառքին վերաբերող ավելացված արժեքի հարկը ենթակա է վճարման հաճախորդներին ապրանքների հանձնման կամ ծառայությունների մատուցման ժամանակ: Գնմանը վերաբերող ԱԱՀ-ը սովորաբար հաշվանցվում է վաճառքին վերաբերող ԱԱՀ-ի դիմաց, ԱԱՀ-ի հարկային հաշիվը ստանալուց և հաստատելուց հետո: Հարկային մարմինները թույլատրում են ԱԱՀ-ը հաշվարկել զուտ հիմունքով: Վաճառքին և գնումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են համախառն հիմունքով և առանձին բացահայտվում են որպես ակտիվ և պարտավորություն: Դեբիտորական պարտքերի արժեզրկման համար պահուստ ստեղծելու դեպքում արժեզրկումից կորուստը ճանաչվում է պարտապանի համախառն գումարում, ներառյալ ԱԱՀ-ը:

Պաշարներ. Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած վաճառքի ծախսումները:

Կանխավճարներ. Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանելով արժեզրկման համար պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Ընկերությունը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն:

Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ապրանքը կամ ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Կանոնադրական կապիտալ. Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված մուտքերից նվազեցում՝ հարկումից հետո: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, սեփական կապիտալում գրանցվում է որպես էմիսիոն եկամուտ:

Պահուստային կապիտալ. Պահուստային կապիտալը ներկայացված է Հայաստանի Հանրապետության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի համապատասխան ստեղծված չբաշխվող պահուստային հիմնադրամով: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չպետք է Ընկերության կանոնադրական կապիտալի 15%-ից պակաս լինի:

Պահուստներ պարտավորությունների և վճարների համար. Պարտավորությունների և վճարների գծով պահուստները անորոշ ժամանակով կամ գումարով ոչ ֆինանսական պարտավորություններ են: Դրանք հաշվեգրվում են, երբ Ընկերությունը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավաբանորեն սահմանված կամ ենթադրվող պարտավորություն և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, ինչպես նաև հնարավոր է արժանահավատորեն գնահատել պարտավորության չափը: Պահուստները գնահատվում են՝ ելնելով ծախսերի ներկա արժեքից, որն, ինչպես ակնկալվում է, կպահանջվի պարտավորության մարման համար՝ զեղչված մինչև հարկումը տոկոսադրույքով, որն արտացոլում է տվյալ պարտավորությունների գծով գումարների և ռիսկերի ներկա արժեքը: Ժամանակի ընթացքում պահուստի աճը ճանաչվում է որպես տոկոսային ծախս:

Ակտիվների ապագործարկման պահուստ. Ակտիվի ապամոնտաժման համար գնահատվող անհրաժեշտ ծախսերը (ակտիվների ապագործարկման պահուստը) ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին ձեռք բերման պահին կամ վերջինիս օգտագործման որոշակի փուլում: Երբ պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ տնտեսական օգուտների արտահոսքի գնահատված ժամկետների կամ գումարների, ինչպես նաև զեղչման դրույքի փոփոխության արդյունքում անհրաժեշտություն է առաջանում կարգավորել գոյություն ունեցող ապագործարկման պահուստի չափը, ապա փոփոխվում է նաև պահուստին համապատասխանող ակտիվի սկզբնական արժեքը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական երաշխիքներ. Ֆինանսական երաշխիքները հանձնառություններ են, որոնցով Ընկերությունը պարտավորվում է կատարել որոշակի վճարումներ՝ փոխհատուցելու երաշխիքը տնօրինողի վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում: Ֆինանսական երաշխիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որի համար սովորաբար վկայություն է հանդիսանում ստացված վճարների մեծությունը: Այդ գումարի ամորտիզացիան հաշվարկվում է գծային մեթոդով երաշխիքի ժամկետի ընթացքում: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում երաշխիքները չափվում են հետևյալ երկու արժեքներից առավելագույնով. (i) ակնկալվող կորուստների մոդելով՝ հաշվարկված որպես երաշխավորված մնացորդի գծով արժեզրկման պահուստի գումար և (ii) սկզբնապես ճանաչված գումարի չամորտիզացված մնացորդ: Բացի այդ, ԱՊԿ-ի պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ակտիվ ճանաչված՝ վճարների գծով ստացվելիք գումարների համար:

Հատուցումներ աշխատակիցներին. Աշխատավարձը, պետական կենսաթոշակային և Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումները, տարեկան վճարովի արձակուրդը, հիվանդության պատճառով բացակայությունը և պարգևավճարները հաշվեգրվում են այն տարում, երբ տվյալ հատուցումները որոշող համապատասխան ծառայությունները մատուցվել են Ընկերության աշխատակիցների կողմից: Պետական կենսաթոշակային և սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումներից բացի, Ընկերությունը չունի կենսաթոշակային կամ համանման այլ վճարումներ կատարելու իրավական պարտավորություն:

Սեգմենտների հաշվառում. Գործառնական սեգմենտները ներկայացվում են Ընկերության գլխավոր գործադիր մակարդակում որոշում կայացնող անձին ներկայացվող ներքին հաշվետվություններին համապատասխան եղանակով: Գլխավոր գործադիր մակարդակում որոշում կայացնող անձը պատասխանատու է ռեսուրսների բաշխման և գործառնական սեգմենտների կատարողական արդյունքների գնահատման համար: Հաշվետու սեգմենտները, որոնց հասույթը, արդյունքը կամ ակտիվները կազմում են բոլոր հատվածների տասը տոկոսը կամ ավելին, ներկայացվում են առանձին:

Հասույթի ճանաչում. Ընկերության եկամտի աղբյուր են հանդիսանում ձայնային ծառայությունների մատուցումը, տվյալների փոխանցման ծառայությունները և անլար կապի լայնածավալ ծառայությունների ու լայնաշերտ ինտերնետի հասանելիության միջոցով այլ հեռահաղորդակցման ծառայությունները, ինչպես նաև սարքավորումների և պարագաների վաճառքը: Ապրանքներն ու ծառայությունները կարող են տրամադրվել առանձին կամ ծառայությունների համակցված փաթեթով:

Եթե պայմանագրի արդյունքը չի կարող արժանահավատ որոշվել, ապա պայմանագրային հասույթը ճանաչվում է կատարված պայմանագրային ծախսերի չափով, որոնք կարող են փոխհատուցվել:

Ծառայությունների վաճառքից ստացված հասույթ. Ծառայությունների վաճառքից ստացված հասույթը իր մեջ ներառում է գնորդների հետ կնքած պայմանագրերով նախատեսված եթերաժամից ստացված հասույթը և հաշվարկների կանխավճարային համակարգի շրջանակներում, ամսեկան բաժանորդային վճարը, փոխկապակցման ծառայությունից հասույթը, ռոումինգի գծով հասույթը և այլ ծառայությունները: Լրացուցիչ ծառայությունները ներառում են կարճ հաղորդագրություններ (SMS), մուլտիմեդիային հաղորդագրություններ (MMS), համարի որոշում, զանգի սպասարկում, տվյալների փոխանակում, բջջային ինտերնետ, ներբեռնվող կոնտենտ և այլ ծառայություններ: Լրացուցիչ կոնտենտային ծառայություններից հասույթը արտացոլվում է՝ հանած համապատասխան ծախսերը, երբ Ընկերությունը հանդիսանում է որպես գործակալ կոնտենտ-պրովայդերների համար կամ առանց համապատասխան ծախսերի, երբ Ընկերությունը հանդիսանում է որպես գործարքի հիմնական պարտավորությունները կրող կողմ:

Միջհամակարգային փոխկապակցման գծով հասույթ գոյանում է, երբ Ընկերությունը տրաֆիկ է ստանում այլ օպերատորների բջջային կամ ֆիքսված կապի բաժանորդներից, և այդ տրաֆիկը դադարեցվում է Ընկերության ցանցում: Ռոումինգից եկամուտները ներառում են ինչպես Ընկերության հաճախորդներից ստացված եկամուտները, որոնք ռոումինգից օգտվում են իրենց երկրի ցանցից դուրս, այնպես էլ այլ անլար օպերատորների հասույթը՝ իրենց հաճախորդների կողմից ընկերության ցանցում ռոումինգի համար: Հասույթի երկու հոսքերի համար էլ ընկերությունն ունի մեկ կատարողական պարտականություն և ճանաչում է բջջային կապի օգտագործման և ռոումինգի ծառայություններից հասույթը՝ հիմնվելով ժամանակի ընթացքում մատուցված ծառայությունների մշակված տրաֆիկի բոպեների վրա: Ռոումինգում միջազգային զանգերի համար օտարերկրյա օպերատորներից ստացված հասույթը ճանաչվում է զանգի կատարման ժամանակաշրջանում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Սահմանված ժամանակահատվածով ծառայություններից, ներառյալ ֆիքսված սակագնային պլանները և ամսական բաժանորդագրությունները, ստացված հասույթը, որպես կանոն, ճանաչվում է հավասարապես ժամանակի ընթացքում: Սակագնային պլաններից ստացված հասույթը, որոնց համար վճարումը գանձվում է փաստացի օգտագործման դիմաց, ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ դրանց օգտագործման աստիճանով:

Որոշ սակագնային պլաններ հաճախորդներին հնարավորություն են տալիս հաջորդ ժամանակահատված փոխանցել չօգտագործված ծառայությունները: Այդ սակագնային պլաններից ստացված հասույթը, որպես կանոն, հավասարապես ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ըստ դրանց օգտագործման աստիճանի: Մի քանի ծառայությունների բաղադրիչներ ներառող պայմանագրերի (ինչպես օրինակ՝ ձայնը, տեքստը, տվյալները) համար հասույթը բաշխվում է առանձին վաճառքի գնի հիման վրա: Այդ ծառայությունների առանձին վաճառքի գինը որոշվում է հաշվի առնելով այն գինը, որը գանձվում է այն գնորդներից, ովքեր վճարում են ծառայության համար ըստ օգտագործման աստիճանի:

Սկզբնական վճարումները, ներառյալ ակտիվացման կամ կապի վճարները, գծային հիմունքով ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում: Անորոշ ժամկետով պայմանագրերի (որպես կանոն՝ կանխավճարային պայմանագրերի) դեպքում սկզբնական վճարումներից հասույթը ճանաչվում է բաժանորդի գոյության միջին տևողության ընթացքում: Այլ օպերատորներից ստացված հասույթը՝ ներառյալ միջցանցային միացումների և ռոումինգի վճարը, ճանաչվում է պայմանագրային գնի հիման վրա՝ հանած ծավալի համար նախատեսված ենթադրյալ հետընթաց զեղչերը: Կուտակված փորձն օգտագործվում է զեղչերի գնահատման և տրամադրման համար: Ծառայությունների վաճառքից ստացված ողջ հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում:

Սարքավորումների և պարագաների վաճառք. Սարքավորումներն ու պարագաները սովորաբար հաճախորդներին վաճառվում են առանձին կամ ծառայությունների փաթեթների հետ միասին: Ծառայությունների փաթեթների հետ միասին վաճառքի դեպքում հասույթը բաշխվում է համամասնորեն՝ ելնելով առանձին վաճառքի և ծառայությունների փաթեթի գնից:

Բջջային կապի սարքավորումների և պարագաների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ սարքավորումը վաճառվում է բաժանորդին կամ եթե այն վաճառվում է միջնորդի միջոցով, երբ միջնորդը սարքի նկատմամբ վերահսկողություն է սահմանել, և միջնորդն իրավունք չունի այն վերադարձնել: Ֆիքսված կապի սարքավորումների վաճառքից ստացված հասույթը չի ճանաչվում այնքան ժամանակ, քանի դեռ այդ սարքավորումների տեղադրումն ու փորձարկումն ավարտված չէ, և սարքավորումը չի ընդունվել գնորդի կողմից: Սարքավորումների և պարագաների վաճառքից ստացված ողջ հասույթը ճանաչվում է ժամանակի որոշակի պահին:

Պայմանագրի գծով մնացորդներ. Դեբիտորական պարտքերը և պայմանագրերի գծով ակտիվները հիմնականում դասվում են այն միջոցների շարքին, որոնք ձեռք են բերվում գործակալների, կապի այլ օպերատորների և հետվճարային կապի սակագնային պլան ունեցող հաճախորդների կատարած վճարումների արդյունքում:

Պայմանագրի գծով պարտավորությունները գլխավորապես դասվում են չփոխհատուցվող դրամական միջոցների շարքին, որոնք ձեռք են բերվել կանխավճարային համակարգով ֆիքսված կամ փաստացի օգտագործման դիմաց վճարվող սակագնային պլան ունեցող գնորդներից: Պայմանագրերի գծով պարտավորությունները ներկայացված են որպես «Հետաձգված եկամուտ» և «Ստացված կանխավճարներ»՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: «Հետաձգված եկամտի» մնացորդները տարվա սկզբում ճանաչվել են որպես հասույթ տարվա ընթացքում:

Դրամական միջոցների հավաքագրման մեթոդ հանդիսացող կանխավճարային քարտերի իրացումը արտացոլվում է բաժանորդներից ստացված կանխավճարների տեսքով՝ ապագայում մատուցվող ծառայությունների համար և հետաձգվում է մինչև այն պահը, երբ հաճախորդը օգտագործի իրեն հասանելի եթերաժամը: Կանխավճարային քարտերը կարող են լինել անժամկետ, սակայն նրանց գործունեության ժամանակաշրջանը սահմանափակվում է օրենսդրությամբ. չօգտագործված կանխավճարային մնացորդները գումարվում են ծառայությունների մատուցումից ստացված հասույթին՝ ակնկալվող կանխավճարային մնացորդի հիման վրա, որի ժամկետը կլրանա՝ չօգտագործված մնալով:

Գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումներ. Գնորդների հետ պայմանագիր կնքելուն ուղղված որոշ լրացուցիչ ծախսումներ («գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումներ») ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված ծախսեր: Որպես կանոն, նման ծախսերը, վերաբերում են վարձատրությանը, որը վճարվել է երրորդ կողմերին՝

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

դիլերներին ու սեփական անձնակազմին և ամորտիզացվում են գծային մեթոդի կիրառմամբ՝ բաժանորդի գոյության միջին տևողության ընթացքում: Ընկերությունը կիրառում է գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումների համար նախատեսված գործնական պարզեցումներ, որոնց

համար մաշվածությունը 12 ամսից ավելի կարճ կլիներ: Նման ծախսերը գլխավորապես վերաբերում են երրորդ կողմի դիլերներին վճարվող միջնորդավճարներին՝ գնորդի կանխավճարային հաշվի ավելացման և քարտերի վաճառքի դեպքում:

Բաժանորդի գոյության միջին տևողություն. Բաժանորդի գոյության միջին տևողությունը հաշվարկվում է վիճակագրության, մասնավորապես՝ տարբեր սեգմենտների (ինչպիսիք են բջջային և ֆիքսված հեռախոսակապի, կանխավճարային և հետվճարային) բաժանորդների արտահոսքի ցուցանիշների հիման վրա:

Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն. Թողարկումից հետո այս ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Ընկերության ղեկավարության հաստատումը, ով լիազորել է այս ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում:

Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Հարկային օրենսդրություն. Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա են տարբեր մեկնաբանումների (տե՛ս Ծանոթագրություն 32):

Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա ակտիվ շուկա այդպիսի գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում նմանատիպ գործարքների գնահատումը չկապակցված կողմերի հետ և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 38-ում: Ձեղչման ազդեցությունն արտացոլվում է սեփական կապիտալի միջոցով, քանի որ այն ճանաչվում է որպես մայր կազմակերպությանը տրամադրված կապիտալ հատկացում: Մայր կազմակերպությանը տրված ցանկացած հետագա փոխառություն պետք է հաշվառվի որպես ֆինանսական ակտիվ, պայմանով, որ առկա է դրամական միջոցներ ստանալու պայմանագրով ամրագրված իրավունք՝ հստակ մարման ժամկետով, և վարկերը տրամադրվում են շուկայական տոկոսադրույքներով: Բոլոր այդ վարկերը ենթակա են ԱՊԿ գնահատման՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի: Մայր կազմակերպությանը տրամադրված ֆինանսական երաշխիքները ճանաչվել են որպես պարտավորություններ՝ համապատասխան գումարը դեբետագրվելով չբաշխված շահույթում: Ֆինանսական երաշխիքների ապաճանաչումը ճանաչվել է չբաշխված շահույթի կրեդիտային մասում: Ղեկավարությունը կիրառել է դատողություն և այդ ֆինանսական երաշխիքները դիտարկել է, համապատասխանաբար, որպես սեփական կապիտալի բաշխումներ և ներդրումներ, հիմնվելով այս գործարքների էության վրա:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում. Ակնկալվող պարտքային կորուստների չափումը նշանակալի գնահատական է, որի ստացման համար օգտագործվում է չափման մեթոդաբանություն, մոդել և մուտքային տվյալներ: Հետևյալ բաղադրիչներն ունեն զգալի ազդեցություն ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի վրա. ակնկալվող դրամական միջոցների հոսքերի գումարը

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

և դեֆոլտի հավանականությունը: Եթե կանխատեսվող ժամանակահատվածում (2023-2030թթ.) (2021թ.՝ 2022-2026թթ.) ազատ դրամական միջոցների հոսքերը նվազեն 10%-ով (2021թ.՝ 10%-ով), ապա տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստը բարձր կլինի 44,863 հազ. ՀՀ դրամով (2021թ.՝ 406,300 հազ. ՀՀ դրամով): Եթե դեֆոլտի հավանականությունը բարձր լինի 10%-ից (2021թ.՝ 10%-ից), ապա տրամադրված փոխառությունների

գծով ակնկալվող պարտքային կորուստը կաճի 243,436 հազ. ՀՀ դրամի չափով (2021թ.՝ կաճի 140,422 հազ. ՀՀ դրամի չափով):

Ներդրումային գույքի գնահատում. Ներդրումային գույքը հաշվարկվում է իրական արժեքով (փուլ 3) գնահատող ընկերության կողմից հաշվետու ժամանակաշրջանի վերջում պատրաստված հաշվետվությունների հիման վրա:

Այս գույքի գնահատման համար հիմնականում հիմք են ծառայում դրամական միջոցների զեղչված հոսքերի կանխատեսումները՝ ապագա դրամական հոսքերի հուսալի գնահատումների հիման վրա, հիմնավորված ցանկացած գործող վարձակալության և այլ պայմանագրերի պայմաններով և արտաքին այլ վկայություններով, ինչպիսիք են համանման վայրում և վիճակում գտնվող նմանատիպ գույքի ընթացիկ շուկայական վարձակալության վճարները, օգտագործելով այնպիսի զեղչի դրույքաչափեր, որոնք արտացոլում են շուկայական ընթացիկ գնահատումները դրամական միջոցների հոսքերի քանակի և ժամկետների անորոշության վերաբերյալ:

Ընկերության ներդրումային գույքի գնահատման հաշվետվությունները պատրաստելիս արտաքին գնահատողները վաճառքի համադրելի գները որոշելու ժամանակ բացառել են սթրեսային պայմաններում վաճառքները: Ղեկավարությունը վերանայել է գնահատման ժամանակ օգտագործված զեղչված դրամական հոսքերի մոդելների հիմքում ընկած ենթադրությունները և հաստատել, որ այնպիսի գործոններ, ինչպես օրինակ, կիրառված զեղչի դրույքաչափը, որոշվել են պատշաճ կերպով՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ շուկայական պայմանները: Անկախ վերը նշվածից, ղեկավարությունը գտնում է, որ իր ներդրումային գույքի գնահատումը ներկայումս ենթակա է դատողության բարձր աստիճանի և մեծ է հավանականությունը, որ վաճառքից ստացված փաստացի հասույթը կարող է տարբերվել հաշվեկշռային արժեքից:

Իրական արժեքի գնահատման հիմքում ընկած հիմնական ենթադրությունները վերաբերում են. պայմանագրային հիմունքով վարձակալությունների ստացմանը, ապագայում ակնկալվող շուկայական պայմաններով վարձակալություններին. պարապուրդի ժամանակահատվածներին, սպասարկման պահանջներին, և համապատասխան զեղչի դրույքաչափին: Այս գնահատումները պարբերաբար համեմատվում են փաստացի շուկայական եկամտաբերության տվյալների և Ընկերության փաստացի գործարքների հետ, ինչպես նաև շուկայում ներկայացված տվյալների հետ:

Կատարված հիմնական ենթադրությունները և դրանց վերաբերող հնարավոր փոփոխությունների համախառն գնահատումների վրա ազդեցությունը, այլ հավասար պայմաններում, հետևյալն են.

Ենթադրվում էր, որ զեղչի դրույքաչափը կազմում է 11,37% (2021թ.՝ զրո): Եթե այս զեղչման տոկոսադրույքը բարձրանա/նվազի 50 բազիսային կետով (2021թ.՝ զրո), ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը կլինի 89,252 հազ. ՀՀ դրամով ցածր/91,169 հազ. ՀՀ դրամով բարձր (2021թ.՝ զրո):

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում: 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը չի հայտնաբերել հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և օգտագործման իրավունքի ակտիվների գծով հնարավոր արժեզրկման հայտանիշներ: Ղեկավարությունը դիտարկում է ընկերությունը որպես մեկ դրամաստեղծ միավոր:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները և դրանց վերանայումը: 2021թ. ընթացքում Ընկերությունը վերանայել է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների որոշ տեսակների օգտակար ծառայության ժամկետները: Մալուխային ցանցի օգտակար ծառայության ժամկետները ավելացվել են 6-ից մինչև 20 տարի, իսկ շարժական հեռահաղորդակցության սարքավորումների օգտակար ծառայության ժամկետները՝ 7 տարուց մինչև 9,5 տարի՝ դրա օգտագործման փաստացի օրինաչափությունը արտացոլելու համար, հիմք ընդունելով ղեկավարության կողմից կատարված հետահայաց վերլուծությունը: Շարժական հեռահաղորդակցության սարքավորումների հետ օգտագործվող ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետը նույնպես ավելացվել է 4-ից մինչև 9,5 տարի՝ համապատասխանեցնելով սարքավորումների օգտակար ծառայության ժամկետներին, որոնց դրանք վերաբերում են:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության վերանայումը հանգեցրել է մաշվածության և ամորտիզացիայի նվազմանը 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ համապատասխանաբար 1,255,368 և 1,345,416 հազ. ՀՀ դրամով:

Եթե հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները 10%-ով տարբերվեին

ղեկավարության գնահատականներից, ապա 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար մաշվածության վրա ազդեցությունը կկազմեր 480,649 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 323,570 հազ. ՀՀ դրամ):

Եթե ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները 10%-ով տարբերվեին ղեկավարության գնահատականներից, ապա 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության վրա ազդեցությունը կկազմեր 82,911 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 69,818 հազ. ՀՀ դրամ):

Եթե վարձակալվող գույքի կապիտալ բարելավումների գնահատված օգտակար ծառայության ժամկետները 10%-ով տարբերվեին ղեկավարության գնահատականներից, ապա 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության վրա ազդեցությունը կկազմեր 30,937 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 23,648 հազ. ՀՀ դրամ):

Եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները 10%-ով տարբերվեին ղեկավարության գնահատականներից, ապա 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա մաշվածության վրա ազդեցությունը կկազմեր 114,661 հազ. ՀՀ դրամով (2021թ.՝ 119,598 հազ. ՀՀ դրամ):

Սեգմենտների հաշվետվություն: Ընկերության հիմնական գործունեությունը հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումն է բջջային և ֆիքսված կապի մի շարք տեխնոլոգիաների միջոցով: Այլ գործողությունները ներառում են հաճախորդների սարքավորումների վաճառք և այլն և անբաժանելիորեն կապված են Ընկերության հիմնական գործունեության հետ:

Ընկերության Տնօրենների խորհուրդը («Ղեկավարություն») հանդիսանում է «Գլխավոր գործադիր որոշում կայացնող անձ»: Ղեկավարությունը գնահատում է ֆինանսական կատարողականը՝ հիմնվելով ամբողջ Ընկերության գործունեության հիմնական ցուցանիշների վրա: Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է ամբողջ Ընկերության գործառնական արդյունքները՝ հիմնվելով ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստված ֆինանսական տեղեկատվության վրա և որոշումներ է կայացնում ձեռնարկատիրական գործունեությանը հատկացվող ռեսուրսների վերաբերյալ և գնահատում Ընկերության կատարողական արդյունքները: Բացի այդ, գործառնական ղեկավարների վերահսկման և գնահատման միջոցառումներն իրականացվում են Ընկերության մակարդակով: Նրանց վարձատրությունը պայմանավորված է Ընկերության հիմնական կատարողական ցուցանիշների իրականացմամբ:

Արդյունքում Ընկերության ղեկավարությունը դիտարկում է ամբողջ Ընկերությունը որպես մեկ գործառնական սեգմենտ:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

2022թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել հետևյալ փոփոխությունները.

«Նախքան ակտիվի նպատակային օգտագործումը ստացված հասույթ, անբարենպաստ պայմանագրեր. պայմանագրի կատարման արժեքը», «Հղում հայեցակարգային հիմունքներին». ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 37-ի և ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ՝ սահմանափակ կիրառության շրջանակով, և ՖՀՄՍ 1-ին, ՖՀՄՍ 9-ին, ՖՀՄՍ 16-ին և ՀՀՄՍ 41-ին վերաբերող 2018-2020 թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ (թողարկված են 2020թ. մայիսի 14-ին և ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

- ՀՀՄՍ 16-ի փոփոխությամբ կազմակերպություններին արգելվում է հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, որն արտադրվել է կազմակերպության կողմից ակտիվն իր նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վիճակի բերելու ընթացքում: Նման պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, դրա արտադրության ծախսերի հետ միասին, այժմ ենթակա է ճանաչման շահույթում կամ վնասում: Նման պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքի չափման համար Կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 2-ը:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

Սկզբնական արժեքը չի ներառի նման կերպ փորձարկվող ակտիվի մաշվածությունը, քանի որ այն դեռ պատրաստ չէ իր նպատակային օգտագործման համար: ՀՀՄՍ 16-ի փոփոխությունը նաև հստակեցնում է, որ կազմակերպությունը «ստուգում է ակտիվի պատշաճ գործունակությունը»՝ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական բնութագրերը գնահատելու միջոցով: Այս չափման համար էական չեն այդպիսի ակտիվի ֆինանսական ցուցանիշները: Հետևաբար, ակտիվը կարող է շահագործվել ղեկավարության մտադրությունների համաձայն, և մաշվածությունը կարող է հաշվարկվել մինչև ղեկավարության կողմից ակնկալվող գործառնական շահագործման համար անհրաժեշտ վիճակի հասնելը:

- ՀՀՄՍ 37-ի փոփոխությունը հստակեցնում է «պայմանագրի կատարման գծով ծախսեր» հասկացությունը: Փոփոխությամբ պարզաբանվում է, որ պայմանագրի կատարման գծով ուղղակի ծախսերը ներառում են այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի բաշխումը: Փոփոխությամբ նաև հստակեցվում է, որ նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին պահուստի ձևավորումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ պայմանագրի կատարման ընթացքում օգտագործված ակտիվների գծով, այլ ոչ թե պայմանագրի կատարման համար հատկացված ակտիվների գծով:
- ՖՀՄՍ 3-ում կատարվել է լրացում՝ ներառելով հղում Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքներին, ինչը թույլ է տալիս սահմանել ակտիվի կամ պարտավորության հասկացությունը ձեռնարկատիրական գործունեության միավորման համատեքստում: Մինչ այս փոփոխության ընդունումը, ՖՀՄՍ 3-ը հղում էր կատարում 2001թ.-ի Ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային հիմունքներին: Բացի այդ, ՖՀՄՍ 3-ում ավելացվել է նոր բացառություն պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար: Այս բացառությամբ նախատեսվում է, որ ՖՀՄՍ 3-ը կիրառող կազմակերպությունը, որոշակի տիպի պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքների փոխարեն պետք է հղում կատարի ՀՀՄՍ 37-ին կամ ՖՀՄՄԽ (IFRIC) 21-ին: Առանց այս նոր բացառության, կազմակերպությունը ստիպված կլիներ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ճանաչել որոշ պարտավորություններ, որոնք չէր ճանաչի համաձայն ՀՀՄՍ 37-ի: Հետևաբար, ձեռքբերումից անմիջապես հետո կազմակերպությունը ստիպված կլիներ ապաճանաչել այդպիսի պարտավորությունները և ճանաչել տնտեսական օգուտներ չմարմնավորող եկամուտ: Նաև պարզաբանվել է, որ ձեռք բերող կազմակերպությունը պարտավոր չէ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչել պայմանական ակտիվներ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 37-ում:
- ՖՀՄՍ 9-ի փոփոխությունն անդրադառնում է այն հարցերին, թե որ տեսակի վճարումներն են ենթակա ներառման «10% փորձարկման» կազմում՝ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման նպատակով: Ծախսերը կամ վճարումները կարող են կատարված լինել հօգուտ երրորդ անձանց կամ վարկատուի: Այս փոփոխության համաձայն, երրորդ անձանց օգտին կատարված ծախսերը կամ վճարումները չեն ներառվի «10% փորձարկման» կազմում:
- Փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 16-ի 13-րդ նկարագրական օրինակում. հանվել է վարձատուի կողմից վարձակալվող գույքի բարելավումներին վերագրվող վճարումների օրինակը: Այս փոփոխությունը կատարվել է՝ վարձակալվող գույքի բարելավումների հաշվարկման հնարավոր անորոշությունից խուսափելու համար:
- ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս օգտվել բացառությունից այն դեպքում, եթե դուստր ձեռնարկությունը սկսում է ՖՀՄՍ-ի կիրառումն ավելի ուշ ամսաթվով, քան իր մայր կազմակերպությունը: Դուստր ձեռնարկությունը կարող է չափել իր ակտիվներն ու պարտավորությունները այն հաշվեկշռային արժեքով, որով դրանք պետք է ներառվեին մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցնելու ամսաթվից, եթե տեղի ունեցած չլինեին ճշգրտումներ համախմբման և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքների արտացոլման նպատակներով, որի ներքո մայր կազմակերպությունը ձեռք է բերել նշված դուստր ձեռնարկությունը:
- ՖՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է տալիս սույն ՖՀՄՍ 1-ի բացառությունը կիրառած կազմակերպություններին նաև արտարժույթի փոխարկումից կուտակային տարբերությունները չափելիս օգտագործել մայր կազմակերպության կողմից ներկայացված թվային մեծությունները՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցման ամսաթվից: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությամբ վերոնշյալ բացառությունը տարածվում է արտարժույթի փոխարկումից առաջացած կուտակային տարբերությունների վրա, և նպատակ ունի նվազեցնել ՖՀՄՍ-ն առաջին անգամ կիրառող կազմակերպության ծախսերը: Այս փոփոխությունը կկիրառվի նաև դուստր և համատեղ ձեռնարկությունների վրա, որոնք կօգտվեն ՖՀՄՍ 1-ով սահմանված նույն բացառությունից:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

- Վերացվել է պահանջը, ըստ որի կազմակերպությունները ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքը չափելիս պարտավոր էին հարկային հաշվառման տեսանկյունից հաշվի չառնել դրամական հոսքերը: Այս փոփոխության նպատակն է՝ ապահովել համապատասխանություն հարկումից հետո զեղչված դրամական հոսքերի ստանդարտի պահանջին:

Այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2023թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները պարզաբանում են հետաձգված հարկի հաշվառման կարգը այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվը շահագործումից հանելու դեպքում պարտավորությունների հաշվեգրումը: Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման դեպքում հետաձգված հարկի ճանաչումից: Նախկինում կար այս բացառության կիրառման անորոշություն որոշակի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվների շահագործումից հանելը, որոնց համար ճանաչվում էր ինչպես ակտիվ, այնպես էլ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ այս բացառությունը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է նման գործարքների գծով ճանաչել հետաձգված հարկ: Համաձայն այս փոփոխությունների, կազմակերպությունները պարտավոր են հետաձգված հարկ ճանաչել այն գործարքների համար, որոնց գծով սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում են հավասար մեծությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ: Ընկերությունը ներկայումս իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչում է հետաձգված հարկ վարձակալությունից ստացված գործարքների և շահագործումից հանման պարտավորությունների գծով: Ընկերությունը չի ակնկալում, որ այս փոփոխության ազդեցությունը կլինի էական:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը - ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունվարի 23-ին և ուժի մեջ են մտնում 2024թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Կիրառման սահմանափակ շրջանակ ունեցող այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Մարումը հետաձգելու իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը ժամանակաշրջանի վերջում բավարարում է բոլոր կիրառելի պայմանները: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք: Ընկերությունը չի ակնկալում, որ այս փոփոխության ազդեցությունը կլինի էական:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը. ուժի մեջ մտնելու ամսաթվի հետաձգում. ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հուլիսի 15-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները, որոնք վերաբերում են պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ և երկարաժամկետ դասակարգմանը, թողարկվել են 2020թ. հունվարին, և նախնական ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվել 2022թ. հունվարի 1-ը: Այնուամենայնիվ, COVID-19 համավարակով պայմանավորված, ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է մեկ տարով, որպեսզի կազմակերպությունները բավարար ժամանակ ունենան փոփոխությունների արդյունքում դասակարգումներում տեղի ունեցող փոփոխությունները ներդնելու համար: Ընկերությունը չի ակնկալում, որ այս փոփոխության ազդեցությունը կլինի էական:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները: Ընկերությունը չի ակնկալում, որ այս փոփոխության ազդեցությունը կլինի էական:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն: Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության սահմանումները: Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը հավանական է, որ կհամարվի էական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները չեն կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ էական տեղեկատվությունը: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա:

Այնուամենայնիվ, այդպիսի տեղեկատվության բացահայտման դեպքում, այն չպետք է դժվարեցնի հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվության ընկալումը: Այս փոփոխությանն օժանդակելու համար փոփոխություններ են կատարվել նաև ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2-ում՝ «Էականության վերաբերյալ դատողություններ», որը ուղեցույց է տրամադրում հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով բացահայտումների նկատմամբ էականության հայեցակարգի կիրառման վերաբերյալ: Ընկերությունը չի ակնկալում, որ այս փոփոխության ազդեցությունը կլինի էական:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի շարժերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Հող	Շենքեր և կառուցվածքներ	Փոխանցող հարմարանքներ	Սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Հարմարանքներ և կցամասեր	Այլ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք									
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	**7,190**	**17,939,033**	**41,753,361**	**82,200,366**	**1,685,769**	**2,379,596**	**20,413**	**2,210,404**	**148,196,132**
Ավելացումներ	509,539	46,356	389,072	994,928	151,044	84,170	-	2,945,339	5,120,447
Օտարումներ	-	(592,001)	(253,299)	(1,061,102)	(83,567)	(12,640)	-	(1,004)	(2,003,613)
Վերադասակարգումներ	-	265,763	600,946	896,264	7,481	(10,051)	-	(1,760,403)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**516,729**	**17,659,151**	**42,490,081**	**83,030,456**	**1,760,727**	**2,441,075**	**20,413**	**3,394,335**	**151,312,966**
Ավելացումներ	60,919	859,214	1,078,540	1,656,281	442,740	601,184	-	5,638,010	10,336,888
Օտարումներ	(888)	(32,520)	(10,777)	(1,561,632)	(71,583)	(317,419)	-	(1,031,211)	(3,026,030)
Վերադասակարգումներ	-	492,825	1,278,397	1,932,677	-	8,631	-	(3,712,530)	-
Վերադասակարգում ներդրումային գույքի	(49,589)	(4,266,792)	-	-	-	-	-	-	(4,316,380)
Վերադասակարգում վաճառքի համար պահվող ակտիվների	(37,860)	(340,941)	-	-	-	-	-	-	(378,801)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**489,311**	**14,370,937**	**44,836,240**	**85,057,781**	**2,131,884**	**2,733,472**	**20,413**	**4,288,605**	**153,928,643**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում									
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	**-**	**(16,256,439)**	**(36,829,212)**	**(73,569,654)**	**(1,531,209)**	**(1,781,217)**	**(20,413)**	**-**	**(129,988,144)**
Մաշվածություն տարվա համար	-	(510,934)	(1,699,467)	(2,631,863)	(71,204)	(153,621)	-	-	(5,067,089)
Օտարումներ	-	587,919	246,275	958,341	81,817	11,621		-	1,885,972
Վերադասակարգումներ	-	-	-	-	-	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**-**	**(16,179,454)**	**(38,282,404)**	**(75,243,177)**	**(1,520,596)**	**(1,923,217)**	**(20,413)**	**-**	**(133,169,261)**
Մաշվածություն տարվա համար	-	(560,057)	(1,598,906)	(2,361,662)	(125,831)	(160,032)	-	-	(4,806,489)
Օտարումներ	-	32,520	10,777	1,199,272	8,795	238,607	-	-	1,489,972
Վերադասակարգում ներդրումային գույքի	-	3,817,144	-	-	-	-	-	-	3,817,144
Վերադասակարգում վաճառքի համար պահվող ակտիվների	-	318,731	-	-	-	-	-	-	318,731
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**-**	**(12,571,116)**	**(39,870,533)**	**(76,405,567)**	**(1,637,631)**	**(1,844,643)**	**(20,413)**	**-**	**(132,349,903)**
Հաշվեկշռային արժեք									
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**7,190**	**1,682,594**	**4,924,149**	**8,630,712**	**154,560**	**598,379**	**-**	**2,210,404**	**18,207,988**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**516,729**	**1,479,697**	**4,207,676**	**7,787,279**	**240,131**	**517,858**	**-**	**3,394,335**	**18,143,705**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**489,311**	**1,799,821**	**4,965,707**	**8,652,214**	**494,252**	**888,829**	**-**	**4,288,605**	**21,578,740**

7 Հիմնական միջոցներ (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 4,806,489 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 5,067,090 հազ. ՀՀ դրամ) ընդհանուր մաշվածության ծախսից 4,486,449 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 4,887,261 հազ. ՀՀ դրամ) ներառված է տրամադրված ծառայությունների ինքնարժեքի մեջ, տես Ծանոթագրություն 24, 320,134 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 179,823 հազ. ՀՀ դրամ)՝ ընդհանուր և վարչական ծախսերի մեջ, տես Ծանոթագրություն 26, այլ գործառնական ծախսերի մեջ որևէ գումար ներառված չէ (2021թ.՝ 6 հազ. ՀՀ դրամ), տես Ծանոթագրություն 28:

Անավարտ շինարարությունը բաղկացած է հեռահաղորդակցության և այլ սարքավորումների գծով կապիտալ ծախսումներից:

Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարները, որոնք հիմնականում վերաբերում են հաղորդիչ սարքերի գնումներին, 31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ կազմել է 986,708 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 944,774 հազ. ՀՀ դրամ): Տարվա ընթացքում օգտագործվել են նյութական մնացորդներ, և փոխանցվել են նոր կանխավճարներ նոր ծրագրերի համար:

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ. 3,987,644 հազ. ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով (2021թ.՝ 125,922 հազ. ՀՀ դրամ) շենքերը, հողերը, շինությունները և հաղորդիչ սարքերը գրավադրվել են երրորդ անձանց՝ որպես փոխառությունների դիմաց գրավ: Տես Ծանոթագրություն 32:

8 Ներդրումային գույք

Հազ. ՀՀ դրամ		**2022թ.**	**2021թ.**
Ներդրումային գույք իրական արժեքով, հունվարի 1-ի դրությամբ		**-**	**-**
Տեղափոխում սեփականատիրոջ զբաղեցրած տարածքից	7	499,236	-
Իրական արժեքով օգուտ՝ հանած վնաս		5,427,831	-
Իրական արժեքով ներդրումային գույք 31 դեկտեմբերի դրությամբ		**5,927,067**	**-**

Ներդրումային գույքը ներառում է Հայաստանի Հանրապետություն, Երևան, Ազատության 24/1 հասցեում գտնվող շենքը: 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ղեկավարությունը փոխել է շենքի օգտագործման վերաբերյալ մտադրությունը և սկսել է այն վարձակալությամբ հանձնել մի քանի վարձակալների:

Ներդրումային գույքը գնահատվում է տարեկան հիմունքով, դեկտեմբերի 31-ի դրությամբ, իրական արժեքով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողի կողմից, որն ունի Հայաստանում նմանատիպ գույքի գնահատման արդիական փորձ: Իրական արժեքի չափման մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես Ծանոթագրություն 36:

Շահույթում կամ վնասում ճանաչված ուղղակի գործառնական ծախսերը ներառում են 314,230 հազ. ՀՀ դրամ ներդրումային գույքի գծով, որն առաջացրել է վարձակալության գծով եկամուտ:

Շահույթում կամ վնասում ճանաչված ուղղակի գործառնական ծախսերը ներառում են 104,951 հազ. ՀՀ դրամ ներդրումային գույքի գծով, որը չի առաջացրել վարձակալության գծով եկամուտ:

Ներդրումային գույքը ամբողջությամբ ավարտված է և օգտագործման մեջ է գտնվում հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ ամբողջ ներդրումային գույքը գրավադրվել է երրորդ անձանց՝ որպես գրավ՝ փոխառությունների գծով, տես Ծանոթագրություն 32: Այն դեպքում, երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձատու, ներդրումային գույքի գործառնական վարձակալությամբ ստացման ենթակա ապագա նվազագույն վարձակալական վճարները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
1 տարի	1,771,039	-
2 տարի	1,154,942	-
Ընդամենը գործառնական վարձակալությամբ ստացման ենթակա չզեղչված վարձակալական վճարներ 31 դեկտեմբերի դրությամբ	**2,925,981**	**-**

.Ներդրոմային գույքի գծով վարձակալական եկամուտը 2022թ. համար կազմել է 638,692 հազ. ՀՀ դրամ:

9 Ոչ նյութական ակտիվներ և ԱՕԻ

Հազ. ՀՀ դրամ	Համակարգ-չային ծրագրեր	Լիցեն-զիաներ	Այլ	Ներստեղծ-ված ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	**11,517,877**	**17,053,792**	**819,324**	**-**	**29,390,993**
Ավելացումներ	151,117	506,176	-	-	657,293
Օտարումներ	(231,758)	(147,535)	(217,795)	-	(597,088)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**11,437,236**	**17,412,433**	**601,529**	**-**	**29,451,198**
Ավելացումներ	796,630	323,986	255	82,626	1,203,497
Օտարումներ	(212,719)	(28,251)	(1)	-	(240,971)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**12,021,147**	**17,708,168**	**601,783**	**82,626**	**30,413,724**
Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում					
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	**(10,803,689)**	**(14,064,297)**	**(527,979)**	**-**	**(25,395,965)**
Տարվա ամորտիզացիոն ծախս	(267,760)	(392,760)	(37,655)	-	(698,175)
Օտարումներ	198,346	146,099	216,854	-	561,299
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**(10,873,103)**	**(14,310,958)**	**(348,780)**	**-**	**(25,532,841)**
Տարվա ամորտիզացիոն ծախս	(101,437)	(690,086)	(37,586)	-	(829,107)
Օտարումներ	206,251	27,246	1	-	233,498
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**(10,768,288)**	**(14,973,798)**	**(386,365)**	**-**	**(26,128,450)**
Հաշվեկշռային արժեք					
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**714,188**	**2,989,495**	**291,345**	**-**	**3,995,028**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**564,133**	**3,101,475**	**252,749**	**-**	**3,918,357**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**1,252,859**	**2,734,370**	**215,418**	**82,626**	**4,285,274**

Լիցենզիաները ներառում են հիմնականում GSM լիցենզիաներ, որոշակի հաճախականություններին միանալու լիցենզիաներ և այլն:

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 829,107 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 698,175 հազ. ՀՀ դրամ) ընդհանուր ամորտիզացիոն ծախսից 829,107 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 698,175 հազ. ՀՀ դրամ) ներառված է տրամադրված ծառայությունների ինքնարժեքի մեջ (տես Ծանոթագրություն 24): Համակարգչային ծրագրերի գծով աճը կապված է բջջային սարքավորումների նոր ծրագրային ապահովման ձեռքբերման հետ:

IRU պայմանագրերով կանխավճարների տեղաշարժերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Հաշվեկշռային արժեք առ 1 հունվարի	**303,932**	**-**
Ավելացումներ	37,506	386,760
Համապատասխան IRU ծառայությունների ստացման հետ կապված կանխավճարների ապաճանաչում	(129,847)	(82,828)
Ընդամենը կանխավճարներ առ 31 դեկտեմբերի	**211,591**	**303,932**

Ընկերությունը կնքել է եկամուտների բաշխման համաձայնագրեր: Համաձայն այս շրջանակային համաձայնագրերի, Ընկերությունը և գործընկերները համօգտագործում են օպտիկական մալուխը: Այս համաձայնագրերը թույլ են տալիս Ընկերությանը IRU-ների կողմ դառնալ ծառայության պատվերի ձևերի (SOF) միջոցով: Ընկերությունը ձեռք է բերում պայմանագիր, որն ապահովում է իր հզորության օգտագործումը 3 և 15 տարի ժամկետով. նման կանխավճարները ներկայացված են սույն ֆինանսական հաշվետվություններում որպես կանխավճարներ IRU պայմանագրերով:

10 Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր**
Սկզբնական արժեք	
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	**5,949,971**
Ավելացումներ	32,321
Օտարումներ	(22,452)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**5,959,840**
Ավելացումներ	203,910
Օտարումներ	(2,254)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**6,161,496**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում	
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	**(4,441,402)**
Մաշվածություն տարվա համար	(236,477)
Օտարումներ	22,324
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**(4,655,555)**
Մաշվածություն տարվա համար	(309,370)
Օտարումներ	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**(4,964,925)**
Հաշվեկշռային արժեք	
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,508,569**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**1,304,285**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**1,196,571**

216,456 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 236,477 հազ. ՀՀ դրամ) ընդհանուր մաշվածության գծով ծախսը ներառվում է վաճառքի ինքնարժեքում, տես Ծանոթագրություն 24, ընդհանուր և վարչական ծախսերում ներառվում է 92,914 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ զրո): Լրացման հիմնական մասը կապված է վարձակալված նոր գլխամասային շենքի շինարարական աշխատանքների հետ:

11 Տրամադրված փոխառություններ

Ընկերության փոխառությունները արտահայտված են հետևյալ արտարժույթով.

Հազ. ՀՀ դրամ		**2022թ.**	**2021թ.**
Տրամադրված փոխառություններ՝ արտահայտված	- ԱՄՆ դոլարով	17,568,700	11,456,491
	- ՀՀ դրամով	461,550	343,124
Ընդամենը տրամադրված փոխառություններ՝ նախքան պարտքային կորուստների գծով պահուստը		**18,030,250**	**11,799,615**
Նվազեցում պարտքային կորուստների գծով պահուստի չափով		(781,003)	(844,253)
Ընդամենը տրամադրված փոխառություններ		**17,249,248**	**10,955,362**

2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր փոխառությունները տրամադրվել են անմիջական մայր ընկերությանը՝ մի քանի փոխառությունների համաձայնագրերի ներքո: Փոխառությունները տրամադրվել են 2020թ. նոյեմբերի 12-ից մինչև 2022թ. հունիսի 14-ը, իսկ պայմանագրային մարման ժամկետներն են 2026թ. մարտ ամսից մինչև 2029թ. դեկտամբեր ամիսը՝ կախված համաձայնագրից: Մի քանի փոխառություններ տրամադրվել են անտոկոս կամ 5,6%+6 մլն SOFR (Նյու Յորքի Դաշնային պահուստային բանկի կողմից կառավարվող (կամ ցանկացած այլ անձի կողմից, որը ստանձնում է այդ տոկոսադրույքի կառավարումը) ֆինանսավորման ապահովված օվերնայթ տոկոսադրույքը՝ հրապարակված Նյու Յորքի Դաշնային պահուստային բանկի կողմից (կամ ցանկացած այլ անձ, որը ստանձնում է այդ փոխարժեքի հրապարակումը), որը շուկայական փոխարժեքից ցածր է, հետևաբար դրամական միջոցների վճարումների և համապատասխան իրական արժեքի միջև տարբերությունը սկզբնական ճանաչման պահին ճանաչվել է սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում:

11 Տրամադրված փոխառություններ (շարունակություն)

2022թ. տրամադրված փոխառությունների ճանաչման ժամանակ իրական արժեքի ճշգրտման ընդհանուր ազդեցությունը կազմել է 2,121,267 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 2,292,170 հազ. ՀՀ դրամ): Միջին արդյունավետ տոկոսադրույքը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 9,5% (31 դեկտեմբերի 2021թ..՝ 8,05%):

Տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորստի չափը հավասար է 1,463,862 1,527,112 հազ. ՀՀ դրամ առ 31 դեկտեմբերի 2022թ. (2021թ.՝ 1,527,112 հազ. ՀՀ դրամ) (Ծանոթագրություն 34): Այս գնահատման վերաբերյալ կարևոր դատողությունները բերված են Ծանոթագրություն 4-ում: Տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքը, ակնկալվող պարտքային կորստի պահուստի հետ միասին էականորեն չեն տարբերվում դրանց իրական արժեքից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Ընկերության կողմից տրամադրված փոխառությունների շարժը ժամանակաշրջաններից յուրաքանչյուրի համար: Մատակարարներին տրվող կանխավճարների վերադասակարգումը ներկայացնում է այն գումարը, որը համաձայնեցված է ճանաչել որպես Ընկերության և նրա մայր կազմակերպության կողմից ապագա ծառայությունների դիմաց կանխավճար:

Հազ. ՀՀ դրամ	**Փոխառությունների համախառն գումար**	**ԱՊԿ պահուստ**	**Փոխառությունների զուտ գումար**
Տրամադրված փոխառություններ առ 1 հունվարի 2022թ.	**11,799,615**	**(844,253)**	**10,955,362**
Դրամական միջոցների հոսքեր			
Տրամադրված փոխառություններ	10,357,819	-	10,357,819
Մայր գումարի մարում	(297,697)	-	(297,697)
Ոչ դրամական փոփոխություններ			
Տոկոսների հաշվեգրում	802,618	-	802,618
ԱՊԿ-ի վերագնահատում	-	63,250	63,250
Վարկերի զեղչում (սեփական կապիտալի միջոցով)	(2,121,269)	-	(2,121,269)
Զեղչի հակադարձում	458,578	-	458,578
Փոխարժեքային ճշգրտումներ	(2,184,168)	-	(2,184,168)
Վերադասակարգում մատակարարներին տրվող կանխավճարների	(785,246)	-	(785,246)
Տրամադրված փոխառություններ առ 31 դեկտեմբերի 2022թ.	**18,030,250**	**(781,003)**	**17,249,248**

Հազ. ՀՀ դրամ	**Փոխառությունների համախառն գումար**	**ԱՊԿ պահուստ**	**Փոխառությունների զուտ գումար**
Տրամադրված փոխառություններ առ 1 հունվարի 2021թ.	**7,366,065**	**(1,141,436)**	**6,224,629**
Դրամական միջոցների հոսքեր			
Տրամադրված փոխառություններ	7,537,928	-	7,537,928
Մայր գումարի մարում	(478,303)	-	(478,303)
Ոչ դրամական փոփոխություններ			
Տոկոսների հաշվեգրում	357,216	-	357,216
ԱՊԿ-ի վերագնահատում	-	297,183	297,183
Վարկերի զեղչում (սեփական կապիտալի միջոցով)	(2,292,170)	-	(2,292,170)
Զեղչի հակադարձում	387,553	-	387,553
Փոխարժեքային ճշգրտումներ	(1,078,674)	-	(1,078,674)
Տրամադրված փոխառություններ առ 31 դեկտեմբերի 2021թ.	**11,799,615**	**(844,253)**	**10,955,362**

12 Պաշարներ

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Նյութեր և պահեստամասեր	693,462	727,618
Վաճառքի ենթակա ապրանքներ	483,083	272,589
Վառելիք	92,141	60,237
Քարտեր	22,289	24,073
Այլ պաշարներ	71,936	77,687
Պաշարների պահուստ դանդաղ շրջանառվող պաշարների համար	(754,006)	(730,711)
Ընդամենը պաշարներ	**608,905**	**431,493**

13 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Առևտրային դեբիտորական պարտքեր - բաժանորդներ	5,230,034	4,234,974
Առևտրային դեբիտորական պարտքեր – միջհամակարգային կապ	804,087	1,008,055
Առևտրային դեբիտորական պարտքեր – ռոումինգ	704,200	856,441
Առևտրային դեբիտորական պարտքեր – վերավաճառք	112,571	172,447
Առևտրային դեբիտորական պարտքեր - այլ առևտուր	1,744,409	498,865
Նվազեցում պարտքային կորուստների գծով պահուստի չափով	(2,355,283)	(2,189,262)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային դեբիտորական պարտքերի կազմում	**6,240,018**	**4,581,520**
Կանխավճարներ մատակարարներին	1,825,526	1,093,023
Կանխավճարային ծախսեր	103,678	35,948
Այլ ընթացիկ ակտիվներ	34,429	-
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ յլ դեբիտորական պարտքերի կազմում	**1,963,633**	**1,128,971**
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**8,203,651**	**5,710,491**

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար Ընկերությունն օգտագործում է ՖՀՄՍ 9-ով նախատեսված պարզեցված մոտեցումը, համաձայն որի օգտագործվում է բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող կորուստների համար գնահատված պահուստը ամբողջ ժամկետի համար: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար առևտրային և այլ դեբիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով պարտքային ռիսկի ընդհանուր բնութագրերից և ժամկետանց օրերի քանակից:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի շարժը ըստ ակնկալվող պարտքային կորստի պարզեցված մոդելի, տարեկան ժամանակահատվածի սկզբից մինչև վերջ ընկած ժամանակահատվածի համար.

	Առևտրային դեբիտորական պարտքեր	
Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Պարտքային կորստի պահուստ առ 1 հունվարի	**2,189,262**	**2,449,480**
Նոր առաջացած	20,357	241,419
Պարտքային կորստի ընդհանուր գումարը ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում	20,357	241,419
Տարվա ընթացքում դուրս գրված անհավաքագրելի գումարներ	145,664	(501,637)
Պարտքային կորստի պահուստ առ 31 դեկտեմբերի	**2,355,283**	**2,189,262**

13 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և այլ ոչ ընթացիկ ակտիվներ (շարունակություն)

Առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի չափը որոշվում է ըստ ստորև բերված աղյուսակում ներկայացված պահուստի ժամկետայնության: Պահուստի ժամկետայնությունը հիմնված է ակտիվի մարման ժամկետի ամսաթվից հետո ժամկետանց օրերի վրա՝ ճշգրտված Հայաստանում ՀՆԱ-ի աճով և գործազրկության մակարդակի փոփոխություններով:

Պահուստի մատրիցան առ 31 դեկտեմբերի 2022թ. ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**Ընթացիկ-ոչ ժամկետ-անց**	**1-ից 30 օր ժամկետանց**	**31-ից 60 օր ժամկետանց**	**61-ից 90 օր ժամկետանց**	**91-ից 120 օր ժամկետանց**	**121 օրից ավելի ժամկետանց**	**Ընդամենը**
Համախառն առևտրային դեբիտորական պարտքեր	5,996,910	247,281	124,872	100,862	87,328	2,038,048	8,595,301
Ակնկալվող կորստի չափը, %	1%	15%	47%	68%	81%	100%	
Ակնկալվող պարտքային կորուստներ	(82,910)	(36,951)	(58,079)	(68,803)	(70,492)	(2,038,048)	(2,355,283)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	**5,914,000**	**210,330**	**66,793**	**32,059**	**16,836**	**-**	**6,240,018**

2022թ. Ընկերությունը հաճախորդներից մեկին մատուցել է ինտերնետ տրաֆիկի ծառայություններ 2,699,790 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով (2021թ.՝ 1,685,864 հազ. ՀՀ դրամ): Դեբիտորական պարտքերի գումարները ներառված են առևտրային դեբիտորական պարտքերի ընթացիկ-ոչ ժամկետանց մասում՝ վերը նշված աղյուսակում: Պահուստի մատրիցան առ 31 դեկտեմբերի 2021թ. ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**Ընթացիկ-ոչ ժամկետ-անց**	**1-ից 30 օր ժամկետանց**	**31-ից 60 օր ժամկետանց**	**61-ից 90 օր ժամկետանց**	**91-ից 120 օր ժամկետանց**	**121 օրից ավելի ժամկետանց**	**Ընդամենը**
Համախառն առևտրային դեբիտորական պարտքեր	4,117,227	434,576	301,742	229,154	239,883	1,448,200	6,770,782
Ակնկալվող կորստի չափը, %	7%	17%	44%	45%	56%	100%	
Ակնկալվող պարտքային կորուստներ	(298,997)	(72,564)	(131,424)	(103,842)	(134,235)	(1,448,200)	(2,189,262)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	**3,818,230**	**362,012**	**170,318**	**125,312**	**105,648**	**-**	**4,581,520**

3,650,734 հազ. ՀՀ դրամի չափով առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերը (2021թ.՝ 2,599,252 հազ. ՀՀ դրամ) արտահայտված են արտարժույթով, որից 82%-ը ԱՄՆ դոլարով (2021թ.՝ 78%), 8%-ը՝ հատուկ փոխառության իրավունքներ-SDR, ՀՓԻ (2021թ.՝ 15%), 8% եվրոյով (2021թ.՝ 5%) և 1%՝ ՄԹ ֆունտ ստեռլինգով (2021թ.՝ 1%):

13 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և այլ ոչ ընթացիկ ակտիվներ (շարունակություն)

31 դեկտեմբերի 2021թ. և 31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ այլ ոչ ընթացիկ ակտիվները ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Երկարաժամկետ առևտրային դեբիտորական պարտքեր	3,073,703	-
Մայր կազմակերպությունից դեբիտորական պարտքերի իրական արժեքով ճանաչման ազդեցությունը	(889,764)	-
Այլ	-	64,578
Հանած՝ պարտքային կորստի գծով պահուստ	(165,160)	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**2,018,779**	**64,578**

2022 թվականի սեպտեմբերի 8-ին ստորագրված եռակողմ պայմանագրի հիման վրա մեծածախ ինտերնետ ծառայության տրաֆիկի գծով հաճախորդը Ընկերության նկատմամբ իր պարտավորությունները փոխանցել է «Թիմ» ՓԲԸ-ին այն կանխավճարի չափով, որը պետք է փոխհատուցվի «Թիմ» ՓԲԸ-ի կողմից:

Բոլոր կողմերը համաձայնության են եկել այն պայմանների շուրջ, որ «Թիմ» ՓԲԸ-ն պարտավորվում է հաճախորդին փոխհատուցել (վերադարձնել) ստացած կանխավճարը՝ ստանձնելով Ընկերության նկատմամբ հաճախորդի պարտքի վճարման պարտավորությունը 2,646 ԱՄՆ դոլարի չափով, ինչը համարժեք է 1,070,294 հազ. ՀՀ դրամին՝ Ընկերության կողմից մատուցած ծառայությունների դիմաց: Ընկերությունը կընդունի «Թիմ» ՓԲԸ-ի կողմից կատարված վճարումը որպես մեծածախ ինտերնետ տրաֆիկի հաճախորդի և Ընկերության միջև կնքված Ծառայությունների մատուցման Գլխավոր պայմանագրով նախատեսված պարտավորությունների մասնակի մարում: 2022թ. սեպտեմբերի 1-ին Ընկերությունը և Մայր կազմակերպությունը պայմանավորվել են հետաձգել 1,070,293 հազ. ՀՀ դրամի չափով վճարումները, որոնք պետք է վճարվեն չորս տարաժամկետ մարումներով՝ սկսած 2023թ. հունիսի 1-ից մինչև 2026 թվականի մարտի 31-ը:

2020թ.-ին մայր ընկերությունը ստացել է ներդրումային խորհրդատվական ծառայություններ՝ կապված Ընկերության 100% բաժնետոմսերի գնման հետ: Երրորդ կողմի մատուցած խորհրդատվական ծառայությունների համար վճարված գինը առանց ԱԱՀ-ի կազմել է 1,960,000 հազ. ՀՀ դրամ: 2020 թվականի հոկտեմբերի 30-ին սպասարկման վճարը Ընդհանուր և վարչական ծախսերի կազմում ճանաչվել է որպես մասնագիտական ծառայություն՝ վերը նշված նույն գումարի չափով: Մնացորդն ամբողջությամբ վճարվել է Ընկերության կողմից:

2022թ. Ընկերությունը վերագնահատել է գործարքի բնույթը և որոշել է, որ ներդրումային խորհրդատվական ծառայությունների վերջնական շահառուն մայր ընկերությունն է, և ծախսը նույն չափով ներկայացվել է Մայր կազմակերպությանը: 2022 թվականի ապրիլի 29-ին Ընկերության կողմից թողարկված հաշիվ-ապրանքագրի հիման վրա ստացված հատուցումը ճանաչվել է որպես Մայր կազմակերպության կողմից փոխհատուցմամբ եկամուտ՝ 1,960,000 հազ. ՀՀ դրամ առանց ԱԱՀ (Ծանոթագրություն 25):

2022 թվականի մայիսի 2-ին Մայր կազմակերպությունը և Ընկերությունը պայմանավորվել են հետաձգել 2,350,000 հազ. ՀՀ դրամի չափով վճարումները, որոնք պետք է վճարվեն չորս հավասար տարաժամկետ մասերով՝ սկսած 2023թ. նոյեմբերից մինչև 2026թ. նոյեմբեր:

14 Ժամկետային ավանդ

Ընկերությունը տեղական բանկի հետ կնքել է ավանդային պայմանագիր տեղական արժույթով՝ 822,000 հազ. ՀՀ դրամի չափով, սկզբնական մարման ժամկետը՝ մինչև 2023թ. սեպտեմբեր, 9.3% տոկոսադրույքով, որը պետք է մարվի ամսական սկզբունքով: Բանկային ավանդների մնացորդները ժամկետանց կամ արժեզրկված չեն: Բանկի վարկային որակը՝ ըստ պարտքային ռիսկի դասակարգման վարկանիշների, 2022թ. դեկտեմբերի 31-ին B+ է (S&P Գլոբալ վարկանիշ).

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազ. ՀՀ դրամ	**2022**	**2021**
Ցպահանջ բանկային հաշիվներ	511,173	1,364,480
Դրամական միջոցներ ճանապարհին	80,908	74,583
Առձեռն դրամական միջոցներ	23,719	27,997
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**615,800**	**1,467,060**

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է բանկերի մնացորդների վարկային որակը՝ ըստ պարտքային ռիսկի դասակարգման վարկանիշների, 2022թ. դեկտեմբերի 31-ին և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ժամկետանց կամ արժեզրկված չեն, իսկ ԱՊԿ-ն նշանակալի չէ:

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
S&P գլոբալ վարկանիշ B+	487,329	1,337,384
Չվարկանշված	23,844	27,096
Ընդամենը բանկային մնացորդներ	**511,173**	**1,364,480**

16 Կանոնադրական կապիտալ

Հազ. ՀՀ դրամ	**Թողարկված բաժնետոմսերի քանակ**	**Սովորական բաժնետոմսեր**	**Ընդամենը կանոնադրական կապիտալ**
Առ 1 հունվարի 2021թ.	**188,377,090**	**0.1**	**18,837,709**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**188,377,090**	**0.1**	**18,837,709**
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	**188,377,090**	**0.1**	**18,837,709**

Սովորական բաժնետոմսերի ընդհանուր հայտարարված քանակը կազմում է 188,377 հազ. բաժնետոմս (2021.՝ 188,377 հազ. բաժնետոմս), յուրաքանչյուր բաժնետոմսը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով (2021թ.՝ յուրաքանչյուր բաժնետոմսը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով): Բոլոր թողարկված սովորական բաժնետոմսերն ամբողջովին վճարված են: Յուրաքանչյուր սովորական բաժնետոմս ունի մեկ ձայնի իրավունք:

Ընկերության սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի.

- մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին ձայնի իրավունքով բոլոր հարցերի վերաբերյալ՝ իր ամբողջությամբ վճարված քվեարկող բաժնետոմսերին համապատասխան,
- ստանալ շահաբաժիններ,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ իր գույքի համապատասխան բաժինը.
- Օրենքով սահմանված դեպքերում Ընկերության շահույթի, պահուստների և (կամ) ակտիվների կապիտալիզացիայի ներքո բաժնետիրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ նոր թողարկված բաժնետոմսեր՝ տվյալ պահին բաժնետիրական կապիտալում իր բաժնեմասնակցության համամասն չափով:

17 Բանկային վարկեր

Ընկերության՝ արժույթներով արտահայտված փոխառությունները ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Վարկեր՝ արտահայտված		
- ԱՄՆ դոլարով	18,334,317	8,333,956
- ՀՀ դրամով	-	330,940
Ընդամենը վարկեր առ 31 դեկտեմբերի	**18,334,317**	**8,664,896**

Ընկերությունը չի կիրառում հեջի հաշվառում իր արտարժույթով պարտավորությունների կամ տոկոսադրույքների ռիսկի գծով: Փոխառությունների հաշվեկշռային արժեքները և իրական արժեքները հետևյալն են

	Հաշվեկշռային արժեքներ		**Իրական արժեքներ**	
Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**	**2022թ.**	**2021թ.**
Բանկային վարկ 2024թ. մայիս մարման ժամկետով և 7.5% տոկոսադրույքով	-	3,365,881	-	3,365,881
Բանկային վարկ 2028թ. հոկտեմբեր մարման ժամկետով և 8% տոկոսադրույքով	-	2,452,120	-	2,452,120
Բանկային վարկ 2027թ. նոյեմբերի մարման ժամկետով և 8% տոկոսադրույքով	-	1,915,310	-	1,915,310
Բանկային վարկ 2026թ. դեկտեմբեր մարման ժամկետով և 7.5% տոկոսադրույքով	-	600,644	-	600,644
Բանկային վարկ 2028թ. դեկտեմբեր մարման ժամկետով և 13% տոկոսադրույքով	-	330,941	-	330,941
Բանկային վարկ 2029թ. հունիս մարման ժամկետով և SOFR+5.6% տոկոսադրույքով	17,792,270	-	17,547,177	-
Բանկային վարկ 2023թ. հունիս մարման ժամկետով և SOFR+5.6% տոկոսադրույքով	787,140	-	787,140	-
Ընդամենը փոխառություններ առ 31 դեկտեմբերի	**18,579,410**	**8,664,896**	**18,334,317**	**8,664,896**

2022թ. մայիսի 26-ին Ընկերությունը 18,301,042 հազ. ՀՀ դրամ (45,000,000 ԱՄՆ դոլար) ընդհանուր գումարով 7 տարի մարման ժամկետով ԱՄՆ դոլարով արտահայտված ժամկետային վարկային պայմանագրեր է կնքել Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ՝ վերաֆինանսավորելու Ընկերության գոյություն ունեցող խոշոր պարտքը, որը հիմնականում արդյունք էր «ԹԻՄ» ՓԲԸ-ի կողմից փոխառու միջոցների հաշվին Ընկերության ձեռքբերման, ինչպես նաև ֆինանսավորելու Ընկերության աճի կապիտալիզացիայի պլանը: 2022թ. դեկտեմբերի 31-ից հետո կիրականացվեն 14 տոկոսների մարումներ կիսամյակային պարբերականությամբ:
2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ. Ընկերությունը գրավադրել է 3,987,644 հազ. ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով շենքեր (2021թ.՝ 125,922 հազ. ՀՀ դրամ)՝ որպես երաշխիք՝ այդ օրվա դրությամբ 17,792,270 ՀՀ դրամ (2021թ.՝ 7,733,311 ՀՀ դրամ) չմարված մնացորդով վարկերի դիմաց:

Համապատասխանություն պայմանագրերին. Ընկերությունը պարտավորություն է ունեցել կատարել Վարկային պայմանագրերում ամրագրված որոշակի պայմաններ: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահպանել է պայմանագրերի պայմանները: Այնուամենայնիվ, 31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ Ընկերության՝ պայմանագրային պայմանների խախտմամբ ընդհանուր վարկերի գումարը կազմել է 1,915,310 հազ. ՀՀ դրամ (31 դեկտեմբերի 2020թ.՝ զրո): Ի հավելումն, խախտվել են «ԹԻՄ» ՓԲԸ-ի և Ամերիաբանկի միջև կնքված վարկային պայմանագրով նախատեսված պայմանները, որտեղ Ընկերությունը 31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ 10,851,434 հազ. ՀՀ դրամ մնացորդով վարկի համար հանդես է եկել որպես երաշխավոր: 2021 թ. դեկտեմբերին բանկերը որոշումներ են կայացրել Ընկերությանը խախտման հետ կապված արտոնություններ տրամադրելու վերաբերյալ: Այդ պատճառով Ընկերությունը չի վերադասակարգել այդ վարկերը ընթացիկ պարտավորություններին:

18 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

Ընկերությունը հողի և շինությունների տեսքով վարձակալում է տարբեր գրասենյակային և տեխնիկական տարածքներ: Վարձակալության պայմանագրերը սովորաբար կնքվում են հաստատուն ժամանակահատվածով 1-10 տարի ժամկետով:

Հազ. ՀՀ դրամ	**Հող**	**Շենքեր, գրասեն-յակներ, խանութներ**	**Ընդամենը**
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2021թ.	**509,741**	**3,848,148**	**4,357,889**
Ավելացումներ	9,689	485,127	**494,816**
Օտարումներ	(16,120)	(169,188)	**(185,308)**
Մաշվածություն	(86,372)	(1,109,607)	**(1,195,979)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**416,938**	**3,054,480**	**3,471,418**
Ավելացումներ	342,810	895,373	**1,238,183**
Օտարումներ	(12,049)	(43,236)	**(55,285)**
Մաշվածություն	(115,626)	(1,030,981)	**(1,146,607)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**632,073**	**2,875,636**	**3,507,709**

Ընկերությունը ճանաչել է վարձակալության գծով հետևյալ պարտավորությունները.

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
Վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորություններ	1,067,167	1,373,865
Վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորություններ	3,166,781	3,100,899
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	**4,233,948**	**4,474,764**

Ֆինանսական ծախսերի կազմում ներառված տոկոսային ծախսերը 2022թ. կազմել են 458,194 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 469,153 հազ. ՀՀ դրամ). 2022թ. ընթացքում վարձակալության դիմաց կատարված վճարումների ընդհանուր գումարը կազմել է 2,003,974 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 1,274,500 հազ. ՀՀ դրամ):

Տրանսպորտային միջոցների վարձակալությունը կարճաժամկետ է և ճանաչվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում: Տրանսպորտային միջոցների վարձակալության ընդհանուր ծախսը կազմում է 42,488 հազ. ՀՀ դրամ (2021 թ.՝ 16,450 հազ. ՀՀ դրամ): Տես Ծանոթագրություն 24:

19 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Ընկերության ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների և այդ պարտավորությունների շարժի վերլուծությունը ներկայացված ժամանակաշրջաններից յուրաքանչյուրի համար: Այս պարտավորությունների տողերը դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես ֆինանսական գործունեություն.

- 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազ. ՀՀ դրամ	**Փոխառություններ**	**Վարձակալության գծով պարտավորություններ**	**Ֆինանսական երաշխիք**	**Ընդամենը**
Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 1 հունվարի	**8,664,896**	**4,474,764**	**1,907,669**	**15,047,329**
Դրամական միջոցներ				
Ստացված վարկեր	20,524,762	-	-	20,524,762
Մայր գումարի մարումներ	(8,786,288)	(1,593,593)	-	(10,379,881)
Տոկոսավճարներ	(1,061,837)	(410,381)	-	(1,472,218)
Անկանխիկ փոփոխություններ				
Տոկոսների հաշվեգրում	1,268,616	458,194	-	1,726,810
Նոր վարձակալություններ	-	1,238,182	-	1,238,182
Արտարժույթի ճշգրտումներ	(1,883,029)	-	-	(1,883,029)
Ֆինանսական երաշխիքների ապաճանաչում	-	-	(1,546,770)	(1,546,770)
Ֆինանսական երաշխիքների ամորտիզացիա	-	-	(360,899)	(360,899)
Այլ	(392,803)	66,782	-	(326,021)
Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 31 դեկտեմբերի	**18,334,317**	**4,233,948**	-	**22,568,265**

- 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազ. ՀՀ դրամ	**Փոխառություններ**	**Վարձակալության գծով պարտավորություններ**	**Ֆինանսական երաշխիք**	**Ընդամենը**
Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 1 հունվարի	**4,957,973**	**4,844,605**	**2,668,514**	**12,471,092**
Դրամական միջոցներ				
Ստացված վարկեր	7,058,409	-	-	7,058,409
Մայր գումարի մարումներ	(2,876,674)	(998,797)	-	(3,875,471)
Տոկոսավճարներ	(521,249)	(275,703)	-	(796,952)
Անկանխիկ փոփոխություններ				
Տոկոսների հաշվեգրում	529,431	469,153	-	998,584
Նոր վարձակալություններ	-	494,816	-	494,816
Արտարժույթի ճշգրտումներ	(479,290)	-	-	(479,290)
Ֆինանսական երաշխիքների ամորտիզացիա	-	-	(760,845)	(760,845)
Այլ	(3,705)	(59,310)	-	(63,015)
Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 31 դեկտեմբերի	**8,664,896**	**4,474,764**	**1,907,669**	**15,047,329**

20 Ակտիվների ապագործարկման պահուստ

Ընկերությունը ունի իրավական պարտավորություն ապամոնտաժել սարքավորումները և վերականգնել վարձակալած տարածքները դրանց՝ 20 տարի հետո ակնկալվող փակումից: Տարվա ընթացքում ակտիվների ապագործարկման պահուստի շարժը հետևյալն է:

Հազ. ՀՀ դրամ	**Ակտիվների ապագործարկում և վարձակալված տեղանքի վերականգնում**
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2021թ.	**1,292,925**
Ներկա արժեքի զեղչման ծախս	143,601
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**1,436,526**
Ներկա արժեքի զեղչի հակադարձում	160,048
Հիմնական միջոցների նկատմամբ ճշգրտված գնահատումների փոփոխություններ (կապիտալացված)	(50,469)
Ակտիվների ապագործարկման պարտավորության ապաճանաչում	(140,860)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**1,405,247**

21 Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Պարտավորություններ ձեռք բերված ծառայությունների գծով	3,382,824	3,713,031
Պարտավորություններ ձեռք բերված սարքավորումների գծով	1,996,191	1,384,068
Պարտավորություններ ռոումինգի ծառայությունների գծով	1,118,100	584,130
Պարտավորություններ ձեռք բերված ոչ նյութական ակտիվների գծով	838,274	516,023
Պարտավորություններ շինարարական աշխատանքների գծով	820,591	193,555
Պարտավորություններ ձեռք բերված պաշարների գծով	334,781	357,128
Հաշվեգրված մասնագիտական ծառայություններ	31,200	31,200
Այլ պարտավորություններ	1,296	858
Ընդամենը առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր	**8,523,257**	**6,779,993**

4,670,858 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 3,447,322 հազ. ՀՀ դրամ) առևտրային կրեդիտորական պարտքերն արտահայտված են արտարժույթով, մասնավորապես 57%-ը ԱՄՆ դոլարով (2021թ.՝ 74%), 4%՝ ՀՓԻ-ով (2021թ.՝ 7%), 38%՝ եվրոյով (2021թ.՝ 18%) և 0%՝ ռուսական ռուբլով (2021թ.՝ 1%).

31 դեկտեմբերի 2022թ. և 31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ ստացված կանխավճաների մնացորդների կազմը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Վաճառքի ենթակա ոչ ընթացիկ ակտիվների դիմաց ստացված կանխավճարներ	1,836,320	2,145,331
Հեռահաղորդակցության գործընկերներից ստացված կանխավճարներ	1,459,531	37,175
Վարձակալությունից ստացված կանխավճարներ (Ընկերությունը՝ վարձատու)	751,456	142
Բաժանորդներից ստացված կանխավճարներ	626,564	675,283
Ընդամենը ստացված կանխավճարներ	**4,673,871**	**2,857,931**

22 Պարտավորությունների և վճարների պահուստ

Պարտավորությունների և վճարների պահուստի շարժը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Իրավական հայցեր**	**Հարկային ռիսկեր**	**Ընդամենը**
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2021թ.	**802**	**-**	**802**
Շահույթին կամ վնասին վերագրված ավելացումներ	65,920	121,334	187,254
Պահուստի հաշվին վճարումներ	(859)	-	(859)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**65,863**	**121,334**	**187,197**
Շահույթին կամ վնասին վերագրված ավելացումներ	347,645	-	347,645
Պահուստի հաշվին վճարումներ	-	(121,334)	(121,334)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**413,508**	**-**	**413,508**

Բոլոր վերը նշված պահուստները դասակարգվել են որպես ընթացիկ պարտավորություններ, քանի որ Ընկերությունը չունի անվերապահ իրավունք հետաձգել դրանց վճարումը մեկ տարուց ավելի ուշ:

Իրավական հայցեր: Ղեկավարության կարծիքով, որը հիմնված է համապատասխան իրավաբանական խորհրդատվության վրա՝ իրավական հայցերի քննման արդյունքը Իրավական պահանջների գծով պահուստը վերաբերում է նախկին աշխատակցի կողմից Ընկերության դեմ 2018թ. ներկայացված հայցին՝ Ընկերությունից ազատման մասին որոշումը վերացնելու պահանջով: Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ. վճարվել է մինչև 2023թ. ապրիլի վերջ:

Հարկային ռիսկեր: 2021թ. հարկային ռիսկերի գծով պահուստը կապված է հարկային հաշվետվությունների ճշգրտումների հետ, որոնք վճարվել են 2022թ.-ին:

23 Հասույթ

Հասույթն ամբողջությամբ ստացվել է Հայաստանում, քանի որ ծառայությունները մատուցվել են Հայաստանում:

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ժամանակի ընթացքում		
Շարժական կապ-տվյալների փոխանակում	8,216,765	7,243,249
Շարժական կապ-ձայնային	3,602,086	4,265,245
Շարժական կապ-փոխկապակցում	2,170,079	2,181,017
Շարժական կապ-ռոումինգ	1,049,122	799,185
Շարժական կապ-այլ	1,074,628	1,038,150
Շարժական կապի ծառայությունների մատուցումից հասույթ	**16,112,680**	**15,526,846**
Ժամանակի ընթացքում		
Ֆիքսված կապ-ինտերնետ	4,915,014	4,862,717
Ֆիքսված կապ-տարանցիկ	4,479,964	2,732,522
Ֆիքսված կապ-ձայնային	3,973,924	4,535,851
Ֆիքսված կապ-միջհամակարգային	171,359	199,799
Ֆիքսված կապ-այլ	1,130,134	1,366,704
Ֆիքսված կապի ծառայությունների մատուցումից հասույթ	**14,670,395**	**13,697,593**
Ժամանակային կետում		
Սարքավորումներ-շարժական կապ	3,024,869	2,288,897
Սարքավորումներ-ֆիքսված կապ	38,338	61,072
Սարքավորումների իրացումից հասույթ	**3,063,207**	**2,349,969**
Վարձակալությունից հասույթ	713,178	-
Այլ հասույթ	17,218	136,106
Ընդամենը հասույթ	**34,576,678**	**31,710,514**

24 Վաճառքի ինքնարժեք

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ծառայությունների ինքնարժեք		
Մաշվածություն և ամորտիզացիա	6,678,525	7,017,892
Անձնակազմի ծախսեր	3,544,694	3,160,653
Բջջային կապի փոխկապակցման ծախս	2,112,264	1,954,405
Ռադիո ալիքների օգտագործման թույլտվություն	1,792,119	1,793,975
Էլեկտրաէներգիա	1,542,496	1,364,620
Սարքավորումների և կապուղիների սպասարկման ծախսեր	970,635	1,021,129
Ինտերնետի և այլ կապուղիներ	842,900	1,280,761
Ռոումինգի գծով ստացված ծառայություններ	690,460	377,253
Ֆիքսված կապի միջհամակարգային ծախս	574,868	745,669
Վառելիք	186,109	135,243
Ծառայությունների ԱԱՀ	105,239	47,865
SIM քարտեր	93,820	30,659
Հնամաշության գծով պահուստի (հակադարձում) / ճանաչում	65,697	(50,123)
Փոխադրամիջոցների վարձակալում	42,588	16,450
Գործուղումներ և վերապատրաստում	33,361	17,050
Ֆիքսված հեռախոսակապի այլ ծառայություններ	298,925	282,401
Բջջային հեռախոսակապի այլ ծառայություններ	147,791	144,933
Ընդամենը ծառայությունների ինքնարժեք	**19,722,491**	**19,340,835**
Իրացված սարքավորումների ինքնարժեք		
Սարքավորումներ-բջջային կապ	2,905,107	2,234,874
Սարքավորումներ-ֆիքսված հեռախոսակապ	2,738	11,422
Ընդամենը սարքավորումների ինքնարժեք	**2,907,845**	**2,246,296**
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	**22,630,336**	**21,587,131**

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի հատկացումներ՝ 127,118 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 96,267 հազ. ՀՀ դրամ):

25 Այլ գործառնական եկամուտ

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Մայր կազմակերպության կողմից փոխհատուցմամբ եկամուտ	1,960,000	-
Պաշարների իրացումից օգուտ	8,068	-
Ստացված կանխավճարների և կրեդիտորական պարտքերի դուրսգրումից եկամուտ	5,491	35,861
Տուգանքներից եկամուտ	111	234
Այլ	28,861	62,851
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	-	1,320,065
Փոխարժեքային տարբերություններից օգուտ՝ հանած վնաս, գործառնական գործունեությունից	-	165,363
Վարձակալությունից եկամուտ	-	72,201
Ընդամենը այլ գործառնական եկամուտ	**2,002,531**	**1,656,575**

31 դեկտեմբերի 2021թ. ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը վաճառել է չշահագործվող շենքեր Հայաստանի տարբեր մասերում: Գումարի հիմնական մասը վերաբերում է Երևանում գտնվող շենքին, որի վաճառքի գինը կազմել է 1,046,000 հազ. ՀՀ դրամ:

26 Ընդհանուր և վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Անձնակազմի ծախսեր	2,041,239	2,047,815
Մասնագիտական ծառայություններ	887,202	661,712
Մաշվածություն և ամորտիզացիա	413,048	179,823
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	393,607	239,606
Չփոխհատուցվող հարկեր	113,002	72,983
Սպասարկման և նորոգման ծախսեր	94,368	88,054
Գործուղման և վերապատրաստման ծախսեր	56,920	26,679
Ապահովագրություն	45,455	24,189
Անվտանգության ծախսեր	27,745	53,677
Ներկայացուցչական ծախսեր	4,655	44,428
Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում	-	164
Այլ	154,892	46,999
Ընդամենը ընդհանուր և վարչական ծախսեր	**4,232,133**	**3,486,129**

Անձնակազմի ծախսերը ներառում են 5,821 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 39,934 հազ. ՀՀ դրամ) արձակման նպաստներ՝ կապված ղեկավար պաշտոններից անձնակազմի ազատման հետ:

Արձակման նպաստների գումարները նաև ներառված են Վաճառքի ինքնարժեքի կազմում (տես Ծանոթագրություն 24)՝ 12,612 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 73,711 հազ. ՀՀ դրամ), և Իրացման ծախսերի կազմում (տես Ծանոթագրություն 27)՝ 4,706 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 10,117 38,724 հազ. ՀՀ դրամ), համապատասխանաբար:

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի հատկացումներ՝ 73,202 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 55,436 հազ. ՀՀ դրամ):

27 Իրացման ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Անձնակազմի ծախսեր	2,268,529	2,064,904
Գովազդային և մարքեթինգային ծառայություններ	559,597	431,542
Ինկասացիոն ծախսեր	311,851	308,611
Լիցքավորման քարտերի գծով ծախսեր	41,502	21,919
Այլ ծախսեր	106,111	232,949
Ընդամենը իրացման ծախսեր	**3,287,590**	**3,059,925**

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի հատկացումներ՝ 81,353 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 61,609 հազ. ՀՀ դրամ):

28 Այլ գործառնական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Իրավական հայցերի գծով ծախսեր	347,645	65,920
Հիմնական միջոցների դուրսգրումից վնասներ	219,642	-
Փոխարժեքային տարբերություններից օգուտ՝ հանած վնաս, գործառնական գործունեությունից	160,831	-
Հարկային տուգանք	97,706	121,344
Բարեգործություն և հովանավորություն	88,136	32,600
Այլ չփոխհատուցվող հարկեր	28,942	44,588
Չհաշվանցվող ԱԱՀ	22,077	29,335
Պաշարների արժեզրկում	5,397	76
Պաշարների իրացումից վնասներ	-	49,321
Անձնակազմի ծախսեր	-	5,000
Մաշվածություն և ամորտիզացիա	-	6
Այլ ծախսեր	129,404	157,749
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	**1,099,780**	**505,939**

29 Ֆինանսական եկամուտ/ծախսեր

Ֆինանսական եկամուտ

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Տոկոսային եկամուտ տրված փոխառություններից	1,261,196	744,769
Նախկինում ճանաչված զեղչի վերականգնում	188,011	15,617
Տոկոսային եկամուտ դրամական միջոցներից և դրանց համարժեքներից և ժամկետային ավանդից	45,879	3,075
Ֆինանսական երաշխիքների ամորտիզացիա	360,899	760,845
Ընդամենը՝ շահույթում կամ վնասում ճանաչված ֆինանսական եկամուտ	**1,855,985**	**1,524,306**

Ֆինանսական երաշխիքը ճանաչվել է 2020թ.-ին, 2021թ.-ին այն ամորտիզացվել է, 2022թ.-ին ապաճանաչվել է սեփական կապիտալում:

Ֆինանսական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Տոկոսային ծախս ստացված փոխառությունների գծով	1,268,617	529,431
Տոկոսային ծախս վարձակալության գծով	458,194	469,153
Ակտիվի ապագործարկման պարտավորությունների գծով	19,188	
պահուստ. ներկա արժեքի զեղչման հակադարձում		143,601
Ֆինանսական դեբիտորական պարտքերի զեղչում	-	196,282
Ընդամենը՝ ֆինանսական ծախսեր	**1,745,999**	**1,338,467**
Հանած՝ կապիտալացվող ֆինանսական ծախսեր	(205,910)	(117,493)
Ընդամենը՝ շահույթում կամ վնասում ճանաչված ֆինանսական եկամուտ	**1,540,089**	**1,220,974**

Ընկերությունը կապիտալացրել է փոխառության ծախսումները, որոնք առաջացել են հիմնական միջոցների կառուցմանը և ձեռքբերմանն անմիջականորեն վերագրելի ֆինանսավորման գծով: Կապիտալիզացիայի դրույքաչափը կազմել է 11.79% (2021թ.՝ 8.78%):

30 Շահութահարկ

(ա) Շահութահարկի գծով ծախսի բաղադրիչները

Շահույթում կամ վնասում ճանաչված շահութահարկի գծով ծախսը ներառում է հետևյալ բաղադրիչները.

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Հետաձգված հարկ	1,813,122	993,105
Տարվա շահութահարկի գծով ծախս	**1,813,122**	**993,105**

(բ) Կիրառելի հարկադրույքով բազմապատկած շահույթի կամ վնասի և շահութահարկի գծով ծախսի համադրում

Ընկերության 2022թ. և 2021թ. նկատմամբ կիրառելի շահութահարկի դրույքը 18% է: Հարկերի գծով ակնկալվող և իրական ծախսի համադրումը ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Շահույթ նախքան հարկումը	**10,490,422**	**4,462,002**
Տեսական հարկային ծախսը՝ սահմանված 18% դրույքաչափով	(1,888,276)	(803,160)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը.		
- Չհարկվող եկամուտ	1,183,076	341,057
- Չնվազեցվող ծախսեր	(1,107,922)	(531,002)
Տարվա շահութահարկի գծով ծախս	**(1,813,122)**	**(993,105)**

Ընդհանուր չհանվող ծախսերից 870,341 հազ. ՀՀ դրամը ներկայացնում է արտարժութային կորուստների ազդեցությունը (2021 թ.՝ 449,125 հազ. ՀՀ դրամ): Ընդհանուր չհարկվող եկամտից 796,434 հազ. ՀՀ դրամը ներկայացնում է փոխարժեքային օգուտի ազդեցությունը (2021թ.՝ 341,057 հազ. ՀՀ դրամ): Այս ֆինանսական հաշվետվություններում դրանք ներկայացված են զուտ հիմունքով:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 269,728 հազ. ՀՀ դրամ ընթացիկ կանխավճարներ շահութահարկի գծով (2021թ. ՝ 248,075 հազ. ՀՀ դրամ): Կանխավճարը ճանաչվել է 2021թ. փաստացի հարկային ծախսի համեմատ ավելի մեծ գումարով հարկերի վճարման հետևանքով: Ընկերության կողմից կանխավճարը կօգտագործվի հաջորդ ժամանակահատվածներում:

(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի

ՖՀՄՍ-ի և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության միջև եղած տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ՝ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով որոշվող դրանց գումարների միջև:

Այդ ժամանակավոր տարբերություններում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև.

30 Շահութահարկ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	1 հունվարի 2022թ.	(Ծախսագրված)/ կրեդիտագրված շահույթին կամ վնասին	(Ծախսագրված)/ կրեդիտագրված սեփական կապիտալին	31 դեկտեմբերի 2022թ.
Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը				
Հիմնական միջոցներ	2,359,065	(442,804)	-	1,916,261
Ոչ նյութական ակտիվներ	8,297	(140,307)	-	(132,010)
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսումներ	230,499	(740)	-	229,759
Ներդրումային գույք	-	(1,066,872)	-	(1,066,872)
Պաշարների գծով պահուստ	1	(1)	-	-
Հետաձգված ծախսեր	(22,157)	8,518	-	(13,639)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ	180,602	(49,879)	-	130,723
Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ	653,578	144,892	160,157	958,628
Ակտիվների ապագործարկման պահուստ	258,575	(5,631)	-	252,944
Հետաձգված եկամուտներ	11,774	(1,277)	-	10,497
Կրեդիտորական պարտքեր	56,765	47,262	-	104,027
Տրամադրված փոխառություններ	(34,493)	(82,544)	381,828	264,791
Ֆինանսական և երաշխիքներ	343,380	(64,962)	(278,418)	-
Հարկային վնասներ	203,766	(158,778)	-	44,988
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	**4,249,652**	**(1,813,123)**	**263,567**	**2,700,096**

ՀՀ օրենսդրության համաձայն, 31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ առկա հարկային վնասները կարող են օգտագործվել մինչև 2025թ.: Այդ ժամանակավոր տարբերություններում 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	1 հունվարի 2021թ.	(Ծախսագրված)/ կրեդիտագրված շահույթին կամ վնասին	(Ծախսագրված)/ կրեդիտագրված սեփական կապիտալին	31 դեկտեմբերի 2021թ.
Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը				
Հիմնական միջոցներ	2,718,380	(359,315)	-	2,359,065
Ոչ նյութական ակտիվներ	241,226	(232,929)	-	8,297
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսումներ	247,371	(16,872)	-	230,499
Պաշարների գծով պահուստ	(1)	2	-	1
Հետաձգված ծախսեր	(48,806)	26,650	-	(22,156)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ	87,609	92,994	-	180,603
Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ	680,397	(26,819)	-	653,578
Ակտիվների ապագործարկման պահուստ	232,727	25,848	-	258,575
Հետաձգված եկամուտներ	11,280	495	-	11,775
Կրեդիտորական պարտքեր	126,460	(69,697)	-	56,763
Տրամադրված փոխառություններ	-	(60,287)	25,793	(34,494)
Ֆինանսական և երաշխիքներ	-	(136,952)	480,333	343,380
Հարկային վնասներ	439,989	(236,223)	-	203,766
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	**4,736,632**	**(993,105)**	**506,125**	**4,249,652**

31 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող հիմնական շահույթը/(վնասը) հաշվարկվում է Ընկերության սեփականատերերին վերագրվող շահույթը կամ վնասը բաժանելով տարվա ընթացքում թողարկված սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակի վրա՝ բացառությամբ գանձապետական բաժնետոմսերի:

Ընկերությունը չունի նոսրացման ենթակա սովորական բաժնետոմսեր. հետևաբար, մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթը հավասար է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող հիմնական շահույթին:

Շարունակվող գործառնություններից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Հազ. ՀՀ դրամ	**Ծնթգ.**	**2022թ.**	**2021թ.**
Տարվա շահույթ՝ վերագրվող սովորական բաժնետոմսերի բաժնետերերին		8,677,300	3,468,897
Տարվա շահույթ		8,677,300	3,468,897
Թողարկվող սովորական բաժնետոմսերի միջին կշռված թիվը	16	188,377,090	188,377,090
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող հիմնական շահույթ (արտահայտված ՀՀ դրամով՝ մեկ բաժնետոմսի դիմաց)		**46.06**	**18.41**

32 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ սովորական գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են ներկայացվել հայցեր: Հիմնվելով սեփական գնահատման վրա, ղեկավարությունը կարծում է, որ դրանք չեն հանգեցնի էական կորուստների, որոնք կգերազանցեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված պահուստների գումարը:

Ընկերությունը դատական վարույթ է ունեցել նախկին բաժանորդի հետ՝ ֆիքսված հեռախոսակապի վերանվանման հետևանքով բաց թողնված օգուտների տեսքով առաջացած վնասի հատուցման պահանջով: Պահուստ չի ձևավորվել, քանի որ Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ որևէ էական վնասի առաջացման հավանականություն չկա, և ռիսկը ցածր հավանական է:

Հարկային պայմանական պարտավորություններ. Հայաստանի Հանրապետության հարկային, արժութային և մաքսային օրենսդրության որոշ դրույթներ կարող են հանդիսանալ տարընթերցումների առարկա՝ Ընկերության գործարքների և գործունեության նկատմամբ կիրառելիս: Հետևաբար, հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատումների գծով: Որպես հետևանք, հարկային մարմինները կարող են հայց ներկայացնել այն գործարքների և հաշվապահական հաշվառման մեթոդների վերաբերյալ, որոնց համար նախկինում պահանջներ չեն ներկայացրել: Հարկային ստուգումները կարող են ներառել ստուգման ամսաթվին անմիջապես նախորդող երեք օրացուցային տարիները:

Ի լրումն վերը նշված հարցերի, ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի հարկային ռիսկերի հետ կապված 1,211,356 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 1,211,356 հազ. ՀՀ դրամ) գումարի չափով այլ հնարավոր պարտավորություններ, որոնց հավանականությունը գնահատվում է «աննշանը գերազանցող»: Այս ռիսկերը հիմնականում վերաբերվում են ՀՀ հարկային մարմինների կողմից ոչ ռեզիդենտի շահութահարկի լրացուցիչ պարտավորությունների առաջադրմանը: Այս ռիսկերը հանդիսանում են համապատասխան օրենսդրության և փաստաթղթավորման պահանջների մեկնաբանություններում առկա անորոշությունների արդյունք:

Կապիտալ ծախսումների գծով պարտավորություններ. 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի կապիտալ ծախսումների պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների ձեռքբերման գծով՝ 651,364 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 2,606,974 հազ. ՀՀ դրամ): 2022 թ.-ին պարտավորությունները կարճաժամկետ էին, և դրանցից շատերը մարվել են մինչև տարեվերջ:

32 Պայմանական դեպքեր և պարտավորություններ (շարունակություն)

Ընկերությունն արդեն հատկացրել է անհրաժեշտ միջոցներ այդ պարտավորությունների կատարման համար: Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ապագա զուտ շահույթը և ֆինանսավորումը բավարար կլինեն՝ այս և համանման այլ պարտավորությունները կատարելու համար:

Շրջակա միջավայրի պահպանության հարցեր. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության կանոնակարգման համակարգը զարգանում է, և պետական մարմինների դիրքորոշումն այդ համակարգը ներդնելու հարցում շարունակաբար փոփոխվում է: Ընկերությունը պարբերաբար գնահատում է իր պարտավորությունները շրջակա միջավայրի պահպանության կանոնակարգերի համաձայն: Երբ պարտավորությունները որոշվում են, դրանք անմիջապես ճանաչվում են հաշվետվությունում: Հնարավոր պարտավորությունները, որոնք կարող են ծագել գործող կանոնակարգերի, քաղաքացիական իրավական համակարգի կամ օրենսդրության փոփոխման հետևանքով, չեն կարող գնահատվել, սակայն կարող են էական լինել: Գործող օրենսդրության կիրառման պայմաններում ղեկավարությունը կարծում է, որ չկան շրջակա միջավայրին վնաս հասցնելու հետևանքով առաջացող նշանակալի պարտավորություններ

Գրավ. Ընկերությունը գրավադրել է 3,987,644 հազ. ՀՀ դրամ (2021թ. ՝ 125,922 հազ. ՀՀ դրամ) զուտ հաշվեկշռային արժեքով գույք, որպես ստացված փոխառությունների երաշխիք (Ծանոթագրություն 17): Ընկերության բաժնետոմսերի 100%-ը նույնպես գրավադրվել է որպես նույն վարկի երաշխիք:

33 Ֆինանսական երաշխիքներ

Երաշխիքներն իրենցից ներկայացնում են հետկանչման ոչ ենթակա հանձնառություններ առ այն, որ Ընկերությունը կկատարի վճարումներ այն դեպքում, երբ մեկ այլ կողմ չի կարողանա կատարել իր պարտավորությունները: 2021թ. Ընկերությունը երաշխավորել է տեղական բանկի հետ վարկային պայմանագրի ներքո «ԹԻՄ» ՓԲԸ-ի (Ընկերության անմիջական մայր ընկերության) պարտավորությունը՝ ԱՄՆ դոլարով ներկայացված վարկի գծով, որի մարման ժամկետը 2027թ. հոկտեմբերն է: Ընկերության կողմից դեկտեմբերի 31-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի հիման վրա ճանաչված երաշխիքի հաշվեկշռային արժեքը 2021թ. կազմել է 1,907,669 հազ. ՀՀ դրամ, հաշվարկված որպես i) ակնկալվող կորստի մոդելի հիման վրա որոշված երաշխավորված ազդեցության դիմաց կորստի չափից և ii) սկզբնական ճանաչման ժամանակ գումարի մնացած չամորտիզացված մնացորդից առավելագույնով: Այս դեպքում ii) գումարն ավելի մեծ է եղել: Երաշխիքի ամորտիզացիան հաշվարկվել է երաշխիքի գործողության ընթացքում գծային մեթոդով, և ամորտիզացիայի ազդեցությունը ճանաչվել է ֆինանսական եկամուտներում: Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորությունը հաշվարկվել է հավանականությամբ ճշգրտված զեղչված դրամական հոսքերի վերլուծության միջոցով: Ֆինանսական հաշվարկների սկզբնական ճանաչման գնահատականներն էին մայր կազմակերպության կողմից դեֆոլտի հավանականությունը և դեֆոլտի դեպքում վնասի չափը: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «ԹԻՄ» ՓԲԸ-ն ամբողջությամբ մարել է վարկը, հետևաբար ֆինանսական երաշխիքից ստացված պարտավորությունն ապաճանաչվել է՝ չբաշխված շահույթի վրա համապատասխան ազդեցությամբ:

34 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի ուղղություններով: Ֆինանսական ռիսկը կազմված է շուկայական ռիսկից (ներառյալ՝ արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկը), պարտքային ռիսկից և իրացվելիության ռիսկից: Ֆինանսական ռիսկերի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է ռիսկերի սահմանաչափ սահմանելը և այնուհետև ռիսկերի ազդեցությունն այդ սահմանաչափում պահելը: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթները նպատակ ունեն ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

Պարտքային ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, այսինքն՝ ռիսկը, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին՝ պարտավորությունները չկատարելու հետևանքով: Պարտքային ռիսկն առաջանում է Ընկերության կողմից տարաժամկետ վճարման պայմաններով վաճառք իրականացնելու և մյուս կողմերի հետ ֆինանսական ակտիվներ առաջացնող այլ գործարքներ իրականացնելու արդյունքում:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կատեգորիաները դեկտեմբերի 31-ի դրությամբ.

34 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	**2022թ.**	**2021թ.**
Ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ (Ծանոթագրություն 11)	17,249,248	10,955,362
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 13)	2,018,779	64,578
- Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	6,240,018	4,581,520
- Ժամկետային ավանդներ (Ծանոթագրություն 24)	823,885	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 15)		
- Ցպահանջ մնացորդներ բանկում	511,173	1,364,480
- Դրամական միջոցներ ճանապարհին	80,908	74,583
- Առձեռն դրամական միջոցներ	23,719	27,997
Ընդամենը հաշվեկշռի պարտքային ռիսկ	**26,947,730**	**17,068,520**
Տրամադրված երաշխիքներ (Ծանոթագրություն 33)	-	1,907,669
Ընդամենը պարտքային ռիսկ	**24,864,697**	**18,976,189**

Պարտքային ռիսկերի կառավարում: Պարտքային ռիսկը հանդիսանում է Ընկերության բիզնեսի համար միակ առավել էական ռիսկը: Հետևաբար, ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում պարտքային ռիսկի կառավարմանը:

Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը բարդ է և ենթադրում է մոդելների կիրառում, քանի որ ռիսկը փոփոխվում է՝ կախված շուկայական պայմաններից, ակնկալվող դրամական հոսքերից և ժամանակի անցնելուց: Ակտիվների պորտֆելի գծով պարտքային ռիսկի գնահատումը ենթադրում է դեֆոլտի առաջացման հավանականության գնահատում, կորուստների համապատասխան գործակիցների և գործընկերների միջև դեֆոլտի հարաբերակցության հետագա գնահատում:

Սահմանափակումներ. Ընկերությունը կառավարում է իր պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանաչափեր կիրառելով մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի գծով ստանձնած ռիսկերի ծավալի համար: Պարտքային ռիսկի սահմանափակումները պարբերաբար հաստատվում են ղեկավարության կողմից: Այդ ռիսկերն անընդհատ վերահսկվում են և ենթակա են տարեկան կամ առավել հաճախակի վերանայման:

Ընկերության ղեկավարությունը դիտարկում է չվճարված առևտրային դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետայնության և միջոցներ է ձեռնարկում ժամկետանց մնացորդների մասով: Հետևաբար, ղեկավարությունը տեղին է համարում տրամադրել պարտքային ռիսկի ժամկետայնության վերաբերյալ և այլ տեղեկատվություն, ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 13-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափում: ԱՊԿ-ն իրենից ներկայացնում է դրամական միջոցների ապագա դեֆիցիտի ներկա արժեքի հավանականությամբ կշռված գնահատական (այսինքն՝ միջին կշռված պարտքային կարուստը, տրված ժամանակահատվածում տեղի ունեցող դեֆոլտի համապատասխան ռիսկերով, որոնք օգտագործվել են որպես կշիռ): ԱՊԿ չափումն անկողմնակալ է և որոշվում է հնարավոր արդյունքների շրջանակը գնահատելու միջոցով: ԱՊԿ չափումն իրականացվում է Ընկերության կողմից օգտագործվող հետևյալ չորս բաղադրիչների հիման վրա. դեֆոլտի հավանականություն, դեֆոլտի ռիսկին ենթակա պարտքային պահանջի մեծություն, դեֆոլտից առաջացող վնաս և զեղչման տոկոսադրույք:

Դեֆոլտի ռիսկին ենթակա պարտքային պահանջի մեծությունը՝ EAD, ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ ազդեցության գնահատումն է՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակաշրջանից հետո ազդեցության ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների մարումները և հանձնառված գործիքների ակնկալվող ստացումները: Դեֆոլտի հավանականությունը՝ PD, տվյալ ժամանակահատվածում դեֆոլտի առաջացման գնահատումն է: Դեֆոլտից առաջացող վնասը՝ LGD-ն դեֆոլտի դեպքում վնասի գնահատումն է:

34 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Այն հիմնված է պայմանագրային հիմունքով վճարման ենթակա դրամական միջոցների և վարկատուի կողմից ստացման ակնկալվող, ներառյալ գրավի միջոցով՝ դրամական միջոցների միջև տարբերության վրա: Այն սովորաբար արտահայտվում է որպես EAD-ի տոկոս: Ակնկալվող կորուստները զեղչվում են մինչև ընթացիկ արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Զեղչման տոկոսադրույքը ներկայացնում է ֆինանսական գործիքի արդյունավետ տոկոսադրույքը («EIR») կամ դրա մոտարկված մեծությունը:

Կառավարման մոդելների՝ տևողության ժամկետի ընթացքում ԱՊԿ, այսինքն՝ կորուստներ, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի մնացած տևողության ժամկետի ընթացքում բոլոր հնարավոր դեֆոլտի դեպքերից: 12-ամսյա ԱՊԿ-ը ներկայացնում է ողջ ժամկետի ընթացքում ԱՊԿ-ների մասը՝ ֆինանսական գործիքի դեֆոլտի դեպքերից, որոնք հնարավոր են հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա, կամ ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում, եթե այն մեկ տարուց պակաս է:

Սույն ֆինանսական հաշվետվությունների նպատակով ղեկավարության կողմից գնահատված ԱՊԿ-ները ժամանակային կետում գնահատումներ են, այլ ոչ թե շրջափուլային գնահատումներ, որոնք սովորաբար օգտագործվում են կանոնակարգային նպատակներով: Գնահատումները դիտարկում հեռանկարային տեղեկատվությունը, այսինքն՝ ԱՊԿ-ները արտացոլում են պարտքային ռիսկի վրա ազդեցություն ունեցող հիմնական մակրոտնտեսական փոփոխականների զարգացման կշռույթային հավանականությունը:

PD-ի չափման նպատակով Ընկերությունը սահմանում է դեֆոլտը որպես իրավիճակ, երբ բացահայտումը համապատասխանում է հետևյալ չափանիշներից մեկին կամ մի քանիսին.

- վարկառուի պայմանագրային վճարումների գծով ավելի քան 90 օր կետանցը.
- վարկառուի մահը.
- վարկառուն անվճարունակությունը

Բացահայտման նպատակով Ընկերությունը լիովին համապատասխանեցրել է դեֆոլտի սահմանումը վարկային տեսանկյունից արժեզրկված ակտիվների սահմանմանը: Վերը նշված կանխադրված սահմանումը կիրառվում է Ընկերության բոլոր տեսակի ֆինանսական ակտիվների նկատմամբ:

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է պարտքային ռիսկի նշանակալի աճ՝ SICR, երբ բավարարված են հետևյալ քանակական, որակական կամ օժանդակող չափանիշներից մեկը կամ մի քանիսը:

- 30 օր ժամկետանց

Ընկերությունը չափում է ԱՊԿ-ը պորտֆելային հիմունքով: Երբ գնահատումն իրականացվում է պորտֆելային հիմունքով, Ընկերությունը վերլուծում է իր բացահայտումները ըստ սեգմենտների, որոնք որոշվում են պարտքային ռիսկի ընդհանուր բնութագրերի հիման վրա, որպեսզի Ընկերության շրջանակում ռիսկերի ենթարկվածության կառուցվածքը լինի միատարր կամ նմանատիպ:

Ընդհանուր առմամբ, ԱՊԿ-ը հետևյալ պարտքային ռիսկի հարաչափերի բազմապատկման գումարն է՝ EAD, PD և LGD, որոնք սահմանվում են վերը նկարագրված եղանակով, և զեղչվում են մինչև ներկա արժեքը՝ օգտագործելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքը: ԱՊԿ-ը որոշվում է՝ կանխատեսելով պարտքային ռիսկի պարամետրերը (EAD, PD և LGD) յուրաքանչյուր ապագա տարվա համար՝ յուրաքանչյուր առանձին բացահայտման ողջ ժամկետի ընթացքում: Այս երեք բաղադրիչները բազմապատկվում են միասին և ճշգրտվում են գոյատևման հավանականության տեսանկյունից (այսինքն՝ վարկը կարող է մարվել կամ դեֆոլտի ենթարկվել է ավելի վաղ ամսում): Արդյունքում, նման կերպ հաշվարկում է յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանի ԱՊԿ-ն, որն այնուհետև զեղչվում է մինչև հաշվետու ամսաթիվը և ամփոփվում: ԱՊԿ-ի հաշվարկում օգտագործվող զեղչման տոկոսադրույքը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքն է կամ դրա մոտարկումը:

Պարտքային ռիսկի կենտրոնացում. Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի կենտրոնացման ազդեցությանը: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ վեց գործընկեր (2021թ.՝ չորս գործընկեր) 100,000 հազ. ՀՀ դրամը գերազանցող ընդհանուր կարճաժամկետ դեբիտորական պարտքերի մնացորդներով: Այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 4,904,790 հազ. ՀՀ դրամ, կամ՝ ընդհանուր կարճաժամկետ դեբիտորական պարտքի 78% (2021թ.՝ 2,714,811 հազ. ՀՀ դրամ կամ՝ ընդհանուր դեբիտորական պարտքի 48%):

34 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ մեկ գործընկեր (2021թ.՝ զրո) 100,000 հազ. ՀՀ դրամը գերազանցող ընդհանուր երկարաժամկետ դեբիտորական պարտքերի մնացորդներով: Այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 2,018,779 հազ. ՀՀ դրամ, կամ՝ ընդհանուր երկարաժամկետ դեբիտորական պարտքի 100% (2021թ.՝ զրո):

Շուկայական ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկերի: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արտարժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների և (գ) բաժնային արժեթղթերի բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Ղեկավարությունը սահմանում է ռիսկի այն մակարդակը, որը կարող է ընդունվել, ինչն էլ վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերից դուրս վնասների առաջացումն այն դեպքերում, երբ տեղի են ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր:

Ստորև ներկայացված շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունությունը որոշվել է հիմք ընդունելով մեկ գործոնի փոփոխությունը՝ անփոփոխ պահելով մնացած այլ գործոնները: Գործնականում այս իրավիճակի տեղի ունենալը հավանական չէ, և մի շարք գործոններում փոփոխությունները կարող են փոխկապակցված լինել, օրինակ՝ տոկոսադրույքի և արտարժույթի դրույքաչափի փոփոխությունները:

Արժութային ռիսկ. Արժութային ռիսկի գծով ղեկավարությունը վերահսկում է օրական դիրքերը: Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության՝ արժույթի փոխարկման հետ կապված ռիսկին ենթարկվածությունը.

	31 դեկտեմբերի 2022թ.			31 դեկտեմբերի 2021թ.		
Հազ. ՀՀ դրամ	**Դրամական ֆինանսա-կան ակտիվներ**	**Դրամական ֆինանսա-կան պարտավո-րություններ**	**Զուտ հաշվեկշ-ռային դիրք**	**Դրամական ֆինանսա-կան ակտիվներ**	**Դրամական ֆինանսա-կան պարտավո-րություններ**	**Զուտ հաշվեկշ-ռային դիրք**
ԱՄՆ դոլար	20,265,212	(21,287,984)	(1,022,773)	13,835,200	(12,777,210)	1,057,990
Եվրո	392,691	(2,655,365)	(2,262,673)	169,405	(630,425)	(461,020)
ՀՓԻ	304,015	(202,431)	101,584	383,063	(246,661)	136,402
ՌԴ ռուբլի	14,188	(16,371)	(2,184)	2,489	(34,650)	(32,161)
Անգլիական ֆունտ	36,113	(4,268)	31,845	36,104	-	36,104
Ընդամենը	**21,012,219**	**(24,166,420)**	**(3,154,201)**	**14,426,261**	**(13,688,946)**	**737,315**

Վերը ներկայացված վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները: Ոչ դրամական ակտիվները չեն դիտարկվում որպես արժութային ռիսկ առաջացնող էական բաղադրիչ:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի կամ վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2022թ.**	**31 դեկտեմբերի 2021թ.**
ԱՄՆ դոլարի ամրապնդում 5%-ով (2021թ.՝ամրապնդում 5%-ով)	(51,139)	52,900
ԱՄՆ դոլարի անկում 5%-ով (2021թ.՝ անկում 5%-ով)	51,139	(52,900)
Եվրոյի ամրապնդում 5%-ով (2021թ.՝ ամրապնդում 5%-ով)	(113,134)	(23,051)
Եվրոյի անկում 5%-ով (2021թ.՝ անկում 5%-ով)	113,134	23,051
ՀՓԻ ամրապնդում 5%-ով (2021թ.՝ ամրապնդում 5%-ով)	5,079	6,820
ՀՓԻ անկում 5%-ով (2021թ.՝ անկում 5%-ով)	(5,079)	(6,820)
ՌԴ ռուբլու ամրապնդում 15%-ով (2021թ.՝ ամրապնդում 15%-ով)	(328)	(4,824)
ՌԴ ռուբլու անկում 15%-ով (2021թ.՝ անկում 15%-ով)	328	4,824
Անգլիական ֆունտի ամրապնդում 5%-ով (2021թ.՝ ամրապնդում 5%-ով)	1,592	1,805
Անգլիական ֆունտի անկում 5%-ով (2021թ.՝ անկում 5%-ով)	(1,592)	(1,805)

34 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Տոկոսադրույքի ռիսկ: Ընկերությունն իր վրա է վերցնում շուկայական տոկոսադրույքների գերակշռող մակարդակների տատանումների ազդեցությունը իր ֆինանսական դիրքի և դրամական հոսքերի վրա: Տոկոսների մարժան կարող է աճել այդպիսի փոփոխությունների արդյունքում, բայց կարող է նվազել կամ հանգեցնել վնասների՝ անսպասելի տատանումների դեպքում: Ստորև բերված աղյուսակը ամփոփում է Ընկերության ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին: Աղյուսակում ներկայացված են Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հանրագումարային մեծությունները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ պայմանագրային տոկոսների վերագնահատման կամ մարման ամսաթվերից առավել վաղ ամսաթվով:

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-12 ամիս	1 տարուց ավելի	Ոչ դրամական	Ընդամենը
Ընդամենը ֆինանսական ակտիվներ՝ ֆիքսված տոկոսադրույքով	-	1,357,111	12,524,122	-	13,881,233
Ընդամենը ֆինանսական ակտիվներ՝ փոփոխում տոկոսադրույքով	-	-	6,743,905	-	6,743,905
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ՝ ֆիքսված տոկոսադրույքով	133,280	1,721,584	3,166,781	-	5,021,645
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ ՝ փոփոխում տոկոսադրույքով	81,070	-	17,465,550	-	17,546,620
Զուտ տոկոսադրույքի զգայունություն առ 31 դեկտեմբերի 2022թ.	**(214,350)**	**(364,473)**	**(1,364,304)**	**-**	**(1,943,127)**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ՝ ֆիքսված տոկոսադրույքով	-	-	10,955,362	-	10,955,362
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ՝ ֆիքսված տոկոսադրույքով	52,375	576,129	8,036,392	-	8,664,896
Զուտ տոկոսադրույքի զգայունություն առ 31 դեկտեմբերի 2021թ.	**(52,375)**	**(576,129)**	**2,918,970**	**-**	**2,290,466**

2022թ., դեկտեմբերի 31 -ի դրությամբ, եթե տոկոսադրույքներն այդ ամսաթվին լինեին 1%-ով ցածր (2021թ.՝ 1%-ով ցածր) մնացած բոլոր փոփոխականների դեպքում, ապա տարվա շահույթը կլիներ 68,875 հազ. ՀՀ դրամով բարձր (2021թ.՝ անփոփոխ), հիմնականում փոփոխական տոկոսային պարտավորությունների գծով ավելի ցածր տոկոսային ծախսերի արդյունքում:

Եթե տոկոսադրույքները լինեին 1%-ով բարձր (2021թ.՝ 1%-ով բարձր), մնացած բոլոր փոփոխականների դեպքում շահույթը կլիներ 68,875 հազ. ՀՀ դրամով ցածր (2021թ.՝ անփոփոխ)՝ հիմնականում փոփոխական տոկոսային պարտավորությունների գծով ավելի բարձր տոկոսային ծախսերի արդյունքում:

34 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ընկերությունը վերահսկում է իր ֆինանսական գործիքների տոկոսադրույքները: Ստորև բերված աղյուսակում ամփոփված են պայմանագրային տոկոսադրույքները համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ հիմք ընդունելով առանցքային ղեկավար անձնակազմի կողմից դիտարկված հաշվետվությունները.

	2022թ.		2021թ.	
Տարեկան % արտահայտությամբ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	0-6	0-1	0-6	0-1
Տրամադրված փոխառություններ	13	0, 8, SOFR+5.6	0, 13	8
Ստացված փոխառություններ	կ/չ	SOFR+5.6	13	7.5 - 8

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկ՝ նշանակում է, որ կազմակերպությունը կարող է դժվարանալ կատարելու պարտականությունները ֆինանսական պարտավորությունների գծով: Ընկերությունն օրական կտրվածքով առնչվում է դրամական միջոցների պահանջների:

Իրացվելիության ռիսկը կառավարվում է Ընկերության ֆինանսական բաժնի կողմից: Ղեկավարությունն ամսական կտրվածքով վերահսկում է Ընկերության դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները: Ընկերությունն աշխատում է պահպանել կայուն ֆինանսավորման աղբյուրներ, որոնք հիմնականում բաղկացած են առևտրային և այլ դեբիտորական պարտքերից: Ընկերությունը ֆինանսական միջոցների ներդրումներ է կատարում իրացվելի ակտիվների դիվերսիֆիկացված փաթեթում, որպեսզի կարողանա արագորեն և անմիջականորեն բավարարել չնախատեսված իրացվելիության պահանջները: Ընկերության իրացվելիության պորտֆելը կազմված է դրամական միջոցներից և դրանց համարժեքներից (տես Ծանոթագրություն 15):

Գանձապետական բաժինը վերահսկում է իրացվելիության դիրքը և պարբերաբար իրականացնում է իրացվելիության սթրես-թեստ՝ օգտագործելով ինչպես բնականոն, այնպես էլ առավել խիստ շուկայական պայմաններ ներառող սցենարներ:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-12 ամիս	12 ամիս – 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Բանկերից ստացված վարկեր	81,070	787,697	19,625,619	5,021,208	25,515,594
Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 21)	1,206,887	7,316,370	-	-	8,523,257
Վարձակալության գծով պարտավորություններ	138,117	1,197,722	3,492,433	1,348,791	6,177,063
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարի վճարումներ	**1,426,074**	**9,301,789**	**23,118,052**	**6,369,999**	**40,215,914**

Վերը նշված աղյուսակում ներկայացված են պարտավորությունները 31 դեկտեմբերի 2022թ. ըստ մնացորդային պայմանագրային մարման ժամկետների: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված գումարները պայմանագրային չզեղչված դրամական հոսքեր են, ներառյալ վարձակալության համախառն պարտավորությունները (նախքան ապագա ֆինանսական ծախսերը նվազեցնելը) և ֆինանսական երաշխիքները: Նման չզեղչված դրամական հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառված գումարից, քանի որ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը հիմնված է զեղչված դրամական հոսքերի վրա:

34 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների մարման վերլուծությունը առ 31 դեկտեմբերի 2021թ. հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-12 ամիս	12 ամիս – 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Բանկերից ստացված վարկեր	3,929	624,575	10,886,710	401,860	11,917,073
Տրամադրված երաշխիքներ (Ծանոթագրություն 33)	1,907,669	-	-	-	1,907,669
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 21)	285,425	6,494,568	-	-	6,779,993
Վարձակալության գծով պարտավորություններ	125,182	963,656	3,358,600	1,421,278	5,868,716
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարի վճարումներ	**2,322,205**	**8,082,799**	**14,245,310**	**1,823,137**	**26,473,451**

Տրամադրված երաշխիքները ներառված են «Ցպահանջ և մինչև 1 ամիս» կատեգորիայում, քանի որ Ընկերությունը կախվածություն ունի երաշխիքով ապահովված վարկի գծով վարկառուի կողմից բանկի առջև ստանձնած պարտավորությունների կատարումից և գործողություններից, որոնք բանկը կարող է ձեռնարկել վարկի և երաշխիքային պայմանագրերի պայմանների հիման վրա:

Երբ վճարման ենթակա գումարը ֆիքսված չէ, բացահայտված գումարը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջում առկա պայմանների հիման վրա: Արտարժույթով վճարումները փոխակերպվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջի սփոթ փոխարժեքով:

35 Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման ժամանակ Ընկերության նպատակներն են. պահպանել Ընկերության կարողությունը՝ շարունակելու իր գործունեությունը անընդհատության սկզբունքով՝ ապահովելով հատուցում բաժնետերերին և օգուտներ այլ շահառուներին և հաստատել կապիտալի օպտիմալ կառուցվածք: Կապիտալի կառուցվածքը հաստատելու և ճշգրտելու համար Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ նվազեցնելով պարտքը: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից կառավարվող կապիտալի չափը կազմել է 31,335,669 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 23,859,064 հազ. ՀՀ դրամ):

Ոլորտի մյուս մասնակիցներին համահունչ՝ Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ հաշվի առնելով փոխանցման գործակիցը: Այս հարաբերակցությունը հաշվարկվում է երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերի հանրագումարը՝ բաժանված կառավարվող ընդհանուր կապիտալի վրա: Ընկերությունը սեփական կապիտալը դիտարկում է որպես կառավարվող ընդհանուր կապիտալ, ինչպես ցույց է տրված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: 2022թ. ընթացքում Ընկերության ռազմավարության համաձայն, որն անփոփոխ է 2021թ.-ից, փոխանցման գործակիցը պահպանվել է 40% -ից 60% սահմաններում: Փոխանցման գործակիցը 36%-ից հասել է 59%-ի: Ընկերությունը 2022թ. ընթացքում կատարել է կապիտալի գծով արտաքին պարտադիր բոլոր պահանջները (2021թ. համար տես ծանոթագրություն 17): Դրանք ամրագրված են Ընկերության վարկային պայմանագրերում, որոնց հիման վրա Ընկերությունից պահանջվում է պահպանել փոխանցման գործակիցը 65%-ից ցածր մակարդակում:

36 Իրական արժեքի բացահայտումներ

Իրական արժեքի չափման վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող (չճշգրտվող) գներով, (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (օրինակ՝ գներ) կամ անուղղակիորեն (օրինակ՝ գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական գործիքները իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակին վերագրելիս՝ ղեկավարությունը կիրառում է դատողություն: Եթե իրական արժեքի չափման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի տվյալներ, ապա իրական արժեքի տվյալ չափումը վերաբերում է մակարդակ 3-ին: Օգտագործվող տվյալների նշանակալիությունը գնահատվում է իրական արժեքով չափվող ամբողջության համար:

ա) Իրական արժեքի պարբերական չափումներ

Իրական արժեքի պարբերական չափումները հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվող կամ թույլատրվող չափումներն են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի ֆինանսական վիճակի համախմբված հաշվետվությունում: Ստորև աղյուսակում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի մակարդակները, որոնց միջոցով դասակարգվում են իրական արժեքի պարբերական չափումները:

Հազ. ՀՀ դրամ	2022թ.		2021թ.	
	Մակարդակ 3	**Ընդամենը**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
- Ներդրումային գույք	5,927,067	5,927,067	-	-
Ընդամենը ակտիվների իրական արժեքի պարբերական չափումներ առ 31 դեկտեմբերի	**5,927,067**	**5,927,067**	**-**	**-**

Գնահատման եղանակը, 3-րդ մակարդակի չափումների իրական արժեքի չափման մեջ օգտագործվող ելակետային տվյալները և այդ տվյալների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների նկատմամբ զգայունությունը հետևյալն են՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազ. ՀՀ դրամ	**Իրական արժեք**	**Գնահատման մեթոդ**	**Օգտագործված ելակետային տվյալներ**	**Ելակետային տվյալների տիրույթ (կշռված միջին)**	**Ողջամիտ փոփոխություն**	**Իրական արժեքի չափման զգայունություն**
Ակտիվներ իրական արժեքով						
- Ներդրումային գույք	5,927,067	Զեղչված դրամական հոսքեր	WACC	11.37%	+ 0.5 % - 0.5 %	-89,252 +91,169
Ընդամենը իրական արժեքի պարբերական չափումներ մակարդակ 3-ում	**5,927,067**					

Վերոնշյալ աղյուսակները բացահայտում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատման տվյալների նկատմամբ զգայունությունը, եթե չդիտարկվող տվյալներից մեկի կամ մի քանիսի փոփոխությունը՝ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններն արտացոլելու նպատակով, նշանակալի չափով կփոփոխի իրական արժեքը:

36 Իրական արժեքի բացահայտումներ (շարունակություն)

Այդ նպատակով նշանակալիությունը գնահատվել է շահույթի կամ վնասի, ընդհանուր ակտիվների կամ ընդհանուր պարտավորությունների տեսանկյունից, կամ՝ երբ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ընդհանուր սեփական կապիտալում: 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում 3-րդ մակարդակի իրական արժեքի պարբերական չափումների գնահատման եղանակներում փոփոխություններ չեն եղել: (2021թ.՝ նույնը):

(բ) Ակտիվներ և պարտավորություններ որոնք չեն չափվում իրական արժեքով, սակայն որոնց համար իրական արժեքը բացահայտվում է

Իրական արժեքների հիերարխիայում վերլուծված իրական արժեքները և իրական արժեքով չչափվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Մակարդակ 3 իրական արժեք**	**Հաշվեկշռային արժեք**	**Մակարդակ 3 իրական արժեք**	**Հաշվեկշռային արժեք**
Ակտիվներ				
Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով				
- Առևտրային դեբիտորական պարտքեր	6,240,018	6,240,018	4,581,520	4,581,520
- Տրամադրված փոխառություններ	17,249,248	17,249,248	6,625,932	6,625,932
- Երկարաժամկետ առևտրային դեբիտորական պարտքեր	2,018,779	2,018,779	-	
- Ժամկետային ավանդներ	823,885	823,885	-	-
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	615,800	615,800	1,467,060	1,467,060
Ընդամենը ակտիվներ	**26,947,730**	**26,947,730**	**12,674,512**	**12,674,512**
Պարտավորություններ				
Փոխառություններ				
- Բանկային վարկ	18,334,317	18,334,317	8,664,896	8,664,896
Այլ ֆինանսական պարտավորություններ				
- Առևտրային կրեդիտորական պարտքեր	8,523,257	8,523,257	6,779,993	6,779,993
Ընդամենը պարտավորություններ	**26,857,574**	**26,857,574**	**15,444,889**	**15,444,889**

Իրական արժեքի հիերարխիայի 2-րդ և 3-րդ մակարդակների իրական արժեքները գնահատվել են զեղչված դրամական հոսքերի գնահատման միջոցով: Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում, գնահատվել է հավասար դրանց հաշվեկշռային արժեքին: Չգնանշված ֆիքսված տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է ապագա դրամական հոսքերի հիման վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն ընթացիկ տոկոսադրույքներով համանման վարկային ռիսկեր և մարման ժամկետների ունեցող նոր գործիքների գծով:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ. Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների չափվող իրական արժեքը հիմնված է ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա՝ կիրառելով գործող տոկոսադրույքները նմանատիպ պարտքային ռիսկ և նմանատիպ մարման ժամկետ ենթադրող փոխառության շուկայի նոր գործիքների նկատմամբ: Զեղչման համար օգտագործվող տոկոսադրույքները կախված են գործընկերոջ պարտքային ռիսկից:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ. Պարտավորությունների իրական արժեքը որոշվում է օգտագործելով չափման մեթոդներ: Ֆիքսված տոկոսադրույքով և սահմանված մարման ժամկետով գործիքների հաշվարկային իրական արժեքը չափվում է հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա՝ կիրառելով նմանատիպ պարտքային ռիսկ և նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր գործիքների տոկոսադրույքները:

37 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների

2022թ., և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացված են ամորտիզացված արժեքով:

38 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսատնտեսական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 7.5- 10.3%)	11,635,786	-
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 0%)	5,425,111	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	2,166,338	
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, բացի կանխավճարներից	529,637	370,646
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	1,604,777	123,699
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	-	30,847
Պարտավորություններ		
Ստացված կանխավճարներ	-	109,259
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	154,739

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 7, 5- 8%)	6,134,512	-
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 0%)	4,820,849	-
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	976,804	4,749
Պարտավորություններ		
Տրամադրված երաշխիքներ	1,907,669	-
Ստացված կանխավճարներ	-	1,844,005
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	80	218,854

38 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

Փոխկապակցված անձանց գծով եկամուտների և ծախսերի հոդվածները, ինչպես նաև այլ գործարքները 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Ծախսեր		
Ծառայությունների ձեռքբերում	496,149	37,647
Կառավարչական վճարներ	435,000	-
Եկամուտ		
Ծառայությունների տրամադրում	1,963,130	10,893
Հիմնական միջոցների իրացումից օգուտ	9,025	904,491
Տոկոսային եկամուտ	1,261,196	-
Այլ գործարքներ		
Տրամադրված փոխառություններ	10,357,819	-

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը տրամադրել է երաշխիք անմիջական մայր ընկերության կողմից 16,521,400 հազ. ՀՀ դրամի ներգրավված բանկային վարկի գծով, ինչպես նաև գրավադրել է իր գույքը 902,218 հազ. ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով: Երաշխիքը շարունակել է գործել 2021թ. (Ծանոթագրություն 33):

Փոխկապակցված անձանց գծով եկամուտների և ծախսերի հոդվածները, ինչպես նաև այլ գործարքները 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Ծախսեր		
Ծառայությունների ձեռքբերում	261,784	25,120
Կառավարչական վճարներ	256,667	-
Եկամուտ		
Ծառայությունների տրամադրում	4,234	7,142
Տոկոսային եկամուտ	744,769	-
Այլ գործարքներ		
Տրամադրված փոխառություններ	7,537,928	-

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները Ընկերությունն իրականացրել է «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքով, բացառությամբ որոշակի տրամադրված փոխառությունների և գործարքների գծով երաշխիքների (Ծանոթագրություն 11, 33):

Ղեկավար անձնակազմի հատուցում. Ղեկավար անձնակազմ են համարվում գլխավոր տնօրենը, գլխավոր տնօրենի տեղակալը, ֆինանսական տնօրենը, գործառնությունների տնօրենը, տեխնիկական տնօրենը, կոմերցիոն տնօրենը և Խորհրդի անդամը:

38 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

Ղեկավար անձնակազմին հատուցումը ներկայացված է ստորև.

	2022թ.		2021թ.	
Հազ. ՀՀ դրամ	**Ծախս**	**Զուտ հաշվեգրված պարտավորու-թյուն**	**Ծախս**	**Զուտ հաշվեգրված պարտավորու-թյուն**
Կարճաժամկետ հատուցումներ.				
- Աշխատավարձ	491,092	57,459	499,088	52,422
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	27,891	-	20,648	-
Ընդամենը	**518,982**	**57,459**	**519,736**	**52,422**

Ղեկավար անձնակազմին հատուցման գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի հատկացումներ՝ 4,565 հազ. ՀՀ դրամ (2021թ.՝ 4,170 հազ. ՀՀ դրամ):

39 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

IPO գործընթաց. Ընկերությունը սկսել է մասնավորից հանրային ընկերության անցման գործընթացը՝ Հայաստանի արժեթղթերի բորսայում նախնական հրապարակային տեղաբաշխման (IPO) գործընթաց իրականացնելու նպատակով: Այդ նպատակով տեղական բանկերից մեկը նշանակվել է որպես տեղաբաշխող և տեղաբաշխման ծառայությունների ներգրավման պայմանագիրը ստորագրվել է 2023թ. հունվարին: Ազդագիրը ներկայացվել է ՀՀ ԿԲ 2023թ. մայիսին: ՀՀ ԿԲ-ն 15 օրյա ժամկետ է սահմանում ազդագրի ուսումնասիրման և հաստատման համար, որից հետո ազդագիրը ենթակա է հրապարակման:

«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի գործունեությունը 5
2 Ընկերության գործառնական միջավայրը 5
3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ 6
4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ 18
5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին 21
6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ 22
7 Հիմնական միջոցներ 28
8 Ոչ նյութական ակտիվներ 29
9 Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր 30
10 Տրամադրված փոխառություններ 30
11 Պաշարներ 31
12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 31
13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 33
14 Կանոնադրական կապիտալ 34
15 Ակտիվների ապագործարկման պահուստ 34
16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 35
17 Պարտավորությունների և վճարների պահուստ 35
18 Հասույթ 36
19 Վաճառքի ինքնարժեք 36
20 Այլ գործառնական եկամուտ 37
21 Ընդհանուր և վարչական ծախսեր 37
22 Իրացման ծախսեր 38
23 Այլ գործառնական ծախսեր 38
24 Ֆինանսական եկամուտ/ծախսեր 38
25 Շահութահարկ 39
26 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ 41
27 Վարկեր և փոխառություններ 42
28 Պայմանական դեպքեր և պարտավորություններ 43
29 Ֆինանսական ռիսկերի կառավարում 44
30 Կապիտալի կառավարում 48
31 Իրական արժեքի բացահայտումներ 49
32 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների 49
33 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ 50
34 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր 52

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ Տնօրենների Խորհրդին և Բաժնետիրոջը

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ ֆինանսական վիճակն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Ընկերության նույն ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2021թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիրք») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ Վարքագրքին համապատասխան:

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:

- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ալեքսեյ Ռուսանով
Տնօրեն

PricewaterhouseCoopers Armenia LLC

1 հունիսի 2022թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	18,143,705	18,207,988
Ոչ նյութական ակտիվներ	8	4,222,289	3,995,028
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	9	1,304,285	1,508,569
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	26	3,471,418	4,357,890
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	7	944,774	183,222
Տրամադրված ոչ ընթացիկ վարկեր	10	10,955,362	6,224,629
Հետաձգված հարկային ակտիվներ	25	4,249,652	4,736,632
Հետաձգված ոչ ընթացիկ ծախսեր		31,135	94,656
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		64,578	64,578
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**43,387,198**	**39,373,192**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	11	431,493	223,831
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	5,710,491	3,477,754
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճարներ	25	248,075	707,496
Այլ հարկային ակտիվներ		62,900	168,805
Հետաձգված ընթացիկ ծախսեր		91,956	176,491
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	1,467,060	215,526
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**8,011,975**	**4,969,903**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**51,399,173**	**44,343,095**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	14	18,837,709	18,837,709
Չբաշխված շահույթ		2,195,699	512,847
Այլ պահուստներ		2,825,656	2,825,656
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**23,859,064**	**22,176,212**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ոչ ընթացիկ բանկային վարկեր	27	8,036,392	3,506,770
Ոչ ընթացիկ պարտավորություններ վարձակալության գծով	26	3,100,899	3,784,065
Տրամադրված ոչ ընթացիկ երաշխիքներ	28	1,517,155	2,278,000
Ակտիվների ապագործարկման գծով պահուստ	15	1,436,526	1,292,925
Ոչ ընթացիկ հետաձգված եկամուտ		32,031	34,368
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**14,123,003**	**10,896,128**
Ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ բանկային վարկեր	27	628,504	1,451,203
Ընթացիկ պարտավորություններ վարձակալության գծով	26	1,373,865	1,060,540
Տրամադրված ընթացիկ երաշխիքներ	28	390,514	390,514
Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր	16	6,779,993	6,309,042
Պահուստներ պարտավորությունների և վճարների գծով	17	187,197	802
Ընթացիկ հետաձգված եկամուտ		33,383	28,296
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր		697,133	859,677
Ստացված կանխավճարներ	16	2,857,931	671,894
Այլ հարկային պարտավորություններ		468,586	498,787
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**13,417,106**	**11,270,755**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**27,540,109**	**22,166,883**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**51,399,173**	**44,343,095**

Հաստատվել և ստորագրվել է 2022թ. հունիսի 1-ին:

Հայկ Եսայան	Կարեն Մնացականյան	Տաթևիկ Գևորգյան
Գլխավոր տնօրեն	Ֆինանսական տնօրեն	Գլխավոր հաշվապահ

5-51 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Հազ. ՀՀ դրամ	**Ծնթգ.**	**2021թ.**	**2020թ.**
Շարժական կապի ծառայությունների մատուցումից հասույթ	18	15,526,846	14,811,487
Ֆիքսված կապի ծառայությունների մատուցումից հասույթ	18	13,697,593	12,269,755
Սարքավորումների իրացումից հասույթ	18	2,349,969	2,344,838
Այլ հասույթ	18	136,106	115,017
Ընդամենը հասույթ		**31,710,514**	**29,541,097**
Ծառայությունների ինքնարժեք	19	(19,340,835)	(14,971,242)
Իրացված սարքավորումների ինքնարժեք	19	(2,246,296)	(2,220,152)
Ընդամենը վաճառքի ինքնարժեք		**(21,587,131)**	**(17,191,394)**
Համախառն շահույթ		**10,123,383**	**12,349,703**
Այլ գործառնական եկամուտ	20	1,953,758	1,339,946
Ընդհանուր և վարչական ծախսեր	21	(3,486,129)	(6,035,970)
Իրացման ծախսեր	22	(3,059,925)	(3,293,747)
Այլ գործառնական ծախսեր	23	(747,358)	(1,009,306)
Գործառնական գործունեությունից շահույթ		**4,783,729**	**3,350,626**
Ֆինանսական եկամուտ	24	1,524,306	369,334
Ֆինանսական ծախսեր	24	(1,220,974)	(713,544)
Փոխարժեքային տարբերություններից զուտ (վնաս՝ հանած օգուտ)/ օգուտ՝ հանած վնաս		(625,059)	493,149
Շահույթ մինչև հարկումը		**4,462,002**	**3,499,565**
Շահութահարկի գծով ծախս	25	(993,105)	(1,209,746)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ		**3,468,897**	**2,289,819**
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		**3,468,897**	**2,289,819**

Հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	Կանոնադրա-կան կապիտալ	Չբաշխ-ված շահույթ	Այլ պահուստ-ներ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.		**18,837,709**	**22,479,767**	**2,825,656**	**44,143,132**
Ընդամենը 2020թ. համապարփակ ֆինանսական արդյունք		-	2,289,819	-	2,289,819
Բաշխում նախորդ սեփականատիրոջը	33	-	(4,927,100)	-	(4,927,100)
Մայր ընկերությանը տրված փոխառությունների իրական արժեքով ճանաչման ազդեցությունը	10	-	(1,141,436)	-	(1,141,436)
Ֆինանսական երաշխիքի ճանաչում իրական արժեքով	28	-	(2,668,514)	-	(2,668,514)
Կապակցված կողմից փոխառության գծով դեբիտորական պարտքի ճանաչում	10	-	3,290,311	-	3,290,311
Հայտարարված շահաբաժիններ	14	-	(18,810,000)	-	(18,810,000)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.		**18,837,709**	**512,847**	**2,825,656**	**22,176,212**
Ընդամենը 2021թ. համապարփակ ֆինանսական արդյունք		-	3,468,897	-	3,468,897
Մայր ընկերությանը տրված փոխառությունների իրական արժեքով ճանաչման ազդեցությունը	10	-	(2,292,170)	-	(2,292,170)
Սեփական կապիտալում արտացոլված գործարքների գծով հետաձգված հարկի ազդեցությունը	25	-	506,125	-	506,125
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.		**18,837,709**	**2,195,699**	**2,825,656**	**23,859,064**

Հազ. ՀՀ դրամ	**Ծնթգ.**	**2021թ.**	**2020թ.**
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված վճարումներ		31,991,573	33,685,451
Ստացված տոկոսներ		4,393	135,250
Վճարված տոկոսներ		(403,756)	-
Դրամական միջոցներ այլ գործառնական գործունեությունից		2,112,781	265,622
Ծառայությունների մատուցման գծով վճարումներ		(8,077,090)	(12,423,862)
Վճարումներ աշխատակիցներին		(7,324,398)	(8,452,895)
Վճարված շահութահարկ		-	(566,100)
Վճարումներ բյուջե, բացի շահութահարկը		(3,704,099)	(3,458,213)
Պաշարների մատակարարներին վճարումներ		(4,306,355)	(2,400,505)
Գործուղումների համար կատարվող վճարներ		(49,259)	(42,840)
Այլ գործունեությամբ օգտագործված դրամական միջոցներ		1,441	(585,504)
Զուտ դրամական միջոցներ գործառնական գործունեությունից		**10,245,231**	**6,156,404**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(6,788,991)	(5,264,563)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		1,957,683	141,379
Տրամադրված փոխառությունների դիմաց մարումներ		478,303	19,617,066
Զուտ դրամական միջոցներ ներդրումային գործունեությունից		**(4,353,005)**	**14,493,882**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Ստացված վարկեր		7,058,409	4,941,895
Վարկերի մարում		(2,876,674)	(142,000)
Մայր կազմակերպությանը տրամադրված փոխառություններ		(7,537,928)	(3,676,194)
Բաշխում նախկին սեփականատիրոջը		-	(4,927,100)
Մայր կազմակերպությանը վճարված շահաբաժիններ		-	(17,900,658)
Մայր կազմակերպությանը վճարված շահաբաժինների գծով վճարված շահութահարկ		-	(940,500)
Վարձակալության վճարներ		(1,274,500)	(1,408,686)
Զուտ դրամական միջոցներ ֆինանսական գործունեությունից		**(4,630,693)**	**(24,053,243)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(9,999)	51,207
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ փոփոխություն		**1,251,534**	**(3,351,750)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**13**	**215,526**	**3,567,276**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**13**	**1,467,059**	**215,526**

5-52 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1 «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի գործունեությունը

«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Ընկերությունը ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Այն հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ բաժնետոմսերով սահմանափակված պատասխանատվությամբ, և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունն էր «ՎիմպելԿոմ» ՓԲԸ-ն, իսկ վերջնական մայր ընկերությունն էր «VEON Ltd.»-ն (նախկինում՝ «ՎիմպելԿոմ» ԼԹԴ)՝ Նիդեռլանդներում գրանցված իրավաբանական անձ: 2020թ.. հոկտեմբերի 28-ին Ընկերության բաժնետոմսերը վաճառվեցին «ԹԻՄ» ՍՊԸ-ին, որը Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերություն է: 2020թ. նոյեմբերի 16-ին «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն վերանվանվեց «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի: 2021թ. դեկտեմբերի 30-ին «ԹԻՄ» ՍՊԸ-ն վերակազմակերպվեց «ԹԻՄ» ՓԲԸ-ի:

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունն էր «ԹԻՄ» ՍՊԸ-ն, և Ընկերության վերջնական վերահսկողությունն իրականացնում էին Հայկ և Ալեքսանդր Եսայան եղբայրները:

Հիմնական գործունեությունը. Ընկերության հիմնական գործունեությունը բջջային և ֆիքսված հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումն է: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը մատուցում էր հեռահաղորդակցման ծառայություններ «Beeline» ապրանքանիշով:

Համաձայն կանոնադրության՝ Ընկերության կառավարումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի, տնօրենների խորհրդի և Ընկերության գործադիր մարմնի միանձնյա ղեկավարի՝ գործադիր տնօրենի կողմից:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0014, ք. Երևան, Ազատության պ. 24/1: Ընկերության հիմնական գործունեության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքն է:

2 Ընկերության գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ունենալ տարաբնույթ մեկնաբանումներ, տես՝ Ծանոթագրություն 28: Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, և Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն դրամական միջոցների հոսքերը: Հետևաբար, գործարար շրջանառության անկումը, արժեթղթերի շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ ոլորտների վրա:

COVID-19. 2020թ. մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի բռնկումը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի՝ Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցության զսպմանն ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինները, ինքնամեկուսացումը, գործարար գործունեության սահմանափակումները, ընդհուպ ձեռնարկությունների փակումը: Վերոնշյալ միջոցներից մի քանիսը հետագայում մեղմացվել են, սակայն 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարակի համաշխարհային մակարդակը մնում է բարձր, պատվաստումների մակարդակը համեմատաբար ցածր է, և կա ռիսկ, որ Հայաստանի իշխանությունները լրացուցիչ սահմանափակումներ կկիրառեն հետագա ժամանակաշրջաններում, այդ թվում՝ պայմանավորված վիրուսի նոր տարբերակների ի հայտ գալով:

2 Ընկերության գործառնական միջավայրը (շարունակություն)

2021թ. Հայաստանի տնտեսությունը դրսևորել է համավարակի հաղթահարման դրական դինամիկա. Նման դինամիկայի համար նաև նպաստավոր են եղել համաշխարհային տնտեսության վերականգնումը և համաշխարհային ապրանքային շուկաներում գների բարձրացումը: Այդուհանդերձ, Հայաստանում և գլոբալ որոշ շուկաներում գների բարձրացումը նաև նպաստում են Հայաստանում գնաճին:

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկած միջոցառումները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

Ակնկալվող պարտքային կորուստներ. Ընկերության վարկերի, դեբիտորական պարտքերի և համանման ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների չափման նպատակով Ընկերությունն օգտագործում է հիմնավորելի կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներ: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում է անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են էապես տարբերվել կանխատեսումներից: Ծանոթագրություն 29-ը տրամադրում է առավել մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է Ընկերությունը ներառել կանխատեսումային տեղեկատվությունը իր ԱՊԿ մոդելներում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ

Պատրաստման հիմունքները. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, սկզբնական արժեքի հիմունքով: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այդ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են այն բոլոր ժամանակաշրջանների համար, որոնք ներկայացված հաշվետվություններում, եթե այլ բան նշված չէ:

Անընդհատության հիմունք. Ղեկավարության կողմից սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով: Այս դատողությունը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական դիրքը, ընթացիկ մտադրությունները, գործառնությունների շահութաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը: Ընկերության ընթացիկ պարտավորությունները գերազանցում են ընթացիկ ակտիվները 5,405,131 հազ. ՀՀ դրամի չափով՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,300,852 հազ. ՀՀ դրամի չափով):

Առաջիկա 12 ամիսների դրամական միջոցների հոսքերի կանխատեսումը ցույց է տալիս, որ Ընկերությունը կկարողանա կատարել իր վճարման պարտավորությունները՝ նախատեսված մարման ժամկետներում: Ընկերությունը կանոնավոր բանակցություններ է վարում մատակարարների հետ՝ ավելի լավ վճարման պայմաններ ստանալու, և բանկերի հետ՝ բարենպաստ պայմաններով վարկեր ներգրավելու ուղղությամբ: Ընկերության քաղաքականությունը ուղղված է տոկոսադրույքների նվազագույնի հասցման և գոյություն ունեցող վարկային պորտֆելի համար արտոնյալ ժամանակահատվածի ստացմանը, ինչով էլ պայմանավորված են 7 տարի մարման ժամկետով 20,122,650 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով երկարաժամկետ վարկային պայմանագրերը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Ամերիաբանկ ՓԲԸ հետ (Ծանոթագրություն 34):

Այս հանգամանքները, այլ գործոնների հետ միասին, ղեկավարությանը հնարավորություն են տալիս հաստատել, որ Ընկերությունը կշարունակի գործել անընդհատության հիմունքով առնվազն հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում, և կատարել իր ֆինանսական պարտավորությունները:

Արտարժույթի փոխարկում. Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և Ընկերության հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ-ի՝ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով Ընկերության ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից եկամուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափված ոչ դրամական հոդվածները փոխարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ հաստատված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափվող ոչ դրամական հոդվածների վրա արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը գրանցվում է որպես իրական արժեքի շահույթի կամ վնասի մաս: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 480.14 ՀՀ դրամ, 1 Եվրո = 542.61 ՀՀ դրամ, 1 ՌԴ ռուբլի = 6.42 ՀՀ դրամ (2020թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 522.59 ՀՀ դրամ, 1 Եվրո = 641.11 ՀՀ դրամ, 1 ՌԴ ռուբլի = 7.02 ՀՀ դրամ):

Հիմնական միջոցներ. Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման պահուստը, եթե վերջինս պահանջվում է: Հիմնական միջոցները ներառում են հետագայում որպես հիմնական միջոց օգտագործման նպատակով կառուցվող ակտիվները:

Հետագա ծախսերը համապատասխանաբար ընդգրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ ճանաչվում են որպես առանձին ակտիվ, միայն այն ժամանակ, երբ հավանական է, որ հիմնական միջոցների համապատասխան միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն և վերջինիս արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում:

Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը:

Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում այլ գործառնական եկամուտների կամ ծախսերի հոդվածում:

Մաշվածություն. Հողի և անավարտ շինարարության համար մաշվածություն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Շենքեր	20
Փոխանցող հարմարանքներ	20
Սարքավորումներ	6-10
Ավտոմեքենաներ և տրանսպորտային միջոցներ	5
Հարմարանքներ և կցամասեր	10
Այլ	6-10

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը Ընկերությունը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ոչ նյութական ակտիվներ. Ընկերության ոչ նյութական ակտիվները ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետ և հիմնականում ներառում են կապիտալացված համակարգչային ծրագրային ապահովումը, արտոնագրերը, ապրանքանիշերն ու լիցենզիաները:

Ձեռք բերված համակարգչային ծրագրային ապահովումը, արտոնագրերը և ապրանքանիշերը կապիտալացվում են դրանց ձեռք բերման և օգտագործման համար կատարված ծախսերի հիման վրա:

Ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդի կիրառմամբ՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Համակարգչային ծրագրային լիցենզիաներ	9.5
Այլ լիցենզիաներ	Թույլտվության գործողության ժամկետը, բայց ոչ ավել, քան 10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	9.5

Արժեզրկվելիս, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հետևյալ արժեքներից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր. Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր են համարվում վարձակալված ակտիվների բարելավման համար կատարված կապիտալ ծախսերը: Դրանք մաշեցվում են իրենց օգտակար ծառայության կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում. Մաշվածության և ամորտիզացիայի ենթակա ակտիվները դիտարկվում են արժեզրկման հայտանիշների առկայության տեսանկյունից, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ հաշվեկշռային արժեքը չի կարող փոխհատուցվել: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն չափով, ըստ որի ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Ընկերությունը, իրական արժեքը որոշելիս, օգտագործում է զեղչված դրամական միջոցների հոսքերի մոդելը՝ օգտագործելով ղեկավարության կողմից պատրաստված բիզնես ծրագրերով կանխատեսվող դրամական միջոցների հոսքերը: Էական դատողությունները, որոնք օգտագործվում են ակտիվների փոխհատուցվող արժեքը որոշելիս, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում: Ոչ ֆինանսական ակտիվների՝ նախորդ ժամանակահատվածներում արձանագրված արժեզրկումը վերանայվում է հնարավոր վերականգնման տեսանկյունից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական գործիքներ. հիմնական չափման մոտեցումները: Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենաարժանահավատ վկայությունն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և Ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Նշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առքուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ: Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի, հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող գներով (չճշգրտվող), (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարները և կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատոմսերի հավելավճարները և զեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

Ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք): Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային կորուստները) զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն պարգևավճարի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփրեդը: Այդպիսի պարգևավճարները կամ զեղչերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում: Գնված կամ սկզբնավորված վարկային առումով արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ ակտիվների համար արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է՝ հաշվի առնելով պարտքային ռիսկը, այսինքն. հաշվարկվում է սկզբնական ճանաչման ժամանակ ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա, և ոչ թե պայմանագրային դրամական հոսքերի հիման վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Բոլոր մյուս ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները: Սկզբնական ճանաչումից հետո ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների գծով ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստ անմիջապես հանգեցնելով հաշվապահական վնասի:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Գնահատման կատեգորիաները: Ֆինանսական ակտիվները դասակարգելիս Ընկերությունը կիրառում է չափման հետևյալ կատեգորիաները՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը կախված է (i) ակտիվների համապատասխան պորտֆելի կառավարման համար նախատեսված ընկերության բիզնես մոդելից և (ii) ակտիվի դրամական հոսքերի բնութագրից:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Բիզնես մոդել: Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով Ընկերությունը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք Ընկերության նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բիզնես մոդելը որոշվում է ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով), հիմնվելով այն գործողությունների բոլոր պատշաճ ապացույցների վրա, որոնք Ընկերությունը մտադիր է իրականացնել գնահատման ամսաթվի դրությամբ առկա պորտֆելի համար սահմանված նպատակին հասնելու համար:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. դրամական միջոցների հոսքերի բնութագրերը. Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ: Պարունակվող ածանցյալ գործիքներով ֆինանսական ակտիվները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ որոշելու, թե արդյոք նրանց դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումների հատկանիշներին: Նման գնահատումն իրականացնելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝ տոկոսները ներառում են միայն պարտքային ռիսկը, փողի ժամանակային արժեքը, այլ բազային պարտքային ռիսկերը և շահույթի մարժան:

Այն դեպքերում, երբ պայմանագրային պայմաններն առաջացնում են ռիսկի ենթարկվածություն կամ անկայունություն, որն անհամատեղելի է վարկավորման բազային մեխանիզմի հետ, ֆինանսական ակտիվը դասակարգվում և չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում. Ֆինանսական գործիքները վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ ընդհանուր առմամբ փոփոխվում է պորտֆելը կառավարող բիզնես մոդելը: Վերադասակարգումը կիրառվում է առաջընթաց կերպով՝ առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբից՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո: Ընկերությունը ընթացիկ կամ համեմատական ժամանակահատվածում չի փոխել իր բիզնես մոդելը և վերադասակարգում չի կիրառել:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ. Ընկերությունը կանխատեսումային հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների, ինչպես նաև վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով հնարավոր ակնկալվող պարտքային կորուստները: Ընկերությունը գնահատում է պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչում է կորստի պահուստը հաշվետու յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը արտացոլում է. i) անաչառ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով. (ii) փողի ժամանակային արժեքը, և (iii) տեղի ունեցած իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները, առևտրային դեբիտորական պարտքերը Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված ակնկալվող պարտքային կորուստի պահուստի չափով: Վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների համար ակնկալվող պարտքային կորուստի համար առանձին պահուստը ճանաչվում է որպես պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող պարտքային գործիքների համար ամորտիզացված արժեքի փոփոխությունները, զուտ ակնկալվող պարտքային կորուստի պահուստի չափը, ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող պարտքային գործիքների գծով օգուտ՝ հանած վնաս:

Ընկերությունը կիրառում է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի չափման պարզեցված մոտեցում (պահուստների մատրիցա) իր առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար, որոնք ներառում են չմարված դեբիտորական պարտքերը (պայմանագրային ակտիվները): Պահուստների ժամկետայնությունը հիմնված է պարտքային կորուստների պատմական փորձի վրա՝ առևտրային դեբիտորական պարտքերի ամբողջական ժամկետի ընթացքում և ճշգրտվում է ըստ կանխատեսումների գնահատման: Կանխատեսումների գնահատումը ներառում է մակրոտնտեսական գործոններ, ինչպիսիք են ՀՆԱ-ն և գործազրկության մակարդակը: Ընկերությունը դեֆոլտի մակարդակի գծով չի կիրառում կանխատեսումների գնահատման ճշգրտումներ, եթե պարտքային կորուստների գծով մակրոտնտեսական գործոնների և Ընկերության պատմական փորձի միջև չկա հարաբերակցություն: Պահուստների ժամկետայնությունը վերանայվում է ամեն եռամսյակ:

Մնացած ֆինանսական ակտիվների համար Ընկերությունը կիրառում է պարտքային ռիսկերի էական փոփոխման գնահատման մոդելը: Արժեզրկման կորուստները ներկայացվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ արդյունքի մասին հաշվետվությունում՝ «Այլ գործառնական ծախսեր» տողում:

Դեբիտորական պարտքերի նկատմամբ հաշվեգրված տույժերը, տուգանքները և տոկոսները ներառվում են արժեզրկման պահուստի կազմի մեջ: Խմբային սկզբունքով արժեզրկման դրույքաչափերը վերանայվում են եռամսյակային պարբերականությամբ՝ դեբիտորական հաշիվների հավաքագրելիության հիման վրա: Խմբային հիմունքով արժեզրկման դրույքաչափերը առ 31 դեկտեմբերի 2021թ. և 31 դեկտեմբերի 2020թ. ներկայացված են Ծանոթագրություն 12-ում:

Եթե ամորտիզացված արժեքով պահվող արժեզրկված ֆինանսական ակտիվի պայմանները վերանայվում են բանակցությունների արդյունքում կամ մեկ այլ ձևով վերափոխվում են կողմի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով մինչև պայմանների վերափոխումը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը: Վերաձևակերպվող ակտիվը ապաճանաչվում է և նոր ակտիվը ճանաչվում է իր իրական արժեքով, միայն այն դեպքում, եթե ակտիվի ռիսկերը և հատույցները էականորեն փոխվել են: Սա սովորաբար հաստատվում է սկզբնական դրամական միջոցների հոսքերի և նոր ակնկալվող դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքների միջև էական տարբերության առկայությամբ:

Եթե հաջորդող ժամանակաշրջանում արժեզրկումից կորստի գումարը նվազում է և այդ նվազումը կարելի է անկողմնակալ կերպով կապել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա անցյալում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է՝ ճշգրտելով պահուստային հաշիվը տարվա շահույթի կամ վնասի միջոցով:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների դուրսգրում. Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Ընկերությունը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Վերականգնման հիմնավորված ակնկալիքների բացակայության հիմնական հայտանիշ է հանդիսանում վերջնաժամկետի լրանալը: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Ընկերությունը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում. Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Ֆինանսական պարտավորությունների չափման կատեգորիաները. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայումամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ. (i) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններից: Այս դասակարգումը վերաբերում է ածանցյալ ֆինանսական գործիքներին, առևտրային նպատակով պահվող ֆինանսական պարտավորություններին (օրինակ, արժեթղթերի կարճ դիրքեր), պայմանական հատուցմանը, որը բիզնեսի միավորման ժամանակ ճանաչվում է ձեռք բերողի կողմից և սկզբնական ճանաչման պահին որպես այդպիսիք սահմանված այլ ֆինանսական պարտավորություններին; և (ii) ֆինանսական երաշխավորության պայմանագրերի և փոխատվության հանձնառությունների:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Ֆինանսական գործիքների հաշվանցում. Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտադրություն կա՛մ մարելու զուտ արժեքը, կա՛մ էլ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Դիտարկվող հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ. Ընկերությունը վարձակալում է տարբեր գրասենյակային տարածքներ, հող և շենքեր սարքավորումների տեղակայման համար: Պայմանագրերում կարող են ներառվել և՛ բաղկացուցիչներ, որոնք հանդիսանում են վարձակալության պայմանագրեր, և՛ բաղադրիչներ, որոնք վարձակալության պայմանագրեր չեն հանդիսանում: Ընկերությունը պայմանագրային հատուցումը բաշխում է վարձակալության բաղադրիչների և այն բաղադրիչների միջև, որոնք վարձակալություն չեն հանդիսանում՝ հիմք ընդունելով այդ բաղադրիչների առանձնացված գործարքի հարաբերական գինը:

Վարձակալության պայմանագրերից առաջացած ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրենց ներկա արժեքով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը,
- վարձակալության վճարումները, որոնք կատարվել են վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ մինչ այդ ամսաթիվը, հանած ստացված վարձակալության խրախուսումները,
- ցանկացած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալության պայմանագրով ակտիվի նախատեսված վիճակը վերականգնելու համար պահանջվող ծախսումները:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որպես կանոն, ամորտիզացվում են գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի կամ վարձակալության ժամկետի ընթացքում՝ կախված նրանից, թե որն ավելի շուտ կավարտվի: Եթե Ընկերությունը գնման օպցիոնն իրագործելու բավարար չափով վստահություն ունի, այն օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ամորտիզացնում է հիմնական ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ընկերությունն օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիան հաշվարկում է գծային մեթոդով դրանց գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, մասնավորապես.

Օգտագործման իրավունքի տեսակ	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Հող՝ սարքավորումների տեղակայման համար	8
Շենքեր՝ սարքավորումների տեղակայման համար	8
Գրասենյակային տարածքներ	3

Վարձակալության գծով պարտավորություններ. Վարձակալության պայմանագրերից բխող պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով: Վարձակալության գծով պարտավորությունները ներառում են հետևյալ վարձակալության վճարների զուտ ներկա արժեքը.

- հաստատուն վճարներ (ներառյալ, ըստ էության, հաստատուն վճարումները) հանած ստացման ենթակա վարձակալության խրախուսումները,

- վարձակալության փոփոխուն վճարները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքաչափից և սկզբնապես չափվում են օգտագործելով մեկնարկի ամսաթվի դրությամբ գործող ինդեքսը կամ դրույքաչափը,

- վարձակալության պայմանագրերը դադարեցնելու համար տուգանքների վճարները, եթե վարձակալության ժամկետը արտացոլում է Ընկերության կողմից այդ օպցիոնի իրագործումը:

Վարձակալության երկարաձգման և դադարեցման օպցիոնները նախատեսված են Ընկերության մի շարք պայմանագրերում: Այս պայմաններն օգտագործվում են Ընկերության գործունեության մեջ օգտագործվող ակտիվները կառավարելիս առավելագույն գործառնական ճկունություն ապահովելու համար: Պարտավորության գնահատումը ներառում է նաև վարձակալության վճարներ, որոնք կկատարվեն որպես երկարաձգման օպցիոնների իրագործման մաս, եթե բավարար վստահություն կա, որ վարձակալությունը կերկարաձգվի:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Վարձակալության վճարները զեղչվում են՝ օգտագործելով վարձակալության պայմանագրով ենթադրվող տոկոսադրույքը: Եթե այս դրույքաչափը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, ինչը, որպես կանոն, տեղի է ունենում Ընկերության մոտ առկա վարձակալության պայմանագրերի դեպքում, ապա Ընկերությունն օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, որը այն դրույքաչափն է, որով Ընկերությունը կարող էր համանման ժամանակահատվածում և համանման ապահովությամբ ներգրավել փոխառու միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեին համանման տնտեսական պայմաններում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի արժեքին համարժեք ակտիվ ձեռք բերելու համար:

Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը որոշելու համար Ընկերությունը.

- հնարավորության դեպքում, որպես նախնական տեղեկատվություն օգտագործում է վերջերս երրորդ անձի կողմից ստացված ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը և ճշգրտում է այն, հաշվի առնելով ֆինանսավորումը ստանալու պահից հետո տեղի ունեցած ֆինանսավորման պայմանների փոփոխությունները,

- օգտագործում է ձևավորման այնպիսի մոտեցում, որի դեպքում հաշվարկը սկսվում է առանց ռիսկի տոկոսադրույքից, որը ճշգրտվում է պարտքային ռիսկի չափով, և

- կատարում է ճշգրտումներ հաշվի առնելով վարձակալության պայմանագրի առանձնահատկությունները, օրինակ, վարձակալության ժամկետը, երկիրը, արժույթը և ապահովությունը:

Վարձակալության վճարները բաժանվում են պարտավորությունների հիմնական գումարի և ֆինանսական ծախսերի: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում վարձակալության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի վրա հաստատուն պարբերական տոկոսադրույքն ապահովելու համար:

Շահութահարկ. Շահութահարկը ներկայացվում է ֆինանսական հաշվետվություններում համաձայն օրենսդրության, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ հարկային մարմիններից փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Շահութահարկից տարբերվող այլ հարկերը, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս: Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույքները, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:
Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցել ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց և, երբ հետաձգված շահութահարկի ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող անձից կամ տարբեր հարկատուներից, որտեղ կա մնացորդները զուտ հիմունքով կարգավորելու մտադրություն:

Անորոշ հարկային դիրքեր. Ընկերության անորոշ հարկային դիրքերը գնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Շահութահարկի գծով պարտավորությունները հաշվի են առնվում այն դեպքում, երբ ղեկավարությունը գտնում է, որ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման հավանականությունը ավելի մեծ է, քան դրանց բացակայությունը, եթե Ընկերության հարկային գործունեությունը վիճարկվի հարկային մարմինների կողմից: Գնահատումը հիմնված է այն հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունների վրա, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նմանատիպ հարցերի շուրջ ցանկացած հայտնի դատական կամ այլ որոշումների վրա: Տուգանքների, տոկոսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են ղեկավարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը:

Շահութահարկի անորոշության գծով ճշգրտումները՝ բացառությամբ տույժերի և տուգանքների, արտացոլվում են շահութահարկի գծով ծախսերում: Շահութահարկի անորոշության գծով ճշգրտումները՝ կապված տույժերի և տուգանքների հետ, արտացոլվում են համապատասխանաբար ֆինանսական ծախսերի և այլ զուտ շահույթների/(վնասների) կազմում:

Ավելացված արժեքի հարկ. Վաճառքին վերաբերող ավելացված արժեքի հարկը ենթակա է վճարման հաճախորդներին ապրանքների հանձնման կամ ծառայությունների մատուցման ժամանակ: Գնմանը վերաբերող ԱԱՀ-ը սովորաբար հաշվանցվում է վաճառքին վերաբերող ԱԱՀ-ի դիմաց, ԱԱՀ-ի հարկային հաշիվը ստանալուց և հաստատելուց հետո: Հարկային մարմինները թույլատրում են ԱԱՀ-ը հաշվարկել զուտ հիմունքով: Վաճառքին և գնումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են համախառն հիմունքով և առանձին բացահայտվում են որպես ակտիվ և պարտավորություն: Դեբիտորական պարտքերի արժեզրկման համար պահուստ ստեղծելու դեպքում արժեզրկումից կորուստը ճանաչվում է պարտապանի համախառն գումարում, ներառյալ ԱԱՀ-ը:

Պաշարներ. Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Կանխավճարներ. Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանելով արժեզրկման համար պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Ընկերությունը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն:

Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ապրանքը կամ ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Կանոնադրական կապիտալ. Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված մուտքերից նվազեցում՝ հարկումից հետո: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, սեփական կապիտալում գրանցվում է որպես էմիսիոն եկամուտ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Այլ պահուստներ. Այլ պահուստները ներկայացված են Հայաստանի Հանրապետության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի համապատասխան ստեղծված չբաշխվող պահուստային հիմնադրամով: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չպետք է Ընկերության կանոնադրական կապիտալի 15%-ից պակաս լինի:

Պահուստներ պարտավորությունների և վճարների համար. Պարտավորությունների և վճարների գծով պահուստները անորոշ ժամանակով կամ գումարով ոչ ֆինանսական պարտավորություններ են: Դրանք հաշվեգրվում են, երբ Ընկերությունը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավաբանորեն սահմանված կամ ենթադրվող պարտավորություն և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, ինչպես նաև հնարավոր է արժանահավատորեն գնահատել պարտավորության չափը: Պահուստները գնահատվում են՝ ելնելով ծախսերի ներկա արժեքից, որն, ինչպես ակնկալվում է, կպահանջվի պարտավորության մարման համար՝ զեղչված մինչև հարկումը տոկոսադրույքով, որն արտացոլում է տվյալ պարտավորությունների գծով գումարների և ռիսկերի ներկա արժեքը: Ժամանակի ընթացքում պահուստի աճը ճանաչվում է որպես տոկոսային ծախս:

Ակտիվների ապագործարկման պահուստ. Ակտիվի ապամոնտաժման համար գնահատվող անհրաժեշտ ծախսերը (ակտիվների ապագործարկման պահուստը) ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին ձեռք բերման պահին կամ վերջինիս օգտագործման որոշակի փուլում: Երբ պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ տնտեսական օգուտների արտահոսքի գնահատված ժամկետների կամ գումարների, ինչպես նաև զեղչման դրույքի փոփոխության արդյունքում անհրաժեշտություն է առաջանում կարգավորել գոյություն ունեցող ապագործարկման պահուստի չափը, ապա փոփոխվում է նաև պահուստին համապատասխանող ակտիվի սկզբնական արժեքը:

Հատուցումներ աշխատակիցներին. Աշխատավարձը, պետական կենսաթոշակային և Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումները, տարեկան վճարովի արձակուրդը, հիվանդության պատճառով բացակայությունը և պարգևավճարները հաշվեգրվում են այն տարում, երբ տվյալ հատուցումները որոշող համապատասխան ծառայությունները մատուցվել են Ընկերության աշխատակիցների կողմից: Պետական կենսաթոշակային և սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումներից բացի, Ընկերությունը չունի կենսաթոշակային կամ համանման այլ վճարումներ կատարելու իրավական պարտավորություն:

Հասույթի ճանաչում. Ընկերության եկամտի աղբյուր են հանդիսանում ձայնային ծառայությունների մատուցումը, տվյալների փոխանցման ծառայությունները և անլար կապի լայնածավալ ծառայությունների ու լայնաշերտ ինտերնետի հասանելիության միջոցով այլ հեռահաղորդակցման ծառայությունները, ինչպես նաև սարքավորումների և պարագաների վաճառքը: Ապրանքներն ու ծառայությունները կարող են տրամադրվել առանձին կամ ծառայությունների համակցված փաթեթով:

Եթե պայմանագրի արդյունքը չի կարող արժանահավատ որոշվել, ապա պայմանագրային հասույթը ճանաչվում է կատարված պայմանագրային ծախսերի չափով, որոնք կարող են փոխհատուցվել:

Ծառայությունների վաճառքից ստացված հասույթ. Ծառայությունների վաճառքից ստացված հասույթը իր մեջ ներառում է գնորդների հետ կնքած պայմանագրերով նախատեսված եթերաժամից ստացված հասույթը և հաշվարկների կանխավճարային համակարգի շրջանակներում, ամսեկան բաժանորդային վճարը, փոխկապակցման ծառայությունից հասույթը, ռոումինգի գծով հասույթը և այլ ծառայությունները: Լրացուցիչ ծառայությունները ներառում են կարճ հաղորդագրություններ (SMS), մուլտիմեդիային հաղորդագրություններ (MMS), համարի որոշում, զանգի սպասարկում, տվյալների փոխանակում, բջջային ինտերնետ, ներբեռնվող կոնտենտ և այլ ծառայություններ: Լրացուցիչ կոնտենտային ծառայություններից հասույթը արտացոլվում է՝ հանած համապատասխան ծախսերը, երբ Ընկերությունը հանդիսանում է որպես գործակալ կոնտենտ-պրովայդերների համար կամ առանց համապատասխան ծախսերի, երբ Ընկերությունը հանդիսանում է որպես գործարքի հիմնական պարտավորությունները կրող կողմ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Սահմանված ժամանակահատվածով ծառայություններից, ներառյալ ֆիքսված սակագնային պլանները և ամսական բաժանորդագրությունները, ստացված հասույթը, որպես կանոն, ճանաչվում է հավասարապես ժամանակի ընթացքում: Սակագնային պլաններից ստացված հասույթը, որոնց համար վճարումը գանձվում է փաստացի օգտագործման դիմաց, ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ դրանց օգտագործման աստիճանով: Որոշ սակագնային պլաններ հաճախորդներին հնարավորություն են տալիս հաջորդ ժամանակահատված փոխանցել չօգտագործված ծառայությունները: Այդ սակագնային պլաններից ստացված հասույթը, որպես կանոն, հավասարապես ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ըստ դրանց օգտագործման աստիճանի: Մի քանի ծառայությունների բաղադրիչներ ներառող պայմանագրերի (ինչպես օրինակ՝ ձայնը, տեքստը, տվյալները) համար հասույթը բաշխվում է առանձին վաճառքի գնի հիման վրա: Այդ ծառայությունների առանձին վաճառքի գինը որոշվում է հաշվի առնելով այն գինը, որը գանձվում է այն գնորդներից, ովքեր վճարում են ծառայության համար ըստ օգտագործման աստիճանի:

Սկզբնական վճարումները, ներառյալ ակտիվացման կամ կապի վճարները, հավասարապես ճանաչվում են պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում: Անորոշ ժամկետով պայմանագրերի (որպես կանոն՝ կանխավճարային պայմանագրերը) դեպքում սկզբնական վճարումներից հասույթը ճանաչվում է բաժանորդի գոյության միջին տևողության ընթացքում:

Այլ օպերատորներից ստացված հասույթը՝ ներառյալ միջցանցային միացումների և ռոումինգի վճարը, ճանաչվում է պայմանագրային գնի հիման վրա՝ հանած ծավալի համար նախատեսված ենթադրյալ հետընթաց զեղչերը: Կուտակված փորձն օգտագործվում է զեղչերի գնահատման և տրամադրման համար: Ծառայությունների վաճառքից ստացված ողջ հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում:

Սարքավորումների և պարագաների վաճառք. Սարքավորումներն ու պարագաները սովորաբար հաճախորդներին վաճառվում են առանձին կամ ծառայությունների փաթեթների հետ միասին: Ծառայությունների փաթեթների հետ միասին վաճառքի դեպքում հասույթը բաշխվում է համամասնորեն՝ ելնելով առանձին վաճառքի և ծառայությունների փաթեթի գնից:

Բջջային կապի սարքավորումների և պարագաների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ սարքավորումը վաճառվում է բաժանորդին կամ եթե այն վաճառվում է միջնորդի միջոցով, երբ միջնորդը սարքի նկատմամբ վերահսկողություն է սահմանել, և միջնորդն իրավունք չունի այն վերադարձնել: Ֆիքսված կապի սարքավորումների վաճառքից ստացված հասույթը չի ճանաչվում այնքան ժամանակ, քանի դեռ այդ սարքավորումների տեղադրումն ու փորձարկումն ավարտված չէ, և սարքավորումը չի ընդունվել գնորդի կողմից:

Սարքավորումների և պարագաների վաճառքից ստացված ողջ հասույթը ճանաչվում է ժամանակի որոշակի պահին:

Պայմանագրի գծով մնացորդներ. Դեբիտորական պարտքերը և պայմանագրերի գծով ակտիվները հիմնականում դասվում են այն միջոցների շարքին, որոնք ձեռք են բերվում գործակալների, կապի այլ օպերատորների և հետվճարային կապի սակագնային պլան ունեցող հաճախորդների կատարած վճարումների արդյունքում: Պայմանագրերի գծով ակտիվները տեղափոխվում են դեբիտորական պարտքեր, երբ իրավունքները դառնում են անվերապահ, որը սովորաբար տեղի է ունենում այն ժամանակ, երբ Ընկերությունը գնորդին ներկայացնում է հաշիվ-ապրանքագիր:

Պայմանագրի գծով պարտավորությունները գլխավորապես դասվում են չփոխհատուցվող դրամական միջոցների շարքին, որոնք ձեռք են բերվել կանխավճարային համակարգով ֆիքսված կամ փաստացի օգտագործման դիմաց վճարվող սակագնային պլան ունեցող գնորդներից: Պայմանագրերի գծով պարտավորությունները ներկայացված են որպես «Հետաձգված եկամուտ» և «Ստացված կանխավճարներ»՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: «Հետաձգված եկամտի» մնացորդները տարվա սկզբում ճանաչվել են որպես հասույթ տարվա ընթացքում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Դրամական միջոցների հավաքագրման մեթոդ հանդիսացող կանխավճարային քարտերի իրացումը արտացոլվում է բաժանորդներից ստացված կանխավճարների տեսքով՝ ապագայում մատուցվող ծառայությունների համար և հետաձգվում է մինչև այն պահը, երբ հաճախորդը օգտագործի իրեն հասանելի եթերաժամը: Կանխավճարային քարտերը կարող են լինել անժամկետ, սակայն նրանց գործունեության ժամանակաշրջանը սահմանափակվում է օրենսդրությամբ. չօգտագործված կանխավճարային մնացորդները գումարվում են ծառայությունների մատուցումից ստացված հասույթին՝ ակնկալվող կանխավճարային մնացորդի հիման վրա, որի ժամկետը կլրանա՝ չօգտագործված մնալով:

Գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումներ. Գնորդների հետ պայմանագիր կնքելուն ուղղված որոշ լրացուցիչ ծախսումներ («գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումներ») ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված ծախսեր: Որպես կանոն, նման ծախսերը, վերաբերում են վարձատրությանը, որը վճարվել է երրորդ կողմերին՝ դիլերներին ու սեփական անձնակազմին և ամորտիզացվում են գծային մեթոդի կիրառմամբ՝ բաժանորդի գոյության միջին տևողության ընթացքում: Ընկերությունը կիրառում է գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումների համար նախատեսված գործնական պարզեցումներ, որոնց համար մաշվածությունը 12 ամսից ավելի կարճ կլիներ: Նման ծախսերը գլխավորապես վերաբերում են երրորդ կողմի դիլերներին վճարվող միջնորդավճարներին՝ գնորդի կանխավճարային հաշվի ավելացման և քարտերի վաճառքի դեպքում:

Բաժանորդի գոյության միջին տևողություն. Ղեկավարությունը գնահատում է բաժանորդի գոյության միջին տևողությունը հասույթի (օրինակ, սկզբնական վճարումների միջոցով), անորոշ ժամկետով պայմանագրերի և գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումների միջոցով: Բաժանորդի գոյության միջին տևողությունը հաշվարկվում է վիճակագրության, մասնավորապես՝ տարբեր սեգմենտների (ինչպիսիք են բջջային և ֆիքսված հեռախոսակապի, կանխավճարային և հետվճարային) բաժանորդների արտահոսքի ցուցանիշների հիման վրա:

Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն. Թողարկումից հետո այս ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Ընկերության ղեկավարության հաստատումը, ով լիազորել է այս ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում:

Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Հարկային օրենսդրություն. Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա են տարբեր մեկնաբանումների (տե՛ս Ծանոթագրություն 28):

Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա ակտիվ շուկա այդպիսի գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում նմանատիպ գործարքների գնահատումը չկապակցված կողմերի հետ և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 33-ում:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Ակնկալվող պարտքային կորուստների չափում. Ակնկալվող պարտքային կորուստների չափումը նշանակալի գնահատական է, որի ստացման համար օգտագործվում է չափման մեթոդոլոգիա, մոդել և մուտքային տվյալներ: Հետևյալ բաղադրիչներն ունենում են զգալի ազդեցություն ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի վրա. ակնկալվող դրամական միջոցների հոսքերի գումարը և դեֆոլտի հավանականությունը: Եթե կանխատեսվող ժամանակահատվածում (2022-2026թթ.) (2020թ.՝ 2021-2027թթ.) ազատ դրամական միջոցների հոսքերը նվազեն 10%-ով (2020թ.՝ 10%-ով), ապա տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստը բարձր կլինի 406,300 հազ. ՀՀ դրամով (2020թ.՝ էապես չի փոխվի): Եթե դեֆոլտի հավանականությունն ավելի բարձր լինի 10%-ից (2020թ.՝ 10%-ից), ապա տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստը կմեծանա 140,422 հազ. ՀՀ դրամի չափով (2020թ.՝ կմեծանա 654,871 հազ. ՀՀ դրամի չափով):

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում: 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը հայտնաբերել է հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և օգտագործման իրավունքի ակտիվների գծով հնարավոր արժեզրկման հայտանիշներ: Որոշելու համար՝ արդյոք պետք է ճանաչվի արժեզրկում, թե ոչ, կատարվել է արժեզրկման թեստ՝ հիմք ընդունելով օգտագործման արժեքի (ՕԴՀ մոդել) մեթոդը: Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումներում օգտագործված հաշվարկները հիմնված են 2022թ.-ին ղեկավարության կողմից հաստատված ֆինանսական բյուջեի վրա: Հետագա տարիների դրամական հոսքերը (2023-2026թթ. և վերջնական ժամանակահատվածը) հիմնված էին ղեկավարության կողմից պատրաստված երկարաժամկետ կանխատեսման վրա՝ հիմք ընդունելով մատուցվող համանման ծառայությունների ծավալի միտումները: Ապագա ժամանակաշրջանների գները որոշվել են շուկայի միտումների հիման վրա (ձայնային կապի ՄԲՄՀ-ի նվազում և տվյալների փոխանցման գծով ՄԲՄՀ-ի աճ, մեծածախ հասույթի զարգացում, ֆիքսված հեռախոսակապի անկում, և այլն) հաշվի առնելով նաև գնաճի կանխատեսումները:

Ապագա դրամական միջոցների հոսքերը մինչ ընթացիկ արժեքը զեղչելու ժամանակ օգտագործվել է 15,10% զեղչի դրույքաչափ՝ մինչև հարկումը: Երկարաժամկետ աճի տեմպը՝ 2.7%, օգտագործվել է 2026թ. հետո ընկած ժամանակահատվածների համար: Զեղչի տոկոսադրույքը սկզբում որոշվել է ԱՄՆ դոլարով՝ հիմնվելով մինչև 2046թ. ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի առանց ռիսկի տոկոսադրույքի վրա՝ ճշգրտված ռիսկի հավելավճարի չափով բաժնային արժեթղթերում ներդրումների ավելացման ռիսկով և Ընկերությանը բնորոշ համակարգային ռիսկով: Բաժնային ներդրումների շուկայական ռիսկի հավելավճարը կազմում է 5,5%: Չափի ռիսկի հավելավճարը սահմանվել է 3.21% մակարդակում՝ հիմք ընդունելով Ընկերության չափի համար Duff & Phelps Տարեգրքի տվյալները: Կապիտալի միջին կշռված արժեքը հիմնված է ոլորտի սեփական կապիտալ/պարտք հարաբերակցության վրա: Ընկերության ֆունկցիոնալ արժույթով (ՀՀ դրամ) արտահայտված զեղչի տոկոսադրույքը ճշգրտվում է՝ Հայաստանում և ԱՄՆ-ում գնաճի երկարաժամկետ կանխատեսման հիման վրա:

Ստորև ներկայացված են հիմնական ենթադրությունները, որոնց հիման վրա որոշվել է օգտագործման արժեքը և որոնց նկատմամբ փոխհատուցվող գումարը ցուցաբերում է առավել զգայունություն.

	2022 – 2026թթ.
Տվյալների տարանցման մեծածախ ծառայություններից հասույթ (արտասահմանյան հաճախորդներ), մլն. ՀՀ դրամ	3.8-ից մինչև 5.6 մլն ՀՀ դրամ աճ 2022-2026թթ. ընթացքում
Շարժական կապ – հաճախորդների բազայի տարեկան աճ 2022թ.-ից, %	2.8%
Շարժական կապ – ՄԲՄՀ տարեկան աճ 2022թ.-ից, %	2.1%
Ֆիքսված ինտերնետ կապ – հաճախորդների բազայի տարեկան աճ 2022թ.-ից, %	2.8%
Ֆիքսված ինտերնետ կապ – ՄԲՄՀ տարեկան աճ 2022թ.-ից, %	5.0%

Ղեկավարության հաշվարկները հաստատել են ոչ ընթացիկ ոչ ֆինանսական ակտիվների համար արժեզրկման բացակայությունը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Հաջորդ աղյուսակում ներկայացված են ստորև ներկայացված հիմնական ենթադրությունների հավանական փոփոխությունների նկատմամբ արժեզրկման թեստի զգայունության վերլուծության տվյալները: Ստորև բերված աղյուսակի համարները ներկայացնում են Ընկերության համար օգտագործման արժեքի չափի վրա հավանական ազդեցությունը (ԶԴՀ մոդելի արդյունք):

	Օգտագործման արժեքի վրա ազդեցությունը
Տվյալների տարանցման մեծածախ ծառայություններից հասույթի նվազում 10%-ով	(981,470)
Շարժական կապ – հաճախորդների բազայի աճի տեմպի նվազում 2%-ով	(9,932,300)
Շարժական կապ – ՄԲՄՀ տարեկան աճի նվազում 2%-ով	(10,003,840)
Ֆիքսված ինտերնետ կապ – հաճախորդների բազայի աճի տեմպի նվազում 3%-ով	(5,220,460)
Ֆիքսված ինտերնետ կապ – ՄԲՄՀ տարեկան աճի նվազում 3%-ով	(5,106,780)

Վերոհիշյալ ենթադրությունների փոփոխությունները չեն հանգեցնի ոչ ֆինանսական ոչ ընթացիկ ակտիվների հաշվեկշռային արժեքի փոփոխության:

Տրամադրված երաշխիքի իրական արժեքի չափում: 2020թ.-ին Ընկերությունը երաշխիք է տրամադրել հօգուտ իր անմիջական մայր ընկերության (Ծանոթագրություն 28): ԱՄՆ դոլարով արտահայտված բանկային վարկի ընդհանուր գումարը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 10,851,434 հազ. ՀՀ դրամ (31 դեկտեմբերի 2020թ. ՝ 16,521,400 հազ. ՀՀ դրամ): Երաշխիքը ճանաչվել է իրական արժեքով և ճանաչման ամսաթվին կազմել է 2,668,514 հազ. ՀՀ դրամ (իրական արժեքի չափման մանրամասները բացահայտված են ծանոթագրություն 31-ում), հետագա չափումից հետո (գծային մեթոդով ամորտիզացիա) այն կազմել է 1,907,669 հազ. ՀՀ դրամ: Երաշխիքի գնահատման վերաբերյալ ղեկավարության հիմնական դատողությունները վերաբերում են երաշխավորված վարկի մարման առաջնահերթությանը, զեղչի տոկոսադրույքին (8.0% ԱՄՆ դոլարով արտահայտված վարկի համար) և երաշխավորված վարկի գործողության ժամանակահատվածում ազատ դրամական միջոցների հոսքերի գումարներին: Եթե կանխատեսվող ժամանակահատվածում (2022-2030թթ.) ազատ դրամական միջոցների հոսքերը 10% -ով ցածր լինեն, ապա տրամադրված երաշխիքի իրական արժեքը էապես չի փոխվի:

Երկարաձգման և դադարեցման օպցիոններ. Երկարաձգման և դադարեցման օպցիոնները ներառված են Ընկերության հիմնական միջոցների մի շարք վարձակալական պայմանագրերում: Դրանք օգտագործվում են Ընկերության գործունեության ընթացքում օգտագործվող ակտիվների կառավարման առումով գործառնական ճկունությունն առավելագույնի հասցնելու համար: Վարձակալության ժամկետը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք տնտեսական խթան են ստեղծում երկարաձգման օպցիոնի կիրառման կամ դադարեցման օպցիոնի չկիրառման համար: Երկարաձգման օպցիոնները (կամ դադարեցման օպցիոնին հաջորդող ժամանակահատվածները) ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, եթե կա ողջամիտ համոզվածություն, որ վարձակալության ժամկետը կերկարաձգվի (կամ չի դադարեցվի): Որոշակի վարձակալությունների համար ղեկավարությունը դիտարկել է Ընկերությանը հասանելի վաղաժամկետ դադարեցման օպցիոնները:

Սա առավելապես կիրառելի է այն դեպքերում, երբ վարձակալած շինություններում տեղակայված սարքավորումների օգտակար ծառայության ժամկետը պակաս է վարձակալության պայմանագրի տևողությունից: Վարձակալության պայմանագրերի վաղաժամկետ դադարեցումը Ընկերության համար չի հանգեցնում որևէ էական լրացուցիչ պարտավորությունների կամ ծախսերի:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները և դրանց վերանայումը: 2021 թվականի ընթացքում Ընկերությունը վերանայել է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների որոշ խմբերի օգտակար ծառայության ժամկետները: Մալուխային ցանցի օգտակար ծառայության ժամկետները ավելացվել են 6-ից մինչև 20 տարի, իսկ շարժական հեռահաղորդակցության սարքավորումների օգտակար ծառայության ժամկետները՝ 7 տարուց մինչև 9,5 տարի՝ դրա օգտագործման փաստացի օրինաչափությունը արտացոլելու համար, հիմք ընդունելով ղեկավարության կողմից կատարված հետահայաց վերլուծությունը: Շարժական հեռահաղորդակցության սարքավորումների հետ օգտագործվող ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետը նույնպես ավելացվել է 4-ից մինչև 9,5 տարի՝ համապատասխանեցնելով սարքավորումների օգտակար ծառայության ժամկետներին, որոնց դրանք վերաբերում են:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության վերանայումը հանգեցրել է մաշվածության և ամորտիզացիայի նվազմանը 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ համապատասխանաբար 1,255,368 և 1,345,416 հազ. ՀՀ դրամով:

Եթե գնահատված օգտակար ծառայության ժամկետները 10%-ով տարբերվեին ղեկավարության գնահատականներից, ապա 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար մաշվածության վրա ազդեցությունը կկազմեր 323,570 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 506,642 հազ. ՀՀ դրամ):

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ. ՖՀՄՍ 16-ի փոփոխություն (թողարկվել է 2020 թ. մայիսի 28-ին, ուժի մեջ է մտնում 2020թ. հունիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությամբ վարձակալներին տրվում է հայեցողական հնարավորություն՝ որոշելու, թե արդյոք COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնությունները հանդիսանում են վարձակալության պայմանների փոփոխություն: Վարձակալները կարող են իրենց հայեցողությամբ վարձավճարների գծով արտոնությունների չափումը իրականացնել այնպես, ինչպես եթե դրանք չհանդիսանային վարձակալության պայմանների փոփոխություն: Գործնական նպատակահարմարությամբ պայմանավորված այս լուծումը վերաբերում է միայն այն վարձավճարների գծով արտոնություններին, որոնք ուղղակիորեն հանդիսանում են COVID-19 համավարակի հետևանք, և միայն այն դեպքում, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները. վարձավճարներում փոփոխությունները հանգեցնում են վարձակալության դիմաց հատուցման այնպիսի վերանայման, որ այն ըստ էության հավասար լինի, կամ չգերազանցի վերանայումից անմիջապես առաջ վարձակալության դիմաց հատուցման գումարը. վարձավճարների ցանկացած նվազեցում ազդում է միայն 2021թ.հունիսի 30-ից ոչ ուշ վճարման ենթակա վճարումների վրա. և վարձակալության այլ պայմանների մեջ տեղի չեն ունենում էական փոփոխություններ:

Ընկերությունը վարձատուների հետ համաձայնություն է ձեռք բերել գույքի վարձակալության շրջանակներում վարձակալության վճարի տարբեր զիջումների վերաբերյալ, և չի կիրառում գործնական նպատակահարմարությունը:

Ստորև թվարկված վերանայված ստանդարտների կիրառումը Ընկերության համար պարտադիր է՝ սկսած 2021թ. հունվարի 1-ից, սակայն դրանք էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության վրա.

Բազային տոկոսադրույքի (IBOR) բարեփոխում. ՖՀՄՍ 9-ի, ՀՀՍՍ 39-ի, ՖՀՄՍ 7-ի, ՖՀՄՍ 4-ի և ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ - Փուլ 2 (թողարկված են 2020թ. օգոստոսի 27-ին և ուժի մեջ են մտնում 2021թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փուլ 2-ի ուղղումներն ուղղված են բարեփոխումների ներդրման արդյունքում ի հայտ եկող հարցերի լուծմանը, ներառյալ այն հարցերի, որոնք վերաբերում են մեկ բազային տոկոսադրույքի փոխարինմանը այլընտրանքայինով: Փոփոխությունները վերաբերում են հետևյալ ոլորտներին.

- *Բազային տոկոսադրույքի բարեփոխումից բխող դրամական միջոցների պայմանագրային հոսքերի որոշման հիմքում ընկած փոփոխությունների մշակում. («IBOR բարեփոխում»).* Ամորտիզացված արժեքով չափման ենթակա գործիքների համար, փոփոխություններով նախատեսված է, որ գործնական նպատակահարմարությունից ելնելով, կազմակերպությունները IBOR-ի բարեփոխման արդյունքում պայմանագրային դրամական հոսքերի որոշման հիմքի փոփոխությունը պետք է հաշվարկեն արդյունավետ տոկոսադրույքի արդիականացման միջոցով, օգտագործելով ՖՀՄՍ 9-ի B5.4.5 պարբերության ուղեցույցը: Հետևաբար, այդ ժամանակ շահույթ կամ վնաս չի ճանաչվել: Այս գործնական նպատակահարմարությունը կիրառելի է միայն այդպիսի փոփոխության նկատմամբ և այնքանով, որքանով այն անհրաժեշտ է որպես IBOR բարեփոխման ուղղակի հետևանք, և նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին: ՖՀՄՍ 9-ի ներդրման ժամանակավոր արտոնությունից օգտվող ապահովագրողները նույնպես պետք է առաջնորդվեն նույն գործնական նպատակահարմարությամբ: Նաև փոփոխվել է ՖՀՄՍ 16-ը, ըստ որի վարձակալներից պահանջվում է նույն գործնական նպատակահարմարությամբ առաջնորդվել վարձակալության պայմանագի այն փոփոխությունները հաշվառելիս, որոնք IBOR բարեփոխման արդյունքում հանգեցնում են ապագա վարձակալական վճարների որոշման հիմքի փոփոխության:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

- *Հեջավորման հարաբերություններում պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչների 1-ին փուլի գծով փոփոխությունների համար սահմանված արտոնությունների ավարտի ամսաթիվը.* փուլ 2-ի փոփոխությունների համաձայն կազմակերպություններից պահանջվում է հեռանկարում դադարեցնել 1-ին փուլի արտոնությունները պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչների նկատմամբ նշված երկու ամսաթվերից առավել վաղ ամսաթվի դրությամբ. պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչում փոփոխության կատարման ամսաթիվ, կամ հեջավորման հարաբերությունների դադարեցման ամսաթիվ: 1-ին փուլի փոփոխությունները չեն սահմանում ռիսկի բաղադրիչների ավարտի ամսաթիվը:
- *Հեջավորման հաշվառմանը ներկայացվող հատուկ պահանջների կիրառումից լրացուցիչ ժամանակավոր բացառություններ.* 2-րդ փուլի փոփոխությունները նախատեսում են հեջավորման հաշվառման՝ ՀՀՄՍ 39 և ՖՀՄՍ 9-ով սահմանված հատուկ պահանջների կիրառման լրացուցիչ ժամանակավոր արտոնություններ հեջավորման հարաբերությունների նկատմամբ, որոնք անմիջական ազդեցություն են կրել IBOR բարեփոխման արդյունքում:
- *IBOR բարեփոխմանը վերաբերող լրացուցիչ բացահայտումներ համաձայն ՖՀՄՍ 7-ի.* Փոփոխությունները սահմանում են հետևյալ տեղեկատվության բացահայտման պահանջներ. (I) ինչպես է կազմակերպությունը կառավարում այլընտրանքային բազային տոկոսադրույքների անցումը. առաջընթացը և անցումից բխող ռիսկերը. (ii) քանակական տեղեկատվություն անցմանը նախապատրաստվող ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ՝ տարանջատված ըստ նշանակալից բազային տոկոսադրույքների. (iii) IBOR բարեփոխման արդյունքում ռիսկերի կառավարման ռազմավարության ցանկացած փոփոխության նկարագրություն:

IBOR բարեփոխումների ազդեցությունը. Տարբեր միջբանկային առաջարկվող տոկոսադրույքների («IBORs») բարեփոխումը և փոխարինումը դարձել է կարգավորող մարմինների համար առաջնահերթություն: IBOR տոկոսադրույքների մեծ մասը կդադարի հրապարակվել մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը, մինչդեռ ԱՄՆ դոլարի LIBOR-ի որոշ տոկոսադրույքներ կդադարեն հրապարակվել մինչև 2023թ. հունիսի 30-ը:

Ընկերությունը չունի IBOR-ի վրա հիմնված վարկեր և չի ենթարկվում IBOR-ի վրա հիմնված ֆինանսական գործիքների ռիսկին:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2022թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

«Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍԽ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը:

Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

ՖՀՄՍ 17 «Ապահովագրական պայմանագրեր» (թողարկված է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2021թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետագայում փոփոխվել է 2023թ. հունվարի 1-ի՝ համաձայն ՖՀՄՍ 17-ի փոփոխությունների, ինչպես ներկայացված է ստորև): ՖՀՄՍ 17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը, ինչը դժվարացնում էր մնացած առումներով համանման ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների համեմատությունը և համադրությունը ներդրողների համար: ՖՀՄՍ 17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի, հաշվառումը իրականացնելու համար: Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա): Ապահովագրողները կարտացոլեն ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովում են ծածկույթ և ազատվում են ռիսկից: Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահութաբեր, կազմակերպությունը անմիջապես ճանաչում է վնաս:

Ընկերությունն ակնկալում է կիրառել ստանդարտը իր կողմից թողարկվող կատարողական երաշխիքների համար, և ներկայումս գնահատում է նոր ստանդարտի ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա: Դիտարկվում է նաև վարկերի և նմանատիպ գործիքների մեջ ներառված ապահովագրական պրոդուկտների վրա հնարավոր ազդեցությունը:

ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՀՄՍ 17-ի ներդրման գործընթացը դյուրացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով: Այս փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 17-ի ութ ոլորտներին և չեն փոխում ստանդարտի հիմնարար սկզբունքները: ՖՀՄՍ 17-ում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

- *Ուժի մեջ մտնելու ամսաթիվ.* ՖՀՄՍ 17-ի (փոփոխություններով) ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է երկու տարով: Ստանդարտը պետք է կիրառվի 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 4-ով սահմանված՝ ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակավոր արտոնությունը նույնպես հետաձգվել է մինչև 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաններ:
- *Ապահովագրության ձեռքբերման դրամական հոսքերի ակնկալվող փոխհատուցում.* կազմակերպություններից պահանջվում է իրենց ձեռքբերման ծախսերի մի մասը դասակարգել համապատասխան պայմանագրերին, որոնց համար ակնկալվում է երկարաձգում, և այդ ծախսերը ճանաչել որպես ակտիվներ, քանի դեռ կազմակերպությունը չի ճանաչել պայմանագրի երկարաձգման ժամկետը: Կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատել ակտիվի վերականգնման հավանականությունը և կոնկրետ ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
- *Ներդրումային ծառայություններին վերագրվող պայմանագրային ծառայությունների մարժա.* Ծածկույթի տարրերը անհրաժեշտ է որոշել՝ հաշվի առնելով հատույցների ծավալը, ինչպես նաև ապահովագրական ծածկույթի և ներդրումային ծառայությունների ակնկալվող ժամկետը՝ փոփոխական վճարներ նախատեսող պայմանագրերի և այլ՝ ընդհանուր մոդելի ներքո ներդրումային եկամուտների ստացում նախատեսող ծառայությունների պայմանագրերի համար: Ներդրումային գործունեության գծով ծախսերը պետք է ներառվեն որպես դրամական միջոցների հոսքեր ապահովագրության պայմանագրի շրջանակներում, երբ կազմակերպությունը նման գործողությունները ձեռնարկում է ապահովագրողի համար ապահովագրության ծածկույթից ստացվող օգուտները մեծացնելու նպատակով:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

- *Ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր. վնասների վերականգնում.* Երբ կազմակերպությունը վնաս է ճանաչում սկզբնական ճանաչման պահին հիմնական ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի գծով, կամ խմբում անբարենպաստ բազային ապահովագրության պայմանագրեր ներառելու արդյունքում, կազմակերպությունը պետք է ճշգրտի ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի պայմանագրային ծառայությունների գծով մարժան և ճանաչի այդ վերաապահովագրության պայմանագրերի գծով շահույթ: Վերաապահովագրության պայմանագրով վերականգնված վնասի չափը հաշվարկվում է՝ բազային ապահովագրության պայմանագրերով ճանաչված վնասը բազմապատկելով բազային ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսին, որը կազմակերպությունն ակնկալում է վերականգնել ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրով: Այս պահանջը կկիրառվի միայն այն դեպքում, եթե ձեռք բերված վերաապահովագրության պայմանագիրը ճանաչվի նախքան բազային ապահովագրության պայմանագրերի գծով վնասի ճանաչումը, կամ վերջինիս հետ միաժամանակ:
- *Այլ փոփոխություններ.* Այլ փոփոխություններով նախատեսվում են գործողության շրջանակից բացառություններ վարկային քարտերի որոշ պայմանագրերի (կամ նմանատիպ պայմանագրերի) և որոշ վարկային պայմանագրերի համար: Սահմանվում է նաև ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ապահովագրության պայմանագրերով նախատեսված ակտիվների և պարտավորությունների ներկայացում պորտֆելներում՝ խմբերի փոխարեն: Նախատեսվում է ռիսկերի մեղմացման տարբերակի կիրառելիություն այն դեպքում, երբ ֆինանսական ռիսկերի մեղմացման նպատակով գործադրվում են ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ: Նախատեսվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն՝ ՖՀՄՍ 17-ի կիրառմամբ նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվապահական գնահատումներում փոփոխությունների համար: Նախատեսվում է կոնկրետ ապահովագրողին վերագրվող շահութահարկի վճարների և մուտքերի ներառում պայմանագրերի կատարման դրամական հոսքերում, ըստ ապահովագրության պայմանագրի: Սահմանվում են անցումային շրջանի ընթացքում պահանջներից ընտրողական բացառություններ և այլ ոչ էական փոփոխություններ:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը - ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունվարի 23-ին և ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Կիրառման սահմանափակ շրջանակ ունեցող այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Մարումը հետաձգելու իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը ժամանակաշրջանի վերջում բավարարում է բոլոր կիրառելի պայմանները: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը. ուժի մեջ մտնելու ամսաթվի հետաձգում. ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հուլիսի 15-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները, որոնք վերաբերում են պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ և երկարաժամկետ դասակարգմանը, թողարկվել են 2020թ. հունվարին, և նախնական ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվել 2022թ. հունվարի 1-ը: Այնուամենայնիվ, COVID-19 համավարակով պայմանավորված, ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է մեկ տարով, որպեսզի կազմակերպությունները բավարար ժամանակ ունենան փոփոխությունների արդյունքում դասակարգումներում տեղի ունեցող փոփոխությունները ներդնելու համար:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

«Նախքան ակտիվի նպատակային օգտագործումը ստացված հասույթ, անբարենպաստ պայմանագրեր. պայմանագրի կատարման արժեքը», «Հղում հայեցակարգային հիմունքներին». ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 37-ի և ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ՝ սահմանափակ կիրառության շրջանակով, և ՖՀՄՍ 1-ին, ՖՀՄՍ 9-ին, ՖՀՄՍ 16-ին և ՀՀՄՍ 41-ին վերաբերող 2018-2020 թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ (թողարկված են 2020թ. մայիսի 14-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 16-ի փոփոխությամբ կազմակերպություններին արգելվում է հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, որն արտադրվել է կազմակերպության կողմից ակտիվն իր նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վիճակի բերելու ընթացքում: Նման պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, դրա արտադրության ծախսերի հետ միասին, այժմ ենթակա է ճանաչման շահույթում կամ վնասում:

Նման պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքի չափման համար Կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 2-ը: Սկզբնական արժեքը չի ներառի նման կերպ փորձարկվող ակտիվի մաշվածությունը, քանի որ այն դեռ պատրաստ չէ իր նպատակային օգտագործման համար: ՀՀՄՍ 16-ի փոփոխությունը նաև հստակեցնում է, որ կազմակերպությունը «ստուգում է ակտիվի պատշաճ գործունակությունը»՝ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական բնութագրերը գնահատելու միջոցով:

Այս չափման համար էական չեն այդպիսի ակտիվի ֆինանսական ցուցանիշները: Հետևաբար, ակտիվը կարող է շահագործվել ղեկավարության մտադրությունների համաձայն, և մաշվածությունը կարող է հաշվարկվել մինչև ղեկավարության կողմից ակնկալվող գործառնական շահագործման համար անհրաժեշտ վիճակի հասնելը:

ՀՀՄՍ 37-ի փոփոխությունը հստակեցնում է «պայմանագրի կատարման գծով ծախսեր» հասկացությունը: Փոփոխությամբ պարզաբանվում է, որ պայմանագրի կատարման գծով ուղղակի ծախսերը ներառում են այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի բաշխումը: Փոփոխությամբ նաև հստակեցվում է, որ նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին պահուստի ձևավորումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ պայմանագրի կատարման ընթացքում օգտագործված ակտիվների գծով, այլ ոչ թե պայմանագրի կատարման համար հատկացված ակտիվների գծով:

ՖՀՄՍ 3-ում կատարվել է լրացում՝ ներառելով հղում Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքներին, ինչը թույլ է տալիս սահմանել ակտիվի կամ պարտավորության հասկացությունը ձեռնարկատիրական գործունեության միավորման համատեքստում: Մինչ այս փոփոխության ընդունումը, ՖՀՄՍ 3-ը հղում էր կատարում 2001թ.-ի Ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային հիմունքներին: Բացի այդ, ՖՀՄՍ 3-ում ավելացվել է նոր բացառություն պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար: Այս բացառությամբ նախատեսվում է, որ ՖՀՄՍ 3-ը կիրառող կազմակերպությունը, որոշակի տիպի պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքների փոխարեն պետք է հղում կատարի ՀՀՄՍ 37-ին կամ ՖՀՄՄԽ (IFRIC) 21-ին:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Առանց այս նոր բացառության, կազմակերպությունը ստիպված կլիներ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ճանաչել որոշ պարտավորություններ, որոնք չէր ճանաչի համաձայն ՀՀՄՍ 37-ի: Հետևաբար, ձեռքբերումից անմիջապես հետո կազմակերպությունը ստիպված կլիներ ապաճանաչել այդպիսի պարտավորությունները և ճանաչել տնտեսական օգուտներ չմարմնավորող եկամուտ: Նաև պարզաբանվել է, որ ձեռք բերող կազմակերպությունը պարտավոր չէ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչել պայմանական ակտիվներ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 37-ում:

ՖՀՄՍ 9-ի փոփոխությունն անդրադառնում է այն հարցերին, թե որ տեսակի վճարումներն են ենթակա ներառման «10% փորձարկման» կազմում՝ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման նպատակով: Ծախսերը կամ վճարումները կարող են կատարված լինել հօգուտ երրորդ անձանց կամ վարկատուի: Այս փոփոխության համաձայն, երրորդ անձանց օգտին կատարված ծախսերը կամ վճարումները չեն ներառվի «10% փորձարկման» կազմում:

Փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 16-ի 13-րդ նկարագրական օրինակում. հանվել է վարձատուի կողմից վարձակալվող գույքի բարելավումներին վերագրվող վճարումների օրինակը: Այս փոփոխությունը կատարվել է՝ վարձակալվող գույքի բարելավումների հաշվարկման հնարավոր անորոշությունից խուսափելու համար:

ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս օգտվել բացառությունից այն դեպքում, եթե դուստր ձեռնարկությունը սկսում է ՖՀՄՍ-ի կիրառումն ավելի ուշ ամսաթվով, քան իր մայր կազմակերպությունը: Դուստր ձեռնարկությունը կարող է չափել իր ակտիվներն ու պարտավորությունները այն հաշվեկշռային արժեքով, որով դրանք պետք է ներառվեին մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցնելու ամսաթվից, եթե տեղի ունեցած չլինեին ճշգրտումներ համախմբման և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքների արտացոլման նպատակներով, որի ներքո մայր կազմակերպությունը ձեռք է բերել նշված դուստր ձեռնարկությունը:

ՖՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է տալիս սույն ՖՀՄՍ 1-ի բացառությունը կիրառած կազմակերպություններին նաև արտարժույթի փոխարկումից կուտակային տարբերությունները չափելիս օգտագործել մայր կազմակերպության կողմից ներկայացված թվային մեծությունները՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցման ամսաթվից: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությամբ վերոնշյալ բացառությունը տարածվում է արտարժույթի փոխարկումից առաջացած կուտակային տարբերությունների վրա, և նպատակ ունի նվազեցնել ՖՀՄՍ-ն առաջին անգամ կիրառող կազմակերպության ծախսերը: Այս փոփոխությունը կկիրառվի նաև դուստր և համատեղ ձեռնարկությունների վրա, որոնք կօգտվեն ՖՀՄՍ 1-ով սահմանված նույն բացառությունից:

Վերացվել է պահանջը, ըստ որի կազմակերպությունները ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքը չափելիս պարտավոր էին հարկային հաշվառման տեսանկյունից հաշվի չառնել դրամական հոսքերը: Այս փոփոխության նպատակն է՝ ապահովել համապատասխանություն հարկումից հետո զեղչված դրամական հոսքերի ստանդարտի պահանջին: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն: Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության սահմանումները: Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը հավանական է, որ կհամարվի էական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները չեն կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ էական տեղեկատվությունը: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Այնուամենայնիվ, այդպիսի տեղեկատվության բացահայտման դեպքում, այն չպետք է դժվարեցնի հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվության ընկալումը: Այս փոփոխությանն օժանդակելու համար փոփոխություններ են կատարվել նաև ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2-ում՝ «Էականության վերաբերյալ դատողություններ», որը ուղեցույց է տրամադրում հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով բացահայտումների նկատմամբ էականության հայեցակարգի կիրառման վերաբերյալ: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ. ՖՀՄՍ 16-ի փոփոխություն (թողարկվել է 2021թ. մարտի 31-ին և ուժի մեջ է 2021թ. ապրիլի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2020թ. մայիսին կատարվեց ՖՀՄՍ 16-ի փոփոխությունը, որը վարձակալներին տրամադրում էր հայեցողական հնարավորություն՝ գնահատելու, թե արդյոք COVID-19-ի հետ կապված վարձավճարների գծով արտոնությունները, որոնք 2021թ. հունիսի 30-ի դրությամբ կամ մինչ այդ ամսաթիվը հանգեցնում են վարձակալության վճարների նվազեցման, հանդիսանում են վարձակալության պայմանների փոփոխություն: 2021թ. մարտի 31-ի փոփոխությամբ, այդ արտոնությունը երկարաձգվել է 2021թ. հունիսի 30-ից մինչև 2022թ. հունիսի 30-ը: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները պարզաբանում են հետաձգված հարկի հաշվառման կարգը այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվը շահագործումից հանելու դեպքում պարտավորությունների հաշվեգրումը: Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման դեպքում հետաձգված հարկի ճանաչումից: Նախկինում կար այս բացառության կիրառման անորոշություն որոշակի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվների շահագործումից հանելը, որոնց համար ճանաչվում էր ինչպես ակտիվ, այնպես էլ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ այս բացառությունը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է նման գործարքների գծով ճանաչել հետաձգված հարկ: Համաձայն այս փոփոխությունների, կազմակերպությունները պարտավոր են հետաձգված հարկ ճանաչել այն գործարքների համար, որոնց գծով սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում են հավասար մեծությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի շարժերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Շենքեր, հող և կառուցվածքներ	Փոխանցող հարմարանքներ	Սարքավո-րումներ	Տրանս-պորտային միջոցներ	Հարմա-րանքներ և կցամասեր	Այլ	Անավարտ շինարարու-թյուն	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	**17,900,900**	**41,487,258**	**82,100,476**	**1,685,829**	**2,459,918**	**20,423**	**1,980,579**	**147,635,383**
Ավելացումներ	-	-	990,868	2,820	9,130	-	3,248,652	4,251,470
Օտարումներ	(18,337)	(756,593)	(2,598,981)	(2,880)	(109,707)	(10)	(204,213)	(3,690,721)
Վերադասակարգումներ	63,660	1,022,696	1,708,003	-	20,255	-	(2,814,614)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**17,946,223**	**41,753,361**	**82,200,366**	**1,685,769**	**2,379,596**	**20,413**	**2,210,404**	**148,196,132**
Ավելացումներ	336,052	33,736	959,309	154,494	84,327	-	4,150,389	5,718,307
Օտարումներ	(592,001)	(253,299)	(1,067,120)	(83,567)	(12,816)	-	(592,670)	(2,601,473)
Վերադասակարգումներ	322,144	956,925	1,013,520	3,092	8,494	-	(2,304,175)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**18,012,418**	**42,490,723**	**83,106,075**	**1,759,788**	**2,459,601**	**20,413**	**3,463,948**	**151,312,966**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում								
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	**(16,544,321)**	**(37,921,039)**	**(73,699,027)**	**(1,505,632)**	**(1,959,490)**	**(20,412)**	**(402,518)**	**(132,052,439)**
Մաշվածություն տարվա համար	(306,514)	(1,215,280)	(3,374,436)	(50,271)	(119,906)	(12)	-	(5,066,419)
Օտարումներ	20,242	703,599	1,931,801	2,880	100,365	10	105,461	2,864,358
Արժեզրկման վերականգնում	574,154	1,603,508	1,572,008	21,814	197,814	1	297,057	4,266,356
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**(16,256,439)**	**(36,829,212)**	**(73,569,654)**	**(1,531,209)**	**(1,781,217)**	**(20,413)**	**-**	**(129,988,144)**
Մաշվածություն տարվա համար	(516,310)	(1,699,467)	(2,626,488)	(71,204)	(153,621)	-	-	(5,067,090)
Օտարումներ	587,919	246,275	958,341	81,817	11,621	-	-	1,885,973
Վերադասակարգումներ	18	-	176	-	(194)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**(16,184,812)**	**(38,282,404)**	**(75,237,625)**	**(1,520,596)**	**(1,923,411)**	**(20,413)**	**-**	**(133,169,261)**
Հաշվեկշռային արժեք								
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**1,356,579**	**3,566,219**	**8,401,449**	**180,197**	**500,428**	**11**	**1,578,061**	**15,582,944**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,689,784**	**4,924,149**	**8,630,712**	**154,560**	**598,379**	**-**	**2,210,404**	**18,207,988**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**1,827,606**	**4,208,319**	**7,868,450**	**239,192**	**536,190**	**-**	**3,463,948**	**18,143,705**

7 Հիմնական միջոցներ (շարունակություն)

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 5,067,090 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 5,066,419 հազ. ՀՀ դրամ) ընդհանուր մաշվածության ծախսից 4,887,261 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 4,945,729 հազ. ՀՀ դրամ) ներառված է տրամադրված ծառայությունների ինքնարժեքի մեջ (տես Ծանոթագրություն 19), 179,823 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 120,605 հազ. ՀՀ դրամ)՝ ընդհանուր և վարչական ծախսերի մեջ (տես Ծանոթագրություն 21), և 6 հազ. ՀՀ դրամ (2002թ.՝ 85 հազ. ՀՀ դրամ)՝ այլ գործառնական ծախսերի մեջ (տես Ծանոթագրություն 23):

Անավարտ շինարարությունը բաղկացած է հեռահաղորդակցության և այլ սարքավորումների գծով կապիտալ ծախսումներից:

Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 944,774 հազ. ՀՀ դրամ (2020 թ.՝ 183,222 հազ. ՀՀ դրամ): Մնացորդի աճը պայմանավորված է SS սարքավորումների ձեռքբերման դիմաց կատարված կանխավճարներով՝ 821,073 հազ. ՀՀ դրամ գումարով:

8 Ոչ նյութական ակտիվներ

Հազ. ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	**11,212,029**	**15,893,812**	**819,324**	**27,925,165**
Ավելացումներ	405,069	1,472,857	-	1,877,926
Օտարումներ	(99,221)	(312,877)	-	(412,098)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**11,517,877**	**17,053,792**	**819,324**	**29,390,993**
Ավելացումներ	151,117	506,176	386,760	1,044,053
Օտարումներ	(231,758)	(147,535)	(217,795)	(597,088)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**11,437,236**	**17,412,433**	**988,289**	**29,837,958**
Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում				
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	**(10,674,741)**	**(13,507,374)**	**(497,297)**	**(24,679,412)**
Տարվա ամորտիզացիոն ծախս	(265,155)	(1,403,302)	(36,954)	(1,705,411)
Օտարումներ	99,549	311,763	-	411,312
Արժեզրկման վերականգնում	36,658	534,616	6,272	577,546
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**(10,803,689)**	**(14,064,297)**	**(527,979)**	**(25,395,965)**
Տարվա ամորտիզացիոն ծախս	(267,760)	(392,760)	(120,483)	(781,003)
Օտարումներ	198,346	146,099	216,854	561,299
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**(10,873,103)**	**(14,310,958)**	**(431,608)**	**(25,615,669)**
Հաշվեկշռային արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**537,288**	**2,386,438**	**322,027**	**3,245,753**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**714,188**	**2,989,495**	**291,345**	**3,995,028**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**564,133**	**3,101,475**	**556,681**	**4,222,289**

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 781,003 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 1,705,411 հազ. ՀՀ դրամ) ընդհանուր ամորտիզացիոն ծախսից 781,003 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 1,705,411 հազ. ՀՀ դրամ) ներառված է տրամադրված ծառայությունների ինքնարժեքի մեջ (տես Ծանոթագրություն 19):

Այլ ոչ նյութական ակտիվների աճը կապված է IRU պայմանագրով 2021թ. կատարված 386,760 հազ. ՀՀ դրամի վճարման հետ:

9 Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր**
Սկզբնական արժեք	
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	**5,849,485**
Ավելացումներ	142,027
Օտարումներ	(41,541)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**5,949,971**
Ավելացումներ	32,321
Օտարումներ	(22,452)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**5,959,840**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում	
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.	**(4,748,089)**
Մաշվածություն տարվա համար	(168,483)
Օտարումներ	39,869
Արժեզրկման վերականգնում	435,301
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**(4,441,402)**
Մաշվածություն տարվա համար	(236,477)
Օտարումներ	22,324
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**(4,655,555)**
Հաշվեկշռային արժեք	
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**1,101,396**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,508,569**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**1,304,285**

236,477 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 168,483 հազ. ՀՀ դրամ) գումարի չափով մաշվածության ամբողջ ծախսը ներառված է վաճառքի ինքնարժեքում (տես Ծանոթագրություն 19):

10 Տրամադրված փոխառություններ

Ընկերության փոխառությունները արտահայտված են հետևյալ արտարժույթով.

Հազ. ՀՀ դրամ		**2021թ.**	**2020թ.**
Տրամադրված փոխառություններ՝ արտահայտված	- ԱՄՆ դոլարով	12,139,350	7,147,550
	- ՀՀ դրամով	343,124	218,515
Ընդամենը տրամադրված փոխառություններ՝ նախքան պարտքային կորուստների գծով պահուստ		**12,482,474**	**7,366,065**
Նվազեցում պարտքային կորուստների գծով պահուստի չափով		(1,527,112)	(1,141,436)
Ընդամենը տրամադրված փոխառություններ		**10,955,362**	**6,224,629**

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր փոխառությունները տրամադրվել են անմիջական մայր ընկերությանը՝ մի քանի փոխառությունների պայմանագրերի ներքո: Տրամադրված փոխառությունների պայմանագրերի մարման ժամկետները տարբեր են՝ կախված պայմանագրից՝ 2023թ. դեկտեմբերից մինչև 2029թ. դեկտեմբեր: Մի քանի փոխառությունների պայմանագրեր անտոկոս են. հետևաբար փոխառությունների անվանական արժեքները զեղչվել են մարման ամսաթվից 8%՝ ԱՄՆ դոլարով փոխառությունների և 11%՝ ՀՀ դրամով փոխառությունների համար: Իրական արժեքի ճշգրտման ընդհանուր ազդեցությունը ճանաչման պահին կազմել է 2,292,170 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 1,141,436 հազ. ՀՀ դրամ): Վերոնշյալ աղյուսակում արտացոլված են զեղչված գումարները:

10 Տրամադրված փոխառություններ (շարունակություն)

2020թ. տրամադրված փոխառություններից մեկը տրամադրվել է ոչ դրամական հիմունքներով. Անմիջական մայր ընկերության հետ կնքված փոխառության պայմանագրի հիման վրա տրամադրված փոխառությունը ճանաչվել է 3,290,311 հազ. ՀՀ դրամ՝ վերջինս համաձայնվել է մինչև 2026 թվականը ընկերությանը մարել 10,000 հազ. ԱՄՆ դոլար: Ընկերությունը ճանաչել է փոխառության զեղչված գումարը:

Տրամադրված փոխառությունների համար ակնկալվող պարտքային կորստի պահուստը կազմում է 1,527,112 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 1,141,436 հազ. ՀՀ դրամ), և գնահատվել է փոխառությունների հաշվեկշռային արժեքի 12. 24% (2020թ.՝ 16,15%) չափով՝ հիմնվելով զեղչված դրամական հոսքերի միջոցով գնահատման մեթոդի վրա: Այս գնահատման վերաբերյալ կարևոր դատողությունները բերված են Ծանոթագրություն 4-ում: Տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքը, ակնկալվող պարտքային կորստի պահուստի հետ միասին էականորեն չեն տարբերվում դրանց իրական արժեքից:

11 Պաշարներ

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Նյութեր և պահեստամասեր	727,618	661,463
Վաճառքի ենթակա ապրանքներ	272,589	228,004
Վառելիք	60,237	47,754
Քարտեր	24,073	29,005
Այլ պաշարներ	77,687	31,384
Պաշարների դուրսգրման պահուստ	(730,711)	(773,779)
Ընդամենը պաշարներ	**431,493**	**223,831**

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Առևտրային դեբիտորական պարտքեր	6,266,341	4,698,534
Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր	438,998	374,596
Նվազեցում պարտքային կորուստների գծով պահուստի չափով	(2,163,572)	(2,445,481)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում	**4,541,767**	**2,627,649**
Այլ դեբիտորական պարտքեր	65,443	166,702
Կանխավճարներ	1,128,971	687,402
Նվազեցում պարտքային կորուստների գծով պահուստի չափով	(25,690)	(3,999)
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**5,710,491**	**3,477,754**

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար Ընկերությունն օգտագործում է ՖՀՄՍ 9-ով նախատեսված պարզեցված մոտեցումը, համաձայն որի օգտագործվում է բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող կորուստների համար գնահատված պահուստը ամբողջ ժամկետի համար:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար առևտրային և այլ դեբիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով պարտքային ռիսկի ընդհանուր բնութագրերից և ժամկետանց օրերի քանակից:

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի շարժը ըստ ակնկալվող պարտքային կորստի պարզեցված մոդելի, տարեկան ժամանակահատվածի սկզբից մինչև վերջ ընկած ժամանակահատվածի համար.

	2021թ.		2020թ.	
Հազ. ՀՀ դրամ	**Առևտրային դեբի-տորական պարտքեր**	**Այլ ֆինան-սական դեբիտո-րական պարտքեր**	**Առևտրային դեբի-տորական պարտքեր**	**Այլ ֆինան-սական դեբիտո-րական պարտքեր**
Պարտքային կորստի պահուստ առ 1 հունվարի	**2,129,710**	**315,771**	**2,149,683**	**254,121**
Նոր առաջացած	507,559	-	275,803	61,650
Հանած ապաճանաչումը և դրամային հավաքագրումը	(557,935)	(231,533)	(295,776)	-
Պարտքային կորստի պահուստ առ 31 դեկտեմբերի	**2,079,334**	**84,238**	**2,129,710**	**315,771**

Առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի չափը որոշվում է ըստ ստորև բերված աղյուսակում ներկայացված պահուստի ժամկետայնության: Պահուստի ժամկետայնությունը հիմնված է ակտիվի մարման ժամկետի ամսաթվից հետո ժամկետանց օրերի վրա՝ ճշգրտված ՀՆԱ-ի աճով և գործազրկության մակարդակի փոփոխություններով:

Հազ. ՀՀ դրամ	**Ընթացիկ**	**1-ից 30 օր**	**31-ից 60 օր**	**61-ից 90 օր**	**91-ից 120 օր**	**121 օրից ավելի**	**Ընդամենը**
Համախառն առևտրային դեբիտորական պարտքեր	3,612,786	434,576	301,742	229,154	239,883	1,448,200	6,266,341
Ակնկալվող կորստի չափը, %	5%	17%	44%	45%	56%	100%	
Ակնկալվող պարտքային կորուստներ	(189,069)	(72,564)	(131,424)	(103,842)	(134,235)	(1,448,200)	(2,079,334)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	**3,423,717**	**362,012**	**170,318**	**125,312**	**105,648**	**-**	**4,187,007**

2021թ. Ընկերությունը հաճախորդներից մեկին մատուցել է ինտերնետ տրաֆիկի ծառայություններ 1,685,864 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով (գումարը ենթակա է վճարման ԱՄՆ դոլարով և եվրոյով): 2021թ. դեկտեմբերին Ընկերությունը և հաճախորդը պայմանավորվել են, որ 2021թ. հասույթի ամբողջ գումարի վճարման պայմանները տեղի ունենան 2022թ. ընթացքում: Դրա պատճառով դեբիտորական պարտքերը զեղչվել են: Զեղչման սկզբնական ազդեցությունը կազմել է 196,282 հազ. ՀՀ դրամ, 2021 թվականի տոկոսային եկամուտը՝ 15,617 հազ. ՀՀ դրամ (Ծանոթագրություն 24): Ընկերությունը գնահատել է այս դեբիտորական պարտքերի գծով ԱՊԿ-ն՝ օգտագործելով ՖՀՄՍ 9-ով պահանջվող սցենարային մոտեցումը: Զեղչված դեբիտորական պարտքերի և ԱՊԿ-ի գումարները ներառված են վերը նշված աղյուսակում Առևտրային դեբիտորական պարտքերի ընթացիկ մասում:

Այս դեբիտորական պարտքերի հավաքագրման մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 34-ում:

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահուստավորման մատրիցը ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**Ընթացիկ**	**1-ից 30 օր**	**31-ից 60 օր**	**61-ից 90 օր**	**91-ից 120 օր**	**121 օրից ավելի**	**Ընդամենը**
Համախառն առևտրային դեբիտորական պարտքեր	2,131,476	422,090	136,721	78,831	57,245	1,872,171	4,698,534
Ակնկալվող կորստի չափը, %	2%	12%	42%	68%	85%	100%	
Ակնկալվող պարտքային կորուստներ	(47,633)	(50,286)	(57,566)	(53,405)	(48,649)	(1,872,171)	(2,129,710)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	**2,083,843**	**371,804**	**79,155**	**25,426**	**8,596**	**-**	**2,568,824**

2,599,252 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 1,200,440 հազ. ՀՀ դրամ) առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերն արտահայտված են արտարժույթով, մասնավորապես 78%-ը ԱՄՆ դոլարով (2020թ.՝ 74%), 15%-ը հատուկ փոխառության իրավունքով («ՀՓԻ») (2020թ.՝ 24%) և 5%-ը Եվրոյով (2020թ.՝ 2%):

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Ցպահանջ բանկային հաշիվներ	1,364,480	123,181
Դրամական միջոցներ ճանապարհին	74,583	75,455
Առձեռն դրամական միջոցներ	27,997	16,890
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**1,467,060**	**215,526**

Ցպահանջ բանկային հաշիվների մնացորդները տեղաբաշխված են Հայաստանի լավագույն տասնյակում ներառված բանկերում և դասակարգված են որպես ընթացիկ և ոչ արժեզրկված (2020թ.՝ Հայաստանի լավագույն տասնյակում ներառված բանկերում և դասակարգված են որպես ընթացիկ և ոչ արժեզրկված): Տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 28-ում:

Ընկերությունը անմիջական մայր կազմակերպությանը տրված վարկերը դասակարգում է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում որպես ֆինանսական դրամական միջոցների հոսքեր՝ 2020թ. մայր ընկերության կողմից ներգրավված ֆինանսավորման և այդ ֆինանսավորումը սպասարկելու համար մայր ընկերությանը վարկեր տրամադրելու արդյունքում:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է բանկերի մնացորդների վարկային որակը՝ ըստ վարկային ռիսկի դասակարգման վարկանիշների, 2021թ. դեկտեմբերի 31-ին և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2021թ.**	**31 դեկտեմբերի 2020թ.**
S&P գլոբալ վարկանիշ B+	1,337,384	34,815
Չվարկանշված	27,096	88,366
Ընդամենը բանկային մնացորդներ	**1,364,480**	**123,181**

14 Կանոնադրական կապիտալ

Հազ. ՀՀ դրամ	Թողարկված բաժնետոմսերի քանակ	Սովորական բաժնետոմսեր	Ընդամենը
Առ 1 հունվարի 2020թ.	**188,377,090**	**18,837,709**	**18,837,709**
Առ 31 դեկտեմբերի 2020թ	**188,377,090**	**18,837,709**	**18,837,709**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**188,377,090**	**18,837,709**	**18,837,709**

Տարվա ընթացքում հայտարարված և վճարված շահաբաժինները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	2021թ. Սովորական բաժնետոմսեր	2020թ. Սովորական բաժնետոմսեր
Վճարման ենթակա շահաբաժիններ առ 1 հունվարի	**-**	**-**
Տարվա ընթացքում հայտարարված շահաբաժիններ	-	18,810,000
Տարվա ընթացքում վճարված շահաբաժիններ	-	(18,810,000)
Վճարման ենթակա շահաբաժիններ առ 31 դեկտեմբերի	**-**	**-**
Տարվա ընթացքում հայտարարված շահաբաժին 1 բաժնետոմսի գծով	**-**	**0.100**

Սովորական բաժնետոմսերի ընդհանուր հայտարարված քանակը կազմում է 188,377 հազ. բաժնետոմս (2020թ.՝ 188,377 հազ. բաժնետոմս), յուրաքանչյուր բաժնետոմսը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով (2020թ.՝ յուրաքանչյուր բաժնետոմսը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով): Բոլոր թողարկված սովորական բաժնետոմսերն ամբողջովին վճարված են: Յուրաքանչյուր սովորական բաժնետոմս ունի մեկ ձայնի իրավունք:

15 Ակտիվների ապագործարկման պահուստ

Ընկերությունը ունի իրավական պարտավորություն ապամոնտաժել սարքավորումները և վերականգնել վարձակալած տարածքները դրանց՝ 20 տարի հետո ակնկալվող փակումից: Տարվա ընթացքում ակտիվների ապագործարկման պահուստի շարժը հետևյալն է:

Հազ. ՀՀ դրամ	Ակտիվների ապագործարկում և վարձակալված տեղանքի վերականգնում
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2020թ.	**1,153,369**
Ներկա արժեքի զեղչման ծախս	128,792
Գնահատումների փոփոխություն՝ ներառված հիմնական միջոցներում	10,794
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,292,925**
Ներկա արժեքի զեղչման ծախս	143,601
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**1,436,526**

16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Պարտավորություններ ձեռք բերված ծառայությունների գծով	3,713,031	3,442,169
Պարտավորություններ ձեռք բերված սարքավորումների գծով	1,384,068	1,161,827
Պարտավորություններ շինարարական աշխատանքների գծով	584,130	406,603
Պարտավորություններ ռոումինգի ծառայությունների գծով	516,023	399,679
Պարտավորություններ ձեռք բերված պաշարների գծով	357,128	246,998
Պարտավորություններ ձեռք բերված ոչ նյութական ակտիվների գծով	193,555	513,059
Հաշվեգրված մասնագիտական ծառայություններ	31,200	21,200
Այլ պարտավորություններ	858	975
Վարձակալության գծով պարտավորություններ	-	116,532
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**6,779,993**	**6,309,042**

31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ ստացված կանխավճարները կազմել են 2,857,931 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 671,894 հազ. ՀՀ դրամ): Այդ կանխավճարների մի մասը ստացվել է փոխկապակցված կողմերից (Ծանոթագրություն 33):

3,447,322 հազ. ՀՀ դրամի (2019թ.՝ 3,246,933 հազ. ՀՀ դրամ) առևտրային և այլ կրեդիտորական պարտքերն արտահայտված են արտարժույթով, մասնավորապես 87%-ը ԱՄՆ դոլարով (2020թ.՝ 87%), 7%-ը Հատուկ փոխառության իրավունքով (2020թ.՝ 6%), 18%-ը եվրոյով (2020թ.՝ 6%) և 1%-ը ՌԴ ռուբլով (2020թ.՝ 2%):

17 Պարտավորությունների և վճարների պահուստ

Պարտավորությունների և վճարների պահուստի շարժը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Իրավական հայցեր**	**Հարկային ռիսկեր**	**Ընդամենը**
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2020թ.	**54,825**	**852,496**	**907,321**
Պահուստի հաշվին վճարումներ	(5,199)	-	(5,199)
Ապաճանաչում	(48,824)	(852,496)	(901,320)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2020թ	**802**	**-**	**802**
Շահույթին կամ վնասին վերագրված ավելացումներ	65,920	121,334	187,254
Պահուստի հաշվին վճարումներ	(859)	-	(859)
Ապաճանաչում	-	-	-
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2021թ	**65,863**	**121,334**	**187,197**

Բոլոր վերը նշված պահուստները դասակարգվել են որպես ընթացիկ պարտավորություններ, քանի որ Ընկերությունը չունի անվերապահ իրավունք հետաձգել դրանց վճարումը մեկ տարուց ավելի ուշ:

Իրավական հայցեր: Ղեկավարության կարծիքով, որը հիմնված է համապատասխան իրավաբանական խորհրդատվության վրա՝ իրավական հայցերի քննման արդյունքը չի հանգեցնի հաշվեգրված պահուստի գումարները զգալիորեն գերազանցող կորուստների:

Հարկային ռիսկեր: 2021թ. հարկային ռիսկերի գծով պահուստի առաջացումը կապված է հարկային հաշվետվությունների ճշգրտումների հետ:

18 Հասույթ

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Շարժական կապ-տվյալների փոխանակում	7,243,249	6,229,895
Շարժական կապ-ձայնային	4,265,245	4,974,505
Շարժական կապ-փոխկապակցում	2,181,017	2,103,498
Շարժական կապ-ռոումինգ	799,185	313,416
Շարժական կապ-այլ	1,038,150	1,190,173
Շարժական կապի ծառայությունների մատուցումից հասույթ	**15,526,846**	**14,811,487**
Ֆիքսված կապ-ձայնային	4,535,851	5,155,973
Ֆիքսված կապ-ինտերնետ	4,862,717	4,828,506
Ֆիքսված կապ-տարանցիկ	2,732,522	985,260
Ֆիքսված կապ-փոխկապակցում	199,799	280,641
Ֆիքսված կապ-այլ	1,366,704	1,019,375
Ֆիքսված կապի ծառայությունների մատուցումից հասույթ	**13,697,593**	**12,269,755**
Սարքավորումներ-շարժական կապ	2,288,897	2,220,578
Սարքավորումներ-ֆիքսված կապ	61,072	124,260
Սարքավորումների իրացումից հասույթ	**2,349,969**	**2,344,838**
Այլ հասույթ	136,106	115,017
Ընդամենը հասույթ	**31,710,514**	**29,541,097**

19 Վաճառքի ինքնարժեք

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Ծառայությունների ինքնարժեք		
Մաշվածություն և ամորտիզացիա	7,100,720	8,058,727
Անձնակազմի ծախսեր	3,160,653	3,019,235
Բջջային կապի փոխկապակցման ծախս	1,954,405	1,647,703
Ռադիո ալիքների օգտագործման թույլտվություն	1,793,975	1,793,975
Էլեկտրաէներգիա	1,364,620	1,264,557
Ինտերնետի և այլ կապուղիներ	1,280,761	1,371,095
Սարքավորումների և կապուղիների սպասարկման ծախսեր	1,021,129	854,074
Ֆիքսված կապի փոխկապակցման ծախս	745,669	759,150
Ռոումինգի գծով ստացված ծառայություններ	377,253	281,455
Վառելիք	135,243	104,137
Ծառայությունների ԱԱՀ	47,865	5,954
SIM քարտեր	30,659	26,221
Գործուղումներ և վերապատրաստում	17,050	17,140
Փոխադրամիջոցների վարձակալում	16,450	-
Բջջային հեռախոսակապի այլ ծառայություններ	144,933	231,382
Ֆիքսված հեռախոսակապի այլ ծառայություններ	199,573	223,108
Հնացվածության պահուստի (վերականգնում)/ճանաչում	(50,123)	374,758
Ոչ ընթացիկ ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկման վերականգնում	-	(5,061,429)
Ընդամենը ծառայությունների ինքնարժեք	**19,340,835**	**14,971,242**
Իրացված սարքավորումների ինքնարժեք		
Սարքավորումներ-բջջային կապ	2,234,874	2,217,649
Սարքավորումներ-ֆիքսված հեռախոսակապ	11,422	2,503
Ընդամենը սարքավորումների ինքնարժեք	**2,246,296**	**2,220,152**
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	**21,587,131**	**17,191,394**

20 Այլ գործառնական եկամուտ

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	1,320,065	191,310
Տրամադրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխություն	297,183	-
Փոխարժեքային տարբերություններից օգուտ՝ հանած վնաս, գործառնական գործունեությունից	165,363	-
Վարձակալությունից եկամուտ	72,201	45,633
Ստացված կանխավճարների և կրեդիտորական պարտքերի դուրսգրումից եկամուտ	35,861	137,796
Տուգանքներից եկամուտ	234	27,712
Եկամուտ խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններից	-	76,817
Եկամուտ պահուստների ապաճանաչումից	-	849,751
Այլ	62,851	10,897
Ընդամենը այլ գործառնական եկամուտ	**1,953,758**	**1,339,946**

21 Ընդհանուր և վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Անձնակազմի ծախսեր	2,047,815	2,954,874
Մասնագիտական ծառայություններ	661,712	2,393,528
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	239,606	325,002
Մաշվածություն և ամորտիզացիա	179,823	120,605
Սպասարկման և նորոգման ծախսեր	88,054	43,601
Չփոխհատուցվող հարկեր	72,983	87,612
Անվտանգության ծախսեր	53,677	221,687
Ներկայացուցչական ծախսեր	44,428	8,865
Գործուղման և վերապատրաստման ծախսեր	26,679	29,692
Ապահովագրություն	24,189	50,740
Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում/(արժեզրկման հակադարձում)	164	(217,774)
Այլ	46,999	17,538
Ընդամենը ընդհանուր և վարչական ծախսեր	**3,486,129**	**6,035,970**

Անձնակազմի ծախսերը ներառում են 39,934 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 249,629 հազ. ՀՀ դրամ) արձակման նպաստներ՝ կապված ղեկավար պաշտոններից անձնակազմի ազատման հետ:

Արձակման նպաստների գումարները նաև ներառված են Վաճառքի ինքնարժեքի կազմում (տես Ծանոթագրություն 19)՝ 73,711 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 71,256 հազ. ՀՀ դրամ), և Իրացման ծախսերի կազմում (տես Ծանոթագրություն 22)՝ 10,117 հազ. ՀՀ դրամ (2010թ.՝ 38,724 հազ. ՀՀ դրամ), համապատասխանաբար:

22 Իրացման ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Անձնակազմի ծախսեր	2,064,904	2,126,093
Գովազդ և մարքեթինգ	431,542	573,540
Գումարների հավաքագրում	308,611	341,677
Լիցքավորման քարտերի արժեք	21,919	92,506
Այլ ծախսեր	232,949	159,931
Ընդամենը իրացման ծախսեր	**3,059,925**	**3,293,747**

23 Այլ գործառնական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով ակնկալվող պարտքային կորուստներ	241,419	258,803
Հարկային տույժերի գծով պահուստ	121,344	-
Իրավական հայցերի գծով ծախսեր	65,920	-
Պաշարների իրացումից վնասներ	49,321	67,767
Այլ չփոխհատուցվող հարկեր	44,588	92,587
Բարեգործություն և հովանավորություն	32,600	149,983
Չհաշվանցվող ԱԱՀ	29,335	54,805
Անձնակազմի ծախսեր	5,000	5,000
Պաշարների արժեզրկում	76	1,940
Մաշվածություն և ամորտիզացիա	6	85
Հիմնական միջոցների դուրսգրումից վնասներ	-	250,268
Այլ ծախսեր	157,749	128,068
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	**747,358**	**1,009,306**

24 Ֆինանսական եկամուտ/ծախսեր

Ֆինանսական եկամուտ

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Ֆինանսական երաշխիքների ամորտիզացիա	760,845	-
Տոկոսային եկամուտ տրված փոխառություններից	744,769	241,142
Նախկինում ճանաչված զեղչի վերականգնում	15,617	-
Տոկոսային եկամուտ դրամական միջոցներից և դրանց համարժեքներից	3,075	128,192
Ընդամենը՝ շահույթում կամ վնասում ճանաչված ֆինանսական եկամուտ	**1,524,306**	**369,334**

24 Ֆինանսական եկամուտ/ծախսեր (շարունակություն)

Ֆինանսական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Տոկոսային ծախս ստացված փոխառությունների գծով	529,431	84,067
Տոկոսային ծախս վարձակալության գծով	469,153	500,685
Ֆինանսական դեբիտորական պարտքերի զեղչում	196,282	-
Տոկոսային ծախս ԱԱՊ գծով	143,601	128,792
Ընդամենը՝ ֆինանսական ծախսեր	**1,338,467**	**713,544**
Հանած՝ կապիտալացվող ֆինանսական ծախսեր	(117,493)	-
Ընդամենը՝ շահույթում կամ վնասում ճանաչված ֆինանսական եկամուտ	**1,220,974**	**713,544**

Ընկերությունը կապիտալացրել է փոխառության ծախսումները, որոնք առաջացել են հիմնական միջոցների կառուցմանը և ձեռքբերմանն անմիջականորեն վերագրելի ֆինանսավորման գծով: Կապիտալիզացիայի դրույքաչափը կազմել է 8,63% (2020թ.՝ զրո):

25 Շահութահարկ

(ա) Շահութահարկի գծով ծախսի բաղադրիչները

Շահույթում կամ վնասում ճանաչված շահութահարկի գծով ծախսը ներառում է հետևյալ բաղադրիչները.

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Հետաձգված հարկ	993,105	1,209,746
Ընթացիկ հարկ	-	-
Տարվա շահութահարկի գծով ծախս	**993,105**	**1,209,746**

(բ) Կիրառելի հարկադրույքով բազմապատկած շահույթի կամ վնասի և շահութահարկի գծով ծախսի համադրում

Ընկերության 2021թ. և 2020թ. նկատմամբ կիրառելի շահութահարկի դրույքը 18% է: Հարկերի գծով ակնկալվող և իրական ծախսի համադրումը ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Շահույթ նախքան հարկումը	**4,462,002**	**3,499,565**
Տեսական հարկային ծախսը՝ սահմանված 18% դրույքաչափով	(803,160)	(629,922)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը.		
- Չհարկվող եկամուտ	341,057	451,139
- Չնվազեցվող ծախսեր	(531,002)	(1,030,963)
Տարվա շահութահարկի գծով ծախս	**(993,105)**	**(1,209,746)**

25 Շահութահարկ (շարունակություն)

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 248,075 հազ. ՀՀ դրամ ընթացիկ կանխավճարներ շահութահարկի գծով (2020թ. ՝ 707,496 հազ. ՀՀ դրամ): Կանխավճարը ճանաչվել է 2021թ. փաստացի հարկային ծախսի համեմատ ավելի մեծ գումարով հարկերի վճարման հետևանքով: Ընկերության կողմից կանխավճարը կօգտագործվի հաջորդ ժամանակահատվածներում:

(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի

ՖՀՄՍ-ի և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության միջև եղած տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ՝ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով որոշվող դրանց գումարների միջև:

Այդ ժամանակավոր տարբերություններում 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	**1 հունվարի 2021թ.**	**(Ծախսագրված)/ կրեդիտագրված շահույթին կամ վնասին**	**(Ծախսագրված)/ կրեդիտագրված սեփական կապիտալին**	**31 դեկտեմբերի 2021թ.**
Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը				
Հիմնական միջոցներ	2,718,380	(359,315)	-	2,359,065
Ոչ նյութական ակտիվներ	241,226	(232,929)	-	8,297
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսումներ	247,371	(16,872)	-	230,499
Պաշարների արժեզրկում	(1)	2	-	1
Հետաձգված ծախսեր	(48,806)	26,650	-	(22,156)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ	87,609	92,994	-	180,603
Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ	680,397	(26,819)	-	653,578
Ակտիվների ապագործարկման պահուստ	232,727	25,848	-	258,575
Հետաձգված եկամուտներ	11,280	495	-	11,775
Կրեդիտորական պարտքեր	126,460	(69,697)	-	56,763
Պահուստներ	-	-	-	-
Ստացված կանխավճարներ	-	-	-	-
Ֆինանսական գործիքներ և երաշխիքներ	-	(197,239)	506,125	308,887
Հարկային վնասներ	439,989	(236,223)	-	203,766
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	**4,736,632**	**(993,105)**	**506,125**	**4,249,652**

ՀՀ օրենսդրության համաձայն, հարկային վնասները կարող են օգտագործվել մինչև 2025թ.:

Այդ ժամանակավոր տարբերություններում 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև.

25 Շահութահարկ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	1 հունվարի 2019թ.	(Ծախսագրված)/ կրեդիտագրված շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2019թ.
Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը			
Հիմնական միջոցներ	4,109,793	(1,391,413)	2,718,380
Ոչ նյութական ակտիվներ	363,805	(122,579)	241,226
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսումներ	352,664	(105,293)	247,371
Պաշարների արժեզրկում	(5)	4	(1)
Հետաձգված ծախսեր	(62,564)	13,758	(48,806)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ	59,259	28,350	87,609
Դեբիտորական պարտքերի արժեզրկում	684,017	(3,620)	680,397
Ակտիվների ապագործարկման պահուստ	207,606	25,121	232,727
Հետաձգված եկամուտներ	5,675	5,605	11,280
Կրեդիտորական պարտքեր	230,453	(103,993)	126,460
Պահուստներ	10,357	(10,357)	-
Ստացված կանխավճարներ	(14,682)	14,682	-
Հարկային վնասներ	-	439,989	439,989
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	**5,946,378**	**(1,209,746)**	**4,736,632**

26 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

Ընկերությունը վարձակալում է տարբեր գրասենյակային և տեխնիկական տարածքներ: Վարձակալության պայմանագրերը սովորաբար կնքվում են հաստատուն ժամանակահատվածով 1-10 տարի ժամկետով, բայց կարող են նախատեսվել վարձակալության երկարաձգման օպցիոններ:

Մինչև 2018թ դեկտեմբերի 31-ը հիմնական միջոցների վարձակալության պայմանագրերը դասակարգվում էին կամ որպես ֆինանսական վարձակալություն, կամ որպես գործառնական վարձակալություն: 2019թ. հունվարի 1-ից սկսած վարձակալությունը ճանաչվում է որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ, արտացոլելով համապատասխան պարտավորությունը, սկսած այն ամսաթվից, որից վարձակալված ակտիվը հասանելի է Ընկերության կողմից օգտագործման համար:

Հազ. ՀՀ դրամ	Հող	Շենքեր	Ընդամենը
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2020թ.	**598,303**	**4,277,994**	**4,876,297**
Ավելացումներ	10,836	797,413	**808,249**
Օտարումներ	(11,346)	(76,207)	**(87,553)**
Մաշվածություն	(88,052)	(1,151,052)	**(1,239,104)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**509,741**	**3,848,148**	**4,357,889**
Ավելացումներ	9,689	485,127	**494,816**
Օտարումներ	(16,120)	(169,188)	**(185,308)**
Մաշվածություն	(86,372)	(1,109,607)	**(1,195,979)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**416,938**	**3,054,480**	**3,471,418**

26 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ (շարունակություն)

Ընկերությունը ճանաչել է վարձակալության գծով հետևյալ պարտավորությունները.

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբեր 2021թ.**	**31 դեկտեմբեր 2020թ.**
Վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորություններ	1,373,865	1,060,540
Վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորություններ	3,100,899	3,784,065
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	**4,474,764**	**4,844,605**

Ֆինանսական ծախսերի կազմում ներառված տոկոսային ծախսերը 2021թ. կազմել են 469,153 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 500,683 հազ. ՀՀ դրամ): 2021թ. ընթացքում վարձակալության դիմաց կատարված վճարումների ընդհանուր գումարը կազմել է 1,274,500 հազ. ՀՀ դրամ (2020թ. ՝ 1,408,686 հազ. ՀՀ դրամ):

27 Վարկեր և փոխառություններ

Ընկերության վարկերը արտահայտված են հետևյալ արժույթներով.

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Վարկեր՝ արտահայտված		
- ԱՄՆ դոլարով	8,333,956	4,077,516
- ՀՀ դրամով	330,940	880,457
Ընդամենը վարկեր և փոխառություններ առ 31 դեկտեմբերի	**8,664,896**	**4,957,973**

Ընկերությունը չի կիրառում հեջի հաշվառում իր արտարժույթով պարտավորությունների կամ տոկոսադրույքների ռիսկի գծով: Փոխառությունների հաշվեկշռային արժեքները և իրական արժեքները հետևյալն են.

	Հաշվեկշռային արժեքներ	
Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Բանկային վարկ 2024թ. մայիս մարման ժամկետով և 7.5% տոկոսադրույքով	3,365,881	-
Բանկային վարկ 2028թ. հոկտեմբեր մարման ժամկետով և 8% տոկոսադրույքով	2,452,120	-
Բանկային վարկ 2027թ. նոյեմբերի մարման ժամկետով և 8% տոկոսադրույքով	1,915,310	4,077,516
Բանկային վարկ 2026թ. դեկտեմբեր մարման ժամկետով և 7.5% տոկոսադրույքով	600,644	-
Բանկային վարկ 2028թ. դեկտեմբեր մարման ժամկետով և 13% տոկոսադրույքով	330,941	-
Բանկային վարկ 2021թ. հունիս մարման ժամկետով և 11% տոկոսադրույքով	-	880,457
Ընդամենը փոխառություններ առ 31 դեկտեմբերի	**8,664,896**	**4,957,973**

Փոխառությունների հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին 2020թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

27 Վարկեր և փոխառություններ (շարունակություն)

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը գրավադրել է շենքեր՝ 125,922 հազ. ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով (2020թ.՝ 110,940 հազ. ՀՀ դրամ), որպես ապահովության միջոց բանկային վարկի դիմաց, որի չմարված մնացորդը այդ ամսաթվի դրությամբ կազմում է 7,733,311 ՀՀ դրամ (2020թ.՝ 4,077,516 հազ. ՀՀ դրամ):

Պայմանագրային դրույթների պահպանում. Ընկերության նկատմամբ գործում են որոշակի պայմանագրեր, որոնք կապված են հիմնականում իր Վարկերի հետ: Ընկերությունը 2021թ. դեկտեմբերի 31-ին չի պահպանել որոշ պայմանագրային դրույթներ: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վարկերի ընդհանուր գումարը խախտված պայմանագրային դրույթներով կազմել է 1,915,310 հազ. ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31՝ զրո): Բացի այդ, 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խախտվել են «ԹԻՄ» ՓԲԸ-ի և Ամերիաբանկի միջև կնքված վարկային պայմանագրով նախատեսված դրույթները, որտեղ Ընկերությունը հանդիսանում է երաշխավոր 10,851,434 հազ. ՀՀ դրամ մնացորդով վարկի գծով:

2021թ. դեկտեմբերին բանկերը որոշում են կայացրել Ընկերությանն արտոնություններ տրամադրել խախտումների հետ կապված: Այդ պատճառով Ընկերությունը չի վերադասակարգել այդ վարկերը որպես ընթացիկ պարտավորություններ:

Բանկի կողմից որպես գրավ պահանջվող գույքի որոշ միավորներ որպես գրավի առարկա չեն գրանցվել: Բանկը համաձայնել է երկարաձգել գրավի առարկայի գրանցման վերջնաժամկետը մինչև 2022թ. հունիսի 30-ը:

28 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ սովորական գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են ներկայացվել հայցեր: Հիմնվելով սեփական գնահատման վրա, ղեկավարությունը կարծում է, որ դրանք չեն հանգեցնի էական կորուստների, որոնք կգերազանցեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված պահուստների գումարը:

Հարկային պայմանական պարտավորություններ. Հայաստանի Հանրապետության հարկային, արժութային և մաքսային օրենսդրության որոշ դրույթներ կարող են հանդիսանալ տարընթերցումների առարկա՝ Ընկերության գործարքների և գործունեության նկատմամբ կիրառելիս: Հետևաբար, հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատումների գծով: Որպես հետևանք, հարկային մարմինները կարող են հայց ներկայացնել այն գործարքների և հաշվապահական հաշվառման մեթոդների վերաբերյալ, որոնց համար նախկինում պահանջներ չեն ներկայացրել: Հարկային ստուգումները կարող են ներառել ստուգման ամսաթվին անմիջապես նախորդող երեք օրացուցային տարիները:

Ի լրումն վերը նշված հարցերի, ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի հարկային ռիսկերի հետ կապված 1,211,356 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 1,603,356 հազ. ՀՀ դրամ) գումարի չափով այլ հնարավոր պարտավորություններ, որոնց հավանականությունը գնահատվում է «աննշանը գերազանցող»: Այս ռիսկերը հիմնականում վերաբերվում են ՀՀ հարկային մարմինների կողմից ոչ ռեզիդենտի շահութահարկի լրացուցիչ պարտավորությունների առաջադրմանը: Այս ռիսկերը հանդիսանում են համապատասխան օրենսդրության և փաստաթղթավորման պահանջների մեկնաբանություններում առկա անորոշությունների արդյունք:

Կապիտալ ծախսումների գծով պարտավորություններ. 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի կապիտալ ծախսումների պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների ձեռքբերման գծով՝ 2,606,974 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 495,231 հազ. ՀՀ դրամ): Ընկերությունն արդեն հատկացրել է անհրաժեշտ միջոցներ այդ պարտավորությունների կատարման համար: Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ապագա զուտ շահույթը և ֆինանսավորումը բավարար կլինեն՝ այս և համանման այլ պարտավորությունները կատարելու համար:

28 Պայմանական դեպքեր և պարտավորություններ (շարունակություն)

Շրջակա միջավայրի պահպանության հարցեր. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության կանոնակարգման համակարգը զարգանում է, և պետական մարմինների դիրքորոշումն այդ համակարգը ներդնելու հարցում շարունակաբար փոփոխվում է: Ընկերությունը պարբերաբար գնահատում է իր պարտավորությունները շրջակա միջավայրի պահպանության կանոնակարգերի համաձայն: Երբ պարտավորությունները որոշվում են, դրանք անմիջապես ճանաչվում են հաշվետվությունում: Հնարավոր պարտավորությունները, որոնք կարող են ծագել գործող կանոնակարգերի, քաղաքացիական իրավական համակարգի կամ օրենսդրության փոփոխման հետևանքով, չեն կարող գնահատվել, սակայն կարող են էական լինել: Գործող օրենսդրության կիրառման պայմաններում ղեկավարությունը կարծում է, որ չկան շրջակա միջավայրին վնաս հասցնելու հետևանքով առաջացող նշանակալի պարտավորություններ:

Երաշխիքներ. Երաշխիքներն իրենցից ներկայացնում են հետկանչման ոչ ենթակա հանձնառություններ առ այն, որ Ընկերությունը կկատարի վճարումներ այն դեպքում, երբ մեկ այլ կողմ չի կարողանա կատարել իր պարտավորությունները: Ընկերությունը երաշխավորել է տեղական բանկի հետ վարկային պայմանագրի ներքո «ԹԻՄ» ՓԲԸ-ի (Ընկերության անմիջական մայր ընկերության) պարտավորությունը, որի մարման ժամկետը 2027 թվականի հոկտեմբերն է: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից ճանաչված երաշխիքի հաշվեկշռային արժեքը կազմում է 1,907,669 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 2,668,514 հազ. ՀՀ դրամ): 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը և «ԹԻՄ» ՍՊԸ-ն պահպանել են վարկային պայմանագրով ամրագրված պայմանները: 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երաշխիքի ընթացիկ մասնաբաժինը կազմել է 390,514 հազ. ՀՀ դրամ:

ԱՊԿ արժեքը հաշվարկվել է 12. 24% (2020թ.՝ 16.15%)՝ սահմանված ապագա դրամական միջոցների հոսքերի և սցենարային վերլուծության հիման վրա, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երաշխիքի գումարի մնացորդի նկատմամբ (31 դեկտեմբերի 2021թ.՝ 10,851,434 հազ. ՀՀ դրամ, 31 դեկտեմբերի 2020թ.՝ 16,521,400 հազ. ՀՀ դրամ): Ֆինանսական երաշխիքի և զգայունության վերլուծության հետ կապված հիմնական հաշվապահական եզրակացությունները բերված են ծանոթագրություն 4-ում: Երաշխիքի ճանաչված արժեքը բաժանվել է ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի՝ համաձայն վարկի վճարման ժամանակացույցի:

Գրավներ. Ընկերությունը գրավադրել է գույք՝ 125,922 հազ. ՀՀ դրամ (31 դեկտեմբերի 2020թ.՝ 110,940 հազ. ՀՀ դրամ) զուտ հաշվեկշռային արժեքով, որպես իր բանկային վարկերի ապահովման միջոց (Ծանոթագրություն 27): Ընկերությունը նաև գրավադրել է 546,739 հազ. ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով գույք՝ որպես իր անմիջական մայր ընկերության կողմից ստացված բանկային վարկի գրավի ապահովման միջոց, ընդ որում վարկային մնացորդը կազմում է 10,851,434 հազ. ՀՀ դրամ: Ընկերության բաժնետոմսերի 100%-ը նույնպես գրավադրվել է անմիջական մայր ընկերության կողմից՝ որպես նույն բանկային վարկի ապահովման միջոց:

29 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի ուղղություններով: Ֆինանսական ռիսկը կազմված է շուկայական ռիսկից (ներառյալ՝ արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկը), պարտքային ռիսկից և իրացվելիության ռիսկից: Ֆինանսական ռիսկերի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է ռիսկերի սահմանաչափ սահմանելը և այնուհետև ռիսկերի ազդեցությունն այդ սահմանաչափում պահելը: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթները նպատակ ունեն ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

Պարտքային ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, այսինքն՝ ռիսկը, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին՝ պարտավորությունները չկատարելու հետևանքով: Պարտքային ռիսկն առաջանում է Ընկերության կողմից տարաժամկետ վճարման պայմաններով վաճառք իրականացնելու և մյուս կողմերի հետ ֆինանսական ակտիվներ առաջացնող այլ գործարքներ իրականացնելու արդյունքում:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կատեգորիաները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

29 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	**2021թ.**	**2020թ.**
Ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ (Ծանոթագրություն 10)	10,955,362	6,224,629
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 12)		
- Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	4,187,007	2,568,824
- Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր, զուտ	354,760	58,825
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 13)		
- Ցպահանջ մնացորդներ բանկում	1,364,480	123,181
- Դրամական միջոցներ ճանապարհին	74,583	75,455
- Առձեռն դրամական միջոցներ	27,997	16,890
Ընդամենը հաշվեկշռի պարտքային ռիսկ	**16,964,189**	**9,067,804**
Տրամադրված երաշխիքներ (Ծանոթագրություն 28)	10,851,434	16,521,400
Ընդամենը պարտքային ռիսկ	**27,815,623**	**25,589,204**

Պարտքային ռիսկերի կառավարում: Պարտքային ռիսկը հանդիսանում է Ընկերության բիզնեսի համար միակ առավել էական ռիսկը: Հետևաբար, ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում պարտքային ռիսկի կառավարմանը:

Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը բարդ է և ենթադրում է մոդելների կիրառում, քանի որ ռիսկը փոփոխվում է՝ կախված շուկայական պայմաններից, ակնկալվող դրամական հոսքերից և ժամանակի անցնելուց: Ակտիվների պորտֆելի գծով պարտքային ռիսկի գնահատումը ենթադրում է դեֆոլտի առաջացման հավանականության գնահատում, կորուստների համապատասխան գործակիցների և գործընկերների միջև դեֆոլտի հարաբերակցության հետագա գնահատում:

Սահմանափակումներ. Ընկերությունը կառավարում է իր պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանաչափեր կիրառելով մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի գծով ստանձնած ռիսկերի ծավալի համար: Պարտքային ռիսկի սահմանափակումները պարբերաբար հաստատվում են ղեկավարության կողմից: Այդ ռիսկերն անընդհատ վերահսկվում են և ենթակա են տարեկան կամ առավել հաճախակի վերանայման:

Ընկերության ղեկավարությունը դիտարկում է չվճարված առևտրային դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետայնության և միջոցներ է ձեռնարկում ժամկետանց մնացորդների մասով: Հետևաբար, ղեկավարությունը տեղին է համարում տրամադրել պարտքային ռիսկի ժամկետայնության վերաբերյալ և այլ տեղեկատվություն, ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 12-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափում: ԱՊԿ-ն իրենից ներկայացնում է դրամական միջոցների ապագա դեֆիցիտի ներկա արժեքի հավանականությամբ կշռված գնահատական (այսինքն՝ միջին կշռված պարտքային կարուստը, տրված ժամանակահատվածում տեղի ունեցող դեֆոլտի համապատասխան ռիսկերով, որոնք օգտագործվել են որպես կշիռ): ԱՊԿ չափումն անկողմնակալ է և որոշվում է հնարավոր արդյունքների շրջանակը գնահատելու միջոցով: ԱՊԿ չափումն իրականացվում է Ընկերության կողմից օգտագործվող հետևյալ չորս բաղադրիչների հիման վրա. դեֆոլտի հավանականություն, դեֆոլտի ռիսկին ենթակա պարտքային պահանջի մեծություն, դեֆոլտից առաջացող վնաս և զեղչման տոկոսադրույք:

Պարտքային ռիսկի կենտրոնացում. Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի կենտրոնացման ազդեցությանը: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ չորս գործընկեր (2020թ.՝ չորս գործընկեր) 100,000 հազ. ՀՀ դրամը գերազանցող ընդհանուր դեբիտորական պարտքերի մնացորդներով: Այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 2,714,811 հազ. դրամ (2020թ.՝ 615,682 հազ. ՀՀ դրամ):

29 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ընկերությունը նաև ենթարկվում է պարտքային ռիսկի կենտրոնացման՝ անմիջական մայր ընկերությանը տրված երաշխիքի գծով: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից երաշխավորված պարտքի չափը կազմում էր 10,851,434 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 16,521,400 հազ. ՀՀ դրամ) (Ծանոթագրություն 28):

Շուկայական ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկերի: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արտարժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների և (գ) բաժնային արժեթղթերի բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Ղեկավարությունը սահմանում է ռիսկի այն մակարդակը, որը կարող է ընդունվել, ինչն էլ վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերից դուրս վնասների առաջացումն այն դեպքերում, երբ տեղի են ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր:

Ստորև ներկայացված շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունությունը որոշվել է հիմք ընդունելով մեկ գործոնի փոփոխությունը՝ անփոփոխ պահելով մնացած այլ գործոնները: Գործնականում այս իրավիճակի տեղի ունենալը հավանական չէ, և մի շարք գործոններում փոփոխությունները կարող են փոխկապակցված լինել, օրինակ՝ տոկոսադրույքի և արտարժույթի դրույքաչափի փոփոխությունները:

Արժութային ռիսկ. Արժութային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական կտրվածքով: Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության՝ արժույթի փոխարկման հետ կապված ռիսկին ենթարկվածությունը.

	Առ 31 դեկտեմբերի 2021թ.			Առ 31 դեկտեմբերի 2020թ.		
Հազ. ՀՀ դրամ	**Դրամական ֆինանսա-կան ակտիվներ**	**Դրամական ֆինանսա-կան պարտավոր ություններ**	**Զուտ հաշվեկշ-ռային դիրք**	**Դրամական ֆինանսա-կան ակտիվներ**	**Դրամական ֆինանսա-կան պարտավոր ություններ**	**Զուտ հաշվեկշ-ռային դիրք**
ԱՄՆ դոլար	13,835,200	(12,777,210)	1,057,990	7,076,522	(9,639,310)	(2,562,788)
Եվրո	169,405	(630,425)	(461,020)	23,596	(199,315)	(175,720)
ՀՖԻ	383,063	(246,661)	136,402	291,092	(181,355)	109,736
ՌԴ ռուբլի	2,489	(34,650)	(32,161)	2,446	(54,547)	(52,101)
Անգլիական ֆունտ	36,104	-	36,104	-	-	-
Ընդամենը	**14,426,261**	**(13,688,946)**	**737,315**	**7,393,656**	**(10,074,527)**	**(2,680,871)**

Վերը ներկայացված վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները: Ոչ դրամական ակտիվները չեն դիտարկվում որպես արժութային ռիսկ առաջացնող էական բաղադրիչ:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի կամ վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

29 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Առ 31 դեկտեմբերի 2021թ.	Առ 31 դեկտեմբերի 2020թ.
ԱՄՆ դոլարի ամրապնդում 5%-ով (2020թ. `ամրապնդում 5%-ով)	52,900	(128,139)
ԱՄՆ դոլարի անկում 5%-ով (2020թ. ` անկում 5%-ով)	(52,900)	128,139
Եվրոյի ամրապնդում 5%-ով (2020թ. ` ամրապնդում 5%-ով)	(23,051)	(8,786)
Եվրոյի անկում 5%-ով (2020թ. ` անկում 5%-ով)	23,051	8,786
ՀՓԻ ամրապնդում 5%-ով (2020թ. ` ամրապնդում 5%-ով)	6,820	5,487
ՀՓԻ անկում 5%-ով (2020թ. ` անկում 5%-ով)	(6,820)	(5,487)
ՌԴ ռուբլու ամրապնդում 15%-ով (2020թ. ` ամրապնդում 15%-ով)	(4,824)	(7,815)
ՌԴ ռուբլու անկում 15%-ով (2020թ. ` անկում 15%-ով)	4,824	7,815
Անգլիական ֆունտի ամրապնդում 5%-ով	(1,805)	-
Անգլիական ֆունտի անկում 5%-ով	1,805	-

Տոկոսադրույքի ռիսկ: Ընկերությունն իր վրա է վերցնում շուկայական տոկոսադրույքների գերակշռող մակարդակների տատանումների ազդեցությունը իր ֆինանսական դիրքի և դրամական հոսքերի վրա: Տոկոսների մարժան կարող է աճել այդպիսի փոփոխությունների արդյունքում, բայց կարող է նվազել կամ հանգեցնել վնասների՝ անսպասելի տատանումների դեպքում: Ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունը չի ենթարկվում տոկոսադրույքի ռիսկի զգալի ազդեցության, քանի որ Ընկերության ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել են հաստատուն տոկոսադրույքներ:

Ընկերությունը չունի տոկոսադրույքների ռիսկերի կառավարման համար պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր, քանի որ ղեկավարությունն այդ ռիսկը համարում է ոչ զգալի Ընկերության բիզնեսի համար:

Ընկերությունը վերահսկում է իր ֆինանսական գործիքների տոկոսադրույքները: Ստորև բերված աղյուսակում ամփոփված են արդյունավետ տոկոսադրույքները համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ հիմք ընդունելով առանցքային ղեկավար անձնակազմի կողմից դիտարկված հաշվետվությունները.

	2021թ.		2020թ.	
Տարեկան %	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	0-6	0-1	0-6	0-1
Տրամադրված փոխառություններ	13	8	0	0-8

Վերը ներկայացված աղյուսակում «-» նշանը նշանակում է, որ Ընկերությունը չունի համապատասխան արժույթով ակտիվներ:

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, երբ կազմակերպությունը կարող է դժվարանալ կատարելու ֆինանսական պարտավորություններով պայմանավորված իր պարտականությունները: Ընկերությունն օրական կտրվածքով առնչվում է դրամական միջոցների պահանջին: Իրացվելիության ռիսկը կառավարվում է Ընկերության ֆինանսական բաժնի կողմից: Ղեկավարությունն ամսական կտրվածքով վերահսկում է Ընկերության դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները:

Ընկերությունն աշխատում է պահպանել կայուն ֆինանսավորման աղբյուրներ, որոնք հիմնականում բաղկացած են առևտրային և այլ դեբիտորական պարտքերից: Ընկերությունը ֆինանսական միջոցների ներդրումներ է կատարում իրացվելի ակտիվների դիվերսիֆիկացված փաթեթում, որպեսզի կարողանա արագորեն և անմիջականորեն բավարարել չնախատեսված իրացվելիության պահանջները: Ընկերության իրացվելիության պորտֆելը կազմված է դրամական միջոցներից և դրանց համարժեքներից (տես Ծանոթագրություն 13):

29 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Գանձապետական բաժինը վերահսկում է իրացվելիության դիրքը և պարբերաբար իրականացնում է իրացվելիության սթրես-թեստ՝ օգտագործելով ինչպես բնականոն, այնպես էլ առավել խիստ շուկայական պայմաններ ներառող սցենարներ:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 12 ամիս**	**12-ից ավել ամիս**	**Ընդամենը**
Պարտավորություններ				
Բանկերից ստացված փոխառություններ (Ծանոթագրություն 27)	3,929	624,575	8,036,392	8,664,896
Տրամադրված երաշխիքներ (Ծանոթագրություն 28)	10,851,434	-	-	10,851,434
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 16)	285,425	6,494,568	-	6,779,993
Վարձակալության պարտավորություններ (Ծանոթագրություն 26)	125,182	963,656	4,779,878	5,868,716
Ընդամենը ապագա վճարներ	**11,265,970**	**8,082,799**	**12,816,270**	**32,165,039**

Տրամադրված երաշխիքները ներառված են «Ցպահանջ և 1 ամսից պակաս» կատեգորիայում, քանի որ Ընկերությունը կախվածություն ունի երաշխիքով ապահովված վարկի գծով վարկառուի կողմից բանկի առջև ստանձնած պարտավորությունների կատարումից և գործողություններից, որոնք բանկը կարող է ձեռնարկել վարկի և երաշխիքային պայմանագրերի պայմանների հիման վրա:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Ցպահանջ և մինչև 1 ամիս**	**1-ից 12 ամիս**	**12-ից ավել ամիս**	**Ընդամենը**
Բանկերից ստացված փոխառություններ (Ծանոթագրություն 27)	53,163	1,709,711	4,348,096	6,110,970
Տրամադրված երաշխիքներ (Ծանոթագրություն 28)	16,521,400	-	-	16,521,400
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 16)	731,734	5,577,308	-	6,309,042
Վարձակալության պարտավորություններ (Ծանոթագրություն 26)	136,681	1,277,932	5,670,241	7,084,854
Ընդամենը ապագա վճարներ	**17,442,978**	**8,564,951**	**10,018,337**	**36,026,266**

30 Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման ժամանակ Ընկերության նպատակներն են. պահպանել Ընկերության կարողությունը՝ շարունակելու իր գործունեությունը անընդհատության սկզբունքով՝ ապահովելով հատուցում բաժնետերերին և օգուտներ այլ շահառուներին և հաստատել կապիտալի օպտիմալ կառուցվածք: Կապիտալի կառուցվածքը հաստատելու և ճշգրտելու համար Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ նվազեցնելով պարտքը: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից կառավարվող կապիտալի չափը կազմել է 23,859,064 հազ. դրամ (2020թ.՝ 22,176,212 հազ. դրամ):

31 Իրական արժեքի բացահայտումներ

Իրական արժեքի չափման վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող (չճշգրտվող) գներով, (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (օրինակ՝ գներ) կամ անուղղակիորեն (օրինակ՝ գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական գործիքները իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակին վերագրելիս՝ ղեկավարությունը կիրառում է դատողություն: Եթե իրական արժեքի չափման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի տվյալներ, ապա իրական արժեքի տվյալ չափումը վերաբերում է մակարդակ 3-ին: Օգտագործվող տվյալների նշանակալիությունը գնահատվում է իրական արժեքով չափվող ամբողջության համար:

բ) Իրական արժեքի ոչ պարբերական չափումներ

Ընկերությունը կապակցված կողմի համար թողարկված երաշխիքը ճանաչել է իրական արժեքով: Իրական արժեքի չափումը կատարվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակի չափումների հիման վրա: Ճանաչման ամսաթվին իրական արժեքի չափման մեջ օգտագործված գնահատման մեթոդները և ելակետային տվյալները հետևյալն էին.

	Իրական արժեք	**Գնահատման մեթոդ**	**Օգտագործված ելակետային տվյալներ**	**Ելակետային տվյալներ 31 դեկ 2021թ.**
Կապակցված կողմի համար տրամադրված երաշխիքներ (ԱՊԿ գնահատում առ 31 դեկտեմբերի 2021թ.)	1,328,566	Ձեղչված դրամական միջոցների հոսքեր	Ձեղչի տոկոսադրույք Ազատ դրամական միջոցներ 2022-2030թթ.	8.0% (1,096,715) հազ. ՀՀ դրամից մինչև 938,621 հազ. ՀՀ դրամ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ. Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների չափվող իրական արժեքը հիմնված է ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա՝ կիրառելով գործող տոկոսադրույքները նմանատիպ պարտքային ռիսկ և նմանատիպ մարման ժամկետ ենթադրող փոխառության շուկայի նոր գործիքների նկատմամբ: Ձեղչման համար օգտագործվող տոկոսադրույքները կախված են գործընկերոջ պարտքային ռիսկից:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ. Պարտավորությունների իրական արժեքը որոշվում է օգտագործելով չափման մեթոդներ: Ֆիքսված տոկոսադրույքով և սահմանված մարման ժամկետով գործիքների հաշվարկային իրական արժեքը չափվում է հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա՝ կիրառելով նմանատիպ պարտքային ռիսկ և նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր գործիքների տոկոսադրույքները:

32 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների

Ընկերությունը, ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» համաձայն, դասակարգում է ֆինանսական ակտիվները հետևյալ կատեգորիաների. (ա) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ և (գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներն ունեն երկու ենթակատեգորիա. (i), իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով պարտադիր չափվող ակտիվներ և (ii) ակտիվներ, որոնք սահմանվել են որպես այդպիսիք սկզբնական ճանաչման ժամանակ:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների համադրումը վերը նշված չափման կատեգորիաներով առ 31 դեկտեմբերի 2021թ. :

32 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	**2021թ. Ամորտիզացված արժեքով**	**2020թ. Ամորտիզացված արժեքով**
Ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ (Ծանոթագրություն 10)	10,955,362	6,224,629
Առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 12)		
- Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	4,187,007	2,568,824
- Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր, զուտ	354,760	58,825
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 13)		
- Ցպահանջ բանկային մնացորդներ	1,364,480	123,181
- Դրամական միջոցներ ճանապարհին	74,583	75,455
- Առձեռն դրամական միջոցներ	27,997	16,890
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**16,964,189**	**9,067,804**

33 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսատնտեսական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 7, 5- 8%)	6,134,512	-
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 0%)	4,820,849	-
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	976,804	4,749
Տրամադրված երաշխիքներ	10,851,434	-
Ստացված կանխավճարներ	-	1,844,005
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	80	218,854

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 8%)	2,645,898	-
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 0%)	3,364,531	-
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	444,687	-
Տրամադրված երաշխիքներ	16,521,400	-
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	-	31,377

33 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար փոխկապակցված կողմերի հետ գործարքներից եկամուտները և ծախսերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Ծառայությունների ձեռքբերում	261,784	25,120
Կառավարչական վճարներ	256,667	-
Ծառայությունների տրամադրում	4,234	7,142
Տոկոսային եկամուտ	357,216	-
Տրամադրված փոխառություններ՝ դրամական	7,537,928	-

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը տրամադրել է երաշխիք անմիջական մայր ընկերության կողմից 16,521,400 հազ. ՀՀ դրամի ներգրավված բանկային վարկի գծով, ինչպես նաև գրավադրել է իր գույքը 902,218 հազ. ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով:

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա փոխկապակցված կողմերի հետ գործարքներից եկամուտները և ծախսերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Կապի ծառայությունների ձեռքբերում (փոխկապակցում, ռոումինգ, ինտերնետ)	1,152,396	260,097
Կապի ծառայությունների տրամադրում (փոխկապակցում, ռոումինգ, ինտերնետ)	1,016,122	167,328
Տոկոսային եկամուտ	40,594	200,548
Տրամադրված փոխառություններ՝ դրամական	3,642,338	-
Տրամադրված փոխառություններ՝ ոչ դրամական	5,141,300	-
Բաշխում նախորդ սեփականատիրոջը	4,927,100	-
Վճարված շահաբաժիններ	18,810,000	-

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները Ընկերությունն իրականացրել է «պարզած ձեռքի հեռավորության» սկզբունքով, բացառությամբ որոշակի տրամադրված փոխառությունների և գործարքների գծով երաշխիքների (Ծանոթագրություն 10, 28):

Ղեկավար անձնակազմի հատուցում. Ղեկավար անձնակազմ են համարվում գլխավոր տնօրենը, գլխավոր տնօրենի տեղակալը, ֆինանսական տնօրենը, գործառնությունների տնօրենը, տեխնիկական տնօրենը, կոմերցիոն տնօրենը և Խորհրդի անդամը:

33 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

Ղեկավար անձնակազմին հատուցումը ներկայացված է ստորև.

	2021թ.		2020թ.	
Հազ. ՀՀ դրամ	**Ծախս**	**Հաշվեգրված զուտ պարտավորու-թյուն**	**Ծախս**	**Հաշվեգրված զուտ պարտավորու-թյուն**
Կարճաժամկետ հատուցումներ.				
- Աշխատավարձ	499,088	52,422	522,007	18,216
- Կարճաժամկետ պարգևավճարներ	-	-	381,201	-
Արձակման նպաստներ	-	-	186,732	-
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	20,648	-	-	-
Ընդամենը	**519,736**	**52,422**	**1,089,939**	**18,216**

34 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ստացված վարկեր: 2021թ. մայիսին Ընկերությունը վարկ է ստացել տեղական բանկից: Վարկը գնանշված է ԱՄՆ դոլարով և համարժեք է 623,800 հազ. ՀՀ դրամի (1,250 հազ. ԱՄՆ դոլար), վարկային պայմանագրի օրվա գործող դրույքաչափով: Վարկի մարման ժամկետը՝ հունիս 2022թ. : Այս նոր վարկով վաղաժամկետ և ամբողջությամբ մարվել է տեղական բանկի մեկ այլ վարկ՝ 2026թ. դեկտեմբեր մարման ժամկետով:

2022թ. մայիսի 26-ին Ընկերությունը 7 տարի ժամկետով 20,122,650 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով ԱՄՆ դոլարով գնանշված ժամկետային վարկային պայմանագրեր է կնքել Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ՝ Ընկերության առկա պարտքը վերաֆինանսավորելու նպատակով, որը մեծապես պայմանավորված է «ԹԻՄ» ՓԲԸ կողմից ընկերության ձեռքբերման և Ընկերության աճի կապիտալ ծախսերի պլանը ֆինանսավորելու նպատակով:

Ռեբրենդինգ. Ընկերությունը պաշտոնապես ավարտել է իր ռեբրենդինգի գործընթացը 2022 թվականի մայիսին՝ «Բիլայն» ապրանքանիշը փոխարինելով «Թիմ» ապրանքանիշով:

Դեբիտորական պարտք ինտերնետային տրաֆիկի ծառայությունների գծով: 2022թ. մայիսին ստացվել են դեբիտորական պարտքերի վճարումներ՝ 684,475 հազ. ՀՀ դրամ գումարով: Այս դեբիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 12-ում:

«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2020թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի գործունեությունը 5
2 Ընկերության գործառնական միջավայրը 5
3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ 6
4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ 19
5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին 22
6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ 22
7 Հիմնական միջոցներ 27
8 Ոչ նյութական ակտիվներ 28
9 Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր 29
10 Տրամադրված փոխառություններ 29
11 Պաշարներ 30
12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 30
13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 32
14 Կանոնադրական կապիտալ 33
15 Ակտիվների ապագործարկման պահուստ 33
16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 34
17 Պարտավորությունների և վճարների պահուստ 34
18 Հասույթ 35
19 Վաճառքի ինքնարժեք 35
20 Այլ գործառնական եկամուտ 36
21 Ընդհանուր և վարչական ծախսեր 36
22 Իրացման ծախսեր 36
23 Այլ գործառնական ծախսեր 37
24 Ֆինանսական եկամուտ 37
25 Շահութահարկ 37
26 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ 39
27 Ստացված փոխառություններ 40
28 Պայմանական դեպքեր և պարտավորություններ 41
29 Ֆինանսական ռիսկերի կառավարում 42
30 Կապիտալի կառավարում 46
31 Իրական արժեքի բացահայտումներ 46
32 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների 47
33 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ 48
34 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր 50

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ տնօրենների խորհրդին և ղեկավարությանը

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական վիճակն առ 2020թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև Ընկերության՝ այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ-ներ»):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2020թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԽ Վարքագիրք») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ Վարքագրքին համապատասխան:

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում՝ մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում,

- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ալեքսեյ Ղուսանով
Տնօրեն

PricewaterhouseCoopers Armenia LLC

18 հունիսի 2021թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	18,207,988	15,582,944
Ոչ նյութական ակտիվներ	8	3,995,028	3,245,753
Կարծակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	9	1,508,569	1,101,396
Կարծակալված ակտիվների օգտագործման իրավունք	26	4,357,890	4,876,297
Հետաձգված հարկային ակտիվներ	25	4,736,632	5,946,378
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		183,222	288,936
Տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններ	10	6,224,629	-
Հետաձգված ոչ ընթացիկ ծախսեր		94,656	145,815
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		64,578	64,578
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		39,373,192	31,252,097
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	11	223,831	607,308
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	3,477,754	3,491,051
Տրամադրված ընթացիկ փոխառություններ	10	-	19,043,648
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճարներ	25	707,496	141,396
Այլ փոխհատուցվող հարկեր		168,805	197,174
Հետաձգված ընթացիկ ծախսեր		176,491	201,762
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	215,526	3,567,276
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		4,969,903	27,249,615
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		44,343,095	58,501,712
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	14	18,837,709	18,837,709
Չբաշխված շահույթ		512,847	22,479,767
Այլ պահուստներ		2,825,656	2,825,656
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		22,176,212	44,143,132
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվների ապագործարկման գծով պահուստ	15	1,292,925	1,153,369
Տրամադրված ոչ ընթացիկ երաշխիքներ	28	2,278,000	-
Ոչ ընթացիկ բանկային վարկեր	27	3,506,770	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ վարձակալության գծով	26	3,784,065	4,151,479
Ոչ ընթացիկ հետաձգված եկամուտ		34,368	31,527
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		10,896,128	5,336,375
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր	16	6,309,042	4,499,040
Պահուստներ պարտավորությունների և վճարների գծով	17	802	907,321
Տրամադրված ընթացիկ երաշխիքներ	28	390,514	-
Ընթացիկ բանկային վարկեր	27	1,451,203	-
Ընթացիկ պարտավորություններ վարձակալության գծով	26	1,060,540	1,054,036
Ընթացիկ հետաձգված եկամուտ		28,296	33,723
Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր		859,677	1,382,186
Ստացված կանխավճարներ		671,894	838,589
Այլ հարկային պարտավորություններ		498,787	307,310
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		11,270,755	9,022,205
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		22,166,883	14,358,580
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		44,343,095	58,501,712

Հաստատվել և ստորագրվել է 2021թ. մարտի 18-ին

Հայկ Եսայան
Գլխավոր տնօրեն

Կարեն Մնացականյան
Ֆինանսական տնօրեն

Տաթևիկ Գևորգյան
Գլխավոր հաշվապահ

5-50 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Հազ, ՀՀ դրամ	**Ծնթգ.**	**2020թ.**	**2019թ.**
Շարժական կապի ծառայությունների մատուցումից հասույթ	18	14,811,487	17,784,828
Ֆիքսված կապի ծառայությունների մատուցումից հասույթ	18	12,269,755	13,005,449
Սարքավորումների իրացումից հասույթ	18	2,344,838	3,933,469
Այլ հասույթ	18	115,017	68,940
Ընդամենը հասույթ		**29,541,097**	**34,792,686**
Ծառայությունների ինքնարժեք	19	(14,971,242)	(18,425,026)
Իրացված սարքավորումների ինքնարժեք	19	(2,220,152)	(3,906,842)
Ընդամենը վաճառքի ինքնարժեք		**(17,191,394)**	**(22,331,868)**
Համախառն շահույթ		**12,349,703**	**12,460,818**
Այլ գործառնական եկամուտ	20	1,339,946	1,729,645
Ընդհանուր և վարչական ծախսեր	21	(6,035,970)	(4,471,751)
Իրացման ծախսեր	22	(3,293,747)	(3,601,247)
Այլ գործառնական ծախսեր	23	(1,009,306)	(2,504,479)
Գործառնական գործունեությունից շահույթ		**3,350,626**	**3,612,986**
Ֆինանսական եկամուտ	24	369,334	3,316,233
Ֆինանսական ծախսեր		(713,544)	(655,831)
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ՝ հանած վնաս/ (վնաս՝ հանած օգուտ)		493,149	(1,247,458)
Շահույթ մինչև հարկումը		**3,499,565**	**5,025,930**
Շահութահարկի գծով ծախս	25	(1,209,746)	(2,606,208)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ		**2,289,819**	**2,419,722**
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		**2,289,819**	**2,419,722**

հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Այլ պահուստներ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.		**18,837,709**	**113,060,044**	**2,825,656**	**134,723,409**
Ընդամենը 2019թ. համապարփակ ֆինանսական արդյունք		-	2,419,723	-	2,419,723
Հայտարարված շահաբաժիններ	14	-	(93,000,000)	-	(93,000,000)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.		**18,837,709**	**22,479,766**	**2,825,656**	**44,143,132**
Մնացորդը առ 1 հունվարի 2020թ.		**18,837,709**	**22,479,767**	**2,825,656**	**44,143,132**
Ընդամենը 2020թ. համապարփակ ֆինանսական արդյունք		-	2,289,819	-	2,289,819
Բաշխում նախորդ սեփականատիրոջը	33	-	(4,927,100)	-	(4,927,100)
Տրամադրված փոխառությունների զեղչման ազդեցությունը	10	-	(1,141,436)	-	(1,141,436)
Ֆինանսական երաշխիքի ճանաչում իրական արժեքով	28	-	(2,668,514)	-	(2,668,514)
Կապակցված կողմից վարկային դեբիտորական պարտքի ճանաչում	10		3,290,311	-	3,290,311
Հայտարարված շահաբաժիններ	14	-	(18,810,000)	-	(18,810,000)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.		**18,837,709**	**512,847**	**2,825,656**	**22,176,212**

Հազ. ՀՀ դրամ	**Ծնթգ.**	**2020թ.**	**2019թ.**
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված վճարումներ		33,685,451	40,376,435
Ստացված տոկոսներ		135,250	120,405
Դրամական միջոցներ այլ գործառնական գործունեությունից		265,622	364,903
Ծառայությունների մատուցման գծով վճարումներ		(12,423,862)	(14,058,556)
Վճարումներ աշխատակիցներին		(8,452,895)	(7,396,395)
Վճարված շահութահարկ		(566,100)	(1,075,160)
Վճարումներ բյուջե, բացի շահութահարկը		(3,458,213)	(3,407,032)
Պաշարների մատակարարներին վճարումներ		(2,400,505)	(5,241,737)
Գործուղումների համար կատարվող վճարներ		(42,840)	(143,674)
Այլ գործունեությամբ օգտագործված դրամական միջոցներ		(585,504)	(904,504)
Զուտ դրամական միջոցներ՝ ստացված գործառնական գործունեությունից		**6,156,404**	**8,634,685**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(5,264,563)	(7,599,729)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		141,379	1,189,683
Տրամադրված փոխառությունների դիմաց մարումներ		19,617,066	92,256,410
Զուտ դրամական միջոցներ՝ ստացված ներդրումային գործունեությունից		**14,493,882**	**85,846,364**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Ստացված վարկեր		4,941,895	-
Վարկերի մարում		(142,000)	-
Մայր կազմակերպությանը տրամադրված փոխառություններ		(3,676,194)	-
Բաշխում նախկին սեփականատիրոջը		(4,927,100)	-
Մայր կազմակերպությանը վճարված շահաբաժիններ		(17,900,658)	(88,339,965)
Մայր կազմակերպությանը վճարված շահաբաժինների գծով վճարված շահութահարկ		(940,500)	(4,650,000)
Վարձակալության վճարներ		(1,408,686)	(1,572,156)
Զուտ դրամական միջոցներ՝ օգտագործված ֆինանսական գործունեությամբ		**(24,053,243)**	**(94,562,121)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		51,207	(9,949)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ փոփոխություն		**(3,351,750)**	**(91,021)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**13**	**3,567,276**	**3,658,297**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**13**	**215,526**	**3,567,276**

1 «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի գործունեությունը

«ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Ընկերությունը ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Այն հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ բաժնետոմսերով սահմանափակված պատասխանատվությամբ, և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունն էր «ՎիմպելԿոմ» ՓԲԸ-ն, իսկ վերջնական մայր ընկերությունն էր «VEON Ltd.»-ն (նախկինում՝ «ՎիմպելԿոմ» ԼԹԴ)՝ Նիդեռլանդներում գրանցված իրավաբանական անձ: 2020թ. հոկտեմբերի 28-ին Ընկերության բաժնետոմսերը վաճառվեցին «ԹԻՄ» ՍՊԸ-ին, որը Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերություն է: 2020թ. նոյեմբերի 16-ին «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն վերանվանվեց «ՏԵԼԵԿՈՄ Արմենիա» ՓԲԸ-ի:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունն էր «ԹԻՄ» ՍՊԸ-ն, և Ընկերության վերջնական վերահսկողությունն իրականացնում էին Հայկ և Ալեքսանդր Եսայան եղբայրները:

Հիմնական գործունեությունը. Ընկերության հիմնական գործունեությունը բջջային և ֆիքսված հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումն է: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը մատուցում էր հեռահաղորդակցման ծառայություններ «Beeline» ապրանքանիշով:

Համաձայն կանոնադրության՝ Ընկերության կառավարումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի, տնօրենների խորհրդի և Ընկերության գործադիր մարմնի միանձնյա ղեկավարի՝ գործադիր տնօրենի կողմից:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0014, ք. Երևան, Ազատության պ. 24/1: Ընկերության հիմնական գործունեության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքն է:

2 Ընկերության գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ունենալ տարաբնույթ մեկնաբանումներ, տես՝ Ծանոթագրություն 28:

2020թ. մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի բռնկումը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի՝ Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցության զսպմանն ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինները, ինքնամեկուսացումը, գործարար գործունեության սահմանափակումները, ընդհուպ ձեռնարկությունների փակումը: Այս միջոցառումները, ի թիվս այլոց, խիստ սահմանափակել են Հայաստանում տնտեսական գործունեությունը, բացասաբար են ազդել, և դեռևս անորոշ ժամանակով կարող են շարունակել բացասական ազդեցություն ունենալ գործարարության, շուկայի մասնակիցների, Ընկերության պատվիրատուների, ինչպես նաև Հայաստանի և համաշխարհային տնտեսության վրա:

COVID-19 համավարակից առաջ Հայաստանում աստիճանաբար տեղի էր ունենում գործարար միջավայրի բարելավում, և հաստատվում էր կայուն մակրոտնտեսական քաղաքականության գործելակերպը: Դիտվում էր զգալի տնտեսական աճ՝ 2017-19-ի ընթացքում միջինում 6,8 տոկոս:

Հայաստանի առաջընթացը խաթարվեց 2020թ.: Այն ենթարկվեց COVID-19 համավարակի խիստ ազդեցությանը, ավելին՝ 2021թ. առաջին եռամսյակում գրանցվեց նոր ալիք, և արդյունքում երկիրը մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով աշխարհում հայտնվեց 33-րդ տեղում: Միևնույն ժամանակ, 2020թ. սեպտեմբերի վերջին Ադրբեջանի հետ հակամարտությունը վերաճեց ծանր ռազմական առճակատման: Ռազմական գործողությունները դադարեցվեցին նոյեմբերի 10-ին կայացած հրադադարից հետո:

2 Ընկերության գործառնական միջավայրը (շարունակություն)

Այս կրկնակի ցնցումները հանգեցրեցին կտրուկ տնտեսական անկման, աղքատության աճի և հարկաբյուջետային ցուցանիշների վատթարացման: Այնուամենայնիվ, ճգնաժամի պայմաններում Հայաստանը պահպանել է մակրոտնտեսական ընդհանուր կայունությունը և ապահովել է ճգնաժամին դիմակայելու համար բարվոք արտաքին բուֆերներ:

Ղեկավարությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու և իր հաճախորդներին և աշխատակիցներին ապահովելու ուղղությամբ.

- Աշխատողների COVID-19 հայտնաբերման թեստերի իրականացում Ընկերության հաշվին.
- Հնարավոր վարակակիր աշխատակիցների հայտնաբերում և մեկուսացում: Հաշվետվությունների ներկայացում Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնին.
- Ընկերության գրասենյակների ապահովում ախտահանող և ալկոհոլ պարունակող նյութերով.
- Աշխատակիցներին և հաճախորդներին պաշտպանիչ դիմակների տրամադրում.
- Տեղեկատվական թռուցիկների մշակում և տարածում՝ հիվանդության տարածումը կանխարգելելու համար.
- Նոր աշխատակիցների հավաքագրման նպատակով հարցազրույցների առցանց կազմակերպում, հետևում հավաքագրման ողջ գործընթացին (փաստաթղթերի հավաքագրում, անվտանգության ստուգում, համապատասխանության ստուգում).
- Ուսումնական նյութերի մշակում և տեղափոխում առցանց հարթակ.
- Հեռավար աշխատանքի կազմակերպման քաղաքականության իրականացում և ավագ ղեկավար կազմի, միջին ղեկավարների և աշխատակիցների համար սեմինարների անցկացում հեռավար աշխատանքի արդյունավետ կազմակերպման թեմայով.
- Ներքին հաղորդակցության նոր ուղու գործարկում՝ Ընկերության առօրյա գործունեության մեջ աշխատակիցների ներգրավվածությունը ապահովելու համար.
- Տեսանյութերի մշակում՝ աշխատողների հուզական և ֆիզիկական առողջությունը խթանելու համար.
- Անձնակազմի զարգացման համար առցանց ուսուցողական հարթակի ձեռքբերում:

Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, և Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն դրամական միջոցների հոսքերը: Հետևաբար, գործարար շրջանառության անկումը, արժեթղթերի շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ ոլորտների վրա: Ռուսաստանի տնտեսությունը գտնվում է նավթի ցածր գների, տարածաշրջանում շարունակական քաղաքական ճնշումների, ինչպես նաև ռուսաստանյան որոշ ընկերությունների և անհատների դեմ միջազգային պատժամիջոցների բացասական ազդեցության տակ: Ֆինանսական շուկաները շարունակում են մնալ անկայուն: Տվյալ տնտեսական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ղեկավարությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներն՝ ապահովելու Ընկերության կայուն գործունեությունը: Այդուհանդերձ, ընթացիկ տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ընթացիկ ակնկալիքներն ու գնահատականը կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ

Պատրաստման հիմունքները. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, սկզբնական արժեքի հիմունքով: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այդ սկզբունքները հետևողականորեն կիրառվել են այն բոլոր ժամանակաշրջանների համար, որոնք ներկայացված հաշվետվություններում, եթե այլ բան նշված չէ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Անընդհատության հիմունք. Ղեկավարության կողմից սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով: Այս դատողությունը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական դիրքը, ընթացիկ մտադրությունները, գործառնությունների շահութաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը: Ընկերության ընթացիկ պարտավորությունները գերազանցում են ընթացիկ ակտիվները 6,300,852 հազ. ՀՀ դրամի չափով՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացիկ պարտավորությունների նկատմամբ ընթացիկ ակտիվների գերազանցումը բացատրվում է հիմնականում մայր ընկերությանը տրամադրված փոխառություններով 19,043,648 հազ. ՀՀ դրամի չափով):

Առաջիկա 12 ամիսների դրամական միջոցների հոսքերի կանխատեսումը ցույց է տալիս, որ Ընկերությունը կկարողանա կատարել իր վճարման պարտավորությունները՝ նախատեսված մարման ժամկետներում: Ընկերությունը կանոնավոր բանակցություններ է վարում մատակարարների հետ՝ ավելի լավ վճարման պայմաններ ստանալու, և բանկերի հետ՝ բարենպաստ պայմաններով վարկեր ներգրավելու ուղղությամբ: Ընկերության քաղաքականությունը ուղղված է տոկոսադրույքների նվազագույնի հասցման և գոյություն ունեցող վարկային պորտֆելի համար արտոնյալ ժամանակահատվածի ստացմանը, ինչով էլ պայմանավորված է տեղական բանկերից մեկի հետ 2021թ . մայիսի 7-ին ստորագրված 3,654,630 հազ. ՀՀ դրամ գումարով (7,000 հազ. ԱՄՆ դոլար) երկարաժամկետ վերաֆինանսավորման պայմանագիրը՝ 3 տարի մարման ժամկետով և 12 ամիս արտոնյալ ժամանակահատվածով: Հաշվետու ամսաթվից հետո և մինչև ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթիվը Ընկերությունը մարել է իր կարճաժամկետ վարկերից մեկը՝ 1,273,004 հազ. ՀՀ դրամի չափով:

Այս հանգամանքները, այլ գործոնների հետ միասին, ղեկավարությանը հնարավորություն են տալիս հաստատել, որ Ընկերությունը կշարունակի գործել անընդհատության հիմունքով առնվազն հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում, և կատարել իր ֆինանսական պարտավորությունները:

Արտարժույթի փոխարկում. Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և Ընկերության հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը:

Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ-ի՝ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով Ընկերության ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից եկամուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափված ոչ դրամական հոդվածները փոխարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ հաստատված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափվող ոչ դրամական հոդվածների վրա արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը գրանցվում է որպես իրական արժեքի շահույթի կամ վնասի մաս: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 522.59 ՀՀ դրամ, 1 Եվրո = 641.11 ՀՀ դրամ, 1 ՌԴ ռուբլի = 7.02 ՀՀ դրամ (2019թ. ՝ 1 ԱՄՆ դոլար = 479.70 ՀՀ դրամ, 1 Եվրո = 537.26 ՀՀ դրամ, 1 ՌԴ ռուբլի = 7.77 ՀՀ դրամ):

Հիմնական միջոցներ. Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման պահուստը, եթե վերջինս պահանջվում է: Հիմնական միջոցները ներառում են հետագայում որպես հիմնական միջոց օգտագործման նպատակով կառուցվող ակտիվները:

Հետագա ծախսերը համապատասխանաբար ընդգրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ ճանաչվում են որպես առանձին ակտիվ, միայն այն ժամանակ, երբ հավանական է, որ հիմնական միջոցների համապատասխան միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն և վերջինիս արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում (տես՝ Ծնթգ. 19 և 21): Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը:

Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում այլ գործառնական եկամուտների կամ ծախսերի հոդվածում:

Մաշվածություն. Հողի և անավարտ շինարարության համար մաշվածություն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Շենքեր	20
Փոխանցող հարմարանքներ	6
Սարքավորումներ	6-10
Ավտոմեքենաներ և տրանսպորտային միջոցներ	5
Հարմարանքներ և կցամասեր	10
Այլ	6-10

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը Ընկերությունը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լիներ դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ոչ նյութական ակտիվներ. Ընկերության ոչ նյութական ակտիվները ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետ և հիմնականում ներառում են կապիտալացված համակարգչային ծրագրային ապահովումը, արտոնագրերը, ապրանքանիշերն ու լիցենզիաները:

Ձեռք բերված համակարգչային ծրագրային ապահովումը, արտոնագրերը և ապրանքանիշերը կապիտալացվում են դրանց ձեռք բերման և օգտագործման համար կատարված ծախսերի հիման վրա:

Ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդի կիրառմամբ՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Համակարգչային ծրագրային լիցենզիաներ	4
Այլ լիցենզիաներ	Թույլտվության գործողության ժամկետը, բայց ոչ ավել, քան 10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	4

Արժեզրկվելիս, ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև հետևյալ արժեքներից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր. Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր են համարվում վարձակալված ակտիվների բարելավման համար կատարված կապիտալ ծախսերը: Դրանք մաշեցվում են իրենց օգտակար ծառայության կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում. Մաշվածության և ամորտիզացիայի ենթակա ակտիվները դիտարկվում են արժեզրկման հայտանիշների առկայության տեսանկյունից, երբ իրադարձությունները կամ հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ հաշվեկշռային արժեքը չի կարող փոխհատուցվել: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է այն չափով, ըստ որի ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Ընկերությունը, իրական արժեքը որոշելիս, օգտագործում է զեղչված դրամական միջոցների հոսքերի մոդելը՝ օգտագործելով ղեկավարության կողմից պատրաստված բիզնես ծրագրերով կանխատեսվող դրամական միջոցների հոսքերը: Էական դատողությունները, որոնք օգտագործվում են ակտիվների փոխհատուցվող արժեքը որոշելիս, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում: Ոչ ֆինանսական ակտիվների՝ նախորդ ժամանակահատվածներում արձանագրված արժեզրկումը վերանայվում է հնարավոր վերականգնման տեսանկյունից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական գործիքներ. հիմնական չափման մոտեցումները: Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենաարժանահավատ վկայություն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և Ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Նշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առքուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ: Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի, հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող գներով (չճշգրտվող), (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ):

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարները և կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատոմսերի հավելավճարները և զեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք): Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային կորուստները) զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն պարգևավճարի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփրեդը: Այդպիսի պարգևավճարները կամ զեղչերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում: Գնված կամ սկզբնավորված վարկային առումով արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ ակտիվների համար արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է՝ հաշվի առնելով պարտքային ռիսկը, այսինքն. հաշվարկվում է սկզբնական ճանաչման ժամանակ ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա, և ոչ թե պայմանագրային դրամական հոսքերի հիման վրա:

Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Բոլոր մյուս ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները: Սկզբնական ճանաչումից հետո ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների գծով ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստ անմիջապես հանգեցնելով հաշվապահական վնասի:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Գնահատման կատեգորիաները: Ֆինանսական ակտիվները դասակարգելիս Ընկերությունը կիրառում է չափման հետևյալ կատեգորիաները՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը կախված է (i) ակտիվների համապատասխան պորտֆելի կառավարման համար նախատեսված ընկերության բիզնես մոդելից և (ii) ակտիվի դրամական հոսքերի բնութագրից:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Բիզնես մոդել: Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով Ընկերությունը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք Ընկերության նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բիզնես մոդելը որոշվում է ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով), հիմնվելով այն գործողությունների բոլոր պատշաճ ապացույցների վրա, որոնք Ընկերությունը մտադիր է իրականացնել գնահատման ամսաթվի դրությամբ առկա պորտֆելի համար սահմանված նպատակին հասնելու համար:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. դրամական միջոցների հոսքերի բնութագրերը. Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ: Պարունակվող ածանցյալ գործիքներով ֆինանսական ակտիվները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ որոշելու, թե արդյոք նրանց դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումների հատկանիշներին: Նման գնահատումն իրականացնելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝ տոկոսները ներառում են միայն պարտքային ռիսկը, փողի ժամանակային արժեքը, այլ բազային պարտքային ռիսկերը և շահույթի մարժան:

Այն դեպքերում, երբ պայմանագրային պայմաններն առաջացնում են ռիսկի ենթարկվածություն կամ անկայունություն, որն անհամատեղելի է վարկավորման բազային մեխանիզմի հետ, ֆինանսական ակտիվը դասակարգվում և չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում. Ֆինանսական գործիքները վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ ընդհանուր առմամբ փոփոխվում է պորտֆելը կառավարող բիզնես մոդելը: Վերադասակարգումը կիրառվում է առաջընթաց կերպով՝ առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբից՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո: Ընկերությունը ընթացիկ կամ համեմատական ժամանակահատվածում չի փոխել իր բիզնես մոդելը և վերադասակարգում չի կիրառել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ. Ընկերությունը կանխատեսումային հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների, ինչպես նաև վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով հնարավոր ակնկալվող պարտքային կորուստները: Ընկերությունը գնահատում է պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչում է կորստի պահուստը հաշվետու յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը արտացոլում է. i) անաչառ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով. (ii) փողի ժամանակային արժեքը, և (iii) տեղի ունեցած իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները, առևտրային դեբիտորական պարտքերը Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված ակնկալվող պարտքային կորուստի պահուստի չափով: Վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների համար ակնկալվող պարտքային կորուստի համար առանձին պահուստը ճանաչվում է որպես պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող պարտքային գործիքների համար ամորտիզացված արժեքի փոփոխությունները, զուտ ակնկալվող պարտքային կորուստի պահուստի չափը, ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող պարտքային գործիքների գծով օգուտ՝ հանած վնաս:

Ընկերությունը կիրառում է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի չափման պարզեցված մոտեցում (պահուստների մատրիցա) իր առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար, որոնք ներառում են չմարված դեբիտորական պարտքերը (պայմանագրային ակտիվները): Պահուստների ժամկետայնությունը հիմնված է պարտքային կորուստների պատմական փորձի վրա՝ առևտրային դեբիտորական պարտքերի ամբողջական ժամկետի ընթացքում և ճշգրտվում է ըստ կանխատեսումների գնահատման: Կանխատեսումների գնահատումը ներառում է մակրոտնտեսական գործոններ, ինչպիսիք են ՀՆԱ-ն և գործազրկության մակարդակը: Ընկերությունը դեֆոլտի մակարդակի գծով չի կիրառում կանխատեսումների գնահատման ճշգրտումներ, եթե պարտքային կորուստների գծով մակրոտնտեսական գործոնների և Ընկերության պատմական փորձի միջև չկա հարաբերակցություն: Պահուստների ժամկետայնությունը վերանայվում է ամեն եռամսյակ:

Մնացած ֆինանսական ակտիվների համար Ընկերությունը կիրառում է պարտքային ռիսկերի էական փոփոխման գնահատման մոդելը: Արժեզրկման կորուստները ներկայացվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ արդյունքի մասին հաշվետվությունում՝ «Այլ գործառնական ծախսեր» տողում:

Դեբիտորական պարտքերի նկատմամբ հաշվեգրված տույժերը, տուգանքները և տոկոսները ներառվում են արժեզրկման պահուստի կազմի մեջ: Խմբային սկզբունքով արժեզրկման դրույքաչափերը վերանայվում են եռամսյակային պարբերականությամբ՝ դեբիտորական հաշիվների հավաքագրելիության հիման վրա: Խմբային հիմունքով արժեզրկման դրույքաչափերը առ 31 դեկտեմբերի 2020թ. հետևյալն են.

Դեբիտորական պարտքերի առաջացման ժամկետը	**Ֆիքսված կապ**	**Բջջային կապ**	**Ռոումինգ**	**Փոխկապակցում**	**Դիլերական**
Ոչ ժամկետանց	2%	3%	13%	2%	0%
1-ից 30 օր	6%	46%	23%	23%	11%
31-ից 60 օր	32%	73%	41%	82%	24%
61-ից 90 օր	57%	86%	64%	95%	30%
91-ից 120 օր	79%	94%	84%	99%	38%
121 օրից ավել	100%	100%	100%	100%	100%

Խմբային հիմունքով արժեզրկման դրույքաչափերը առ 31 դեկտեմբերի 2019թ. հետևյալն են.

Դեբիտորական պարտքերի առաջացման ժամկետը	**Ֆիքսված կապ**	**Բջջային կապ**	**Ռոումինգ**	**Փոխկապակցում**	**Դիլերական**
Ոչ ժամկետանց	2%	3%	31%	0%	3%
1-ից 30 օր	7%	46%	34%	2%	16%
31-ից 60 օր	33%	63%	49%	13%	23%
61-ից 90 օր	53%	76%	60%	44%	44%
91-ից 120 օր	75%	96%	76%	62%	54%
121 օրից ավել	100%	100%	100%	100%	100%

Եթե ամորտիզացված արժեքով պահվող արժեզրկված ֆինանսական ակտիվի պայմանները վերանայվում են բանակցությունների արդյունքում կամ մեկ այլ ձևով վերափոխվում են կողմի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով մինչև պայմանների վերափոխումը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Վերաձևակերպվող ակտիվը ապաճանաչվում է և նոր ակտիվը ճանաչվում է իր իրական արժեքով, միայն այն դեպքում, եթե ակտիվի ռիսկերը և հատույցները էականորեն փոխվել են: Սա սովորաբար հաստատվում է սկզբնական դրամական միջոցների հոսքերի և նոր ակնկալվող դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքների միջև էական տարբերության առկայությամբ:

Եթե հաջորդող ժամանակաշրջանում արժեզրկումից կորստի գումարը նվազում է և այդ նվազումը կարելի է անկողմնակալ կերպով կապել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա անցյալում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է՝ ճշգրտելով պահուստային հաշիվը տարվա շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում. Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Ընկերությունը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Վերականգնման հիմնավորված ակնկալիքների բացակայության հիմնական հայտանիշ է հանդիսանում վերջնաժամկետի լրանալը: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Ընկերությունը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Ընկերությունը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում. Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Ֆինանսական պարտավորությունների չափման կատեգորիաները. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում՝ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ. (i) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններից: Այս դասակարգումը վերաբերում է ածանցյալ ֆինանսական գործիքներին, առևտրային նպատակով պահվող ֆինանսական պարտավորություններին (օրինակ, արժեթղթերի կարճ դիրքեր), պայմանական հատուցմանը, որը բիզնեսի միավորման ժամանակ ճանաչվում է ձեռք բերողի կողմից և սկզբնական ճանաչման պահին որպես այդպիսիք սահմանված այլ ֆինանսական պարտավորություններին; և (ii) ֆինանսական երաշխավորության պայմանագրերի և փոխատվության հանձնառությունների:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Ֆինանսական գործիքների հաշվանցում. Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտադրություն կա՛մ մարելու զուտ արժեքը, կա՛մ էլ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Դիտարկվող հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ. Ընկերությունը վարձակալում է տարբեր գրասենյակային տարածքներ, հող և շենքեր սարքավորումների տեղակայման համար: Պայմանագրերում կարող են ներառվել և՛ բաղկացուցիչներ, որոնք հանդիսանում են վարձակալության պայմանագրեր, և՛ բաղադրիչներ, որոնք վարձակալության պայմանագրեր չեն հանդիսանում: Ընկերությունը պայմանագրային հատուցումը բաշխում է վարձակալության բաղադրիչների և այն բաղադրիչների միջև, որոնք վարձակալություն չեն հանդիսանում՝ հիմք ընդունելով այդ բաղադրիչների առանձնացված գործարքի հարաբերական գինը:

Վարձակալության պայմանագրերից առաջացած ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրենց ներկա արժեքով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը,
- վարձակալության վճարումները, որոնք կատարվել են վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ մինչ այդ ամսաթիվը, հանած ստացված վարձակալության խրախուսումները,
- ցանկացած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալության պայմանագրով ակտիվի նախատեսված վիճակը վերականգնելու համար պահանջվող ծախսումները:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որպես կանոն, ամորտիզացվում են գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի կամ վարձակալության ժամկետի ընթացքում՝ կախված նրանից, թե որն ավելի շուտ կավարտվի: Եթե Ընկերությունը գնման օպցիոնն իրագործելու բավարար չափով վստահություն ունի, այն օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ամորտիզացնում է հիմնական ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ընկերությունն օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիան հաշվարկում է գծային մեթոդով դրանց գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, մասնավորապես.

Օգտագործման իրավունքի տեսակ	Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով
Հող՝ սարքավորումների տեղակայման համար	8
Շենքեր՝ սարքավորումների տեղակայման համար	8
Գրասենյակային տարածքներ	3

Վարձակալության գծով պարտավորություններ. Վարձակալության պայմանագրերից բխող պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով: Վարձակալության գծով պարտավորությունները ներառում են հետևյալ վարձակալության վճարների զուտ ներկա արժեքը.

- հաստատուն վճարներ (ներառյալ, ըստ էության, հաստատուն վճարումները) հանած ստացման ենթակա վարձակալության խրախուսումները,

- վարձակալության փոփոխուն վճարները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքաչափից և սկզբնապես չափվում են օգտագործելով մեկնարկի ամսաթվի դրությամբ գործող ինդեքսը կամ դրույքաչափը,

- վարձակալության պայմանագրերը դադարեցնելու համար տուգանքների վճարները, եթե վարձակալության ժամկետը արտացոլում է Ընկերության կողմից այդ օպցիոնի իրագործումը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Վարձակալության երկարաձգման և դադարեցման օպցիոնները նախատեսված են Ընկերության մի շարք պայմանագրերում: Այս պայմաններն օգտագործվում են Ընկերության գործունեության մեջ օգտագործվող ակտիվները կառավարելիս առավելագույն գործառնական ճկունություն ապահովելու համար: Պարտավորության գնահատումը ներառում է նաև վարձակալության վճարներ, որոնք կկատարվեն որպես երկարաձգման օպցիոնների իրագործման մաս, եթե բավարար վստահություն կա, որ վարձակալությունը կերկարաձգվի:

Վարձակալության վճարները զեղչվում են՝ օգտագործելով վարձակալության պայմանագրով ենթադրվող տոկոսադրույքը: Եթե այս դրույքաչափը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, ինչը, որպես կանոն, տեղի է ունենում Ընկերության մոտ առկա վարձակալության պայմանագրերի դեպքում, ապա Ընկերությունն օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, որը այն դրույքաչափն է, որով Ընկերությունը կարող էր համանման ժամանակահատվածում և համանման ապահովությամբ ներգրավել փոխառու միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեին համանման տնտեսական պայմաններում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի արժեքին համարժեք ակտիվ ձեռք բերելու համար:

Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը որոշելու համար Ընկերությունը.

- հնարավորության դեպքում, որպես նախնական տեղեկատվություն օգտագործում է վերջերս երրորդ անձի կողմից ստացված ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը և ճշգրտում է այն, հաշվի առնելով ֆինանսավորումը ստանալու պահից հետո տեղի ունեցած ֆինանսավորման պայմանների փոփոխությունները,

- օգտագործում է ձևավորման այնպիսի մոտեցում, որի դեպքում հաշվարկը սկսվում է առանց ռիսկի տոկոսադրույքից, որը ճշգրտվում է պարտքային ռիսկի չափով, և

- կատարում է ճշգրտումներ հաշվի առնելով վարձակալության պայմանագրի առանձնահատկությունները, օրինակ, վարձակալության ժամկետը, երկիրը, արժույթը և ապահովությունը:

Վարձակալության վճարները բաժանվում են պարտավորությունների հիմնական գումարի և ֆինանսական ծախսերի: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում վարձակալության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի վրա հաստատուն պարբերական տոկոսադրույքն ապահովելու համար:

Շահութահարկ. Շահութահարկը ներկայացվում է ֆինանսական հաշվետվություններում համաձայն օրենսդրության, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ հարկային մարմիններից փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Շահութահարկից տարբերվող այլ հարկերը, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս: Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույքները, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցել ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց և, երբ հետաձգված շահութահարկի ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող անձից կամ տարբեր հարկատուներից, որտեղ կա մնացորդները զուտ հիմունքով կարգավորելու մտադրություն:

Անորոշ հարկային դիրքեր. Ընկերության անորոշ հարկային դիրքերը գնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Շահութահարկի գծով պարտավորությունները հաշվի են առնվում այն դեպքում, երբ ղեկավարությունը գտնում է, որ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման հավանականությունը ավելի մեծ է, քան դրանց բացակայությունը, եթե Ընկերության հարկային գործունեությունը վիճարկվի հարկային մարմինների կողմից: Գնահատումը հիմնված է այն հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունների վրա, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նմանատիպ հարցերի շուրջ ցանկացած հայտնի դատական կամ այլ որոշումների վրա: Տուգանքների, տոկոսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են ղեկավարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը:

Շահութահարկի անորոշության գծով ճշգրտումները՝ բացառությամբ տույժերի և տուգանքների, արտացոլվում են շահութահարկի գծով ծախսերում: Շահութահարկի անորոշության գծով ճշգրտումները՝ կապված տույժերի և տուգանքների հետ, արտացոլվում են համապատասխանաբար ֆինանսական ծախսերի և այլ զուտ շահույթների/(վնասների) կազմում:

Ավելացված արժեքի հարկ. Վաճառքին վերաբերող ավելացված արժեքի հարկը ենթակա է վճարման հաճախորդներին ապրանքների հանձնման կամ ծառայությունների մատուցման ժամանակ: Գնմանը վերաբերող ԱԱՀ-ը սովորաբար հաշվանցվում է վաճառքին վերաբերող ԱԱՀ-ի դիմաց, ԱԱՀ-ի հարկային հաշիվը ստանալուց և հաստատելուց հետո: Հարկային մարմինները թույլատրում են ԱԱՀ-ը հաշվարկել զուտ հիմունքով: Վաճառքին և գնումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են համախառն հիմունքով և առանձին բացահայտվում են որպես ակտիվ և պարտավորություն: Դեբիտորական պարտքերի արժեզրկման համար պահուստ ստեղծելու դեպքում արժեզրկումից կորուստը ճանաչվում է պարտապանի համախառն գումարում, ներառյալ ԱԱՀ-ը:

Պաշարներ. Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Կանխավճարներ. Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանելով արժեզրկման համար պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Ընկերությունը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ապրանքը կամ ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Կանոնադրական կապիտալ. Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված մուտքերից նվազեցում՝ հարկումից հետո: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, սեփական կապիտալում գրանցվում է որպես էմիսիոն եկամուտ:

Այլ պահուստներ. Այլ պահուստները ներկայացված են Հայաստանի Հանրապետության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի համապատասխան ստեղծված չբաշխվող պահուստային հիմնադրամով: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չպետք է Ընկերության կանոնադրական կապիտալի 15%-ից պակաս լինի:

Պահուստներ պարտավորությունների և վճարների համար. Պարտավորությունների և վճարների գծով պահուստները անորոշ ժամանակով կամ գումարով ոչ ֆինանսական պարտավորություններ են: Դրանք հաշվեգրվում են, երբ Ընկերությունը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի իրավաբանորեն սահմանված կամ ենթադրվող պարտավորություն և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, ինչպես նաև հնարավոր է արժանահավատորեն գնահատել պարտավորության չափը: Պահուստները գնահատվում են՝ ելնելով ծախսերի ներկա արժեքից, որն, ինչպես ակնկալվում է, կպահանջվի պարտավորության մարման համար՝ զեղչված մինչև հարկումը տոկոսադրույքով, որն արտացոլում է տվյալ պարտավորությունների գծով գումարների և ռիսկերի ներկա արժեքը: Ժամանակի ընթացքում պահուստի աճը ճանաչվում է որպես տոկոսային ծախս:

Ակտիվների ապագործարկման պահուստ. Ակտիվի ապամոնտաժման համար գնահատվող անհրաժեշտ ծախսերը (ակտիվների ապագործարկման պահուստը) ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին ձեռք բերման պահին կամ վերջինիս օգտագործման որոշակի փուլում: Երբ պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ տնտեսական օգուտների արտահոսքի գնահատված ժամկետների կամ գումարների, ինչպես նաև զեղչման դրույքի փոփոխության արդյունքում անհրաժեշտություն է առաջանում կարգավորել գոյություն ունեցող ապագործարկման պահուստի չափը, ապա փոփոխվում է նաև պահուստին համապատասխանող ակտիվի սկզբնական արժեքը:

Հատուցումներ աշխատակիցներին. Աշխատավարձը, պետական կենսաթոշակային և Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումները, տարեկան վճարովի արձակուրդը, հիվանդության պատճառով բացակայությունը և պարգևավճարները հաշվեգրվում են այն տարում, երբ տվյալ հատուցումները որոշող համապատասխան ծառայությունները մատուցվել են Ընկերության աշխատակիցների կողմից: Պետական կենսաթոշակային և սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումներից բացի, Ընկերությունը չունի կենսաթոշակային կամ համանման այլ վճարումներ կատարելու իրավական պարտավորություն:

Հասույթի ճանաչում. Ընկերության եկամտի աղբյուր են հանդիսանում ձայնային ծառայությունների մատուցումը, տվյալների փոխանցման ծառայությունները և անլար կապի լայնածավալ ծառայությունների ու լայնաշերտ ինտերնետի հասանելիության միջոցով այլ հեռահաղորդակցման ծառայությունները, ինչպես նաև սարքավորումների և պարագաների վաճառքը: Ապրանքներն ու ծառայությունները կարող են տրամադրվել առանձին կամ ծառայությունների համակցված փաթեթով:

Եթե պայմանագրի արդյունքը չի կարող արժանահավատ որոշվել, ապա պայմանագրային հասույթը ճանաչվում է կատարված պայմանագրային ծախսերի չափով, որոնք կարող են փոխհատուցվել:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Ծառայությունների վաճառքից ստացված հասույթ. Ծառայությունների վաճառքից ստացված հասույթը իր մեջ ներառում է գնորդների հետ կնքած պայմանագրերով նախատեսված եթերաժամից ստացված հասույթը և հաշվարկների կանխավճարային համակարգի շրջանակներում, ամսեկան բաժանորդային վճարը, փոխկապակցման ծառայությունից հասույթը, ռոումինգի գծով հասույթը և այլ ծառայությունները: Լրացուցիչ ծառայությունները ներառում են կարճ հաղորդագրություններ (SMS), մուլտիմեդիային հաղորդագրություններ (MMS), համարի որոշում, զանգի սպասարկում, տվյալների փոխանակում, բջջային ինտերնետ, ներբեռնվող կոնտենտ և այլ ծառայություններ: Լրացուցիչ կոնտենտային ծառայություններից հասույթը արտացոլվում է՝ հանած համապատասխան ծախսերը, երբ Ընկերությունը հանդիսանում է որպես գործակալ կոնտենտ-պրովայդերների համար կամ առանց համապատասխան ծախսերի, երբ Ընկերությունը հանդիսանում է որպես գործարքի հիմնական պարտավորությունները կրող կողմ:

Սահմանված ժամանակահատվածով ծառայություններից, ներառյալ ֆիքսված սակագնային պլանները և ամսական բաժանորդագրությունները, ստացված հասույթը, որպես կանոն, ճանաչվում է հավասարապես ժամանակի ընթացքում: Սակագնային պլաններից ստացված հասույթը, որոնց համար վճարումը գանձվում է փաստացի օգտագործման դիմաց, ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ դրանց օգտագործման աստիճանով: Որոշ սակագնային պլաններ հաճախորդներին հնարավորություն են տալիս հաջորդ ժամանակահատված փոխանցել չօգտագործված ծառայությունները: Այդ սակագնային պլաններից ստացված հասույթը, որպես կանոն, հավասարապես ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ըստ դրանց օգտագործման աստիճանի:
Մի քանի ծառայությունների բաղադրիչներ ներառող պայմանագրերի (ինչպես օրինակ՝ ձայնը, տեքստը, տվյալները) համար հասույթը բաշխվում է առանձին վաճառքի գնի հիման վրա: Այդ ծառայությունների առանձին վաճառքի գինը որոշվում է հաշվի առնելով այն գինը, որը գանձվում է այն գնորդներից, ովքեր վճարում են ծառայության համար ըստ օգտագործման աստիճանի:

Սկզբնական վճարումները, ներառյալ ակտիվացման կամ կապի վճարները, հավասարապես ճանաչվում են պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում: Անորոշ ժամկետով պայմանագրերի (որպես կանոն՝ կանխավճարային պայմանագրերը) դեպքում սկզբնական վճարումներից հասույթը ճանաչվում է բաժանորդի գոյության միջին տևողության ընթացքում:

Այլ օպերատորներից ստացված հասույթը՝ ներառյալ միջցանցային միացումների և ռոումինգի վճարը, ճանաչվում է պայմանագրային գնի հիման վրա՝ հանած ծավալի համար նախատեսված ենթադրյալ հետընթաց զեղչերը: Կուտակված փորձն օգտագործվում է զեղչերի գնահատման և տրամադրման համար:

Ծառայությունների վաճառքից ստացված ողջ հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում:

Սարքավորումների և պարագաների վաճառք. Սարքավորումներն ու պարագաները սովորաբար հաճախորդներին վաճառվում են առանձին կամ ծառայությունների փաթեթների հետ միասին: Ծառայությունների փաթեթների հետ միասին վաճառքի դեպքում հասույթը բաշխվում է համամասնորեն՝ ելնելով առանձին վաճառքի և ծառայությունների փաթեթի գնից:

Բջջային կապի սարքավորումների և պարագաների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ սարքավորումը վաճառվում է բաժանորդին կամ եթե այն վաճառվում է միջնորդի միջոցով, երբ միջնորդը սարքի նկատմամբ վերահսկողություն է սահմանել, և միջնորդն իրավունք չունի այն վերադարձնել: Ֆիքսված կապի սարքավորումների վաճառքից ստացված հասույթը չի ճանաչվում այնքան ժամանակ, քանի դեռ այդ սարքավորումների տեղադրումն ու փորձարկումն ավարտված չէ, և սարքավորումը չի ընդունվել գնորդի կողմից:

Սարքավորումների և պարագաների վաճառքից ստացված ողջ հասույթը ճանաչվում է ժամանակի որոշակի պահին:

Պայմանագրի գծով մնացորդներ. Դեբիտորական պարտքերը և պայմանագրերի գծով ակտիվները հիմնականում դասվում են այն միջոցների շարքին, որոնք ձեռք են բերվում գործակալների, կապի այլ օպերատորների և հետվճարային կապի սակագնային պլան ունեցող հաճախորդների կատարած վճարումների արդյունքում: Պայմանագրերի գծով ակտիվները տեղափոխվում են դեբիտորական պարտքեր, երբ իրավունքները դառնում են անվերապահ, որը սովորաբար տեղի է ունենում այն ժամանակ, երբ Ընկերությունը գնորդին ներկայացնում է հաշիվ-ապրանքագիր:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներ (շարունակություն)

Պայմանագրի գծով պարտավորությունները գլխավորապես դասվում են չփոխհատուցվող դրամական միջոցների շարքին, որոնք ձեռք են բերվել կանխավճարային համակարգով ֆիքսված կամ փաստացի օգտագործման դիմաց վճարվող սակագնային պլան ունեցող գնորդներից: Պայմանագրերի գծով պարտավորությունները ներկայացված են որպես «Հետաձգված եկամուտ» և «Ստացված կանխավճարներ» ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: «Հետաձգված եկամտի» մնացորդները տարվա սկզբում ճանաչվել են որպես հասույթ տարվա ընթացքում:

Դրամական միջոցների հավաքագրման մեթոդ հանդիսացող կանխավճարային քարտերի իրացումը արտացոլվում է բաժանորդներից ստացված կանխավճարների տեսքով՝ ապագայում մատուցվող ծառայությունների համար և հետաձգվում է մինչև այն պահը, երբ հաճախորդը օգտագործի իրեն հասանելի ժամանակը: Կանխավճարային քարտերը կարող են լինել անժամկետ, սակայն նրանց գործունեության ժամանակաշրջանը սահմանափակվում է օրենսդրությամբ. չօգտագործված կանխավճարային մնացորդները գումարվում են ծառայությունների մատուցումից ստացված հասույթին՝ ակնկալվող կանխավճարային մնացորդի հիման վրա, որի ժամկետը կլրանա՝ չօգտագործված մնալով:

Գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումներ. Գնորդների հետ պայմանագիր կնքելուն ուղղված որոշ լրացուցիչ ծախսումներ («գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումներ») ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված ծախսեր: Որպես կանոն, նման ծախսերը, վերաբերում են վարձատրությանը, որը վճարվել է երրորդ կողմերին՝ դիլերներին ու սեփական անձնակազմին և ամորտիզացվում են գծային մեթոդի կիրառմամբ՝ բաժանորդի գոյության միջին տևողության ընթացքում: Ընկերությունը կիրառում է գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումների համար նախատեսված գործնական պարզեցումներ, որոնց համար մաշվածությունը 12 ամսից ավելի կարճ կլիներ: Նման ծախսերը գլխավորապես վերաբերում են երրորդ կողմի դիլերներին վճարվող միջնորդավճարներին՝ գնորդի կանխավճարային հաշվի ավելացման և քարտերի վաճառքի դեպքում:

Բաժանորդի գոյության միջին տևողություն. Ղեկավարությունը գնահատում է բաժանորդի գոյության միջին տևողությունը հասույթի (օրինակ, սկզբնական վճարումների միջոցով), անորոշ ժամկետով պայմանագրերի և գնորդների ներգրավմանն ուղղված ծախսումների միջոցով: Բաժանորդի գոյության միջին տևողությունը հաշվարկվում է վիճակագրության, մասնավորապես՝ տարբեր սեգմենտների (ինչպիսիք են բջջային և ֆիքսված հեռախոսակապի, կանխավճարային և հետվճարային) բաժանորդների արտահոսքի ցուցանիշների հիման վրա:

Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն. Թողարկումից հետո այս ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Ընկերության ղեկավարության հաստատումը, ով լիազորել է այս ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում:

Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Հարկային օրենսդրություն. Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա են տարբեր մեկնաբանումների (տե՛ս Ծանոթագրություն 28):

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա ակտիվ շուկա այդպիսի գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում նմանատիպ գործարքների գնահատումը չկապակցված կողմերի հետ և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 33-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում. Ակնկալվող պարտքային կորուստների չափումը նշանակալի գնահատական է, որի ստացման համար օգտագործվում է չափման մեթոդոլոգիա, մոդել և մուտքային տվյալներ: Հետևյալ բաղադրիչներն ունենում են զգալի ազդեցություն ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի վրա. ակնկալվող դրամական միջոցների հոսքերի գումարը և դեֆոլտի հավանականությունը: Եթե կանխատեսվող ժամանակահատվածում (2021-2027թթ.) ազատ դրամական միջոցների հոսքերը նվազեն 10%-ով, ապա տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստն էապես չի փոխվի: Եթե դեֆոլտի հավանականությունն ավելի բարձր լինի 10%-ից, ապա տրամադրված փոխառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստը կմեծանա 654,871 հազ. ՀՀ դրամի չափով (ենթակա է ճանաչման 2020թ.՝ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում):

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում: 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը հայտնաբերել է հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և օգտագործման իրավունքի ակտիվների գծով նախկինում ճանաչված արժեզրկման վերականգնման հայտանիշներ: Արժեզրկման վերականգնման չափը գնահատելու համար կատարվել է արժեզրկման թեստ՝ հիմք ընդունելով օգտագործման արժեքի (ՕԴՀ մոդել) մեթոդը: Դրամական միջոցների հոսքերի կանխատեսումներում օգտագործված հաշվարկները հիմնված են 2021թ.-ին ղեկավարության կողմից հաստատված ֆինանսական բյուջեի վրա: Հետագա տարիների դրամական հոսքերը (2022-2026թթ. և վերջնական ժամանակահատվածը) հիմնված էին ղեկավարության կողմից պատրաստված երկարաժամկետ կանխատեսման վրա՝ հիմք ընդունելով մատուցվող համանման ծառայությունների ծավալի միտումները: Ապագա ժամանակաշրջանների գները որոշվել են շուկայի միտումների հիման վրա (ձայնային կապի ՄԲՄՀ-ի նվազում և տվյալների փոխանցման գծով ՄԲՄՀ-ի աճ), հաշվի առնելով նաև գնաճի կանխատեսումները:

Ապագա դրամական միջոցների հոսքերը մինչ ընթացիկ արժեքը զեղչելու ժամանակ օգտագործվել է 15,49% զեղչի դրույքաչափ՝ մինչև հարկումը: Երկարաժամկետ աճի տեմպը՝1.9%, օգտագործվել է 2026թ. հետո ընկած ժամանակահատվածների համար: Զեղչի տոկոսադրույքը սկզբում որոշվել է ԱՄՆ դոլարով՝ հիմնվելով 26 տարի ժամկետայնությամբ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի առանց ռիսկի տոկոսադրույքի վրա՝ ճշգրտված ռիսկի հավելավճարի չափով բաժնային արժեթղթերում ներդրումների ավելացման ռիսկով և Ընկերությանը բնորոշ համակարգային ռիսկով: Բաժնային ներդրումների շուկայական ռիսկի հավելավճարը կազմում է 5,5%: Չափի ռիսկի հավելավճարը սահմանվել է 3.39% մակարդակում՝ հիմք ընդունելով Ընկերության չափի համար Duff & Phelps Տարեգրքի տվյալները: Կապիտալի միջին կշռված արժեքը հիմնված է ոլորտի սեփական կապիտալ/պարտք հարաբերակցության վրա: Ընկերության ֆունկցիոնալ արժույթով (ՀՀ դրամ) արտահայտված զեղչի տոկոսադրույքը ճշգրտվում է՝ Հայաստանում և ԱՄՆ-ում գնաճի երկարաժամկետ կանխատեսման հիման վրա:

Ստորև ներկայացված են հիմնական ենթադրությունները, որոնց հիման վրա որոշվել է օգտագործման արժեքը և որոնց նկատմամբ փոխհատուցվող գումարը ցուցաբերում է առավել զգայունություն.

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

	2021 – 2026թթ.
Տվյալների տարանցման մեծածախ ծառայություններից հասույթ (արտասահմանյան հաճախորդներ), մլն. ՀՀ դրամ	5,100,000
Շարժական կապ – հաճախորդների բազայի տարեկան աճ 2022թ. -ից, %	3.0%
Շարժական կապ – ՄԲՄՀ տարեկան աճ 2022թ. -ից, %	2.4%
Ֆիքսված ինտերնետ կապ – հաճախորդների բազայի տարեկան աճ 2022թ. -ից, %	5.0%
Ֆիքսված ինտերնետ կապ – ՄԲՄՀ տարեկան աճ 2022թ. -ից, %	4.0%

Ղեկավարության հաշվարկները հաստատել են ոչ ընթացիկ ոչ ֆինանսական ակտիվների համար ճանաչված արժեզրկման ամբողջական վերականգնումը: Արժեզրկման վերականգնման ընդհանուր գումարը կազմել է 5,279,203 հազ. ՀՀ դրամ, ներառյալ 4,266,356 հազ. ՀՀ դրամ հիմնական միջոցների համար, 577,546 հազ. ՀՀ դրամ ոչ նյութական ակտիվների համար և 435,301 հազ. ՀՀ դրամ՝ Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսերի համար: Տե՛ս համապատասխանաբար Ծանոթագրություններ 7, 8 և 9:

Հաջորդ աղյուսակում ներկայացված են ստորև ներկայացված հիմնական ենթադրությունների հավանական փոփոխությունների նկատմամբ արժեզրկման թեստի զգայունության վերլուծության տվյալները: Ստորև բերված աղյուսակի համարները ներկայացնում են Ընկերության համար օգտագործման արժեքի չափի վրա հավանական ազդեցությունը (ԶԴՀ մոդելի արդյունք):

	Օգտագործման արժեքի վրա ազդեցությունը
Տվյալների տարանցման մեծածախ ծառայություններից հասույթի նվազում 10%-ով	(1,890,164)
Շարժական կապ – հաճախորդների բազայի աճի տեմպի նվազում 2%-ով	(4,970,970)
Շարժական կապ – ՄԲՄՀ տարեկան աճի նվազում 2%-ով	(5,017,890)
Ֆիքսված ինտերնետ կապ – հաճախորդների բազայի աճի տեմպի նվազում 3%-ով	(1,980,330)
Ֆիքսված ինտերնետ կապ – ՄԲՄՀ տարեկան աճի նվազում 3%-ով	(2,479,110)

Վերոհիշյալ ենթադրությունների փոփոխությունները չեն հանգեցնի ոչ ֆինանսական ոչ ընթացիկ ակտիվների հաշվեկշռային արժեքի փոփոխության:

Տրամադրված երաշխիքի իրական արժեքի չափում: 2020 թ.-ին Ընկերությունը երաշխիք է տրամադրել հօգուտ իր անմիջական մայր ընկերության (Ծանոթագրություն 28): ԱՄՆ դոլարով արտահայտված բանկային վարկի ընդհանուր գումարը կազմել է 16,204,800 ՀՀ դրամ (32 000 հազ. ԱՄՆ դոլար): Երաշխիքը ճանաչվել է իրական արժեքով և ճանաչման ամսաթվին կազմել է 2,668,514 հազ. ՀՀ դրամ (իրական արժեքի չափման մանրամասները բացահայտված են ծանոթագրություն 31-ում): Երաշխիքի գնահատման վերաբերյալ ղեկավարության հիմնական դատողությունները վերաբերում են երաշխավորված վարկի մարման առաջնահերթությանը, զեղչի տոկոսադրույքին (8.0% ԱՄՆ դոլարով արտահայտված վարկի համար) և երաշխավորված վարկի գործողության ժամանակահատվածում ազատ դրամական միջոցների հոսքերի գումարներին: Եթե կանխատեսվող ժամանակահատվածում (2021-2027թթ.) ազատ դրամական միջոցների հոսքերը 10% -ով ցածր լինեն, ապա տրամադրված երաշխիքի իրական արժեքը էապես չի փոխվի:

Երկարաձգման և դադարեցման օպցիոններ. Երկարաձգման և դադարեցման օպցիոնները ներառված են Ընկերության հիմնական միջոցների մի շարք վարձակալական պայմանագրերում: Դրանք օգտագործվում են Ընկերության գործունեության ընթացքում օգտագործվող ակտիվների կառավարման առումով գործառնական ճկունությունն առավելագույնի հասցնելու համար: Վարձակալության ժամկետը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք տնտեսական խթան են ստեղծում երկարաձգման օպցիոնի կիրառման կամ դադարեցման օպցիոնի չկիրառման համար: Երկարաձգման օպցիոնները (կամ դադարեցման օպցիոնին հաջորդող ժամանակահատվածները) ներառվում են վարձակալության ժամկետում միայն այն դեպքում, եթե կա ողջամիտ համոզվածություն, որ վարձակալության ժամկետը կերկարաձգվի (կամ չի դադարեցվի): Որոշակի վարձակալությունների համար ղեկավարությունը դիտարկել է

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Ընկերությանը հասանելի վաղաժամկետ դադարեցման օպցիոնները:

Սա առավելապես կիրառելի է այն դեպքերում, երբ վարձակալած շինություններում տեղակայված սարքավորումների օգտակար ծառայության ժամկետը պակաս է վարձակալության պայմանագրի տևողությունից: Վարձակալության պայմանագրերի վաղաժամկետ դադարեցումը Ընկերության համար չի հանգեցնում որևէ էական լրացուցիչ պարտավորությունների կամ ծախսերի:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ. ՖՀՄՍ 16-ի փոփոխություն (թողարկվել է 2020 թ. մայիսի 28-ին ուժի մեջ է մտնում 2020թ. հունիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությամբ վարձակալներին տրվում է հայեցողական հնարավորություն՝ որոշելու, թե արդյոք COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնությունները հանդիսանում են վարձակալության պայմանների փոփոխություն: Վարձակալները կարող են իրենց հայեցողությամբ վարձավճարների գծով արտոնությունների չափումը իրականացնել այնպես, ինչպես եթե դրանք չհանդիսանային վարձակալության պայմանների փոփոխություն: Գործնական նպատակահարմարությամբ պայմանավորված այս լուծումը վերաբերում է միայն այն վարձավճարների գծով արտոնություններին, որոնք ուղղակիորեն հանդիսանում են COVID-19 համավարակի հետևանք, և միայն այն դեպքում, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները. վարձավճարներում փոփոխությունները հանգեցնում են վարձակալության դիմաց հատուցման այնպիսի վերանայման, որ այն ըստ էության հավասար լինի, կամ չգերազանցի վերանայումից անմիջապես առաջ վարձակալության դիմաց հատուցման գումարը. վարձավճարների ցանկացած նվազեցում ազդում է միայն 2021թ. հունիսի 30-ից ոչ ուշ վճարման ենթակա վճարումների վրա. և վարձակալության այլ պայմանների մեջ տեղի չեն ունենում էական փոփոխություններ:

Ընկերությունը վարձատուների հետ համաձայնություն է ձեռք բերել գույքի վարձակալության շրջանակներում վարձակալության վճարի տարբեր զիջումների վերաբերյալ, և չի կիրառում գործնական նպատակահարմարությունը:

Ստորև թվարկված վերանայված ստանդարտների կիրառումը Ընկերության համար պարտադիր է՝ սկսած 2020թ. հունվարի 1-ից, սակայն դրանք էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության վրա.

- Ֆինանսսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքների փոփոխություններ (թողարկված են 2018թ. մարտի 29-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

- Բիզնեսի սահմանում. ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ (թողարկված են 2018թ. հոկտեմբերի 22-ին և գնումների մասով ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

- Նյութականության որոշում. ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ (թողարկված են 2018 թ. հոկտեմբերի 31-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

- Բազային տոկոսադրույքի բարեփոխում. ՖՀՄՍ 9-ի, ՀՀՄՍ 39-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ (թողարկված են 2019 թ. սեպտեմբերի 26-ին և ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2021թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը - ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունվարի 23-ին և ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Կիրառման սահմանափակ շրջանակ ունեցող այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով:

Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Մարումը հետաձգելու իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը ժամանակաշրջանի վերջում բավարարում է բոլոր կիրառելի պայմանները: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը. ուժի մեջ մտնելու ամսաթվի հետաձգում. ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հուլիսի 15-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները, որոնք վերաբերում են պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ և երկարաժամկետ դասակարգմանը, թողարկվել են 2020թ. հունվարին, և նախնական ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվել 2022թ. հունվարի 1-ը: Այնուամենայնիվ, COVID-19 համավարակով պայմանավորված, ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է մեկ տարով, որպեսզի կազմակերպությունները բավարար ժամանակ ունենան փոփոխությունների արդյունքում դասակարգումներում տեղի ունեցող փոփոխությունները ներդնելու համար:

«Նախքան ակտիվի նպատակային օգտագործումը ստացված հասույթ, անբարենպաստ պայմանագրեր. պայմանագրի կատարման արժեքը», «Հղում հայեցակարգային հիմունքներին». ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 37-ի և ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ՝ սահմանափակ կիրառության շրջանակով, և ՖՀՄՍ 1-ին, ՖՀՄՍ 9-ին, ՖՀՄՍ 16-ին և ՀՀՄՍ 41-ին վերաբերող 2018-2020 թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ (թողարկված են 2020թ. մայիսի 14-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 16-ի փոփոխությամբ կազմակերպություններին արգելվում է հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, որն արտադրվել է կազմակերպության կողմից ակտիվն իր նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վիճակի բերելու ընթացքում: Նման պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, դրա արտադրության ծախսերի հետ միասին, այժմ ենթակա է ճանաչման շահույթում կամ վնասում: Նման պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքի չափման համար Կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 2-ը: Սկզբնական արժեքը չի ներառի նման կերպ փորձարկվող ակտիվի մաշվածությունը, քանի որ այն դեռ պատրաստ չէ իր նպատակային օգտագործման համար: ՀՀՄՍ 16-ի փոփոխությունը նաև հստակեցնում է, որ կազմակերպությունը «ստուգում է ակտիվի պատշաճ գործունեությունը»՝ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական բնութագրերը գնահատելու միջոցով:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Այս չափման համար էական չեն այդպիսի ակտիվի ֆինանսական ցուցանիշները: Հետևաբար, ակտիվը կարող է շահագործվել ղեկավարության մտադրությունների համաձայն, և մաշվածությունը կարող է հաշվարկվել մինչև ղեկավարության կողմից ակնկալվող գործառնական շահագործման համար անհրաժեշտ վիճակի հասնելը:

ՀՀՄՍ 37-ի փոփոխությունը հստակեցնում է «պայմանագրի կատարման գծով ծախսեր» հասկացությունը: Փոփոխությամբ պարզաբանվում է, որ պայմանագրի կատարման գծով ուղղակի ծախսերը ներառում են այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի բաշխումը: Փոփոխությամբ նաև հստակեցվում է, որ նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին պահուստի ձևավորումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ պայմանագրի կատարման ընթացքում օգտագործված ակտիվների գծով, այլ ոչ թե պայմանագրի կատարման համար հատկացված ակտիվների գծով:

ՖՀՄՍ 3-ում կատարվել է լրացում՝ ներառելով հղում Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքներին, ինչը թույլ է տալիս սահմանել ակտիվի կամ պարտավորության հասկացությունը ձեռնարկատիրական գործունեության միավորման համատեքստում: Մինչ այս փոփոխության ընդունումը, ՖՀՄՍ 3-ը հղում էր կատարում 2001թ.-ի Ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային հիմունքներին: Բացի այդ, ՖՀՄՍ 3-ում ավելացվել է նոր բացառություն պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար: Այս բացառությամբ նախատեսվում է, որ ՖՀՄՍ 3-ը կիրառող կազմակերպությունը, որոշակի տիպի պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար Ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքների փոխարեն պետք է հղում կատարի ՀՀՄՍ 37-ին կամ ՖՀՄՄԽ (IFRIC) 21-ին: Առանց այս նոր բացառության, կազմակերպությունը ստիպված կլիներ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ճանաչել որոշ պարտավորություններ, որոնք չէր ճանաչի համաձայն ՀՀՄՍ 37-ի: Հետևաբար, ձեռքբերումից անմիջապես հետո կազմակերպությունը ստիպված կլիներ ապաճանաչել այդպիսի պարտավորությունները և ճանաչել տնտեսական օգուտներ չմարմնավորող եկամուտ: Նաև պարզաբանվել է, որ ձեռք բերող կազմակերպությունը պարտավոր չէ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչել պայմանական ակտիվներ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 37-ում:

ՖՀՄՍ 9-ի փոփոխությունն անդրադառնում է այն հարցերին, թե որ տեսակի վճարումներն են ենթակա ներառման «10% փորձարկման» կազմում՝ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման նպատակով: Ծախսերը կամ վճարումները կարող են կատարված լինել հօգուտ երրորդ անձանց կամ վարկատուի: Այս փոփոխության համաձայն, երրորդ անձանց օգտին կատարված ծախսերը կամ վճարումները չեն ներառվի «10% փորձարկման» կազմում:

Փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 16-ի 13-րդ նկարագրական օրինակում. հանվել է վարձատուի կողմից վարձակալվող գույքի բարելավումներին վերագրվող վճարումների օրինակը: Այս փոփոխությունը կատարվել է՝ վարձակալվող գույքի բարելավումների հաշվարկման հնարավոր անորոշությունից խուսափելու համար:

ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս օգտվել բացառությունից այն դեպքում, եթե դուստր ձեռնարկությունը սկսում է ՖՀՄՍ-ի կիրառումն ավելի ուշ ամսաթվով, քան իր մայր կազմակերպությունը: Դուստր ձեռնարկությունը կարող է չափել իր ակտիվներն ու պարտավորությունները այն հաշվեկշռային արժեքով, որով դրանք պետք է ներառվեին մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցնելու ամսաթվից, եթե տեղի ունեցած չլինեին ճշգրտումներ համախմբման և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքների արտացոլման նպատակներով, որի ներքո մայր կազմակերպությունը ձեռք է բերել նշված դուստր ձեռնարկությունը: ՖՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է տալիս սույն ՖՀՄՍ 1-ի բացառությունը կիրառած կազմակերպություններին նաև արտարժույթի փոխարկումից կուտակային տարբերությունները չափելիս օգտագործել մայր կազմակերպության կողմից ներկայացված թվային մեծությունները՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցման ամսաթվից: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությամբ վերոնշյալ բացառությունը տարածվում է արտարժույթի փոխարկումից առաջացած կուտակային տարբերությունների վրա, և նպատակ ունի նվազեցնել ՖՀՄՍ-ն առաջին անգամ կիրառող կազմակերպության ծախսերը: Այս փոփոխությունը կկիրառվի նաև դուստր և համատեղ ձեռնարկությունների վրա, որոնք կօգտվեն ՖՀՄՍ 1-ով սահմանված նույն բացառությունից:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Վերացվել է պահանջը, ըստ որի կազմակերպությունները ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքը չափելիս պարտավոր էին հարկային հաշվառման տեսանկյունից հաշվի չառնել դրամական հոսքերը: Այս փոփոխության նպատակն է՝ ապահովել համապատասխանություն հարկումից հետո զեղչված դրամական հոսքերի ստանդարտի պահանջին:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՀՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական կիրառման 2-րդ հայտարարության մեջ. Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում փոփոխություն (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ ընկերություններից պահանջվում է ներկայացնել ավելի մանրամասն տեղեկատվություն իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ, քան նախատեսվում է Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթներով: Փոփոխությամբ ներկայացվել է հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության էականության սահմանումը: Փոփոխությամբ նաև պարզաբանվում է, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունը համարվում է էական, եթե առանց դրա ֆինանսական հաշվետվություններ օգտագործողները չէին կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում ներառված այլ էական տեղեկատվությունը: Փոփոխությամբ ներկայացված են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակելի ձևեր, որոնք, հավանական է, որ էական են կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների համար: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ հստակեցվել է, որ կարիք չկա բացահայտելու հաշվապահական հաշվառման քաղաքականության ոչ էական տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, բացահայտվելու դեպքում, այն չպետք է քողարկի հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվությունը: Այս փոփոխության հիման վրա փոփոխության է ենթարկվել նաև ՖՀՄՍ-ի Գործնական կիրառման վերաբերյալ 2-րդ հայտարարությունը՝ «Էականության վերաբերյալ դատողությունների կատարումը»՝ ապահովելով հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումներում էականության հայեցակարգի կիրառման ցուցումներ:

ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ. «Հաշվապահական գնահատումների սահմանում» (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը հստակեցնում է, թե ինչպես ընկերությունները պետք է տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները հաշվապահական գնահատումների փոփոխությունից:

COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ. ՖՀՄՍ 16-ի փոփոխություն (թողարկվել է 2021թ. մարտի 31-ին ուժի մեջ է մտնում 2021թ. ապրիլի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ 16-ի 2020թ. մայիսի 20-ի փոփոխությամբ վարձակալներին տրվում էր հայեցողական հնարավորություն՝ որոշելու, թե արդյոք COVID 19-ով պայմանավորված՝ 2021թ. հունիսի 30-ին կամ մինչև այդ ամսաթիվը վճարման ենթակա վարձավճարների գծով արտոնությունները հանդիսանում են վարձակալության պայմանների փոփոխություն: 2021թ. մարտի 31-ին թողարկվել է փոփոխություն, որով գործնական նպատակահարմարության կիրառման ժամկետը 30 հունիսի, 2021թ. -ից երկարաձգվել է մինչև 30 հունիսի, 2022թ.

Հետաձգված հարկ մեկ գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների գծով. ՀՀՄՍ 12-ի փոփոխություններ (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները սահմանում են հետաձգված հարկի հաշվարկման մոտեցումները այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և շահագործումից հանման պարտավորությունները: Որոշակի հանգամանքներում, կազմակերպություններն ազատվում են ճանաչված հետաձգված հարկից, երբ առաջին անգամ ճանաչում են ակտիվներ կամ պարտավորություններ: Նախկինում որոշակի անորոշություն կար, թե արդյո՞ք ազատումը կիրառվում է այնպիսի գործարքների վրա, ինչպիսիք են վարձակալությունը և շահագործումից հանելու պարտավորությունները, քանի որ դրանք գործարքներ են, որոնց համար ճանաչվում են և ակտիվներ, և պարտավորություններ: Փոփոխություններով հստակեցվում է, որ ազատումը չի կիրառվում, և որ կազմակերպությունից պահանջվում է նման գործարքների համար ճանաչել հետաձգված հարկ:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Փոփոխություններով պահանջվում է, որպեսզի ընկերությունները ճանաչեն հետաձգված հարկ այն գործարքների գծով, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ առաջացնում են հավասար քանակությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Բազային տոկոսադրույքի (IBOR) բարեփոխում. ՖՀՄՍ 9-ի, ՀՀՍՍ 39-ի, ՖՀՄՍ 7-ի, ՖՀՄՍ 4-ի և ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ - Փուլ 2 (թողարկված են 2020թ. օգոստոսի 27-ին և ուժի մեջ են մտնում 2021թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում փոփոխություններ - «Ակտիվների վաճառք կամ ներդրում ներդրողի և նրա ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկությունների միջև գործարքներում» (թողարկվել է 2014 թվականի սեպտեմբերի 11-ին և ուժի մեջ է տարեկան ժամանակաշրջանների համար, որը կորոշվի ՀՀՄՍԽ-ի կողմից կամ այդ ամսաթվից հետո):

ՖՀՄՍ 17 «Ապահովագրական պայմանագրեր» (թողարկված է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի շարժերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	Շենքեր, հող և կառուցվածքներ	Փոխանցող հարմա-րանքներ	Սարքավո-րումներ	Տրանս-պորտային միջոցներ	Հարմա-րանքներ և կցամասեր	Այլ	Անավարտ շինարարու-թյուն	Ընդամենը
Սկզբնական արժեք								
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**20,105,233**	**41,753,340**	**82,759,008**	**1,624,000**	**2,420,019**	**20,423**	**4,157,714**	**152,839,737**
Ավելացումներ	131,410	13,871	2,351,833	122,440	35,203	-	2,901,320	5,556,077
Օտարումներ	(2,529,172)	(769,362)	(6,848,489)	(60,611)	(191,984)	-	(360,813)	(10,760,431)
Վերադասակարգումներ	193,429	489,409	3,838,124	-	196,680	-	(4,717,642)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**17,900,900**	**41,487,258**	**82,100,476**	**1,685,829**	**2,459,918**	**20,423**	**1,980,579**	**147,635,383**
Ավելացումներ	-	-	990,868	2,820	9,130	-	3,248,652	4,251,470
Օտարումներ	(18,337)	(756,593)	(2,598,981)	(2,880)	(109,707)	(10)	(204,213)	(3,690,721)
Վերադասակարգումներ	63,660	1,022,696	1,708,003	-	20,255	-	(2,814,614)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**17,946,223**	**41,753,361**	**82,200,366**	**1,685,769**	**2,379,596**	**20,413**	**2,210,404**	**148,196,132**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում								
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**(18,080,462)**	**(37,361,501)**	**(75,834,531)**	**(1,523,378)**	**(1,950,890)**	**(20,379)**	**(1,643,562)**	**(136,414,703)**
Մաշվածություն տարվա համար	(517,110)	(1,099,865)	(2,923,455)	(42,775)	(137,895)	(33)	-	(4,721,133)
Օտարումներ	2,098,287	654,277	5,952,593	60,521	175,088	-	142,631	9,083,397
Վերադասակարգումներ	(45,036)	(113,950)	(893,634)	-	(45,793)	-	1,098,413	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**(16,544,321)**	**(37,921,039)**	**(73,699,027)**	**(1,505,632)**	**(1,959,490)**	**(20,412)**	**(402,518)**	**(132,052,439)**
Մաշվածություն տարվա համար	(306,514)	(1,215,280)	(3,374,436)	(50,271)	(119,906)	(12)	-	(5,066,419)
Օտարումներ	20,242	703,599	1,931,801	2,880	100,365	10	105,461	2,864,358
Վերադասակարգումներ	-	-	-	-	-	-	-	-
Արժեզրկման վերականգնում	574,154	1,603,508	1,572,008	21,814	197,814	1	297,057	4,266,356
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**(16,256,439)**	**(36,829,212)**	**(73,569,654)**	**(1,531,209)**	**(1,781,217)**	**(20,413)**	**-**	**(129,988,144)**
Հաշվեկշռային արժեք								
Առ 1 հունվարի 2019թ.	**2,024,771**	**4,391,839**	**6,924,477**	**100,622**	**469,129**	**44**	**2,514,152**	**16,425,034**
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**1,356,579**	**3,566,219**	**8,401,449**	**180,197**	**500,428**	**11**	**1,578,061**	**15,582,944**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,689,784**	**4,924,149**	**8,630,712**	**154,560**	**598,379**	**-**	**2,210,404**	**18,207,988**

7 Հիմնական միջոցներ (շարունակություն)

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 5,066,419 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 4,721,133 հազ. ՀՀ դրամ) ընդհանուր մաշվածության ծախսից 4,945,729 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 4,463,128 հազ. ՀՀ դրամ) ներառված է տրամադրված ծառայությունների ինքնարժեքի մեջ (տե՛ս Ծանոթագրություն 19-ը), 120,605 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 257,653 հազ. ՀՀ դրամ)՝ ընդհանուր և վարչական ծախսերի մեջ (տե՛ս Ծանոթագրություն 21-ը), և 85 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 352 հազ. ՀՀ դրամ)՝ այլ գործառնական ծախսերի մեջ (տե՛ս Ծանոթագրություն 23-ը):

Անավարտ շինարարությունը բաղկացած է հեռահաղորդակցության և այլ սարքավորումների գծով կապիտալ ծախսումներից:

8 Ոչ նյութական ակտիվներ

Հազ. ՀՀ դրամ	**Համակարգչային ծրագրեր**	**Լիցենզիաներ**	**Այլ ոչ նյութական ակտիվներ**	**Ընդամենը**
Սկզբնական արժեք				
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**10,930,057**	**14,962,247**	**488,574**	**26,380,878**
Ավելացումներ	353,873	1,084,383	330,750	1,769,006
Օտարումներ	(71,901)	(152,818)	-	(224,719)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**11,212,029**	**15,893,812**	**819,324**	**27,925,165**
Ավելացումներ	405,069	1,472,857	-	1,877,926
Օտարումներ	(99,221)	(312,877)	-	(412,098)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**11,517,877**	**17,053,792**	**819,324**	**29,390,993**
Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում				
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**(10,572,467)**	**(12,633,660)**	**(475,482)**	**(23,681,609)**
Տարվա ամորտիզացիոն ծախս	(174,175)	(1,001,768)	(21,815)	(1,197,758)
Օտարումներ	71,901	128,054	-	199,955
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**(10,674,741)**	**(13,507,374)**	**(497,297)**	**(24,679,412)**
Տարվա ամորտիզացիոն ծախս	(265,155)	(1,403,302)	(36,954)	(1,705,411)
Օտարումներ	99,549	311,763	-	411,312
Արժեզրկման վերականգնում	36,658	534,616	6,272	577,546
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**(10,803,689)**	**(14,064,297)**	**(527,979)**	**(25,395,965)**
Հաշվեկշռային արժեք				
Առ 1 հունվարի 2019թ.	**357,590**	**2,328,587**	**13,092**	**2,699,269**
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**537,288**	**2,386,438**	**322,027**	**3,245,753**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**714,188**	**2,989,495**	**291,345**	**3,995,028**

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 1,705,411 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 1,197,758 հազ. ՀՀ դրամ) ընդհանուր ամորտիզացիոն ծախսից 1,705,411 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 1,197,758 հազ. ՀՀ դրամ) ներառված է տրամադրված ծառայությունների ինքնարժեքի մեջ (տե՛ս Ծանոթագրություն 19-ը):

9 Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր**
Սկզբնական արժեք	
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**5,637,914**
Ավելացումներ	320,706
Օտարումներ	(109,135)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**5,849,485**
Ավելացումներ	142,027
Օտարումներ	(41,541)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**5,949,971**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում	
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**(4,690,360)**
Մաշվածություն տարվա համար	(161,765)
Օտարումներ	104,036
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**(4,748,089)**
Մաշվածություն տարվա համար	(168,483)
Օտարումներ	39,869
Արժեզրկման վերականգնում	435,301
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**(4,441,402)**
Հաշվեկշռային արժեք	
Առ 1 հունվարի 2019թ.	**947,554**
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**1,101,396**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,508,569**

168,483 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 161,765 հազ. ՀՀ դրամ) գումարի չափով մաշվածության ամբողջ ծախսը ներառված է վաճառքի ինքնարժեքում (տե՛ս Ծանոթագրություն 19-ը):

10 Տրամադրված փոխառություններ

Ընկերության փոխառությունները արտահայտված են հետևյալ արտարժույթով.

Հազ. ՀՀ դրամ		**2020թ.**	**2019թ.**
Տրամադրված փոխառություններ՝ արտահայտված	- ԱՄՆ դոլարով	7,147,550	19,043,648
	- ՀՀ դրամով	218,515	-
Ընդամենը տրամադրված փոխառություններ՝ նախքան պարտքային կորուստների գծով պահուստ		**7,366,065**	**19,043,648**
Նվազեցում պարտքային կորուստների գծով պահուստի չափով		(1,141,436)	-
Ընդամենը տրամադրված փոխառություններ		**6,224,629**	**19,043,648**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր փոխառությունները տրամադրվել են անմիջական մայր ընկերությանը՝ մի քանի փոխառությունների պայմանագրերի ներքո: Տրամադրված փոխառությունների պայմանագրերի մարման ժամկետները տարբեր են՝ կախված պայմանագրից՝ 2022թ. դեկտեմբերից մինչև 2030թ. դեկտեմբեր: Մի քանի փոխառությունների պայմանագրեր անտոկոս են. հետևաբար փոխառությունների անվանական արժեքները զեղչվել են մարման ամսաթվից 8%՝ ԱՄՆ դոլարով փոխառությունների և 11%՝ ՀՀ դրամով փոխառությունների համար: Վերոնշյալ աղյուսակում արտացոլված են զեղչված գումարները:

10 Տրամադրված փոխառություններ (շարունակություն)

Տրամադրված փոխառություններից մեկը տրամադրվել է ոչ դրամական հիմունքներով. Անմիջական մայր ընկերության հետ կնքված փոխառության պայմանագրի հիման վրա տրամադրված փոխառությունը ճանաչվել է 3,290,311 հազ. ՀՀ դրամ՝ վերջինս համաձայնվել է մինչև 2026 թվականը ընկերությանը մարել 10,000 հազ. ԱՄՆ դոլար: Ընկերությունը ճանաչել է փոխառության զեղչված գումարը:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված փոխառությունները գործող են և տրամադրված են փոխկապակցված կողմին:

Տրամադրված փոխառությունների համար ակնկալվող պարտքային կորստի պահուստը կազմում է 1,141,436 հազ. ՀՀ դրամ, և գնահատվել է փոխառությունների հաշվեկշռային արժեքի 16,15% չափով՝ հիմնվելով զեղչված դրամական հոսքերի միջոցով գնահատման մեթոդի վրա: Այս գնահատման վերաբերյալ կարևոր դատողությունները բերված են ծանոթագրություն 4-ում: Տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքը, ակնկալվող պարտքային կորստի պահուստի հետ միասին էականորեն չեն տարբերվում դրանց իրական արժեքից:

11 Պաշարներ

Հազ. ՀՀ դրամ	**2020թ,**	**2019թ.**
Նյութեր և պահեստամասեր	661,463	733,723
Վերավաճառքի ապրանքներ	228,004	605,218
Վառելիք	47,754	58,477
Քարտեր	29,005	25,572
Այլ պաշարներ	31,384	70,642
Պաշարների դուրսգրման պահուստ	(773,779)	(886,324)
Ընդամենը պաշարներ	**223,831**	**607,308**

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ. (վերաներկայացված)**	**2018թ. (վերաներկայացված)**
Առևտրային դեբիտորական պարտքեր	4,698,534	5,338,186	5,915,591
Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր	374,596	338,294	417,666
Նվազեցում պարտքային կորուստների գծով պահուստի չափով	(2,445,481)	(2,403,804)	(2,276,055)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում	**2,627,649**	**3,272,676**	**4,057,202**
Այլ դեբիտորական պարտքեր	166,702	165,204	356,698
Կանխավճարներ	687,402	159,165	142,683
Նվազեցում պարտքային կորուստների գծով պահուստի չափով	(3,999)	(105,994)	(18,833)
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**3,477,754**	**3,491,051**	**4,537,750**

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար Ընկերությունն օգտագործում է ՖՀՄՍ 9-ով նախատեսված պարզեցված մոտեցումը, համաձայն որի օգտագործվում է բոլոր առևտրային և այլ

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող կորուստների համար գնահատված պահուստը ամբողջ ժամկետի համար:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար առևտրային և այլ դեբիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով պարտքային ռիսկի ընդհանուր բնութագրերից և ժամկետանց օրերի քանակից:

2020թ.-ին Ընկերությունը կատարել է ընթացիկ բացահայտումների ճշգրտում, ապաճանաչելով առևտրային դեբիտորական պարտքերի և պարտքային կորստի գծով պահուստի համախառն գումարները, որոնք չեն համապատասխանում ակտիվի սահմանմանը: Այլ ֆինանսական դեբիտորական պարտքերի գծով արտացոլվել է իրական արժեքով սկզբնական ճանաչումը: Դեբիտորական պարտքերի և պարտքային կորստի գծով պահուստի գումարները համապատասխանաբար ճշգրտվել են 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի շարժը ըստ ակնկալվող պարտքային կորստի պարզեցված մոդելի, տարեկան ժամանակահատվածի սկզբից մինչև վերջ ընկած ժամանակահատվածի համար.

	2020թ.		2019թ. (վերաներկայացված)	
Հազ. ՀՀ դրամ	**Առևտրային դեբի-տորական պարտքեր**	**Այլ ֆինան-սական դեբիտո-րական պարտքեր**	**Առևտրային դեբի-տորական պարտքեր**	**Այլ ֆինան-սական դեբիտո-րական պարտքեր**
Պարտքային կորստի պահուստ առ 1 հունվարի	**2,149,683**	**254,121**	**2,122,061**	**153,994**
Նոր առաջացած	275,803	61,650	19,040	100,127
Հանած ապաճանաչումը և կանխիկի հավաքագրումը	(295,776)	-	8,582	-
Պարտքային կորստի պահուստ առ 31 դեկտեմբերի	**2,129,710**	**315,771**	**2,149,683**	**254,121**

Առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի չափը որոշվում է ըստ ստորև բերված աղյուսակում ներկայացված պահուստի ժամկետայնության: Պահուստի ժամկետայնությունը հիմնված է ակտիվի մարման ժամկետի ամսաթվից հետո ժամկետանց օրերի վրա՝ ճշգրտված ՀՆԱ-ի աճով և գործազրկության մակարդակի փոփոխություններով:

Հազ. ՀՀ դրամ	**Ընթացիկ**	**1-ից 30 օր**	**31-ից 60 օր**	**61-ից 90 օր**	**91-ից 120 օր**	**121 օրից ավելի**	**Ընդամենը**
Համախառն առևտրային դեբիտորական պարտքեր	2,131,476	422,090	136,721	78,831	57,245	1,872,171	4,698,534
Ակնկալվող կորստի չափը, %	2%	12%	42%	68%	85%	100%	
Ակնկալվող պարտքային կորուստներ	(47,633)	(50,286)	(57,566)	(53,405)	(48,649)	(1,872,171)	(2,129,710)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	**2,083,843**	**371,804**	**79,155**	**25,426**	**8,596**	**-**	**2,568,824**

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Պահուստների ժամկետայնության կառուցվածքը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է հետևյալ աղյուսակում.

Հազ. ՀՀ դրամ	Ընթացիկ	1-ից 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91-ից 120 օր	121 օրից ավելի (վերաներ-կայացված)	Ընդամենը (վերաներ-կայացված)
Համախառն առևտրային դեբիտորական պարտքեր	3,113,365	240,865	89,251	75,549	44,171	1,774,985	5,338,186
Ակնկալվող կորստի չափը, %	6%	21%	51%	67%	84%	100%	
Ակնկալվող պարտքային կորուստներ	(190,982)	(50,303)	(45,522)	(50,610)	(37,281)	(1,774,985)	(2,149,683)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	**2,922,383**	**190,562**	**43,729**	**24,939**	**6,890**	**-**	**3,188,503**

Պահուստների ժամկետայնության կառուցվածքը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ-կայացված) ներկայացված է հետևյալ աղյուսակում.

Հազ. ՀՀ դրամ	Ընթացիկ	1-ից 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91-ից 120 օր	121 օրից ավելի (վերաներ-կայացված)	Ընդամենը (վերաներ-կայացված)
Համախառն առևտրային դեբիտորական պարտքեր	3,772,979	310,965	144,458	211,273	104,352	1,371,564	5,915,591
Ակնկալվող կորստի չափը, %	9%	23%	66%	72%	86%	100%	
Ակնկալվող պարտքային կորուստներ	(342,831)	(70,836)	(95,483)	(151,882)	(89,465)	(1,371,564)	(2,122,061)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	**3,430,148**	**240,129**	**48,975**	**59,391**	**14,887**	**-**	**3,793,530**

1,200,440 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 1,115,682 հազ. ՀՀ դրամ) առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերն արտահայտված են արտարժույթով, մասնավորապես 74%-ը ԱՄՆ դոլարով (2019թ.՝ 74%), 24%-ը հատուկ փոխառության իրավունքով («ՀՓԻ») (2019թ.՝ 24%) և 2%-ը Եվրոյով (2019թ.՝ 2%):

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազ. ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Ցպահանջ բանկային հաշիվներ	123,181	3,500,780
Դրամական միջոցներ ճանապարհին	75,455	28,263
Առձեռն դրամական միջոցներ	16,890	38,233
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**215,526**	**3,567,276**

Ցպահանջ բանկային հաշիվների մնացորդները տեղաբաշխված են Հայաստանի լավագույն տասնյակում ներառված բանկերում և դասակարգված են որպես ընթացիկ և ոչ արժեզրկված (2019թ.՝ Հայաստանի լավագույն տասնյակում ներառված բանկերում և դասակարգված են որպես ընթացիկ և ոչ արժեզրկված): Տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 28-ում:

14 Կանոնադրական կապիտալ

Հազ. ՀՀ դրամ	Թողարկված բաժնետոմսերի քանակ	Սովորական բաժնետոմսեր	Ընդամենը
Առ 1 հունվարի 2019թ.	**188,377,090**	**18,837,709**	**18,837,709**
Առ 31 դեկտեմբերի 2019թ.	**188,377,090**	**18,837,709**	**18,837,709**
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**188,377,090**	**18,837,709**	**18,837,709**

Տարվա ընթացքում հայտարարված և վճարված շահաբաժինները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	2020 թ.	2019թ.
	Սովորական բաժնետոմսեր	Սովորական բաժնետոմսեր
Վճարման ենթակա շահաբաժիններ առ 1 հունվարի	**-**	**-**
Տարվա ընթացքում հայտարարված շահաբաժիններ	18,810,000	93,000,000
Տարվա ընթացքում վճարված շահաբաժիններ	(18,810,000)	(93,000,000)
Վճարման ենթակա շահաբաժիններ առ 31 դեկտեմբերի	**-**	**-**
Տարվա ընթացքում հայտարարված շահաբաժին 1 բաժնետոմսի գծով	**0.100**	**0.494**

Սովորական բաժնետոմսերի ընդհանուր հայտարարված քանակը կազմում է 188,377 հազ. բաժնետոմս (2019թ.՝ 188,377 հազ. բաժնետոմս), յուրաքանչյուր բաժնետոմսը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով (2019թ.՝ յուրաքանչյուր բաժնետոմսը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով): Բոլոր թողարկված սովորական բաժնետոմսերն ամբողջովին վճարված են: Յուրաքանչյուր սովորական բաժնետոմս ունի մեկ ձայնի իրավունք:

15 Ակտիվների ապագործարկման պահուստ

Ընկերությունը ունի իրավական պարտավորություն ապամոնտաժել սարքավորումները և վերականգնել վարձակալած տարածքները դրանց՝ 20 տարի հետո ակնկալվող փակումից: Տարվա ընթացքում ակտիվների ապագործարկման պահուստի շարժը հետևյալն է:

Հազ. ՀՀ դրամ	Ակտիվների ապագործարկում և վարձակալված տեղանքի վերականգնում
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2020թ.	**1,153,369**
Ներկա արժեքի զեղչման ծախս	128,792
Գնահատումների փոփոխություն՝ ճշգրտված հիմնական միջոցներով	10,764
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**1,292,925**

16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Պարտավորություններ ձեռք բերված ծառայությունների գծով	3,442,169	2,523,081
Պարտավորություններ ձեռք բերված սարքավորումների գծով	1,161,827	557,541
Պարտավորություններ ձեռք բերված ոչ նյութական ակտիվների գծով	513,059	264,450
Պարտավորություններ շինարարական աշխատանքների գծով	406,603	449,308
Պարտավորություններ ռոումինգի ծառայությունների գծով	399,679	425,701
Պարտավորություններ ձեռք բերված պաշարների գծով	246,998	192,904
Վարձակալության գծով պարտավորություններ	116,532	54,141
Հաշվեգրված մասնագիտական ծառայություններ	21,200	31,200
Այլ պարտավորություններ	975	714
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**6,309,042**	**4,499,040**

3,246,933 հազ. ՀՀ դրամի (2019թ.՝ 2,052,115 հազ. ՀՀ դրամ) առևտրային և այլ կրեդիտորական պարտքերն արտահայտված են արտարժույթով, մասնավորապես 87%-ը ԱՄՆ դոլարով (2019թ.՝ 85%), 6%-ը Հատուկ փոխառության իրավունքով (2019թ.՝ 8%), 6%-ը եվրոյով (2019թ.՝ 5%) և 2%-ը ՌԴ ռուբլով (2019թ.՝ 2%):

17 Պարտավորությունների և վճարների պահուստ

Պարտավորությունների և վճարների պահուստի շարժը հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	**Իրավական հայցեր**	**Հարկային ռիսկեր**	**Ընդամենը**
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2020թ.	**54,825**	**852,496**	**907,321**
Պահուստի հաշվին վճարումներ	(5,199)	-	(5,199)
Ապաճանաչում	(48,824)	(852,496)	(901,320)
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**802**	**-**	**802**

Բոլոր վերը նշված պահուստները դասակարգվել են որպես ընթացիկ պարտավորություններ, քանի որ Ընկերությունը չունի անվերապահ իրավունք հետաձգել դրանց վճարումը մեկ տարուց ավելի ուշ:

Իրավական հայցեր: Ղեկավարության կարծիքով, որը հիմնված է համապատասխան իրավաբանական խորհրդատվության վրա՝ իրավաբանական հայցերի քննման արդյունքը չի հանգեցնի հաշվեգրված պահուստի գումարները զգալիորեն գերազանցող կորուստների:

Հարկային ռիսկեր: Ընկերությունը 2020թ. ապաճանաչել է հարկային ռիսկերի գծով պահուստը, քանի որ Ընկերությունը պլանավորում է չվաճառել կամ չօտարել չշահագործվող հիմնական միջոցները, հետևաբար՝ ներկայումս կամ ապագայում Ընկերությունը չունի կամ չի ակնկալում ունենալ հարկերի վճարման պարտավորություն:

18 Հասույթ

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Շարժական կապ-տվյալների փոխանակում	6,229,895	5,969,814
Շարժական կապ-ձայնային	4,974,505	6,130,266
Շարժական կապ-փոխկապակցում	2,103,498	3,287,469
Շարժական կապ-ռոումինգ	313,416	1,051,789
Շարժական կապ-այլ	1,190,173	1,345,490
Շարժական կապի ծառայությունների մատուցումից հասույթ	**14,811,487**	**17,784,828**
Ֆիքսված կապ-ձայնային	5,155,973	5,939,252
Ֆիքսված կապ-ինտերնետ	4,828,506	4,910,311
Ֆիքսված կապ-տարանցիկ	985,260	929,144
Ֆիքսված կապ-փոխկապակցում	280,641	510,454
Ֆիքսված կապ-այլ	1,019,375	716,288
Ֆիքսված կապի ծառայությունների մատուցումից հասույթ	**12,269,755**	**13,005,449**
Սարքավորումներ-շարժական կապ	2,220,578	3,845,119
Սարքավորումներ-ֆիքսված կապ	124,260	88,350
Սարքավորումների իրացումից հասույթ	**2,344,838**	**3,933,469**
Այլ հասույթ	115,017	68,940
Ընդամենը հասույթ	**29,541,097**	**34,792,686**

19 Վաճառքի ինքնարժեք

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Ծառայությունների ինքնարժեք		
Մաշվածություն և ամորտիզացիա	8,058,727	7,073,743
Անձնակազմի ծախսեր	3,019,235	2,958,382
Ռադիո ալիքների օգտագործման թույլտվություն	1,793,975	1,698,067
Բջջային կապի փոխկապակցման ծախս	1,647,703	2,504,407
Ինտերնետի և այլ կապուղիներ	1,371,095	1,361,339
Էլեկտրաէներգիա	1,264,557	1,331,965
Սարքավորումների և կապուղիների սպասարկման ծախսեր	854,074	896,936
Ֆիքսված կապի փոխկապակցման ծախս	759,150	982,661
Հնացվածության պահուստի ճանաչում	374,758	(1,600,920)
Ռոումինգի գծով ստացված ծառայություններ	281,455	618,783
Վառելիքի ծախսեր	104,137	111,520
SIM քարտեր	26,221	41,121
Գործուղումներ և վերապատրաստում	17,140	94,057
Ծառայությունների ԱԱՀ	5,954	86,779
Բջջային հեռախոսակապի այլ ծառայություններ	231,382	185,363
Ֆիքսված հեռախոսակապի այլ ծառայություններ	223,108	80,823
Ոչ ընթացիկ ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկման վերականգնում	(5,061,429)	-
Ընդամենը ծառայությունների ինքնարժեք	**14,971,242**	**18,425,026**
Իրացված սարքավորումների ինքնարժեք		
Սարքավորումներ-բջջային կապ	2,217,649	3,898,197
Սարքավորումներ-ֆիքսված հեռախոսակապ	2,503	8,645
Ընդամենը սարքավորումների ինքնարժեք	**2,220,152**	**3,906,842**
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	**17,191,394**	**22,331,868**

20 Այլ գործառնական եկամուտ

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Պահուստի ապաճանաչումից եկամուտ	849,751	-
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	191,310	1,334,164
Ստացված կանխավճարների և կրեդիտորական պարտքերի դուրսգրումից եկամուտ	137,796	27,368
Եկամուտ խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններից	76,817	211,909
Վարձակալությունից եկամուտ	45,633	77,571
Տուգանքներից եկամուտ	27,712	7,613
Այլ	10,897	71,020
Ընդամենը այլ գործառնական եկամուտ	**1,339,946**	**1,729,645**

21 Ընդհանուր և վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Անձնակազմի ծախսեր	2,954,874	2,605,274
Մասնագիտական ծառայություններ	2,393,528	553,841
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	325,002	358,147
Անվտանգության ծախսեր	221,687	246,180
Մաշվածություն և ամորտիզացիա	120,605	257,653
Չփոխհատուցվող հարկեր	87,612	90,265
Ապահովագրություն	50,740	101,675
Սպասարկման և նորոգման ծախսեր	43,601	61,809
Գործուղման և վերապատրաստման ծախսեր	29,692	134,325
Ներկայացուցչական ծախսեր	8,865	41,994
Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում	(217,774)	-
Այլ	17,538	20,588
Ընդամենը ընդհանուր և վարչական ծախսեր	**6,035,970**	**4,471,751**

Անձնակազմի ծախսերը ներառում են 249,629 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 9,603 հազ. ՀՀ դրամ) արձակման նպաստներ՝ կապված ղեկավար պաշտոններից անձնակազմի ազատման հետ: Վաճառքի ինքնարժեքի կազմում (տես՝ Ծանոթագրություն 19) համապատասխան արձակման նպաստների գումարները կազմում են 71,256 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 34,809 հազ. ՀՀ դրամ), իսկ Իրացման ծախսերի կազմում (տե՛ս Ծանոթագրություն 22)՝ համապատասխանաբար 38,724 հազ. ՀՀ դրամ (2019թ.՝ 2,385 հազ. ՀՀ դրամ):

22 Իրացման ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Անձնակազմի ծախսեր	2,126,093	2,104,727
Գովազդ և մարքեթինգ	573,540	882,634
Գումարների հավաքագրում	341,677	330,544
Լիցքավորման քարտերի արժեք	92,506	177,451
Այլ ծախսեր	159,931	105,891
Ընդամենը իրացման ծախսեր	**3,293,747**	**3,601,247**

23 Այլ գործառնական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում	258,803	288,549
Հիմնական միջոցների դուրս գրումից վնասներ	250,268	1,730,214
Բարեգործություն և հովանավորություն	149,983	55,867
Այլ չփոխհատուցվող հարկեր	92,587	79,465
Պաշարների իրացումից վնասներ	67,767	44,452
Չհաշվանցվող ԱԱՀ	54,805	44,093
Անձնակազմի ծախսեր	5,000	10,000
Պաշարների արժեզրկում	1,940	28
Մաշվածություն և ամորտիզացիա	85	352
Իրավական հայցերի ծախսեր	-	31,143
Հարկային տուգանքների գծով պահուստ	-	14,426
Այլ ծախսեր	128,068	205,890
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	**1,009,306**	**2,504,479**

24 Ֆինանսական եկամուտ

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Տոկոսային եկամուտ տրված փոխառություններից	241,142	3,196,959
Տոկոսային եկամուտ դրամական միջոցներից և դրանց համարժեքներից	128,192	119,274
Ընդամենը՝ շահույթում կամ վնասում ճանաչված ֆինանսական եկամուտ	**369,334**	**3,316,233**

25 Շահութահարկ

(ա) Շահութահարկի գծով ծախսի բաղադրիչները

Շահույթում կամ վնասում ճանաչված շահութահարկի գծով ծախսը ներառում է հետևյալ բաղադրիչները.

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Հետաձգված հարկ	1,209,746	1,582,804
Ընթացիկ հարկ	-	1,023,404
Տարվա շահութահարկի գծով ծախս	**1,209,746**	**2,606,208**

(բ) Կիրառելի հարկադրույքով բազմապատկած շահույթի կամ վնասի և շահութահարկի գծով ծախսի համադրում

Ընկերության 2020թ. նկատմամբ կիրառելի շահութահարկի դրույքը 18% է, իսկ 2019թ. շահույթի նկատմամբ՝ 20% է: Հարկերի գծով ակնկալվող և իրական ծախսի համադրումը ներկայացված է ստորև.

25 Շահութահարկ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Շահույթ նախքան հարկումը	**3,499,565**	**5,025,930**
Տեսական հարկային ծախսը՝ սահմանված 18% դրույքաչափով (2019թ. ՝ 20%)	(629,922)	(1,005,186)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը.		
- Չհարկվող եկամուտ	451,139	409,444
- Չնվազեցվող ծախսեր	(1,030,963)	(817,924)
- Հարկային դրույքաչափի փոփոխության ազդեցություն	-	(660,709)
- Նախորդ տարվա ընթացիկ շահութահարկի վերանայում	-	(175,240)
- Ժամանակավոր տարբերության վերականգնում որպես մշտական	-	(356,593)
Տարվա շահութահարկի գծով ծախս	**(1,209,746)**	**(2,606,208)**

2020 թվականի հունվարի 1-ից շահութահարկի դրույքը իջեցվել է 20%-ից մինչև 18%: Այս որոշումը Հայաստանի Հանրապետության պետական մարմինները կայացրել են 2019 թվականին: Այս առումով հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների արժեքները 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերանայվել են 18% տոկոսադրույքով: Փոխակերպման ազդեցությունը ներկայացված է վերևի աղյուսակում:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 707,496 հազ. ՀՀ դրամ ընթացիկ կանխավճարներ շահութահարկի գծով (2019թ. ՝ 141,396 հազ. ՀՀ դրամ): Կանխավճարը ճանաչվել է 2020թ. փաստացի հարկային ծախսի համեմատ ավելի մեծ գումարով հարկերի վճարման հետևանքով: Ընկերության կողմից կանխավճարը կօգտագործվի հաջորդ ժամանակահատվածներում:

(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի

ՖՀՄՍ-ի և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության միջև եղած տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ՝ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով որոշվող դրանց գումարների միջև:

Այդ ժամանակավոր տարբերություններում 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև:

Հազ. ՀՀ դրամ	**1 հունվարի 2020թ.**	**(Ծախսագրվել է)/ կրեդիտագրվել է շահույթին կամ վնասին**	**31 դեկտեմբերի 2020թ.**
Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը			
Հիմնական միջոցներ	4,109,793	(1,391,413)	2,718,380
Ոչ նյութական ակտիվներ	363,805	(122,579)	241,226
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսումներ	352,664	(105,293)	247,371
Պահուստ պաշարների գծով	(5)	4	(1)
Հետաձգված ծախսեր	(62,564)	13,758	(48,806)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ	59,259	28,350	87,609
Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստ	684,017	(3,620)	680,397
Ակտիվների ապագործարկման պահուստ	207,606	25,121	232,727
Հետաձգված եկամուտներ	5,675	5,605	11,280
Կրեդիտորական պարտքեր	230,453	(103,993)	126,460
Պահուստներ	10,357	(10,357)	-
Ստացված կանխավճարներ	(14,682)	14,682	-
Հարկային վնասներ	-	439,989	439,989
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	**5,946,378**	**(1,209,746)**	**4,736,632**

25 Շահութահարկ (շարունակություն)

ՀՀ օրենսդրության համաձայն, հարկային վնասները կարող են օգտագործվել մինչև 2025թ.:

Այդ ժամանակավոր տարբերություններում 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև:

հազ. ՀՀ դրամ	**1 հունվարի 2019թ.**	**(Ծախսագրվել է)/ կրեդիտագրվել է շահույթին կամ վնասին**	**31 դեկտեմբերի 2019թ.**
Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը			
Հիմնական միջոցներ	4,903,134	(793,341)	4.109.793
Ոչ նյութական ակտիվներ	499,541	(135,736)	363,805
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսումներ	429,809	(77,145)	352,664
Պաշարների արժեզրկում	-	(5)	(5)
Հետաձգված ծախսեր	(124,871)	62,307	(62,564)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ	-	59,259	59,259
Դեբիտորական պարտքերի արժեզրկում	1,304,100	(620,083)	684,017
Ակտիվների ապագործարկման պահուստ	203,823	3,783	207,606
Հետաձգված եկամուտներ	15,979	(10,304)	5,675
Կրեդիտորական պարտքեր	312,130	(81,678)	230,452
Պահուստներ	24,560	(14,203)	10,357
Ստացված կանխավճարներ	(39,024)	24,342	(14,682)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	**7,529,181**	**(1,582,804)**	**5,946,377**

26 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

Ընկերությունը վարձակալում է տարբեր գրասենյակային և տեխնիկական տարածքներ: Վարձակալության պայմանագրերը սովորաբար կնքվում են հաստատուն ժամանակահատվածով 1-10 տարի ժամկետով, բայց կարող են նախատեսվել վարձակալության երակարաձգման օպցիոններ:

Մինչև 2018թ դեկտեմբերի 31-ը հիմնական միջոցների վարձակալության պայմանագրերը դասակարգվում էին կամ որպես ֆինանսական վարձակալություն, կամ որպես գործառնական վարձակալություն: 2019թ. հունվարի 1-ից սկսած վարձակալությունը ճանաչվում է որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ, արտացոլելով համապատասխան պարտավորությունը, սկսած այն ամսաթվից, որից վարձակալված ակտիվը հասանելի է Ընկերության կողմից օգտագործման համար:

Հազ. ՀՀ դրամ	**Հող**	**Շենքեր**	**Ընդամենը**
Հաշվեկշռային արժեքը առ 1 հունվարի 2019թ.	**636,511**	**4,530,319**	**5,166,829**
Ավելացումներ	63,850	995,832	**1,059,682**
Օտարումներ	(16,856)	(82,267)	**(99,122)**
Մաշվածություն	(85,202)	(1,165,889)	**(1,251,092)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**598,303**	**4,277,994**	**4,876,297**
Ավելացումներ	10,836	797,413	**808,249**
Օտարումներ	(11,346)	(76,207)	**(87,553)**
Մաշվածություն	(88,052)	(1,151,052)	**(1,239,104)**
Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**509,741**	**3,848,148**	**4,357,889**

Ընկերությունը ճանաչել է վարձակալության գծով հետևյալ պարտավորությունները.

26 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբեր 2020թ.**	**31 դեկտեմբեր 2019թ.**
Վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորություններ	1,060,540	1,054,036
Վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորություններ	3,784,065	4,151,479
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ	**4,844,605**	**5,205,515**

Ֆինանսական ծախսերի կազմում ներառված տոկոսային ծախսերը 2020թ. կազմել են 500,683 հազ. ՀՀ դրամ (2019թ. ՝ 542,567 հազ. ՀՀ դրամ): 2020թ. ընթացքում վարձակալության դիմաց կատարված վճարումների ընդհանուր գումարը կազմել է 1,408,686 հազ. ՀՀ դրամ (2019թ. ՝ 1,591,483 հազ. ՀՀ դրամ):

27 Ստացված փոխառություններ

Հազ. ՀՀ դրամ	**31 դեկտեմբեր 2020թ.**	**31 դեկտեմբեր 2019թ.**
Բանկերից ստացված վարկեր	4,957,973	-
Ընդամենը փոխառություններ	**4,957,973**	**-**

Ընկերության փոխառությունները արտահայտված են հետևյալ արժույթներով.

Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**
Փոխառություններ՝ արտահայտված		
- ԱՄՆ դոլարով	4,077,516	-
- ՀՀ դրամով	880,457	-
Ընդամենը փոխառություններ առ 31 դեկտեմբերի	**4,957,973**	**-**

Ընկերությունը չի կիրառում հեջի հաշվառում իր արտարժույթի պարտավորությունների կամ տոկոսադրույքների ռիսկի գծով: Փոխառությունների հաշվեկշռային արժեքները և իրական արժեքները հետևյալն են.

	Հաշվեկշռային արժեքներ		**Իրական արժեքներ**	
Հազ. ՀՀ դրամ	**2020թ.**	**2019թ.**	**2020թ.**	**2019թ.**
Բանկային փոխառություն՝ 6 նոյեմբերի 2027թ. մարման ժամկետով և 8% տոկոսադրույքով:	4,077,516	-	4,077,516	-
Բանկային փոխառություն՝ 30 հունիսի 2021թ. մարման ժամկետով և 11% տոկոսադրույքով:	880,457	-	880,457	-
Ընդամենը փոխառություններ առ 31 դեկտեմբերի	**4,957,973**	**-**	**4,957,973**	**-**

27 Ստացված փոխառություններ (շարունակություն)

Փոխառությունների հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը գրավադրել է շենքեր՝ 110,940 հազ. ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով, որպես ապահովության միջոց բանկային վարկի դիմաց, որի չմարված մնացորդը այդ ամսաթվի դրությամբ կազմում է 4,077,516 ՀՀ դրամ (7,750 հազ. ԱՄՆ դոլար և հաշվեգրված տոկոսներ):

Ընկերությունը պետք է կատարեր բանկերի հետ կնքված վարկային պայմանագրերում ամրագրված որոշակի պայմաններ: 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ապահովել է համապատասխանություն նշված պայմաններին:

28 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ սովորական գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են ներկայացվել հայցեր: Հիմնվելով սեփական գնահատման վրա, ղեկավարությունը կարծում է, որ դրանք չեն հանգեցնի էական կորուստների, որոնք կգերազանցեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված պահուստների գումարը:

Հարկային պայմանական պարտավորություններ. Հայաստանի Հանրապետության հարկային, արժութային և մաքսային օրենսդրության որոշ դրույթներ կարող են հանդիսանալ տարընթերցումների առարկա՝ Ընկերության գործարքների և գործունեության նկատմամբ կիրառելիս: Հետևաբար, հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատումների գծով: Որպես հետևանք, հարկային մարմինները կարող են հայց ներկայացնել այն գործարքների և հաշվապահական հաշվառման մեթոդների վերաբերյալ, որոնց համար նախկինում պահանջներ չեն ներկայացրել: Հարկային ստուգումները կարող են ներառել ստուգման ամսաթվին անմիջապես նախորդող երեք օրացուցային տարիները:

Ի լրումն վերը նշված հարցերի, ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի հարկային ռիսկերի հետ կապված 1,603,356 հազ. ՀՀ դրամ (2019թ. ՝ 1,211,356 հազ. ՀՀ դրամ) գումարի չափով այլ հնարավոր պարտավորություններ, որոնց հավանականությունը գնահատվում է «աննշանը գերազանցող»: Այս ռիսկերը հիմնականում վերաբերվում են ՀՀ հարկային մարմինների կողմից ոչ ռեզիդենտի շահութահարկի և այլ տեղական հարկերի գծով լրացուցիչ պարտավորությունների առաջադրմանը: Այս ռիսկերը հանդիսանում են համապատասխան օրենսդրության և փաստաթղթավորման պահանջների մեկնաբանություններում առկա անորոշությունների արդյունք:

Կապիտալ ծախսումների գծով պարտավորություններ. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի կապիտալ ծախսումների պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների ձեռքբերման գծով՝ 495,231 հազ. ՀՀ դրամ (2019թ. ՝ 1,454,805 հազ. ՀՀ դրամ): Ընկերությունն արդեն հատկացրել է անհրաժեշտ միջոցներ այդ պարտավորությունների կատարման համար: Ընկերության ղեկավարությունը կարծում է, որ ապագա զուտ շահույթը և ֆինանսավորումը բավարար կլինեն՝ այս և համանման այլ պարտավորությունները կատարելու համար:

Շրջակա միջավայրի պահպանության հարցեր. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության կանոնակարգման համակարգը զարգանում է, և պետական մարմինների դիրքորոշումն այդ համակարգը ներդնելու հարցում շարունակաբար փոփոխվում է: Ընկերությունը պարբերաբար գնահատում է իր պարտավորությունները շրջակա միջավայրի պահպանության կանոնակարգերի համաձայն: Երբ պարտավորությունները որոշվում են, դրանք անմիջապես ճանաչվում են հաշվետվությունում: Հնարավոր պարտավորությունները, որոնք կարող են ծագել գործող կանոնակարգերի, քաղաքացիական իրավական համակարգի կամ օրենսդրության փոփոխման հետևանքով, չեն կարող գնահատվել, սակայն կարող են էական լինել: Գործող օրենսդրության կիրառման պայմաններում ղեկավարությունը կարծում է, որ չկան շրջակա միջավայրին վնաս հասցնելու հետևանքով առաջացող նշանակալի պարտավորություններ:

28 Պայմանական դեպքեր և պարտավորություններ (շարունակություն)

Երաշխիքներ. Երաշխիքներն իրենցից ներկայացնում են հետկանչման ոչ ենթակա հանձնառություններ առ այն, որ Ընկերությունը կկատարի վճարումներ այն դեպքում, երբ մեկ այլ կողմ չի կարողանա կատարել իր պարտավորությունները: Ընկերությունը երաշխավորել է տեղական բանկի հետ վարկային պայմանագրի ներքո «Թիմ» ՍՊԸ-ի (Ընկերության անմիջական մայր ընկերության) պարտավորությունը, որի մարման ժամկետը 2027 թվականի հոկտեմբերն է: Ընկերության կողմից ճանաչված երաշխիքի իրական արժեքը կազմում է 2,668,514 հազ. ՀՀ դրամ: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը և «Թիմ» ՍՊԸ-ն պահպանել են վարկային պայմանագրով ամրագրված պայմանները:

Երաշխիքի իրական արժեքը հաշվարկվել է 16.15% (սահմանված ապագա դրամական միջոցների հոսքերի և սցենարային վերլուծության հիման վրա) 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երաշխիքի գումարի մնացորդի նկատմամբ (16,521,400 հազ. ՀՀ դրամ): Ֆինանսական երաշխիքի և զգայունության վերլուծության հետ կապված հիմնական հաշվապահական եզրակացությունները բերված են ծանոթագրություն 4-ում: Երաշխիքի ճանաչված արժեքը (2,668,514 հազ. ՀՀ դրամ) բաժանվել է ընթացիկ (390,514 հազ. ՀՀ դրամ) և ոչ ընթացիկ մասերի (2,278,000 հազ. ՀՀ դրամ) ՝ համաձայն վարկի վճարման ժամանակացույցի:

Գրավներ. Ընկերությունը գրավադրել է գույք՝ 110,940 հազ. ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով, որպես իր բանկային վարկերի ապահովման միջոց (Ծանոթագրություն 27): Ընկերությունը նաև գրավադրել է 902,218 հազ. ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով գույք `որպես իր անմիջական մայր ընկերության կողմից ստացված բանկային վարկի գրավի ապահովման միջոց, ընդ որում վարկային մնացորդը կազմում է 16,521,400 հազ. ՀՀ դրամ: Ընկերության բաժնետոմսերի 100% -ը նույնպես գրավադրվել է անմիջական մայր ընկերության կողմից՝ որպես նույն բանկային վարկի ապահովման միջոց:

29 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի ուղղություններով: Ֆինանսական ռիսկը կազմված է շուկայական ռիսկից (ներառյալ՝ արժութային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկը), պարտքային ռիսկից և իրացվելիության ռիսկից: Ֆինանսական ռիսկերի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է ռիսկերի սահմանաչափ սահմանելը և այնուհետև ռիսկերի ազդեցությունն այդ սահմանաչափում պահելը: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթները նպատակ ունեն ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

Պարտքային ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, այսինքն՝ ռիսկը, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին՝ պարտավորությունները չկատարելու հետևանքով: Պարտքային ռիսկն առաջանում է Ընկերության կողմից տարաժամկետ վճարման պայմաններով վաճառք իրականացնելու և մյուս կողմերի հետ ֆինանսական ակտիվներ առաջացնող այլ գործարքներ իրականացնելու արդյունքում:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կատեգորիաները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

29 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ

Ակտիվներ	
Տրամադրված փոխառություններ (Ծանոթագրություն 10)	6,224,629
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 12)	
- Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	2,568,824
- Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր, զուտ	58,825
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 13)	
- Ցպահանջ մնացորդներ բանկում	123,181
- Առձեռն դրամական միջոցներ	16,890
- Դրամական միջոցներ ճանապարհին	75,455
Ընդամենը հաշվեկշռի պարտքային ռիսկ	**9,067,804**
Տրամադրված երաշխիքներ (Ծանոթագրություն 28)	16,521,400
Ընդամենը պարտքային ռիսկ	**25,589,204**

Պարտքային ռիսկերի կառավարում: Պարտքային ռիսկը հանդիսանում է Ընկերության բիզնեսի համար միակ առավել էական ռիսկը: Հետևաբար, ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում պարտքային ռիսկի կառավարմանը:

Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը բարդ է և ենթադրում է մոդելների կիրառում, քանի որ ռիսկը փոփոխվում է՝ կախված շուկայական պայմաններից, ակնկալվող դրամական հոսքերից և ժամանակի անցնելուց: Ակտիվների պորտֆելի գծով պարտքային ռիսկի գնահատումը ենթադրում է դեֆոլտի առաջացման հավանականության գնահատում, կորուստների համապատասխան գործակիցների և գործընկերների միջև դեֆոլտի հարաբերակցության հետագա գնահատում:

Սահմանափակումներ. Ընկերությունը կառավարում է իր պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանաչափեր կիրառելով մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի գծով ստանձնած ռիսկերի ծավալի համար: Պարտքային ռիսկի սահմանափակումները պարբերաբար հաստատվում են ղեկավարության կողմից: Այդ ռիսկերն անընդհատ վերահսկվում են և ենթակա են տարեկան կամ առավել հաճախակի վերանայման:

Ընկերության ղեկավարությունը դիտարկում է չվճարված առևտրային դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետայնության և միջոցներ է ձեռնարկում ժամկետանց մնացորդների մասով: Հետևաբար, ղեկավարությունը տեղին է համարում տրամադրել պարտքային ռիսկի ժամկետայնության վերաբերյալ և այլ տեղեկատվություն, ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 12-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափում: ԱՊԿ-ն իրենից ներկայացնում է դրամական միջոցների ապագա դեֆիցիտի ներկա արժեքի հավանականությամբ կշռված գնահատական (այսինքն՝ միջին կշռված պարտքային կարուստը, տրված ժամանակահատվածում տեղի ունեցող դեֆոլտի համապատասխան ռիսկերով, որոնք օգտագործվել են որպես կշիռ): ԱՊԿ չափումն անկողմնակալ է և որոշվում է հնարավոր արդյունքների շրջանակը գնահատելու միջոցով: ԱՊԿ չափումն իրականացվում է Ընկերության կողմից օգտագործվող հետևյալ չորս բաղադրիչների հիման վրա. դեֆոլտի հավանականություն, դեֆոլտի ռիսկին ենթակա պարտքային պահանջի մեծություն, դեֆոլտից առաջացող վնաս և զեղչման տոկոսադրույք:

Պարտքային ռիսկի կենտրոնացում. Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի կենտրոնացման ազդեցությանը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ չորս գործընկեր (2019թ.՝ ութ գործընկեր) 100,000 հազ. ՀՀ դրամը գերազանցող ընդհանուր դեբիտորական պարտքերի մնացորդներով: Այդ մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 615,682 հազ. դրամ (2019թ.՝ 1,211,236 հազ. ՀՀ դրամ):

29 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ընկերությունը նաև ենթարկվում է պարտքային ռիսկի կենտրոնացման՝ անմիջական մայր ընկերությանը տրված երաշխիքի գծով: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից երաշխավորված պարտքի չափը կազմում էր 16,521,400 հազ. ՀՀ դրամ (Ծանոթագրություն 28):

Շուկայական ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկերի: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արտարժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների և (գ) բաժնային արժեթղթերի բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Ղեկավարությունը սահմանում է ռիսկի այն մակարդակը, որը կարող է ընդունվել, ինչն էլ վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերից դուրս վնասների առաջացումն այն դեպքերում, երբ տեղի են ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր:

Ստորև ներկայացված շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունությունը որոշվել է հիմք ընդունելով մեկ գործոնի փոփոխությունը՝ անփոփոխ պահելով մնացած այլ գործոնները: Գործնականում այս իրավիճակի տեղի ունենալը հավանական չէ, և մի շարք գործոններում փոփոխությունները կարող են փոխկապակցված լինել, օրինակ՝ տոկոսադրույքի և արտարժույթի դրույքաչափի փոփոխությունները:

Արժութային ռիսկ. Արժութային ռիսկի գծով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի համար՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական կտրվածքով: Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության՝ արժույթի փոխարկման հետ կապված ռիսկին ենթարկվածությունը.

	Առ 31 դեկտեմբերի 2020թ.			Առ 31 դեկտեմբերի 2019թ.		
Հազ. ՀՀ դրամ	**Դրամական ֆինանսա-կան ակտիվներ**	**Դրամական ֆինանսա-կան պարտավոր ություններ**	**Զուտ հաշվեկշ-ռային դիրք**	**Դրամական ֆինանսա-կան ակտիվներ**	**Դրամական ֆինանսա-կան պարտավո–րություններ**	**Զուտ հաշվեկշռա-յին դիրք**
ԱՄՆ դոլար	7,076,522	(9,639,310)	(2,562,788)	22,202,394	(1,754,476)	20,447,918
Եվրո	23,596	(199,315)	(175,720)	18,591	(104,841)	(86,250)
ՀՖԻ	291,092	(181,355)	109,736	267,014	(169,094)	97,920
ՌԴ ռուբլի	2,446	(54,547)	(52,101)	7,623	(23,703)	(16,080)
Ընդամենը	**7,393,656**	**(10,074,527)**	**(2,680,871)**	**22,495,622**	**(2,052,114)**	**20,443,508**

Վերը ներկայացված վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները: Ոչ դրամական ակտիվները չեն դիտարկվում որպես արժութային ռիսկ առաջացնող էական բաղադրիչ:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի կամ վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

Հազ. ՀՀ դրամ	**Առ 31 դեկտեմբերի 2020թ.**	**Առ 31 դեկտեմբերի 2019թ.**
ԱՄՆ դոլարի ամրապնդում 5%-ով (2019թ. `ամրապնդում 5%-ով)	(128,139)	1,022,396
ԱՄՆ դոլարի անկում 5%-ով (2019թ. ` անկում 5%-ով)	128,139	(1,022,396)
Եվրոյի ամրապնդում 5%-ով (2019թ. ` ամրապնդում 5%-ով)	(8,786)	(4,322)
Եվրոյի անկում 5%-ով (2019թ. ` անկում 5%-ով)	8,786	4,322
ՀՖԻ ամրապնդում 5%-ով (2019թ. ` ամրապնդում 5%-ով)	5,487	4,896
ՀՖԻ անկում 5%-ով (2019թ. ` անկում 5%-ով)	(5,487)	(4,896)
ՌԴ ռուբլու ամրապնդում 5%-ով (2019թ. ` ամրապնդում 15%-ով)	(7,815)	(2,415)
ՌԴ ռուբլու անկում 5%-ով (2019թ. ` անկում 15%-ով)	7,815	2,415

29 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Տոկոսադրույքի ռիսկ: Ընկերությունն իր վրա է վերցնում շուկայական տոկոսադրույքների գերակշռող մակարդակների տատանումների ազդեցությունը իր ֆինանսական դիրքի և դրամական հոսքերի վրա: Տոկոսների մարժան կարող է աճել այդպիսի փոփոխությունների արդյունքում, բայց կարող է նվազել կամ հանգեցնել վնասների՝ անսպասելի տատանումների դեպքում: Ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունը չի ենթարկվում տոկոսադրույքի ռիսկի զգալի ազդեցության, քանի որ Ընկերության ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2019 թվականի դրությամբ ունեցել են հաստատուն տոկոսադրույքներ:

Ընկերությունը չունի տոկոսադրույքների ռիսկերի կառավարման համար պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր, քանի որ ղեկավարությունն այդ ռիսկը համարում է ոչ զգալի Ընկերության բիզնեսի համար:

Ընկերությունը վերահսկում է իր ֆինանսական գործիքների տոկոսադրույքները: Ստորև բերված աղյուսակում ամփոփված են արդյունավետ տոկոսադրույքները համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ հիմք ընդունելով առանցքային ղեկավար անձնակազմի կողմից դիտարկված հաշվետվությունները.

	2020թ.		2019թ.	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տարեկան %				
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	0-6	0-1	0-6	0-1
Տրամադրված փոխառություններ	0	0-8	-	LIBOR 1ԱՄ ԱՄՆ դոլար+0.8%

Վերը ներկայացված աղյուսակում «-» նշանը նշանակում է, որ Ընկերությունը չունի համապատասխան արժույթով ակտիվներ:

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, երբ կազմակերպությունը կարող է դժվարանալ կատարելու ֆինանսական պարտավորություններով պայմանավորված իր պարտականությունները: Ընկերությունն օրական կտրվածքով առնչվում է դրամական միջոցների պահանջին: Իրացվելիության ռիսկը կառավարվում է Ընկերության ֆինանսական բաժնի կողմից: Ղեկավարությունն ամսական կտրվածքով վերահսկում է Ընկերության դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները:

Ընկերությունն աշխատում է պահպանել կայուն ֆինանսավորման աղբյուրներ, որոնք հիմնականում բաղկացած են առևտրային և այլ դեբիտորական պարտքերից: Ընկերությունը ֆինանսական միջոցների ներդրումներ է կատարում իրացվելի ակտիվների դիվերսիֆիկացված փաթեթում, որպեսզի կարողանա արագորեն և անմիջականորեն բավարարել չնախատեսված իրացվելիության պահանջները: Ընկերության իրացվելիության պորտֆելը կազմված է դրամական միջոցներից և դրանց համարժեքներից (տե՛ս Ծանոթագրություն 13-ը):

Գանձապետական բաժինը վերահսկում է իրացվելիության դիրքը և պարբերաբար իրականացնում է իրացվելիության սթրես-թեստ՝ օգտագործելով ինչպես բնականոն, այնպես էլ առավել խիստ շուկայական պայմաններ ներառող սցենարներ:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

29 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	12-ից ավել ամիս	Ընդամենը
Պարտավորություններ				
Բանկերից ստացված փոխառություններ (Ծանոթագրություն 27)	53,163	1,709,711	4,348,096	6,110,970
Տրամադրված երաշխիքներ (Ծանոթագրություն 28)	16,521,400	-	-	16,521,400
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 16)	731,734	5,577,308	-	6,309,042
Վարձակալության պարտավորություններ (Ծանոթագրություն 26)	136,681	1,277,932	5,670,241	7,084,854
Ընդամենը ապագա վճարներ	**17,442,978**	**8,564,951**	**10,018,337**	**36,026,266**

Տրամադրված երաշխիքները ներառված են «Ցպահանջ և 1 ամսից պակաս» կատեգորիայում, քանի որ Ընկերությունը կախվածություն ունի երաշխիքով ապահովված վարկի գծով վարկառուի կողմից բանկի առջև ստանձնած պարտավորությունների կատարումից և գործողություններից, որոնք բանկը կարող է ձեռնարկել վարկի և երաշխիքային պայմանագրերի պայմանների հիման վրա:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	12-ից ավել ամիս	Ընդամենը
Պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 16)	4,499,040	-	-	4,499,040
Վարձակալության պարտավորություններ (Ծանոթագրություն 26)	132,601	1,253,448	6,415,575	7,801,624
Ընդամենը ապագա վճարներ	**4,631,641**	**1,253,448**	**6,415,575**	**12,300,664**

30 Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման ժամանակ Ընկերության նպատակներն են. պահպանել Ընկերության կարողությունը՝ շարունակելու իր գործունեությունը անընդհատության սկզբունքով՝ ապահովելով հատուցում բաժնետերերին և օգուտներ այլ շահառուներին և հաստատել կապիտալի օպտիմալ կառուցվածք: Կապիտալի կառուցվածքը հաստատելու և ճշգրտելու համար Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ նվազեցնելով պարտքը: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից կառավարվող կապիտալի չափը կազմել է 22,176,212 հազ. դրամ (2019թ.՝ 44,143,132 հազ. դրամ):

31 Իրական արժեքի բացահայտումներ

Իրական արժեքի չափման վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող (չճշգրտվող) գներով, (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (օրինակ՝ գներ) կամ անուղղակիորեն (օրինակ՝ գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ):

31 Իրական արժեքի բացահայտումներ (շարունակություն)

Ֆինանսական գործիքները իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակին վերագրելիս՝ ղեկավարությունը կիրառում է դատողություն: Եթե իրական արժեքի չափման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի տվյալներ, ապա իրական արժեքի տվյալ չափումը վերաբերում է մակարդակ 3-ին: Օգտագործվող տվյալների նշանակալիությունը գնահատվում է իրական արժեքով չափվող ամբողջության համար:

բ) Իրական արժեքի ոչ պարբերական չափումներ

Ընկերությունը կապակցված կողմի համար թողարկված երաշխիքը ճանաչել է իրական արժեքով: Իրական արժեքի չափումը կատարվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակի չափումների հիման վրա: Ճանաչման ամսաթվին իրական արժեքի չափման մեջ օգտագործված գնահատման մեթոդները և ելակետային տվյալները հետևյալն էին.

	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Ելակետային տվյալներ	Ելակետային տվյալներ 31 դեկտեմբերի 2020թ.
Կապակցված կողմի համար տրամադրված երաշխիքներ	2,668,514	Ձեղչված դրամական միջոցների հոսքեր	Ձեղչի տոկոսադրույք Ազատ դրամական միջոցներ 2021-2027թթ.	8.0% 1,345,570 հազ. ՀՀ դրամից մինչև 5,867,916 հազ. ՀՀ դրամ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ. Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների չափվող իրական արժեքը հիմնված է ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա՝ կիրառելով գործող տոկոսադրույքները նմանատիպ պարտքային ռիսկ և նմանատիպ մարման ժամկետ ենթադրող փոխառության շուկայի նոր գործիքների նկատմամբ: Ձեղչման համար օգտագործվող տոկոսադրույքները կախված են գործընկերոջ պարտքային ռիսկից:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ. Պարտավորությունների իրական արժեքը որոշվում է օգտագործելով չափման մեթոդներ: Ֆիքսված տոկոսադրույքով և սահմանված մարման ժամկետով գործիքների հաշվարկային իրական արժեքը չափվում է հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա՝ կիրառելով նմանատիպ պարտքային ռիսկ և նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր գործիքների տոկոսադրույքները:

32 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների

Ընկերությունը, ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» համաձայն, դասակարգում է ֆինանսական ակտիվները հետևյալ կատեգորիաների. (ա) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ և (գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներն ունեն երկու ենթակատեգորիա. (i), իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով պարտադիր չափվող ակտիվներ և (ii) ակտիվներ, որոնք սահմանվել են որպես այդպիսիք սկզբնական ճանաչման ժամանակ:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների համադրումը վերը նշված չափման կատեգորիաներով առ 2020թ. դեկտեմբերի 31-ը.

32 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	
Ակտիվներ	
Տրամադրված փոխառություններ (Ծանոթագրություն 10)	6,224,629
Առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 12)	
- Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	2,568,824
- Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր, զուտ	58,825
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 13)	
- Ցպահանջ բանկային մնացորդներ	123,181
- Առձեռն դրամական միջոցներ	16,890
- Դրամական միջոցներ ճանապարհին	75,455
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**9,067,804**

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների համադրումը վերը նշված չափման կատեգորիաներով առ 2019թ. դեկտեմբերի 31-ը.

Հազ. ՀՀ դրամ	**Ընդամենը փոխառություններ և դեբիտորական պարտքեր**
Ակտիվներ	
Տրամադրված փոխառություններ (Ծանոթագրություն 10)	19,043,648
Առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 12)	
- Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	3,188,503
- Այլ ֆինանսական դեբիտորական պարտքեր, զուտ	84,173
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 13)	
- Ցպահանջ բանկային մնացորդներ	3,500,780
- Առձեռն դրամական միջոցներ	38,233
- Դրամական միջոցներ ճանապարհին	28,263
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**25,883,600**

33 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսատնտեսական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

33 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 8%)	2,645,898	-
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 0%)	3,364,531	-
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների գծով	444,687	-
Տրամադրված երաշխիքներ	16,521,400	-
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	-	31,377

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Դեբիտորական պարտքեր	133,659	122,285
Տրամադրված փոխառություններ (պայմանագրային տոկոսադրույք 4.9%)	-	19,043,648
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	151,178	356,483

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար փոխկապակցված կողմերի հետ գործարքներից եկամուտները և ծախսերը հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	**Անմիջական մայր ընկերություն**	**Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ**
Կապի ծառայությունների ձեռքբերում (փոխկապակցում, ռոումինգ, ինտերնետ)	1,152,396	260,097
Կապի ծառայությունների տրամադրում (փոխկապակցում, ռոումինգ, ինտերնետ)	1,016,122	167,328
Տոկոսային եկամուտ	40,594	200,548
Տրամադրված փոխառություններ՝ դրամական	3,642,338	-
Տրամադրված փոխառություններ՝ ոչ դրամական	5,141,300	-
Բաշխում նախորդ սեփականատիրոջը	4,927,100	-
Վճարված շահաբաժիններ	18,810,000	-

2020 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը տրամադրել է երաշխիք անմիջական մայր ընկերության կողմից 16,521,400 հազ. ՀՀ դրամի ներգրավված բանկային վարկի գծով, ինչպես նաև գրավադրել է իր գույքը 902,218 հազ. ՀՀ դրամ զուտ հաշվեկշռային արժեքով:

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա փոխկապակցված կողմերի հետ գործարքներից եկամուտները և ծախսերը հետևյալն են.

33 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Անմիջական մայր ընկերություն	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ
Ծառայությունների ձեռքբերում	866,224	1,438,107
Ծառայությունների տրամադրում	1,017,310	1,133,230
Տոկոսային եկամուտ	-	3,196,959
Վճարված շահաբաժիններ	93,000,000	-

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները Ընկերությունն իրականացրել է «պարզած ձեռքի» սկզբունքով, բացառությամբ որոշակի տրամադրված փոխառությունների և գործարքների գծով երաշխիքների (Ծանոթագրություն 10, 28):

Ղեկավար անձնակազմի հատուցում. Ղեկավար անձնակազմ են համարվում գլխավոր տնօրենը, գլխավոր տնօրենի տեղակալը, ֆինանսական տնօրենը, գործառնությունների տնօրենը, տեխնիկական տնօրենը, կոմերցիոն տնօրենը և Խորհրդի անդամը:

Ղեկավար անձնակազմին հատուցումը ներկայացված է ստորև.

	2020թ.		2019թ.	
Հազ. ՀՀ դրամ	Ծախս	Հաշվեգրված ուտ պարտավորություն	Ծախս	Հաշվեգրված ուտ պարտավորություն
Կարճաժամկետ հատուցումներ.				
- Աշխատավարձ	522,007	18,216	876,016	14,627
- Կարճաժամկետ պարգևավճարներ	381,201	-	(253,109)	301,644
Արձակման նպաստներ	186,732	-	-	-
Ընդամենը	**1,089,939**	**18,216**	**622,907**	**316,271**

34 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ստացված վարկեր: 2021թ. մայիսին Ընկերությունը վարկ է ստացել տեղական բանկից: Վարկը գնանշված է ԱՄՆ դոլարով և համարժեք է 3,654,630 հազ. ՀՀ դրամի (7,000 հազ. ԱՄՆ դոլար) վարկային պայմանագրի օրվա գործող դրույքաչափով: Վարկի մարման ժամկետը՝ մայիս 2024թ. :